

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ,
ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՐԱԲԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՎ
ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Գ 870

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:*

***Տպագրվում է ՀՀ ԿԳՄՄԼ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
«Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և
տերմինաշինության աղբյուր»
21Դ-6Ծ030 գիտական թեմայի շրջանակում:***

Խմբագիր՝

բ.գ.թ. դոցենտ, Գայանե Մխիթարյան

Գրախոսներ՝

բ.գ.թ. դոցենտ, Սուսաննա Գրիգորյան

բ.գ.թ. Աստղիկ Կարապետյան

Գ 870 Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր / Ա. Հ. Աբաջյան, Ն. Հ. Դիլբարյան, Ա. Լ. Յուզբաջյան, Ս. Հ. Կարապետյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2024.- 400 էջ:

Մենագրության մեջ ընդգրկված են 12 հեղինակ և աղբյուր՝ աստվածաշնչյան թարգմանությունից մինչև քերթողահայր Մ. Խորենացի, մինչև Գ. Նարեկացի և Խ. Աբովյան՝ ըստ էության, գրաբարի ամենաճոխ, ամենադասական և ամենաօրինակելի բնագրերը: Ընտրված երկերում գրաբարյան բառապաշարը ուսումնասիրված է բազմակողմ հարցադրումներով և իմաստային, և՛ բառակազմական կաղապարների, և՛ ստեղծված նորաբանությունների և այլն: Աշխատության տարբեր գլուխներում ներկայացված են գրաբարի բառապաշարի՝ տերմինային արժեք ունեցող միավորները՝ իրենց բառարանային արժեքով. խոսքում դրանց կիրառությունները հասկանալու համար հեղինակները ներկայացրել են այդ բառերը բնագրային նախադասություններով՝ անհրաժեշտության դեպքում անդրադառնալով նաև դրանց բազմիմաստությանը:

Ուսումնասիրությունը նախատեսված է բանասերների, պատմաբանների, աստվածաբանների և ընդհանրապես մեր լեզվի զարգացման, բառապաշարի հարստացման և տերմինաշինության հարցերով հետաքրքրվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-5-8084-2674-0

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426740>

© ԵՊՀ հրատ., 2024

© Հեղ. խումբ, 2024

Բովանդակություն

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՄԱՆ ՄԵԶ.....	5
ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	16
ԿՐՈՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԲԱՌԵՐՆ ՈՒ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ	29
ԿՐՈՆԻ ԵՒ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՌԵՐԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐՈՒՄ	47
ԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ	59
ԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ	73
ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԵՐԿԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ	98
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ	104
ՌԱԶՄԻ ՀԱՄԿԱՅՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԸ ԵՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՂԻՇԵԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԵՐԿՈՒՄ	120
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾ ԵՎ ԶԵՆՔ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	170
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄԸ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐՈՎ (ԸՍՏ Ղ. ՓԱՐՊԵՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ)	182
ՌԱԶՄԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹ-ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ	191

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ.....	200
ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ.....	210
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԻՄԱՍՏԱԱՐԺԵՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ).....	223
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ.....	235
ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ.....	250
ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ «ՄԱՐԴ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....	257
ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՑԻ» ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.....	277
ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑՈՒ «ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՑ ՎԱԶՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....	291
«ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ԲՆԻԿ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՄԿՈՊՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԳՐՔՈՒՄ.....	300
«ՏՈՒՆ, ԲՆԱԿԱՎԱՅՐ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ԲԱՌԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ.....	316
ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՏՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	319
ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՏՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	365
ԽԱԶՍՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԲԱՐԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....	383
PE3IOME.....	397
SUMMARY.....	398

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՄԱՆ ՄԵԶ

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու հարատև զարգացող համակարգ է: Այն անընդմեջ փոփոխվում է ներքին և արտաքին ազդակների շնորհիվ: «Սովորաբար գիտության որևէ ճյուղի զարգացումը ուղեկցվում է այդ ճյուղին անհրաժեշտ տերմինաբանության ստեղծմամբ և կարգավորմամբ»¹:

Լեզվի փոփոխման, դրա զարգացման կարևորագույն միջոցներից են փոխառությունները:

Սովորաբար նեղ իմաստով «փոխառություն» եզրույթով կոչում են պատմական որոշ ժամանակաշրջանում օտար տիրակալների լեզվից տիրվողների լեզվին անցած բառերը², այլ կերպ ասած՝ արտաքին փոխառությունները, որոնց կապն ակնառու է սովյալ ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի, մարդկային քաղաքակրթությունների ու ժողովուրդների մշակութային փոխազդեցությունների պատմության հետ: Այլ լեզուներից փոխառվող բառերը հիմնականում հասկական փոխառություններ են, որոնք մուտք են գործում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, թարգմանությունների և այլնի միջոցով³: Բացի այդ՝ անընդհատ զարգանում է նաև գիտատեխնիկական տերմինաբանությունը՝ հարստանալով նորանոր բառերով ու եզրույթներով՝ կապված գիտության ու տեխնիկայի վերելքի հետ: Օտարալեզու բառարաններում «փոխառություն» բառը հաճախ սահմանվում է որպես «բառերի, քերականական կառույցների, ձևույթների, հնչույթների՝ մի լեզվից մյուսին անցնելու գործընթացը և արդյունքը, լեզվական կապե-

¹ Ա. Ասլանյան, Տերմինակազմության ուղիները և աղբյուրները հայոց լեզվում, *Աղևարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության*, Եր., 1982, էջ 167:

² Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., Երևանի համալս. հրատ., 1987, էջ 624:

³ Տե՛ս Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն, Եր., 1980, էջ 337:

րի ամենատարածված տեսակը»⁴: Ահա ևս մեկ սահմանում. «Փոխառությունը լեզվական տարրերի անցումն է մի լեզվից մյուսը՝ որպես լեզուների փոխազդեցության արդյունք...փոխառությունները լինում են բանավոր և գրավոր»⁵:

Սակայն փոխառությունները կարող են անցնել լեզվին ոչ միայն այլ լեզուներից, այլև միևնույն լեզվի ավելի հին շրջաններից կամ դրա տարբերակային համակարգերից և այլն: Արդի արևելահայերենի դեպքում նման փոխառությունները կարող են անցնել գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախոսակցական լեզվից, բարբառներից, արևմտահայերենից: Այն բառերը, որոնք լեզվին փոխանցվում են նշված ճանապարհով, կոչվում են «ներքին փոխառություններ»⁶: Հարկ է նշել, որ ժամանակակից հայերենի բառապաշարը զգալիորեն հարստացել է նաև հենց ներքին փոխառությունների շնորհիվ:

Փոփոխություն են կրել թե՛ լեզվի բառային կազմը, թե՛ բառային հիմնական ֆոնդը. վերջինս «...թեև ավելի դանդաղ, քան լեզվի բառային կազմը, ժողովրդի զարգացմանը զուգընթաց կատարելագործվում ու համալրվում է նախ իր ներքին միջոցների ընդարձակման ու ծավալման, ապա այլ լեզուներից ընդունած և յուրացրած բառերի հաշվին»⁷:

Առհասարակ, յուրաքանչյուր լեզու հին որակից միայն այն ժամանակ է անցնում նոր որակի, երբ դրա հնչյունաբանության, բառային կազմի ու քերականության նոր որակի հետ կապված տարրերն աստիճանաբար կուտակվելով ու զարգանալով՝ գերակշռում են հին որակի տարրերին և ընդգրկում լեզվի հաղորդակցական գործառույթը⁸:

⁴ Жеребило Т., Словарь лингвистических терминов, изд. 5-е, Назрань, 2010, էջ 107:

⁵ Прохоров А., Советский энциклопедический словарь, изд. 3-е, Москва, 1984, էջ 445:

⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, նշվ. աշխ., Եր., 1980, էջ 334-335:

⁷ Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., Երևանի համալս. հրատ., 2006, էջ 148:

⁸ Մ. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. II, Եր., Հայպետհրատ, 1961, էջ 83:

Գրաբարի ազդեցության քննությունը արդի արևելահայերենի բառապաշարի և տերմինաբանության վրա ենթադրում է բառապաշարի համակողմանի քննություն թե՛ ըստ բառապաշարային միավորների ծագումնաբանության, թե՛ ըստ իմաստային առանձնահատկությունների, թե՛ ըստ տերմինագործածությանն առնչվող հարցերի և այլն:

Սույն ուսումնասիրության մեջ ընդգրկված բառերն առանձնացրել ենք ըստ գրաբարյան և արդի հայերենի հայտնի բառարանների:

Հարկ է նշել, որ հայերենի բառապաշարը զգալիորեն զարգանում է նաև դրա բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին այնպիսի տեղաշարժերով, ինչպիսիք են գործառական և լեզվառճական շերտերի պատկանող բառերի փոխանցումը մի շերտից մյուսին: «Բառերի տերմինացում ասելով հասկանում ենք լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և բառապաշարի գործառական կամ պատմական տարբեր շերտերի պատկանող բառերի օգտագործումը որևէ տերմինահամակարգի մեջ՝ համապատասխան տերմինային իմաստով»⁹: Այսպես, օրինակ՝ *ական, մարտկոց, սաղավարտ, ռումբ* և այլ բառերը գրաբարյան էին. դրանք հետագայում դարձան ռազմական եզրույթներ¹⁰: Գրաբարում սրանք համապատասխանաբար նշանակել են *«պատի՛ գետնի տակ փորուած անցք՝ փոս՝ գաղտնի կամ բռնի ներս մտնելու համար»*¹¹, *«բերդապարսպի վրայ ամրացուած և պաշտպանուած շինութիւն, որտեղից բերդապահ զօրքը կռում էր թշնամու դէմ»*¹², *«սառը գէնքի հարուածներից պաշտպանուելու համար զինուորականի մետաղեայ գլխանոց»*¹³, *«նետելու քար, պարսաքար»*¹⁴: Եզրույթներն արտահայտում են տարբեր հատուկ անվանումներ, որոնք կազմում են տերմինային համակարգեր:

⁹ Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 153:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, Եր., 1980, էջ 353-354:

¹¹ Տե՛ս Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Երևանի համալս. հրատ., Երևան, 2000, էջ 21:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 162:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 435:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 435:

Եվ յուրաքանչյուր տերմինահամակարգ արտացոլում է առանձին գիտությունների, գիտական ուղղությունների, հասկացությունների համակարգ, գիտելիքի տարբեր ոլորտների իրակություններ¹⁵: Մարդկային գործունեության ամեն մի ոլորտ ունի եզրույթների իր համակարգը, ուստի տերմինաբանության իմացությունը կարևոր է ոչ միայն պրակտիկ գործունեությամբ, այլև անմիջականորեն գիտությամբ զբաղվողների համար¹⁶:

Սույն ուսումնասիրության մեջ մենք գրաբարյան տարբեր բառարաններից դուրս ենք գրել բառային այնպիսի օրինակներ, որոնք գրաբարում տերմինային արժեք չեն ունեցել, սակայն արդի հայերենում դրանք կիրառվում են որպես եզրույթներ կամ նաև՝ որպես եզրույթներ: Մեր ուսումնասիրության հիմքում հիմնականում ընկած է համեմատական-գուգադրական մեթոդը՝ գրաբարի և ժամանակակից հայերենի բառային միավորների համեմատության հիման վրա: Ուսումնասիրության մեջ բառային միավորների քննությունն արված է թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա հայեցակետերով:

Բուսակենդանական եզրույթներ

Բուսանունների հոմանիշների առկայությունը տարբեր բառարաններում հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ բառերի տերմինացումը դեռևս չի ավարտվել: Բազմաթիվ բառեր՝ այդ թվում նաև ածականներ, ժամանակակից հայերենում ձեռք են բերել եզրույթային իմաստ՝ որպես բուսաբանական եզրույթներ:

¹⁵ Տե՛ս <https://cloud.mail.ru/attaches/16514169581342849319%3B0%3B1?folderid=-0&xemail=sirarp187%40list.ru&cvg=f>. **Корниевская Т.**, Термин как объект исследования в лингвистике, *Историческая и социально-образовательная мысль*, К., т. 7. N 5, ч. 1., 2015, էջ 234:

¹⁶ Տե՛ս https://upload.pgu.ru/iblock/d0d/ch_05_sim_1_sektsii_11_14-m.k.-borisova-28.pdf. **Борисова М.** Терминология и терминосистема: аспекты корреляции, *Университетские чтения, Сборник материалов научно-методических чтений ПГЛУ*, 2015, Пятигорск, ч. 5, էջ 154.

Ազնիվ¹⁷ բառը գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1. ած.՝ տոհմիկ, 2. սրբազան, նվիրական, 3. ձայնարկ. *կեցցե՛ւ*: Արդի հայերենում այս բառը նաև բուսաբանական եզրույթ է՝ *երիցուկի տեսակ, գարշահոտ օշոշ*:

Անթառամ բառը գրաբարում նշանակել է 1. *չթառամող, 2. մնայուն, մշտատև*, իսկ արդի հայերենում այն նաև բուսաբանական եզրույթ է և նշանակում է *բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող բույս՝ մանր գնդաձև ծաղիկների փնջերով, անմեռուկ*:

Թունաթափ՝ գրաբարում՝ *թունաթափ լինել՝ զայրույթը, թույնը թափել մեկի վրա*: Այժմ արձանագրվում է նաև որպես բուսաբանական եզրույթ՝ *շնախոտ*:

Խաչափայտ՝ գրաբարում՝ *այն խաչը, որի վրա խաչեցին Քրիստոսին*: Հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *քաջվարդ*:

Կարմրիկ՝ գրաբարում՝ 1. ած.՝ Կարմիր գունանվան փաղաքշական ձևը, 2. Արդի հայերենում կենդանատեսակի անուն է՝ *կարմրուկների ցեղին պատկանող գեղեցիկ փոքր միջատ՝ թևերին կարմիր ծածկույթներով*:

Համասփյուռ բառը գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1. ած.՝ *ամեն տեղ սփռված, տարածված լինելը, ցրիվ*, 2. մակբ.՝ *ամենուրեք սփռվելով, տարածվելով*, իսկ արդի հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *մեխակների ընտանիքին պատկանող ծաղկի անուն*:

Հիր՝ գրաբարում 1. ած.՝ *երկնագույն կապույտ, 2. նույն գույնի զգեստ*: Արձանագրված է նաև որպես բույսի անուն՝ *եռագույն մանուշակ*:

Ճղեմ՝ գրաբարում բայ՝ *ձագերի նման ճռվողել* (անկատար ներկան *ճղել* բայի): Արդի հայերենում նաև բույսի անուն է՝ *կնյուն*:

Մոլի՝ գրաբարում 1. ած.՝ *կատաղի, 2. դիվահար, 3. բուռն, սաստիկ*: Արդի հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *ոսկե-սիստոր*:

¹⁷ Բուսանուն եզրույթների բացատրությունների համար բացի վերոնշյալ բառարաններից՝ հիմք է ծառայել նաև Ռ. Ղազարյանի Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն բառարանը, Եր., 1981:

Բժշկագիտական եզրույթներ

Բժշկագիտական եզրույթները հիմնականում կապված են հիվանդությունների անվանումների, բուժումների, ախտորոշումների և այլնի հետ: Այս բառերից շատերը ևս ներքին փոխառություններ են, այսինքն՝ գալիս են մեր լեզվի զարգացման նախորդ շրջաններից:

ա. **Ախտակիր** բառը գրաբարում նշանակել է առհասարակ *ախտի ենթարկված, ախտաժեռ*, իսկ արդի հայերենում այն բժշկական եզրույթ է՝ 1. *ախտավոր, հիվանդ, ախտաժեռ, ցավագար, ախտացյալ*, 2. *ախտաբեր, ախտածին, հիվանդաբեր, հիվանդարար, ախտահարույց, ախտավարակ* իմաստներով:

բ. **Ախտասպասն**՝ գրաբարում պարզապես նշանակել է *ախտերը զսպող, սպանող*, իսկ արդի հայերենում այն բժշկական եզրույթ է՝ ածական՝ *ախտերը՝ հիվանդությունները ոչնչացնող*:

գ. **Ճառագայթում (ն)**՝ գրաբարում նշանակել է *ճառագայթ, լույս, փայլ*, իսկ արդի հայերենում նաև բժշկագիտական եզրույթ է՝ 1. *ճառագայթելը, ճառագայթվելը*, 2. *ճառագայթով գոյացությունն այրելը*:

Պետք է նշել, որ բժշկագիտական եզրույթներից շատերը նաև քիմիայի և կենսաբանության ոլորտների բառեր են, քանի որ բժշկագիտությունը, քիմիան և կենսաբանությունն անքակտելիորեն կապված են իրար հետ¹⁸:

Լեզվաբանական եզրույթներ

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանական եզրույթները: Այսպես՝ **ձայնարկություն** բառը գրաբարում նշանակել է *բարձր ձայնել, բացականչություն*, արդի հայերենում՝ 1. *ձայնարկելը*: 2. *ձայնարկուի լաց՝ ողբ*: Միևնույն ժամանակ այն քերականագիտական եզրույթ է և նշանակում է *խոսքի մաս*,

¹⁸ Տե՛ս **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրանց հարստացման միջոցները, Եր., 1982, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1982, էջ 70:

որին պատկանում են զգացմունք՝ հույզ՝ կոչ և նմանաձայնությունն արտահայտող բառերը:

Անբուն՝ գրաբարում ած.՝ ոչ բնական: Այժմ նաև լեզվաբանական եզրույթ է՝ անարմատ հիմքերով կազմվող խոնարհման տիպ:

Անլծորդ բառը նշանակել է լծակից, ընկեր, ամուսին չունեցող, իսկ արդի հայերենում այն լեզվաբանական եզրույթ է՝ լծորդի ձայնավոր չունեցող իմաստով:

Բարդություն՝ գրաբարում՝ բարդելը, կուտակվելը: Արդի հայերենում նաև քերականագիտական եզրույթ է՝ բառակազմության տեսակ:

Խառնուրդ՝ գրաբարում՝ 1. Կցորդություն, միաբանություն, 2. Բանականների ընդհարվելը: 3. Գետերի խառնվելը: Այժմ նաև լեզվագիտական եզրույթ է՝ բաղադրություն:

Ֆինանսական եզրույթներ

Պակաս հետաքրքիր չեն նաև այն բառերը, որոնք եզրույթային իմաստ են ձեռք բերել ֆինանսաբանկային համակարգում և լայն կիրառություն ունեն ժամանակակից աշխարհում: Բերենք մի քանի օրինակ՝

գումար բառը գրաբարում նշանակել է խումբ, խմբվելը, հավաքված բազմություն, իսկ արդի հայերենում այն նաև մաթեմատիկական և ֆինանսական եզրույթ է. 1. երկու կամ ավելի թվերի գումարումից ստացված քանակ, 2. որևէ բանի ընդհանուր քանակություն, 3. դրամի որոշ քանակություն իմաստներով:

Խնդիր՝ գրաբարում՝ 1. փնտրելը, որոնելը, 2. հարցում, բացատրություն, 3. խնդրանք: Արդի հայերենում նաև եզրույթ է՝ առաջադրանք:

Կոտորակ՝ գրաբարում՝ կտոր, պատառ: Արդի հայերենում մաթեմատիկական եզրույթ է՝ ամբողջի որևէ մասը¹⁹:

Հարթություն՝ գրաբարում՝ 1. հարթ լինելը, 2. հավասարություն, համաչափություն, 3. համաձայնություն, միաբանություն, 4. մեղմու-

¹⁹ Նշանակում է նաև կապարե մանրագնդակ:

թյուն, ցածրություն: Արդի հայերենում նաև մաթեմատ. եզրույթ է՝ երկու չափում ունեցող մակերես:

Մեծություն՝ գրաբարում՝ 1. *մեծ լինելը, ճոխություն, 2. հարստություն, 3. մեծամտություն, հպարտություն:* Արդի հայերենում նաև մաթեմատիկական եզրույթ է՝ *չափ, ծավալ:*

Ֆիզիկային առնչվող եզրույթներ

Ֆիզիկային վերաբերող տարբեր եզրույթներ կարող են հանդիպել բնականաբար նախևառաջ ֆիզիկայի դասագրքերում: Դրանք առաջին հայացքից սովորական բառեր են, սակայն մասնագիտական բառապաշարում բոլորովին այլ իմաստ են արտահայտում: Դիտարկենք որոշ բառեր, որոնք մեր լեզվի զարգացման ավելի հին շրջանում այլ իմաստներ են ունեցել.

հզորություն՝ գրբ.՝ *հզոր լինելը, քաջություն, արիություն*, արդի հայերենում այն նաև ֆիզիկային առնչվող եզրույթ է 1. *աշխատանքի և դրա կատարման ժամանակի հարաբերությունը ցույց տվող մեծություն, կարողություն* իմաստով:

Արագություն՝ գրաբարում՝ *շարժման արագ լինելը:* Արդի հայերենում նաև ֆիզիկայի և տեխնիկայի եզրույթ է՝ *շարժման կամ գործողության արագ լինելը, 2. որևէ բանի շարժման կամ տարածման աստիճանը, 3. տեխնիկա՝ ավտոմոբիլի՝ տրակտորի ևն քաշող ուժի փոփոխվող մեծությունը, 4. ֆիզիկա՝ առարկայի անցած տարածության և դրա համար սպառված ժամանակի հարաբերությունը:*

Ճնշում (ն)՝ գրաբարում՝ *ճնշելը:* Արդի հայերենում այն ֆիզիկայի եզրույթ է՝ *զգալի ու հեղուկների առաձգականության աստիճանը:*

Ոչ եզրույթային իմաստով *ճնշում* բառն ունի բոլորիս հայտնի «ագդեցություն», «ներգործություն» իմաստները:

Լիքք բառը գրաբարում նշանակել է *վեգ, ճան:* Արդի հայերենում այն ունի հետևյալ իմաստները՝ 1. *գործվածքի փոքրիկ պատռվածքը համապատասխան թելով լցնելը:* 2. *պատի հիմքի՝*

գետնի մեջ փորված խրամի մեջ լցվող շինանյութը, նաև ֆիզիկայի եզրույթ է՝ որևէ մարմնի մեջ եղող էլեկտրականություն և դրա քանակը: Ի դեպ, այս բառը ժամանակակից հայերենում նաև սպորտի բնագավառի եզրույթ է՝ մարմնի կենսագործունեությունը բարձրացնելու համար կատարվող մարմնամարզական վարժանքների ամբողջությունը իմաստով:

Տեխնիկական եզրույթներ

Շարժիչ՝ գրաբարում՝ *շարժող*: Արդի հայերենում այն ոչ միայն նշանակում է *շարժող*, *առաջ մղող*, այլ նաև տեխնիկական եզրույթ է՝ *էներգիայի որևէ տեսակը մեխանիկական ուժի փոխարկող մեքենա* իմաստով:

Բարձիչ՝ գրաբարում՝ բարձրացնող, արդի հայերենում այն նաև եզրույթ է՝ *տեխնիկական ծանրություն բարձրացնող մեքենա* իմաստով:

Այժմ տեխնիկական եզրույթների քանակը գնալով մեծանում է՝ պայմանավորված տեխնիկայի արագ զարգացմամբ, տեխնիկական գյուտերի և նորարարությունների՝ մեր կյանք ներթափանցմամբ:

Մասնագիտական տարբեր եզրույթներ

Գիտության ոլորտում գործածվող բառերը կարևոր դեր են կատարում գիտական հաղորդակցման ու տեղեկատվության փոխանակման բնագավառում, և դրանց թիվը գնալով մեծանում է՝ կապված գիտության հետագա զարգացման և առաջընթացի հետ²⁰:

Հասարակական ամենատարբեր ոլորտներում նոր մասնագիտությունների, զբաղմունքների առաջացման և զարգացման հետ կապված՝ առաջ են գալիս նոր հասկացություններ, որոնք բնականորեն լեզվում պետք է անվանվեն այս կամ այն կերպ, ուստի դրանք անվանելու համար մեր լեզուն կա՛մ օգտագործում է սեփական մի-

²⁰ Տե՛ս **Հ. Օհանյան**, նշվ. աշխ., էջ 236:

ջոցները՝ նոր իմաստով կիրառելով լեզվի ավելի հին շրջանում արդեն իսկ գոյություն ունեցող բառը, կա՛մ բառեր է փոխառում այլ լեզուներից:

Լրագրողական, իրավաբանական եզրույթներ. այսպես՝ *հաղորդում (ն)* բառը գրաբարում ունի *հաղորդություն ընդունել* իմաստը, իսկ արդի արևելահայերենում այն նաև գիտական և մասնագիտական եզրույթ է՝ հետևյալ իմաստներով՝ 1. *այն, ինչ հաղորդվում է ռադիոյով և հեռուստատեսությամբ, հաղորդումների ծրագիր*, 2. *որն է մեկի կողմից հաղորդվող տվյալներ՝ տեղեկություններ* նն: Այն ունի նաև հետևյալ նշանակությունները՝ 1. *օդերևութաբանական կայանի հաղորդում*, 2. *գիտական համառոտ գեկուցում որն է բանի մասին*:

Հաշտարար բառը գրաբարում նշանակել է *հաշտություն կայացնող, բարեխոս, միջնորդ*, իսկ արդի հայերենում այն նաև իրավական եզրույթ է՝ *վիճելի գործերը վարող պետական պաշտոնյա* իմաստով:

Արհեստին առնչվող եզրույթներից է՝ *մաշկագործ*՝ գրաբարում՝ *մաշկից պատրաստված, մաշկեղեն, կաշվե*: Արդի հայերենում *մասնագիտական եզրույթ է՝ կաշեգործ*:

Հարկ է նշել, որ վերոնշյալ եզրույթներից շատերը դարձել են լայն գործածելի, իսկ շատ բառեր էլ դեռևս գործածության բարձր հաճախականություն չունեն և լայնորեն չեն կիրառվում:

Այսպիսով, յուրաքանչյուր լեզվի զարգացումն անընդհատական և շարունակական երևույթ է: Արտաքին և ներքին ազդակներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում այս կամ այն լեզվի վրա: Այս առումով, ինչպես տեսնում ենք, մեծ է գրաբարի ունեցած ազդեցությունն արդի արևելահայերենի բառապաշարի և տերմինակերտման հարցում: Ընդ որում, գրաբարյան բառերով հարստացել են արդի հայերենի ամենատարբեր ոլորտների տերմինահամակարգերը: Բնարկե, մեկ աշխատանքի շրջանակներում անհնար է ներկայացնել գրաբարյան բառապաշարից արդի հայերենին անցած բոլոր այն բառերը, որոնք ձեռք են բերել եզրույթի արժեք, սակայն

մեր համոզմամբ մեր այս հետազոտությունը կարող է մեկնարկ հանդիսանալ տերմինակերտման բնագավառին նվիրված հետազա մի շարք այլ հետազոտությունների համար:

Ակնհայտ է, որ մեր լեզվի գրաբարյան շրջանը կարևոր դեր է կատարել և այժմ էլ շարունակում է կատարել մասնագիտական տարբեր բնագավառների տերմինակերտման մեջ: Գրաբարի ազդեցությունը ժամանակակից հայերենի վրա դրսևորվում է ոչ միայն բառային միավորներ տրամադրելու, այլև մեր լեզվի բառակազմական եղանակներով ու միջոցներով մասնագիտական նոր եզրույթներ կերտելու մեծ հնարավորություններ ստեղծելու մեջ: Ինչպես նշել ենք վերևում, մեր բերած բառերը գրաբարից արդի հայերենի բառապաշարին փոխանցված և եզրույթային արժեք ձեռք բերած բառերի միայն որոշ մասն են կազմում: Նմանատիպ բառերի թե՛ համաժամանակյա և թե՛ տարժամանակյա քննությունը հնարավորություն է ընձեռում մեզ՝ ծանոթանալու բառային իմաստների՝ մեր լեզվի շրջանակներում կատարված նմանօրինակ տարբեր փոփոխություններին և անցումներին:

**ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ԵԶՐՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Գրաբարում բառերի եզրույթային նշանակության ամրակայումը բազմաթիվ գործոնների ազդեցությամբ էր կատարվում: Եզրույթացման գործընթացի քննությունը պետք է կատարել և տարժամանակյա, և՛ համաժամանակյա տեսանկյուններից: Բառապաշարի հարստացման, համալրման ընթացքը բացահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել հին հայերենի և արդի արևելահայերենի եզրույթային համակարգերի փոխառնչությունները, ընդհանրությունները և տարբերությունները: Նախ քանե՞նք այն հենքը, որի միջոցով բառը դառնում է եզրույթ կամ բառ-եզրույթ: Եզրույթների և բառ-եզրույթների ձևավորմանը գրաբարում նպաստում են հետևյալ լեզվական իրողությունները.

1) **բազմիմաստությունը**՝ բառագիտական մակարդակում. բառերը իրենց իմաստներից յուրաքանչյուրի հենքով դառնում են որևէ բնագավառ ներկայացնող ենթակառույցի՝ մանրահամակարգի միավոր,

2) **համանունությունը**, որով տվյալ բառը ձևավորում է այդ հասկացությունը արտահայտող տարբեր բառ-եզրույթներ,

3) **հոմանշությունը**՝ պայմանավորված նրանով, որ տվյալ իմաստով յուրաքանչյուր ենթաշերտի միավոր բազմիմաստ է նաև իբրև եզրույթ կամ բառ-եզրույթ:

Սա անքակտելի փոխկապակցված մի շղթա է, որի յուրաքանչյուր բաղադրիչ ունի բառիմաստ, եզրույթային իմաստ՝ տվյալ բառիմաստի հենքով, դրսևորում է տարարժեքություն՝ խոսքիմասային հենքով, ունի ոճական արժեք, որով վերոհիշյալ հատկանիշներին գումարվում են նաև մատենագրի գրչի լեզվաոճական հատկանիշներն ու յուրահատկությունները: Գրաբարյան բառ-եզրույթներն ու եզրույթներն էլ դարձել են այն առանցքային հենքը, որի վրա ձևա-

վորվել, զարգացել և շարունակում է զարգանալ արդի արևելահայերենի եզրույթային համակարգը:

Գրաբարի բառապաշարը ենթարկվել է իմաստային, ստուգաբանական, բառակազմական խորաքննին վերլուծության, մինչդեռ նրա կարևորագույն բաղադրիչը կազմող գրաբարյան եզրույթները, որոնք ունեն իմաստային, կառուցվածքային հետաքրքիր առանձնահատկություններ, ամբողջական ընդգրկմամբ գրաբարագիտության մեջ մնացել են ոչ լիարժեք ուսումնասիրված: Նրա բազմակողմանի ուսումնասիրությունը կարևորվում է թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա դիտանկյուններից, քանի որ ակնառու է դարձնում գրաբարի և արդի արևելահայերենի եզրույթների անմիջական կապը: Գրաբարի եզրույթային համակարգը այն հենքն է, որի վրա ձևավորվել է արդի արևելահայերենի եզրույթային համակարգը, և վերջինիս հետազոտության ժամանակ բազում խնդիրներ բացատրելի կարող են լինել միմիայն գրաբարի եզրույթահամակարգի ամբողջական քննության տիրույթում:

Ինչպես նշում է Է. Աղայանը, գրաբարի եզրույթային համակարգը մանրահամակարգերի¹ ենթակառուցների կանոնակարգված իրողություն է: Նրա արժևորման համար կարևոր են դառնում այն առանցքային լեզվական իրողությունները, որոնք հիմք են հանդիսացել գրաբարի եզրույթների՝ իբրև հիմնաշերտի, ենթաշերտերի ձևավորման համար: Դրա արդյունքում էլ գրաբարի եզրույթային համակարգը հարուստ կառույց է՝ իր իմաստային ենթաշերտերով՝ հասարակական-քաղաքական, իրավական-վարչական, ռազմական, ընտանեկան, կենցաղային, տարածքային բաժանումներ արտահայտող, մշակութային, հոգևոր՝ կրոնական բովանդակության, որոնց առանձին-առանձին քննությունը վկայում է գրաբարի եզրույթներին բնորոշ բազմաշերտությունը:

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացրել ենք գրաբարի եզրույթների ձևավորման հիմնակետերը, այսինքն՝ այն հենքը, որի միջոցով բառը դառնում է եզրույթ կամ բառ-եզրույթ:

¹ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1964, էջ 333-334:

Լեզվաբանության մեջ եզրույթը /տերմին, գիտաբառ/ ունի հստակ սահմանում. դա այն բառն է /կամ բառակապակցությունը/, որն արտահայտում է խիստ որոշակի որևէ գիտական հասկացություն: Այն իր գործածության ոլորտում սովորաբար մենիմաստ է²:

Է. Աղայանի բնորոշմամբ՝ բառերը բաժանվում են երեք խմբի. 1) բառեր, որոնք եզրույթ չեն /ոչ տերմինային բառեր/, 2) բառեր, որ և՛ բառ են, և՛ եզրույթ /տերմինային բառեր/, 3) բառեր, որոնք միայն եզրույթ են /տերմիններ/³: Երեք դեպքում էլ ունենք բառ, ուստի՝ բառիմաստ (բառագիտության մակարդակում), խոսքիմասային իմաստ (ձևաբանական մակարդակում), շարահյուսական և ոճաբանական մակարդակներում՝ տվյալ միավորը՝ իբրև նախադասության մեջ գործառնվող միավոր և ոճաստեղծ բաղադրիչ: Եթե գրաբարի եզրույթային համակարգը վերլուծենք և ուսումնասիրենք այս ամբողջության մեջ, կունենանք գրաբարի եզրույթային համակարգի միավորների ձևավորման պատկերը:

Բառ, բառ-եզրույթ, եզրույթ հարաբերակցության տիրույթում պիտի կարևորել մի հանգամանք. բառապաշարի մեջ եզրույթները կարևոր բաղադրիչ են կազմում ցանկացած լեզվում: Երկրորդ տեղում են բառ-եզրույթները, որոնք, ըստ կիրառական առանձնահատկությունների, շարահյուսական մի կառույցում բառ են, մեկ այլ կառույցում՝ եզրույթ, որով և դրսևորվում են նրանց խոսքակազմիչ առանձնահատկությունները: Երրորդ խումբը այն բառերն են, որոնք եզրույթ չեն կարող դառնալ՝ պայմանավորված իրենց բառիմաստով: Բառ-եզրույթները և եզրույթները իրարից տարբերվում են նրանով, որ վերջիններս, ի տարբերություն բառ-եզրույթների, չեզոք բառապաշարին չեն անցել և կիրառվում են միայն գործառնական որոշակի ոլորտում: Նշենք, որ բառապաշարի այս երեք բաղադրիչները՝ բառերը, բառ-եզրույթները և եզրույթները, ունեն բառիմաստով պայմանավորված և նրա հենքով ձևավորված քերականական՝

² Տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 292:

³ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 320:

ձևաբանական մակարդակում դրսևորվող խոսքիմասային իմաստ: Այսպես՝ գրաբարի **դուզնաքեայ** բառը, որը հատկանիշ է ցույց տալիս, որևէ բնագավառի եզրույթ չի կարող դառնալ: Այն բառ է և դրսևորում է ածական-մակբայ տարարժեքություն՝ մի դեպքում ցույց տալով առարկայի հատկանիշ, երկրորդ դեպքում՝ գործողության հատկանիշ: Իբրև ածական՝ նշանակում է՝ 1) չնչին, քիչ, նվազ, 2) հասարակ, աննշան, անշուք, իսկ իբրև մակբայ՝ մի քիչ, թեթևակիորեն⁴: Նշենք, որ բառերի՝ բառ-եզրույթ արժևորման հիմքում ընկած է նրանց բառային իմաստը: Գրաբարում բառ-եզրույթների և եզրույթների ձևավորմանը մեծապես նպաստում է բառերի բազմիմաստությունը: Սա կարևոր դրդապատճառներից մեկն է, որը հիմք է դառնում, որ տվյալ բառը իր իմաստներից յուրաքանչյուրով ձևավորի որևէ բնագավառի եզրույթ՝ տվյալ հիմնաշերտի իմաստային շրջանակում:

Բերենք օրինակներ՝ ***պարեխ** բառն ունի հետևյալ իմաստները՝ 1) ժայռ, ապառաժ, 2) լեռան ցցված մասը, 3) անդունդ, վիհ, 4) (կրոն.) Քրիստոսի գերեզմանի վրա դրված մեծ քարը (ԳԲԲ, 406)⁵: Վերջին իմաստով այն կրոնական բովանդակության բառ-եզրույթ է գրաբարում, իսկ արևելահայերենում կորցրել է այդ իմաստը:

Նշան* բառը, որը փոխառություն է պահլավերենից, ունի 12 իմաստ՝ 1) նիշ, նշանակ, 2) կնիք, դրոշմ, հետք, 3) կետ, գիծ, 4) հրաշք, սքանչելագործություն, 5) դրոշ, դրոշակ, 6) զինվորի նշան՝ սովորաբար արծվի պատկերով, տարբերիչ նշան, 7) (եկեղ.) Քրիստոսի խաչը իբրև դրոշ, 8) նշանադրություն, նշանտուք, 9) երկրաչափական կետ, 10) կենտրոն (բոլորակի), 11) փոքրիկ տառանշան, նշանախեց, նշանագիր, 12) նետի նպատակ, նպատակակետ, նշանակետ (ԳԲԲ, 289): 4-րդ և 7-րդ իմաստներով այն կրոնա-

⁴ **Լ. Խաչատրյան**, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 110: Այսուհետև՝ ԼԽԳԲԲ:

⁵ Բառերի մեկնությունները տրված են ըստ Ռ. Ղազարեանի «Գրաբարի բառարանի» (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000): Այսուհետև՝ ԳԲԱ, ԳԲԲ: Բառարանում մեկնությունները դասական ուղղագրությամբ են տրված:

կան բովանդակության եզրույթ է, 8-րդ իմաստով՝ հասարակական հարաբերություններ արտահայտող, 9-րդ և 11-րդ իմաստներով՝ մաթեմատիկական և պատկերագրության, 5-րդ, 6-րդ և 12-րդ իմաստներով՝ ռազմական եզրույթ: Ըստ որում 12-րդ իմաստով հոմանիշ է դառնում* **նշանակ** բառ-եզրույթին, որը նույնպես բազմ-իմաստ բառ է (ԳԲԲ, 290): Այն ունի հետևյալ իմաստները՝ 1) նետի նպատակ, նպատակակետ, նշան, 2) խայտառակության, անարգանքի՝ ծաղրանքի ևն առարկա, խաղք ու խայտառակություն բազմության առաջ, խայտառակ, քստմենելի տեսարան, 3) ած.՝ խայտառակված, խայտառակ, 4) նշանավոր, անվանի նշանաձիգ:

Դիտարկենք նշված բառ-եզրույթների իմաստային առանձնահատկությունները արդի արևելահայերենում:

***Նշան** – արևելահայերենում նույնպես բազմիմաստ բառ է. ունի շուրջ 12 իմաստ⁶. դրանցից առանձնացնենք *թիրախ*, *նշանադրություն*, *զինանշան*, *հավատյալ*, *նշանաբան* եզրույթները, որոնք գալիս են գրաբարից: *Նշավակ* բառ-եզրույթի համար ևս Աշոտ Սուքիասյանի «Հայերենի հոմանիշների բառարանում» նշված են *նախատինք*, *թիրախ* նշանակությունները, որով նրանք իբրև եզրույթ և բառ էին հանդես գալիս գրաբարում:

Գրաբարի եզրույթներին բնորոշ է նաև **բազմիմաստությունը**՝ տվյալ եզրույթների իմաստային շրջանակում: Դիցուք՝ ***առակ**-ը գրականագիտական եզրույթ է, որի համար ԳԲԱ-ն (էջ 169) նշում է հետևյալ իմաստները՝ 1) արձակ կամ չափածո այլաբանական ստեղծագործություն՝ բարոյախոսական բովանդակությամբ, 2) մթին, անհասկանալի, դժվարիմաստ ասացվածք, ստեղծված, հանելուկ, 3) օրինակ, նմանություն, նախատիպ, 4) ասացվածք - առած, 5) ծանակ, նշանակ, նախատինք, խայտառակություն, 6) ած.՝ խայտառակ: 4-րդ իմաստով այն հոմանիշ է **առած** եզրույթին:

⁶ **Ա. Սուքիասյան**, Հայերենի հոմանիշների բառարան, Եր., 2003, էջ 831. այսուհետև՝ ԱՍՀՀԲ:

***Առած**-ի համար ԳԲԱ-ն (էջ 168) առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) աստվածային պատգամ՝ սպառնալիք, հայտնություն, երկնային ներշնչում, տեսիլ, 2) կարճ՝ իմաստալից ասացվածք, 3) հարվածք, խոցվածք, վերք: 1-ին իմաստով՝ կրոնական բովանդակության, 2-րդ իմաստով գրականագիտական եզրույթ է: Ըստ որում՝ 1-ին իմաստով հոմանիշ է դառնում **տեսիլ** եզրույթին, որը նույնպես բազմաբովանդակ բառ-եզրույթ է: **Առած** եզրույթի համար Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանում» առանձնացված են հետևյալ իմաստները. իբրև գոյական՝ 1) աստվածային վճիռ, պատգամ, գուշակություն. այս իմաստով կրոնական եզրույթ է. օրինակը՝ «Առած բանի Տեառն ի վերայ Իսրայելի» (Զաք, ԺԲ, 1), 2) առակ, ասացվածք. այս իմաստով այն գրականագիտական եզրույթ է. օրինակը՝ «Տեր առ ի վերայ դորա զառած» (Դ. Թագ., Թ 25), 3) հարված, վերք, սպի. այս իմաստով այն բառ է. օրինակը՝ «Բժշկեցան ի մեզ առածք կամակոր թշնամույն» (ՆՀԲ):

***Առակ** բառ-եզրույթի համար նշված են հետևյալ իմաստները. 1) այլաբանական խոսք, խրատ (գրականագիտական եզրույթ), 2) հանելուկ (գրականագիտական եզրույթ), 3) օրինակ, ձև, եղանակ (այս իմաստով այն բառ է). օրինակը՝ «Նախ առակքն լինիցին, եւ ապա եկեսցէ ճշմարտութիւնն» (Ագաթ, 214), 4) ժողովրդական զրույց, առած (գրականագիտական եզրույթ), 5) խայտառակություն, նշավակ, նախատինք: Վերոբերյալ բոլոր իմաստներով այն գոյական է: Իսկ իբրև ածական՝ ունի *խայտառակ եղած, նշավակ դարձած* իմաստը (ԼԽԳԲԲ, էջ 63): Ինչպես տեսնում ենք, այն բազմ-իմաստ բառ-եզրույթ է:

Արդի արևելահայերենում ***առած** և ***առակ** բառ-եզրույթների եզրույթային և բառային իմաստները ձևավորվել են գրաբարի հիման վրա: ***Առած** – ասացվածք, առակ (ժող.) (կարճ, իմաստալից խոսք): Ըստ հոմանիշների բառարանի՝ այն գրականագիտական հասկացություն է (ԱՍՀՀԲ, 85): ***Առակ**-ը արդի հայերենում նույնպես գրականագիտական եզրույթ է՝ հոմանիշ **առած**-ին, իբրև բառ՝ ունի *խայտառակություն* նշանակությունը, ինչը ժառանգել է գրաբարից: Այս հենքով էլ կազմվել են ***առակ** կամ **առած դառնալ** – *խո-*

սակցության՝ ծաղրի առարկա դառնալ, խայտառակվել, *առակ կամ առած դարձնել /կամ շինել/ – խայտառակել դարձվածքները:

Գրաբարում առկա է նաև նրանց՝ **հանելուկ** իմաստը: Արդի արևելահայերենում **հանելուկ**-ը մեկնաբանվում է հետևյալ իմաստներով: **Հանելուկ** – (գրկն.) առեղծված, (բանահյուսության տեսակ, որն է առարկայի կամ երևույթի այլաբանական նկարագրությամբ՝ նրանց անվանումը որոշելու համար), 2) (փխբ) հարց, խնդիր (կնճռոտ, անհայտ, անորոշ)⁷:

Մեկ այլ օրինակ՝ ***բուն** – փոխառություն է պահլավերենից: Բազմիմաստ է և այս հենքով ձևավորում է տարբեր բառ-եզրույթներ: Այն ունի հետևյալ իմաստները. 1) ծառի վերգետնյա մասը մինչև ճյուղերը (բուսաբանական բնագավառի բառ-եզրույթ), 2) երկայնաձև ձող, որ ծառայում է իբրև բռնատեղ՝ աշտանակի, նիզակի ևն (ռազմական բնագավառի բառ-եզրույթ), 3) փխբ. սկիզբ, սկզբնավորություն, 4) հիմք, արմատ, խորք, 5) բանակ. բանակի գունդ (ռազմական բառ-եզրույթ), 6) սերնդի նախահայրեր, նախորդ սերունդներ (հասարակական հարաբերություններ արտահայտող բառ-եզրույթ), 7) հիմնական, էական, հարազատ, ճշմարիտ (բառ է)⁸:

Արդի հայերենում 5-րդ իմաստը չի պահպանվել, փոխարենը առկա է բուն/ծառաբուն մասնագիտական բառը⁹:

***Հիմն** բառը հին հայերենում ունի՝ 1) պատի հիմք, 2) փխբ. հենարան, սկիզբ, հիմունք, պատճառ (ԳԲԲ, էջ 70) իմաստները, որոնք ընդարձակվելով ճյուղերի են բաժանվել հետագայում: Արդի հայերենում *հիմք*-ն ունի 17 իմաստ, որոնցից մի քանիսը եզրույթներ են՝ լեզվաբանական, մաթեմատիկական, քիմիական, տեխնիկական, ճարտարապետական (ԺՀԼԲԲ, 1, էջ 70):

Գրաբարի եզրույթային համակարգում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում եզրույթների **տարաթժեքությունը**:

Տարաթժեքությունը լեզվական կարևորագույն իրողություն է, որը ձևավորվում է բառիմաստի և խոսքիմասային իմաստի հարա-

⁷ ԱՍՀՀԲ, էջ 590:

⁸ ԳԲԱ, էջ 297:

⁹ ԺՀԼԲԲ, էջ 208:

բերության տիրություն՝ արտացոլելով լեզվի մակարդակների անխազելի կապը: *Բառիմաստ – ձևաբանական իմաստ – շարահյուսական գործառական արժեք* անխազելի լեզվական տիրություն են դրսևորվում տարաստիճան տարարժեքային միավորները: Բնականաբար տարարժեքությունը բնորոշ է նաև գրաբարի բառ-եզրույթներին և եզրույթներին: Տարարժեքության ցանկացած դրսևորման հիմքում ընկած են տվյալ բառային միավորի գործառական դրսևորումները, որոնցում կարևորվում է նրա խոսքիմասային իմաստը, որի հիմքում էլ ընկած է տվյալ բառային միավորի բառիմաստը: Այս շղթայում կարևորվում է յուրաքանչյուր օղակի կապը մյուսների հետ, որոնք ամբողջացնում են այդ շղթան՝ բառիմաստ – խոսքիմասային իմաստ – շարահյուսական՝ գործառական կիրառում՝ այդ իմաստների հենքով, այլև ռճաբանական առանձնահատկություն՝ բնորոշ մատենագրի

գրչին: Այժմ ներկայացնենք տարարժեքություն դրսևորող մի քանի բառ-եզրույթներ և եզրույթներ¹⁰:

***Աղետ** – դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները՝ 1) վիշտ, տանջանք, թշվառություն. օրինակը՝ «Յետ փոքու ժամանակի աղետք անցին զամենեքումբք» (Խոր., 126), 2) ցավալի դեպք, պատահար, փորձանք, չարիք, դժբախտություն. օրինակը՝ «Մեծ էր ատելութիւնն և անհնարին վերջին աղետ» (Բ, Թագ., ԺԳ, 15), 3) գութ, կարեկցանք, սրտացավություն (օրինակը՝ «Ծանիցուք գութ աղետից Քրիստոսի» (ՆՀԲ)): Իբրև *ածական*՝ ունի ցավալի, աղետավոր նշանակությունը. օրինակը՝ «Աղետ տարակոյս ապականութեան» (Եփր. Եղ) (ԼԽԳԲԲ, 20)¹¹ և հոմանիշ է *պատահար, վթար, ահափետ* եզրույթներին:

¹⁰ Հիմք ենք ընդունել Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանի» մեկնությունները: Անհրաժեշտության դեպքում ներկայացնում ենք նաև մատենագրական բնագրային վկայումները ըստ բառարանի: Նշենք, որ բառարանն ընդգրկում է գրաբարի բառապաշարում տարարժեքության տարաստիճան դրսևորումները հիմնավորող փաստագրական հարուստ նյութ, որ ներկայացնում է գրաբարով ինքնուրույն ու թարգմանական բազմաժանր մատենագրության բառապաշարը:

¹¹ Բնագրային օրինակների համառոտագրությունների ցանկը տե՛ս ԼԽԳԲԲ-ի 370-381 էջերում:

***Ահափետ** եզրույթը դրսևորում է ածական-գոյական տարաբ-
ժեքություն: Իբրև *ածական*՝ ունի *ահ ու սարսափ տարածող, սոսկա-
լի, ահափոր* նշանակությունը. օրինակը՝ «Ահագին ահափետ օր-
հասք մահու հասուցանեին Իսրայելեան գնդին» (Յհ., Կթ, 169): Իբրև
գոյական՝ նշանակում է *ահաբեկող դիպված, պատահար՝ երևույթ*
.օրինակը՝ «Հուզեցան չար իրակութիւնք եւ սասանութիւնք այլ եւ
գործք անարժանք և ահապետք մահուց» (Յհ., Կթ, 8) (ԼԽԳԲԲ, 19):

***Պատահար** – ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) պա-
տահմունք, պատահար, դիպված, դեպք, անցք: Ունի նաև *հանգա-
մանք, բախտ* իմաստները (ԳԲԲ, 188): 2) *չարաբախտ դիպված, պա-
տահմունք, դժբախտ դեպք, փորձանք*, պատահար-ը հոմանիշ է
աղետ, ահափետ բառերին, որոնք հասարակական հարաբերու-
թյուններ արտահայտող եզրույթներ են: *Պատահար* բառը գրաբա-
րում նշանակում է նաև *արկած*: Ըստ ԳԲԱ-ի՝ ***արկած** բառ-եզրույթն
ունի հետևյալ իմաստները. 1) Որ ընկնում է՝ վրա է գալիս, վրա է
թափվում (արկած ջրոյ, հրոյ նն), 2-րդ իմաստն է *անակնկալ դեպք,
դիպված պատահմունք*, 3-րդ իմաստը՝ *դժբախտ դեպք, փորձանք,
պատահար* (ԳԲԱ, էջ 214): 2-րդ և 3-րդ իմաստներով այն հոմանիշ է
աղետ, ահափետ, պատահար եզրույթներին:

Արդի արևելահայերենում հոմանիշ են **պատահար, աղետ, վթար** եզրույթները հոմանիշ են՝ *դժբախտ դեպք* իմաստով: Գրաբա-
րում ԳԲԲ-ն **վթար** եզրույթի համար նշում է 1. վնաս, վտանգ,
2. վիատություն, հուսահատություն (էջ 524) իմաստները: Արդի
հայերենում ի մասնավորի այն հաճախադեպ է ճանապարհատ-
րանապորտային պատահարի իմաստով: Կիրառվում է նաև *մեխա-
նիզմի աշխատելու ժամանակ առաջացած վնասվածք* իմաստով
/ԺՀԼԲԲ, էջ 1389/:

***Աղերս** – այս բառ-եզրույթը, բազմիմաստությամբ պայմանա-
վորված, դրսևորում է գոյական-ածական երկաստիճան տարաբ-
քություն (տե՛ս ԼԽԳԲԲ, 19-20): Իբրև *գոյական*՝ նշանակում է՝ 1) թա-
խանձագին խնդրանք, աղաչանք, պաղատանք, ողորձանք, 2) գույթ,
ողորմություն, 3) իր արարքի՝ վարքագծի ջատագովություն, ինք-

նարդարացում, 4) մեկին սիրաշահելու համար արված ընծա, նվեր, 5) պարզև, շնորհ, 6) կապ, շփում, հարաբերություն, 7) հույս, իսկ իբրև *ածական*՝ աղերսական, աղերսալի, մեղմ: ԺՀԼԲԲ-ում /էջ 24/ **աղերս**-ի գրաբարյան 6-րդ իմաստը՝ *կապ, առնչություն*, ներկայացված է որպես համանուն-2, մնացյալ իմաստներից փոփոխվել են 2-րդը և 3-րդը՝ վերածվելով հետևյալներին՝ 2. ընդհանրապես խնդիրք, խնդրանք, 3. /մինչև/ նվեր-կաշառք, որ խնդիրքը ներկայացնելուց առաջ տալիս էին դատավորին՝ իշխանավորին ևն հոգուտ իրենց տրամադրելու համար: Ածականական իմաստը համարվում է հնացած:

***Ամբոխ** – այս բառ-եզրույթը նույնպես դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները. 1) բազմություն, ժողովուրդ, հրոսակախումբ, 2) աղմուկ, աղաղակ, 3) իրարանցում, խռովություն: Իբրև *ածական*՝ նշանակում է խիտ, հոծ, խոնված. օրինակը՝ «Երագ ժողովեցեն զօրքն՝ ամենայն նաեւ Արգամ ամբոխ հետեւակալ» (Խոր., 169) (ԼԽԳԲԲ, 21):

***Այր** – դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները. 1) արբունքի երիտասարդ տղամարդ, 2) ամուսին, 3) զինվոր, մարտիկ: Իբրև *ածական*՝ ունի կտրիճ, արի, քաջ նշանակությունը (ԼԽԳԲԲ, 21): Ըստ ԺՀԼԲԲ-ի՝ *զինվոր* իմաստը ժամանակակից հայերենում վերացել է, *տղամարդ*, *ամուսին* իմաստներն էլ, որքան էլ զարմանալի է, համարվում են հնացած: **Այր**-ը ունի համանուն և՛ գրաբարում, և՛ աշխարհաբարում՝ *քարանձավ*, *քարայր*: Սակայն արևելահայերենում ձեռք է բերել նոր իմաստ՝ *խոռոչ*, հիվանդագին պրոցեսից հյուսվածքների քայքայման հետևանքով որևէ օրգանի մեջ առաջացած փոքրիկ դատարկություն, որը բժշկագիտական եզրույթ է /էջ 24/:

Ինչպես վերը նշեցինք, գրաբարի բառապաշարի մեջ մտնող բազում բառեր բազմիմաստ են, որը և հիմք է տալիս գրաբարի եզրույթային համակարգին բնորոշ կարևորագույն մի հանգամանքի՝ **եզրույթների և բառ-եզրույթների հոմանշությանը**: Ճիշտ է, եզրույթը

հիմնականում արտահայտում է մեկ հասկացություն¹², սակայն գրաբարի եզրույթային համակարգի միավորների բազմաշերտությունը շատ դեպքերում ելակետ է դառնում այս կամ այն բառի գնահատման համար իբրև եզրույթի, որի վկայությունն են վերոնշյալ բառ-եզրույթների մեկնությունները: Մա մի իրողություն է, որ դիտարկելի է ցանկացած եզրույթի իմաստային շրջանակը քննելիս: Այսպես՝ ***տաշտ** (փոխառություն պահլավերենից) բառ-եզրույթն ունի 5 իմաստ՝ 1) գավաթ, բաժակ, թաս, 2) կոնք, լազան, 3) կողով, քթոց (պտուղների), 4) փոսի մեջ թաղված արմատները (որթատունկի), 5) ձիու գավակը պաշտպանող զրահ՝ իբրև զարդ (ԳԲԲ, էջ 541): Առաջին երեք իմաստներով այն կենցաղային տարբեր իմաստներով բառ-եզրույթ է, 4-րդ իմաստով՝ հողամշակման բնագավառի եզրույթ, 5-րդ իմաստով՝ ռազմական եզրույթ:

Դժվար չէ նկատել, որ գրաբարի եզրույթային համակարգին բնորոշ բազմաշերտությունը պայմանավորված է բառի բազմիմաստությամբ, և ահա իմաստներից յուրաքանչյուրով էլ այն դառնում է եզրույթային տարբեր ենթակառույցների միավոր: Դիտարկենք ***փող** բառ-եզրույթը: ԳԲԲ-ն նշում է երկու համանուն նշանակություններ. **փող¹**-ը իբրև մարդու կառուցվածքի բաղադրիչի իմաստով բառ, նաև միջանցք (շինության մեջ) իմաստը: **Փող²** երկրորդ՝ համանունի համար ԳԲԲ-ն առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) եղջերափող՝ նվագելու գործիք, շեփոր, 2) փխբ. առաքյալները իբրև ազդարարող, քարոզող, 3) որոշ առարկաների խողովակաձև մասը, խողովակ, 4) եղեգ: 1-ին իմաստով այն երաժշտական բնագավառի եզրույթ է, 2-րդ իմաստով՝ շինարարական, իսկ նրա համանուն միավորը ձևավորում է մարդու անատոմիական կառուցվածքի ենթաշերտը ներկայացնող եզրույթը, փոխաբերական իմաստով գործառույթում այն կրոնական բովանդակության եզրույթ է:

Արդի հայերենում ունենք հետևյալ պատկերը. **փող¹** - դրամ / ևս 7 իմաստ/, **փող²** - հրազենի խողովակաձև մաս/ ևս 6 իմաստ/,

¹² Տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 34:

փող³-1/պարանոց, վիզ, 2/ կոկորդ, 3/ կերակրափող. Վերջին համանունի իմաստները տրված են *հնացած* նշումով¹³:

Բերենք մեկ այլ օրինակ:

Ամեն բառը գրաբարում դրսևորում է համանունություն հետևյալ իմաստներով. ***ամեն**¹- այս դեպքում առկա է նաև ածական-գոյական տարաբեքություն. իբրև *գոյական*՝ նշանակում է ամենքը, բոլորը, ամեն բան, ամեն ինչ, իբրև *ածական*՝ նշանակում է ամեն, բոլոր, ամբողջ, համայն: **Ամեն**²- փոխառություն է եբրայերենից և ունի հետևյալ իմաստները՝ 1. խոսքի վերջում՝ եղիցի, թող լինի, կատարվի. կրոնական բովանդակության եզրույթ է և 2. խոսքի սկզբում՝ ստույգ, ստուգապես, ճշմարիտ, արդարև, իսկը (ԳԲԱ, էջ 47). այժմ վերջին իմաստը վերացել է: **Ամեն**³- այս դեպքում այն համանուն է *ամեն*, *ամենա* նախածանցին, որով կազմվում են տարբեր նշանակություններով բառեր գրաբարում: ԳԲԱ-ն նշում է հետևյալները. 1) բայարմատի հետ՝ *ամենաբեր*-ամեն ինչ բերող, ձևավորում է խնդիր՝ *ամեն ինչ* իմաստով, 2) գոյականի հետ գործածվելիս դառնում է հատկացուցիչ, օրինակ՝ *ամենահայր*՝ ամենքի հայրը, *ամենաձև* - ամեն տեսակի ձև ունեցող, 3) երկրորդ՝ բառին տալիս է սաստկական իմաստ. *ամենագեղեցիկ* - շատ գեղեցիկ, ամենազեղուն՝ խիստ լեցուն (ԳԲԱ, 10): Վերջին կետում նշված օրինակներում է *ամեն*-ը գիտակցվում է ածանց՝ բառակազմական ձևույթ, մյուսներում արմատ է:

Այսպիսով, կատարված քննությունը մեզ բերեց այն եզրահանգմանը, որ եզրույթների և բառ-եզրույթների ձևավորմանը գրաբարում նպաստում են նրանց հետևյալ հատկանիշները. 1) **բազմիմաստությունը**՝ բառագիտական մակարդակում. բառերը իրենց իմաստներից յուրաքանչյուրի հենքով դառնում են որևէ բնագավառ ներկայացնող ենթակառույցի՝ մանրահամակարգի միավոր,

2) **համանունությունը**, որով տվյալ բառը ձևավորում է այդ հատկացությունը արտահայտող տարբեր բառ-եզրույթներ,

¹³ ԺՀԼԲԲ, էջ 1530:

3) **հումանշությունը**՝ պայմանավորված նրանով, որ տվյալ իմաստով յուրաքանչյուր ենթաշերտի միավոր բազմիմաստ է նաև իբրև եզրույթ կամ բառ-եզրույթ:

Սա անխախտ փոխկապակցված մի շղթա է, որի յուրաքանչյուր բաղադրիչ ունի բառիմաստ, եզրույթային իմաստ՝ տվյալ բառիմաստի հենքով, դրսևորում է տարարժեքություն, ունի ոճական արժեք, որով վերոհիշյալ հատկանիշներին գումարվում են նաև հեղինակի լեզվի ոճական առանձնահատկությունները:

Հինհայերենյան բառ-եզրույթներն ու եզրույթներն էլ դարձել են այն առանցքային հենքը, որի վրա ձևավորվել, զարգացել և շարունակում է զարգանալ արդի արևելահայերենի եզրույթային համակարգը:

**ԿՐՈՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐՆ ՈՒ
ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»
ԵՐԿՈՒՄ**

Գրաբարի եզրույթային համակարգը բազմաշերտ է. յուրաքանչյուր ենթաշերտ ունի իր ուրույն առանձնահատկությունները ինչպես բառագիտական, այնպես էլ ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Արդի արևելահայերենի եզրույթային համակարգի սկզբնաղբյուրը հին հայերենն է: Ըստ այդմ՝ կարևորվում է գրաբարի բառ-եզրույթների և եզրույթների թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա քննությունը: Գրաբարով մատենագրությունը հարուստ փաստական նյութ է ընձեռում նրանց իմաստաստուգաբանական ուսումնասիրության համար: Մասնավորապես պատմագրությունը ներկայացնում է թագավորների վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, հոգևոր և մշակութային կյանքը:

Եզրույթային համակարգի յուրաքանչյուր շերտ՝ իր ենթաշերտերով, կարևորվում է ներքին համակարգվածությամբ. Նրանց գործառական հաճախականությունը տարբեր է՝ պայմանավորված երկի նպատակաուղղվածությամբ և բովանդակությամբ:

Գրաբարի բառապաշարն առ այսօր ենթարկվել է բազմակողմանի քննության՝ իմաստակառուցվածքային և ստուգաբանական հարուստ վերլուծություններով¹, սակայն գրաբարի բառապաշարի իմաստային տարբեր շերտերն ընդգրկող բառերի՝ իբրև եզրույթների, գնահատականը տրված չէ: Այնինչ գրաբարի բառապաշարում եզրաբառերը ծանրակշիռ տեղ ունեն, որոնց քննությունը կարևորվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա դիտակետերում:

Գրաբարի տերմինների համաժամանակյա քննության համար հարուստ նյութ է տալիս Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկը²:

¹ Մանրամասն տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 120-226:

² Քննությունը կատարված է ըստ «Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց» (Եր., 1987) բնագրի:

Երկի բառապաշարի ակնառու հատկանիշը իմաստային բազմաշերտությունն է, որը պայմանավորված է երկի բովանդակությամբ:

Աշխատության **«Խոստաբանությունն նախագիտելի»** հատվածում³ տրվում են տեղեկություններ երկում ընդգրկված պատմությունների մասին, որոնք «յիշատակարանք են, այսինքն՝ կարգ անցելոց իրաց, գործք և վարք քահանայապետաց սրբոց արանց աստուծոյ, և՛ թագաւորաց տէրանց աշխարհաց Արշակունեաց, և՛ զօրավարաց՝ արանց անուանեալ քաջ նախարարաց, և՛ խաղաղութեան, և՛ պատերազմին, և՛ շինութեան, և՛ աւերածոյ, և՛ արդարութեան, և՛ անօրէնութեան, և՛ աստուածապաշտութեան, և՛ ամբարշտութեան...» (Էջ 6): Հետևաբար երկի բառապաշարում առանձնակի տեղ են զբաղեցնում այն բառերն ու տերմինները, որոնք ներկայացնում են՝ ա) երկրի հոգևոր և մշակութային, ռազմաքաղաքական կյանքը, բ) թագավորների սովորույթները, վարքուբարքը, արտաքին և ներքին քաղաքականությունը, գ) պալատական տարբեր պաշտոնյաների, նախարարների և գորավարների՝ միմյանց և թագավորների հետ ունեցած հարաբերությունները, արտաքին հանդերձանքը և այլն:

Ներկայացնենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Օր.՝ **բարձ** (զենդ.) բառը բազմիմաստ բառ է: Ռ. Ղազարյանը «Գրաբարի բառարանում»⁴, ի թիվս այլ իմաստների, նշում է **պատվավոր տեղ, որ թագավորները շնորհում էին ազնվականներին, նախարարներին՝ ըստ ավագության աստիճանի** իմաստը և օրինակը բերում է Բուզանդից. «Եւ **բարձ** նորա ի վեր, քան զամենայն նախարարացն» (Բուզ. Ե, 7): Աշխարհաբար թարգմանության 178-րդ ծանոթագրության մեջ Ստ. Մալխասյանցը վկայում է, որ այն նույն պարսկական գահին է (Էջ 440), որ նշանակում է **այն տեղը** կամ **բարձը**, որտեղ նախարարը նստում է թագավորական սեղանի շուրջ՝ նայելով իր ավագությանը: Նույնը նշված է նաև ԳԲԱ-ում: **Գահը** (պհլ.) բազմիմաստ բառ է, որի համար առանձնացված են հինգ իմաստներ, որոնցից եր-

³ Բնագրային օրինակների և մեջբերումների էջերը տրվում են շարադրանքում:

⁴ Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Ա, Եր., 2000 (այսուհետև՝ ԳԲԱ), Բ, Եր., 2000 (այսուհետև՝ ԳԲԲ):

րորդը հետևյալն է. այն տեղը՝ աթոռը, որ հատկացված է ազնվական տոհմի անդամին՝ թագավորի սեղանի շուրջը կամ ատյանում՝ բարձ⁵:

Բնագրային օրինակներից մեկում հեղինակը հավելել է նաև **էրեց** արմատը *qush* բառի նշանակությամբ. «Ջայնու ժամանաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի 'ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի 'ի չորից **գահերեց բարձրերեց** տաճարին արքունի» (էջ 36):

Մարդպետը պալատական կարևոր պաշտոնյաներից մեկն էր՝ արքունի պալատի ներքինապետը հայ Արշակունիների ժամանակ, որ սովորաբար կոչվում էր Հայր Մարդպետ: Այն պալատական պաշտոնյայի նշանակությամբ պատմական տերմին է, ինչպես՝ «...գլխակ **Մարդպետ**, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ **հայր** թագաւորին՝ թողին զնա սահմանապահ ի Գանձակ» (էջ 310): Բնագիրը հարուստ է ռազմական նշանակությամբ տերմիներով. օր.՝ «Եւ **լեզեռն** զօրուն բազմութիւնն, այս ինքն Յունաց զօրացն սպարակիրն... **զգունդ** նիզակաւորացն, կուռ վառեալք...» (էջ 310): **Լեզեռնը** (լատ., հուն.) հռոմեական զորքի միավորում է, որ «տարբեր ժամանակներում պարունակում էր 3000-6000 հետևակ և հեծեալ զինվոր» (ԳԲԱ, էջ 530):

Գունդը ռազմական տերմին է. այն փոխառություն է պահլավերենից և նշանակում է ընդհանուր զորքի մի խոշոր հատված, մաս (ԳԲԱ, էջ 341), բայց այն բազմիմաստ բառ է, որի համար ԳԲԱ-ն առանձնացնում է 5 իմաստ (ԳԲԱ, էջ 341)՝ 1) որևէ երկնային մարմին, 2) ծովի խորությունը չափելու գործիք ևն: Իբրև ռազմական տերմին՝ արդի արևելահայերենում այն պահել է իր գործառնությունը. «Ապա ժողովրդ սպարապետն զորավարն Հայոց Մեծաց Վաչէ զագատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն ... և բազում ծախ մեծամեծ աւագանոյն կոտորելոցն» (էջ 44):

⁵ Տե՛ս ԳԲԱ, էջ 304. Բառարանային վկայումները շարադրանքում տրված են ոչ դասական ուղղագրությամբ:

ԳԲԱ-ն **աւագանի** բառը մեկնաբանում է իբրև հավաքական գոյական՝ ավագներ, իշխաններ, մեծամեծներ, թագավորի խորհրդականներ: Այսօր այն քաղաքական կառավարման տերմին է: Այս բառերի՝ իբրև տերմինների, քննությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Բուզանդը տալիս է ծովածավալ նյութ, որը կարիք ունի համակարգային վերլուծության, ինչին և ուղղված է մեր աշխատանքը:

Բնագրում տեղ գտած տերմինների համաժամանակյա քննությունը հարուստ նյութ է տալիս գրաբարի տերմինների արժևորման համար՝ ոչ միայն լրացնելով գրաբարագիտության մեջ գրաբարի տերմինների չուսումնասիրված բաց էջը, այլև հիմք տալով այդ տերմինների արժևորմանը տարժամանակյա դիտակետում, քանի որ նրանց մի մասը իբրև տերմիններ մնացել է գրաբարի բառապաշարի շրջանակում, և այսօր կարող ենք արժևորել իբրև պատմական բառ-տերմիններ, մի մասն անցել է հայերենի զարգացման հաջորդ փուլերին՝ կրելով իմաստային որոշակի փոփոխություններ: Օրինակ՝ **մատեան** բառի համար ԳԲԲ-ում նշվում է, որ այն փոխառություն է պահլավերենից, և առանձնացվում են հետևյալ իմաստային խմբերը՝

Ա.

- 1) մագաղաթ կամ թուղթ, որի վրա գրում էին,
- 2) գիրք, գրվածք, արձանագրություն,
- 3) պատմական բովանդակությամբ գիրք, պատմագիրք,
- 4) գրքի մաս՝ գլուխ,
- 5) գրադարան:

Բ. էգ ձի, մատակ, զամբիկ

Գ. **Մասանեան Պարսկաստանում ընտիր հեծելագորի գունդ, իբր՝ անմահների գունդ:**

Այս վերջին իմաստով այն ռազմական նշանակության տերմին է, բնագրում ունենք. «...**մատենիկ** գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել...» (էջ 32):

Այն պատմական եզրույթ է:

Իսկ արձանագրությունների և հաշվառումների իմաստներով այսօր մատյան բառը գործածվում է **հաշվեմատյան** (հաշվապահական տիրույթում), **դասամատյան**՝ ուսումնական գործընթացների կազմակերպման տիրույթում: Այն պահպանել է նաև պատմագիրք իմաստը՝ իբրև գրականագիտական տերմին:

Ղեսպան - «Ապայայնմ ժամանակի Վարազն արձակեր **ղեսպան** առ արքայն Հայոց (էջ 80), ունենք նաև *ղեսպան* արմատով կազմված **ղեսպանագնացեալ** բառը. «Սա **ղեսպանագնացեալ** էր առ Վարազ Շապուհ...» (էջ 78): ԳԲԱ-ում վկայված են *նվիրակ*, *պատգամախոս*, *սուրհանդակ* իմաստները:

Արդի հայերենում այն նշանակում է նաև պետական կառավարման լիազորված անձ, որը ներկայացնում է իր երկրի շահերը. իբրև այդպիսին ունենք **ղեսպան** և **ղեսպանատուն** տերմինները:

Հազարապետ (փխն է պահլավերենից) - «...զմեծ **հազարապետն** ի հազարապետութեան» (էջ 48): ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) հազար զինվորի պետհրամանատար, 2) բարձրագույն քաղաքացիական պաշտոնյա, 3) արքունական հրամանատար, 4) արքունական իշխանական ելքումուտք կառավարող պաշտոնյա, վերակացու, տնտես: Այն պատմական բառ է և տերմին:

Ինչպես նշեցինք, բնագրում տեղ գտած տերմիններն ընդգրկում են տարբեր բնագավառներ: Նրանք ունեն մանրակրկիտ և բազմակողմանի քննության և վերլուծության կարիք, ուստի ճիշտ ենք համարում կատարել նրանց ուսումնասիրությունն ըստ բնագավառների: Բնագրի բառապաշարում մեծ տեղ են զբաղեցնում կրոնական բովանդակության բառերն ու տերմինները, քանի որ հեղինակը առանձին խնամքով է ներկայացնում Հայոց աշխարհի հոգևոր կյանքը՝ սկսյալ առաջին քահանայապետ Գրիգորի որդի Վրթանեսի քահանայապետությունից մինչև «ցայնոսիկ ի վերջինսն՝ որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց. **մի առ միոջէ կարգօք թուօք և համարօք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք**» (էջ 6): Սույն ուսումնասիրության մեջ մենք կատարել ենք կրոնական բո-

վանդակություն ունեցող բառերի և տերմինների համաժամանակյա քննություն⁶:

Բնագրում գործածված կրոնական բովանդակություն ունեցող բառերը բաժանվում են երկու խմբի՝

1) Բուն կրոնական իմաստ ունեցող բառեր, որոնք արժևորվում են իբրև տերմիններ, օրինակ՝ եկեղեցական պաշտոնների անվանումները՝ **քահանայ, եպիսկոպոս, քորեպիսկոպոս, եպիսկոպոսապետ ևն, եկեղեցի, մեհեան, ուխտ, բազին, վարդապետություն, աստուած, մատուռ**:

2) Բառեր, որոնք ունեն նաև այլ իմաստներ, բայց, ի շարս այդ իմաստների, ունեն նաև կրոնական նշանակություն. օրինակ՝ **կանոն** բառի համար ԳԲԱ-ում նշվում է յոթ իմաստ: Այն փոխառություն է հունարենից, և միայն 7-րդ իմաստն է կրոնական՝ աստվածային, եկեղեցական, քաղաքական օրենքներ, նաև շարական, օրհներգ, եկեղեցական երգեր: Բնագրում այն գործածված է «Խոստումն երրորդի» գլուխները ներկայացնելիս՝ ցանկի գլուխներ իմաստով (էջ 8): Հեղինակը օգտագործել է **խոստումն** և **խոստաբանություն** բառերը, որոնցից երկրորդը ոչ միայն գրականագիտական տերմին է՝ **նախաբան, առաջաբան**, այլև **գրվածքի գլխակարգություն, ցանկ** իմաստներով, իսկ **խոստումն** (երրորդ) տերմինը հեղինակը գործածել է դպրություն իմաստով՝ ըստ Ստ. Մալխասյանցի թարգմանության (էջ 6): Այն՝ իբրև բառային միավոր, ունի նաև **ուխտ, կրոնավորական կարգ** իմաստները:

Նշենք, որ բնագրում գործածված կրոնական բովանդակությամբ տերմինները արժևորելիս հիմք ենք ընդունել Էդ. Ադայանի այն մոտեցումը, որ հայերենի բառապաշարն ընդհանրապես բաժանում է 3 խմբի՝ տերմինագիտական դիտակետում՝ 1) բառեր, որոնք ոչ տերմինային են, 2) տերմինային բառեր, որոնք ընդհանուր նշանակության բառեր են, բայց որոշակի իմաստների դրսևորումներում՝ նաև

⁶ Մյուս բնագավառներն ընդգրկող բառերին և տերմիններին կանոնադառնանք մեր առաջիկա ուսումնասիրություններում:

տերմին, 3) տերմիններ, որոնք ունեն միայն տերմինային նշանակություն⁷:

Կրոնական բովանդակության բառերը բնագրում գործածված են բոլոր գլուխներում, բայց նրանցով ակադձուն է հատկապես երրորդ դպրությունը: Այն ընդգրկում է մեր կողմից քննված տերմինների երկու երրորդ մասը: Հեթանոսական մեհյաններին և կուռքերին փոխարինելու էին քրիստոնեական վարդապետությանը բնորոշ շինությունները՝ եկեղեցիներ, մատուռներ, առաքելարաններ, մարգարեարաններ, վկայարաններ ևն: Վրթանես քահանայապետի քրիստոսանվեր գործունեությունը և քարոզչությունը հեղինակը նկարագրում է խնամքով և քրիստոնեական վարդապետությունը բնորոշող բառապաշարի ընտրովի գործածությամբ, ինչի նպատակը նոր հավատքը ներագրու դարձնելն է:

Նպատակահարմար ենք գտնում բնագրում գործածված կրոնական բովանդակության յուրաքանչյուր բառ մեկնաբանել իմաստային մանրակրկիտ վերլուծությամբ, ինչը հիմք է կրոնական տերմինների ճշգրիտ սահմանազատման համար մի կողմից և նրանց՝ իբրև այդպիսին, նաև տարժամանակյա դիտակետում գնահատելու համար: Անշուշտ, յուրաքանչյուր բառ արժևորվում է նաև մյուս բառերի հետ ունեցած հարաբերակցության տիրույթում: Այս դեպքում հստակ է դառնում գրաբարի կարևորագույն դերը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինային համակարգի ձևավորման գործում:

Բնագիրը սկսվում է **երրորդ դպրությամբ**⁸: Ա ենթազվիում գործածված են կրոնական բովանդակության հետևյալ բառերը՝ **քարոզութիւն, առաքեալ, մարտիրոսութիւն, վարդապետութիւն, հաւատ(ք), քարոզութիւն, քարոզ**:

⁷ Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 320:

⁸ Հեղինակը առաջաբանում նշում է. «... են սոքա զորք մատենանք...» (էջ 6)՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ. այս մասին մանրամասն տե՛ս աշխարհաբար տեքստի թիվ երեք ծանոթագրությամբ տրված բնագրի թարգմանիչ Մտ. Մալխասյանցի դիտարկումը՝ էջ 419:

Քարոզ բառը փոխառություն է ասորերենից, բազմիմաստ է և ունի հետևյալ իմաստները՝ 1) ի լուր ամենքի իշխանության հրովարտակները, հրամանները ևն հայտարարող՝ ազդարարող, մունետիկ, 2) մունետիկի կողմից հրապարակված հրաման կամ հայտարարություն, 3) երաժիշտ, նվագաձու, 4) **Ժամասացության Ժամանակ սարկավազի ասածը իբրև պատվեր, կարգադրություն**, 5) **կրոնական տոնական երգ, գանձ**: Քարոզ բառի հինգ իմաստներից միայն երկուսն են կրոնական: Այսօր ունենք **քարոզ (արշավ)** քաղաքական տերմինը, որը լայն գործառույթ ունի քաղաքական կյանքում:

Քարոզությունը ավելի շատ եկեղեցական-կրոնական բովանդակության բառ է մեկնաբանված (ԳԲԲ, էջ 634). 1) քարոզելը, հրապարակավ հայտարարելը՝ հոչակելը. հաջորդող երեք իմաստները կրոնական են՝ 2) **քարոզված խոսք, պատվիրան, ավետիք** ևն, 3) **Ժամերգության քարոզ, եկեղեցական բեմասացություն**, 4) **սարկավազի քարոզը, խոսքը** (նմանապես քարոզել բայի երրորդ իմաստը եկեղեցական բովանդակության է՝ բարձր ձայնով **պատվերը կամ կարգն ասելը** (սարկավազ): Բնագրում գործածված է իբրև կրոնական իմաստով բառ՝ «... ի **քարոզութենէ** Թադէոսի Առաքելոյ» (էջ 12):

Առաքեալ բառի համար ԳԲԱ-ն առանձնացնում է երկու իմաստ՝ 1) առաքված, մեկի կողմից ուղարկված և 2) կրոնական՝ **Քրիստոսի տասներկու աշակերտներից** յուրաքանչյուրը: Բնագրում ունենք Թադէոսի **Առաքելոյ** (էջ 12), **առաքելասպան** (էջ 12) բառերը: **Գ** ենթազլխում գործածված է **առաքելարան** (էջ 14) բառը, որ նշանակում է առաքյալների վկայարան:

Մարտիրոս, մարտիրոսություն՝ փոխառություն է հունարենից, նշանակում է հավատքի համար իր կյանքը զոհաբերած անձ, վկա: Բնագրում գործածված է նահատակվել, մարտիրոսանալ իմաստով. «...ի **մարտիրոսութենէն** մինչև ի կատարումն **վարդապետութեանն Գրիգորի...**» (էջ 12):

Վարդապետը փոխառություն է պահլավերենից, բազմիմաստ բառ է, ունի՝ 1) ուսուցիչ, ուսման պետ, առաջնորդ, 2) արհեստավորների պետ, վարպետ, 3) պատճառ, դրդիչ, սաղրիչ իմաստները, **վար-**

դապետություն՝ «...վարդապետություն Գրիգորի...» (էջ 12), որն արտահայտում է վարդապետել, քարոզել իմաստները:

Հաւատ(ք) – բազմիմաստ բառ է. ԳԲԱ-ն բառի երկրորդ և չորրորդ իմաստները ներկայացնում է «Յատկապէս՝ կրօնական դաւանանքները իբրեւ ճշմարտութիւն ընդունելը, աստծու պատգամներին հաւատալը. **ուխտ, դաշինք**» (ԳԲԲ, էջ 57): Ստ. Մալխասյանցը աշխարհաբար թարգմանության մեջ ավելացնում է քրիստոնեական բառը (էջ 13):

Վերոհիշյալ բառերը կրոնական բովանդակությամբ տերմիններ են:

Բ. ենթազլխում հեղինակը գործածել է **քահանայ, քահանայապետ, եպիսկոպոսակից** բառերը:

Եպիսկոպոս-ը փոխառություն է հունարենից, ունի՝ 1) կրոնական հոգևոր աստիճան և կոչում, 2) գավառի՝ վիճակի՝ թեմի կրոնական առաջնորդ, որ ունի քահանաներ ձեռնադրելու իրավունք իմաստները: Բնագրում առկա է **եպիսկոպոսակից** (եպիսկոպոսի աստիճանակից՝ պաշտոնակից) բառը: **Գ** ենթազլխում գործածված է նաև **եպիսկոպոսապետ**, որ նշանակում է եպիսկոպոսների պետ՝ արքեպիսկոպոս, կաթողիկոս, պատրիարք: **Գ** ենթազլուխը լեցուն է կրոնական տերմիններով:

Քահանայ բառը փոխառություն է ասորերենից և ունի հետևյալ նշանակությունները՝ 1) Աստծու սպասավոր, պաշտոնյա, 2) հին հրեաների մեջ՝ պետական ցեղից ընտրված անձ, որ կատարում է կրոնական արարողություններն ու ծեսերը, 3) հեթանոսական մեհյանի քուրմ, 4) քրիստոնեական եկեղեցու պաշտոնյա, որ իրավունք ունի կատարելու եկեղեցական բոլոր կրոնական արարողություններն ու ծեսերը՝ բացի ձեռնադրությունից, տերտեր, երեց:

Բնագրում գործածված է **քահանայապետ** (էջ 14) բառը: ԳԲԲ-ում նշվում են հետևյալ նշանակությունները՝ 1) քահանաների պետ, 2) Քրիստոս՝ իբրև եկեղեցու եկեղեցականների դասի գլուխ, 3) եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյա, պատրիարք, եպիսկոպոս, կաթողիկոս, 4) հրեշտակների զորապետ, 5) քրմապետ (մեհյանի):

Եկեղեցի – փոխառություն է հունարենից, որի համար ԳԲԱ-ում նշվում է 4 իմաստ՝ 1) ժողովուրդ, 2) մարդկանց հավաքույթ, 3) մարդկանց բազմություն, որ միացած է մի կրոնով, 4) շինություն, ուր հավաքվում են կրոնական պաշտամունքային արարողություններ կատարելու. ժամ, տաճար: Բնագրում ունենք «ի մեծն յառաջին ՚ի մայրն **եկեղեցեաց** Հայոց, որ էր յերկրին Տարօնու (էջ 14): **Մայր եկեղեցի** կամ **եկեղեցեաց** կայուն կապակցությունը ևս տերմին է, որը նշանակում է գլխավոր աթոռանիստ եկեղեցի (ԳԲԲ, 143):

Բագին – **բագ** արմատը փոխառություն է պահլավերենից: ԳԲԱ-ում բագին բառի հետևյալ իմաստներն են նշվում՝ 1) զոհի սեղան, հեթանոսական զոհարան, 2) եկեղեցու զոհասեղան, 3) հեթանոսական մեհեան, կուռքերի տաճար, կռատուն:

Կուռք տերմինն ունի հետևյալ իմաստը՝ մարդու կամ կենդանու կերպարանքով արձան, որ հեթանոսները պաշտում էին որպես աստված:

Քուրմ (ասոր.) – հեթանոսական կրոնի սպասավոր, քահանա:

Սուրբ – ԳԲԲ-ում նշվում են *մաքուր, անարատ* իմաստները: Վեց, յոթ և ութերորդ իմաստները կրոնական են՝ 6) աստվածային օրենքներին համապատասխան, ուղղափառ, ճշմարիտ, 7) մակդիր Աստված բառի, 8) եկեղեցու կողմից ճանաչված, աստվածահաճո անձ: Բնագրում գործածված է 8-րդ իմաստով՝ «**սուրբ** Վրթանես» (էջ 14):

Սրբանալ բայի համար ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) սուրբ, մաքուր՝ նվիրական դառնալ, 2) արդարանալ, 3) պարկեշտ, համեստ, չափավոր լինել:

Խոսելով հեթանոսական պաշտամունքի վայրերի մասին՝ Բուգանդը գրում է. «... ապա յայնոյն աստուածութեանն **սրբեցան** և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք» (էջ 14):

Անդրադառնանք **տուն** բառին. աստվածաբանական գրականության մեջ հաճախադեպ են *տուն աղօթից, տուն Աստուծոյ* կապակցությունները՝ եկեղեցի նշանակությամբ: **Տուն** բառը բազմիմաստ է. ԳԲԲ-ում նշվում է տասը իմաստ, որոնցից 4-րդը՝ եկեղեցի,

տաճար: Տուն բառը, միանալով կրոնական իմաստ ունեցող բառերին, կազմում է կրոնական բովանդակության դարձվածքներ: ԳԲԲ-ում վկայված են **տուն** բառով կազմված տարբեր կապակցություններ, որոնցից կրոնական իմաստով՝ **տուն աղօթից, տուն վկայութեան**, իսկ **աղօթք** բառի համար ԳԲԱ-ում վկայված են հետևյալ իմաստները՝ 1) աղաչանք առ Աստված, 2) Աստծուն դիմելու սահմանված կարգ:

Մեր նյութի շրջանակում հանդիպել ենք **տուն խորհրդոց** կապակցությանը՝ խորհրդարան իմաստով: Բացի կրոնականից, այն ունի նաև ընդհանրական նշանակություն: ԳԲԱ-ն վկայում է գրաբարի համար գործառական **խորհուրդ** և **խորհրդարան** բառերը: **Խորհուրդը** բազմիմաստ բառ է. 2-րդ իմաստը ԳԲԱ-ն նշում է *հարցերի, խնդիրների համատեղ խորհրդակցություն* իմաստը:

Գրաբարն ունի նաև **խորհրդարան** բառը, որի չորս իմաստներից առաջինը *խորհուրդ անելու, խորհրդակցելու տեղ* իմաստն է. այս իմաստով այն հոմանիշ է դառնում **տուն խորհրդոց** դարձվածքին: Արդի արևելահայերենում այն պետական կառավարման իմաստով տերմին է՝ **ազգային ժողովի խորհրդարան**: Տուն ուխտից կամ տեղի ուխտից կապակցությունը ևս եկեղեցի նշանակությունն (այլև մատուռ, ժամ, տաճար) ունի:

Ուխտը (պիլ.) բազմիմաստ բառ է: ԳԲԲ-ում նշված ինը իմաստներից վեցը կրոնական են՝ 4) Աստծու կտակը՝ կամքը մարդկանց, 5) Աստծու կտակը պարունակող գիրք՝ Կտակարան (Հին և Նոր), 6) կրոնական միաբանություն, միություն, միավորում, 7) աղաչանք առ Աստված, աղոթք, 8) վանք, 9) ուխտատեղ, սրբավայր: Բնագրում ունենք **տեղի ուխտից** (էջ 14)՝ ուխտատեղի իմաստով:

Մեհեան (իրան.) բառի երեք իմաստներն էլ կրոնական են՝ ա) հեթանոսների կրոնական պաշտամունքի տաճար, կոստուն, բ) զոհ մատուցելու սեղան մեծյանում, զոհարան, բազին, գ) կուռք, հեթանոսական աստծու արձան (ԳԲԲ, 170):

Աստուած – Աստված, տեր.

Տեր – ԳԲԱ-ում նշվում է 9 իմաստ, որից կրոնական են՝ ա) Հայր Աստված, բ) Քրիստոս: Բուզանդը գործածում է **Աստուած** և **Տեր** բա-

ոերը Քրիստոս իմաստով: Այս բառերին գրաբարում հոմանիշ է նաև Է-ն, որը բազմիմաստ է, և այդ իմաստների շարքում է Աստված բառը: Բուզանդը այն չի գործածում:

Խաչ – երեք իմաստ է առանձնացնում ԳԲԱ-ն՝ 1) խաչաձև փայտ, որի վրա գամում էին մահապարտին մինչև մեռնելը, 2) կրոնական նշանակությամբ՝ հատկապես այն խաչը, որի վրա խաչեցին Քրիստոսին, 3) փխբ.՝ չարչարանք, վիշտ:

Պատարագը գրաբարում ունի՝ 1) նվեր, ընծա, 2) գոհ, մատաղ (Աստծուն) ընծայված, 3) կաշառք իմաստները (ԳԲԲ, էջ 397):

Հայտնի է՝ քրիստոնեական եկեղեցու պաշտամունքային գլխավոր արարողությունը պատարագն է: Բնագրում ունենք «Սա երթեալ կատարէր անդ ըստ սովորութեանն զտեառնն **զխաչական** զփրկութեան **զպատարագն** գոհութեան, **զհաղորդութիւն** չարչարանաց զհիշատակի զկենդանարարն ու զազատիչն զմարմին և զարին **աստուածորդոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի**» (էջ 14):

Նշան – փոխառություն է պահլավերենից. ԳԲԲ-ում նշվում է 12 իմաստ. 3-րդ իմաստն է **հրաշք, սքանչելագործություն**: Բնագրային օրինակ. «... ուր **նշանօքն** եղելօք կործանեցան բազին մեհենիցն յայնժամ վաղ ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորի» (էջ 14): Ստ. Մալխասյանցը աշխարհաբար թարգմանության ծանոթագրությամբ նշում է, որ **հրաշք** բառն անգործածական է դասական հեղինակների երկերում: Այդ իմաստով Բուզանդի գործածած նշանները հիշատակված են նաև Ազաթանգեղոսի մոտ, որտեղ պատմվում է, թե երբ մարդիկ մուրճերով չէին կարողանում քանդել մեհյանները, ս. Գրիգորը խաչի նշանով նրանց հիմնահատակ կործանեց ու միանգամայն անհետացրեց...» (ծան. 6, էջ 419):

Հաղորդութիւն բառի 3 իմաստներից 2-ը եկեղեցական են՝ ա) քրիստոնեական եկեղեցու խորհուրդներից, ծեսերից մեկը, բ) օրինած նշխար և գինի, որ իբրև Քրիստոսի մարմին և արյուն ճաշկում են հավատացյալները. սրբություն, ճաշակ:

Նշենք, որ **նշխարը** (պիլ.) բազմիմաստ բառ է, որ նշանակում է՝ 1) հացի, կերակրի, հնձի կն-ի մնացորդ, 2) որևէ բանի պահպանված

մաս, 3) եկեղեցական բովն՝ սրբերի կմախքից մնացած մաս, մասունք:

Օրհնված նշխարը հացի օրհնված կտորն է, որ խորհրդանշում է Քրիստոսի մարմինը: Այն սուրբ հաց է, որ տրվում է հավատացյալներին՝ իբրև հաղորդություն:

Երանելի բառն ունի՝ 1) երանի տալու արժանի, երջանիկ, 2) երանություն բերող՝ պարգևող՝ խոստացող, երանական:

Երանելի, սքանչելի (այսօր նաև երջանկահիշատակ) բառերը եկեղեցու սպասավորների անվանումների հետ են գործածվում և կազմում կայուն կապակցություններ, օր.՝ **երանելի** Վրթանէս (եպիսկոպոսապետ) (էջ 16), «Եւ ընդմին **սուրբն երանելի** մանուկն **մարգարէ**» (էջ 16):

Մարգարէ բառը փոխառություն է պահլավերենից և ունի ապագան գուշակող, Աստծու կողմից պատգամախոս իմաստը: Բնագրում ունենք **մարգարէարան**, որ նշանակում է մարգարէի անունով վկայարան կամ մատուռ, ինչպես՝ «... առաւել ևս ի մեծի **մարգարէարան մատրանն** Յովհաննու: Սոյնպէս և յառաքելարանս տեառն աշակերտացն, սոյնպէս և ի **վկայարանս**» (Մարտիրոսացն... (էջ 16)):

Մատուռն (յուն.) – ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) վկայարան, վկայի՝ մարտիրոսի նշխարների ամփոփման տեղում կամ նրա հիշատակին կառուցված փոքր եկեղեցի, աղոթատեղի, աղոթարան, 2) բոլոր մարտիրոսների տոնի օրը: Բնագրում գործածված է 1-ին նշանակությամբ:

Վկայ-վկայարան-վկայանոց, վկայ (պիլ.) բառի համար ԳԲԲ-ում վկայված է 2 իմաստ՝ 1) իր տեսածն ու լսածը հաստատող անձ, որպէս ականատես՝ հավաստող. այս իմաստով այն արդի արևելահայերենում իրավաբանական տերմին է: Կրոնական իմաստն է՝ հավատի համար նահատակված մարդ, մարտիրոս. այս իմաստով այն կրոնական բովանդակություն ունեցող տերմին է:

Վկայարան բառի համար ԳԲԲ-ն նշում է 2 իմաստ՝ 1) մատուռ՝ կառուցված վկայի նահատակության կամ նրա նշխարների ամ-

փոփման տեղում, մարտիրոսանոց, 2) վկայություն: Այն արտահայտվում է նաև **տուն վկայութեան** դարձվածքով, **առաքելարան՝** առաքյալների վկայարան:

Վկայանոց նշանակում է վկայարան, մատուռ:

Անդրադառնանք **աթոռ** և **սեղան** բառերի մեկնություններին: **Աթոռ** բառի համար ԳԲԱ-ն տալիս է հետևյալ իմաստները՝ ա) նստարան՝ թիկնակով կամ առանց թիկնակի, բ) աթոռ՝ իբրև նշան պաշտոնի կամ իշխանության, գ) նստարան բնական կարիքի համար:

Բնագրում գործածված է պաշտոնի կամ իշխանության խորհրդանիշ իմաստով. «Եւ նստաւ Փառէն **յաթոռ** հայրապետական սակաւ ժամանակաւ» (էջ 50):

Այսօր էլ է այն պահպանել պաշտոնի կամ իշխանության խորհրդանիշի իմաստը ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական տիրույթում:

Կահկարասու իմաստը պահպանել է ինչպես աթոռ, այնպես էլ **սեղան** բառը: **Սեղանը** նույնպես բազմիմաստ բառ է, որի համար ԳԲԲ-ն նշում է յոթ իմաստ, որոնցից երեքը՝ կրոնական բովանդակությամբ՝ 1) կարասի՝ զանազան գործողությունների համար, ճաշասեղան, 2) կերակուր, 3) հացկերույթ, կոչունք, 4) դրամափոխի վաճառասեղան, 5) **զոհասեղան, զոհարան, բագին**, 6) **պատարագ մատուցելու սեղան եկեղեցում, խորան**, 7) **Քրիստոսի խաչը**: Բնագրային օրինակ՝ «Այս տեղիքս սմա էին յանձն հանդերձ գաւառօքն յորս էին հաւատարիմ էր սա այնմ **գլխաւոր սեղանոյն** իշխանութեան աթոռոյն հայրապետացն հաստատութեան ուխտին կաթողիկէ եկեղեցոյն» (էջ 60) (թարգմ.՝ ... և նա հավատարիմ էր հայրապետական աթոռի իշխանության, կաթողիկէ եկեղեցու ուխտի հաստատության գլխավոր սեղանին (էջ 61)):

Քորեպիսկոպոս (էջ 58, 60 ևն) – փոխառություն է հունարենից. նշանակում է գավառի եպիսկոպոս, թեմական եպիսկոպոսի փոխանորդ, օրինակ՝ «Եւ էր սորա ընկալեալ **քորեպիսկոպոսութեան** ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց մեծի Գրիգորի» (էջ 60):

Հօտ, հօտապետութիւն – հօտ-ը բազմիմաստ բառ է՝ 1) միասին արածող ոչխարների հօտ, 2) երամակ, նախիր, 3) փխբ.՝ մարդկանց խումբը, հավատացյալ ժողովուրդ:

Հօտապետ նշանակում է *հոգևոր հովիվ, հովվապետ, եկեղեցու առաջնորդ*, ինչպես՝ «Սակայն փոյթք եղեն նոքա ոչ վասն ճշմարտութեան ինչ խնդրել իւրեանց հովիւ կամ առաջնորդ» (էջ 56), 1) որ կայցէ գլուխ ժողովրդեանն հօտապետութեանն, **հայրապետ** (էջ 48) նշանակում է նախահայր (էջ 56), նահապետ, 2) **եկեղեցու հայրերի պետ**, ավագ եկեղեցական եպիսկոպոս, 3) որնէ եկեղեցու պետ, պատրիարք, կաթողիկոս:

Կաթողիկոս (հուն.) – եկեղեցու պետը և նրա բարձրագույն տիտղոսը, եպիսկոպոսապետ, հայրապետ, **կաթողիկոսութիւն**՝ «...ետուն ի կաթողիկոսութիւն գՅուսիկն ձեռնադրել» (էջ 48):

Հետաքրքիր մեկնությունն ունի **տեսիլ** բառը. ԳԲԲ-ում նշվում է ութ իմաստ՝ 1) տեսք, կերպարանք, 2) պատկեր, նմանություն, 3) **հայտնություն, տեսիլք**, 4) **երազ**, 5) տեսություն, հանդես, 6) տեսողություն, տեսանելիք, տեսնելը, 7) տեսանելի իրեր, 8) տեսողություն, զննություն: Բնագրում գործածված է **հայտնություն, տեսիլք**, նաև **երազ** իմաստներով. օր.՝ «Յայնմ տեղուջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանիելի ընդ հողով ըստ յառաջագոյն **տեսլեանն**, ըստ հրամանի նոցա տուեալ» (էջ 68) (թարգմ.՝ Այստեղ հողի տակ ծածկեցին սուրբ Դանիելի մարմինը, ինչպես որ առաջուց **տեսիլքում** նրանց հրամայել էր (էջ 69)):

Այսօր շատ գործառական է **տեսլական** բառը քաղաքական, հրապարակախոսական, գիտական ոճերում, որն ունի *տեսնելիք* իմաստը /ԳԲԲ-ն տեսլական բառը վկայում է, բայց ոչ արդի իմաստով. այն գրաբարում ածական է և նշանակում է առանձնահատուկ, մասնավոր/:

Դրախտ (պիլ.)- 1) պտղատու ծառերի և ծաղիկների այգի, պարտեզ, բուրաստան, 2) եղեմ, 3) երկնային արքայություն:

Բնագրային օրինակում այն բնակավայր նշանակող հատկանվան բաղադրիչ է. «... որում անուն տեղոյն իսկ **Հացեացն դրախտ կոչեմ**» (էջ 62, 68):

Մկրտություն բառի 3 նշանակություն է վկայված ԳԲԲ-ում, որոնցից մեկը կրոնական է՝ 1) ջրի մեջ ընկղմելը, ջրով լվանալը, լվացում, 2) (կրոն) **մկրտելու արարողությունը, կնունք**, 3) փխբ.՝ հավատի համար արյուն թափելը:

Բնագրի օրինակը. «... որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մոտ յակն աղբերն՝ որ առնէր Գրիգոր **զմկրտութիւնսն** աշխարհագոր բազմութեանն ի տեղոջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց դրախտ» (էջ 68):

Նոյեան տապան – բնագրային օրինակ՝ «Եւ զբերեալ պարգեւացն զշնորհս իւրեանց յօժարութեամբ ընդունէին. որ մինչև ցայսօր նշանակ սքանչելութեան կայ պահեալ առ նոսա երևոյթ փայտն հայրապետական **նոյեան տապանին** (էջ 40) (թարգմ.՝ Եվ նրա բերած շնորհված պարգևը ընդունում էին հոժարությամբ, որ մինչև այսօր էլ նրանց մոտ պահվում է այդ սքանչելիքի նշանը՝ հայրապետական նոյան տապանի փայտը):

Տապան բառը բազմիմաստ բառ է՝ 1) արկղաձև չորս կողմը փակ նավ (Նոյի), 2) ննջեցյալին թաղելու արկղ, դագաղ, 3) լայնաբարձ գերեզման, շիրիմ: Նոյյան տապանը աստվածաբանական կայուն կապակցություն է:

Պահս պահել–պահք. պահեցողություն, որ արտահայտում է որոշ ժամանակ ուտիսվա կերակուրներ կամ ամբողջ օրը ոչինչ չուտելով, պաս, ծոմ: Բնագրային օրինակ՝ «...ապա առնուին **պահս պահել** և խնդրել յաստուծոյ, զի փրկեսցէ գնոսա ՚ի դառն դահճէն» (էջ 41):

Աւետարան - 1) Քրիստոսի վարդապետությունը՝ ուսմունքը, 2) այն գիրքը, որ պարունակում է Քրիստոսի վարդապետությունը և նրա կյանքի պատմությունները:

Աւետարանել - 1) Ավետարանի վարդապետությունը քարոզել, 2) ավետել, 3) հռչակել, քարոզել՝ «... եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և **աւետարանել** նոցա զՔրիստոս» (էջ 26):

Քրիստոնէութիւն - 1) քրիստոնեական կրոն, 2) հավաք.՝ քրիստոնյաներ, 3) քրիստոնյա երկիր (ԳԲԲ, 643): Բնագրային օրինակներ-

րից. «գօրէնս Քրիստոնէութեան», նույնն է՝ «գօրէնս Քրիստոսի» (էջ 26):

Հրեշտակ (պհլ.) - 1) կրոն.՝ գերբնական էակ, աստծու պատգամաբեր, 2) մարգարե, առաքյալ՝ իբրև աստծու պատգամախոս, պատգամաբեր, 3) կանխահայտ նշան, նշանակ, 4) հեթանոսական աստված, դև: Ի թիվս կրոնական նշանակության վերոհիշյալ իմաստների՝ ԳԲԲ-ն նշում է նաև պատգամավոր, սուրհանդակ, թղթատար, լրաբեր իմաստները, որոնք բնորոշ էին նաև **դեսպան** բառին: Բերենք բնագրային օրինակներ՝ «...իսկ մարդպետն Դդակ հղէր **հրեշտակս** խորհրդով» (էջ 310): Այստեղ դեսպան իմաստով է գործածված: «...ամենեւին զամենայն յամենայն **հրեշտակա-կրօն** զանձն ցուցանէր, զամենայն ըստ պարգևացն աստուծոյ շնորհացն կատարէր» (էջ 50): Երկրորդ օրինակում (**հրեշտակ+կրօն**) քրիստոնեություն իմաստով է գործածված:

Աստվածաբանական գրականության մեջ գործածվում է **հովիւ քանաւոր հօտից** կամ **խաշանցն** կապակցությունը: **Հովիւ** բառի համար ԳԲԲ-ում նշվում են հետևյալ իմաստները՝ 1) ոչխար արածեցնող, խաշնարած, 2) փխբ.՝ ժողովրդի առաջնորդ, կառավարող, **կրոնական համայնքի առաջնորդ**: Օրինակ՝ «Քրիստոսական **քանաւոր խաշանցն հովուելով**, աւետարանական պատգամաւորօքն խրատելով ընձեռացաւ (էջ 50):

Պատուիրան (պհլ.) - կրոնաբարոյական պատվեր՝ հրաման, հրահանգ, հանձնարարություն, պատգամ:

Բնագրում ունենք «Զի անօրինեցաք և յանցեաք և ապստամբեցաք մէք ՚ի քէն. մեղաք յամենայնի և **պատուիրանաց** քոց ոչ անսացաք (էջ 300):

Երեց - բազմիմաստ բառ է՝ ավագ, առաջինը տան մեջ իմաստներով: **Եկեղեցական սպասավոր՝ քահանա** իմաստն է կրոնական նշանակության:

Սարկաւազ - ԳԲԲ-ում նշվում են հետևյալ իմաստները՝ 1) սպասավոր, ծառա, 2) եկեղ.՝ քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա, որ սպասավորում է պատարագչին:

Ամփոփելով նշենք, որ Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում կրոնական բովանդակության բառերն ու տերմինները հաճախադեպ են: Մեր կողմից ներկայացված 45 աստվածաբանական տերմինները վերաբերում են հեթանոսական շրջանին հաջորդած քրիստոնեությանը:

Կրոնական բովանդակության բառերը մեր կողմից իբրև տերմիններ են գնահատվել, եթե դրանք միայն կրոնական բովանդակություն ունեն կամ բազմիմաստ լինելով՝ նրանց իմաստային տիրություն գերակշռող են կրոնական իմաստները:

Կրոնական բովանդակությամբ բառերն ու եզրույթները ներկայացնում են քրիստոնեական վարդապետությունը, կրոնական շինությունները, եկեղեցուն սպասարկող և քրիստոնեական վարդապետությունը քարոզող և տարածող եկեղեցական տարբեր պաշտոնները, եկեղեցու սպասավորների հոգևոր տարբեր աստիճանները: Բնականաբար վկայված են նաև հեթանոսական շրջանին բնորոշ եզրույթներ:

45 եզրույթներից 10-ը փոխառություն են պահլավերենից, 6-ը՝ հունարենից, 2-ը՝ ասորերենից, և մեկը՝ զենդերենից: 26-ը բնիկ հայերեն բառեր են: Բնականաբար տիրապետող են քրիստոնեական վարդապետությունը բնորոշող եզրույթներն ու կրոնական բովանդակության բառերը, որոնք գերակա են դարձնում նոր հավատքը:

**ԿՐՈՆԻ ԵՒ ՀԱՎԱՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՌԵՐԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆՊՈՑ»
ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐՈՒՄ**

V դարի մատենագիր, Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտ Եզնիկ Կողբացու նշանավոր երկը, որն առավելապես հայտնի է «Եղծ աղանդոց» վերնագրով, մեզ է հասել եզակի ընդօրինակությամբ, թվագրված 1280, ձեռամբ Լուսեր գրչի, անվերնագիր: Պահպանված բնագրի սկզբում կարմիր թանաքով գրված է «Երանելոյն Եզնրկայ վարդապետի», ապա այլ ձեռագրով փոխված է «Երանելոյն Եզնակ վարդապետին Կողբացոյ», ուստի հրատարակիչները առաջարկել են տարբեր խորագրեր՝ «Յաղագս Աստուծոյ», «Գիրք ընդդիմութեանց», «Ճառք ընդդէմ աղանդոց»: Դավանաբանական-իմաստասիրական այս աշխատության աշխարհաբար թարգմանության և գիտական ծանոթագրությունների հեղինակ Ա. Աբրահամյանը, իբրև առավել ամբողջական սկզբնաղբյուր, առանձնացրել է Եզնիկի վննետիկյան առաջին հրատարակության բնագիրը, որի խորագիրն էլ ընդհանրացել է հայագիտության մեջ՝ «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») տարբերակով¹:

Եզնիկի դավանաբանական, բանավիճային այս աշխատությունը V դարի մատենագրության բացառիկ գործերից է ոչ միայն իր բովանդակությամբ, այլ նաև՝ լեզվական որակով, այն համարվում է ոսկեդենիկ գրաբարի դասական նմուշ: V դարի հայ մատենագրության լեզվառճական դասերին անդրադարձած բոլոր հայագետները, սկսած Արսեն Բագրատունուց մինչև Հր. Աճառյան, ընդգծել են Եզնիկի երկի լեզվի կատարելությունը, պատահական չէ, որ Եզնիկի անվամբ է կոչվում առաջին դասը, որտեղ ընդգրկված են մեր թարգմանական գրականության մարգարիտները՝ Աստվածաշունչը, Հովհան Ոսկեբերանի, Կիրեղ Ալեքսանդրացու մեկնությունների ու ճառերի մի մասը, դավանաբանական շատ այլ գործեր, այստեղ ինք-

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ուսանողի գրադարան, Եր., 1994, էջ 286:

նուրույն, ոչ թարգմանական միակ գործը՝ Եզնիկի «Եղծ աղանդոց»-ն է: Այս դասի երկերի լեզուն համարվում է «բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկը»²:

Մեր այս հետազոտության նպատակը Եզնիկի աշխատության բառապաշարի քննությունն է՝ կրոնի եւ հավատալիքների իմաստային դաշտին պատկանող բառ-եզրույթների բովանդակային քննությունն է, դրանց բառակազմական գործուն կաղապարների առանձնացումը, ծագումնաբանության և արդի արևելահայերենում կրոնական բառերի հնարավոր իմաստային տեղաշարժերի և կենսունակության բացահայտումը: Եզնիկի աշխատությունը բաղկացած է չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը բովանդակությամբ ինքնուրույն և ամբողջական գործ է՝ Ա. «Եղծ աղանդոց հեթանոսաց», Բ. «Եղծ Քէշին պարսից», Գ. «Եղծ կրօնից յունաց իմաստնոց» և Դ. «Եղծ աղանդոյն Մարկիոնի»: Այս չորս գլուխներից դուրս ենք գրել դուրս ենք գրել կրոնի և հավատալիքների հիմնային իմաստային դաշտին պատկանող միջուկային բառերն ու բառակապակցություններ՝ դրանք ենթարկելով տարածամասնակյա լեզվաոճական վերլուծության:

Կրոնի և հավատալիքների իմաստային դաշտը կազմված է վաղնջական ծագում ունեցող միջուկային բառերից, որոնք, որպես կանոն, բնիկ ծագում ունեն և արմատական բառային միավորներ են, որոնցից ածանցման և բառաբարդման միջոցով հետագայում առաջանում են նոր հասկացություն-անվանումներ: Այդ բառերի բնութագրումը կարևոր է ոչ միայն դասական լեզվաբանության տեսանկյունից, այլև նոր լեզվաբանական գիտակարգերի հայեցակետերից, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը և հանրալեզվաբանությունը:

Դասական գրաբարի հավատալիքային դաշտի բառանունների վերլուծությունը թույլ կտա վերականգնել նաև վաղնջահայերենի և հնագույն հայերենի համարժեք բառաշերտերը, որոնք լեզվականի հետ մեկտեղ նաև քաղաքակրթական մեծ արժեք ունեն, որովհետև բացահայտում են հնդեվրոպական ժողովուրդների աշխարհընկալ-

² Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 2013, էջ 78:

ման յուրահատկությունները, հոգևոր և նյութական մշակույթների հարաբերությունները:

Ինչպես նշում է վաղնջահայերենի առաջին վերականգնող և հետազոտող Գ. Ջահուկյանը, վաղնջահայերը, անջատվելով հնդեվրոպական միասնությունից, ժառանգել են պաշտամունքային աշխարհի հստակ համակարգ՝ ծիսական արարողակարգերով, որոնք էլ ձևավորում էին կրոնական գաղափարներ արտահայտող բառանունների իմաստային դաշտը. «Աստվածայինը կապվում էր մի կողմից շողացող երկնքի և լուսավոր օրվա, մյուս կողմից նախնիների («հոր»^{*} pəte'r «ավագ սերնդի ներկայացուցիչ, նախնի, հայր») պաշտամունքի հետ. հմմտ. ^{*}dei- «շողալ», որից «պաշտվող երկինք», «օր», «աստված» գաղափարները, այլև ^{*}djēus- pəte'r «երկնահայր, երկնային հայր» կազմությունը. այստեղից են հայ. տիև, թերևս նաև երկին (^{*}djē- ?) և սերկ «այսօր» (^{*}k'e-djē- ?) բառերը»³:

Համարժեք է «Եղծ աղանդոց»-ում վկայված ճառագել բառի ստուգաբանական բացատրությունը, որի համար Վ. Համբարձումյանն առաջարկում է վերականգնել նոստրատիկ հիմք ^{*}jarΛ, համարժեք փայլել, լույս տալ իմաստով⁴: Այսինքն՝ մեր ուսումնասիրության առարկա իմաստային դաշտի որոշ բառեր իրենց ծագումով ոչ թե հնագույն են, այլ վաղնջագույն, լեզուների նոստրատիկ ընդհանրության ժամանակների ստացվածք:

Աստվածայինը, առաջնային ընկալմամբ, նախ այն է, ինչն օժտված է աստվածային արարչագործ ուժով, գորությամբ, այսինքն՝ սրբազան է, սուրբ, ապա այն ամենն է, ինչին արգելված է մահկանացուներին դիպչել: Հետևաբար հավատալիքների դաշտի մի եզրում տոտեմներն են, մյուսում՝ տաբուները: Այս երկուսի միջև բաշխվում են կրոնական դաշտի մնացյալ հասկացություններն իրենց բառային նշանակումներով՝ որպես գոյական, ածական, բայ և

³ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 84:

⁴ Հմմտ. Վ. Համբարձումյան, Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., 2012, էջ 60:

մակբայ, գործփինակ՝ *աստուած, աստուածային, աստուածանալ և աստվածօրէն, սրբութիւն, սուրբ, սրբանալ, սրբօրէն* և այլ:

Մարդիկ աստվածային ուժերից ակնկալում են կա՛մ ի շահ և ի պաշտպանություն իրենց որոշակի գործողությունների, ծեսերի իրականացում, կա՛մ ի հակառակ իրենց կատարվող որևէ գործողության կասեցում, խափանում: Այս նպատակները իրականացման երկու ձև են ունեն՝ բառային, որը աղոթքն է, և առարկայական՝ զոհաբերությունը, մատաղը, մոմավառությունը, խնկարկումը, ծիսակարգային տարբեր գործողությունների իրականացումը, որը զուգահեռաբար ուղեկցվում է աղոթքով:

Կրոնի իմաստային դաշտի որոշ բառեր հնագույն ժամանակներում սերտորեն կապվում էին իրավունքի, օրենքի իմաստային դաշտի հետ, դրա վկայությունները գտնում ենք հենց Եզնիկի երկում, քանզի առաջնային օրենքը աստվածային սկզբունքն էր, Աստուծո խոսքը, որն անառարկելի էր: *Կրօն* բառն ինքնին ծագում է *կրեմ* բայի արմատից, և ՆՀԲ-ում բացատրվում է որպէս *կարգ և կանոն* և *օրէնք*, «որպէս կրեալ եւ պահեալ կամ կրելի օրինօք»⁵:

Կրոնի իմաստային դաշտը սերտորեն առնչվում էր նաև ժամանակի իմաստային դաշտի միջուկային բառերի հետ, որովհետև ժամանակն ինքնին աստվածային կարգ է՝ ծննդյան և մահվան ժամանակահատվածերով, որոնք զուգադրվում են օրվա առավոտյան հատվածի, ցերեկվա, երեկոյի և գիշերվա պատկերացումների հետ, որպէս լուսավոր օրվա՝ արևածագի սկիզբ, ապա՝ աստիճանական մայրամուտ և այնուհետև՝ հարություն, այս աստվածաստեղծ շղթան պարբերական կրկնվում է: Հիշյալ իրողությունները՝ ծնունդ, թաղում, ծիսակարգային նշանակությամբ են օժտված և զանազան արարողություններով են զուգակցվում, այսինքն՝ ունեն զգալի թվով բառային նշանակումներ հասկացությունների ծառի տեսքով:

Լայն առումով կրոնի, իրավունքի իմաստային դաշտերը ենթադաշտային հարաբերություններ ունեն մարդ, հասարակական

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, **Հայր Գաբրիէ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միքումէան, Հայր Մկրտիչ Աւգերեան**: Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, հատոր 1, էջ 1138:

կյանք արտահայտող բառերի թեմատիկ մեծ խմբի հետ՝ նշանակելով մարդու հոգևոր կյանքը բնորոշող հասկացություններ: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը իր «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ. «Վերջապես կա մարդու հոգևոր կյանքի մի բնագավառ, որ առաջացել է բնության զանազան երևույթների պատճառները չիմանալու և սրա հետ կապված ինչ-որ անզգայելի էակների գոյությունը ենթադրելու հետևանքով: Սա կրոնի բնագավառն է, որ մեծ դեր է խաղացել մարդու կյանքում և մեր լեզվում թողել հատուկ տերմինաբանություն»⁶:

Արդի հայերենի այս կրոնական եզրաբանությունը ձևավորվել է վաղնջահայերենից մինչև հին հայերեն՝ գրաբար, ընկած ժամանակահատվածում, և այդ եզրույթների զգալի մասը վկայված է Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում, որը միաստվածության տրամաբանական ջատագովումն է՝ ի հերքումն հեթանոսական բազմաստվածության. «...մի է Տէր, եւ մի հաւատ, եւ մի մկրտութիւն, եւ մի Աստուած ի վերայ ամենեցուն եւ ընդ ամենեսեան, եւ ամենայնիւ»⁷:

Այժմ ընտրողաբար, ըստ «Եղծ աղանդոցի» չորս գրքերի, անդրադառնանք կրոնի և հավատալիքների իմաստային դաշտին բնորոշ գրաբարյան բառերի իմաստաբանական և բառակազմական նկարագրին: Առաջին գիրքը, որը վերաբերում է հեթանոս աղանդների հերքմանը սկսվում է *աներեւոյթ*-ի և նրա *յաւիտենական զօրութեան* պարզաբանումից: *Աներեւոյթ* եզրույթը մեզ հետաքրքրող իմաստային դաշտում երկածանց կազմություն է՝ նախածանցավոր և վերջածանցավոր, *ի-ա* վերջադրական խառն հոլովման գոյական է, որը գրաբարի բառապաշարում նաև ածական-մակբայ է՝ ամենատարբեր նրբիմաստներով, վերջիններս արդեն զգայական ընկալումների դաշտի բառեր են: Մեզ հետաքրքրող տեսանկյունից, ՆՅԲ-ում *աներեւոյթ* բացատրվում է որպես *անտես աչաց, աներեակ, աներեւան*⁸: Առավել որոշակի այն գերբնական ուժի նշանակում է,

⁶ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 152:

⁷ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 136:

⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր 1, էջ 140:

գերբնականը հասանելի չէ մարմնավոր տեսավորությանը: Քանզի հեթանոսական հավատքում, որը Եզնիկի հայեցակետից տարբեր աղանդների միավորում է, երկնքի պաշտամունքը զուգակցվում է երկրային չորս սրբազան տարրերի աստվածացման հետ, ուստի «Եդծ»-ում բազմիցս հանդիպում ենք **ջուր, երկիր** (հող), **օդ** և **հուր** հասկացությունների անվանումներին, որոնք ամբողջացնում էին նախնական աշխարհաստեղծումը: Դրանց դեմ էլ ապստամբում էր Եզնիկը՝ պնդելով, թե հիշյալ չորս տարրերն արարչության արգասիք են, երեւացող և նյութական, ասել է թե՛ պաշտամունքի անարժան: «Եւ մանաւանդ մարմնաւորք եւ երեւելիք, որպէս արեգակնդ և լուսինդ և աստեղք և հուր և ջուր և երկին, որ ի մոզուց եւ հեթանոսաց պաշտին»⁹:

Այստեղ իմաստաբանորեն և քերականորեն նշույթավորված են ոչ միայն առարկայանիշ կրոնական բառերը, այլև՝ որականիշ: Որականիշ ածականները գրաբարում, որպես կանոն, խոսքիմասային փոխանցմամբ սահուն դառնում էին գոյական անուններ՝ հոլովվելով և հոդեր ստանալով, ինչպես վերոնշյալ **աներեւոյթ**-ը կամ **անստեղծ, անգոյ, անսկիզբն, մշտնջենական, անքնին, անհաս, անառար, աննախանձ** և համանման ածականները: Այս բոլոր որոշիչները առանց հավելյալ բառակազմական միջոցների փոխարինում էին իրենց որոշյալներին:

Եզնիկի «Եդծ աղանդոց»-ում հավատալիքների իմաստային դաշտի բառերի բառակազմական վերլուծությունը ցույց է տալիս, որ **ան**- ժխտական բնիկ ածանցի օգնությամբ գրաբարում ստեղծվում էին յուրօրինակ բառազույգեր՝ գերբնական, աստվածային էություններ նշանակող հասկացություններ և դրանց երկրային հակոտնյալներ, որոնք աստվածայինի և չաստվածայինի, սրբազանի ու պիղծի բառային կերպավորումն էին՝ **ասուն և անասուն, խօսուն և անխօսուն, մտաւոր և անմտաւոր, բանաւոր և անբանաւոր, ընտրեալ և անընտրեալ**: Զուգահեռաբար **ան**- ածանցի փոխարեն Եզնիկը հաճախ կիրառում է նաև չ- ժխտական ածանցը՝ կազմելով նույնար-

⁹ Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 12:

մատ բառագույգեր, ինչպես մարդու մարմնավոր և հոգևոր էության մեջ չարիքի դրսևորմանը վերաբերող այս նախադասության մեջ, որտեղ մարդը համարվում է անձնավոր, իսկ չարիքը՝ ոչ անձնավոր, աղարտված բարքի սոսկական արգասիք. «Արդ զմարդկան իսկ չարեաց հարցցուք. արգասի՞ք անձանց իցեն, եւ եթէ անձինք իսկ չարիքն, զի որ ինչ ի մարմինս եւ ի հոգիս շարժմունք խաղան, ոչ մարթի ասել՝ թէ այն մարդ իցէ, այլ կամական շարժմունք՝ զի մարդն *անձնաւոր* է, եւ բարքն *չանձնաւորք*, որպէս սպանութիւն կամ շնութիւն՝ որ ի բարուցն գործիցեն»¹⁰:

«Եղծ աղանդոց»-ը գրաբարից աշխարհաբար փոխադրած բազմահմուտ Ա. Աբրահամյանը գրաբարյան այս դավանաբանական բառագույգը՝ *անձնաւոր-չանձնաւոր*, թարգմանելիս դարձրել է *գոյակ*. «...մարդը գոյակ է, իսկ բարքը գոյակ չէ...»¹¹: Եզնիկի լեզվին հատուկ չ- ժխտական նախաձանցի միջոցով բաղադրված բառանունների կիրառությունը իրենց հաստատական ձևերի հետ միասին, որի շնորհիվ ոճական խնդիր էր լուծում՝ պատկերավոր դարձնելով աստվածայինի և երկրայինի հավերժական հակադրամիասնությունը, այսպես օրինակ՝ *էականք և չէականք, մշտնջենաւորք և չմշտնջենաւորք, արարածք և չարարածք*:

Զգալի է նաև -իչ բնիկ վերջածանցի բառակազմական արդյունավետությունը կրոնի իմաստային դաշտի հասկացությունների կերտման ընթացքում: Այս -իչ-ը դասական գրաբարում ենթակայական դերբայի ձևույթի գործառույթ ուներ, թեև նրա մեջ արդեն խորանում էր ընդհանրական բայանվանական իմաստը, այսպես ունենք՝ *արարիչ, ստեղծիչ, տուիչ, շարժիչ, փոխիչ, կարգիչ, յօրինիչ, գտիչ, խափանիչ* նշանակումները աստվածայինի բազմակողմ բնորոշման համար: -իչ-ով ունենք նաև աստվածայինի ծառայող անձանց նշանակումներ՝ *թովիչ, ձօնիչ, պաշտիչ, գրիչ* և այլն:

Գրաբարում կրոնի իմաստային դաշտի բառերի կազմությանը մասնակցում էր նաև -եղէն վերջածանցը, որը լեզվի հետագա շրջա-

¹⁰ Եզնիկ Կողբացի նշվ. աշխ., էջ 30:

¹¹ Նույն տեղում, էջ 31:

նում լիովին փոխում է իր իմաստային բովանդակությունը՝ վերածվելով նյութական իմաստ արտահայտող հավաքական բառակազմական ձևույթի՝ *ոսկեղեն, արծաթեղեն, բանջարեղեն, խմորեղեն*: Այնինչ հին գրական հայերենում *-եղեն* ածանցը դրվում էր ամենից առաջ հոգևոր ոլորտի հասկացություններ նշանակող արմատների վրա՝ ցույց տալով դրանց ծագումը, սերումը և պատկանելությունը՝ *աստուածեղեն, մարդեղեն, ոգեղեն, հողմեղեն, բոցեղեն*: «Քանզի յորժամ մեք ասեմք՝ թե սիք շնչե, ստորնեայք ասեն այս շնչե, եւ վասն տարածութեանն միայն եւ արագութեան կոչին հրեշտակք եւ դեւք եւ հոգիք մարդկան,՝ **ոգեղենք**, որ է **հողմեղենք**, նոյնպէս եւ վասն արագութեան եւ տարածութեան **հոգեղենք**, որ է **հողմեղենք**, բայց բնութիւն նոցա ի վեր է քան զհողմն եւ քան զհուր, նուրբ եւ արագ քան զմիտս»¹²:

Ունենք նաև *առնել-արարել* բայի կատարյալի արմատից կազմված հականիշների գույգ, որոնց միջոցով հակադրվում են աստվածությունը և աստծո արարչության արդյունքը, գերակա և ստորակա էությունները՝ *արարիչ և արարածք*:

«Եղծ աղանդոցում» վկայված են նաև կրոնի իմաստային դաշտին պատկանող գրաբարյան գեղեցիկ բազմաբաղադրիչ դարձվածքներ, ինչպես օրինակ՝ *ամենագէտ գիտութիւն, անպակաս իմաստնութիւն, ամենարուեստ իմաստնութիւն, աղբիւր բարութեան* (աստված բառի դարձվածային հոմանիշներ են), *խոսանացեալ որթ* (մեղսագործ մարդ), *կենդանարար կենդանի, պաշտօն տանել, պաշտօն մատուցանել, լինել ի տան աստուծոյ, յաղօթս առնել, հաղորդութիւնս առնել, յաշտ առնել, յաղօթս համբառնալ, ժառանգել զկեանս յաւիտենից, էլանել ի խաչ, դարձուցանել զարեգակն ի խաւար, դարձուցանել զլուսինն յարիւն* և այլն:

Կրոնական դաշտի բայական հարադրությունների միավորներից ամենակիրառականը՝ *առնել* անկանոն նույնարմատ բայն է, նրա հոմանիշ *ստեղծանել*-ը, պակասավոր *գոլ*-ը և *եմ* բայի ներկայի

¹² Նույն տեղում, էջք 74-76:

եզակի երրորդ դեմքի **Է** ձևը, որը գոյականի արժեք ունի՝ քրիստոնեական Աստուծո ամենատարածված նշանակումներից է, գրվում է մեծատառով, թեքվում է, հոդ ստանում՝ **է-ն, է-ին**, ունի իր հակոտնյան՝ **չէ-ն**, վերջինս հեթանոս, հեռացող, անկյալ աստվածությունների բառ-խորհրդանիշն է: Հիշենք թևավոր խոսք դարձած հանրահայտ նախադասությունը երկրորդ գրքից. «... մեծի ծաղու արժանի է, զի **չէրն չէին** վասն **չէին** յաշտ առնէր»¹³:

Ընդհանրացնելով ամրագրենք, որ առաջին գրքում վկայված կրոնանիշ բառերի մեծամասնությունը ծագմամբ բնիկ է, կազմությամբ՝ արմատական կամ ածանցավոր, բարդություններն առավել հազվադեպ են, իրանական փոխառությունների տարրը առկա է, բայց չի գերակայում, հունական կամ ասորական փոխառությունները շատ ավելի սակավ են: Իրավիճակը փոխվում է հաջորդող գլուխներում՝ պայմանավորված հեղինակի քննարկած, ավելի ստույգ ընդդիմախոսության կամ եղծման ենթակա թեմաներով:

Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, նախաքրիստոնեական կրոնի հետ կապված բազմաթիվ հատուկ և հասարակ բառեր իրանական փոխառություններ են, քանզի հայոց հեթանոսական դիցարանը հետագայում մեծապես կրել է իրանական դիցարանի ազդեցությունը, հնագույն հայկական աստվածությունները դուրս են մղվել իրանական աստվածների ազդեցությամբ, ինչպես օրինակ՝ մեռնող և հարություն աստուծո՝ *Արայի* պաշտամունքը, որը փոխարինվեց *Մհեր-Միթրայի* պաշտամունքով: Իսկ հելլենիստական շրջանում զգալի դարձավ հունական ազդեցությունը, որն արտահայտվեց այդ լեզվից կատարված կրոնանիշ բառերի առատ փոխառություններով, քրիստոնեական գաղափարախոսությունն իր հերթին մեր բառապաշարում ամրագրեց հունական և ասորական բազմաթիվ կրոնական եզրույթներ:

Երկրորդ գլխում կրոնական իմաստ են ստանում այնպիսի զգայական ընկալման վերացական բառեր, ինչպիսիք են **փառք**-ը և

¹³ Անդ, էջ 106:

նրանից ածանցյալ՝ *փառաւոր*-ը, քանզի փիլիսոփա, դավանաբան Եզնիկի համոզմամբ, մշտակա, հարակա փառքը բնորոշ էր միայն բարձրագույն էակներին, իսկ մահկանացուների փառքը անցողիկ է, դեպքերի արգասիք, որը երբեմն փոխարինվում է թշվառությամբ: Երկրորդից չորրորդ գլուխներում թեև կրոնական փոխառությունների քանակը զգալի է, բայց դրանց հիմնական մասը իրանական է, զուգահեռաբար կան ասորական և հունական ծագման բառեր՝ *բարսմունք, բազին, գեհեն, դեւ, դէն, դժոխք, դրախտ, մոգ, մոգպետ, մագդեզն, յուշկապարիկ, յաշտ, հրէշ, պայ, վարդապետ, քէշ, հեթանոս, քաղեայ, քուրմ, սասանայ, եկեղեցի, հերետիկոս, հիւղէ, սրով-բէ* և այլն:

«Եղծ աղանդոյն Մարկիոնի» գրքում *արդար* և *արդարութիւն* որականիշ գոյականը և նրա արմատ ածականը կամ *երանութիւն և երանելի* գույգը ձեռք են բերում ակնհայտ կրոնական բովանդակություն: *Արդար* ածականը դառնում է աստված բառի հոմանիշ, և աշխարհաբար թարգմանության մեջ Ա. Աբրահամյանը թեև թողնում է *արդար* բառը, բայց կողքին փակագծում ավելացնում է *աստված* բառը հասկանալիության համար, քանի որ այս բառի կրոնական իմաստն արդի արևելահայերենում ակնհայտ մթագնած է: Դյուրընկալ լինելու համար գրաբարով մեջբերենք Եզնիկի այդ նախադասության հատվածը, ապա Ա. Աբրահամյանի համարժեք թարգմանությունը: Այսպես՝ «Դարձեալ, եւ զոր *արդարն* ասեն՝ թէ արդարեւ արդար էր, յետ բաժանելոյ զիշխանութիւնսն, իւր զերկինսն երկոսին առնոյ, հիւղեայ եւ որդուցն նորա զերկիրն միայն թողոյ, զհարդ էր, զի միւսանգամ նորա աշխարհին ցանկացեալ...», աշխարհաբար թարգմանված է հետևյալ կերպ. «Դարձյալ՝ նրանց *արդար (աստված)* կոչածն էլ, եթե իսկապես արդար էր, ինչպես էր, որ տիրապետությունները բաժանելուց, երկու երկինքն էլ իրեն վերցնելուց, հյուլէին ու նրա որդիներին միայն երկիր թողնելուց հետո, նորից աչք էր զցել նրա (հյուլէի) աշխարհին...»¹⁴:

¹⁴ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 208-209:

Եզնիկի «Եղծ աղանդոց» երկում առկա կրոնի և հավատալիքների իմաստային դաշտի քննությունը երևան է բերում իմաստաբանական տեղաշարժերի ուշագրավ երևույթը՝ իմաստի ընդլայնում, նեղացում, շրջում, որը պայմանավորված է լեզվակիր հանրության մտածողության մեջ կատարվող փոփոխություններով: Շատ հասկացությունների մեջ առկա կրոնական իմաստը կարող է ինչպես մթազնել, այնպես էլ ընդգծվել: Այսինքն՝ հասարակական կյանքին բնորոշ իմաստային դաշտի հիմնաբառերը հեշտությամբ կարող են դառնալ կրոնանիշ, հնարավոր է նաև հակառակ անցումը:

Բնության իմաստային դաշտին պատկանող բառերի պարագայում ակնհայտ է նրանց կրոնական բովանդակության հետևողական մթազնումը և ապա՝ կորուստը: Մարդկության գոյության նախնական շրջանում բնության երևույթների, կենդանի և անկենդան աշխարհի միավորների անվանումները սկզբնապես կրոնական-պաշտամունքային բովանդակություն ունեին, բայց այն աստիճանաբար կորչում է և վերականգնելի է դառնում միայն ստուգաբանական կամ տարժամանակյա մակարդակում: Այս տեսանկյունից անդրադառնանք **աստուած** բառի ստուգաբանական պատմությունը Վ. Համբարձումյանի վերականգնմամբ, ըստ որի՝ այս բառի հիմքում **Տուած** դիցանունն է, որը հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լուսի», հետագայում՝ «աստծո») անվան հետ է կապված: Ցեղակից լեզուներում այս **tun* բաղադրիչի գուգահեռները իբրև «երկնքի կամ արևի աստված» հասկացության անվանումներ, դառնում են հատուկ անուններ (հմմտ. հին հնդ. Dyaus, լատ. Diouis և այլն), դրանց համար վերականգնվում է հ.-ե. ընդհանուր **t'ieu-* «աստված» բառարմատը, որի համար նախնական է «օր» իմաստը (հմմտ. հայ. տիւ «ցերեկ»): Եվ նշյալ **Տուած* «լուս», «լուսի աղբյուր», «լուսատու» նշանակությունները Վ. Համբարձումյանը վերականգնում է Աստուած/ Աստուած բառի իմաստային կառուցվածքում, այսինքն՝ «արարիչ՝ լուսի աղբյուր և լուս տվող՝ լուսատու»¹⁵:

¹⁵ Տե՛ս Վ. Համբարձումյան, Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Եր. 2002, էջ 30-32:

Մարդկության զարգացմանը զուգընթաց կրոնական և հավատալիքային նշանակություն ունեցող վաղնջական բառերի իմաստաբանական կառուցվածքը հստակ փոփոխությունների է ենթարկվում, որոնց հետևանքով գերբնականությունը քայլ առ քայլ հանգում է բնականության: Որպես օրինաչափություն՝ շատ բառեր, որոնք ի սկզբանե կրոնական իմաստ ունեին, աստիճանաբար վերածվում են ընդհանուր բառապաշարի միավորների, որոնց արտահայտած զգացումները, զուտ ծիսակրոնական բովանդակությունից ձերբազատվելով, դառնում են բարոյական իրավական արժեքների, որակների նշանակումներ: Ըստ էության կրոնի իմաստային դաշտից նման բառային միավորները տեղափոխվում են այլ իմաստային դաշտեր, դրանք կազմում են մարդու նշանային հոգևոր գործունեության, նրա զգայությունների, զգացմունքների ու ընկալման, կամքի, իմացության հետ կապված գոյականներ ու ածականներ: Զորօրինակ՝ *բախտաւորութիւն, բարերարութիւն, բարկութիւն, բնութիւն, իմաստնութիւն, հեստութիւն, յարութիւն, ողորմութիւն, չուառութիւն, պատուիրան, պատիժ, կենդանի, անմահ, չար, բարի, կենարար* և այլն:

Պետք է արձանագրել, որ կրոնի, հավատալիքների իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ բառերը գրաբարում զգալի թիվ էին կազմում, դրանք հիմնական բառաֆոնդին էին պատկանում, որովհետև այն դարերում երկնայինը և երկրայինը մարդկային կյանքի հիմքում էին, իրարից անբաժան: Այս տեսանկյունից Եզնիկի «Եղծ աղանդոց»-ը հավատալիքային մեր հնագույն բառապաշարի ուսումնասիրության բացառիկ սկզբնաղբյուր է: Այս երկում վկայված բառ-հասկացությունների մեծամասնությունը ժառանգեցին ինչպես միջին, այնպես էլ նոր գրական լեզուները՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, բարբառները՝ աննշան հնչյունական փոփոխություններով, բայց իմաստային մեծ տեղաշարժերով՝ հարստացնելով բառապաշարը:

ԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՑԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1.1 Ծիսական առարկաներ

Հայ եկեղեցական մշակույթը մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի հոգևոր կյանքի գրեթե բոլոր բնագավառների համար և շոշափում է հասարակական գիտակցության բոլոր ձևերը՝ բարոյագիտություն, փիլիսոփայություն, գրականություն, պատմագրություն և այլն: Հին և Նոր Կտակարանների թարգմանությունները, որոնք տվեցին այդ բազմապիսի բնագավառների հայալեզու եզրույթներն ու հայերեն ճկուն արտահայտչաձևերը, իրենց հերթին նպաստեցին ինքնուրույն և թարգմանական գրականության հետագա զարգացմանը:

Հայերենի զարգացման ընթացքում մշտապես կարևոր նշանակություն է ունեցել բառապաշարը հայերեն գիտական անվանումներով հարստացնելու, հայ տերմինաշինության ու բառօգտագործման զարգացման հարցը: Հայ հին մատենագրությունը արդի հայերենին է ավանդել զանազան բնագավառների վերաբերող բազմաթիվ անվանումներ՝ բժշկագիտական, իրավաբանական, լեզվական, եկեղեցական, տոմարագիտական և այլն: Յուրաքանչյուր բնագավառի տերմինահամակարգ սերտորեն կապված է ընդհանուր բառապաշարի հետ և դրա մի ենթահամակարգ է՝ իրեն հատուկ տերմինների ամբողջությամբ:

Հայ ծիսական տերմինների՝ առանձնապես եկեղեցական պարագաները բնութագրող բառերի քննությունն էական է արդի հայերենի բառապաշարի ուսումնասիրության հարցում¹: Այդ նպատակի համար անհրաժեշտ ենք համարել առանձնացնել եկեղեցական առարկաների անունները, նշել արմատական բառերի ծագման աղ-

¹ Այս հատվածում քննել ենք միայն արմատական բառերը. բարդ և ածանցավոր կաղապարներին կանոնադաշտանք հաջորդիվ:

բյուրներն ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի», ինչպես նաև վերջինիս «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատությունների: Դեռևս նախագրային շրջանում հայերենն ունեցել է կրոնապաշտամունքային ծեսերին, արարողություններին վերաբերող բառաշերտ, որ մեզ հասել է հինգերորդ դարից ավանդված գրականության միջոցով. որոշ նախաքրիստոնեական բառեր հետագայում անցել են քրիստոնեությանը: Թեև բառապաշարի կրոնակեղեցական բառաշերտը հիմնականում ավանդապահ է, այնուամենայնիվ, պատմական զարգացման ընթացքում այստեղ ևս տեղի են ունեցել զանազան բնույթի իմաստային փոփոխություններ՝ պայմանավորված լեզվական և արտալեզվական զանազան գործոններով²: Հայերենի կրոնակեղեցական տերմինահամակարգում մեծ թիվ են կազմում փոխառությունները՝ կատարված ասորերենից, հունարենից և իրանական լեզուներից: Փոքրաթիվ են հնդեվրոպական ծագման բառերը:

Դիտարկված բառերի համար բերված են բնագրային օրինակներ, ինչը հիմք է դարձել մի կողմից ծիսական այդ տերմինների ճշգրիտ առանձնացման ու բացատրության, մյուս կողմից նրանց՝ իբրև այդպիսին, և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա հայեցակետերով գնահատելու համար՝ դրանով իսկ արժևորելով հին հայերենի կարևորագույն դերը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինային համակարգի ձևավորման ու համալրման հարցում:

«**Ծես**՝ փոխառեալ է վրացերենից եւ նշանակում է *կարգ, կանոն*, վրաց. *ձէսა*՝ կոչել, անուանել, իսկ ծիսագիտությւնը եկեղեցական արարողութիւններ կատարելու սահմանուած կանոնի գիտութիւնն է: Հայ եկեղեցւոյ ծէսը կարգադրուած է մեր սրբազան Հայրապետներուն կողմէ, Աւետարանի ոգիին եւ դաւանութեան համաձայն, եւ

² Տե՛ս **Ս. Պապիկյան**, Հայ կրոնակեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը: Սեղմագիր, Եր., 2017, էջ 30:

...հայ եկեղեցւոյ աստուածային պաշտամունքը՝ իր այլազան մասերով՝ կը կազմէ ներդաշնակութիւն մը, որուն արտայայտութիւնը իր հոգեւոր նպատակին հասցնելու համար... հասկացողութիւն պետք է, ջանք եւ խնամք պէտք է, վերջապէս պէտք է հոգեւոր եռանդ եւ բարեպաշտութիւն»³:

Մեր քննության նյութը հանդիսացող բառերը բաժանել ենք հետևյալ իմաստային խմբերի. ա) կահկարասի և հարակից զանազան պարագաներ նշանակող բառեր՝ *աթոռ, աշտանակ, աւագան, բշխուն, կանթեղ, կերոն, մոմ, նկատ, նշխար, շուշփայ, ջահ, սեղան* և այլն, բ) անոթներ, սպասքներ նշանակող բառեր՝ *բաժակ, բուրուռ, զանձանակ, կոնք, մաղզմայ, պնակ, սկիհ, սպաս* և այլն, գ) զարդեր, խաչեր նշանակող բառեր՝ *ճաճանչ, խաչ, պնակէ, գաւագան*, դ) անուշահոտություն արտահայտող բառեր՝ *խունկ, միւռոն*: Ծիսական բովանդակությամբ եզրույթները մեր կողմից արժևորվել են՝ ելնելով Է. Աղայանի այն մոտեցումից, որ լեզվի ամբողջ բառապաշարը տերմինագիտական տեսակետից բաժանվում է երեք կարգի՝ 1. ոչ տերմինային բառեր: 2. տերմինային բառեր, որոնք սովորական գործածությամբ բառ են, բայց տերմինաբանորեն մասնավորված գործածությամբ՝ տերմին: 3. տերմիններ, որոնք ունեն միայն տերմինաբանական նշանակություն⁴: Մեր ընտրանքում ընդգրկված բառերը բաժանվում են վերջին երկու խմբերի միջև՝ ա) բուն ծիսական իմաստ ունեցող բառեր, որոնք արժևորվում են որպէս եզրույթներ, օրինակ՝ *բուրուռ, բշխուն, խունկ, միւռոն* և այլն, բ) բառեր, որոնք ի թիվս այլ իմաստների՝ ունեն նաև ծիսական բովանդակություն՝ *աթոռ, աշտանակ, աւագան, զանձանակ, կանթեղ, ճաճանչ* և այլն:

Հետազոտության համար նյութ են ծառայել կրոնագիտական տերմինահամակարգին նվիրված ուսումնասիրություններ, հայտնի

³ Տե՛ս Ղեռնդ արքեպս. Չեպէեան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ 11, 18:

⁴ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 320:

բացատրական և մասնագիտական բառարաններ⁵, մատենագրական տարբեր աղբյուրներ:

Անդրադառնանք կահկարասի նշանակող բառերին.

Աթոռ բառի ծագումն անհայտ է: Գ. Զահուկյանն այն դասում է այնպիսի բառերի թվին, որոնք համեմատաբար նոր են և բացակայել են վաղնջահայերենում⁶: Այս բառի համար ԳԲ-ում և ՆՀԲ-ում նշվում են հետևյալ իմաստները՝ 1. նստարան թիկնակով կամ առանց թիկնակի: 2. նստարան՝ բնական կարիքների համար: 3. գահ: 4. պաշտոն կամ իշխանություն՝ հոգևոր և աշխարհիկ իմաստներով(փոխաբ.)՝ «...բայց միայն *աթոռովս* ի վերոյ եղեց ես քան զքեզ» (ՄՆ 41:40): 5. եպիսկոպոսական ժառանգական իշխանություն. «...եւ տալ փոխանակ նորա *յաթոռ* եպիսկոպոսապետութեանն Հայոց գՍուրմակն զայն»⁷: 6. եպիսկոպոսական աթոռանիստ. «...ի նոցին իսկ նախարարացն հալածեցաւ *յաթոռոյն*⁸»: Հայերենի բարբառներում *աթոռ* բառը գործածվում է նաև որպես՝ ա) գութանի չորրորդ լուծը, բ) մի շարք կրոնական տոների պասին նախորդող շաբաթը, օրինակ՝ *Աստվածածնի աթոռ*: Այսօր բառը պահպանել է պաշտոնի

⁵ Գ. Աւետիքեան, Հ. Միւրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկագեան բառարան(ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան(ԳԲ), Եր., 2000: Առձեռն բառարան հայկագեան լեզուի(ԱԲ), Վենետիկ, 1865: Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: Հ. Բաբսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկագյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան(ՄՀԲ), Եր., 2009: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), Եր., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան(ԺՀԼԲԲ), Եր., 1969: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Եր., 2003: Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Օխական բառարան(ՕԲ), Անթիլիաս-Լիբանան, 1979: Համաբարբառ գրաբար Աստուածաշնչի, Եր., 2012 (ՀԳԱ): Յովհ. Զօհրապեան, Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805:

⁶ Այդ թվին են պատկանում նաև մեր ընտրանքում ընդգրկված *սեղան*, *կանթեղ*, *մոմ* բառերը (տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՆԴ), Եր., 1987, էջ 264:

⁷ Տե՛ս «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 349:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 158:

կամ իշխանության խորհրդանշի իմաստը և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ բնագավառներում:

Մեղան բառի ծագումն անհայտ է⁹: Սա նույնպես բազմիմաստ բառ է, որի համար ԳԲ-ում նշվում է յոթ իմաստ, որոնցից երեքն ունեն կրոնական բովանդակություն՝ 1. կարասի՝ ճաշասեղան: 2. կերակուր: 3. հացկերույթ, կոչունք: 4. դրամափոխի վաճառասեղան: 5. զոհասեղան, զոհարան, բազին. «Եւ առցես ի ձեռաց նոցա եւ հանցես ի **սեղանն** ողջակիզաց» (ՀԳԱ¹⁰, Ելք 29:25): 6. պատարագ մատուցելու սեղան եկեղեցում, խորան. «Եվ սրբեցից զխորան վկայութեան եւ **զսեղանն**» (Ելք 29:44): 7. Քրիստոսի խաչը. «Ոչ է հաճոյ մեզ թողուլ մեզ զբանն Աստուծոյ եւ պաշտել **զսեղանս**» (Գործ 6: 2):

Մեղան բառն այսօր ոչ միայն պահպանել է իր բոլոր իմաստները, այլև արտահայտում է այլ բնագավառների (երկրաչափ., աստղագիտ.) եզրույթներ ևս: Նրանով կազմված են բազմաթիվ դարձվածքներ:

Աւագան՝ տաշտ, լվացարան, գուռ: Իրանյան փոխառություն է, որի հիմքն անհայտ է¹¹: Նշանակում է՝ 1. տաշտ, կոնք, լվացարան: 2. որպես եկեղեցական եզրույթ՝ մկրտարան. «Եւ փութացաւ թափեաց զսափորն **յաւագանն**» (Ծն 24:20): 3. Մկրտություն, ապաշխարություն. «...ըստ իւրում ողորմութեան ապրեցոյց զմեզ ի ձեռն **աւագանին** միւսանգամ ծննդեանն» (Տո 3:5): Արդի հայերենում բառն ունի նաև այլ բնագավառներին պատկանող տերմինային նշանակություններ՝ ա) ընդերքում հանքատեսակի ընդգրկված տարածությունը

⁹ Գուցե բնիկ հնդեվրոպական *k'el* ծածկել, պահել կամ թեքել արմատից լինի, կամ փոխառություն է գնչուական *salan* կամ *selan* բառից և տառադարձությամբ մտել է Մուրբ գրքի քրդերեն թարգմանության մեջ (տե՛ս Ն. Աճառեան, ՀԱԲ, Եր., 1926, հ. 4, էջ 199: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 675):

¹⁰ Այսուհետև ՀԳԱ-ից բերվող օրինակների մոտ կնշենք միայն աստվածաշնչյան գրքերի անունները:

¹¹ Կա պարսկ. *abzan*՝ ջրշեղջ, բայց այս պարսիկ բառը չէր կարող տալ հայերեն *աւագան* ձևը, քանի որ սա ենթադրում է պահլավերեն *apazan*, ուստի հայ. *ապագան*: Բայց կա նաև ասոր. *avzana* (մկրտության ավագան)՝ պարսկերենից փոխառյալ, որի չձայնը համապատասխան է հայերեն *z*-ին, ուղղակի վերջավորությունը տարբեր է (տե՛ս Ն. Աճառեան, ՀԱԲ, հ. 1, էջ 352):

(երկրաբ.), բ) երիկամներում մեզի կուտակման տեղը (կազմախոս.), գ) լճի մեջ թափվող գետերի ու վտակների ամբողջությունը (աշխարհագր.)՝ օրինակ՝ **Սևանի ավազան**:

Աշտանակ բառը փոխառյալ է իրանական անստույգ աղբյուրից՝ *atistanak*՝ թերևս –անակ՝ *anak*՝ իրանական վերջածանցով կազմված¹²: Ունի հետևյալ իմաստները՝ 1. մոմակալ, ճրագակալ: 2. պատին ամրացվող մետաղյա հարմարանք էլեկտրալամպի համար: 3. որպես ծիսական առարկա՝ յոթնաստեղյան ճրագակալ, «որ ջահընկալի ձեռնադրութեան ատեն եպիսկոպոսէն կը տրուի նուիրեալին ձեռքը՝ իշխանութիւն տալով կատարելու եկեղեցւոյ լուսավառութիւնը»¹³: «Եւ եկն եմուտ... առ նա զսեղանն ոսկի, եւ *զաշտանակն* լուսոյ» (Ա Մկ 1:23): Աշտանակները սովորաբար պիտի լինեն տասներկուսը՝ իրենց հարմար մոմեղենով: Լինում են՝ *աշտանակ քազմաստեղյան, աշտանակ բեմի, աշտանակ գրակալի, մոմակալ* և այլն:

Մոմ՝ պահլ. *mom* արմատից, որ նշանակում է *մեղրամոմ, կեղքոն*: Ունի մի քանի իմաստներ. 1. մեղվի արտադրած կակուղ դեղնավուն նյութը: 2. այն նյութը, որի վրա մատանին են դրոշմում: 3. նամակների կնքամոմ: 4. իբրև ճրագ գործածվող բամբակե պատույց: Հին Կտակարանում նշված է, որ մոմ էին գործածում Վկայութեան խորանում եւ Սողոմոնի տաճարում լուսավորության համար, իսկ քրիստոնեության ընդունումով այն դարձավ նաև բարեպաշտության և գոհաբերության արտահայտչաձև: «*Մոմ* է ի պնակիասն, որ դիւրաւ փխրի» (ՆՀԲ, 2, 296):

Կերոն՝ փոխառությունն հունարենից՝ *κηριον*՝ մեղրամոմ, որից նաև վրացերեն՝ *կերէոնի*, լատ. *cera*, ֆրանս. *cire*¹⁴: Նշանակում է նաև *ջահ*: Կերոնները մեծ մոմեր են՝ եկեղեցական տարբեր արարողությունների ժամանակ գործածվող:

¹² Տե՛ս Գ. Զահուկյան, ՀԼՊ, Եր., 1987, էջ 569:

¹³ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, ԾԲ, Անթիլիաս-Լիբնան, 1979, էջ 77:

¹⁴ ՆՀԲ-ում՝ *մոմեղեն* գլխաբառի տակ՝ իբրև զավառական բառ՝ *կերոն* (տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 296), իսկ ՀԲԲ-ում գլխաբառը նշված է *կեռոն* (տե՛ս Մ. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 2, էջ 428):

Կանթեղ՝ լուսավորության հարմարանք՝ արծաթյա կամ պղնձյա անոթ, որի մեջ լցնում են ձեթ և պատրույզ դնելով՝ վառում: Բառը փոխառ-յալ է հունարենից՝ *χανδηλα՝ կանթեղ, կախված ճրագ*, որն էլ իր հերթին՝ լատ. *candela՝ ջահ, մոմ* բառից. վերջինս ծագել է *candere՝ փայլել* բայից և փոխառվել շատ լեզուների մեջ: Հետևաբար դարձել է *կանթեղն*, որից սեռական՝ *կանթեղան*¹⁵: Փոխաբերաբար բառը նշանակում է նաև *լույս, լուսավորություն*: Եկեղեցում կանթեղն ամրացնում են Սուրբ սեղանի կամ սրբապատկերների առջևում: «Լոյս ճրագացն եւ *կանթեղացն* եկեղեցւոյ բոբբոքեալ տոշորէր»¹⁶:

Ջահ բառը Հ. Աճառյանը համեմատում է ուտիերեն *ճար՝ ջահ* բառի հետ, սակայն ըստ Գ. Ջահուկյանի՝ ավելի հավանական է սրա իրանական փոխառություն լինելը¹⁷: Ունի հետևյալ իմաստները. 1. դյուրավատ խրճերից բոցավատ ճրագ: 2. պայծառ վառվող մոմեղեն կամ կանթեղ: 3. պայծառ խարույկ: 4. արևի սկավառակի վրա երևացող կետ(աստղաբ.): 5. վեհ գաղափարի խորհրդանշան, ուղենիշ (փոխաբ.): ՆՀԲ-ում նշված է նաև որպես եկեղեցական եզրույթ՝ *զարդ եկեղեցեաց սոկախեալ*: «...*ջահս* այս՝ ճախր առեալ ի գլուխ կաթուղիկէիս» (ՆՀԲ, 2, 668):

Շուշիպ/շուշպայ՝ 1. սավան կամ նման շորեղեն: 2. սկիհը մաքրելու կամ ծածկելու շոր: 3. սրբերի մասունքների կամ Ավետարանի պատանք: Փոխառյալ է ասորերենից՝ «գլխի ծածկոց, քող» նշանակությամբ¹⁸: Միջին հայերենում՝ *շուշիկ* տարբերակով՝ *սրբերի մասունքներ, խաչ կամ ավետարան փաթաթելու շոր*. «Ետուն ի դուռն Ս. Խաչին...եւ ոսկեթել *շուշիկ* մի վառին խաչին» (ԺԷ, ՀՀՀ, Ա, 52)¹⁹: Երբեմն գործածվում է *դաստառակի*²⁰, անձեռոցի կամ սփռոցի

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 514:

¹⁶ **Ղազարայ Փարպեցու** Պատմություն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Եր., 1982, էջ 86:

¹⁷ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 119: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 649:

¹⁸ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 537:

¹⁹ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ(1601-1620 թթ.), հ. Ա, Եր., 1974:

իմաստով: ՆՀԲ-ում այն նույնացվում է *գորփուրայի*²¹ հետ՝ *մաքուր կտաւ որպէս սնդոն Սուրբ սեղանոյ* եւ *որպէս մաքրիչ սկեռոյ*. «Առցեն զշիշս ծածկեալ պրիսմեղէն *շուշփայլիքն*» (ՆՀԲ, 2, 491):

Բշխուն՝ ընտիր կտորից ասեղնագործված դաստառակ, որ գործածում են եկեղեցիներում հաղորդության ժամանակ: Բառը փոխառյալ է պարսկերենից՝ *pis*՝ *առջևը* + *xun* կամ *xan*՝ *սեղան* բառերից (սրանից նաև՝ վրաց. *փեշխվանի*), ուստի *բշխուն* բառը պետք է կարդալ ըստ հետին տառադարձության՝ *փշխուն*²²: Մ. արքեպսկ. Օրմանյանը բառը կարծում է *բաշխուն*՝ *հաղորդութիւն բաշխուելէ անուում*²³:

Նշխար՝ պահլ. *nisxur*²⁴: Բազմիմաստ բառ է. 1. կերակրի մնացորդ: 2. որևէ բանի նմուշ: 3. նամակները կնքելու կաշուն խեժային նյութ: 4. կրոնական իմաստով՝ *սրբերի կնախքից մասունք*. «Եւ *նշխարն* ի զոհէ անտի՝ Ահարոնի եւ որդւոց իւրոց լիցի» (Ղեւ 2:3): 5. *տափակ հաց՝ մի երեսին Քրիստոսի խաչելությունը*: Մա պատարագի ժամանակ փոքրիկ կտորներով բաժանվում է հավատացյալներին²⁵. «Ահաւասիկ *նշխար*, դի՛ր զայդ առաջի քո եւ կե՛ր» (Ա Թգ 9:24):

Նկատ՝ կոթավոր փայտ՝ տափակ երեսին ասեղներ գցած, որ օգտագործվում էր նշխարը թխելուց առաջ այն ծակծկելու համար: Հ. Աճառյանը այս բառը կապում է պարսկ., արաբ. *nugta*՝ *նկտայ կէտ* բառի հետ՝ իբրեւ կիտված, կէտ-կէտ նշան²⁶:

²⁰ Փոխառյալ է պահլ. *dastarak*, որ «աւանդուած չէ, բայց նոյնը հաստատում են հայերէնի հետ պարսկ. *dastar*՝ *թաշկինակ, գլխի փաթեթոց*» (տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ. 1, էջ 627):

²¹ *Գորփուրայ*՝ լատ. փոխառ.՝ *corporalis*՝ *մարմնակալ*. քառակուսի ճերմակ կտավ, որ լատին եկեղեցում պատարագիչը փռում է սեղանին և վրան դնում սկիբը և սրբագործյալ նըշխարն առանց մաղզմայի (տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ.1, էջ 585: Մ. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 1, էջ 466):

²² Տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ. 1, էջ 458:

²³ Տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանեան, ԾԲ, էջ 93:

²⁴ *Նիշխար, նիշխար նիշ*՝ *մնացորդ + խար*՝ դարման, *անասնակերի մնացորդ* (տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 929):

²⁵ Մա պատկանում է իրանականից հայերենին անցած այն բառերի թվին, որոնք ընդհանուր իմաստից ստացել են մասնակի իմաստ (տե՛ս Գ. Զաւիուկյան, ՀԼՊ, էջ 578):

²⁶ Տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ. 3, էջ 457:

Անդրադառնանք անոթներ, սպասք նշանակող բառերին:

Բաժակ՝ պահլ. փոխառություն է՝ *bazak* հոմանիշից, որը թեև ավանդված չէ, բայց հաստատվում է հայերենի հետ այլ փոխառություններով: Իրանյան բառի արմատն է՝ *bhaj*՝ բաժանել՝ կազմված իրանական –*ակ* ածանցով²⁷: Ունի հետևյալ իմաստները. 1. ապակյա գլանաձև անոթ: 2. բաժակի պարունակությունը՝ որպես տվյալ հեղուկի քանակային միավոր (փոխան.): 3. ծաղկի թերթերը շրջապատող տերևների բաժականման պսակը (բուսաբան.): 4. փորձություն, փորձանք (փոխաբեր.): Կրոնական տերմինաբանության մեջ *բաժակ* նշանակում է *պատարագի ժամանակ օրհնված գինին՝ որպես հաղորդություն*: «Այս *բաժակ* է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղեղոյ» (Ղկ 22:20): *Բաժակ* բառին հոմանիշ է նաև *բաժկամանը* կամ *ժամանգը*:

Բուրուառ՝ անուշահոտության համար գործածվող կրակի մետաղյա ամանը, որտեղ խունկ են վառում: Պահլ. փոխառություն է՝ կազմված պարսկ. *boy՝ հոտ, բոյր* բառից՝ *ուար //ւառ* միջին իրանական ածանցով. իրանյան բառի բուն արմատն է նախալեզվյան –*bheudh՝ արթուն հսկել, զգալ*²⁸. «Եւ արար զսեղանն պղնձապատ *ի բուրուառացն* պղնձեաց» (Ելք 38:1): Եկեղեցում խունկ պահելու տուփերն անվանում են նաև *խնկաման, խնկակալ, խնկանոց, խնկարան*: Արդի հայերենում *բուրուառ* բառը փոխաբերական իմաստով նշանակում է նաև *զուլք, փառաբանություն*:

Գանձանակ-ը փոխառյալ է պարսկերենից՝ *ganjanak*՝ կազմված միջին իրանական –*anak*²⁹ վերջածանցով՝ գանձարան. 1. դրամ պահելու արկղ: 2. *եկեղեցում պահվող տուփ, որի մեջ դրամ են գցում հավատացյալները*. «...տեսանէր, թէ զհարդ ժողովուրդն արկանէր պղինձ *ի գանձանակն*» (Մր 12:41): Գանձանակները տարբեր կիրառություններ ունեն՝ *քահանայից գանձանակ, հաստատուն գանձանակ բեմի վրա՝* եկեղեցու ընդհանուր պետքերի համար: Արդի հայե-

²⁷ Տե՛ս նույն տեղում, հ. 1, էջ 380: **Գ. Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 519, 568:

²⁸ Տե՛ս **Հ. Աճառեան**, ՀԱԲ, հ. 1, էջ 471: **Գ. Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 569:

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, ՀԼՊ, Եր., 1987, էջ 569:

րենի բառարաններում *գանձանակ* նշանակում է նաև տուփի մեջ գցված նվերը:

Մաղգմայ (մաղագմայ)՝ փոքրիկ սկավառակ՝ արծաթյա երեսով և ներսից ոսկեգոծ ափսե, որի վրա դրվում է հաղորդության նշխարը, և որով ծածկում են սկիհը: Ասորերենից կամ պարսկերենից փոխառված ինչ-որ անծանոթ բառ է³⁰. «Հրամայեաց ոսկեղէն *զմաղգմայս* բերել եւ անոյշ գինւով զնշխարսն հրամայէր լուանալ» (ՆՀԲ, 2, 199):

Պնակ՝ փոխառյալ է հունարենից՝ *πινὰξ պնակ, ափսե*, որից էլ՝ ասոր. *pinka*՝ ափսե, վրաց.՝ *պինաքի*: Հունարեն բառը ծագում է *փայտ, տախտակ* իմաստից³¹: Որպես ծիսական առարկա՝ «...պզտիկ ու մէկ ձեռքով բռնուելու յարմար ափսէներուն, գոր ժողովուրդին նուէրները հաւաքելու համար կը շրջագայեն քահանաներն ու թաղականները³²»: «Զարտաքին բաժակին եւ *զպնակին* սրբէք» (Ղկ 11:39): Սրա հետ իմաստային կապ չունի *պնակէ* բառը, որի մասին կիսուենք ստորև:

Կոնք՝ փոխառյալ է հունարենից՝ *խեցեմորթ, խեցի. κογχη*³³: Բազմիմաստ բառ է. 1. լայն և մեծ տաշտ: 2. մարդու իրանի ոսկրային գոտի (կազմախոս.): 3. Խեցեմորթի մի տեսակ, կոնքաձև նստարան: 4. արտաքին ականջի կոնքաձև խորությունը (կազմախոս.): Որպես եկեղեցական եզրույթ՝ նշանակել է. ա) քահանայի սենյակը հին հրեական տաճարում, բ) եկեղեցում պատարագի ժամանակ պատարագչի ձեռքերի մօտ պահուող արծաթեայ, պղնձեայ կամ արոյրէ աման՝ ձեռքերը կամ սկիհը լուանալու համար³⁴: Պատարագի ժամանակ կոնքի հետ միասին ժամարարին է մատուց-

³⁰ Ինչպես նշում է Հ. Աճառյանը, թեև Հյուբշմանը բառը համարում է պարսկերենից փոխառյալ, սակայն իր կարծիքով սա ասորական փոխառություն է՝ ինչ-որ *lzm* արմատից՝ *-ay* վերջավորությամբ (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 238):

³¹ Տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ. 4, էջ 92:

³² Մաղաքիա արքեպս. Օրմանեան, ԾԲ, էջ 176:

³³ Գ. Զահուկյանը համարում է խոսակցական լեզվից եկող հին բառերից, որոնց մեջ հունական վերջավորություններն ընկնում են (տե՛ս Գ. Զահուկյան, ՀԼՊ, էջ 627):

³⁴ Տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանեան, ԾԲ, էջ 145:

վում նաև *փարչը* կամ *ջրամանը*, որ սկիհը լվանալու համար նախատեսված աման է³⁵. «Թէ *փարջն* լի է, լաւ է» (ՆՀԲ, 2, 937): Կա նաև *նշխարփարջ*, նշխարի ջուրը լցնելու փարջ, *նշխարակուծ*՝ «անօթ ի պէտս գործելոյ զնշխար պատարագի» (ՆՀԲ, 2, 437):

Սկիհ (սկահ, սկի)՝ փոխառյալ է ասորերենից՝ *esqəfa*՝ մեծ բաժակ, հաղորդության բաժակ. սա էլ փոխառյալ է հունարենից և համարվում է ծագած նախալեզվյան *sqabh*՝ *քերել* արմատից³⁶: *Սկիհն* արծաթյա բաժակ է՝ ընպանակ՝ ներսի կողմից ոսկեզօծված, որի մեջ լցնում են նվիրագործելու գինին պատարագի ժամանակ: «Այրն առ որում *սկիհն* գտաւ՝ նա եղիցի իմ ծառայ» (Մն 44:17):

Սպաս՝ պահլավ. *spas*՝ ծառայություն...նախաձևն է հնիւ. *spek* արմատը, որի մյուս ժառանգներից են լատ. *spekto*, գերմ.՝ *spiare*՝ նայել, հսկել³⁷: ՆՀԲ-ում նշվում է բառի ութ իմաստ՝ երկուսը կրոնական. 1. սպասավորություն, ծառայություն: 2. կարասի, ամանեղեն, հանդերձանք: 3. թանկարժեք իրեր, զարդեր: 4. կերակուր: 5. կոչունք, կերուխում: 6. սպասավոր: 7. եկեղեցական իրեր՝ սկիհ, տաճարի սուրբ բաժակ. «...դարձուցից ի տեղիդ յայդ զամենայն *սպաս* տանն Տեառն» (Եր 28: 3): 8. պատարագի ժամանակ օրհնվող հացը և գինին. «Յորժամ *սպաս* առնիցես, դի՛ր զսեղանն առաջի խաչին» (ՆՀԲ, 2, 736):

Անուշահոտ ծուխ արձակող նյութեր նշանակող բառեր.

Խունկ՝ պահլ. *xunk* կամ *xung* ձևից, որը կորած է, բայց պարսկերենում կա: ԳԲ-ում նշված է հետևյալ իմաստներով. 1. արևադարձային ծառերի կեղևից ստացվող անուշահոտ խեժ: 2. ընդհանուր առումն անուշահոտ խեժերի՝ *կնդրուկի*, *ստաշիի*, *հալվեի* և այլն: Խունկը եկեղեցիներում գործածվում է որպես անուշահոտություն, որով հարգանք է մատուցվում Աստծուն՝ ընդունելու մեր աղոթքը: «Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս *խունկ* առաջի քո, տէ՛ր» (Սղ 140:20):

³⁵ Բառը փոխառյալ է թուրքերենից՝ *parc*՝ ջուր խմելու հողե կամ մետաղե հատուկ կոթավոր աման, վրաց.՝ *փարջի* (տե՛ս **Հ. Աճառեան**, ՀԱԲ, հ. 4, էջ 490):

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 226:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 262:

Միռոն (միռոն, մեռոն)՝ անուշահոտ բուսական յուղ, օծման յուղ, որ եկեղեցում Սուրբ Հոգու շնորհների նշանն է: Բառը փոխառյալ է հունարենից՝ *μύρον՝ հեղուկ անուշահոտություն, հոտավետ յուղ*: Ծագում է նախալեզվյան *smer՝ քսել, օծել* արմատից, սրանից նաև վրաց. *միրոնի*: Ոմանք մեկնում են «**մեռանեղ**» արմատով: Հին Կտակարանում թարգմանված է *իւղ*, իսկ *միւռոն* բառը ավելի ուշ է երևում՝ «...Ձիետ հոտոյ *իւղոց* քոց ընթասցուք մեք» (Երգ Ա 3): Թրքախոս հայոց մեջ կա «**մեռոնսուզ**» բառը՝ *անմեռոն, մահմեղական* իմաստով՝ կազմված թուրքերեն *suz* բացասական մասնիկով³⁸: Մեր եկեղեցու մեջ ժողովրդական շատ արտահայտություններ կան այս բառով, քանի որ մեռոնը սուրբ է համարվել՝ *մեռոնահան անել, մեռոնը վկա, երեսին մեռոն չկա* և այլն: Մյուռոնը պահվում է *մյուռոնամանում*, որը նույնպես ծիսական առարկա է:

Որպես ծիսական զարդեր անվանող բառեր՝ առանձնացրել ենք հետևյալ եզրույթները.

Գաւազան՝ պահլավ. *gavazan՝* եզ քշելու երկար փայտ: Բազմիմաստ բառ է. 1. ծառի ոստ՝ իբրև մահակ: 2. մարդկանց ծեծելու ցուպ: 3. թագավորական կամ *հայրապետական* գավազան՝ իբրև իշխանության նշան: 4. ցուցակ թագավորների և հայրապետների հաջորդության: 5. ծիածանի գույների յուրաքանչյուր շերտը: 6. վարդապետական գավազան՝ օձազարդ, օձագլուխ՝ ըստ պաշտոնի եւ աստիճանի. «Արդ եթե ցանկայք աթոռոց եւ *գաւազանաց* իշխանութեան» (Իմն 6:22): Հայրապետական գավազանն ավելի ճոխ է պատրաստված. գավազանի գլուխն ունի չորս օձեր եւ մեջտեղում փոքրիկ խաչ:

Գավազանների կարգին է դասվում նաև *ասա*³⁹-ն, որը «պարզ երկար գավազան մըն է ուղիղ, ու զարդարուն գլխով, զոր կը գործածէ միայն պատրիարքը՝ մայրաքաղաքին մէջ եւ առաջնորդներն իրենց վիճակներուն մէջ՝ հանդիսաւոր ու պաշտօնական առիթներ-

³⁸ Տե՛ս նույն տեղում, հ. 3, էջ 327:

³⁹ Այս բառի ծագման մասին որևէ բառարանում նյութ չգտանք:

րու միայն: **Ասան** բարձր պահած տանում են նաեւ հայրապետական պատարագների ժամանակ թափօրի առջելից⁴⁰:

Խաչ՝ բնիկ հայերեն բառ է՝ նախալեզվյան **khet**՝ *փայտ* արմատից՝ առաջացած հայերենի **khaty** -ից ձայնդարձներով, իսկ առաջինը մնացել է միայն պարսկերենում⁴¹: Գ. Զահուկյանը բառը միացնում է հնդեվրոպական **(s)k (h) ai-d/t** խփել, հրել, բռնցքահարել բառերին՝ բերելով ձայնդարձների տարբեր տիպեր⁴²: ԳԲ-ն առանձնացնում է երեք իմաստ՝ 1. խաչաձև փայտ, որի վրա գամում էին մահապարտին մինչև մեռնելը: 2. չարչարանք, վիշտ(փոխաբ.): 3. կրոնական նշանակությամբ՝ հատկապես այն խաչը, որի վրա խաչեցին Քրիստոսին. «Եթե թագավոր է Իսրայելի, իջել այժմ **ի խաչելք**» (Մտ 27:42): Արդի հայերենի բառարաններում արձանագրված են նաև բառի հետևյալ իմաստները՝ 1. Խաչվերաց տօն: 2. քրիստոնեություն: 3. համաստեղություն (աստղաբ.): 4. եկեղեցի, ուխտատեղ: 5. խաչի ձևով գիծ, որ նշանակում է **ավելի, պլյուս**:

Ճաճանչ բառի բուն աղբյուրը նշված չէ⁴³: Բազմիմաստ բառ է՝ 1. ճառագայթների խուրձ: 2. շող, ցուլք: 3. փայլ: 4. ճաճանչոսկր (կազմախոս.): Որպես եկեղեցական տերմին՝ այս բառն ավելի ուշ է սկսել գործածվել: Ճաճանչը սուրբ սեղանի զարդ է՝ խաչ կամ այլ եկեղեցական սրբություն, որի վրա շինված են ոսկյա կամ արծաթյա ճաճանչներ: «Քանզի **Ճաճանչ** է Աստուծոյ զօրութեանն» (Իմս 7:25):

Պնակէ՝ փոխառյալ է հունարենից՝ **panagia**՝ որևէ սրբի կամ Քրիստոսի փոքրիկ զարդարուն պատկերը, որ եպիսկոպոսները ստանում էին կաթողիկոսներից և շղթայով կախում էին կրծքներին: Բառն ունի միայն կրոնական բովանդակություն: «Բնաւ **պնակ** բառին հետ յարաբերութիւն չունի, յունարէն Բանայիս= Աստուածածին ռուսերէն **բանակիա** հնչուած, եւ արեւելեան տարաշրջութեամբ

⁴⁰ Միքայել սարկաւազ Մարգարեան, Դասախոսություններ ծիսագիտության, Եր., 2014, էջ 16:

⁴¹ Տե՛ս **Հ. Աճառեան**, ՀԱԲ, հ. 2, էջ 334:

⁴² Տե՛ս **Գ. Զահուկյան**, ՀԼՊ, էջ 147:

⁴³ Հավանաբար կրկնավոր կազմություն է՝ փոխառյալ իրանական աղբյուրից (տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 487):

պանակիա գրուած, սղելով եղած է *պնակե*⁴⁴: Այսպիսով, ծիսական եզրույթների մէջ մեծ թիվ են կազմում փոխառությունները, որոնք արմատացել են հայերէնում: Մեր կողմից դիտարկված բառերի ու եզրույթների յուրահատկությունն այն է, որ նրանցից շատերն այսօր էլ դիտարկվում են իբրև ծիսական բառապաշարի ակտիվ միավորներ: Մեր առանձնացրած ծիսական թիվով 27 պարզ եզրույթներից 13-ը փոխառյալ են իրանական լեզուներից, 6-ը՝ հունարենից, 3-ը՝ ասորերենից, մեկը՝ լատիներենից, մեկը բնիկ հայերեն բառ է, իսկ երեքի ծագումն անհայտ է: Այսպիսով, հայերենի ծիսական առարկաներ նշանակող եզրույթների մէջ մեծ թիվ են կազմում պարսկական փոխառությունները, որոնցով կազմվել են բազմաթիվ բառեր և դարձվածքներ: Համեմատաբար քիչ են ասորերենից փոխառյալ եզրույթները, որոնք վերաբերում են քրիստոնեական քարոզչության շրջանին: Հայ ինքնուրույն գրականության մէջ հունական ծագում ունեցող շատ կրոնական բառեր վկայված չեն և չեն մտել հիմնական բառաֆոնդի մէջ: Դրանք նեղոլորտ բառեր են՝ հաճախ եզակի վկայությամբ⁴⁵:

⁴⁴ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, ԾԲ, էջ 177:

⁴⁵ Տե՛ս Ս. Պապիկյան, Հայ կրոնաեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը: Սեղմագիր, Եր., 2017, էջ 31:

ԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՑԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Ծիսական իմաստ արտահայտող բառերի քննությունը հետաքրքիր է ոչ միայն լեզվաբանական տեսակետից, այլև պատմական, ազգագրական և մշակութային առումներով: Աշխատանքի այս հատվածում մեր քննած ծիսական բոլոր եզրույթները կազմությամբ բաղադրյալ բառեր են՝ բարդ և ածանցավոր: Ծիսական բովանդակության բառերը հիմնականում բառակազմական տեսանկյունից արդյունավետ են. ունեն կապակցելիական մեծ հնարավորություններ: Ծիսական առարկաները եղել են մարդկային մշակույթի և հոգևոր կյանքի անբաժանելի մասը հազարամյակների ընթացքում: Դրանք ծառայում են ոչ միայն որպես ծիսական արարողությունների գործիքներ, այլև խորհրդանիշներ, որոնք կրում են խորը իմաստներ և կապում անհատներին իրենց համոզմունքներին ու ավանդույթներին: Շատերի համար ծիսական առարկաները ներկայացնում են անձնական կապեր հավատքի և ինքնության հետ: Նրանք ծառայում են իբրև հիշեցումներ մարդու արմատների և արժեքների մասին՝ կարիքի մեջ տրամադրելով մխիթարություն և առաջնորդություն: Դրանք կարող են փոխանցվել նաև սերնդեսերունդ՝ պահպանելով և ամրապնդելով ընտանեկան ավանդույթներն ու հավատալիքները:

Յուրաքանչյուր բնագավառի եզրահամակարգի կերտումը և գործածումը հայերենում դեռևս հինգերորդ դարից զարգացել են իբրև թարգմանական արվեստ, իսկ հայերեն գիտաբառերն ստեղծվել են արդեն եղած բառերի իմաստի մասնավորմամբ կամ բառակազմական տարբեր եղանակների գործածությամբ, երբ լեզուն իր ունեցած նյութով և բառակազմական եղանակներով կազմում է զանազան նոր բառեր: Հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի պատմությունը մեծապես կապված է քրիստոնեության հետ, որի մուտքը զարգացման լայն հնարավորություններ բացեց մեր լեզվի, տեսական մտքի և ընդհանրապես հոգևոր մշակույթի առջև: 301

թ. պետականորեն հաստատված քրիստոնեության շնորհիվ հարստացավ կրոնական բառերի իմաստային դաշտը: Բազում դարեր հայ ժողովուրդը չթուլացող ավյունով կերտում ու պահում էր իր հոգևոր մշակույթը, որն իր արտացոլումը գտավ նաև հայերենի բառային կազմի մեջ: Հայերենի տարբեր փուլերում ստեղծվեցին կրոնական բովանդակություն ունեցող բազմաթիվ բառեր ու բառակապակցություններ, որոնք հատկանշվում են իմաստային և գործառական, ստուգաբանական, բառակազմական առանձնահատկություններով:

Ըստ Հ. Աճառյանի՝ կրոնական բառերի վերաբերմամբ շատ աղքատ են նախահայերը. նրանց բոլոր աստվածները իրանական կամ ասորական ծագում ունեն, նույնիսկ «Աստուած» բառը փոյուզիական ծագում ունի: Պակասում են նույնպես կրոնական դասակարգ, ծեսեր ու արարողություններ նշանակող բառերը¹:

Անդրադառնալով հին հայերենի կրոնական բառապաշարին՝ Գ. Ջահուկյանը նույնպես նշում է, որ նախաքրիստոնեական հայ կրոնի հետ կապված շատ բառեր *հրանական* ծագում ունեն: Հայ հեթանոսական դիցարանը ձևավորվել է *հրանական* ազդեցությամբ և հելլենիստական շրջանում կրել հունական ազդեցությունը²: Սակայն նախահայերենի համեմատությամբ հայերենի բարբառները բավականին հարուստ են կրոնական իմաստային խմբին պատկանող բառաշերտով³:

Ծիսագիտությունը եկեղեցական արարողություններ կատարելու սահմանված կանոնների գիտությունն է, ծիսական առարկաները պաշտամունքի ներդաշնակության բաղկացուցիչ մասն են. դրանք եկեղեցական արարողության արտաքին կողմն են: Ըստ Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպլեանի՝ «Հայ եկեղեցւոյ ծեսը կարգադրուած է մեր սրբազան Հայրապետներուն կողմէ, Աւետարանի ոգի-

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940, էջ 123:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, ՀԼՊ, Եր., 1987, էջ 274:

³ Տե՛ս Հ. Մեսրոպյան, Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Եր., 2016, էջ 262:

ին համաձայն. Հայ Եկեղեցւոյ նախնական ծիսական ձեւը հետզհետէ զարգացած, ճոխացած, հարստացած է եւ գնահատուած է օտարներու կողմէ⁴: Եկեղեցական-հոգևոր կյանքին վերաբերող հարյուրավոր բառեր ու եզրույթներ արտահայտող իմաստային դաշտը խիստ ծավալուն է և բազմաճյուղ. այն կարելի է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից և ընդգրկման տարբեր տարողություններով, սակայն մենք սահմանափակվելու ենք միայն եկեղեցական բառապաշարում յուրահատուկ ենթադաշտ *հանդիսացող ծիսական* առարկաների, ծեսի իրականացմանն անհրաժեշտ իրերի հինհայերենյան անվանումների բառակազմական քննությամբ, դրանց կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների վերհանմամբ: Մեր ընտրանքում ծիսական բոլոր բաղադրյալ բառերի ընդգրկման հիմքը գրաբարի բառարանների կրոնական բառամթերքն է:

Ծիսական բազմաթիվ առարկաների նշանակությունների բացատրության համար ուղեցույց է եղել նաև Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի «Ծիսական բառարանը»⁵: Սույն հետազոտության համար նյութ են ծառայել բացատրական և մասնագիտական հայտնի այլ բառարաններ, կրոնագիտական, եկեղեցական եզրահամակարգին նվիրված ուսումնասիրություններ, մատենագրական տարբեր աղբյուրներ⁶:

⁴ **Ղևոնդ արքեպս. Չեպչեան**, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ 18:

⁵ **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Ծիսական բառարան(ՕԲ), Անթիլիաս-Լիբանան, 1979:

⁶ **Հ. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: **Հ. Բարսեղյան**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական- եզրաբանական բառարան, Եր., 1973: Համաբարբառ գրաբար Աստուածաշնչի, Եր., 2012 (ՀԳԱ): **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ), Եր., 1987: **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940: **Ղևոնդ արքեպս. Չեպչեան**, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986: **Հ. Մեսրոպյան**, Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոսկով, 2000: **Ս. Պապիկյան**, Հայերենի կրոնականեկեղեցական բա-

Նպատակահարմար ենք գտել ծիսական առարկաներ արտահայտող առանձին բառեր մեկնաբանել իմաստային տեսակետից, ինչը հիմք է դարձել մի կողմից՝ եկեղեցական այդ եզրույթների առանձնացման, մյուս կողմից նրանց՝ իբրև այդպիսին, և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա տեսանկյուններից հսկայական դերն արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և եզրույթային համակարգի համալրման հարցում:

Ներկայացնենք, թե բառակազմական և իմաստային ինչպիսի առանձնահատկություններ ունեն ծիսական առարկաների հինհայերենյան անվանումները: Ծիսական արմատական բառերն ըստ ծագման և իմաստային առանձնահատկությունների քննելիս՝ առանձնացրել ենք իմաստային հետևյալ խմբերը.

ա) կահկարասի և հարակից զանազան պարագաներ նշանակող բառեր՝ *աթոռ*⁸, *աշտանակ*⁹, *աւագան*, *կանթեղ*, *կերոն*, *մոմ*, *նշխար*, *շուշփայ*, *ջահ*, *սեղան* և այլն, բ) անոթներ, սպասքներ նշանակող բառեր՝ *բաժակ*, *գանձանակ*, *մաղզմալ*, *պնակ*, *սկիհ*, *սպաս* և այլն, գ) զարդեր, խաչեր նշանակող բառեր՝ *խաչ*, *պնակէ*, *գաւագան*, դ) անուշահոտություն արտահայտող բառեր՝ *խւղ*¹⁰, *խունկ*, *հալուէ*, *միւռոն*:

ռապաշարը և նրա պատմական զարգացումը, Եր., 2011: **Դավիթ Գյուրջինյան**, Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն, Ս. Էջմիածին, 2002:

⁷ Տե՛ս **Ս. Գարապետեան**, Ծիսական առարկաների հինհայերենեան անուանումները՝ որպէս հայերէնի բառային կազմի հարստացման աղբիւր, «Էջմիածին» 2023, Ե, էջ 133-145:

⁸ «...տվորական խօսքի մէջ աթոռ կանուանենք նոյն ինքն իշխանութիւնը, զոր օրինակ Գաթողիկոսական Աթոռ»: Իշխանական աթոռն ի հնումն աւելի պարզ ձեւ ունէր, բարձր նըստարան մըն էր, որ երկու կողմերը թելերը դնելու տեղեր ունէր, եւ ետեւ չունէր, եւ պարզ բազկաթոռ էր: Յետոյ սկսան գործածուիլ աթոռներ, որ թելերէ գատ ետեւին ալ բարձրացած կոթնելու տեղ ունէին եւ եղան *թիկնաթոռ*» (տե՛ս ՕԲ, էջ 73):

⁹ Մ. Օրմանյանը նշում է աշտանակի մի քանի տեսակներ՝ «*աշտանակ բազմաստեղնեան*՝ մէկ բունի վրայ 2, 3, 4 կամ աւելի թելեր ունեցող, *աշտանակ բեմի*, *աշտանակ գրակալի*» (տե՛ս ՕԲ, էջ 77-78):

¹⁰ Մ. Օրմանյանը նշում է, որ յուղերից գլխավորը սրբալույս մյուռոնն է, որ մեր եկեղեցու մէջ միակն է: Երբեմն մեր գրքերի մէջ հիշվում են *խւղ երախայից*՝ մկրտությունից առաջ երեխաներին օծելու, և *խւղ հիւանդաց*՝ ծանր հիվանդներին օծելու համար:

Ինչպես նշեցինք, ծիսական բովանդակության բառերը հիմնականում բառակազմական տեսանկյունից արդյունավետ են. օրինակ՝ «*խաչ*» բառով գրաբարում բաղադրվել են *խաչաձեւ, խաչամահ, խաչամասն, խաչանկար* և բազմաթիվ այլ բառեր, «*ջահ*» բառով՝ *ջահաբարձ, ջահաբորբոր, ջահագարդ, ջահագգեաց* և այլն: Ծիսական առարկաներ նշանակող բառերի մեջ կան նաև բառակազմորեն մեկուսի կամ «ամուլ»¹¹ բառեր, որոնք գրեթե չունեն բառակազմական արժեք, ինչպես՝ *գորփուրայ*¹², *շուշփայ*¹³, *կերոն, մաղզմայ*¹⁴ և այլն:

Այսպես, դիտարկենք բառաբարդմամբ կազմված ծիսական եզրույթները: Ինչպես գիտենք, լեզվում առկա բառապաշարային նյութի հիման վրա նոր բառեր կազմելու հնարավորություն են տալիս բարդությունները: Բառաբարդումը հայերենի բառակազմական համակարգի ձևավորման գործուն և արդյունավետ եղանակներից մեկն է: Ծիսական բարդ եզրույթների ստեղծման անհրաժեշտությունը երկու կամ ավելի հասկացությունները կամ գաղափարները մեկ բառով արտահայտելու համար է: Այս եզրույթների քննությունը մենք կատարել ենք ըստ բառերի բաղադրիչների քանակի և դրանց միավորման եղանակի, ձևաբանական կառուցվածքի, խոսքիմասային արտահայտության, եզրութային և ոչ եզրութային բովանդակության:

Մեր մեջ կա նաև *խղ ոտնկուայի*՝ պարզ կարագ, որով ոտնկվան կատարողը «լուացեալներուն վրայ խաչաձեւ նշան մը կ'ընէ լուալէն ետքը» (տե՛ս ԾԲ, էջ 126):

¹¹ Տե՛ս **Դ. Գյուրջինյան**, Հայերենի բառակազմորեն «ամուլ» բուսանունների մասին, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2000, էջ 105-109:

¹² Քառակուսի ձերմակ կտաւ, որ լատին եկեղեցու մեջ պատարագիչը փռում է սեղանի վրայ և նրա վրա էլ դնում է սկիհը և սրբագործեալ նշխարը՝ առանց մաղզմայի, լատ. corporalis. բուն, մարմնական (տե՛ս **Ս. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. 1, էջ 466):

¹³ Սկիհը մաքրելու կամ ծածկելու կտավ: Արձանագրված են բարբառային հետևյալ կազմությունները՝ *շուշփացու*՝ սկիհի համար շուշփա պատրաստելու մետաքսյա նուրբ կտոր, *շուշփայել*՝ մասունքը կամ Ավետարանը շուշփայի մեջ փաթաթել, *շուշփայական*՝ շուշփային հատուկ (տե՛ս **Ս. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. 3, էջ 536): Ասոր. suseppa «գլխի ծածկոց, ծածկոյթ, քող» (տե՛ս **Հ. Աճառեան**, էջ 537):

¹⁴ Փոքրիկ սկավառակ, որի վրա դնում են հաղորդության նշխարը և որով ծածկում են սկիհը: Սկիհն ու մաղզման արծաթից են շինում (տե՛ս **Ս. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. 3, էջ 244):

Ծիսական առարկաների անուն-եզրույթները և ծիսական բովանդակության բառերը նպատակահարմար ենք գտել բաժանել *հոդակապով և անհոդակապ* տեսակների, որոնցից քանակապես ակնհայտորեն գերակշռում է առաջինը՝ *աւանդատուն*¹⁵, *խաչափայտ*¹⁶, *խաչափայլ*, *մոմակալ*, *ջահապայծառ* և այլն:

Անհոդակապ բարդություններ են *աթոռընկալ*, *ամպհովանի*, *աւազանօրհնէք*, *բուրուառ*¹⁷, *գանձտետր*¹⁸, *թիկնաթոռ*, *իւղընձիւղ*, *խաչաշտանակ*, *խաչարմատ*, *խաչաւարտ*, *խաչգիւտ*, *խաչընդուս*, *խաչկրօն*, *խաչվերաց*, *խաչունակ*, *խաչփոխ*, *խաչօրհնէք*, *խնկեփեաց*, *խնկաման*, *խնկաղաց*, *ջահընկալ* և այլն:

Ըստ բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բառաբարդմամբ կազմված հայերեն եզրույթները ներկայացնում են խոսքիմասային գանազան հարաբերությամբ հյուսված հետևյալ կաղապարները.

ա) **Գոյական+գոյական՝** *աթոռաժառանգ*, *բաժակաման*//*բաժկաման*¹⁹, *գաւազանաձեւ*, *ժամագիրք*, *իւղագլուխ*, *իւղաթուր*, *խաչա-*

¹⁵ «Եկեղեցւոյ ձախակողմի պահարանն է, որ աւանդատուն ալ կը կոչուի, որովհետեւ հոն կը պահուին եկեղեցւոյ սպասներն ու զարդերը» (տե՛ս ՄԲ, էջ 83):

¹⁶ «Քրիստոսի վրան խաչուած բուն խաչին փայտէն մանր կտոր մը կամ փշուր մը, որ յատուկ զարդարուն ու ճաճանշատր անօթի մէջ գետեղուած է» (տե՛ս ՄԲ, էջ 132):

¹⁷ Հ. Աճառյանը *բուրվառ* բառի առաջին բաղադրիչ է դիտում *բոյր* փոխառյալ բառը, որ հին մատենագրությամբ ավանդված չէ, և այն բացատրում է «*խունկ ծխելու աման*» իմաստով, Ա. Մեյեն «բուրվառ» կազմությունը բացատրում է ժողովրդական ստուգաբանությամբ և կարծում է, որ բառն ամբողջությամբ իրանական փոխառություն է՝ *բուրուառ* ձևով. իրան-յան բառի բուն արմատն է *bheudh*, որ նշանակում է *արթուն մնալով հսկել* (տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 471): Ծիսական բառարանում Մ. Օրմանյանն ունի «բուրվառանոց» բառը, որը նշանակել է «ձախակողմի պահարանի դրան մօտ՝ պատին մէջ գործուած խորշ մը, ուր սովորութիւն էր դնել բուրվառը: Այս բուրման կրակարանները, երբ տեղ մը հաստատուն կը դրուին՝ սովորաբար *խնկանոց* կը կոչուին, եւ կը տարբերին բուն բուրվառէն՝ որ շարժման մէջ կը գործածուի» (տե՛ս ՄԲ, էջ 94):

¹⁸ Տետր, որում գրված են եկեղեցական գանձերը՝ երգերը (տե՛ս Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառարան. Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Եր., 2010, էջ 80):

¹⁹ «*Բաժակաման* = *բաժկաման* = *ժամանոց* ալ կը կոչուի Պատարագի խորհրդոյն մատուցած զինւոյն ամանը, որ յատուկ ձեւով ու վայելուչ շիշ մըն է, ապակեայ խցանով զոգուած» (տե՛ս Մ. Օրմանեան, ՄԲ, էջ 90):

գիւտ, խաչագլուխ, խաչադրօշ, խաչադրոշմ, խաչագգեստ, խաչաթել, խաչակառք, խաչակարգ, խաչակերպ, խաչակնիք, խաչաման, խաչանշան, խաչատեսակ, խաչատեսիլ, խաչատիպ, խաչափառ//խեչափառ, խունկեղեզն, խնկա-զգեստ, խնկահոտ, խորհրդատետր, մեղրամոմ, մոմաձել, մոմատեսակ, նշխարակուժ, նշխարատուն, ջահաբուն, ջահագգեստ, ջահափայլ, սեղանակտաւ, սկահաձել, սպասատուն, տօնացուցակ:

Բ) **Գոյական+ածական**՝ աթոռակից, իւղալի, խաչակից, խաչանման, խնկալի//խնկալիր, խնկախառն, խնկապատար (Տ. Խնկաւէտ), կնդրկախառն, ջահակից, ջահանման, սեղանագերծ:

Գ) **Գոյական+բայարմատ (կամ բայահիմք)**՝ աթոռակալ, աթոռապահ, աթոռասէր, աշտանակագարդ, աշտանակակիր, աւագանագարդ, աւագանածին, աւագանապաճոյճ, աւագանատունկ (մկրտութեամբ եղած), բազմակալ, գաւագանահար, գաւագանահերձ, գաւագանասաստ, գրակալ²⁰, ժամահար²¹, իւղաբեր, իւղաբուղիս, իւղագործ, իւղեփեաց, խաչաբարձ, խաչաբեր, խաչագարդ, խաչագգեաց, խաչալուայ (խաչ լուայր, ջուրը օրհնելը՝ մեջը), խաչակալ²², խաչակերտ, խաչակիր, խաչահան, խաչամած, խաչամահ, խաչայարդար, խաչանիշ, խաչաչարչար, խաչապահ, խաչապայծառ, խաչապաշտ, խաչապսակ, խաչատարած, խաչատեաց, խաչատուր, խնկաբեր, խնկագգեաց, խնկալից, խնկակալ, խնկամատոյց, խնկանուէր (իբրև խունկ նվիրված), կանթեղաբորբոք, կանթեղալոյց, կանթեղակիր, մեռոնակիր, մոմագօծ, մոմակերտ, մոմեղինակալ, պատարագամատոյց, ջահալից, ջահակալ, ջահակիր, ջահավառ, ջահատու, ջահընկալ, սեղանակագմ, սեղանակապուտ, սեղանայարդար, տապանակակիր, տօնացոյց: Մի քանի բառերում երկրորդ բաղադրիչ է դառ-

²⁰ «...բացուող-գոցուող ձեւով իրարու ագուցուած չորս բարձր ոտքեր, որ վերի կողմէն կաշիով միացած են, եւ այդ կաշիին վրայ կը հանգչեցուի գիրքը:... Կողմնակի բացուողը դասու ատենին կը գործածուի եւ վրան աւետարան կամ ճաշոց կը կարդացուի...» (տե՛ս ԾԲ, էջ 107):

²¹ Ժամ կանչելու կոչնակ, գանգակ (տե՛ս ԱԲ, էջ 32):

²² «Բագմոց, յորոյ վերայ դնի սուրբ նշան խաչի» (ՆՃԲ, հ. 1, էջ 923): «Խաչը կեցնելու տեղ...Այժմ խաչկալ ըսելով՝ կ'իմանանք սեղանին ճակատը բարձրացող փայտակերտը» (տե՛ս ԾԲ, էջ 133-134):

նում անցյալ կատարյալի հիմքը՝ հանդես գալով ենթակայական և հարակատար դերբայների նշանակությամբ՝ *խղեփեաց, խաչազգեաց, խաչատեաց, խնկազգեաց, խնկամատոյց, կանթեղալոյց, ջահալից*:

Դ) Ածական + գոյական՝ դեղնախուննկ:

Բերված օրինակներից երևում է, որ գրաբարի ծիսական բարդ եզրույթների մեջ տարածված և կենսունակ են *գոյական + գոյական* և *գոյական + բայ* կաղապարները:

Շարահյուսական տարբեր հարաբերություններ

Բարդ բառի բաղադրիչների միջև առկա են շարահյուսական տարբեր հարաբերություններ: Բարդության հիմնական իմաստակիր միավորը երկրորդ բաղադրիչն է, որի հետ լրացական հարաբերության մեջ է լինում առաջինը: Մեծաթիվ են այն բառերը, որոնցում առաջին բաղադրիչն ուղիղ խնդիր է՝ *աթոռասեր, խաչատեաց, խնկաբեր*: Բարդության բաղադրիչների միջև հանդիպում են նաև խնդրային այլ հարաբերություններ՝ *աւազանազարդ, խաչազարդ, խաչաչարչար, կանթեղաբորբոք*:

Գոյական+ածական կաղապարով կազմված բարդ բառերում ունենք ածականի խնդրառության յուրահատուկ երևույթ, երբ ածականով արտահայտված բաղադրիչն իր իմաստին համապատասխան ստանում է որևէ խնդիր՝ *խաչակից, խնկալի, խնկախառն, սեղանազերծ*: Որոշ բառերում առկա են ա) հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություններ՝ *խաչաթել, խաչանշան, նշխարատուն*, բ) որոշիչ-որոշյալի հարաբերություններ՝ *դեղնախուննկ*:

Բարդ եզրույթների եզրութաբանական կաղապարները մեր ընտրանքում երեք տիպի են՝ ա) *եզրույթ+եզրույթ՝ խաչակրօն// խաչկրօն, խաչաշտանակ, հալուախուննկ*, բ) *եզրույթ + ոչ եզրույթ՝ աշտանակակիր, խնկազարդ, կնդրկաբեր, մեռոնակիր, մոմազօծ* և այլն, գ) *ոչ եզրույթ + եզրույթ՝ դեղախուննկ, դեղնախուննկ, եղեգնախուննկ*²³: Քանակապես անառարկելիորեն գերազանցում է *եզրույթ + ոչ եզրույթ* կաղապարը:

²³ Տե՛ս **Ս. Ասլանյան**, Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Եր., 1982, էջ 296:

Գրաբարի ծիսական եզրաբանության համակարգում բավականաչափ գործածական են նաև ածանցները: Նախաձանցավոր են *անաթոռ* // *անաթոռք*²⁴ կաղապարները. վերջինը միաժամանակ նախաձանցով և վերջածանցով է կազմված:

Վերջածանցավոր կաղապարներ

Ածանցման միջոցով կազմված ծիսական առարկաներ նշանակող բառերում մեծ է վերջածանցների կիրառությունը, որը նույնպես հայերենի բառակերտման կարևոր առանձնահատկություններից է: Վերջածանցով կազմված ածանցյալ բառը կամ եզրույթը կարող է փոխել իր խոսքիմասային պատկանելությունը: Ըստ բաղադրիչների՝ եզրույթների և ոչ եզրույթների պատկանելության՝ ածանցավոր ծիսական եզրույթները կազմվում են ծիսական եզրույթներից և ընդհանուր գործածական բառերից: Ստորև բերում ենք վերջածանցներով կազմված մի շարք կաղապարներ.

-ակ՝ *կոչնակ*, -ակ-*տապանակ*,
-ական՝ *խաչական*, *շարական*²⁵,
-ային՝ *աթոռային*, *խնկային*,
-անոց՝ *ժամանոց*, *խնկանոց*, *սարկաւազանոց*²⁶,
-անք՝ *խնկանք*,
-/ա/պան՝ *խաչապան*,
-/ա/պէս՝ *խաչապէս*, *խնկապէս*,
-արան՝ *աւետարան*, *գանձարան*²⁷, *գոհարան*, *իւղարան*, *խնկարան*, *սաղմոսարան*, *տաղարան*,

²⁴ *Անաթոռ*//*անաթոռք*՝ ըստ քրիստոնեական հավատալիքի՝ նշանակում է քերովբեների՝ սերովբեների դասը:

²⁵ Երգարան, շարակնոց (տե՛ս ԱԲ, էջ 632): «Տէրունի տօներու, սրբոց յիշատակներու եւ պահոց օրերու ըստ պատշաճի եկեղեցոյ մէջ կարդացուելիք երգերն ալ շարական կը կոչուին, հետեւապէս թէ՛ գիրքը եւ թէ՛ պարունակութիւնը նոյն անունը կը կրեն» (տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 165):

²⁶ Այս բառն ունի հետևյալ երկու իմաստները՝ 1. Եկեղեցու այն բաժանմունքը, որտեղ հավաքվում են սարկավագները, 2. Եկեղեցու պահարան, ավանդատուն: Բնականաբար, մենք նկատի ունենք երկրորդ իմաստը (տե՛ս ԳԲ, հ. 2, էջ 448, ԱԲ, էջ 724):

-աւոր՝ զաւազանաւոր, խնկաւոր, կանթեղաւոր, ջահաւոր,
 -աւէտ՝ խնկաւէտ,
 -եալ՝ խնկեալ, -եայ՝ կնդրկեայ, մոմեայ,
 -ելի՝ խնկելի, -եղէն՝ մոմեղէն,
 -ենի՝ իւղենի,
 -իկ՝ իւղիկ, խնկիկ, սաղմոսիկ²⁸,
 -իչ՝ խաչիչ, խնկիչ,
 -ող՝ խաչող// խաչեցող, -
 ոց՝ բազմոց, քնոց,
 -ք՝ նշխարք,
 օրէն՝ սեղանայօրէն:

Կրկնակի վերջածանցներով բաղադրություններ

Հանդիպում են նաև կրկնակի վերջածանցներով բաղադրություններ, ինչպես՝ *իւղարարութիւն, իւղաւորական, խաչենեան, խնկաւորեալ, խնկաւորութիւն, ջահաւորական, ջահացոցիչ, ջահաւորութիւն, քնոցանի*:

Բայեր

Բայերը քննել ենք ածանցավոր կազմությունների մեջ՝ անկախ վերջավորությանը նախորդող մասի կազմությունից (*պարզ, բարդ, ածանցավոր*), քանի որ բայական բառայթը միշտ բաղադրյալ է՝ կազմված առնվազն երկու ձևությից²⁹: Մեր ընտրանքում բայական բառայթներ են ստեղծվում *-ել, -ալ, (ան) ալ* քերականական և բառաստեղծական մասնիկների միջոցով:

Հաճախ այս կամ այն հասկացությունը բայական նշանակությամբ արտահայտելու անհրաժեշտությունից ելնելով և լեզվի մեջ

²⁷ «Գանձարանը գիրք մըն է, որ կը պարունակէ գանազան տօներու համար յատուկ գանձեր: Իսկ գանձ կը կոչուին մեծ քարոզներ, որ հանդիսաւորապէս կ'երգուին առտուններն ու երեկոները մեսեդիներէն ետքը եւ «Գոհանամք զքէն» եւ «Լուր ձայնից» աղօթքներէն առաջ» (տե՛ս, ԾԲ, էջ 97):

²⁸ Սաղմոսների փոքր գիրք:

²⁹ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 299:

այլևս նոր արմատներ չառաջանալու պատճառով լեզուն դիմում է իր ներքին հնարավորություններին՝ բայեր կազմելով բայակերտ մասնիկների միջոցով³⁰։ Բայերի կերտումը այլ խոսքի մասերից տեղի է ունենում կա՛մ բայական վերջավորության միջոցով, կա՛մ *–անալ* բաղադրյալ բայակերտ ածանցով, որը գործառական տեսակետից որոշ սահմանափակություն ունի. դրանով կազմվում են միայն չեզոք սեռի բայեր³¹։ Բայական անվանումները ստեղծվում են բառերի բայացման միջոցով՝

*–ել՝ գաւազանել, իւղազլիւել, իւղարկել, իւղել, խաչակնքել, խաչակցել, խաչասփռել, խաչացուցանել*³², *խաչել, խնկարկել, խնկել, մեռոնել, մեռոնուոր/ւ/ել, մոմել/մոմնել, նշխարել, ջահել, ջահագարդել, ջահակալել, ջահակերպել, ջահավառել, ջահացուցանել// ջահեցուցանել, ջահափայլել, ջահաւորել, ջահընկալել,*

*–անալ՝ աթոռանալ*³³, *խաչանալ, ջահանալ, սեղանանալ*։

Բարդածանցավոր բառեր

Բարդ և ածանցավոր եզրույթներին սերտորեն առնչվում են նաև բարդածանցավոր բառերը³⁴։ Այս բաղադրությունները նույնպես խմբավորվում են ըստ եզրային ածանցի.

–ական՝ սեղանակապտական, իւղեփեցական,

*–ութիւն՝ աթոռակալութիւն, աթոռապահութիւն, աթոռասիրութիւն, աթոռակցութիւն, գաւազանահմայութիւն, իւղազլիւութիւն, իւղագործութիւն, իւղեփեցութիւն, խաչահանութիւն, խաչամարտութիւն, խաչանմանութիւն, խաչելութիւն*³⁵, *խնկարկութիւն, ջահագոր-*

³⁰ Տե՛ս **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 114։

³¹ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 300-301։

³² Պատճառական ածանցները՝ որպես գոտ ձևակազմական մասնիկներ, կաղապարներում չենք առանձնացնում, մանավանդ որ հաճախ դրանք կցվում են սոսկածանցներին։

³³ *Աթոռանալ՝ աթոռ բարձրանալ, զահակալել* (տե՛ս ԳԲ, հ. 1, էջ 17)։

³⁴ Մրանք այն վերջածանցավոր բառերն են, որոնց սերող հիմքը բարդ բառ է (տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 255)։

³⁵ Խաչը ելնելը, խաչուելը (ԳԲ, հ. 1, էջ 557։ ԱԲ, էջ 370։ ՆՀԲ, հ. 1, էջ 924)։

ծութիւն³⁶, ջահալուսութիւն//ջահալուցութիւն, ջահավառութիւն, ջահափայլութիւն, ջահընկալութիւն, սեղանակողոպտութիւն,

-եալ՝ իւղագործեալ, խաչադրօշեալ, խաչագգեստեալ, խաչակերպեալ, խաչանմանեալ, խաչելեալ, ջահագգեստեալ, ջահատրեալ, ջահափայլեալ,

-իկ՝ խաչագգեցիկ,

-ու՝ խաչահանու//խաչհանու, խնկարկու, խնկածու,

-աբար՝ խաչատեսակաբար, խաչարգաբար:

Ծիսական եզրույթ պարունակող բառերն ըստ ձևաբանական նշանակութեան լինում են՝

Ա) գոյականներ՝ խաչադրօշ, խաչակառք, խաչօրհնէք, մումէդինակալ, նշխարակուծ, նշխարատուն և այլն:

Բ) Ածականներ, որոնք կազմում են բառերի մեծ մասը՝ խաչանման, խնկալի, կնդրկաբեր, մումագօծ, մումակերտ, ջահատու և այլն:

Գ) Մակբայներ՝ խաչապէս, խնկապէս, խաչատեսակաբար, խաչարգաբար, սեղանայօրէն:

Դ) Բայեր՝ աւետարանագրել, իւղագլխել, ջահագարդել և այլն: Կան նաև անցյալ դերբայի ձևեր՝ խաչագգեստեալ, խաչակերպեալ, խաչանմանեալ, խաչելեալ, ջահագգեստեալ, ջահափայլեալ և այլն:

Շեշտափոխական հնչյունափոխություն

Բարդ, ածանցավոր և բարդածանցավոր եզրույթներում կատարվում է շեշտափոխական նույն հնչյունափոխությունը, ինչ ընդհանուր գործածության բառերում.

ա) ի>ը՝ աւետարանագրել, աւետարանագրութիւն, աթոռակցութիւն, գրակալ, խաչակցել, խաչանշան,

բ) ի>գրո՝ աւետարան(ի)չական, դեղնախունկ, խաչակնքել

գ) է>ի՝ աթոռասիրութիւն, մումէդինակալ,

դ) ու>ը՝ խնկանք, խնկանուէր, խնկապատար, խնկապէս, խնկաւոր, խնկաւորեալ, խնկաւորութիւն, խնկաւէտ, խնկարան,

³⁶ ԳԲ-ում բառի բացատրությունն է՝ «ջահեր վառել, ջահերով լուսավորել», ԱԲ-ում՝ «պայծառութիւն» (տե՛ս ԳԲ, հ. 2, էջ 426, ԱԲ, էջ 710):

խնկարկել, խնկարկու, խնկել, խնկելի, խնկեփեաց, խնկիկ, խնկիչ, ջահատրեալ,

ե) ու > զրո՝ *բազմակալ, կնդրկաբեր, կնդրկախառն, կնդրկեայ, իւղագլխել, իւղագլխութիւն, սեղանակոդոպտութիւն,*

զ) եա > ե՝ *իւղեփեցութիւն, խաչագգեցիկ,*

է) ոյ> ու՝ *խաչացուցանել, ջահալուսութիւն//ջահալուցութիւն, ջահացուցանել, ջահացուցիչ:*

Գրաբարում կան նաև բազմաթիվ դարձվածքներ և կայուն կապակցություններ, որոնց մեջ բաղադրիչներից մեկը ծիսական առարկայի անուն է՝ *խաչալուսայ առնել, խաչակից լինել, խաչանշան առնել, ի խաչ ելանել, ի խաչ հանել//հանել ի խաչ, խունկ արկանել և այլն:*

1.2 Ծիսական հանդերձանք

Ինչպես հայտնի է, կրոնը հասարակական գիտակցության ձև է, և կրոնական-եկեղեցական հավատալիքների փոփոխությունը սերտորեն կապված է հասարակության և նրա մշակույթի զարգացման հետ: Կրոնները որոշակիորեն կրում են դրանք դավանող ժողովուրդների պատմության յուրահատկության կնիքը³⁷: «Հայ եկեղեցւոյ աստուածային պաշտամունքը՝ իր այլազան մասերով՝ կը կազմէ ներդաշնակութիւն մը, որուն արտայայտութիւնը իր հոգեւոր նպատակին հասցնելու համար...հասկացողութիւն պէտք է, ջանք եւ խնամք պէտք է, վերջապէս պէտք է հոգեւոր եռանդ եւ բարեպաշտութիւն»³⁸:

Նպատակահարմար ենք գտել ծիսական հանդերձանք արտահայտող յուրաքանչյուր բառ մեկնաբանել իմաստային տեսակետից, ինչը հիմք է դարձել մի կողմից՝ եկեղեցական այդ եզրույթների առանձնացման, մյուս կողմից նրանց՝ իբրև այդպիսին, և՛ հա-

³⁷ Տե՛ս Մ. Պապիկյան, Հայ կրոնաեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Ե., 2017, էջ 3:

³⁸ Ղևոնդ արքեպս. Չեպէեան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ5:

մաժամանակյա, և՛ տարժամանակյա հայեցակետերով գնահատելու համար՝ դրանով իսկ արժևորելով գրաբարի կարևորագույն դերը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինային համակարգի ձևավորման ու համալրման հարցում:

Մեր ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք համեմատական-գուգադրական մեթոդը՝ գրաբարի և ժամանակակից հայերենի ծիսական հանդերձանք արտահայտող բառերի և դրանց կրած իմաստային փոփոխությունների համեմատության հիման վրա:

Աղաբողոն//աղեբողոն՝ գոյ.՝ հոգևորականի վերնագգեստ, փառաջա, փիլոն: Բաղկացած է երկու կտոր կերպասից՝ ուսի վրա ձգվող: Բառը փոխառյալ է հունարենից և ստուգաբանորեն նշանակում է վրան ձգված, նետված, կամ որ նույնն է՝ վերարկու: «Ճարտարախօսք եւ փիլիսոփայք, որ քան զաղաբողոնն այլ ինչ ոչ արկանէին զանձամբ (Ոսկեբերան: ՆՀԲ, 1, 31):

Արտախորակ՝ գոյ., ծագել է արտախոր բառից, որ ունի տարբեր իմաստներ՝ 1. Թագավորական թագ, 2. Անհայտ բույսի անուն, որ գործածվում է Գողթան երգերի մեջ: 3. «Լուսնթագ» կամ «Երևակ» մոլորակներից մեկի անունը: 4. Թագի վրայի ապարոշ, փաթաթան: 5. Ընդհանրապես գլխի ծածկույթ: Առձեռն բառարանը արձանագրում է նաև խորանի ծածկոց իմաստը³⁹: Ըստ Օրմանյանի՝ արտախորակը եպիսկոպոսական սրածայր խույրի ետևից կախված երկու ծայրերն են՝ խույրը գլխի վրա ամուր պահելու համար. ասեղնագործված են խույրի նման և առանց դրա գոյություն ունենալ չեն կարող⁴⁰: Բառը բարդված է արտ (դուրս, արտաքուստ) և խոր բաղադրիչներից: Այս բառին համապատասխանում է երբ. tiara՝ թագ, փաթթոց բառը: Հ. Աճառյանը նշում է, որ ումանք բառը մեկնում են որպես ոչ թե թագ, այլ մի տեսակ հագուստ՝ ներքնա-

Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ե., 2012: **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987 (ՀԼՊ):

³⁹ Տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի(ԱԲ), էջ 13:

⁴⁰ Տե՛ս **Մ. Օրմանեան**, ԾԲ, էջ 82:

վարտիք, ներքնագգեստ: Մակայն մեր նախնիները Սուրբ գիրքը թարգմանել են հունարենից, ուստի կապ չունի, թե եբրայական բառն ինչ է նշանակում, մանավանդ որ հները միշտ «թագ» են հասկացել⁴¹: « Եւ արար զվիժակս խորանին ի մորթոց խոյոց կարմիր ներկելոց. եւ զարտախուրակսն ի կապուտակէ ի վերոյ կողմանէ (Ելք 36:19):

Բազպան՝ գոյ., պահլ. փոխառություն է՝ bazupan, պարսկ.՝ bazuban, որոնցից ոչ մեկը գրականությամբ ավանդված չէ. եկեղեցական զգեստների մեջ՝ պատարագչի թննոցը, քահանայական զգեստի մաս, որ «քահանան կը կրէ երկու թելերուն վրա, դաստակէն մինչեւ արմունկը: Բազպանները շինուած են ամբողջ զգեստին կերպասէն կամ թէ յատուկ ասեղնագործուած են, եւ վրանին ունին մէլ-մէկ խաչ»⁴²: «Զայս ձեռնուրարս եւ բազպանս քահանայական համարել ի սպասաւորութիւն սպասաւորաց (Մաշտոց: ՆՀԲ, 1, 421): Արդի հայերէնում նշանակում է ընդհանրապէս զգեստի մաս, որ անց են կացնում դաստակին՝ շապկի թեզանիքի վրայից: Նաև ռազմական տերմին է՝ բազուկները պաշտպանող մետաղյա զրահ:

Գտակ՝ գոյ., թավշյա կամ ասվյա փոքրիկ սև գլխանոց, որ ցուրտ ժամանակ գործածում է եկեղեցու պաշտոնյան: «Որպէս թէ գտակ կարմիր դիցէ ի գլուխ կրօնաւորն» (ՆՀԲ, 1, 583): Ըստ Հ. Աճառյանի՝ մեր բառի հետ նույնն են վրաց. գադիա, քուդի բառերը: Մակայն սրանք չունեն հայերենի -ակ մասնիկը և ներկայացնում են բառի արմատական ձևը, ուստի թերևս մերգղակ-ը փոխառված լինի կովկասյան լեզուներից կամ բոլորը միասին՝ խաղիկերենից⁴³: Ըստ Գ. Զահուկյանի՝ բառը փոխառված է իրանական աղբյուրից՝ goudak՝ goud՝ ծածկել, որտեղից նաև վրաց.՝ գուտի⁴⁴: Կա նաև հայերեն գուտի բառը՝ գղակ⁴⁵: Ս.Մալխասյանցը արձանագրում է

⁴¹ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 339:

⁴² Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 88:

⁴³ Տե՛ս Հ. Աճառյան, հ. 1, էջ 529:

⁴⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 154:

⁴⁵ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 530:

բառի հետևյալ իմաստները. 1.Տղամարդու գլխարկ, փափախ: 2. Սյան գլխին ավելացրած փայտ, գլխափայտ (գավառական): 4. Ծաղկի բաժակը⁴⁶: Փոխաբերաբար ունի նաև նամուս՝ պատիվ իմաստը:

Գօտի՝ գոյ.՝ «...կամարաձեւ լայն ժապավեն մը՝ զարդարուն երեսով եւ ներքին ամուր նիւթով ետելի կողմէն կառնուի եւ զոյգ ճարմանդով առջեւէն իրար կագուցուի: Գօտին այժմ փորուրարին վրայէն կկապենք...»⁴⁷: «Եւ գօտի մաշկեղէն ածեալ ընդ մէջ իւր» (Դ Թագ 1:8): Թերևս բնիկ հնդեվրոպական բառ է: Ըստ Հ. Աճառյանի՝ բարդված է գաւ և տի բառերից. տի նշանակում է կապ, որ ծագել է նախալեզվյան –de՝ կապել արմատից⁴⁸, իսկ անձանոթ գաւ բառը պետք է նշանակեր մեջք, այսինքն՝ մեջկապ⁴⁹: Գօտի բառը արդի հայերենում բազմիմաստ բառ է և բազմաթիվ բնագավառների մեջ գործածվում է որպէս տերմին. 1. Մեջքի գոտի, մեջկապ, 2. Լեռնաշղթա: 3. Մոլորակների ուղեծրի շրջանակը (աստղագիտ.), 4. Տարածություն երկու միջօրեականների միջև (աշխարհագր.), 5. Գնդի մակերևույթի մի մասը (երկրաչափ.), 6. Երկրի տնտեսական որոշ հատկանիշներով բնորոշվող հատված (տնտեսագիտ.), 7. Պատի վրա որպէս զարդ ձգվող ելուստային շերտ(ճարտարապետ.), 8. Թոքերի ճնշումը չափող գործիք (բժշկական), 9. Ռետինե օղալից շրջանակ՝ չտուգվելու համար (սպորտային): 10. Պատերազմի ժամանակ ռազմական ընդհանուր տարածք (ռազմագիտ.):

Եմփոռոն (ոմոփոռոն)՝ եպիսկոպոսական զգեստների վրա դրված ուսանոց՝ խաչերով զարդարված երկար ու լայն ուրար՝ ծոպերով ու երիզներով: Սա բացառիկ զգեստ է ձեռնադրյալ եպիսկոպոսի համար և տրվում է ձեռնադրության ժամանակ. «Քահանայապետն ունի ի վերայ իւր զպատուական եմփոռոնն՝ ի փառս» (Լամբրոնացի: ՆՀԲ, 1, 658): Բառը փոխառյալ է հունարենից. նշա-

⁴⁶ Տե՛ս **Ս. Մախասեանց**, ԱԲԲ, 1, էջ 472:

⁴⁷ Տե՛ս **Ս. Օրմանեան**, ԾԲ, էջ 108

⁴⁸ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 608:

⁴⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 26:

նակում է ուսի վրա կրել: Այստեղից է նաև վրացերենի ամփոփոխումը: Գործածական է նաև լայնափոփոխ բառը⁵⁰:

Զգեստ՝ գոյ.: Որևէ հագուստ եկեղեցական արարողությունների պահանջով՝ յուրաքանչյուր պաշտոնին համապատասխան, օրինակ՝ դպրի զգեստը շապիկն է, սարկավագինը՝ ուրարը, քահանայինը՝ գոտին, շուրջառն ու սաղավարտը, եպիսկոպոսինը՝ եմփոփոխն ու խույրը, կաթողիկոսինը՝ կոնքեռը: Եկեղեցական զգեստներ են համարվում նաև վերարկուն, փիլոնն ու վեղարը: Բնիկ հայերեն բառ՝ *ves* արմատից. այս բառը հայերենի մեջ ունեցել է (s-ի անկումով)՝ գե, բայական վերջավորությամբ՝ գենուլ՝ ստ մասնիկով՝ գեստ, որ q նախդրով գորանալով՝ դարձել է զգեստ⁵¹: «Զմուռնու եւ ստաշին եւ կասիա ի զգեստէ քումմէ ի տաճարաց փղոսկրէից» (Սղ 44:9): Իսկ կիսազգեստը հագնում են բարձրաստիճան ժամարարներին սպասարկող սարկավագները կամ սարկավագություն անող վարդապետներն ու քահանաները, և սա պատիվ է երկուստեք: «Քահանայական զգեստին կեսը կը ցուցնէ՝ այսինքն՝ շապիկ, բազպան, փորուրար ու գօտի՝ առանց շուրջառնի ու վակասի, իսկ սաղաւարտը երբեմն կը դրուի եւ երբեմն ոչ: Հին աւանդութեանց մէջ կիսազգեստի յիշատակութիւն չկայ եւ նորամուտ ձեւ մը կը նկատուի իրաւամբ»⁵²:

Թագ՝ գոյ., իրանյան փոխառություն է: «Դու գիտես, Տէր, զկարիս իմ, զիգարշելի է ինձ թագս...» (Եսթ 14:16): «Անունը կը գործածուի իբրեւ համանշանակ եպիսկոպոսական խոյրին, որ երկճղի ու սրածայր ըլլալուն՝ ռամկական բառով չաթալթագ կկոչուի...Բուն թագի հետ բնաւ նմանութիւն չունի»⁵³: Արդի հայերենում ունի բազմաթիվ իմաստներ. 1. Թագավորների գլխի զարդարուն խորանաձև ծածկոց: 2. Բարձրագույն հոգևորականների գլխի զարդարուն ծածկոց, խույր: 3. Հանդիսավոր զգեստավորության ժամանակ քահանայի գլխի ծածկոց: 4. Պսակվողների պսակավոր գլխանոց: 5. Թա-

⁵⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 26:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 88:

⁵² Տե՛ս **Մ. Օրմանեան**, ՕԲ, էջ 144:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:

գավորական իշխանություն (փոխաբ.): 6. Թագավոր, արքա (փոխաբ.):

7. Լեռան գագաթ՝ կատար (փոխաբ.): 8. Ձվի կեղևի երկու թասակաձև մասերից յուրաքանչյուրը(փոխաբ.): 9. Արեգակի սկավանակը: 10. Փառք (փոխաբ.): 11.Ատամնապսակ (կազմախոսական):

Թաշկինակ՝ գոյ., քրտինք սրբելու շոր: Հոմանիշ է դաստառական, բռնիչին, որը հատկապես գործածվում է պատարագի ժամանակ ժամարարի ձախ կողքից կախված՝ որպես անձեռոցիկ: «Մինչեւ ի հիւանդս տանել ի քրտանէ նորա թաշկինակս» (Գրծ 19:12): Հ. Աճառյանը բառը չի ստուգաբանում:

Ըստ Գ. Զահուկյանի՝ այն կարող է փոխառված լինել իրանական աղբյուրից⁵⁴: Արդի գրական հայերենում բացատրվում է որպես 1. Քիթ սրբելու շոր: 2.Գլխաշոր: 3. Մարդ, որին որոշ նպատակներով օգտագործում են ժամանակավորապես, խաղալիք (փոխաբ):

Թիկնոց// թիկնանոց// թիկանոց՝ գոյ.: Նոր զգեստ է. «Հայ ծէսին մեջ դպիրներու շապիկին վերի մասը աւելի հարուստ եւ յաճախ ասեղնագործեալ ուսանոցներ ունի, որը կծածկէ ուսերն ու թիկունքին վերի մասը եւ կուրծքին վրայէն կիջնէ մինչեւ գոտին»⁵⁵: «Շրջեալ կայր թիկնոցն ի վերայ սրտի նորա» (ՆՀԲ, 1, 811): Գործածվում է հետևյալ իմաստներով. 1. Անթև կարճ վերարկու, 2. Թիկունքի վրա գցելու անթև զգեստ: 3. Արևմտահայերի մոտ՝ տղամարդկանց վրայի մահուղից զգեստ՝ երկար փեշերով՝ մինչև ծնկները, սերտուկ: Արդի հայերենում նաև կենդանաբանական տերմին է, որ նշանակում է որոշ անողնաշարավորների մարմինն ընդգրկող մաշկային ծալքերից յուրաքանչյուրը:

Խոյր՝ գոյ.՝ քահանայի գլխի ծածկոց, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների գլխի զարդարուն ծածկոց. «Եւ դիցես զխոյրն ի վերայ զլիտյ նորա. Եւ դիցես զթիթեղնն սուրբ ի վերայ խուրին» (Ելք 29: 6): Խոյր բառը պահլավական փոխառություն է՝

⁵⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 258:

⁵⁵ Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 123:

խոյր՝ խուրի, պահլ.՝ xod, xoi՝ սաղավարտ, թագ, փաթթոց, xauda՝ գլխարկ⁵⁶:

Կապայ՝ գոյ.՝ պարեգոտ, հոգևորականի երկար զգեստ, որ հագնում են վերարկուի տակ՝ շապիկի վրա. բառը փոխառյալ է արաբերենից և այստեղից տարածվել է բազմաթիվ լեզուների մեջ՝ qaba՝ պարեգոտ. «Ոչ ունելով նոցա(յունաց) սովորութիւն զգենուլ կապայ՝ ի մէնջ առեալ՝ ոչ ուղղախօսեն» (ՆՀԲ, 1, 1053): Ունի նաև այլ իմաստներ՝ 1. Ընդհանրապես կանանց երկար զգեստ, 2. Օձի շապիկ, 3. Գրքի վրա անցկացվող հաստ թուղթ՝ գիրքը մաքուր պահելու համար:

Կնգուղ՝ գոյ., կրոնավորի գլխարկ: Բառը փոխառվել է հունարենից, ապա տարածվել է այլ լեզուների մեջ, լատիներեն՝ cucullus՝ արեղայի գլխարկ: «Պարտ էր՝ զի եւ կնգղիդ մի լիցի կարօտ» (ՆՀԲ, 1, 1104): Արդի հայերենում բառն ունի նաև այլ իմաստներ՝ ինչպես՝ 1. Մկրտվող երեխայի վրա գցվող սավան կամ շոր: 2. Փեսայի կողմից հարսին տրվող ոսկեգարդ գլխարկ (գավառական): 3. Բամբակի բույսի խակ՝ չբացված պտուղը (բուսաբան.): 4. Գութանի էջի վրա գնդաձև փայտը, որից անց են կացնում ճամբարակի օղը, արմունկ, կոռան, պորտ, փամփալ (գավառական):

Կողոբլ՝ կոլոփ՝ գոյ.՝ անթև վերարկու, փիլոն, կրոնավորի կարճ զգեստ: «Յորժամ զպատարագն մատուցանէր, զգենոյր զկողոբս առաքելոյն...» (ՆՀԲ, 1, 1113): Փոխառյալ է հունարենից, գործածված է նաև կողովբիոնայ, կողոբիոնայ⁵⁷ ձևերով:

Կոնքեռ՝ գոյ.՝ «Լծորդ յունական կոնիքեռ եւ ենքիրիոն անունին: Կոնքեռը քառակուսի զարդ մըն է՝ ասեղնագործուած կամ ընտիր կերպասէ շինուած, որ երեք անկիւններէն փոքրիկ ծոպեր ունի եւ չորրորդ անկիւնէն երիզով կը կախուի գօտիէն՝ հայրապետին ձախ կողմէն եւ ձախ ազդրին վրայ⁵⁸»: «Եւ կոնքեռ զահեակ բարձօք.

⁵⁶ Տե՛ս **Գ. Զահուկյան**, ՀԼՊ, էջ 527: Մ. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 2, էջ 282:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 622:

⁵⁸ Տե՛ս **Մ. Օրմանեան**, ԾԲ, էջ 146:

որպես կաթողիկոս» (Մաշտոց: ՆՀԲ, 1, 1115): Փոխառյալ է հունարեն ծունկ և ձեռք բառերից⁵⁹:

Կրկնոց՝ գոյ.՝ կրկնյալ կամ երկրորդ զգեստ փարաջայի վրայից, փիլոն, աղաբողոն, թիկնոց. «Եւ ասէ ցնա. Ա՛յր ուղղորդելեալ յերկրէ, եւ արկեալ Չգիւրեւ կրկնոց» (Ա Թգ 28:14): Կազմված էին ածանցով՝ կրկին բառից, որն էլ երկ արմատից՝ -կին վերջածանցով՝ երկկին⁶⁰: Ս. Մալխասյանցը բառը բխեցնում է կրուկն (կրունկ) բառից՝ մեկնելով՝ «ոտքի վրա հետ դառնալով, դարձեալ»⁶¹:

Հանդերձ՝ գոյ., հոմանիշ է զգեստ բառին. վերջինս «զգեստներուն ամբողջութիւնն է կամ թէ հանդերձ է ներքին զգեստի վրայէն հագուած կտորը»⁶²: Այս բառի պարզ արմատն է դերձ. իրանական փոխառություն է. դերձակ բառը գալիս է պահլավերեն darzak ձևից, իսկ հանդերձ՝ handarz ձևից⁶³: «Եւ եհան ծառայն անօթս ոսկոյ եւ անօթս արծաթոյ եւ հանդերձս եւ ետ Ռեբեկայ եւ ետ ընծայս եղբարց նորա եւ մօրն» (ՄՆ 24:53): Բազմիմաստ բառ է. 1. հանդերձ, հագուստ, 2. ծածկոց, ծածկույթ, 3. Շորի կտոր, լաթ, ձորձ, 4. սարք, պատրաստություն:

Հողաթափ՝ գոյ.: «Հին ձևով կօշիկ մը, որ ոտքը հողէն կը պահպանէ, բայց զարշապարէն վեր չ'ելլէր. ընդհանրացած սովորութիւն է ներբանները հաստ շինել եւ մէջը ծառի կեղեւ կամ կաշի լեցնել՝ եկեղեցւոյ գետնին խոնաւութենէ չվնասուելու համար»: «Ած զգօտի քո եւ արկ զհողաթափս զոտս քո» (Գրծ 12:8): Բառն առաջացել է բնիկ հայ. «հող» բառի (նախալեզվյան polo՝ լայն, հարթ արմատից, հայերեն՝ հոլ՝ մերկ) և «թափ» բայարմատի միացումով:

Ղենջակ՝ գոյ.: Հունարեն ղենջակ բառն է, որ փոխառված է լատիներեն lintum բառից՝ վուշի կտոր, կտավ, իսկ linum

⁵⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 633:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 681:

⁶¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 633:

⁶² Տե՛ս **Մ. Օրմանեան**, ՄԲ, էջ 147:

⁶³ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 657: Գ. Զահուկյան, ՀԼՊ, էջ 530

նշանակում է վուշ: Ընդհանրապես բառը նշանակում է անձեռոցիկ: Եկեղեցու մեջ դենջակը ոտնավայի ժամանակ գործածում է հանդիսադիրը որպես զոզնոց. «...եւ դնէ զհանդերձսն եւ առեալ զդենջակ մի սփածաւ» (Յովի 13:4)⁶⁴: Արդի հայերենի բառարաններում արձանագրված է որպես հնացած բառ:

Նարոտ՝ գոյ: Նարոտը երիզաձև զարդ է, որ պսակի ժամանակ հարսն ու փեսան կապում են գլխներին. «այժմ պարզապես կարմիր ու ձերմակ մանածով շինուած բարակ առասանի ձեւով բան մըն է կապուածը, զոր իւրաքանչիւր քահանայ պատրաստ ունի իր մօտը»⁶⁵: Այս բառի ծագումն անհայտ է: ՆՀԲ-ում բառը համեմատվում է արաբերեն նիյր բառին՝ «գույնզգույն նկարել, գունագուն թել եւ հիւսք»⁶⁶: Պատահական նմանություն ունի վրացերեն նավրոտի՝ մի տեսակ ծառ⁶⁷: «...նարոտ պէսպէս նկարուց. այն էր պարանոցի նորա կապուտ» (Դտ 5:30):

Նափորտ՝ գոյ.՝ «Համանշանակ է «շուրջառ» անունին եւ անխտիր գործածուած իրարու տեղ. եկեղեցական զգեստէն դուրս ալ՝ մէջը փաթթուելու ընդարձակ զգեստի անուն է»⁶⁸: Հ. Աճառյանը նշում է, որ այս բառը փոխառյալ է հունարեն մի ձևից, որի ճիշտ համապատասխան բառը կորած է: Այն նշանակել է հաղորդություն, զոհ առ Աստված, բայց պիտի ունեցած լինի նաև վերարկու, ծածկոց իմաստը⁶⁹. «Ոչ ոք էր արկեալ զիւրեաւզնափորտն» (Փարպ., Պատմ. Հայոց, 34):

Շապիկ՝ գոյ., պահլ. փոխառություն՝ sapik նվիրական շապիկ գրադաշտականաց՝ դպիրների և սարկավագների բարակ վերարկու: «Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ եւ զշապիկս» (Ղուկ 6: 29): Արդի հայերենում ունի հետևյալ իմաստները՝ 1. Տղամարդու ներքնաշապիկ, նաև վերնաշապիկ: 2. Կանացի սպի-

⁶⁴ Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 161:

⁶⁵ Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 161:

⁶⁶ Տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 405:

⁶⁷ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 433:

⁶⁸ Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 161:

⁶⁹ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 437:

տակեղենի մաս: 3. Արտաքին ծածկույթ՝ տեսք՝ որևէ բանի (փոխաբ.): 4. Գրաշապիկ(տպագրական): 5. Թղթե պահպանակ՝ գրքի կամ տետրակի կազմը մաքուր պահելու համար: 6. Ատամնաշապիկ: 7. Սողունի մաշկ՝ մորթ:

Շուրջառ՝ գոյ., եկեղեցական զգեստ, որ հագնում են հոգևորականները մյուս զգեստների վրայից պատարագ մատուցելիս և հանդիսավոր արարողությունների ժամանակ. «Զգենու զշուրջառն...» (ՆՀԲ, 1, 492):

Պատմուճան՝ գոյ., պահլ. փոխառություն՝ patmoca՝ զգեստ, հանդերձ, զարդարանք⁷⁰: Բազմիմաստ բառ է. 1. երկար ու լայն վերնագգեստ, պարեգոտ: 2. Փառավոր զարդարուն զգեստ: 3. Ընդհանրապես զգեստ: Սովորաբար գործածվում է որպես համանշանակ շապիկի: «..եւ զգեցոյց նմապատմուճան բեհեզեայ, եւ արկ մանեակ ոսկի ի պարանոց նորա» (Ծն 41: 42):

Պարեգոտ՝ գոյ., թեթև վերնագգեստ, թիկնոց, հոգևորականի զգեստ՝ կապա, փարաջա: «Մի՛ զգենուցուք ասէ երկուս պարեգոտս» (Մարկ 6:9): Հ. Աճառյանը պարեգոտ-ը համարում է իրանական ծագում ունեցող, պահլ. paragaud հոմանիշից՝ թեթև վերնագգեստ, պատմուճան, կապա⁷¹: Այդ ստուգաբանությունը ընդունում է նաև Գ. Զահուկյանը՝ համեմատելով նաև հունարենի հետ՝ ծիրանաքղանցք զգեստ⁷²: Է. Աղայանը բառը համարում է բուն հայկական կազմություն՝ պարե-գոտ կամ պարի-ա-գոտ, և ենթադրում է, որ իրանական լեզուները փոխառել են հայերենից: Նա գոտ-ը նույնպես հայերեն բառ է համարում⁷³: Լ. Հովհաննիսյանը գրում է, որ Է. Աղայանի ստուգաբանությունը ավելի համոզիչ է⁷⁴: Արդի հայերենի բառարաններում այս բառը նշվում է որպես հնացած ձև:

⁷⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 4, էջ 46: **Գ. Զահուկյան**, ՀԼՊ, էջ 540:

⁷¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 59:

⁷² Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 541:

⁷³ **Է. Աղայան**, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 132-135, 48, 50:

⁷⁴ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայմատենագրության մեջ, Եր., 2016, էջ 43:

Սաղաւարտ՝ գոյ.՝ արքունի պաշտոնյաների և կրօնավորների խույր:

«Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր Հոգւոյն» (Եփ 6: 17): Սաղավարտը «յատուկ քահանայական զարդ է եւ օրհնութեամբ կը տրուի»⁷⁵: Այս բառը նաև ռազմական տերմին է՝ հատուկ ձևի մետաղյա գլխարկ՝ պաշտպանվելու համար:

Սքեմ՝ գոյ.՝ «հասարակ կենաց մէջ գործածելի եւ ծիսակատարութեանց յատուկ եկեղեցական զգեստներէն տարբեր: Սքեմին մասերն են պարեգօտ, վերարկու, վեղար, փակեղ ու փիլոն»⁷⁶: Այս բառը փոխառյալ է հունարենից՝ տարագ, ձեւ, որից էլ վրացերէն սքիմա՝ ձև, պատկեր, քահանայական զգեստ, ռուսերէն՝ *схема*⁷⁷: «Ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան» (ՆՀԲ, 2, 768):

Վակաս՝ գոյ.՝ ըստ եբրայեցիների՝ քահանայապետի կրծանոցը, իսկ ըստ մեր եկեղեցու՝ «եկեղեցական կամ քահանայական զգեստի մաս մը, որ իբր շուրջառի օձիք՝ ռուսերուն վրայ կը կանգնի... Բայց վակասը ոչ թէ շուրջառին, այլ սաղաւարտին մասն է, որուն ետեւէն մաս մը կիջնէր դէպի վիզը ծոծրակին վրայ, եւ որուն վերջաւորը աւելի զարդարուն էր»⁷⁸: Կարող է լինել փոխառյալ իրանական արմատից, վրացերէնում կա՝ վակասի: «Եւ արասցեն զվակասն յոսկւոյ սրբոյ եւ ի կապուտակէ» (Ելք 28:6):

Վեղար՝ գոյ.՝ հայ կրօնավորի գլխի ծածկույթ, սրածայր, սաղավարտաձև, սև քողով ծածկված: Փոխառյալ է հունարենից, սակայն բառն ավանդված չէ, կա նաև լատիներէն՝ *velarium*՝ քող, ծածկույթ⁷⁹:

«...սարքուլայով եւ երկու կանգուն վեղարով» (ՆՀԲ, 2, 800):

Ուրար՝ գոյ.: Երկար, ժապավենաձև կտոր կամ գոտի, որ սարկավազները եկեղեցում սպասավորելու ժամանակ կրում են ձախ

⁷⁵ Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 179:

⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 184:

⁷⁷ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 289:

⁷⁸ Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 185:

⁷⁹ Տե՛ս Մ. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 4, էջ 328:

ուսի վրա: Այս բառը համեմատվում է լատ. *orarium*՝ երես սրբելու թաշկինակ, և հունարեն *orarion* բառերի հետ: Հունարենից բառը փոխառված է ասորերենում՝ *urara*. «Խաչանիշ ուրարամբ ըստ Ահարոնի» (Ժամագիրք: ՆՀԲ, 2, 559): Կարծիք կա նաև, որ ուրար-ը փոխառված է հենց ասորերենից, քանի որ լատիներենից փոխառելու դեպքում պիտի ունենայինք որար կամ ովրար⁸⁰: Կան երկու տեսակ ուրարներ՝ քահանայական և սարկավագական: Քահանայական ուրարը կոչվում է նաև փորուրար⁸¹: Կա նաև բազկուրար՝ ուրարի ձև ունի, բայց փոքր է և ավելի լայն ծայրեր ունի. «Տացե նմա զբազկուրարն՝ դնելով ի ձախ բազուկն (Մաշտոց, Պտրգ., 476): Ձեռնուրար, որ նշանակում է ձեռքի ուրար կամ բազպան. «Ձայս ձեռնուրարս եւ բազպանս քահանայական համարել ի սպասաւորութիւն սպասաւորաց (Մաշտոց: ՆՀԲ, 2, 154):

Ուսանոց՝ շապիկի վերնի զարդարուն մասը, վակաս. «Ձգենոյր քահանայապետն եւ դնէր յուսանոցն զերկոտասան ակունս» (ՆՀԲ, 2, 555): Նշանակում է նաև ուսադիր:

Փակեղն՝ գոյ.՝ գլխի փաթաթան, փաթոց: «Քահանայք եւ երիցունք՝ փակեղն միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն...» (ՆՀԲ, 2, 925)⁸²: Փոխառյալ է հունարենից՝ կապոց, տրցակ, հետևաբար՝ գլխի չալմա: Արդի գրականում նշանակում է կրոնավորների գլխարկ, որի հայկական ձևը Պոլսի պատրիարքարանն է հորինել՝ ուսափակեղ⁸³: *Փակեղ* նշանակում է նաև կանանց գլխարկ: Բացի այդ՝ կազմախոսական տեսմին է՝ առանձին մկաններն ու նրանց փնջերը պատող միացուցիչ հյուսվածքային նուրբ թաղանթ: Փակեղ է կոչվել նաև դդմի մի տեսակը:

Փիլոն՝ գոյ.՝ շուրջառ, կրոնավորի անթև վերարկու: Մետաքսյա ծաղկավոր կերպասից փիլոնը շնորհվում է քահանաներին և աբե-

⁸⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 3, էջ 615:

⁸¹ Նորագյուտ բառ՝ փորի ուրար՝ քահանայի կամ եպիսկոպոսի զգեստավորման մաս, որ հագնվում է վզից և կրծքի վրայով իջնում մինչև ոտքերը (Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 3, էջ 615: Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 4, էջ 520):

⁸² Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 4, էջ 472:

⁸³ Տե՛ս նույն տեղում, էջ 472:

ղաներին իբրև պատվի նշան: Այս բառը փոխառյալ է հունարենից, վերջինից նաև լատիներեն *paenulo*, ռուսերեն *фелонь*, վրացերեն փելոնի: «Ոչ արձակ է զփիլոնն ըստ ամենայն պատճառի» (ՆՀԲ, 2, 942):

Վերևում դիտարկվածներն այն բառամիավորներն են, որոնք առաջնային նշանակությամբ ծիսական, կրոնական բնույթի են: Մեր կողմից ներկայացված ծիսական եզրույթները՝ հանդերձանքի անունները, հայերենի տերմինաբանական համակարգի մաս են կազմում, հետևաբար ունեն կարևոր նշանակություն հայերենի տերմինաբանության համար, և հիշյալ բնագավառի ուսումնասիրությունը նույնպես գիտական որոշակի արժեք է ներկայացնում: Ծիսական հագուստներին վերաբերող մեր դիտարկած բառամիավորները մեծ մասամբ փոխառյալ են պարսկերենից և հունարենից: Ինչպես հայտնի է, հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից. կրոնակեղեցական փոխառությունները հիմնականում միջին պարսկերենից են:

ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԵՐԿԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Ոսկեդարի հոգևոր հայր, Ամենայն Հայոց կաթողիկոս, ականավոր եկեղեցական գործիչ, վարդապետ Հովհան Մանդակունին ոչ միայն ազդեցիկ դավանաբան-փիլիսոփա էր, այլև լեզվաշինարար: Նրա հեղինակած մատենագիտական ժառանգության մեջ ամրագրված են բազմաթիվ դավանաբանական, կրոնական եզրույթներ, որոնք ցայսօր համագործածական են արդի հայ հոգևոր գրականության մեջ, ուստի չափազանց կարևոր է դիտարկել Հովհան Մանդակունու «**Կանոնագիրք Հայոց**» երկը՝ որպես հայոց դավանաբանական եզրաբանության հարստացման աղբյուր: Այստեղ վկայված են եկեղեցաբանության, հոգևորականների վարքագծի, պաշտամունքային ծիսակարգերի, հայ ավատատիրական հասարակության համակեցության ձևերի, հասարակության անդամների փոխհարաբերությունների, ամուսնության, ընտանիքի, ժառանգության և այլ հարաբերությունների կարգավորման նորմերին վերաբերող բազմաթիվ եզրաբառեր: Հայտնի են Հովհան Մանդակունու անունով ավանդված ինը կանոնները՝ բաժանված առանձին հոդվածների: Ունենք նաև առանձին հրատարակված, բավական ընդարձակ տասներորդ կանոնը, որը նույնպես վերագրվում է Մանդակունուն. այս կանոնը վերաբերում է անուսների և անարժանների ձեռնադրության արգելքներին¹: Կանոնները ձևավորվում և ընդունվում էին եկեղեցական ժողովների ընթացքում: Մանդակունու ինը կանոնների համաձայն՝ շաբաթն ու կիրակին հռչակվում էին պահքից ազատ օրեր, գինին, ձեթն ու ձուկը դասվում էին թույլատրելի ուտելիքների շարքին, մարտիրոսների տոները չորեքշաբթի և ուրբաթ օրերին նշելը համարվում էր մեղք, Քրիստոսի Հայտնությունն ու Ծնունդը նշվում էին միասին և այլն: Մանդակունին այս ինը կանոններում համակարգում է այդ շրջանում քրիստոնեական եկեղեցու

¹ Կանոնագիրք Հայոց, Ա հատոր, Եր., 1964 թ., էջ 641:

արարողակարգերում տարածված կարևորագույն արգելքներն ու սահմանափակումները:

«Կանոնագիրք հայոց»-ում տեղ գտած այս կանոնների հիմքը Մատենադարանում պահվող N 659 և N 948 ձեռագրերն են: Վերջին ձեռագրում՝ տարբեր վերնագրերով պահպանվել են Հովհան Մանդակունու կանոնախմբի երկու ընդարձակ հատվածներ, որոնք բաժանված չեն առանձին հոդվածերի: Թեև կանոնները մեծաթիվ չեն, բովանդակությամբ՝ սեղմ, հակիրճ, սակայն այստեղ ունենք հարուստ լեզվական նյութ: Անդրադառնալով կանոնախմբում տեղ գտած եզրույթային արժեք ունեցող՝ նշենք, որ այդ միավորները մեծ մասամբ պատկանում են կրոնական, եկեղեցական ոլորտին: Առանձին քննության նյութ ենք դարձրել երեք տասնյակ եզրաբառեր, որոնց կանդրադառնանք ստորև՝ դրանք քննելով ըստ Հայր Մկրտիչ Ավգերյանի «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» (Վենետիկ, 1846) և Հայր Մկրտիչ Ավգերյանի, Հայր Գաբրիել Ավետիքյանի, Հայր Խաչատուր Սուրմելյանի աշխատասիրությամբ կազմված «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի» (Վենետիկ, 1836-1837) բառարանների:

Նախ անդրադառնանք հենց **կանոն** բառին, որը բառարաններում բացատրվում է *«կարգ, օրենք, օրինակ, կրոնական պատիժ, կրոնական կամ եկեղեցական օրենք»*: Ըստ Հր. Աճառյանի, այն ծագել է հունարեն **κανόνας** բառից, որը նշանակում է «եղեգի ցողուն», և հետզհետե նույն նախնական իմաստից բխելով ստացել նաև «ձև, օրենք (առավելապես՝ եկեղեցական), կանոն, ցուցակ» իմաստները²: Հաջորդ հիմնաբառն է **քարոզել** բայը: «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում այս բառը բացի մեզ հայտնի իմաստներից ունի նաև «հրատարակել» իմաստը: Իսկ ՆՇԲ-ում բառն ունի նաև «քարոզ լինել պատգամաց թագաւորի»: Բառի արմատը՝ **քարոզ**-ը, ըստ Հր. Աճառյանի, ասորերեն փոխառություն է՝ առաջացած **karoza** բառից, որ նշանակել է «հրաւիրակ, քարոզ», իսկ **keraz** բառից՝ «քա-

² Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, էջ 515:

րոզել, հրապարակաւ ծանուցել»³: ՆՀԲ-ում «քարոզ» բառն ունի «պատժիչ, պատգամաց և հրամանաց՝ թագաւորի, զօրավարի, քաղաքապետի», Առձեռն բառարանում՝ «ծանուցում», ինչպես նաև՝ «ճառ, խրատ» իմաստները: **Ապաշխարել** բառը բառարաններում բացատրվում է «մեղքը լալ, գղջալ ի վերայ գործեալ սխալանաց»: Ըստ Գ. Զահուկյանի՝ բառը փոխառված է իրանական աղբյուրներից⁴: **Ճանաչել** բառը կարող է նշանակել նաև «ծանուցել»: Բայի բնիկ հնդեվրոպական, ինքնուրույն գործածություն գրեթե չունեցող «ծան»՝ ***g'en-** արմատը նշանակել է «ճանաչել, իմանալ»⁵: **Հրաման** բառը, որ իրանական փոխառությունը է, նշանակում է՝ «պատվեր, վճիռ»⁶: Այս բառը բազմագործածական է. եզրույթային արժեք ունի տարբեր իմաստային դաշտերում, թե՛ զուտ կրոնական, թե՛ հասարակական-իրավական: Անդրադառնանք **աւրինադրել** բային, որը Առձեռն բառարանում հանդես է գալիս «օրէնք դնել, կարգ, կանոն սահմանել» իմաստներով: Կանոններում բազմիցս վկայված է նաև «**աւրէնք**» հիմնաբառը, որ հիշյալ բառարանում նշանակում է «կարգ, կանոն՝ աստվածային կամ մարդկային, իրաւունք»: Ինչպես տեսնում ենք, օրէնքի իմաստային դաշտերը շատ հաճախ հատվում էին կրոնի իմաստային դաշտերի հետ, կամ դրանց իմաստներում պարտադիր երևան է գալիս կրոնական, դավանաբանական բովանդակություն: Միջնադարում ակնհայտ դրսևորվում է կրոնի և իրավունքի հաստատությունների միասնականությունը: Ի սկզբանե «աւրէնք» ասելով՝ հենց առաջին հերթին նկատի ունեին Աստծո խոսքն ու պատգամը, որոնց չկատարումն էլ հանգեցնում էր համապատասխան պատժի: Մեղսագործությունը հիմնականում նշանակում էր եկեղեցական այս կամ այն կանոնի խախտում: «Աւրէն» արմատը փոխառված է միջին պարսկերենից՝ **awdēn**⁷: Երկում «աւրէնք»

³ **Հր. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, էջ 563:

⁴ **Գ. Զահուկյան**, Հայերէն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 67:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 359:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 470:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 104:

և «հրաման» բառերը հանդես են գալիս «*աւրինադրել հրաման*» դարձվածային հարադրության մեջ, որ նշանակում է «վճիռ սահմանել»: **Կնքել** բառի դեպքում մեզ հայտնի «դրոշմել, մկրտել» նշանակությունից գատ Առձեռն բառարանում հանդես է գալիս նաև «վճռել, հաստատել» իմաստներով: Նշենք, որ **«կնիք»** արմատը ակկադական ծագման հնագույն փոխառություն է⁸: Բնիկ հնդեվրոպական ***oneid-s- *(o)neid** «նախատել, հանդիմանել» արմատից է ծագած⁹ **անեծք** բառը, որը սաստկագույն պատիժներից էր, բովանդակությունը նշանակում է «չարաբանություն առ ի վնաս և ի պատիժ»: **Կարգել** բառի դեպքում Գ. Ջահուկյանը փաստում է, որ ծագումը դեռևս անհայտ է, այն տարբեր կիրառություններում կարող է նշանակել «սահմանել, օրինադրել, որոշել»: Մանդակունու կանոններում գտնում ենք «նգովս կարգեցին և կնքեցին» արտահայտությունը, որն իր կազմի միավորների բառային իմաստներից էլնելով՝ պետք է նշանակի «անեծքներ որոշել և սահմանել պատիժ»: Կանոններում գտնում ենք նաև **կարգաւորել**՝ «ի կարգի դնել» բայը, **անկարգութիւն** ածանցավոր կազմությունը՝ «խառնակութիւն» բովանդակությամբ, այսինքն՝ կարգի բացակայություն կամ խախտում: **Վկայել** բայը Առձեռն բառարանում բացատրվում է որպես «վկայ ըլլալ», իսկ ՆՃԲ-ում՝ բերված է նաև «վկայութիւն տալ, հաստատել զճշմարտութիւն» նրբիմաստը: Գ. Ջահուկյանը այս բառի «վկայ» արմատը համարում է իրանական աղբյուրից փոխառություն¹⁰: Կանոններում հանդիպում է նաև **վկայութիւն** բառը, որ նշանակում է «ուխտ և խոստումն Աստուծոյ, օրէնքը՝ իրաւունքը»: **Քննել** բառը, որի «քնին» արմատի ծագումն անհայտ է, նշանակում է «գննել, խուզարկել, դատել, իրերի հանգամանքներն ու պատճառները կրկտնել»:

Մանդակունու կանոններում վկայված է նաև ուշագրավ **զեղխիլ** բայը: Առձեռն բառարանում բայի համար տրված են «չափն ան-

⁸ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 412:

⁹ Տե՛ս նույն տեղում. էջ 56:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 712:

ցնելով սխալի», իսկ ՆՀԲ-ում՝ «յանցանել, սխալել» իմաստները: Բայի «գեղիս» արմատը, որ նշանակում է «անատակ, ցոփ», ըստ Գ. Ջահուկյանի, կարող է *q-hēḡiḥ* կազմությամբ կապ ունենալ հնդեվրոպական ***pel-** «թափահարել, դողալ» արմատի հետ¹¹, այսինքն՝ բնիկ կազմություն է:

Կամք բառն ունի «բանական հոժարություն, անձնիշխան և ազատ ընտրության կարողություն» իմաստները: Իրանական փոխառություն է: Իրավունքի բառապաշարի միջուկային և բազմակի գործածություն ունեցող բառերից մեկը՝ **մեղք**-ը ևս վկայված է Մանդակունու կանոններում: Բառարաններում այն բացատրվում է «յանցանք, անիրաւութիւն, ապիրատութիւն» իմաստներով: Բառը բնիկ է, ծագել է հնդեվրոպական ***mel-** «սխալվել, խաբել» նշանակությամբ արմատից: Կանոններում առկա է նաև **անմեղ** ածանցավոր կազմությունը, որ նշանակում է «առանց մեղքերի, արդար»: **Աւագակ** բառը Առձեռն բառարանում բացատրվում է որպես «յայտնի գող, թալլող, մարդ զարնող ճամբու վրայ»: Իրանական փոխառություն է: Իրավունքի իմաստային դաշտի միջուկային **պատիժ** բառը ևս իրանական փոխառություն է: Նշանակում է «փոխարեն հատուցում կամ տուգանք յանցանաց, տանջանք»: Ունի հստակ արտահայտված և՛ կրոնական, և՛ իրավական բովանդակություն. արդի շրջանի պետաիրավական լեզվում իր ունեցած եզրույթային գործառնությունը շատ ավելի նշանակալի է, թեև որպես կրոնական բառ շարունակում է գործուն կիրառվել. Աստծո հրամանները հոգևոր դաշտում գերակա են, դրանց համար պատիժները՝ սպասելի, իսկ աշխարհիկ ոլորտում կյանքը կարգավորվում է օրենսդիր մահկանացուների դատական հրամաններով:

Բազմագործառական է նաև **դիւսահար** յուրօրինակ եզրաբառը, որն իր կազմությամբ խառնանդամ է (բառը կազմող բաղադրիչները տարբեր ծագում ունեն)՝ «դեւ» արմատը իրանական փոխառություն է, իսկ «հար»-ը՝ բնիկ հնդեվրոպական: Բառարաններում եզրույթը վկայված է «այսակիր, դիւալլուկ, սատանայ ունեցող» իմաստներով,

¹¹ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 236:

արդի շրջանում ունի հատկապես փոխաբերական իմաստ և համարժեք է խելագարվելուն, հոգեկան շեղումներին հակված մարդկանց տրվող անվանումներին՝ *ցնորված, խենթ, հոգեգար* և այլն:

Հովհան Մանդակունու ինը կանոնների բնագրում կան նաև դարձվածային արժեք ունեցող հարադրություններ, որոնցից անդրադառնանք եզրույթ դարձած միավորներին՝ *ծունր դնել*՝ ծնրադրել, ծնկի գալ: Բնագրում առկա է նաև *ծունր կրկնել* ԴՄ-ն, որը նույնն է, ինչ նախորդը՝ «...*ծունր կրկնել ոչ հրամայեցին, այլ յաշալթս կալ*»¹²: Ինչպես բերված օրինակից երևում է՝ ծնրադրելը բացի պաշտամունքային գործառույթից ունեցել է պատժամիջոցի հստակ իմաստ: *Ի կենաց արկանել*, այն նշանակում է կյանքից զրկել, սպանել: *Անէծս ի վերայ դնել*՝ որպես պատիժ կիրառել անեծքը, այսինքն՝ անիծել՝ կատարած մեղքին համարժեք: Նշենք, որ անեծքը կրոնական պատիժների աստիճանակարգության մեջ ծայրագույն դիրք ունի. ամենախիստն է: Արդի արևելահայերենում այս դարձվածքները ևս կիրառական են՝ բառակազմական որոշ փոփոխություններով՝ *ծնկի գալ/ծնկի իջնել, կյանքից զրկել, անեծքի տակ դնել*:

¹² Կանոնագիրք Հայոց, Ա հատոր, էջ 493:

ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրաբարի եզրույթային համակարգում առանձնակի տեղ են զբաղեցնում ռազմաքաղաքական և իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթները:

V դարի ինքնություն գրականության բաղադրիչ կազմող պատմագրության գլխավոր նպատակաուղղվածությունը եղել է արքաների վարած արտաքին և ներքին քաղաքականության, հոգևոր և մշակութային կյանքի մանրակրկիտ նկարագրությունը և արժևորումը¹: Դրանով է բացատրվում ոչ միայն կրոնական բովանդակության բառերի և եզրույթների, այլև ռազմական եզրույթների հաճախադեպ գործածությունը V դարի պատմագրության մեջ: Իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթներն ավելի սահմանափակ են, ինչը նույնպես բացատրվում է պատմական երկերի բովանդակությամբ: Պատմագիրները ամենայն մանրամասնությամբ նկարագրում են հայոց արքաների վարած պատերազմները, հաղթանակներն ու պարտությունները: Պատերազմի յուրաքանչյուր դրվագ գեղարվեստական հրաշալի պատկեր է՝ ակադձուն ռճավորման տարբեր միջոցներով: Պատմագիրն այս դեպքում գործածում է գրաբարի բառապաշարը՝ բառերի ուղիղ և փոխաբերական իմաստների հմուտ ընտրությամբ՝ հետապնդելով պատերազմական տվյալ դրվագի տպավորիչ և ներազդու դարձնելու նպատակը: Անշուշտ, այդ դրվագներում առկա են պատմագրի վերաբերմունքը և արժևորումը:

Այս ուսումնասիրության բնագրային հենքը Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» և Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկերում վկայված ռազմական և իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթները, որոնց քննությունը արդիական է և կարևոր, քանզի գրաբարի եզրույթային համակարգի

¹ Տե՛ս Ա. Աբաջյան, Ա. Յուզբաշյան, Կրոնական բովանդակության բառերն ու եզրույթները Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկում, Էջմիածին, Է, 2022, էջ 50-65:

յուրաքանչյուր շերտ և ենթաշերտ կարևորվում է գրաբարի եզրույթների քննության ամբողջացման դիտակետում: Այն էական նյութ է ընձեռում գրաբարի բառապաշարի և եզրույթային համակարգի **համաժամանակյա** ուսումնասիրության համար, ինչը և հիմք կդառնա հայերենի **պատմական եզրույթաբանության** համար, քանի որ արդի արևելահայերենի ռազմաքաղաքական և իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթների գերակշռող մեծամասնությունը գալիս է գրաբարից:

Կատարելով նյութի համաժամանակյա քննություն՝ հանգամանորեն ներկայացնում ենք յուրաքանչյուր եզրույթի իմաստաստագրական նկարագիրը գրաբարում: Ըստ կարևորի՝ անդրադառնում ենք ձևաբանական և շարահյուսական մակարդակներում նրանց դրսևորումներին՝ տարարժեքությանը, որոշ եզրույթների իմաստային վերլուծությանը արդի արևելահայերենում²:

Ռազմաքաղաքական եզրույթները իմաստային հետևյալ ենթաշերտերն են ներկայացնում. 1) **բանակի կառուցվածք** (բանակ, գումարտակ, գունդ, վաշտ ևն), 2) **զենք, զինամթերքի անվանումներ**, 3) **ռազմական պաշտոնների և պաշտոնյաների անվանումներ**, 4) **ռազմական գործին առնչվող տարբեր բառ-եզրույթներ և եզրույթներ**, օրինակ՝ մարտնչել, համագունդ, **հակառակորդ**, որ հոմանիշ է թշնամի, ախոյեան եզրույթներին. այս դեպքում ունենք բառ (ընդհանրական իմաստի), որ ռազմական եզրույթ է դառնում իր բազմաթիվ իմաստներից մեկ կամ երկուսի շրջանակում, իսկ **ախոյեան**-ը՝ ռազմական եզրույթ է: Այս իրողությունը անցել է նաև արդի արևելահայերենին: Եզրույթները արժևորելիս հիմք ենք ընդունել Է. Աղայանի այն մոտեցումը, որ բառերը եզրույթային արժևորման շրջանակում պիտի բաժանել 3 խմբի՝ 1) ընդհանրական իմաստի բառեր, որ եզրույթ լինել չեն կարող, 2) ընդհանրական իմաստի բառեր, որ

² Քննությունը կատարելիս հիմք ենք ընդունել Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի» (հ.հ. Ա, Բ, Ե, 2000), Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանի» (Ե., 2003) մեկնաբանությունները: Այսուհետև ԳԲԱ, ԳԲԲ, ԼԲԳԲԲ:

բազմիմաստ բառեր են և որոշ իմաստների շրջանակում՝ նաև եզրույթ և 3) բառեր, որոնք միայն եզրույթներ են³:

Անդրադառնանք **ռազմաքաղաքական** եզրույթներից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Բանակի կառուցվածք. * **բանակ** – բնիկ բառ է, որի համար ԳԲՄ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) մարդկանց բազմություն, որ համախմբված է ճանապարհ գնալու, ուղևորների քարավան, 2) **գորքի գունդ պատերազմի** դաշտում⁴, 3) այն տեղը, որտեղ գորքը դադար է առնում, **գորքի կայուն ճամբար**: Այն ունի նաև եկեղեցական իմաստ (տե՛ս ԳԲՄ, էջ 256, բանակ²): Բնագրային օրինակ. «...խաղացուցին ՚ի մի վայր ժողովեցին, ՚ի ժամադիր կողմանս յարարատեան գաւառին **բանակ** մեծ լինեն» (Բուգ, 28)⁵: **Բանակ** բաղադրիչով ունենք **բանակ բոլորել** դարձվածքը՝ բանակ դնել իմաստով (ԳԲՄ, 256): Ռ. Ղազարյանը բնագրային օրինակը վկայում է Եղիշեից. **բանակ** արմատից է բաղադրված **բանակել** բայը: Բնագրային օրինակ. «...զի **բանակեալ էին** նոքա ՚ի լերինն, որ կոչի Տլու գլուխ...» (Բուգ, 30): * **գոր (ք)** – փխն. է պահլավերենից⁶: Ունի 1) **զինվորների խումբ, գորք**, 2) ուժ, գորություն իմաստները: Բնագրային օրինակ. «...ահաբեկ արար գամենայն **գորս** աշխարհին» (Եղիշե, 14), «...գորսն Ալանացն...» (Բուգ, 30): * **Հետեւակ գորուն**. հետևակ գորք: **Հետեւակ** բառի համար ԳԲԲ-ն առանձնացնում է 9 իմաստ (ԳԲԲ, 66): Բնագրում ունենք 1) ոտքով գնացող, ոչ հեծյալ, 2) հետեւակ զինվոր, զորական իմաստով գործառույթ: Բնագրային օրինակ. «Եւ չգոյր թիւ բազմութեան **հեծելազոր** գնդացն եւ ոչ համար շերտաւոր հետեւակ **գորսն**, զի և ինքեանք զինքեանս զիրեանց **գորսն** կովել ոչ կարէին» (Բուգ, էջ 28): * **Հեծելազոր** – բաղադրված է հեծեալ և զոր

³ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 320:

⁴ Բառարանային մեկնաբանություններում ընդգծումները նպատակ են հետապնդում տեսանելի դարձնելու տվյալ ենթաշերտի եզրույթի իմաստները, քանի որ եզրույթների մեծ մասը բազմիմաստ է:

⁵ Քննությունը կատարված է ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» (Ե., 1989) և Փավստոս Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» (Ե., 1987) բնագրերի: Բնագրային օրինակների և մեջբերումների էջերը տրվում են շարադրանքում:

⁶ Շարադրանքում փոխառությունները նշվում են **փխն** համառոտագրությամբ:

արմատներից: ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) ձիավոր զորք, այրուձի, 2) հեծելագորի զինվոր, ասպետ: *** Այրուձի** – բնիկ: Ունի ձիավոր զորք, հեծելագոր, հեծելագունդ իմաստները: Բնագրային օրինակ. «...սակայն **այրուձին** Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդեր ի պատերազմի» (Եղիշէ, 12): *** Գունդ** – փխն. է պահլավերենից: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) **զորքի մի խոշոր հատված, մաս**, 2) բազմություն, խումբ, դաս, 3) փխբ. որևէ բանի մեծ քանակություն: Այն բազմիմաստ բառ է (տե՛ս ԳԲԱ, 341, գունդ): Բնագրային օրինակ. «Բայց ուր լինէր հանդես ի նշանաւոր տեղի **գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց** յերևելի տեղեաց...» (Բուզ., 28): **Գունդ գունդ**-ը, ըստ ԳԲԱ-ի վկայության, նշանակում է գունդագունդ, այն է՝ գունդ գնդի ետևից (ԳԲԱ, 341): **Գունդ** բաղադրիչը **կազմել** բայի հետ՝ **գունդ ձևավորել** նշանակությամբ, ինչպես **զոր** բաղադրիչը **գումարել** բաղադրիչի հետ՝ **զորք հավաքել** նշանակությամբ, ձևավորում են ռազմական եզրույթներ: ***Գումարել** բայի համար ԳԲԱ-ն առանձնացնում է 8 իմաստ. Բնագրում ունենք **զոր գումարել՝ զորք հավաքելով պատրաստվել կռվի** նշանակությամբ գործառույթ: Բնագրային օրինակ. «... **զոր գումարեա** և **գունդ կազմեա**, խաղա գնա դու յերկիրն Քուշանաց» (Եղիշէ, 18): ***Կազմել** բայի համար ԳԲԱ-ն առանձնացնում է 5 իմաստ, որոնցից 5-րդը՝ **զինել**, սպառազինել իմաստն է: **Զոր** բաղադրիչի հետ այն ունի *** զորք ձևավորել** իմաստը: Այս դեպքում **կազմել** բայը հանդես է գալիս 1-ին իմաստով՝ հավաքելով, համախմբելով միավորել, կազմակերպել, ստեղծել (ԳԲԱ, 618): ***Գունդ**-ը կարող է լինել գունդ նիզակաւորաց, գունդ վահանաւորաց, ազատագունդ (ազատներից կազմված գունդ) ևն: Առանձնացնենք **մատեան գունդ**-ը, որը պատմական եզրույթ է և նշանակում է «անմահների գունդ»: ***Մատեան** բառը փխն. է պահլավերենից: Այն բազմիմաստ է, ի թիվս մյուսների՝ ԳԲԲ-ն նշում է Սասանյան Պարսկաստանում ընտիր հեծելագորի գունդ, իբրև անմահների գունդ (ԳԲԲ, 150): Բնագրային օրինակ. «...**մատենիկ գնդաւն** ընդ առաջ նոցա խաղալ հասանել» (Բուզ., 32): Եղիշէի երկի թարգմանիչը՝ Ե. Տեր-Մինասյանը, ծանոթագրությամբ

(Եղիշէ, 429) մանրամասնում է **անմահների գունդ** իմաստը. «Այն բաղկացած է 10 հազար ընտիր հեծյալներից. գունդն անմահ էր կոչվում այն պատճառով, որ երբ նրա միջից որևէ մեկն սպանվում էր կամ մեռնում, տեղն անմիջապես ուրիշին էին նշանակում, այնպես որ 10 հազար թիվը երբեք չէր պակասում»: Ըստ թարգմանչի վկայության՝ «Հերոդոտի տեղեկությունը (Հերոդ., գիրք Է, գլ. 33) վերաբերում է Քսերքսեսի զորքերին, բայց VI դարի պատմիչ Պրոկոպիոսի վկայության համաձայն՝ Սասանյանները վերահաստատել են «Անմահների գունդը» (ծանոթագրություն 123, էջ 429): Ե. Տեր-Մինասյանը հիշատակում է. «Փալստոս Բուզանդն ասում է **մատենիկ գունդ**»: Կան եզրույթներ, որոնք տվյալ բազմիմաստ բառի իմաստներից մեկի հենքով են արժևորվում իբրև եզրույթ: Օրինակ՝ ***համագունդ** – բնիկ: Ունի համախումբ, համախմբված, **միասին խմբված**, հավաքված, մի **գունդ կազմած, ամբողջ գնդով**՝ խմբով: Բնագրային օրինակ. «Արդ թեպէտ և **ոչ համագունդ**՝ի միու վայրի դիպեցան ամենեքեան» (Եղիշէ, 86): ***Վաշտ** – փխն է պահլավերենից: Նշանակում է՝ 1) զինված մարդկանց խումբ, 2) զորախումբ: Բնագրային օրինակ. «Բայց ուր լինէր հանդէս ՚ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրօշու դրօշու, **վաշտուց վաշտուց** յերևելի տեղեաց...» (Բուզ, 28): ***Ղբօշ** – փխն է պահլավերենից: Ունի դրոշակ նշանակությունը: ***Լեզէոն**, լեզէովն – լատինական փոխառություն է, որի համար ԳԲԱ-ն առանձնացնում է 5 իմաստ. 1) **հռոմեական զորքի տեսակ**՝ միավորում, որ տարբեր ժամանակներում պարուակում էր 3000-6000 հետևակ և հեծյալ զինվոր, 2) լեզէոնի զինվոր, լեզէոներ, 3) չար ոգի դև, 4) փխբ. մեծ, կուռ բազմության բանակ, 5) լեզէոնակալ ռազմախումբ, մեծագունդ: Բնագրային օրինակ. «Եւ **լեզէոն** զօրուն բազմութիւնն այս ինքն Յունաց զօրացն սպարակիրն...» (Բուզ., 310): ***Գումարտակ** – փխն է պահլավերենից: Նշանակում է՝ 1) **զորագունդ, զորախումբ, բանակ**, 2) խումբ, բազմություն, 3) վզին գցելու զարդ, մանյակ, 4) ածական՝ խմբված, հավաքված, բազմախումբ: Բնագրային օրինակ. «Գումարէր զօրսն արքունի, և տայր **զգումարտակն** ամենայն ի ձեռս նոցա» (Բուզ., 34): Արդի արևելահայերենին է անցել գրաբարի եզրույթների

մեծ մասը, օր.⁷ գումարտակ նշանակում է «գորագունդ, մի քանի վաշտից բաղկացած զորքի ստորաբաժանում» (ՀՀԲԲ, էջ 222)՝

Զինվորական պաշտոնյաներ, զինվորներ

* **Զորավար** – բաղադրված է **զոր** արմատից: Հումանիշ է գորագլուխ և սպարապետ եզրույթներին: Բնագրային օրինակ. «Իսկ Մուշեղ **զորավարն** հայաստանեաց շրջեր ընդ երկիրն» (Բուզ., 288): Նշանակում է զորքի գլխավոր հրամանատար, գորապետ, սպարապետ (ԳԲԱ, 453): * **Ստրատ** – փին է հունարենից: Նշանակում է գորապետ: Բնագրային օրինակ. «Ապա **ստրատն** Յունաց կազմեաց զօրս իւր» (Բուզ., 306):

* **Ստրատեատ** – փին է հունարենից: Նշանակում է գորավար, սպարապետ: Բնագրային օրինակ . «Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զգօրսն Պարսից, զօրքն հունաց, և Տերէնտն – **ստրատելատ** նոցա և գունդքն Հայոց Մուշեղ սպարապետ նոցա» (Բուզ., 308): * **Սպարապետ** – փին է պարսկերենից: Նշանակում է զորքերի ընդհանուր, գերագույն հրամանատար, գորավար, գորապետ, գորագլուխ (ԳԲԲ, 471): Բնագրային օրինակ. «... տայր հրաման **սպարապետն** Մուշեղ ունել և հրով խորովել...» (Բուզ., 288): * **Հագարապետ** – փին է պահլավերենից: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) հագար զինվորի պետ, հրամանատար, 2) բարձրագույն քաղաքացիական պաշտոնյա, 3) արքունական հրամանատար, 4) արքունական իշխանական ելքումուտք կառավարող պաշտոնյա, վերակացու, տնտես.: Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի թարգմանիչը՝ Ե. Տեր-Մինասյանը, բառի մեկնությանը անդրադարձել է 37-րդ (Եղիշե, 417) և 80-րդ (Եղիշե, 424) ծանոթագրություններում: Նա նշում է, որ այն ունի պարսկական ծագում: Նրա համարժեք բառը պարսկերենում նշանակում է «երկրի բարձրագույն քաղաքացիական պաշտոնյա ու դատավոր»: Այդ անունը տրվում էր նաև պարսից թիկնապահների բանակի կամ «անմահների» տասը

⁷ Արևելահայերենում եզրույթների մեկնաբանման համար տե՛ս **Ա. Սուքիասյան**, «Հայոց լեզվի հումանիշների բացատրական բառարան», Ե., 2003 թ. այսուհետև՝ ՀՀԲԲ:

գնդերից յուրաքանչյուրի հրամանատարին. այդ գնդերը բաղկացած էին հազարական հոգուց. այդտեղից էլ հազարապետ անունը» (Եղիշէ, 417): 80-րդ ծանոթագրությամբ մեկնաբանում է **մեծ հազարապետ** եզրույթը. «Այն Միհրներսեհի տիտղոսն է: Այս տիտղոսը անշուշտ պետք է տարբերել հայերեն «հազարապետ» բառից, որ ավելի սահմանափակ նշանակություն ունի» (Եղիշէ, 424): Բնագրային օրինակներ. «...գամենեսեան հրամայեաց երթալ ընդ **մեծի հազարապետին** Վաղարշու» (Բուզ., 48): Միհրներսեհի դեպքում ունենք **մեծ վեզիր** նշանակությունը: ***Զօրագլուխ** – բաղադրված է **զօր** արմատից: Այն ունի գորքի մի մասի գլխավոր առաջնորդ, պետ, **հրամանատար** նշանակությունը: Բնագրային օրինակ. «...յորժամ 'ի ձեռն սպասաւորի զօրագլխի ուրուք...» (Եղիշէ, 82): ***Զօրական**. բաղադրված է **զօր** արմատից: Ունի հետևյալ իմաստները՝ 1) զինվորականների խումբ, դաս, զորք, պահապան զինվորականների խումբ, 2) զինվորական զինվոր, 3) զորքին, զինվորին հատուկ՝ վերաբերող, 4) զորավոր, հզոր: Բնագրային օրինակ. «Իսկ **զօրականքն** առ հասարակ գեղեցիկ խորհրդով...» (Եղիշէ, 38): Նշենք կարևոր մի հանգամանք: Ինչպես գրաբարի բառապաշարի բազմաթիվ բառեր, այնպես էլ բառ-եզրույթներ և եզրույթներ դրսևորում են **տարարժեքություն**: Հայտնի է, որ տարարժեքությունը լեզվաբանական կարևոր իրողություն է, որ ներկայացնում է բառիմաստով պայմանավորված բառի խոսքիմասային և շարահյուսական տարբեր դրսևորումները: Այս դիտակետում իր տեսակի մեջ եզակի բառարան է Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանը», որը ներկայացնում է գրաբարի տարարժեք բառերը՝ գրաբարով մատենագրության լավագույն նմուշներով: Յուրաքանչյուր գլխաբառ մեկնաբանվում է բառագիտական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Գրաբարի եզրույթային համակարգի բազմաթիվ բառ-եզրույթներ և եզրույթներ հիմնականում դրսևորում են գոյական-ածական տարարժեքություն. տարարժեքության այլ դրսևորումները ավելի սակավադեպ են: Օրինակ՝ **զօրական** կամ զինուոր, զինուորական եզրույթները դրսևորում են ածական – գոյական տարարժեքություն:

***Զինուորական** – զեն արմատից է կազմված. **զենը** փոխառություն է պահլավերենից:

Լ. Խաչատրյանի դիտարկմամբ՝ իբրև ածական ունի հետևյալ իմաստները. 1) զինվորին, զինվորությանը հատուկ. «Յանկալի եղեալ **զինուորական** արուեստին իւրոյ զաւրականացն (Կոր., 36), 2) զինվորագրված. «Կոչէր զբաղումս 'ի զինուորական քրիստոնէիցն» (Եղիշէ, 20): Որպէս գոյական՝ զինվոր, զինվորական դասին պատկանող անձ. «Որպէս զինուորական ոմն (ՆՀԲ)⁸: ***Զինուորութիւն** նշանակում է՝ 1) զինվորների խումբ, զինվորականություն: Փոխաբերական իմաստն է՝ հրեշտակների խումբ: Ունի նաև սպառազինություն իմաստը: Բնագրային օրինակ. «Այնպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր...» (Եղիշէ, 44): ***Սպարակիր** նշանակում է ասպարակիր, ասպարազեն: Բնագրային օրինակ. «Լեզեոն զօրուն բազմութիւնն, այս ինքն Յունաց զօրացն **սպարակիրն**, սոյնպէս և Հայոց **սպարակիրն զթիկունս** ունէր զօրացն Հայոց» (Բուզ., 308): **Սպարակիր** եզրույթը գնահատելով իբրև **ածական – գոյական** տարածություն դրսևորող բառ՝ Լ. Խաչատրյանը բնագրային օրինակները բերում է Բուզանդից. «Անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք և **սպարակիրք** հետևակ ի սպարակիրն Հայոց» (գոյական) (ԼԽԳԲԲ, 326): ***Թիկունք**-ը թեկն (թէկ) բառի հոգնակին է: ԳԲԱ-ն առանձնացնում է հինգ իմաստ (ԳԲԱ, 488), որոնցից 5-րդը՝ **օգնական, պաշտպան, սատար** նշանակությունն է (փոխաբերական իմաստ): Այն նշանակում է հետևի մասից, հետևից: ԼԽԳԲ-ում ներկայացված են **ի թիկանց, ի թիկունս, զթիկամբք** բառաձևերը՝ հետևի կողմից, թիկունքից, դեպի թիկունքը նշանակությամբ: Բառարանի բնագրային օրինակներն են. «Օգնութիւն ի տեառնէ վաղվաղակի հասանէր **ի թիկունս գնդին** Մուշեղայ» (Ղեւ, 140): «Իւր սահմայինքն, 'ի թիկունս հասանէին» (Խոր., 202. ԼԽԳԲԲ, 136): Հեղինակի գնա-

⁸ Տե՛ս Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, էջ 126:

հատմամբ բերված օրինակներում ունենք **նախադրություն-մակբայ** տարաբժեքություն (ԼԽԳԲԲ, 136)⁹:

***Հրամանատար** – կազմված է **հրաման** բաղադրիչից, որը փոխառություն է պարսկերենից: Այն ունի 1) կարգադրություն, պատվեր, 2) պատգամ, պատվիրան, 3) վճիռ, որոշում, հրովարտակ, 4) թույլտվություն իմաստները: Լինելով բազմիմաստ բառ՝ այն գործառական լայն շրջանակ ունի: Արժևորվում է նաև իբրև ռազմաքաղաքական եզրույթ: **Հրամանատար** եզրույթը նշանակում է՝ 1) հրամայելու, տնօրինելու իշխանություն ունեցող պաշտոնյա, 2) մեծ լիազորություններով բարձրաստիճան պաշտոնյա (կուսակալ, բդեշխ), 3) հազարապետ Պարսկաստանում՝ Սասան-յանների ժամանակ: Բնագրային օրինակ. «Միհրներսեհի Վզուրկ **հրամանատար** Երան և Անեան. Հայոց մեծաց ողջոյն շատ» (Եղիշէ, 48): ***Սահմանապահ** – բնիկ բառ: ԳԲԲ-ն վկայում է սահմանների պահպանության գործով զբաղվող **գորական իշխան, սահմանակալ**, կուսակալ, բդեշխ իմաստները: Բնագրային օրինակ. «Եւ հնազանդէր զմեծամեծան, զհրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց սահմանացն Հայոց **սահմանապահս** կացուցանէր» (Բուզ., 106): ***Բերդակալ** – բնիկ բառ: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները՝ բերդի պետը՝ տերը, **բերդի գորքի գլխավորը, բերդապահ**: Բնագրային օրինակ. «...**դիպեցան մտերիմք բերդակալքն...**» (Բուզ., 288): ***Ռազմիկ** – բնիկ բառ: Նշանակում է պատերազմում լավ կռվող մոտիկ: Բնագրային օրինակ. «...**ռազմիկ** հակառակամուղ նիզակին...» (Բուզ., 106):

Ջենք, զինամթերք

***Զրահ, զրահել** – փխն է պահլավերենից: Նշանակում է կուրծքը և թիկունքը հարվածից պաշտպանող մետաղե պահպանակ, որ հագնում էին զգեստի վրայից, լանջապանակ: **Զրահել** նշանակում է՝

⁹ Սույն ուսումնասիրության շրջանակում անդրադառնում ենք առանձին օրինակների միայն: Եզրույթների տարաբժեքության դրսևորումները կներկայացնենք առանձին ուսումնասիրությամբ: Այն կքննարկենք ոչ միայն ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում, այլև դրանց հենքով կփորձենք տալ նաև նրանց ռճական գնահատականը:

1) զրահով պատել, զրահավորել, սպառազինել, 2) փխբ՝ սիրտ տալ, սրտապնդել: Բնագրային օրինակ. «...բազումք ահաբեկեալք սկսան **զրահել** պնդապէս և զնոյն շշնջին լսէին յամենայն շրթանց» (Եղիշէ, 84), «...զրահաւորք նոսա...» (Բուզ., 310): ***Վահան, վահանաւոր** – իրանական փոխառութիւն է: Նշանակում է պաշտպանական զենք՝ մետաղից, փայտից կամ կաշվից պատրաստված, ասպար: Բնագրային օրինակ. «...գունդ **նիզակաւորացն** Հայոց. ՚ի լեզէն վահանաւորացն Յունաց կամ ՚ի սպարակիրն Հայոց» (Բուզ., 308):

* **Նիզակ, նիզակաւոր** – փխն է պահլավերենից: Նշանակում է փայտե երկար կամ կարճ ձող՝ ծայրին սրածայր երկաթ հագցրած, որով խոցում են. գեղարդ, նետ: Բնագրային օրինակ է. «... գունդ **նիզակաւորաց** ՚ի լեզէն վահանաւորացն Յունաց...» (Բուզ., 308): * **Նետ** – բնիկ բառ: Զենքի տեսակ է, աղեղով արձակելու փայտի կամ եղեգի բարակ ձող՝ մի ծայրը սրած կամ մետաղյա սլաք հագցրած: Բնագրային օրինակ. «... կամ ո՛ւր բացատրեցից զբազմութիւն նետիցն...» (Եղիշէ, 14): * **Պատկանդարան** – փխն. է պահլավերենից: Նշանակում է նետերի աման, կապարճ: Բնագրային օրինակ. «...ելից զնա իբրեւ **զպատկանդարան** դեղեալ նետիւք» (Եղիշէ, 12): * **Սուր** – բնիկ բառ: ԳԲԲ-ն առանձնացնում է երկու իմաստ: 1-ին իմաստով այն գոյական է. ունի **երկսայրի հատող և խոցող զենք, թուր, դանակ** նշանակությունը: Երկրորդ իմաստով այն ածական է, որի համար ԼԽԳԲԲ-ն առանձնացնում է 7 իմաստ՝ վկայելով մատենագրական հետաքրքիր օրինակներ (ԼԽԳԲԲ, 325): ԳԲԲ-ն ևս առանձնացնում է 8 իմաստ, օր.՝ սայրասուր, հատու, կտրող, բժշկական իմաստներից են մշտաքաղցր (շատակերություն), ժանտախտ են (ԳԲԲ, 468): Իբրև զինատեսակ՝ այն կազմում է դարձվածքներ. **ի սուր սուսերի՝** սրով, **ընդ սուր ելանել՝** սրով ինքնասպան լինել, **ընդ սուր հանել՝** սրով կոտորել, սրի քաշել: Բնագրային օրինակներ. «... և առ հասարակ **ընդ սուր հանին** զամենեսեան...» (Բուզ., 50): «...Իսկ անդէն հասանէր վախճան մահու **սրով**» (Եղիշէ, 42): * **Թուր** – բնիկ բառ: Նշանակում է պողպատյա սառը զենք, սուր: ***Սուսեր** – փխն է ասորերենից: Նշանակում է սուր, թուր: * **Նրան** – բնիկ բառ. նշանա-

կում է կարճ սուր, թուր, դաշույն, սուսեր: ***Աղեղն** – բնիկ բառ. նշանակում է 1) **նետ ձգելու՝ արձակելու գենք**, 2) ծիածան: ***Աղեղնակապարճ** – բնիկ բառ: Նշանակում է նետեր պահելու կաշվե կամ փայտե աման, կապարճ:

Բնագրային օրինակ. «Եւ ագուցեալ զպատմութեանն մեծ էած զգօտին ընդ մէջ իւր՝ զորմէ **թուր** կախէր և **սուսեր** ընդ մէջ ածեալ և խորշ ՚ի գոտոյ դրատիցն իջեալ, **զթուրն** և **զսուսերն** ծածկէր: Իսկ զվարտիսն զգեցեալ և մոյկս ագուցեալ զերան ազդէր կապեալ և ի վերայ **նրանին** խորշն ի վարտեացն իջեալ անկեալ ի վերայ նրանին ծածկեալ մինչև ի սրունսն» (Բուզ., 312):

Պատերազմին առնչվող մնացյալ եզրույթները կներկայացնենք՝ անդ-բաղառնալով նրանց միայն ռազմական նշանակություններին¹⁰, որը պայմանավորված է տեղի սուղությամբ: ***Պատերազմ** – փիւն. է պահլավերենից: ԳԲԲ-ն առանձնացնում է 5 իմաստ, որոնցից են՝ զինված ընդհարում պետությունների միջև, ռազմական գործողություն, ճակատամարտ, մարտ: Բնագրային օրինակ. «... սակայն այրուծին Հայոց բովանդակ ՚ի ձեռն նախարարացն առաջնորդէր **ի պատերազմի...**» (Եղիշէ, 12): ***Կռուել** – բնիկ բառ: ԳԲԱ-ն նշում է 3 իմաստ, որոնցից է պատերազմել, մարտնչել: Բնագրային օրինակ. «... և **կռուէր** մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքային Հայոց» (Եղիշէ, 12): Նրան հոմանիշ է **մարտնչել** բայը. ԳԲԲ-ն նշում է 3 իմաստ, որոնց թվում՝ պատերազմել: Բնագրային օրինակ. «...յայնմ հետէ Ժամանակի **մարտեան** ընդ բերդին ընդ այնմիկ պարսիկք և ոչ կարացին առնուլ» (Բուզ., 288): ***Կռու վառեա** – բնիկ բառ: Վառեալ բառի համար ԳԲԲ-ն առանձնացնում է 5 իմաստ, որոնցից 2-րդը նշանակում է **սպառազինել**: Ունի ևս 5 իմաստ, որոնցից 3-րդը նշանակում է ամուր, պինդ, հաստատուն: Բնագրային օրինակ. «...նիզակաւորք **կռու վառեալք** պատեղէնք և զրահաւորք կազմ ամենայն...» (Բուզ., 310): ***Վատասիրտ** – բնիկ բառ, ունի վախկոտ

¹⁰ Մանրակրկիտ նկարագիրը կտրվի գրաբարի եզրույթային համակարգի քննությանը նվիրված գրքում:

նշանակությունը: Բնագրային օրինակ. «... որոյ և նոքա զանձինս ի մահ մատնեցին՝ ոչ ինչ զանգիտելով իբրև **զանարի վատասիրտս**» (Եղիշէ, 86): ***Քաջ, քաջություն** – բնիկ բառ: ԳԲԲ-ն առանձնացնում է 9 իմաստ: Նրանցից 1-ը ունի պատերազմի մեջ հաղթող, կորովի իմաստը: Բնագրային օրինակ. «... այլ յոյժ **քաջութեամբ** պնդեցին զանձինս, զի թերևս կարասցեն փրկել զնոսա մեծամեծ հարուածոցն» (Եղիշէ, 86): ***Թշնամի** – փիւն. է պահլավերենից: Նշանակում է **ոսոխ**, հակառակորդ: Նրան հոմանիշ է ***հակառակորդ** բառ-եզրույթը, որ նշանակում է **ոսոխ, թշնամի**: Բնագրային օրինակ. «... և՛ **թշնամի** և՛ **հակառակորդ** երևեցուցանէր իւր...» (Եղիշէ, 12): Սրանք բառ-եզրույթներ են, քանի որ **թշնամի**-ն ռազմական եզրույթ է ռազմական բովանդակությամբ խոսքում, այլ դեպքերում ունի հակառակորդ, այլախոհ ևն իմաստները. դա կարող է լինել հոգևոր, գաղափարական տիրություններում, ինչպես մեր օրինակում է: Նրանց հոմանիշ է

***ախոյեան** եզրույթը, որը ծագմամբ բնիկ է և նշանակում է թշնամի, առաջամարտիկ: Բնագրային օրինակ. «Զի զամենայն **ախոյեանսն** զոր ՚ի ճակատուն յայն սպանանէին» (Բուզ., 308): ***Ասպատակ** – փիւն. է պահլավերենից: Նշանակում է հեծելախումբ, որ արշավանք է կատարում ավարառության նպատակով, ասպատակության: Բնագրային օրինակ. «... բազում գաւառս հոռոմոց աւերեաց **ասպատակաւ...**» (Եղիշէ, 14):

***Ասպատակ արձակել** – արձակել բայի հետ այն կազմում է դարձվածք՝ **ասպատակ սփռել, ասպատախումբ ուղարկել** իմաստով: Բնագրային օրինակ. «Իսկ սա **ասպատակ արձակէր** գաւառաց» (Եղիշէ, 36): ***Խաղաղ, խաղաղասէր** – բնիկ բառ: Նշանակում է՝ 1) հանդարտ, հանգիստ, անդորր, 2) խաղաղ կերպով, հանդարտորեն, մեղմորեն, խաղաղասէր՝ 1) խաղաղություն սիրող, 2) խաղաղասիրական: Բնագրային օրինակ. «... և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել...» (Եղիշէ, 44): ***Աւար, ապուռ, աւար** – փիւն.՝ պահլավերենից: Նշանակում է՝ 1) պատերազմի ժամանակ թշնամուց գերված ամեն ինչը՝ մարդ, զենք, մթերք, զորք ևն, 2) առ-

հասարակ կողոպուտ, թալան, 3) ավարառություն: **Ապուտ** – փխն. է պահլավերենից: Ունի ավար, կողոպուտ, թալան իմաստները: Բնագրային օրինակ. «... և **զապուտ** և **զաւար** ածեր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն» (Եղիշէ, 36): ***Վիրաւոր** – բնիկ բառ: Ունի վերք ստացած, խոցված իմաստը: Բնագրային օրինակ. «Եւ սկսաւ կրճտել զատամունսն իբրեւ զօրհասական վիրաւոր» (Եղիշէ, 84): ***Գերի** – բնիկ բառ: ԳԲԱ-ն առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) օտարություն քշված, **ստրկության մատնված մարդ**, 2) ավարի առնված անասուններ՝ ունեցվածք, իրեր, 3) մեկի կամ մի բանի ազդեցությանը ենթարկված մարդ, 4) գերիների խումբ, բազմություն: Բնագրային օրինակ. «... կուտեաց զաւար և **զգերի** և ահաբէկ արար զամենայն զօրս աշխարհին» (Եղիշէ, 14): Ունենք *** գերեղարձ առնել** (Բուզ., 88), գերուն վերադարձնել իմաստով և **զգերութիւն առեալ** (Բուզ., 88)՝ գերեվարել իմաստով դարձվածքները: ***Յաղթութիւն** – բնիկ բառ: ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) **հաղթել, հակառակորդին գերազանցել**, 2) մարմնի խոշորություն, հաղթանդամություն, 3) հզորություն, ուժեղություն: Բնագրային օրինակ. «... փոխանակ այս մեծի **յաղթութեան**, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ» (Եղիշէ, 36): ***Պայքար** – փխն. է պարսկերենից, ունի վեճ, վիճաբանություն, **կռիվ**, բանակռիվ իմաստները: Բնագրային օրինակ. «... և ընկերաբար գայիր **ի պայքար**» (Եղիշէ, 64): ***Ծառայ** – բնիկ բառ: ԳԲԱ-ն վկայում է հետևյալ իմաստները՝ 1) սպասավոր, 2) ստրուկ, 3) գերի, 4) **զինվոր**, 5) **ծառայական ծառայութիւն**. Բաղադրված է **ծառայ** արմատից: Նշանակում է 1) ծառա լինելը, ծառայի վիճակը, դրությունը, 2) ծառայելը, սպասավորություն, 3) ստրկություն, գերություն, 4) հպատակություն, հարկատվություն: Այն բազմիմաստ բառ է և իմաստներից մեկով (ծառայ – զինվոր) դառնում է ռազմաքաղաքական եզրույթ, որը այսօր ևս գործառական է ռազմական և ոստիկանական գերատեսչություններում: Լայն իմաստով՝ ծառայել Աստծուն, տվյալ գաղափարներին ևն: Բնագրային օրինակ. «... ազատութեան մարդոյն զյանցաւորութիւնն դնէիր, և բարերարութեանն Աստուծոյ՝ զազատութիւնն **ի ծառայութենէ**» (Եղիշէ, 64): ***Ազատութիւն** – բնիկ բառ: ԳԲԱ-ն նշում է հետևյալ

իմաստները՝ 1) ազատ՝ ազնվական լինելը, ազատի վիճակը, ազնվականություն, 2) անձնիշխանություն, չսահմանափակված իշխանություն, իրավունք, կամք, 3) անկախություն, ազատ լինել, 4) ազատվելը, փրկվելը, փրկություն ծառայությունից՝ գերությունից՝ վտանգից՝ փորձանքից դուրս գալը, 5) առատաձեռնություն, 6) ազատաբարձ լինելը, ազնվություն, վեհանձնություն, մեծահոգություն: Բնագրային օրինակը ԳԲԱ-ն բերում է Բուզանդից. «Պարսից զարմացեալ ընդ թագաւորութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն» (Բուզ., Ե., 21, ԳԲԱ, էջ 14): Մեր բնագրային օրինակը. «... և հայրենի **ազատութիւնն** չարաչար կայր ի ծառայութեան մարդախողող բռնաւորին...» (Եղիշէ, 44): ***Խռովութիւն** – բնիկ բառ: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) շփոթություն, խառնակություն, իրարանցում, հուզմունք, վրդովմունք, խլրտում, ապստամբություն, 2) տարաձայնություն, հակառակություն, **թշնամություն**, ոխ, 3) խռովահույզ՝ ալեկոծ վիճակ, ալեկոծություն: ***Արինհեղութիւն** – բնիկ բառ: Նշանակում է արյուն թափել, սպանություն, կոտորած: Բնագրային օրինակ. «... սիրելի էր նմա **խռովութիւն** և արինհեղութիւն...» (Եղիշէ, 14):

Իրավական եզրույթներ

Ի հակադրություն ռազմական եզրույթների՝ իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթները պատմագրության մեջ հաճախադեպ չեն: Դա ևս պայմանավորված է նյութի բովանդակությամբ: Մեր կողմից ուսումնասիրված բնագրերում գործածված են հետևյալ իրավական եզրույթները: *** Օրէն(ք)** – փին. է պահլավերենից: ԳԲԲ-ն առանձնացնում է 7 իմաստ. 1) սահմանված կարգ՝ կանոն, օրենք, 2) կրոն, հավատք, ավանդություն, 3) իրավունք, 4) պատվիրան, 5) սովորություն, 6) սուրբ հաղորդություն, 7) գավառ, նահանգ: Բնագրում գործածված է 1-ին իմաստով. «... վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց» (Եղիշէ, 12): *** Ձերբակալ առնել** – բնիկ: Նշանակում է ձերբակալել: Բնագրային օրինակ. «... ձերբակալ արարեալ...» (Բուզ., 34): ***Իրաւունք** – բնիկ: Նշանակում է 1) արդարություն, արդարադատություն, 2) ընդունված կարգ՝ սովորու-

թյուն, 3) վարձ կամ բաժին, որ օրինական կերպով հասնում է մեկին: Բնագրային օրինակ. «...ասելով՝ թե **իրաւունք** մեռան, և վասն այստրիկ ոչ գտանէին...» (Բուգ., 168), «... և **իրաւունք ումեք** յարքունուստ ոչ ելանէին» (Բուգ., 168), «... և տային ընդ միմեանս մարտ առանց **իրաւանցն**» (Բուգ., 18): Ունենք նաև **իրաւախորհ՝** արդարամիտ եգրույթը:

* **Դատաստան, դատաստան առնել** – փխն. է պահլավերենից: Նշանակում է՝ 1) դատ, դատելը, 2) դատավճիռ, 3) դատարան, ատյան, 4) դատապարտություն, պատիժ: **Դատաստան առնել**-ը դարձվածք է՝ **դատապարտել** նշանակությամբ: Բնագրային օրինակ. «Ո՛չ ահա ձեզէն իսկ արժան էր անդէն **դատաստան առնել** վասն այդպիսի անարժան ուսմանց» (Եղիշէ, 54): ***Յանցաւորութիւն** – բնիկ բառ: Նշանակում է հանցանք, օրինազանցություն, պատվիրանազանցություն: Բնագրային օրինակ. «... ազատութեան մարդոյն **զյանցաւորութիւնն** դնէիր» (Եղիշէ, 64): * **Հրովարտակ** – փխն է պահլավերենից: Նշանակում է թագավորի պաշտոնական գրություն, որ պարունակում է ողջուն կամ հրաման, ողջունագիր, հրամանագիր, նամակ, թուղթ: Այն արժնորում է իբրև իրավական փաստաթուղթ: Բնագրային օրինակ. «Եւ անդէն թագաւորն ՚ի ներքո կոչեցեալ գդպրապետն, հրամայէր գրել **հրովարտակ**...» (Եղիշէ, 84): ***Դատաւոր** – փխն. է պահլավերենից: Ունի հետևյալ իմաստները. 1) դատելու իրավունք ունեցող պաշտոնյա, 2) իշխանավոր, որ իրավունք ունի պատժելու, 3) լայնաբար՝ առաջնորդ, զորավար: Բնագրային օրինակ. «Փոխանակ նոցա պարսիկ աշխարհն և մեւս ևս մոգպետ՝ դատաւոր, աշխարհին...» (Եղիշէ, 46): ***Աշխարհագիր առնել** – բնիկ: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) աշխարհի, երկրի ազգաբնակչության ցուցակագրություն՝ վիճակագրություն, մարդահամար, 2) աշխարհը կամ աշխարհի արարչագործությունը նկարագրող (գրվածքը կամ հեղինակ): **Աշխարհագիր առնելը** ԳԲԱ-ն համարում է դարձվածք: Բնագրային օրինակը բերում է Եղիշէից՝ **մարդահամար անցկացնել**: Բնագրային մեր օրինակը. «... և խաղաղա-

սէր կեղծաւորութեամբ **աշխարհագիր առնել** ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց...» (Եղիշէ, 44):

***Մահապարտ** – բնիկ բառ: Նշանակում է մահիւան ենթակա: Բնա-գրային օրինակ. «...մահապարտք են այնքիկ...» (Բուզ., 304):

Ամովովիւթով նշենք, որ ռազմաքաղաքական եզրույթները գրաբարի եզրույթային համակարգում ծանրակշիռ տեղ են զբաղեցնում՝ ի տարբերություն իրավական հարաբերություններ արտահայտող եզրույթների: Նրանք հաճախադէպ են V դարի պատմագրության մէջ՝ պայմանավորված նյութի բովանդակությամբ և նպատակաուղղվածությամբ: Պատերազմի յուրաքանչյուր դրվագ գեղարվեստական հրաշալի պատկեր է՝ ոճավորման՝ գրաբարին բնորոշ միջոցների գործառությամբ: Հետևաբար գեղարվեստական ոճին բնորոշ հատկանիշները կարող ենք գտնել ցանկացած պատմական երկում¹¹: Պատմական երկերին բնորոշ է հարուստ և ճոխ բառապաշարը, որտեղ մեծ տեղ են զբաղեցնում ռազմական գործը ներկայացնող բառ-եզրույթները և եզրույթները: Եզրույթները գնահատելիս հիմք ենք ընդունել հետևյալ սկզբունքը. բառ-եզրույթ են այն բառերը, որոնք, լինելով բազմիմաստ բառեր, դրսևորում են նաև ռազմական գործին առնչվող իմաստ կամ իմաստներ, օր.՝ զենքերի, զինվորների, զինվորական պաշտոնյաների անվանումները: Ռազմաքաղաքական եզրույթները ներկայացնում են՝ 1) բանակի կառուցվածքը (բանակ, զունդ են), 2) զենքերի անվանումները, 3) զինվորների և զինվորական պաշտոնյաների անվանումները: Մեր կողմից ներկայացված 78 եզրույթներից ռազմաքաղաքական նշանակություն ունեն 70-ը: Նրանցից 36-ը փոխառություն է պահլավերենից, 4-ը՝ պարսկերենից, 3-ը՝ հունարենից, 1-ը՝ ասորերենից, 26-ը բնիկ բառեր են:

Իրավական նշանակության 8 եզրույթներից 3-ը բնիկ բառեր են, 5-ը փոխառություն են պահլավերենից: Հաճախ եզրույթները ածանցմամբ կամ բառաբարդմամբ կազմում են նոր եզրույթներ, օր.՝ բանակ-բանակել, հրաման-հրամանատար, զօրք-զօրական, զօրագլուխ են:

¹¹ Տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 89:

**ՌԱԶՄԻ ՀԱՄԿԱՑՈՒՑԹԻ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԸ ԵՎ ԵԶՐՈՒՑԹՆԵՐԸ
ԵՂԻՇԵԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ»
ԵՐԿՈՒՄ**

Ոսկեդարի հայ դասական պատմիչների ինքնատիպ սկզբնաղբյուր է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրտսեր աշակերտ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը, որը եզակի է, քանի որ գրվել է հայոց պատմության առանձին մի դրվագի և նրա հերոսի ու գաղափարակիցների սխրանքի մասին:

Վարդանանց պատերազմի ապստամբության նպատակն էր երկրի քաղաքական անկախության, ժողովրդի ազգային ինքնության ու քրիստոնեական կրոնի պաշտպանությունը: Մ. Աբեղյանը նշում է, որ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը ամենից առաջ 5-րդ դարի ռազմական գործի հիշատակարան է, ականատեսի ձեռքով գրված հավաստի սկզբնաղբյուր: Պատմական կարևոր արժեքի հետ միաժամանակ երկը մեր հին գրականության ամենափայլուն հուշարձաններից է, որին բնորոշ է վիպական հզորությունը, առինքնող հուզականությունն ու հայրենասիրական անկրկնելի ոգին¹:

Ուշագրավ է, որ այս ստեղծագործության մեջ ողբերգական հնչերանգի հետ մեկտեղ միահյուսվում են հույսի և քաջալերանքի մարտական կոչերը. այս գաղափարականությունն արտահայտվում է հարուստ բառապաշարով, որտեղ ուղիղ, փոխաբերական և եզրույթային իմաստները լավագույնս դրսևորվում են: Բնորոշ է, որ ահեղ թշնամու դեմ հայ ժողովրդի մղած արդար կռիվը պատմիչն իմաստավորում է խորհրդանշական թևավոր խոսքով՝ *«Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»*: 5-րդ դարում ստեղծված անելանելի իրավիճակից միակ ելքը հավատքն էր եր: Կրոնի դերն ու նշանակությունը վճռորոշ են դառնում ազգապահպանման համար՝ ընդդեմ զրադաշտականության, որը հավասարագոր էր ուժացման:

¹ Տե՛ս Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1994 թ., էջ 3:

Եղիշեի այս ստեղծագործության առանցքային գաղափարը հայրենասիրությունն է: Մաշտոցի նվիրյալ աշակերտի համար հայրենիքը բարձրագույն արժեք է. նա անարգանքի սյունին է գամում դավաճանությունը: Հայրենադավ ու հավատուրաց Վասակ Սյունու վախճանի նկարագրությունը թևավոր դարձած բազմաթիվ միավորներով այս ամենի ապացույցն է. *«Եվ նա, որ հանցագործությամբ ուզում էր Հայոց աշխարհի վրա թագավոր լինել, նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց, որովհետև մեռավ ինչպես շուն և քարշ տրվեց ինչպես էջ»*²: Հեղինակի համակրանքն առ Վարդանի և Վարդանանց դրսևորվում է դրական բովանդակության բազմաթիվ բառերի կիրառությամբ, իսկ հակառակորդին տրվող որոշիչները ոճականորեն չեզոք են: Պատմիչը խորապես գիտակցված հավատ ուներ հայրենի հերոսների բարոյահոգեբանական ու մարտական անսպառ կարողությունների նկատմամբ: Եղիշեի ոճին, լեզվին առանձնահատուկ փայլ են հաղորդում թևավոր խոսքերը, որոնք կարծես առատության եղջյուրից հորդում են. *«Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար», «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է», «Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք», «Թագավոր եթէ ոչ ունի զիմաստութիւն արո՞ռակից իւր, որ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ», «Ամենայն տուն և թագավորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն», «Զուգութիւնն է մայր բարեաց և անգուգութիւն ծնող չարեաց»:*

Վասն հաւատքի, վասն հայրենյաց գրաված այս պատմությունվիպասքը չափազանց կարևոր է քննել *ռազմ և զենք* նշանակող իմաստային դաշտի միավորներ տարժամանակյա բացահայտման մակարդակում: Մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք *Ռազմական գործ* հասկացության միավորները՝ բացահայտելով բնիկ և փոխառյալ, ինչպես նաև խառնակազմ բառերը, դրանց հոմանշային շարքերը, իմաստային բեռնվածությունը, կենսունակությունն արդի հայերենում, քննել ենք դրանցից կազմված դարձ-

² Նույն տեղում, էջ 5:

վածային միավորները, այնուհետև առանձնացված բառերը ենթարկել ենք բառակազմական վերլուծության: Ընդ սահման գրաբարյան *ռազմ* նշանակող բառերը համեմատել ենք արևելահայերենի նույնանուն միավորների հետ, ցույց տվել դրանց իմաստային, հնչյունական, ուղղագրական փոփոխություններն արդի արևելահայերենում:

Հետազոտության խնդիրները հետևյալն են. 1. Բացահայտել *ռազմ* և *զենք* նշանակող իմաստային դաշտի բառերը, առանձնացնել բնիկ, փոխառյալ, խառնանդամ, անհայտ ծագման միավորները: 2. Դուրս գրել և գիտական նկարագրության ենթարկել երկուսն էլ հաճախ օգտագործվող բառերը, հոմանշային շարքերը: 3. Բառակազմորեն վերլուծել դասական գրաբարով գրված այս երկի ռազմաբառերը՝ պարզ, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր, ցույց տալ դրանց տարածված կաղապարները: 4. Երևան հանել կենսունակությունն արդի արևելահայերենում, ցույց տալ հնչյունափոխական տարբերակները:

«Ռազմական գործ և զենք» նշանակող բառերի ծագումնաբանական բնութագիրը

Լեզվաբանության մեջ բառերի ծագումնաբանական հարցերը և խնդիրները մշտապես ենթակա են հետազոտության: Բառերի ծագումնաբանական, իմաստաբանական քննությունը ճշգրիտ կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել որոշակի լեզվական և արտալեզվական գործոններ:

Բառապաշարը հնարավոր է քննել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա կտրվածքներով: Բառապաշարի ծագումնաբանական և իմաստաբանական քննությունների առումով առաջնային է բառերի տարաժամանակյա կտրվածքով նկարագրությունը, որը ենթադրում է բնիկ հիմնաշերտի և փոխառյալ բառերի տարանջատումը, դրանց հնչյունական, բառակազմական առանձնահատկությունների վերհանումը: Աշխատանքի այս գլխում քննության ենք ենթար-

կելու ռազմական գործ և զենք նշանակող բառերի ծագումնաբանական, իմաստաբանական առանձնահատկությունները, լեզվի պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները:

Ռազմական գործի և զենքի միավորների իմաստային դաշտը հարուստ չէ հնդեվրոպական բառերով: Կյանքի այս ոլորտին առնչվող բառերի գերակշիռ մասը հայերենը փոխառել է պարսկերենից: Այս երևույթը պայմանավորված է հայերի և պարսիկների պատմական ճակատագրով: Պարսկերեն նկատելի ազդեցություն է ունեցել հայերենի վրա, մասնավորապես ռազմի և պատերազմի վարմանը վերաբերող իմաստային դաշտում: Փաստենք, որ Եղիշեի այս երկում ռազմի և զենքի իմաստային դաշտի միջուկային բառերը բնիկ են, բայց որքան հեռանում ենք միջուկային հասկացություններից, այնքան ավելանում են փոխառյալ կազմությունները:

1.1 Բնիկ բառեր

Բնիկ են կոչվում հնդեվրոպական հիմք-լեզվից սերող բառերը, որոնք իբրև այդպիսիք կազմում են հայոց լեզվի բառապաշարի հիմնաշերտը: Հնդեվրոպական հիմք-լեզվից հայոց լեզվի ծագման հետ մեկտեղ ծնունդ է առել ու կազմավորվել նաև այն կրող հանրությունը՝ հայ ժողովուրդը: Այս տեղի է ունեցել հազարամյակներ առաջ՝ Հայկական լեռնաշխարհում, այսինքն՝ հայերը բնիկ ժողովուրդ են և հնդեվրոպական միասնությունից անջատվել և զարգացել են իրենց բուն բնօրրանում՝ Հայքում կամ Հայաստանում³: Հնդեվրոպացի հայերը ծանոթ էին եղել ռազմի և պատերազմի արվեստին, ինչպես նշեցինք, հիմնային հասկացությունները բնիկ են, բայց դրանց բազմաթիվ հոմանիշները և պատերազմական գործողություններին վերաբերող շատ նեղ հասկացությունների անվանումներ փոխառյալ են:

Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկում բնիկ ծագում ունեն հետևյալ բառերը, որոնց զգալի մասն ունի

³ Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Եր., 1993, էջ 139:

եզրույթային արժեք. *այրուծի, ամրոց, սուր, նետ, հետևակ, գործակալ, մարտ, մարտնչել, մարտակից, Աստուածամարտ, ատեան, կոչի, աղեղն, քէն, առաջնորդ, գերի, գերութիւն*:

Մարդկության պտմության վաղ և միջին շրջաններում կարևոր, սակայն ներկայումս իր գործածությունը կորցրած բառ է *այրուծի*-ն: Այս միավորը ծագումով բնիկ է: Գևորգ Ջահուկյանը *այրուծի*-ն հիշատակում է *այր* բառի ստուգաբանության մեջ. *այր*-ի բաղադրության մեջ է տրված *այրուծի* բառը: Գ. Ջահուկյանը նշում է, որ *այր* բառը բնիկ հնդեվրոպական է, սակայն բուն նախաձևը դժվար վերականգնելի է. ենթադրելի է տարահիմք և նույնիսկ տարարմատ կազմություն՝ թերևս *այր* < *anrio (ենթարկված *ario – «տեր» հիմքի ազդեցությանը), սեռ. առն < *anros, տր. առն *anrai-/anri⁴: Այս բառի մյուս արմատը *ձի* բառն է, որը նույնպես բնիկ հնդեվրոպական է՝ *g^heiō-/*g^hei-«արագ, շարժել, քշել» արմատից: Ջահուկյանը համեմատում է հնդկական ha^hya «նժույգ», որը բացատրում է որպես հայ-հնդկական զուգաբանություն⁵: Հրաչյա Աճառյանը նույնպես համեմատում է ha^hya-ի հետ⁶: Էդ. Աղայանի արդի արևելահայերենի բառարանում *այրուծի* բառի բովանդակությունը սահմանվում է որպես *ձիավոր գորք, հեծելազոր*⁷: Եզրույթ դարձած կազմության իմաստը թափանցիկ է. *այրեք, տղամարդիկ*, որոնք հեծնել են իրենց ձիերը, որպեսզի պատերազմեն, այսինքն՝ *այրուծին* հնագույն բանականների կարևորագույն կառույցն էր: Ուշ շրջանում արդեն գործածելի է այս բառի *հեծելազոր* տարբերակը: Այրուծի բառն այլևս գործուն չէ. դարձել է պատմաբառ: Բերենք եզրույթի բնագրային կիրառության օրինակ. «*Դուք հենց որ այս հրովարտակը տեսնեք, շուտով առանց ուշացնելու այրուծի ժողովեցեք*»⁸:

Ամուր բառը բնիկ հնդեվրոպական է՝ *moi-ro- «*փայտե կառույց*» նախաձևից: Գ. Ջահուկյանի բառարանում տրված են հետևյալ բա-

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 49:

⁵ Նույն տեղում, էջ 475:

⁶ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, Եր., հատոր 1, 1926, էջ 151:

⁷ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 44:

⁸ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1989, էջ 21: Այսուհետ բնագրային հատվածները կբերվեն այս գրքից:

ցատրությունները. «ամուր, պինդ, ամուր տեղ»⁹: Ամուր արմատին Հրաչյա Աճառյանը իր «Հայերեն ստուգաբանական առձեռն» բառարանում տալիս է «պինդ՝ շատ» բացատրությունը, այստեղ՝ ամուր բառի բաղադրության մեջ նշում է ամրոց-ը¹⁰: Հատված բնագրից. «*Ել գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին*» (էջ 42): Այս կազմությունը այսօր չի պատկանում բառաֆոնդի ամենակիրառական բառերի շարքին, արդի ժամանակներում *ամրոց* անվանում են պատմամշակութային կառույցները կամ փոխաբերական իմաստով են կիրառում՝ որպէս որևէ գաղափարի կամ արժեքների անառիկ կենտրոն:

Սուր-ը բնիկ բառ է: Հրաչյա Աճառյանը նշում է, որ առաջացել է հնդեվրոպական *kō-ro*-ձևից, որ կազմված է *k'ō* «սրել» արմատից՝ *ro*-մասնիկով. նույն արմատի այլ ժառանգորդներն են՝ սանս. *ṣū-la*՝ «նիզակ», *ṣiṣāti*՝ «սրել», լատիներեն *catus*՝ սրամիտ և այլն¹¹: Գ. Զահուկյանը նույնպես բերում է Հրաչյա Աճառյանի կողմից առաջ քաշած *kō-ro*-ձևը: Բերենք բնագրային հատված. «...և բազմեաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով» (էջ 42): Սուրը իր կիրառությունը կորցրել է ներկայումս, քանի որ ժամանակի ընթացքում ռազմական գործում սրին փոխարինելու եկան զենքի այլ տարատեսակներ¹²:

Նետ ու **աղեղն** բառերի ստուգաբանությունը հետևյալն է. **նետ** բառը բնիկ է, հնդեվրոպական **nedo*՝ «եղեգ» ձևից, որի ժառանգորդներն են սանսկրիտում՝ *nada-*, պահլավերենում՝ *nad*, *nai*: Բնութագրական է, որ բոլորն էլ նշանակում են եղեգ, որը սլաք պատրաստելու նյութն է:¹³ Գ. Զահուկյանը հետևում է Հրաչյա Աճառյանի տեսակետին: Բերենք բնագրային օրինակ՝ «...եթէ յո՞ր թափեցից գրառնութիւն թիւնաւոր, կամ ուր բացատրեցից զբազմութիւն նետիցն» (էջ 14):

⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 46:

¹⁰ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն ստուգաբանական առձեռն, Եր., 2004, էջ 17:

¹¹ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հատոր 1, էջ 254:

¹² Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 690:

¹³ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 442:

Աղեղն բառը Հրաչյա Աճառյանի կարծիքով արաբական նախաձև կարող է ունենալ: Նա գրում է, որ արաբական ‘aqīq «սար-դիոն» ձևն է, որից ծագել է աղավաղված տաճկերեն hakik, պարսկե-րեն՝ ayiy. Այս զուգադրումներով էլ բացատրում է բառի հայերեն տարբերակը¹⁴: Գ. Ջահուկյանը հիմնավորում է բառի հնդեվրո-պական ծագումը՝ նշում է, որ հնդեվրոպական կրկնավոր ձև է՝ *el-«ծռել, թեքել» արմատից: Համեմատում է հայերեն՝ *ողն, ուլն, ոլոք, իլ / իլիկ*, լատիներեն՝ *alna*, բրետ.*ilin* «արմունկ» արմատների հետ¹⁵: Մենք վստահելի ենք համարում Գ. Ջահուկյանի ստուգաբանությու-նը, որը հավաստի է բոլոր առումներով:

Եղիշեի պատմության մեջ բազմագործածական է որպես հին դարերի հիմնական զինատեսակի անվանում. «*Որ բանիւ հրամա-նաւ կամեր կատարել զջարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցոյ, ա-րդ աղեղամբ, նիզակաւ և սրով կռուի*» (էջ 206):

Նետ և **աղեղն** բառերը, փոխանցվելով արդի արևելահայերե-նին, բնականաբար չունեն կիրառական նույն հաճախականությունը, որը ունեին գրաբարում: Արձանագրենք ռազմական այս եզրույթ-ների կրած փոփոխությունները. **աղեղն**-ը արդի արևելահայերենին է փոխանցվել *ն*-ի անկումով, *ն*-ն պահպանվում է միայն բառա-բարդման դեպքերում՝ *աղեղնակապարձ, աղեղնաւոր - աղեղնավոր, աղեղնադրաւշ – աղեղնադրոշ*: Այս զինատեսակի անվանումը և նրանից ածանցված հասկացությունների անվանումները դարձել են պատմաբաներ, հնաբանություններ:

Ստուգաբանենք **հետնակ** բառը. այս կազմությունը բնիկ հնդեվրոպական է. Հր.Աճառյանի «Արմատական բառարանում» **հետնակ**-ը տրվում է **հետ** բառի բաղադրությամբ: Բուն, նախնական նշանակությունն է «ոտք», առանձին դեպքում նշում է հետի «ոտ-քով»¹⁶. հատված բնագրից՝ «...սոյնպէս և վասն վահանաւոր հետնա-կացն» (էջ 194): Գ. Ջահուկյանը նույնպես նշում է **հետ** բառի

¹⁴ Նույն տեղում, էջ 126:

¹⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 36:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 82:

համադրմամբ: Ծագում է բնիկ հնդեվրոպական *pedo-«ոտք» արմատից, համեմատելի է հին հնդկերեն padā-«քայլ», լատիներեն pedā-«հետք»¹⁷: Հետևակ բառն այսօր չունի մեծ կիրառություն: Արդի արևելահայերենում այն հստակ ռազմական եզրույթ է՝ *հետևագործ* իմաստով, արևելահայերենում ունենք *հետիոտն* համագործածական տարբերակը՝ իմաստային փոփոխությամբ, հետևակը *գործն* է, իսկ հետիոտնը *առանց փոխադրամիջոցի տեղաշարժվող մարդն* է:

Անդրադառնանք *գործակալ* բառին. բնիկ հնդեվրոպական է: *Գործ*-ը առաջացել է բնիկ *vorg*՝ արմատից, այն համեմատում է հին սաքս. *werk*, գերմ. *Werk*՝ «գործ, աշխատանք», *wirkon*՝ «գործել» տարբերակների հետ¹⁸: Գ. Ջահուկյանը նշում է, որ *գործ*-ը առաջացել է հնդեվրոպական *uorgo կամ *uerg o->*uorg o (հետադարձ առնմանությամբ)՝ *uerg՝ «գործել» արմատից¹⁹: Այս բառի մյուս արմատը՝ *կաշ*-ը կրկին բնիկ է: Հր. Աճառյանը այն համեմատում է լատիներեն *vola* «ափ,բուռ» ձևի հետ: Արմատն ունի *gav-*, *gava*-«ձեռք», *gaona*-«ձեռք բերուած շահը» նշանակությունը²⁰: Գ. Ջահուկյանը իր «Ստուգաբանական բառարանում» առաջ է քաշում *կաշուլ* բայից ծագելու վարկածը, գրաբարյան բայ է. *կաշ*-ը կատարյալի հիմքն է, որը նաև անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի ձևն է, ինչպես նաև բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքը: Ծագում է բնիկ հնդեվրոպական՝ *guol՝ *geu՝ «ծռել,կորանալ» արմատից²¹: Ամփոփելով նշենք, որ *գործակալ* հոդակապավոր բարդության երկու բաղադրիչներից մեկը՝ *գործ*-ը, վստահաբար շարունակում է գործածվել արդի արևելահայերենում, մյուս արմատը՝ *կաշ*-ը, կախյալ արմատ է, այժմ դուրս է մղվել անկախ գործածությունից: Արդի արևելահայերենում այն հանդես է գալիս միայն բարդությունների կազմում՝ *արմնկակալ*, *ձեռքակալել*, *երմնակալություն* ևն: Բերենք եզրույթային արժեք ունեցող այս բառի կիրառության օրինակ մեր բնագրից՝ «Եւ Քողե-

¹⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 457:

¹⁸ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 583:

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 169:

²⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 483:

²¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 373:

անքն և Ակէացիքն և Տրապատունիքն, և զօրքն Ռշտունեաց, և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ» (Էջ 202):

Մարտ, կոռի բառերը հոմանշային շարք են կազմում, ստուգաբանենք այս միավորները: **Մարտ**-ը բնիկ հնդեվրոպական բառ է, որ կազմված է *merā* արմատից՝ *d* ածականով: Հր. Աճառյանը այն համեմատում է սանսկրիտի *mardati* «ջարդել, փշրել», գնչ.՝ *marima* «պատերազմ», *mardan* «կռիւ» բառերի հետ²²: Գ.Զահուկյանը համակարծիք է Հր. Աճառյանի ստուգաբանությանը:

Կռիւ բառի վերաբերյալ հին և ներ ստուգաբանական վարկածներ. Հր. Աճառյանի կարծիքով այն կարող էր փոխառություն լինել՝ կրիվի «կռիւ»: Կրվա «բախում, հարուած»²³: Գ. Զահուկյանի ճշգրտում է կատարում՝ ապացուցելով, որ *կռիւ*-ը հնդեվրոպական բառ է՝ **g^u-eri^u*՝ *g^u-ēr* «ծանր» արմատից: Նշում է, որ հազվադեպ հանդիպող է՝ *krēg* «համառություն» գուգաբանությամբ²⁴: Իսկ վրացերեն այն փոխ է առել հայերենից:

Այս երկու ռազմաբառերը արդի արևելահայերենում գործածվում են, սակայն *մարտ*-ը առավել հաճախ կիրառելի է բարձր ոճերում: *Մարտ*-ը խոսքին որոշակի ոգեղենություն է հաղորդում: *Կռիւ*-ը մուտք գործեց արդի արևելահայերեն՝ ուղղագրական փոփոխությամբ՝ *ւ* -ը դարձավ *վ*։ *կռիվ* տարբերակով: *Կռիվ*-ը արդի լեզվում համագործածական բառ է՝ որպես չեզոք ընդհանրական ոճի միավոր: Բերենք երկու ռազմաբառերի համաժամանակյա գործածության օրինակ. «*Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տերութեանն. եթէ հարկանին՝ չգգան, և եթէ հարկանեն՝ չիմանան, և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուիին*» (Էջ 16):

Մարտնչել/իմ-ը բնիկ բառ է, արմատը՝ *մարտն* է, գրաբարում մեծ տարածում ունեցող: Արևելահայերենում մարտնչիլ-ը դառնում

²² Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 289:

²³ Նույն տեղում, էջ 670:

²⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 431:

է մարտնչել, քանի որ արդի լեզվում *ի լծորդություն չունենք, ունենք՝ -ել, ալ*: Արդի արևելահայերենում այս ռազմաբայը բարձր ոճերում է կիրառվում: Բերենք բնագրային օրինակ՝ «*Մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին*» (էջ 100):

Մեր քննած պատմական երկում հաճախադեպ է *մարտ ղնել* հարադրության *մարտ եղեալ* ձևը, որը հոմանիշ է *մարտնչել* բառին: *Եղեալ*-ը գրաբարում *ղնել* անկանոն բայի անցյալ դերբայն է: Հր. Աճառյանը այս կապակցությանը տալիս է նաև *տալ* նշանակությունը²⁵, այսինքն՝ *մարտ եղեալ* նշանակում է *մարտ տալ*, որոշ դեպքերում նաև *մարտ սկսել*, *մարտի մեջ մտնել*: Բերենք բնագրային օրինակ. «*Վասն սիրելեաց մերոց, որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրեաք հանելոյ, զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կռուեսցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն*» (էջ 206): *Մարտակից* բառի մեջ ունենք *կից* արմատը: Հր. Աճառյանը *կից*-ը դիտարկել է որպէս հնարավոր վրացական զուգաբանություն՝ *կիցվա* «կցել, կապել, իրար միացնել»²⁶: Գ. Զահուկյանը հավաստի հիմնավորում է բառի հնդեվրոպական ծագումը՝ *geit-so կամ *geit-sk-(*geit- «*հարևան*» կամ «*կից լինել*»²⁷: Բերենք համապատասխան օրինակ մեր քննած ռազմական եզրույթների. «*Եւ բազում ևս ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն*» (էջ 390): *Մարտակից* բարդությունը իր կենսունակությունը պահպանում է նաև արդի արևելահայերենում:

Քէն-ը բնիկ հնդեվրոպական բառ է՝ *kuoinā ձևից՝ «ոխ, վրեժ»: Բառի բաղադրությունների մեջ տրված են հետևյալ միավորները. «*քինալ, քինանալ*»²⁸: Մեջբերում կատարենք բնագրից, որտեղ *քէն* և հոմանիշ *վրէժ* բառերն օգտագործված են միասին. «*Ոչ ինչ յիշեցից ամեննին գքէն վրիժուցն խնդրելոյ*»²⁹: Բառերն այսօր էլ գործածա-

²⁵ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 675:

²⁶ Նույն տեղում, էջ 595:

²⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան, էջ 407:

²⁸ Նույն տեղում, էջ 782:

²⁹ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ., էջ 86:

կան են տարբեր ոճերում, առօրյա-խոսակցական ոճում հաճախ հանդիպող է *քեն պահել* արտահայտությունը:

Աստուածամարտ բառի ստուգաբանությունը երկակի է, ունենք լեզվաբանների երկու կարծիք. ըստ Հր. Աճառյանի՝ *Աստուած*-ը փոխառվել է փոյուզերենից: Հր. Աճառյանը հիմնավորում է իր ասածը՝ վկայակոչելով թրակա-փոյուզական աստվածության անունը: Այն եղել է աստծո հատուկ անուն, ապա իմաստի ընդլայնմամբ դարձել է հասարակ գոյական:

Գ. Զահուկյանը արտահայտում է այն տեսակետը, որ *Աստուած*-ը հավանաբար բնիկ հնդեվրոպական է, բայց միասնական վարկած չկա: Ամենից հավանական են երկուսը.

ա) ծագում է հնդեվրոպական *ansu՝ «աստու-ած, ոգի» և diu՝ «աստու-ած» բարդումով և ած-ով:

բ) ծագում է աստ- արմատից, որ հաստ արմատի տարբերակն է, բայց սխալմամբ միացնում են ազդ արմատի հետ՝ աստոյ «հաստատուն, ամուր», աստու՝ «գորեղ»:

Գ. Զահուկյանը ճիշտ չի համարում Հր. Աճառյանի այն տեսակետը, որ լեզվաբանը փոյուզական աստծո անվան հետ է կապում այս բառը: Ի դեպ՝ այս տեսակետը Հր. Աճառյանը յուրացրել է Մառից³⁰:

Ն. Դիլբարյանը իր հոդվածում բերում է Վ. Համբարձումյանի ուշագրավ վերականգնումը, որը բառի հնդեվրոպական ծագումն է հաստատում, բայց Վ. Համբարձումյանը այն համարում է հնդեվրոպական դիցարանի գերագույն աստծո անվան հայկական տարբերակ, ըստ այդմ՝ իմաստային ընդլայնմամբ հասարակ անուն է դարձել: Ըստ այդմ՝ աստուած բառի հիմքում *Snusad* դիցանունն է, որը հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լուսի», հետագայում՝ «աստծո») անվան հետ է կապված: Ն. Դիլբարյանը հավելում է, որ այս բառի ձևիմաստային կառույցը բացատրում է վաղնջահայերենի բառակազմական հիմնական օրինաչափությունները³¹:

³⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 80:

³¹ Տե՛ս Նարինե Դիլբարյան, Օրենք և կրոն իմաստային դաշտի միավորները Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական Արքեպիսկոպոսին» երկում, Բանբեր Երևանի, 2023, N 3:

Բերենք *աստուածամարտ* բառի բնագրային օրինակ. «*Ձի արդ արևելք և արևմուտք գիտացին զձեր աստուածամարտդ լինել*» (էջ 174):

Այս հետազոտություններն ակնհայտ են դարձնում, որ Աստուածամարտ բառը բնիկ է: Մեր համոզմամբ, հույժ հավանական վարկած է այն, որ հնդեվրոպական «աստ» *ուժ, գորություն* նշանակող արմատից է առաջացել է բառը: Արդի արևելահայերենում փոխվել է բառի գրությունը՝ գրաբարի ու-ն դարձել է վ՝ *աստուածամարտ-աստվածամարտ*:

Գերի-ն բնիկ հնդեվրոպական բառ է: Առաջացել է *ueriio՝ *uer «գտնել, վերցնել» արմատից³²: Բնագրային օրինակը՝ «*և այնպես տազնապաւ մերժեցաւ, զգերի և զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ*» (էջ 160): Այս բառն ներկայումս էլ ունի գործուն կիրառություն, այսօր ևս *գերի* են անվանում ռազմական գործողությունների ժամանակ առևանգված մարդուն: Ունենք նաև *ռազմագերի* եզրույթը: Եղիշեի պատմության մեջ մեծ կիրառություն ունի համահունչ *գերութիւն* բառը. «*Ամենայն անցք չարչարանաց, որ անցին ընդ մեզ, և բազում հարուածք, որ եղեն ի զօրսն արքունի, և՛ աւեր, և՛ գերութիւն աշխարհին Հայոց*» (էջ 268): Բառը ուղղագրական փոփոխության է ենթարկվել արդի արևելահայերենում. գրաբարյան երկբարբառ *իւ-ը* վերածվել է *յու* երկհնչյունի:

Ատեան-ը բնիկ հնդեվրոպական է: Հր. Աճառյանը բացատրում է, որ հնդեվրոպական «նստիլ» արմատից է, համեմատում է այլ լեզուների տվյալների հետ. լատիներեն՝ solium՝ «նստելու տեղ, աթոռ», հին իռլանդերեն՝ suide՝ «նստարան»³³. «*Ձարմացալ մեծ հազարապետն ընդ միտս իւր, և ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին*» (էջ 272): Գ.Զահուկյանը *ատեան*-ը համարում է բնիկ հնդեվրոպական *sodin- կամ *sod-(+եան)՝ sed- «նստել» արմատից: Լեզվաբանը նշում է, որ կա նաև իրանյան ծագման վարկած, բայց հերքում է՝ հիմնավորելով հայկական ծագումը:³⁴ **Ատեան** բառը փո-

³² Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 157:

³³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 286:

³⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 82:

խանցվել է արդի արևելահայերենին, սակայն ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից լեզվում այն հիմնականում որոշակի մասնագիտական դաշտում է տարածված: Գրաբարյան ատեան բառի *եա* երկբարբառը արևելահայերենում դարձել է *յա* երկհնչյուն՝ *ատյան*:

Առաջնորդ-ը բնիկ հնդեվրոպական բառ է: Այս միավորը առանձնաբար վկայված չէ ստուգաբանական բառարաններում: *Առ* նախածանցը հնդեվրոպական *per արմատից է: *Աջ*-ը նույնպես բնիկ հնդեվրոպական միավոր է՝ *sē(i)dh-* «*ուղիղ դեպի նպատակը գնալ, նպատակաուղղվել, դիմել*» արմատից: **-հն**, **-որդ** ածանցները բնիկ են. *-ին*-ը ծագում է **-no-* ածանցից, իսկ *որդ*-ը՝ *-dhro-* ածանցից: Բերենք բնագրային օրինակ. «*Թեպետ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ*» (Էջ 148): Արդի արևելահայերենում *առաջնորդ*-ը առավել հաճախ կիրառվում է ժողովրդախոսակցական ոճերում:

Ամփոփելով Եղիշեի «*Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*» երկի ռազմի և զենքի իմաստային դաշտի բնիկ ծագման բառերը՝ արձանագրենք հետևյալը՝

1) բնիկ բառերը երկում մեծաթիվ չեն, բայց իմաստային դաշտի միջուկային միավորներն են: Ըստ մեր վիճակագրության՝ բնիկ են **17 բառ**, որից **9-ը** պարզ արմատական են, **4-ը**՝ բարդ, **4-ը**՝ ածանցավոր:

2) Լեզվի զարգացման տարբեր փուլերում այս միավորները ենթարկվել են որոշ տեղաշարժերի, լեզվական փոփոխությունների: Արտահայտության և բովանդակային պլանները մասամբ փոփոխվել են, առաջինը հատկապես Մ. Աբեղյանի ուղղագրական բարեփոխման հետևանքով: Բայց ունենք նաև պատմական հնչյունափոխության դեպքեր, այսպես՝ տարածված է բառավերջի *ն* հնչյունի անկումը, երկբարբառի վերածվելը երկհնչյունի: *Աղէդն*-ի *ն*-ն ընկել է, այժմ ունենք *աղէդ* տարբերակը: *Ա-տեան*-ի *եա* գրաբարյան երկբարբառը դարձել է արդի արևելահայերենի *յա* երկհնչյուն՝ փոխված ուղղագրությամբ:

3) Քննված միավորները հիմնականում համագործածական չեն, դրանք կիրառվել են լեզվի զարգացման անցյալ փուլերում՝

պայմանավորված ռազմի և զենքի միավորների գիտաարտադրական առաջընթացով, այսպես՝ *նետ, աղեղ, այրուձի* ռազմաբառերին փոխարինելու եկան նոր անվանումներ, վերացավ դրանց կիրառությունը ռազմական գործում: Դրանք վերածվել են պատմաբառերի՝ *նետ, աղեղն, այրուձի, հետևակ*:

1.2 Փոխառյալ բառեր Իրանական փոխառություններ

Լեզուն իր բառապաշարով անընդմեջ զարգացող և փոփոխվող երևույթ է: Նոր հասկացությունների համար շատ հաճախ մերձավոր հարևան լեզուներից փոխառում են նաև նրաց անվանումները: Իրանյան լեզուների ազդեցությունը հայոց լեզվի վրա պայմանավորված է պատմական հանգամանքներով: Հայերը երկար ժամանակ եղել են պարսիկների գերիշխանության ներքո: Հայ բարձրաստիճան պաշտոնյաները պարսկերենով էին կատարում արքունի գրագրությունը: Բանակցային հիմնական լեզուն պարսկերենն էր, մենք պարսկական զինատեսակներ և ռազմական արվեստ ենք կիրառել: Հր. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ իրանական փոխառյալ բառերի թիվը հասցնում է *1405-ի*, որից *960-ը* փոխառված պահլավերենից, իսկ *445-ը* փոխառված *12-րդ դարից*՝ նոր պարսկերենից: Իսկ Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ իրենց նախաձևերով բերում է *712*, իսկ ածանցային ձևերի հետ *839* իրանական փոխառություն, որովհետև պատմականորեն մերձավոր, ցեղակից լեզուների ընդհանուր արմատները սխալմամբ սկզբնական շրջանում համարվում էին ոչ թե մայր լեզվից ընդհանուր ստացվածք, այլ փոխառություն: Ռազմական գործի և զենքի իմաստային դաշտին վերաբերող հիմնական բառերը, որոնք հայերենը փոխառել է պարսկերենից հետևյալն են՝ *պայքար, վեճ, պատերազմ, ռազմ, դաշն, զոր, ճամբար, գունդ, սպայ, վաշտ, դրօշ, զինուոր, հրամանատար, սպարապետ, զենք, աշտեայ, նիզակ, տեգ, գրահ, ասպազեն, սաղավարտ, ասպար, վահան, պարտել, պարտիլ (հաղթվել)*,

արշաւել, նախճիր, ասպատակ, նահանջ, աւար, դարան, պաշտ-
պան...³⁵:

Աշխատանքի այս հատվածում քննելու ենք մեր ուսումնասի-
րած իմաստային դաշտին պատկանող փոխառյալ միավորները:
Փոխառյալ բառերի ծագումը քննելիս օգտվել ենք Հր. Աճառյանի
«Հայերէն արմատական բառարան»-ից, Գ. Ջահուկյանի «Հայերեն
ստուգաբանական բառարան»-ից:

Ռազմական գործ և զենք նշանակող իմաստային դաշտի իրա-
նյան ծագման բառերը զգալի են, ինչպես նշեցինք պարսկական
ռազմական արվեստը ծանոթ և կիրառելի էր մեզանում. հայերենը
հարուստ է իրանյան ծագման ռազմաբառերով: Այժմ ստուգաբա-
նենք «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի ռազմաբառե-
րը և զենքի միավորները. Հր. Աճառյանը նշում է, որ *պատկանդա-
րան*-ը պահլավական ծագման է, նշանակում է «նետաման»: Ստու-
գաբանությունը հետևյալն է՝ *pātkāndārān, որը կազմված է պահլա-
վական *patkān, որը հետո դարձավ պարսկական paikan՝ «նետ» և
պահլավական *dārān «կրող, ունեցող, պահարան» բառերից³⁶, Գ.
Ջահուկյանը համամիտ է Հր. Աճառյանի ստուգաբանությանը:
Բնագրային օրինակ բերենք. «*Ելից զնա իբրև գպատկանդարանդ
դեղեալ նետիւք*» (էջ 12): Պատկանդարանը անշուշտ այսօր չունի
կիրառություն, հնաբանություն է: Այդ բառի հայտնի հոմանշային
ձևերը՝ կապարճ-ը և նետաման-ը, նույնպես չունեն տարածում, քա-
նի որ ներկայումս ռազմի ոլորտում չկիրառվող զինատեսակի են
վերաբերում:

Կամակար-ը կրկին իրանյան ծագման բառ է: Պահլավական
kāmākār «բացարձակ, ինքնական» ձևից³⁷. «Վասն որոյ և աստուածա-
պաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լիներ յաշ-
խարհին Հայոց» (էջ 12): Սրանից հետո պարսկական kāmākārtār «կա-
մակարագոյն»: Գ. Ջահուկյանը, համամիտ լինելով Հր. Աճառյանի

³⁵ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 162:

³⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, էջ 44:

³⁷ Նույն տեղում, էջ 499:

ստուգաբանությանը, բերում է ամրակայող օրինակներ՝ *կամակարարաց*, *կամակարարաբար*³⁸։ Ուշ շրջանում ի հայտ եկավ այս բառի *ինքնիշխան* տարբերակը։ Այսօր նոր գրական լեզվում *ինքնիշխան* իրավական եզրույթը բավականաչափ մեծ տարածում ունի, մանավանդ վարչական, պաշտոնական, հրապարակախոսական ոճերում։

Ռազմ և **պատերազմ** բառերը հոմանշային զույգ են կազմում։ Երկուսն էլ պահլավական ծագման են։ *Ռազմ*-ի ստուգաբանությունը հետևյալն է՝ *razm*՝ «*պատերազմ*», պարսկական՝ *razm*՝ «*կռիւ*»։ Աճառյանը նշում է նաև *rasman*՝ «*գորաբանակ*» նախաձևը՝ Հյուբշմանի վկայակոչմամբ, բայց հավաստի չի համարում³⁹։ *Ռազմ*-ից բնութագրական բնագրային օրինակ բերենք. «*Այլ և դրոշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր ի նմանէ. և թե քանի գունդ զգօրսն բաժանիցեն ... և որ զօրագլուխ յորմէ կողմանէ յազմ մտանիցէ*»⁴⁰։ Ունենք նաև *ռազմ արարեալ* կապակցությունը՝ *արարեալ*-ը գրաբարի անկանոն *առնել* բայի անցյալ դերբայն է, *ռազմ արարեալ* նշանակում է *պատերազմ սկսել, հրահրել*։ «*Ռազմ արարեալ գրոյոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր*»⁴¹։ Այս բառը ներկայումս չունի լայն կիրառությունը, առավել հաճախ հանդիպում ենք բարձր ոճերում։

Պատերազմ-ը իրանյան ծագման բառ է։ Ստուգաբանությունը հավաստի է. *pātrazm*՝ «*պատերազմ*» նախաձևից է, որը կազմված է *razm* արմատից⁴²։ Գ. Ջահուկյանը համակարծիք է։ «*Եվ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ*» (էջ 200)։ *Տալ պատերազմ* հարադիր բայի կազմում այս եզրույթը բազմագործածական է. «*Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ ինչ զանգիտեր ամեննին տալ*

³⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 378։

³⁹ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 138։

⁴⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Բնագրային Համաբարբառ, Գիրք 2-րդ, Երևան, 1978, էջ 436։

⁴¹ Նույն տեղում, էջ 436։

⁴² Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 40։

պատերազմ» (էջ 150): *Պատերազմ* բառը այսօր կիրառական է ամենատարբեր ոճերում՝ թե՛ պաշտոնական, թե՛ առօրյա-խոսակցական, թե՛ հրապարակախոսական: Ցավոք, պատերազմները ոչ միայն չեն նվազում, այլ սաստկանում և թփժանում են նոր ուժերով և ռազմատեսակներով

Ապստամբ -ը իրանյան ծագման է: Նշանակում է *ըմբոստ*, *անհնազանդ*: Հր. Աճառյանը գրում է, որ այս բառն առաջացել է պահլավական «apastamb» ձևից⁴³: Գ. Զահուկյանի ստուգաբանական բառարանում *ապստամբ* բառի բաղադրությունների մեջ տրված է՝ «*ապստամբել, ապստամբություն*»⁴⁴: Բերենք բնագրային օրինակ. «...վասն ապստամբին Վասակայ» (էջ 158): Արդի արևելահայերենում սույն բառը չի պատկանում հայերենի համագործածական բառաշերտին: Մեր օրերում կիրառելի են հոմանշային տարբերակները՝ *ըմբոստ*, *անհնազանդ*:

Ստուգաբանենք *գօր*, *գունդ* ռազմաբառերը, որոնք հոմանշային շարք են կազմում: Երկուսն էլ իրանյան ծագման բառեր են: *Զօր* հիմքով Եղիշեի այս երկում ունենք նաև *գօրություն* բառը: Իրանյան փոխառություն է, *zavar՝ «ուժ, զորություն», *zōr՝ «ուժ» ձևից: Սույն փոխառյալ եզրույթը տարածված է նաև Հնդկաստանում, Կովկասում և ձգվում մինչև Բալկաններ: Հր. Աճառյանը նշում է, որ այս բառի բուն ծագումը անհայտ է⁴⁵: *Զօր*-ը ունի կիրառություն արդի լեզվում, սակայն արտահայտության պլանը և ուղղագրությունը փոփոխվել են: Այժմ տարածված է *զորք*-ը, գրաբարի հոգնակի *ք*-ն հավաքական գոյական ցույց տալուց բացի նաև եզակի է դարձել այս բառում, *օ*-ն էլ դարձել է *ո*՝ *զօր-զորք*. «*Բախիցէ զծով մեծ, այնպես շարժէր և տատանէր զամենայն բազմութիւնն զօրաց իւրոց*» (էջ 30): Գրաբարում կիրառական է *զօրութիւնը*, որը նույնպես փոփոխություն է կրել արդի լեզվում՝ իւ-ը դարձել է *յու* երկինջուն: «*Եւ քանզի արարող զօրութիւն է*» (էջ 60): Ունենք նաև *զօրավար* բառը, որը

⁴³ Նույն տեղում, էջ 242:

⁴⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 71:

⁴⁵ Նույն տեղում, էջ 114:

կրկին *գոր* արմատից է. «*Թերևս վասն իմ իսկ եկեալ էր մեծ գորա-վարն Հայոց բազում սուրբ ընկերակցօքն իւրովք*» (էջ 312): Արդի հայերենում այն պատմաբառ է, ունենք ուղղագրական փոփոխու-թյուն՝ *օ-ն* դարձել է *ո՝ գորավար*:

Գունդ բառի ստուգաբանությունը հավաստի է. ծագում է *gund «գունդ» բառից: Պարսկական gunda՝ «*հացի խմորի գունդ*»: Նույն բառից են նաև yund՝ գունդ՝ «*խումբ, վաշտ*» միավորները⁴⁶. «*Արդ զմի բան զմեր վաղվադակի կատարեա դու, արքայ. գոր գումարեա և գունդ կազմեա*» (էջ 18): Գ. Զահուկյանը նույնպես նշում է իրանա-կան աղբյուրը, բերում է մի շարք կազմություններ՝ *գնդել, գնդաձև, գունդխաղ, գնդացիք, երկրագունդ*: Երկում ունենք **համագունդ** հետաքրքիր ձևը, որը կազմում է **համ-** նախամասնիկով, ըստ Աճա-ռյանի՝ *համ* նախածանցը նշանակում է «*համայն, ամեն կողմ, բոլո-րը, ամբողջ*», այսինքն՝ *համագունդ* - «*ամբողջ գունդով*»⁴⁷. «*Այլ դար-ձեալ համագունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գուժաբեր հիշատակացն*» (էջ 142): Պատմության մեջ վկայված է նաև *գունդ* բառի կրկնավոր բարդությունը՝ **գունդ-գունդ**. «*Եւ գունդս գունդս արձակէր յաշխարհն Միւնեաց, առնոյր, աւերէր զբազում գաւառս*» (էջ 162): Մեր ուսումնասիրած երկում ունենք **գունդագունդ** հոդակապավոր բարդությունը, բերենք բնագրային օրինակ. «*Շար-ժեա՝ և դողացո՛ղ գգունդագունդ բազմութիւն անօրինացս*»⁴⁸:

Արդի լեզվում, մասնավորապես՝ ռազմական բառապաշարում, հիշյալ եզրույթը համագործածական է, որովհետև բանակների կառուցվածքում պահպանվել են գնդերը՝ որպես առանձնակի մաս-նագիտական միավորումներ՝ *հրետանավորների գունդ, ռազմածո-վային գունդ, տանկային գունդ, կապավորների գունդ* են: Պարսից հին բանակում վճռորոշ էր *Մատեան գունդը*: **Մատեան**-ը ևս իրա-նյան փոխառություն է: Հիմքը՝ *matak-ն է: Ըստ Գ. Զահուկյանի՝ *մա-տեան*-ը նշանակում է «*հիմնական, ընտիր*»՝ վկայակոչելով *պարս-*

⁴⁶ Նույն տեղում, էջ 593:

⁴⁷ Նույն տեղում, էջ 173:

⁴⁸ **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ., էջ 76:

կական անմահների գունդը⁴⁹: Բերենք բնագրային օրինակ. «...մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն» (էջ 236):

Երամակս փղաց բարդությունը հոմանշային շարք է կազմում Մատեան գնդի հետ: Թե՛ փիղը⁵⁰, թե՛ երամակը⁵¹ իրանյան ծագման են: Երամակս փղաց նշանակում է փղերի խումբ: Օրինակը բնագրից. «... և բազում երամակս փղաց յդէր ընդ նմա» (էջ 176):

Եզրույթի արժեք ունեցող այս կազմությունները՝ թե՛ Մատեան գունդը-ը, թե՛ երամակս փղաց-ը պատմաբաններ են, որոնք բնորոշ էին անցյալ ժամանակաշրջանին, երբ դեռ կոչվում էին փղերով:

Ճակատ-ը պահլավական čakāt ձևից է, որը կիրառված է «գագաթ» իմաստով⁵²: Բնագրային օրինակ. «... զճակատ հարեալ և զօձիս պատառեալ վասն ապստամբին Վասակայ» (էջ 158): **Ճակատ** բառը ներկայումս էլ ռազմաբառ է, ունի ճշգրիտ նշանակություն և կիրառության ենթադաշտ:

Հրովարտակ-ը արքունի հրամանագիրն է: Իրանյան ծագման բառ է: Պահլավական fravartak՝ «նամակ, գրութիւն, հրովարտակ» բառից⁵³. «Հրովարտակս գրէր, պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ» (էջ 18): Գ. Զահուկյանը համարիտ է Հր. Աճառյանի ստուգաբանությանը: **Հրովարտակ**-ը ժամանակակից հայերենում կորցրել է իր կիրառությունը, պատմաբառ է, քանի որ ներկայումս պետության թագավորական կառավարումն անցյալում է:

Ջէն, սպառազէն, զինուոր բառերի ստուգաբանական քննությունը հետևյալն է. **զէն**-ը պահլավական բառ է՝ zēn-ից է առաջացել, *zēnāvar՝ «զինուած»⁵⁴. «Ընթացան վաղվաղակի ի զէնս իւրեանց, վանեցան կազմեցան զգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին» (էջ 132):

⁴⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 513:

⁵⁰ Նույն տեղում, էջ 764:

⁵¹ Նույն տեղում, էջ 220:

⁵² Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 176:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

⁵⁴ Նույն տեղում, էջ 94:

Հիշյալ բառը արդի արևելահայերենում կիրառական է, սակայն ուղղագրական փոփոխությամբ՝ *է-ն* դարձել է *է*, ունենք նաև *ք* հոգնակերտ ածանցի հավելում, որը գրաբարի ուղղական հոլովի հոգնակերտ ցուցիչն է՝ *զէն-զէնք*։

Սպառազէն բառը տրված է «սպառ» բառի բաղադրության մեջ։ Պահլավական *spar կամ *spur՝ «կատարեալ, լրացած, վերջացած» բառից է առաջացել։ **Սպառազէն** նշանակում է «ամբողջովին զինուած»⁵⁵։ Բերենք բնագրային օրինակ՝ «... և կամ քանի այն ոք իցեն, որ սպառազէնքն իցեն» (Էջ 194)։ Ժամանակակից լեզվում այն կիրառվում է ռազմական գործում՝ ապառազիություն կազմությամբ, իսկ մնացած դեպքերում բարձր ոճի բառ է։

Ջինուոր-ը առանձնաբար ներկայացված չէ արմատական և ստուգաբանական բառարաններում։ Գ. Ջահուկյանը *զինուոր*-ը դիտարկել է *զէն* բառի բաղադրության մեջ՝ *զին-ուոր, զէնընկէց, զինել, զինապետ*⁵⁶։ «Ի ձեռս էառ իբրև զվահան, և ազաւ զնա իբրև զգրահս, և եղև իբր զինուոր կատարեալ կամաց նորա» (Էջ 184)։ Այս բառը ունի լայն տարածում արդի արևելահայերենում, ամենատարբեր ոճերում գործածելի է, սակայն ուղղագրական փոփոխությամբ՝ գրաբարյան *ու-ն* դարձել է *վ*։

Այժմ քննենք **բանակ, կարաւան, սպահիդ** բառերը, որոնք հոմանշային շարք են կազմում։ Ըստ Հրաչյա Աճառյանի ստուգաբանության՝ **բանակ**-ը վրացական փոխառություն է. բանակեալ՝ «բանակիլ», դաբանակեալ՝ «ճակատ յարդարել, բանակիլ, կռուի պատրաստուիլ»։ Չնայած այս փաստին՝ Հր. Աճառյանը նշում է, որ կասկածելի է նաև, որ այս բոլոր միավորները հայերեն բառերի հետ միասին փոխառյալ լինեն պահլավերենից, այդ կասկածը նա հիմնավորում է *-ակ* վերջավորությունը հաշվի առնելով⁵⁷։ Գ. Ջահուկյանը այլ կարծիքի է. նրա կարծիքով **բանակ**-ը իրանական աղբյուրից է,

⁵⁵ Նույն տեղում, էջ 260։

⁵⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 238։

⁵⁷ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 405։

բայց բուն աղբյուրը հավաստված չէ⁵⁸։ Մեզ համար լիովին համոզիչ է Գ. Ջահուկյանի մեկնաբանումը։ «*Եւ անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա՝ քանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրն զքաղաք ամենայն պատրաստութեամբ*» (էջ 184)։ Այս բառի կիրառական դաշտը մեծ է, *քանակ*-ը բուն ռազմաբառ է, ռազմական գործում ամենակիրառական բառն է թերևս։ Բանակը որևէ պետության զինված ուժերի ամբողջությունն է։

Կարաւան-ը պահլավական ծագման է՝ «kāravān», «kārvān»։ Փոխառությամբ տարածված է ուրիշ, այլ լեզուների մեջ։ Kār՝ «կռիվ», kārā՝ «քանակ»⁵⁹։ «*Ձայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին, և պատուէր էր սաստիւ ի վերայ դնէր ամենեցուն*» (էջ 36)։ Այսօր կարաւան-ը հնացած բառ է, այլևս կիրառելի չէ։ Արդի հայերենում գոյություն ունի *քարավան*-ը, որ իմաստափոխության արդյունքում այլ՝ մասնավոր նշանակություն է ձեռք բերել, այսօր քարավանը *խումբ* է նշանակում, որը ռազմաբառ չէ։

Սպահիդ-ը պահլավական ծագման միավոր է։ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական» բառարանում հիշատակված է *սպահ*, որը նշանակում է *գունդ, բանակ*։ Spāh՝ «զօրք, բանակ»⁶⁰։ «*Յովսէփ եպիսկոպոս, հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս, Միհրնէրսէհի Մեծի հազարապետի արեաց և անարեաց՝ բազում խաղաղասէր մտօք բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ արեաց*» (էջ 56)։ Գ. Ջահուկյանը հետևում է Հր. Աճառյանի ստուգաբանությանը։ Սույն բառը վերացել է հայերենի բառաֆոնդից։

Գահ, գահաւորակ բառերը իրանյան ծագման են։ **Գահ**-ը պահլավական *gah՝ «դիրք, աթոռ, բազմոց»⁶¹։ Գ. Ջահուկյանը նույնպես իրանյան է համարում այս բառը։

⁵⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 116։

⁵⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 547։

⁶⁰ Նույն տեղում, էջ 258։

⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 502։

Գ. Ջահուկյանի «Ստուգաբանական բառարան»-ում գահ բառի բաղադրության մեջ տրվում են հետևյալ բառերը՝ *գահագլուխ, գահակ, գահերեց, գահակալ, գահոյք, նախագահ*⁶²: Գահ-ը արդի լեզվում չունի տարածում, քանի որ մեր իրականության մեջ վերացել է թագավորական կարգերը: Կարելի է ասել, որ գահ-ը հնաբառ է, պատկանում է բառապաշարի ոչ գործուն շերտին: Բերենք բնագրից օրինակ՝ «...և վերստին ամենեցուն զպատիւս և գգահս նորոգէր» (Էջ 100): Անդրադառնանք **գահաւորակ** բառին: Հր. Աճառյանի բացատրությամբ՝ նշանակում է *արքունի կամ իշխանական գահ, դեսպակ, պատգարակ*: Պաշտական *gāhārak, gāsvarak* բառերից է առաջացել, որ նշանակում է նաև *մանուկների և մեծերի հատուկ պառկելու տեղ*⁶³. «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ զըրգեալք և զգուելք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ հետի երթային ի տունս աղօթից» (Էջ 404): Արդի շրջանում *գահավորակ*-ը պատմաբառ է՝ արքայական կառավարման խորհրդանիշ:

Վզուրկ միավորը պաշտական փոխառություն է՝ *vuzurg, vazurk* ձևից: Նշանակում է «*մեծ ավագ*»: Բերենք բնագրային օրինակ՝ «*Եւ ամենայն վզուրկքն և պատուական նախարարքն...*» (Էջ 168): Այս բառն արդեն պատմաբառ է, բառաֆոնդի հիմնական շերտից դուրս է մղվել:⁶⁴

Հաջորդը **նահատակութիւն**-ն է, հիմքում *նահատակ* արմատն է հստակ նշանակությամբ՝ «*առաջամարտիկ, բանակի ճակատի ախոյեանները*»⁶⁵: Հր. Աճառյանը համարում է փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը հավաստված չէ⁶⁶: Բերենք բնագրից օրինակ. «...որ կատարեցաւ նահատակութեամբ ի մեծ պատերազմին» (Էջ 156): Ժամանակակից լեզվում՝ բառապաշարի

⁶² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 145:

⁶³ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 503:

⁶⁴ Նույն տեղում, էջ 334:

⁶⁵ Նույն տեղում, էջ 423:

⁶⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 561:

գործուն շերտին չի պատկանում: Արդի հայերենում համագործածական տարբերակը *գոհն* է:

Նախճիր բառը պահլավական է՝ *naxčir* ձևից: Ըստ Հր. Աճառյանի՝ նշանակում է մեծ կոտորած (պատերազմի մեջ՝ կենդանիների և մարդկանց)⁶⁷: Գ. Ջահուկյանը նույնպես նշում է, որ պահլավական ծագման է: Այս բառի բաղադրության մեջ տրված է հետևյալ տեղանունը՝ *Նախճրաձոր*⁶⁸: Բառն այլևս չի պատկանում բառապաշարի գործուն շերտին:

Հրաման և **պատուէր** բառերը հոմանշային գույգ են կազմում: Կանդրադանյանք նաև **հրամայել**, **պատուիրել** բայերին, որոնք նույնպես հաճախագործածական են մեր ուսումնասիրած երկրում: Պահլավական *framān* «*հրաման*» բառից է, հիշատակված է նաև *farmān* ձևը: *Farmān*-ը փոխառությամբ տարածված է շատ լեզուներում՝ թուրքերեն՝ *ferman*, լեհերեն ու ռումիներեն՝ *ferman*, ֆրանսերեն՝ *firman*. «Առ ի նշ է քո այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չեւանէ ըստ քո հրաման, և չոնք կան քեզ ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ» (էջ 84): *Հրաման*-ը ներկայումս էլ ունի լայն կիրառություն, հիմնականում՝ պաշտոնական, վարչական ոճերում: Բառապաշարի գործուն շերտին է պատկանում: **Հրամայել**՝ «*հրաման տալ*»: Պահլավական *framāy* ձևից է: «*Յայնժամ ևս առաւիլէ գայրագնեցաւ ի վերայ նոցա, և հրամայեաց գմահու գան հարկանել*» (էջ 374):

Պատուէր նշանակում է *հրաման*, *ծանուցում*: Պահլավական ծագում ունեցող բառ է՝ *ptvid* «*ծանուցում, յայտարարել*»⁶⁹. «*Ձայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին, և պատուէր սաստի ի վերայ դնէր ամենեցուն*» (էջ 36): Գ. Ջահուկյանը նույնպես իրանյան ծագման է համարում: **Պատուիրել**-ը Գ. Ջահուկյանի «Ստուգաբանական բառարանում» տրված է պատուէր բառի բաղադրությունների մեջ, բերենք դրանցից մի քանիսը՝ *պատուիրել*, *հայրապատուէր*,

⁶⁷ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 422:

⁶⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 560:

⁶⁹ Նույն տեղում, էջ 49:

տիրապատուէր⁷⁰: «Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութեամբ» (Էջ 51):

Պատուէր-ը ներկայումս տարածված է, սակայն՝ ոչ որպէս ռազմաբառ: Արդի արևելահայերենում բովանդակային պլանի փոփոխությամբ է հանդես գալիս: Անհրաժեշտ է նշել նաև ուղղագրական զարգացումը՝ ու-ն դարձել է *ւ*, է-ն՝ *ե*:

Ուխտ բառը պահլավական *uxt ձևից է, *uxti՝ «խոսք, բան»⁷¹. «Եւ իբրև ետես, եթէ հաստատուն կացին Հոռոմք յուխտին իւրեանց, զոր եղին ընդ նմա, և դադարեցին Խայլդուրք ելանել ընդ պահակն Ճորայ» (Էջ 24): Ուխտ բառի ստուգաբանությամբ Գ. Զահուկյանը համաձայն է Հր. Աճառյանի հետ: Այս բառի բաղադրության մեջ տրվում են հետևյալները՝ ուխտել, ուխտաւոր, ուխտադրութ⁷²: Արդի արևելահայերենում այն առավել հաճախ կիրառական է բարձր ոճերում, իսկ շատ ավելի տարածված է հոմանիշը՝ *դաշինք*:

Այժմ ստուգաբանության ենթարկենք պաշտոնյաների անվանումներ, որոնք հանդիպել ենք երկում, դրանք են՝ **հազարապետ, համհարզ, մարզպան, սպարապետ, նախարար, իշխան, պահապան, ռստիկան, անդերձապետ, համբարակապետ, դահճապետ**:

Հազարապետ-ը պարսիկ պաշտոնյա է: Պահլավական փոխառություն է. hazārapet ձևից է առաջացել: Հր. Աճառյանը նշում է, որ պարսից մեջ հազարապետը բարձրագույն տիտղոսներից մեկն էր. այսպէս էին կոչում Բիւրուց Անմահից գնդի տասը հրամանատարներին, որոնցից յուրաքանչյուրը հազար զինվոր ունեին⁷³: Բերենք բնագրային օրինակ՝ «Եւ եւս չարագոյն հինդերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին» (Էջ 46): Սույն բառը վերացել է հայերենի գործուն բառապաշարից: Հայ-պարսկական հարաբերությունների ավարտից հետո այս միավորը դուրս մղվեց հիմնական բառաֆոնից: Հաջորդ բառը **համհարզ**-ն է: Հր. Աճառյանը նշում է hamharz՝

⁷⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 628:

⁷¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 593:

⁷² Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 748:

⁷³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 6:

«թիկնապահ», իրանյան ծագման բառ է⁷⁴: Գ. Ջահուկյանը նույնպես այն համարում է իրանական ծագման բառ: Բնագրային հատվածը հետևյալն է՝ «*Ձոր և ձեր ոմն քաջ յիմաստնոցն ասաց, եթէ Միհրն աստուած մայրածին էր ի մարդկանէ, և թագաւոր աստուածազաւակ է, և համհարզ քաջ եւթներորդաց աստուածոց*» (էջ 70): Այն արդի արևելահայերենում չունի կիրառություն, կիրառելի է հումանիշ տարբերակը՝ *թիկնապահ*, որը այդքան էլ համագործածական բառ չէ, կիրառվում է որոշ դեպքերում:

Մարզպան-ը պահլավական *marzšpān ձևից է առաջացել, պարսկական *marzbān «սահմանակալ, կուսակալ», որի marzwān ձևից են գալիս համապատասխան նորագույն *մարզուան*, *մարզաւան* ձևերը: Այս բառը պարսկերենից փոխառել են այլ լեզուներ՝ ասորական marzbānā, արաբական marzubān⁷⁵: Բնագրային կիրառության օրինակ բերենք. «*Արդ դու որ մարզպանդ ես աշխարհիս*» (էջ 122): Հիշյալ կազմությունն այսօր դուրս է մղվել հիմնական բառապաշարից, արդի լեզվում կիրառական տարբերակը *մարզպետն* է, որը պետության վարչատարածքային բաժանման՝ մարզի կառավարիչն է: Համագործածական բառ է, պետական կառավարման իրավական եզրույթ:

Սպարապետ՝ պահլավական spāhpat՝ «սպարապետ» բառից է⁷⁶: Գ. Ջահուկյանը, հետևելով Հր. Աճառյանի ստուգաբանությանը, բերում է հետևյալը՝ spāzapatī ձևը: «*Խորհուրդ արարեալ ի գիշերի միում ամենայն ուխտին բազմութեամբ՝ կոչեցին զսպարապետն զօրուն ի խորհուրդն*» (էջ 128): Այս բառի բաղադրության մեջ տրվում են հետևյալ բառերը՝ *սպարապետութիւն*, *սպարապետական*⁷⁷: Արդի արևելահայերենում այն չի մտնում լեզվի գործուն բառաշերտի մեջ, բարձր ոճի միավոր է, կիրառում են հատուկ անձանց հիշատակելիս, ովքեր պատմության մեջ մեծ հետք թողած ռազմական նշանավոր առաջնորդներ են եղել:

⁷⁴ Նույն տեղում, էջ 27:

⁷⁵ Նույն տեղում, էջ 282:

⁷⁶ Նույն տեղում, էջ 263:

⁷⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 692:

Նախարար-ը իրանյան ծագման է՝ nāfāzāra ձևից: *Նախարար*-ը իշխանական աստիճան է հին հայոց մեջ⁷⁸. «*Ի խորհուրդ մտին նախարարն երեքեան, և սկսան զարմանալով ասել ցմիմեանս*» (Էջ 362): Այսօր այն համագործածական բառ է, *նախարար* են կոչում պետության գործադիր իշխանության կառույցների՝ նախարարությունների ղեկավար, գլխավոր պաշտոնյային:

Իշխան-ը առաջացել է իրանյան xšāna ձևից⁷⁹: Գ. Ջահուկյանը համակարծիք է Հր. Աճառյանի այս ստուգաբանությանը: Լեզվաբանը բերում է բաղադրություններ, որոնց հիմքում *իշխան* բառն է՝ *իշխանական, իշխանություն, անիշխանություն*⁸⁰: Այս միավորը ներկայումս չունի գործուն կիրառություն, քանի որ իշխանական կարգերը վերացել են: Բերենք բնագրային օրինակ՝ «*Նա և որ մեծ իշխանն էր, զոր և Հարկշողմ Շապուհ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն, մեծապէս զուր սիրոյ էարկ առ ամենեսեան*» (Էջ 394): Նշենք, որ այս արմատից կազմված բայը՝ *իշխել*, և վերացական գոյականը՝ *իշխանություն*, համագործածական պետաիրավական եզրույթներ են:

Պահապան բառը իրանյան է.*pāhrapān ձևից է առաջացել⁸¹: Գ. Ջահուկյանի «Ստուգաբանական բառարան»-ում *պահապան*-ի բաղադրության մեջ տրված են հետևյալ բառերը՝ *պահապանապետ, պահապանություն, պահպանել*⁸²: Բնագրային օրինակը հետևյալն է. «*Իսկ ի չորրորդում ատուրն երկուք ի պահապանացն չարաչար լլկեցան ի դիւէ*» (Էջ 362): Արդի լեզվում այն ունի որևէ անձի կամ կառույցի պաշտպանողի՝ *պահպանողի* իմաստ: Ունենք *պահապան կանգնել, պահապան հրեշտակ* կապակցությունները:

Ոստիկան-ը պահլավական փոխառություն է: Ōstikān ձևից է առաջացել, նաև՝ ōstiyān, որ նշանակում է «*հաւատարիմ, վստահե-*

⁷⁸ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 420:

⁷⁹ Նույն տեղում, էջ 246:

⁸⁰ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 286:

⁸¹ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 12:

⁸² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 617:

լի»։ Հին հայոց մեջ հավատարիմ էին կոչվում թագավորին մոտ պաշտոնյաները⁸³։ Բերենք բնագրային հատված. «Ո՛չ զիս նստիկան արարին ի վերայ ձեր երկոցունցդ» (եջ 364)։ Արդի արևելահայերենում *նստիկան*-ը բառապաշարի գործուն բառաշերտին պատկանող բառ է։ *Ոստիկան* են կոչում իրավապահ առաջնային մարմնի՝ ներքին գործերի կառույցի՝ *նստիկանության* համապատասխան պաշտոնյային։

Անդերձապետ բառը պահլավական ծագման է։ Իրանյան՝ andarzpat՝ «օգնական, խորհրդական»։ Հին պարսից մեջ այսպիսի խորհրդականներ կային նահանգապետերի, հրամանատարների կողքին⁸⁴։ Նույն կարծքին է Գ. Զահուկյանը։ Բերենք բնագրային օրինակ. «Ետ պատասխանի Սովան անդերձապետ և ասէ ցնոսս» (եջ 332)։ Այժմ այս բառը դուրս է մղվել գործուն բառապաշարից, պատմաբար է։

Համբարակապետը պետական համբարանոցի պետն է։ Պահլավական anbarakpat՝ «համբարակապետ» բառից է։ Նշվում է, որ այն կոչվում է նաև *բանտապետ*⁸⁵։ Գ. Զահուկյանը *համբարակապետ*-ի համար տալիս է հետևյալ բացատրությունները՝ «*մթերանոցապետ, մատակարար*»⁸⁶։ Նոր հայկազյան բառարանում ունենք վկայված նաև (*հ*)*ամբար* ձևը⁸⁷. նշանակում է *մթերանոց, շտեմարան*։ Մեջբերենք բնագրից. «Հրամայեաց համբարակապետին, որում անունն էր *Դենշապուհ*»։ Ներկայումս հիշյալ բառը հնաբանություն է, քանի որ այդպիսի պաշտոն մեր օրերում գոյություն չունի։ *Բանտապետը* կիրառական է։

Դահձապետ բառը Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում տրվում է *դահիճ* բառի բաղադրության մեջ։ Պահլավական բառ է, նշանակում է *անզույթ բռնակալ*։ *Dahič ձևից է առաջացել⁸⁸։ Ներկա-

⁸³ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 570։

⁸⁴ Նույն տեղում, էջ 188։

⁸⁵ Նույն տեղում, էջ 23։

⁸⁶ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 442։

⁸⁷ **Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 54։

⁸⁸ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 615։

յումս այն հնաբանությունն է որպես եզրույթ, քանի որ մահապատիժը շատ պետություններում վերացված է կամ իրագործվում է շատ ավելի քաղաքակիրթ տարբերակներով, թեև մահմեդական երկրներում այս մասնագիտությունը դեռ գործում է: Բերենք Եղիշեի պատմությունից բնութագրական օրինակներ. «*Եւ քանզի կասկած ունէր տակաւին ի նոցուն ի դահճացն*» (էջ 364): Բերենք *դահճապետ* բառից օրինակ՝ «*...ն զգուշութեամբ հրաման տուեալ դահճապետին*» (էջ 96):

Նախարարագն միավորը պահլավական է, ինչպես նշեցինք վերևում՝ *նախարար*-ը պահլավական ծագման է: Քննենք *ազն*-ը. *ազն*-ը փոխառություն է իրանական աղբյուրից՝ *zan* «ծնել» ձևից: Ըստ Զահուկյանի՝ նշանակում է *սերունդ, ցեղ, ազգ, տեսակ*⁸⁹: Մեջբերենք բնագրից. «*...սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարագունք*» (էջ 390): Բառն այլևս պատմաբառ է, պատկանում է բառապաշարի ոչ գործուն շերտին: Կիրառելի է հատուկ դեպքերում, երբ որևէ պատմական ժամանակաշրջան է նկարագրվում: Դարձել է բարձր ոճի միավոր:

Անցնենք **ստամբակ, ստամբակել** բառերի ստուգաբանությանը. ըստ Հր. Աճառյանի՝ *ստամբակ* նշանակում է *ըմբոստ, անհնազանդ, խիստ*: Նշում է, որ պահլավական փոխառություն է՝ *stambak* «անգութ, անարդար, նեղիչ» ձևից: Ունենք նաև *ստամբակել* բայը, որը նշանակում է *պայքարել*, տրված է *ստամբակ*-ի բաղադրությունների մեջ⁹⁰: Բնագրային մեջբերումներ. «*...ն դոքոք զստամբակսն ածգեն ի հաւանութիւն*» (էջ 168), «Մրանք ներկայումս չունեն գործուն կիրառություն, արդի հայերենում առավել գործածելի են հոմանիշ տարբերակները՝ *ըմբոստ, անհնազանդ*»:

Այժմ անդրադառնանք զինատեսակների իմաստային ենթադաշտին: Քննենք **ասպար, վահան, նիզակ, զրահ** բառերը: **Ասպար**-ը պահլավական **aspar* «վահան» ձևից է⁹¹: Ինչպես գրում է Եղիշեն. «...-

⁸⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 23:

⁹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 268:

⁹¹ Նույն տեղում, էջ 273:

զինու և ասպարաւ քով օգնեա՛մեզ» (էջ 152): *Ասպար*-ը արդի արևելահայերենում գործուն կիրառություն չունի, դարձել է պատմաբան:

Հր. Աճառյանը նշում է, որ *վահան* -ը ենթադրաբար իրանական ծագման է: Այս բառը այլ լեզուներ փոխառել են հենց պարսկերենից: Օրինակ՝ սանսկրիտում՝ *vartra*՝ «թումբ, պատնեշ»: *Var*՝ «ծածկել, բռնել, կասեցնել, պաշտպանել» բայից է⁹²: «*Ի ձեռս էառ իբրև գվահան*» (էջ 184): Հիշյալ եզրույթն այսօր ձեռք է բերել իմաստային նոր նրբերանգներ, այսօր վահանները կիրառելի են ոչ այնքան բանակում, որքան ոստիկանական զորքերում, *վահան*-ը հանրային կարգի պաշտպանության միջոցի իմաստ է ձեռք բերել: Ռազմական գործում վահանին փոխարինելու եկան այլ պաշտպանիչ միավորներ:

Երկում ունենք նաև *վահանաւոր* ձևը, որը բառարաններում տրված է *վահան* բառի բաղադրությունների մեջ: Երկից օրինակ բերենք՝ «*սոյնպես և վասն վահանաւոր հետևակացն*» (էջ 194): *Նիզակ*-ը պահլավական փոխառություն է, առաջացել է *nēzak*, *nīzag* «աշտեայ» բառից⁹³: Բնագրից հատված բերենք՝ «*Արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի*» (էջ 206): *Նիզակը* այսօր հնաբառ է, այլևս ռազմի դաշտում չկիրառվող զինատեսակ է, դուրս է մղվել բառապաշարի գործուն շերտից: *Ջրահ* բառը առաջացել է *zrāh*, *zrād*, *zrēh* ձևերից: Հր. Աճառյանը նշում է, որ սրանց նախնական ծագումը անհայտ է: Իրանյան ձևերը ցույց են տալիս, որ հայերենում *զրահ*, *զրայ*, *զրեհ* ձևերը գրչագրական խաթարումներ չեն, այլ յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին իրանական մի ձև՝ *զրահ*<*zrāh*, *զրայ*<*zrāi*, *զրեհ*<*zreh*⁹⁴: Բնագրից օրինակ՝ «*...և ագաւ զնա իբրև գզրահա*» (էջ 184):

Հիշյալ ռազմաբառը արդի լեզվում կիրառելի է՝ իմաստային որոշակի մասնավորեցմամբ:

Սաղաւարտ միավորը իրանյան փոխառություն է: Ըստ Գ. Զահուկյանի ստուգաբանության՝ առաջացել է պահլավական *sāravart(i)*

⁹² Նույն տեղում, էջ 296:

⁹³ Նույն տեղում, էջ 451:

⁹⁴ Նույն տեղում, էջ 111:

ձևից: Բառարանում տրված են հետևյալ բաղադրությունները՝ *սա-
ղաւարտաւոր, սաղաւարտել*⁹⁵: Բերենք բնագրային մեջբերում.
«...երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք» (Էջ 116): *Սա-
ղաւարտ*-ը դարձել է պատմաբան, գործածում էին ռազմի դաշտում:
Ներկայումս այն չունի կիրառություն, արդի լեզվում հանդես է գա-
լիս ուղղագրական փոփոխությամբ՝ *ւ>վ*:

Այժմ քննենք *թշնամի* բառը: *Թշնամի*-ն պահլավական *dušman*,
dušmēn՝ «թշնամի» բառից է⁹⁶: Բերենք հատված երկից՝ «*Ձի չեմ իբրև
զձեզ անագորոյն, զի անձանց ատելի էք և այլոց թշնամիք*» (Էջ 342):
Բառը համագործածական է, պատկանում է բառապաշարի գործուն
շերտին:

Գ. Զահուկյանի բառարանում *հակառակորդ* միավորը տրված է
հակ- նախածանցի բաղադրությունների մեջ: Բնիկ հնդեվրոպական
բառ է: Բերենք բնագրային օրինակ. «...*զի եղծցի թշնամին և հակա-
ռակորդն*» (Էջ 304): Այժմ այս բառն իմաստային առավել մեղմ բեռն-
վածություն ունի, արդի լեզվում մարզական ասպարեզներում առա-
վել հաճախագործածական է, քան ռազմական ոլորտում:

Երկում հաճախագործածական է *վրեժ* բառը: Առաջացել է
պարսկական *vaz* «ցատումն, բարկություն» բառից: Հր.Աճառյանը
տալիս է հետևյալ բացատրությունները՝ «ոխ, քինախնդրություն,
պատիժ»⁹⁷: «*Եւ արդար դատաւորօք վրեժ առնուն մահու չափ*» (Էջ
76): Արդի լեզվում բառն ունի մեծ տարածում, բնորոշ է ոչ միայն
ռազմի իմաստային դաշտին, այլև մարդկային հարաբերություն-
ների և զգայական ընկալումների դաշտերին ժամանակակից հայե-
րենում այն հանդես է գալիս է ձայնավորի ուղղագրական փոփո-
խությամբ՝ *է*-ն դարձել է *ե*:

Աւար-ը պահլավական *āvār*՝ «կողոպուտ» բառից է⁹⁸: Բերենք
օրինակ բնագրից. «*Չու արարեալ ի տեղուջէ անտի՝ դառնալ անդրէն*

⁹⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 665:

⁹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 191:

⁹⁷ Նույն տեղում, էջ 352:

⁹⁸ Նույն տեղում, էջ 355:

յաշխարհին Հայոց մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ» (էջ 160): Արևելահայերենում նեղ եզրույթային նշանակություն է ձեռք բերել: Ունենք բովանդակությամբ առավել հստակ՝ **ռազմավար** կազմությունը:

Հաջորդը քննենք **բանդ** բառը: Պահլավական *band «բանտ» ձևից է, նշանակում է «յանցաւորին արգիլելու տեղ»⁹⁹: Բնագրային հատված՝ «... և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս» (էջ 96): Այժմ կիրառելի բառ է, այսօր նույնպէս **բանտ**-ը կալանավայր է նշանակում:

Գռոհ -ը առաջացել է պահլավական grōh բառից: Gurōh՝ «գունդ, բանակ»¹⁰⁰: «**Գռոհ տունեալ դիմեցին ի մահ**» (էջ 61): Արդի հայերենում նեղ եզրույթային իմաստ ունի, թէև կարող է կիրառվել նաև փոխաբերական իմաստներով: Ժամանակակից լեզվում հանդես է գալիս ուղղագրական փոփոխությամբ՝ *ռ*-ն դարձել է *ր*:

Ունենք **խեթական** աղբյուրից մեկ ռազմաբայ, որին կանդրադառնանք իրանյան կազմություններից հետո: **խողխողել**-ը խեթական hulhulīia՝ «կռվում սպանել» ձևից է: Գ. Ջահուկյանը նշում է, որ քիչ հավանական է, բայց հնարավոր է այն բխեցնել հնդեվրոպական *(s)kel -կտրել արմատից, *k>*kh անցմամբ՝ որպէս կրկնավոր կազմություն¹⁰¹: Բերենք բնագրային օրինակ. «...որք **խողխողեցան յօտարութեանս**» (էջ 380): Արդի արևելահայերենում կիրառելի է *սրախողխող անել* բարդությունը, **խողխողել**-ը վերացել է բառապաշարի գործուն շերտից:

Ուսումնասիրելով Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի ռազմի և զենքի իմաստային դաշտի իրանյան ծագման միավորները՝ արձանագրում ենք՝

1. Երկում իրանյան ծագման ռազմաբառերը անհամեմատ մեծաթիվ են: Ըստ վիճակագրության՝ իրանյան են **57** բառեր:

2. Վկայված են արտահայտության և բովանդակային պլանների փոփոխություններ: Օրինակ *կարաւան*, *պատուէր*, *զրահ* բառերի

⁹⁹ Նույն տեղում, էջ 409:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 606:

¹⁰¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 339:

բովանդակային պլանը փոխվել է: Արտահայտության պլանը փոխվել է *բանդ, գրոհ* բառերում:

3. Լեզվի բառապաշարից դուրս են մղվել այնպիսի անվանումներ, որոնց մուտքը հայերեն պայմանավորված էր հայ-պարսկական երկարատև շփումներով, ռազմական աստիճանակարգության և զինվորական ուժերի համահունչ կառուցվածքով: Այսինքն՝ զինվորական հին կոչումները վերածվել են պատմաբաների: Դրանք են՝ *հազարապետ, անդերձապետ, դահճապետ* և այլն:

4. Ռազմական գործի առաջընթացի և ժամանակի ընթացքի հետ հին զինատեսակներին փոխարինելու եկան նորերը, այլևս կիրառական չեն *վահան, նիզակ, զրահ* միավորները:

5. Տարածված է էձայնավորի վերածվելը *ե-ի, ռ-ի* վերածվելը *վ-ի*, օրինակ՝ *վրէժ-վրեժ, վահանաւոր-վահանավոր, գահաւորակ-գահավորակ, աւար-ավար*:

6. Պատմական հնչյունափոխություն ևս ունենք. գրաբարյան բաղաձայն *ռ-ն, դ-ն* փոխարինվում են մեկ այլ բաղաձայնով՝ *ր-ով, տ-ով*, օրինակ՝ *գրոհ-գրոհ, բանդ-բանտ*:

1.3 Հունական փոխառություններ

Գ. Ջահուկյանը նախագրային շրջանի համար հայ-հունական լեզվական առնչությունների 4 հիմնական փուլ է առանձնացնում:

Վաղ առնչությունների փուլ (Ք.ա 5-4-րդ դդ.):

Հունական քաղաքական և մշակութային վաղ ազդեցության փուլ (Ք.ա 3-րդ դարի 30-ական թթ. - Ք.հ 1-ին դարի 60-ական թթ.):

Հռոմի քաղաքական ազդեցության ուժեղացման և հունական մշակութային ազդեցության շարունակման փուլ:

Բյուզանդական մշակութային և կրոնական ազդեցության փուլ (4-րդ դ.)¹⁰²:

Հունարենը հայերենի վրա ունեցել է իր ազդեցությունը, քանզի Հայքը ի սկզբանե եղել է հելլենիստական քաղաքակրթության և

¹⁰² Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 171:

ապա՝ քրիստոնեական գաղափարաբանությանը արժեքների դավանորդ երկիր: Զգալի թվով բառեր ենք փոխառել հունարենից, սակայն պետք է նշել, որ ռազմաբառերը սակավաթիվ են: Այժմ անդրադառնանք բառերի ստուգաբանական քննությանը:

Արքայ բառի ստուգաբանությունը հետևյալն է՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ հին հունական փոխառություն է՝ *ἀρχων*, *ἀρχιος*: Տալիս է *«թագավոր»* բացատրությունը, ինչպես նաև՝ այս բառով կազմված բաղադրությունները՝ *արքագունք*, *արքինի*, *արքիանալ*¹⁰³: Բերենք բնագրային օրինակ՝ *«Եւ այս ամենայն յերկար խռովութիւնք, որ եղեն մինչև ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի»* (էջ 400): Հիշյալ բառը բառապաշարի գործուն շերտից արդեն դուրս է մղվել, հնաբանություն է, քանի որ այսօր արքայական կառավարումը կորուսյալ է: Եթե ունի գործածություն, ապա հատուկ նշանակությամբ՝ տվյալ ժամանակաշրջանը նկարագրելու համար: Արդի լեզվում վերացել է *յ* ձայնակապը, կիրառելի է *արքա* ձևը:

Հաջորդը **կայսր** բառն է: Հունական ծագման է. Հր. Աճառյանի բացատրությամբ՝ *«ինքնակալ, թագաւոր Հռոմայեցոց»*¹⁰⁴: Բնագրային հիշատակում բերենք. *«Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկի-նոս կայսր»* (էջ 146): Բառն արդեն չունի գործուն կիրառություն: *Կայսր*-ը նս պատմաբառ է:

Անցնենք **սինկղիտոս** բառի ստուգաբանությանը, որը նշանակում է պատերազմական խորհրդատու¹⁰⁵: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *«ծէրակույտ»*, *«սենատ»*: Փոխառություն է հունական աղբյուրից՝ *σύνκλητος*¹⁰⁶: Մեջբերենք բնագրից. *«Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն»* (էջ 146): Այս բառը հայերենի գործուն բառապաշարից դուրս մղված պատմաբառ է:

Այսպիսով, ուսումնասիրելով երկի հունական ծագման *ռազմի* և *զենքի իմաստային դաշտի միավորները*, արձանագրում ենք՝ ռազմ և զենք իմաստային դաշտում հունական ծագման բառերը սա-

¹⁰³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 97:

¹⁰⁴ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 509:

¹⁰⁵ Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միլումէեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, էջ 714:

¹⁰⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 680:

կավաթիվ են: Դրանց արտահայտության և բովանդակային պլանները մնացել են նույնը: Հնչյունափոխության դեպք ունենք. *արքայ*-ի *յ*-ն ընկել է արդի լեզվում: Ըստ վիճակագրության՝ հունական ծագման երեք եզրույթ ունենք:

1.4 Ասորական փոխառություններ

Ասորական փոխառությունները հայերենում ևս զգալի են, սակայն *ռազմի* և *զենքի* իմաստային դաշտի միավորները մեծաթիվ չեն: **Ասորերենի** ազդեցությունը հայերենի վրա ունի իր շրջափուլերը: Այն կարելի է բաժանել չորս շրջանի՝

✓ Նախնական շրջան. սա այն շրջանն է, երբ ասորիները կազմում են Հայաստանի հարավային գավառների ազգաբնակչության մեծամասնությունը (Ն. Ք. Ա դար):

✓ Քրիստոնեական քարոզչության շրջան. սա այն շրջանն է, երբ հայկական եկեղեցու ծիսական լեզուն ասորերենն է (Գ-Դ դար):

✓ Մատենագրական շրջան. սա այն շրջանն է, երբ Եղեսիո դպրոցը հյուրընկալում է հայ ուսանողներին և ասորական եկեղեցական կարևորագույն գործերը թարգմանվում են հայերեն (Դ-Ե դար):

✓ Անկման շրջան, երբ ասորիները, իրենց ազդեցությունը կորցրած, ապրում են հայերի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելով, փնտրելով ու պաշտպանելով հայերի պաշտպանությունը¹⁰⁷:

Ստուգաբանենք **բերդ** բառը: Ասորական bi-ir-ti կամ bi-ir-tu «բերդ, ամրոց ձևից է¹⁰⁸: «... և մնացեալքն անկցին ի **բերդս** ամուրս» (Էջ 96): Բառը ներկայումս կիրառվում է *պատմամշակութային կառույց* իմաստով: Բարձր ոճի բառ է:

Սուսեր-ը ասորական բառ է՝ safsērā «սուր» բառից է¹⁰⁹: Օրինակ բնագրից՝ «Եւ քանզի **սուսեր քնդ մէջ ածեալ նստեր յատենի**» (Էջ 356): Բառն համագործածական չէ, բարձր ոճերում է կիրառվում:

¹⁰⁷ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, Էջ 186:

¹⁰⁸ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Էջ 442:

¹⁰⁹ Նույն տեղում, Էջ 252:

Ուսումնասիրելով երկի ասորական ծագման *ռազմի և զենքի իմաստային դաշտի միավորները*, արձանագրում ենք՝ ունենք բառ, որը արդի հայերենում ունի նաև այլ բովանդակություն, օրինակ *բերդ*-ը ընկալվում է ոչ միայն որպես հատուկ պաշտամանաշակության կառույց, այլ նաև՝ *կալանավայր* իմաստով: Մուսեբ-ը լեզվի պատմական զարգացման ընթացքում դարձել է բարձր ոճի բառ:

Ըստ վիճակագրության՝ ասորական է 2 բառ, երկուսն էլ պարզ արմատական բառեր են:

1.5 Արաբական փոխառություն

Մեր ուսումնասիրած երկում ունենք ընդամենը մեկ արաբական փոխառություն, որը բացատրելի է ժամանակաշրջանով, հայարաբական լեզվական և պետական փոխառնչություններ հետագա դարերում զարգացում ապրեցին: Եղիշեի ատմության մեջ վկայված է *հաւալոց* բառը, որը նշանակում է *թաքստոց*, արաբական *havāla* բառից է առաջացել¹¹⁰: Մեջբերենք բնագրային նախադասությունը. «*Իսկ նա յամրածածուկ հաւալոցէն ճեպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից*» (էջ 150): Հայերենի բառապաշարից դուրս մղված բառ է, թերևս դիպվածային գործածության: Արդի հայերենի տարբերակը՝ *թաքստոցը* համագործածական է և՛ որպես ռազմական եզրույթ, և՛ որպես ընդհանուր բառապաշարի միավոր:

1.6 Խառնանդամ բառեր

Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում *ռազմական գործ և զենք* նշանակող բառերի մեջ կան խառնանդամ (հիբրիդային) միավորներ: Խառնանդամ են այն բառերը, որոնց բաղադրիչները ծագմամբ տարբեր են: Եղիշեի պատմության մեջ խառնանդամ ռազմաբառերը մեծաթիվ չեն: Այժմ կներկայացնենք այդ բառերը՝ մեր իմաստային դաշտին համապատասխան:

Ջորազուխ բառի երկու բաղադրիչները տարբեր ծագում ունեն, *գորը*՝ իրանյան, *զուխ*-ը՝ բնիկ: Գ. Ջահուկյանը նշում է, որ *զուխ*-ը

¹¹⁰ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 67:

բնիկ հնդեվրոպական *ghōlu- kхо- «գլուխ» արմատից է¹¹¹: (*Զորագլուխ* բառը արդի հայերենում ենթարկվել է հնչյունական փոփոխության, այդ մասին առավել մանրամասն կխոսենք համապատասխան բաժնում): Բերենք բնագրային օրինակ՝ «*Կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զգորագլուխն յաղթութեան*» (էջ 10): Այժմ այն հայերենի բառապաշարի ոչ գործուն շերտին պատկանող հնաբանություն է:

Հաջորդ բառը *կողմնապահ*-ն է: Հր. Աճառյանը նշում է, որ *կողմ*-ը բնիկ է¹¹², *պահ*-ը իրանյան ծագման է: Մեջբերում բնագրից. «...*կողմնապահօր ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս հայրենի աշխարհին*» (էջ 160):

Անդրադառնանք *վերջնապահ*, *առաջապահ* բառերին: *Վերջնապահ*-ի բաղադրիչներից *վերջին*-ը՝ բնիկ հնդեվրոպական է, իսկ *պահ*-ը՝ իրանյան: *Առաջապահ* խառնանդամ բառը բաղկացած է *առ* և *աջ* հնդեվրոպական բաղադրիչներից, և *պահ*՝ իրանյան բաղադրիչից¹¹³: Բերենք բնորոշ օրինակ՝ «...*առաջապահօր և վերջապահօր, կողմնապահօր ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս հայրենի աշխարհին*» (էջ 160):

Նիզակակից բառը խառնանդամ է: Կազմված է երկու բաղադրիչներից՝ *նիզակ*՝ իրանյան, և *կից*՝ բնիկ: Բերենք բնագրային հատված՝ «*Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ*» (էջ 204): *Քաղաքապետ*-ը բաղկացած է *քաղաք* և *պետ* բաղադրիչներից: *Քաղաք*-ը ասորական փոխառություն է, իսկ *պետ*-ը՝ իրանյան: Ներկայումս այն ունի լայն կիրառություն, մեր ժամանակներում քաղաքային գործերի կառավարչին *քաղաքապետ* են անվանում:

Դիակապուտ-ը բաղկացած է *դի* և *կապուտ* միավորներից. *դիակապուտ*-ը պատերազմի ընթացքում մեռած զիվորներից ավար հավաքողներն են. «*Յայնմ ժամանակ գորքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին՝ դիակապուտ դառնային*» (էջ 154): *Դի*-ն բնիկ հնդեվրոպական բառ է՝ *dhiu̯to- dhuēi հիմքից¹¹⁴: *Կապուտ*-ը իրա-

¹¹¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 163:

¹¹² Նույն տեղում, էջ 417:

¹¹³ Նույն տեղում, էջ 72:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 198:

նյան փոխառություն է, նշանակում է *կողոպուտ, ավար, կողոպտված*¹¹⁵: Արդի հայերենում գործուն կիրառություն չունեցող բառ է:

Հաջորդը *բանակակից*-ն է: Կազմված է *բանակ*՝ իրանյան և *կից*՝ բնիկ հնդեվրոպական բաղադրիչներից, բերենք բնագրային հատված. «...*զի իցենք բանակակից*» (էջ 348): *Բանակակից* ռազմական գործում կիրառելի, համագործածական բառ է:

Այս ենթագլխում անդրադարձանք մեր ուսումնասիրած իմաստային դաշտի խառնանդամ միավորներին:

Ըստ վիճակագրության՝ 8 խառնանդամ բառ ունենք:

1.7 Անհայտ ծագման բառեր

Մեր հետազոտության այս հատվածում կանդրադառնանք անհայտ ծագման բառերին: Երկում կան ռազմաբառեր, որոնց ծագումը կա՛մ անհայտ է, կա՛մ լեզվաբանների կողմից խիստ տարբեր ուսումնասիրությունների է արժանացել: Մեր ստուգաբանության համար առաջնային ենք համարում Գ. Ջահուկյանի ստուգաբանական մեկնաբանությունները: Անհայտ ծագման միավորները մեծաթիվ չեն:

Սկսենք ռազմի դաշտում անհրաժեշտ որակ նշանակող *քաջ* բառից: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *քաջ*-ն անհայտ ծագման է: Բաղադրությունների մեջ տրվում են հետևյալ բարդությունները՝ «*քաջաբան, քաջալերել, քաջանուն*»¹¹⁶: Բերենք բնագրային հիշատակություն «*Եւ իբրև լուաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել ևս փութացաւ ուսանել՝ թէ քանի՞ք իցեն պարագրլուխք քաջ նահատակացն*» (էջ 194): Երկում պատմիչը հաճախ է կիրառել *քաջալերել* բայը, որը, ինչպես նշեցինք վերևում, տրվում է *քաջ*-ի բաղադրությունների մեջ: Օրինակ բնագրից՝ «*Դարձեալ քաջալերել զընկերակիցսն իւր և ասէր*» (էջ 356):

Այս բառերը արդի լեզվում ևս համագործածական են, լայնորեն տարածված են տարբեր ոճերում:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 385:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 777:

Վատել բայը ըստ Հ. Աճառյանի՝ նշանակում է *զինել, զենքերը վրան կապել*, այս բացատրությունը տրված է հինգերորդ իմաստով¹¹⁷: Ինչպես Եղիշեն է գրում. «...*զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց*» (էջ 150): Արդի լեզվում իմաստափոխության է ենթարկվել: Վատել-ը ներկայումս չունի ռազմական իմաստ, կիրառվում է սոսկ *այրել* իմաստով:

Սպանանել բայը անհայտ ծագման է: Գ. Ջահուկյանի «Ստուգաբանական բառարանում» այս բառի բաղադրության մեջ նշված են հետևյալները. «*սպանել, սպանումն, մարդասպան*»¹¹⁸: Մեջբերում բնագրից՝ «... *և մեզ ի գուր սպանանել ի վերայ ամենայն վաստակոցն մերոց*» (էջ 174):

Բառն արդի արևելահայերենում պատմական հնչյունափոխության հետևանքով միջին հայերենից սկսած դարձել է *սպանել*:

Ջարդել-ը անհայտ ծագման միավոր է¹¹⁹: Բերենք բնագրից հատված. «*Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոզացն և մոզպետին ջարդեցին*» (էջ 116): Նշանակում է *կոտրել, ջախջախել*:

Ախոյեան-ը անհայտ ծագման միավոր է: Ըստ Ջահուկյանի՝ նշանակում է *առաջամարտիկ, քաջ, կտրիճ մարդ*¹²⁰: Բնագրային հատված. «*Եւ այնպէս ամենեքեան առհասարակ այր գախոյեան իւր յերկիր կործանէր*» (էջ 154): Արդի լեզվում *ե*-ն ընկել է. ունենք *ախոյան* ձևը, որը բարձր ոճի միավոր է:

Պարզն բառի մասին Գ. Ջահուկյանը ունի թեական կարծիք: Սկզբում նա հստակ նշում է, որ անհայտ ծագման է, ապա հարցական նախադասությամբ գրում է՝ *փոխառություն իրանական աղբյուրից*¹²¹: Բերենք բնագրային օրինակ՝ «...*և ի վերայ պարզնաց և բարխս առնելոյ մեզ՝ զճմարխտն կեանս կամիք հանել ի մենջ*»:

Ըստ վիճակագրության՝ 6 անհայտ ծագման բառ ունենք:

¹¹⁷ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 309:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 691:

¹¹⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 651:

¹²⁰ Նույն տեղում, էջ 27:

¹²¹ Նույն տեղում, էջ 630:

1.8 «Ռազմական գործ և զենք» նշանակող բառերից կազմված ԴՄ-ները

Դարձվածքը երկու և ավելի բառերից կազմված կապակցություն է, որի բոլոր կամ նվազագույնը մեկ բաղադրիչը ունի վերաիմաստավորում, ընդհանուր կապակցությունն օժտված է փոխաբերական և ոչ թե ուղիղ իմաստով: Գրաբարի դարձվածքային միավորները կայուն կապակցություններ չեն՝ ի տարբերություն ժամանակակից հայերենի դարձվածքների: Գրաբարում միջարկում-հավելումը բավական հաճախադեպ է¹²²: Մեր ուսումնասիրած երկի *ռազմ և զենք* իմաստային դաշտի դարձվածքներն են՝ *ռազմ առնել, գրոհ տալ, սրոյ ճարակ տալ, սրաթափ առնել, սուսեր ընդ մեջ ածել, ընդ հակառակս ելանել, վրէժ առնուլ, քաջալերս տալ, թշնամանս դնել, Աստուածամարտ լինել, պատուէր տալ, հրաման տալ*: (ԴՄ-ները և բնագրային հատվածները քննում ենք ըստ Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածքանական բառարան»-ի):

1. *Ռազմ առնել* դարձվածքը ամենակիրառականն է, բնական է երևույթը, քանի որ այս երկը հիմնականում ռազմական գործողությունների մասին է: Ըստ Ռուբեն Ղազարյանի՝ նշանակում է *բանակ դնել, ճակատ կազմել, կռվի պատրաստվել*: Բերենք բնագրային օրինակ՝ «*Ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր*»¹²³:

2. *Գրոհ տալ* նշանակում է գրոհել. «*Գրոհ տուեալ դիմեցին ի մահ*» (էջ 64):

3. *Սրոյ ճարակ տալ* դարձվածքը սրի քաշել, սրով կոտորել է նշանակում: Ներկայացնենք բնութագրական մեջբերում Եղիշեի պատմությունից, «*Սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին*» (էջ 256):

¹²² Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Զ. Հարությունյան, Գրաբարի դարձվածքանություն, Երևան, 2020, էջ 21:

¹²³ Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձվածքանական բառարան, Երևան, 2012, էջ 249: Այսուհետ կտրվեն միայն էջերը:

4. Սրաթափ առնել-ը նշանակում է *ահաբեկել, վախեցնել*: Մեր բնագրում այս իմաստներով էլ կիրառված է. «*Ահեղ քանիւք սպառնացեալ սրաթափ առնէր*» (էջ 254):

5. Սուսեր ընդ մէջ ածել դարձվածքը նշանակում է *սուրը մեջքին կապել, զինվել*: Երկում պահպանվել է դարձվածքի իմաստը. «*Սուսեր ընդ մէջ ածեալ նստէր յատենի ահ արկանելով սրբոցն*» (էջ 252):

6. Ընդ հակառակս ելանել-ի բացատրությունը հետևյալն է՝ *հակառակել, միմյանց դեմ դուրս գալ*: Եղիշեի պատմության մեջ իմաստը նույնական է. «*Եւ ընդ հակառակս ելեալ երկու որդիք նորայ ի վերայ տերութեանն կռուէին*» (էջ 96):

7. Վրէժ առնուլ ԴՄ-ի իմաստը գրաբարի դարձվածաբանական բառարանում նշվում է «*վրէժ լուծել, վրէժխնդիր լինել*» իմաստով: Բնագրում նույնպես այդ իմաստ ունի. «*Եւ արդար դատաւորօք վրէժ առնուն մահու չափ*» (էջ 260):

8. Քաջալերս տալ ԴՄ-ն կիրառված է *քաջալերել* իմաստով. «*Եւ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զնոսա*» (էջ 274):

9. Թշնամանս դնել դարձվածքային միավորը կիրառված է *թշնամացնել, թշնամի դարձնել* իմաստով, մեջբերենք բնագրային հատվածը. «*Ելեալ ի պարիսպն թշնամանս դնէր անօրինին*» (էջ 104):

10. Աստուածամարտ լինել-ը Ռ. Ղազարյանը բացատրում է *Աստծո դեմ մաչտնչել* իմաստով: Բնագրային հատված՝ «*Ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի*» (էջ 42):

11. Պատուէր տալ ԴՄ-ն գրաբարի դարձվածաբանական բառարանում նշված է *հրաման տալ, կարգադրել*: Բնագրային մեջբերում. «*Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել*» (էջ 242):

12. Հրաման տալ նշանակում է *հրամայել, կարգադրել*: Բնագրային հատվածների իմաստները համապատասխանում են դարձվածքի հիշյալ իմաստին. «*Ետ ևս հրաման յափշտակել զամենայն ինչ քրիստոնէից*» (էջ 181):

Այժմ անդրադառնանք այն ԴՄ-ներին, որոնք հիշատակված չեն Ռ.Ղազարյանի դարձուածաբանական բառարանում, բերենք բնագրից դուրս գրած հետևյալ ԴՄ-ները՝

1. Մազապուր պրծեալ ի պատերազմէն ԴՄ-ն նշանակում է հազիվ փրկվել կռվից, պատերազմից: Բերենք բնագրային օրինակ՝ «...մազապուր պրծեալ ի պատերազմէն՝ գոյժ տանէր ի մնացեալ բուն բանակն» (էջ 154):

2. Յաճիւն թաթաւել նշանակում է մինչ դիակ դառնալը մահամերձ թայրտալ. «Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճիւն թաթաւիցիք» (էջ 110):

3. Ընդ քիթսն և ընդ բերանն ելանէր նշանակում է տանջել: Բնագրային օրինակը՝ «... և ընդ քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն ելանէր» (էջ 94):

4. Յաւարի առնուլ նշանակում է ավարառել, որպես ավար բռնագանձել. «Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ գտուրք գանձս եկեցւոյն» (էջ 134):

Հիշյալ ԴՄ-ները Եղիշեի պատմության մեջ բազմակի կիրառություններ ունեն: Բերված բոլոր 16 դարձվածային միավորները պատկանում են *ռազմ և զենք* նշանակող իմաստային դաշտին:

1.9 «Ռազմական գործ և զենք» նշանակող բառերի հոմանշային շարքերը և հնչյունափոխական տարբերակները

Հոմանիշների շարքը բառերի այն խումբն է, որի մեջ մտնող բառերը իրար հետ կապված են հոմանշային հարաբերությամբ, այսինքն՝ նույնիմաստ են՝ ռճակիրառական տարբեր յուրահատկություններով: Հոմանիշների շարք եզրույթից բացի՝ բառերի այդ խումբն անվանում են նաև *հոմանիշների փունջ* կամ *հոմանիշների բույն*¹²⁴: Մեր ուսումնասիրած երկում քիչ չեն հոմանշային շարք կազմող ռազմական միավորները:

¹²⁴ Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Զ. Ա. Սուքիասյան, Մ. Հ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան, 2017, էջ 150:

Սկսենք հետևյալ շարքից. **գօր, բանակ, սպահիդ (արդի լեզվում՝ գորաբանակ), կարաւան**: Բոլորն իրանյան ծագում ունեն: Բերենք բնագրային հատվածներ հիշյալ բառերով. «*Բահիցէ գծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւնն **գօրաց** իւրոց*» (էջ 30). «*Եւ անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա՝ **բանակ** բոլորէր...*» (էջ 184). ¹²⁵. «*Ձայս ասելով քարոզ կարդայր ի մեծի **կարաւանին**, և պատուէր էր սաստիւ ի վերայ դներ ամենեցուն*» (էջ 36). «*...և ամենայն մեծի **սպահիդ** արեաց*» (էջ 56):

Ըստ Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանի՝ այս միավորներից յուրաքանչյուրի դիմաց նշված են նույն բառերը¹²⁶, այսինքն՝ սրանք հոմանիշներ են, բայց ունեն գործածության ժամանակային և ոճական սահմանափակումներ: Արդի լեզվում **սպահիդ**-ը վերացել է, այլևս կիրառական չէ, աշխարհաբար տարբերակը *գորաբանակն* է, որը բառապաշարի ընդհանուր համագործածական շերտին պատկանելուց բացի՝ ունի ռազմական եզրույթի արժեք: Այս շարքում ամենակենսունակ տարբերակը **բանակ** միավորն է: Ներկայումս որևէ պետության կամ կազմավորման զինված ուժերը կոչվում են *բանակ*, այս բառը ևս ռազմական եզրույթի արժեք ունի տարբեր որոշիչներով հանդերձ՝ *ռազմածովային բանակ, ռազմաօդային բանակ* և այլն: Ըստ Ռ. Ղազարյանի՝ բանակ միավորին հոմանիշ է նաև **կարաւան**-ը¹²⁷, սակայն այժմ իմաստի ընդլայնմամբ՝ *քարավան*-ը նշանակում է ընդհանրապես *խումբ*. արդի հայերենում հանդես է գալիս ուղղագրական փոփոխությամբ՝ *կ*-ն դարձել է *ք*, *ւ*-ը՝ *վ*:

Գրաբարում՝ **գօր**, արդի հայերենում՝ **գորք**, նույնպես հաճախակիրառական բառ է ժամանակակից լեզվում, մանավանդ՝ ռազմական բառապաշարում:

¹²⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 547:

¹²⁶ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 2009թ., էջ 307:

¹²⁷ Տե՛ս **Ռ. Ղազարյան**, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, 2006թ., էջ 144:

Ռ. Ղազարյանը *քանակ* միավորի համար նշում է հետևյալ հոմանիշները՝ *բազմություն, խումբ, գունդ*¹²⁸։ Որոշ վերապահումով՝ **գունդ** միավորը նույնպես կարող է համալրել այս շարքը, թեև *գունդ*-ը նշանակում է զորքի բաղադրիչ, այսինքն՝ ունենք մասի և ամբողջի իմաստային հարաբերակցություն։

Անցում կատարենք մյուս կարևոր հոմանշային շարքին, որն առանձնացրել ենք Եղիշեի պատմության մեջ։ Հոմանշային զույգ են կազմում **հազարապետ** և **անդերձապետ** միավորները։ Բերենք բնագրային օրինակներ՝ «*Եւ էւս չարագոյն հինդերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին*» (էջ 46). «*Ետ պատասխանի Սովան անդերձապետ և ասէ ցնոսա*» (էջ 332)։ Ռ. Ղազարյանը *հազարապետ* բառի համար իբրև հոմանիշ նշում է *հրամանատար* բառը¹²⁹։ Ա. Սուքիասյանը *հազարապետ* բառի դիմաց առաջին իմաստով նշում է *անդերձապետ*, բացատրում է՝ անդերձապետը սասանյան դարաշրջանում արքունի գործակալ է եղել¹³⁰։ Երկու միավորներն էլ պարսկական պաշտոնյաների անվանումներ են եղել, դրանք այսօր պատմաբանք են։

Մյուս հոմանշային զույգը՝ **վահան** և **ասպար** ռազմաբանքն են. ըստ Ռ. Ղազարյանի՝ սրանք անմիջական, հիմնական հոմանիշներ են։ *Վահան* միավորի համար լեզվաբանը նշում է նաև *վահանակ* հոմանիշը¹³¹, իսկ *ասպար* բառի համար միակ հոմանշային տարբերակը՝ *վահան*¹³²։ Բերենք բնագրային մեջբերումներ. «*Ի ձեռս էառ իբրև գվահան*» (էջ 184), «*...զինու և ասպարաւ քով օգնեա մեզ*» (էջ 152)։ Այս ռազմական նշանակություն ունեցող միավորները դուրս են մղվել հայերենի գործուն բառաշերտից։ *Վահան*-ը ինչ-ինչ դեպքերում կիրառելի է, գրաբարում և արդի շրջանում նաև դարձել է ակտիվ կիրառություն ունեցող մարդանուն՝ *Վահան*։

¹²⁸ Նույն տեղում, էջ 144։

¹²⁹ Նույն տեղում, էջ 396։

¹³⁰ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 564։

¹³¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 624։

¹³² Նույն տեղում, էջ 101։

Հոմանշային շարք են կազմում **բանդ** (արևել.՝ բանտ), **բերդ** բառերը: Առաջինը՝ իրանական աղբյուրից է, իսկ երկրորդը՝ ասորական: Բնագրային հատված. «... և մնացեալքն անկցին ի **բերդս ամուրս** և ի **բանդս անելս**» (էջ 96): Ռ. Ղազարյանը **բանտ** բառի համար որպես առաջնային հոմանիշ դիտարկում *գնդան*-ը¹³³: Իմաստները նույնն են՝ նշանակում են կալանավայր: Ա. Սուքիասյանը **բերդ** բառը նշում է որպես հոմանիշ, քանի որ ժողովրդական խոսքում կիրառական է *կալանավայր* իմաստը¹³⁴: Ըստ Ռ. Ղազարյանի՝ **բերդ** բառի առաջնային իմաստը *ամրոցն* է¹³⁵: Կիրառական են միավորներ են **բերդ**-ը և **բանտ**-ը: **Բերդ**-ը, սակայն, ժողովրդախոսակցական ոճին է պատկանում, **բանտ**-ը՝ ընդհանուր չեզոք:

Մարտ, կռիւ, պատերազմ, ռազմ բառերը գործուն հոմանշային շարք են կազմում: Այս միավորների բացատրությունը՝ *ռազմական գործում զինված ընդհարում*¹³⁶: Բնագրային հատվածներ. «*ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուին*» (էջ 16). ... և որ զօրագլուխ յորմէ կողմանէ *ռազմ մտանիցէ*». «*Եվ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ*» (էջ 200):

Բառերից առաջին երկուսը բնիկ են, իսկ վերջինները՝ իրանյան: Ռ. Ղազարյանը **ռազմ**-ը հոմանիշ է դիտարկում *մարտ* բառի համար¹³⁷, սակայն այս փաստին վերաբերում ենք որոշ վերապահումով՝ ըստ մեզ՝ **ռազմ**-ի հասկացական, իմաստային դաշտը ավելի մեծ է, քան սոսկ *պատերազմ* կամ *մարտ* նշանակելը: *Պատերազմ*-ը և *կռիւ*-ը (ժամանակակից հայերենում՝ լսվ) այժմ համագործածական են, բայց *մարտ*-ը հիմնականում կիրառվում է բարձր ոճում:

Եղիշեի պատմության մեջ հաճախ հանդիպող հոմանիշներ են **ամուր** և **բերդ** միավորները: *Ամուր*-ը բնիկ հնդեվրոպական է,

¹³³ Նույն տեղում, էջ 146:

¹³⁴ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 143:

¹³⁵ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 163:

¹³⁶ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 917:

¹³⁷ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 470:

բերդը՝ ասորական: Հատված բնագրից. «Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին» (Էջ 42): Ըստ Ռ. Ղազարյանի՝ այս միավորները հոմանիշներ են¹³⁸: **Ամուր**-ը արդի հայերենում հնչունափոխությամբ դարձել է *ամրոց*, որը նշանակում է պաշտպանողական ամրություն: Այս երկու բառերն էլ դարձել են պատմաբաներ, բերդը ժողովրդական խոսքում ունի նաև այլ իմաստ՝ բանտ, որի մասին վերը նշեցինք:

Այժմ անցնենք հաջորդ հոմանշային փնջին՝ **իշխան, նախարար, առաջնորդ**: Առաջին երկուսը իրանյան ծագման են, իսկ երրորդը՝ բնիկ: Բերենք բնագրային հատվածներ. «Ի խորհուրդ մտին նախարարքն երեքեան, և սկսան զարմանալով ասել ցմիմեանս» (Էջ 362). «Նա և որ մեծ իշխանն էր...» (Էջ 394). «Թեպետ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ» (Էջ 148): **Իշխան** բառի դիմաց *նախարար*-ը հոմանիշ նշելիս Ա. Սուքիաս-յան գրում է՝ *Հին Հայաստանում ժառանգական կալվածատեր, տոհմապետ*¹³⁹: **Առաջնորդ** միավորը անմիջականորեն հոմանիշ չէ¹⁴⁰: Այն նշված է բառարանում, քանի որ դեկավար, առաջին դեմք իմաստով առնչություն ունի *իշխան* և *նախարար* միավորների հետ: **Նախարար** բառի իմաստի տակ *իշխանը* բացատրվում է հետևյալ կերպ. «Հին Հայաստանում որևէ գավառի՝ երկրամասի տեր»¹⁴¹, այն կարելի է համարել պատմական հոմանիշ: Ռ. Ղազարյանը **նախարար** բառի համար նշում է հետևյալ հոմանիշները՝ *սատրապ, աւագ, իշխան, շահապ*¹⁴²: Այժմ *նախարար*-ը որևէ նախարարություն գլխավորող կառավարության անդամն է: **Իշխան**-ը դուրս է եկել բառապաշարի համագործածական շերտից, իսկ *առաջնորդ*-ը կիրառելի է իմաստային յուրահատուկ բեռնվածությամբ՝ դեկավար, գլուխ, առաջամարտիկ:

Երկուսն ունենք **պահապան** և **ռստիկան** բառերը: Բերենք բնագրային մեջբերումներ. «Իսկ ի չորրորդում աւուրն երկուք ի պահա-

¹³⁸ Նույն տեղում, էջ 19:

¹³⁹ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 370:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 88:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 813:

¹⁴² Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 522:

պանացն չարաչար լլկեցան ի դիւէ» (էջ 362). «*Ո՛հ զիս ոստիկան ա-
րարին ի վերայ ձեր երկոցունցդ»* (էջ 364): Բառարանային մակար-
դակում իբրև հոմանիշներ նշված չեն, սակայն մենք համարում ենք,
որ հոմանիշներ են, քանի որ երկու միավորների բովանդակություն-
ը համարժեք է: Ըստ Ռ. Ղազարյանի՝ *ոստիկան* միավորի հոմա-
նիշներն են՝ *վերակացու, տեսուչ, դիտապետ*¹⁴³: Ռ. Ղազարյանը
պահապան-ի համար դիտարկել է հետևյալ հոմանիշները՝ *պահ-
պանիչ, պահպանորդ*¹⁴⁴: Այսօր կիրառական է *ոստիկան*-ը, որը որ-
ևէ պետության ոստիկանության պաշտոնյան է: Երկուսն էլ իրան-
յան ծագման են, *ոստիկան*-ը դարձել է իրավաբանական եզրույթ:

Այժմ անդրադառնանք *թշնամի, հակառակորդ, ախոյեան* հո-
մանշային շարքին: Մեջբերենք բնագրից. «*Զի չեմ իբրև զձեզ անագո-
րոյն, զի անձանց ատելի էք և այլոց թշնամիք»* (էջ 342). «*...զի եղծցի
թշնամին և հակառակորդն»* (էջ 304). «*Եւ այնպէս ամենեքեան
առհասարակ այր գախոյեան իւր յերկիր կործանէր»* (էջ 154): *Թշնա-
մի*-ն և *հակառակորդ*-ը իրանյան ծագման են, *ախոյեան*-ը՝ անհայտ:
Թշնամի բառի դեպքում Ռ. Ղազարյանը իբրև առաջնային հոմանիշ
նշում է *հակառակորդ*-ը¹⁴⁵: Ա. Սուքիասյանը գրքային հոմանիշ է
համարում *ախոյեան*-ը¹⁴⁶: Արդի հայերենում *է*-ն ընկել է, ունենք
ախոյան ձևը: Ներկայումս *թշնամի*-ն է ամենակիրառական տարբե-
րակը, *հակառակորդ*-ն ունի իմաստային ավելի մեղմ բեռնվածու-
թյուն, կիրառվում է նաև մարզական և այլ՝ ոչ ռազմական ասպա-
րեզներում մրցակցություն արտահայտելու համար, իսկ *ախոյան*-ը
բարձր ոճի բառ է դարձել, արևմտահայերենում իմաստն ընդլայնվել
է, նշանակում է նաև *չեմպիոն, մարտիկ*:

Մասնակիորեն հոմանշային զույգ են կազմում *սուր* և *սուսեր*
բառերը: Բերենք բնագրային մեջբերումներ. «*...և բազմեաց իսկ ան-
դէն հասանէր վախճան մահու սրով»* (էջ 42). «*Եւ քանզի սուսեր ընդ*

¹⁴³ Նույն տեղում, էջ 556:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 574:

¹⁴⁵ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 291:

¹⁴⁶ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 347:

մէջ ածեալ նստէր յատենի» (էջ 356): Սուրբ՝ բնիկ հնդեվրոպական է, *սուսեր*-ը՝ ասորական: Ռ. Ղազարյանի բառարանում այս միավորները հոմանիշներ են¹⁴⁷, երկուսն էլ պատմաբաններ են՝ արդի իրականության մէջ ռազմում չկիրառվող միավորներ են: *Սուսեր*-ը բարձր ոճի է. ունենք Արամ Խաչատրյանի «*Սուսերով պար*»-ը, որն այսօր *սուսեր* միավորին բարձր ոճականություն է տալիս:

Հրովարտակ, հրաման, պատուէր միավորները մասնակի հոմանիշներ են: Բնագրային հատվածները հետևյալն են. «Առ ի նչ է քո այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չէլանէ ըստ քո հրաման, և Հոնք կան քեզ ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ» (էջ 84). «...և պատուէր սաստիս ի վերայ դնէր ամենեցուն» (էջ 36). «Հրովարտակս գրէր, պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ» (էջ 18): Բոլորն էլ ընդհանուր առմամբ նշանակում են *կարգադրություն, հանձնարարություն*: **Հրովարտակ**-ը պատմական բառ է՝ «թագավորագիր» նշանակությամբ¹⁴⁸: Բառերից յուրաքանչյուրն ունի վերին աստիճանի պաշտոնյայի կամ թագավորի կողմից արձակած հրամանագրի, հանձնարարության իմաստ: Ըստ Ռ. Ղազարյանի՝ այս եռյակը կարող է հոմանշային շարք համարվել¹⁴⁹: **Պատուէր** բառը արդի լեզվում *պատվեր* (ու ձայնավորը դարձել է վ, է-ն՝ է) ձևով է հանդես գալիս: Արդի լեզվում իմաստային դաշտի փոփոխությամբ է հանդես գալիս, եթե նախկինում այն ռազմաբան կարող էր դիտարկվել, ապա այժմ ռազմական գործում *պատվեր*-ը չունի հրամանի արժեք, տեղի է ունեցել իմաստի նեղացում, մասնավորեցում:

Հրամայել, պատուիրել ռազմաբայերը նույնպես հոմանիշ են, Եղիշեի երկում երկուսն էլ վկայված են. «Յայնժամ ևս առավել զայրագնեցաւ ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու զան հարկանել» (էջ 374). «Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութեամբ» (էջ 51):

¹⁴⁷ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 613:

¹⁴⁸ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 669:

¹⁴⁹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 439:

Անդրադառնանք **վրեժ, քեն** հոմանշային շարքին: Այս բառերը արդի հայերենում ուղղագրական փոփոխությամբ են հանդես գալիս՝ է>է՝ **վրեժ, քեն**: Մեջբերումներ բնագրից. «Ոչ ինչ յիշեցից ամենին գրեն վրիժուցն խնդրելոյ» (էջ 86)¹⁵⁰. «Եւ արդար դատաւորօք վրեժ առնուն մահու չափ» (էջ 76): Ռ. Ղազարյանը սրանք հոմանիշներ է դիտարկել, **վրեժ**-ի համար նշում է նաև այլ հոմանիշներ. *ռիս, պատուհաս, պատիժ, դատաստան*¹⁵¹: Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում **քեն**-ը նշված է իբրև ժողովրդախոսակցական հոմանիշ¹⁵²: Երկուսն էլ կիրառական են արդի լեզվում: Համակարծիք լինելով Սուքիասյանի այս դիտարկմանը՝ մենք նույնպես կարծում ենք, որ **քեն**-ը խոսակցական է: **Վրեժ**-ը ավելի բարձր ոճի է:

Հաճախ գործածվող հոմանշային փունջ է **սպարապետ, զորավար, զորագլուխ** բառային եռյակը: Մեջբերումներ բնագրից. «*Խորհուրդ արարեալ ի գիշերի միում ամենայն ուխտին բազմութեամբ՝ կոչեցին զսպարապետն զօրուն ի խորհուրդն*» (էջ 128). «*Կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան*» (էջ 10). «*Թերևս վասն իմ իսկ եկեալ էր մեծ զօրավարն Հայոց բազում սուրբ ընկերակցօքն իւրովք*» (էջ 312): Ռազմական այս միավորները արդի արևելահայերենում պատմաբառեր են: Ժամանակակից լեզվում **զօրագլուխ, զօրավար** բառերը ենթարկվել են ուղղագրական փոփոխությունների՝ *աւ>օ*-ն արդի հայերենում դարձել է *ռ*: Այս բառերը համագործածական չեն ժամանակակից հայերենում: Ռ. Ղազարյանը՝ **սպարապետ** և **զօրավար** բառերը անմիջական հոմանիշներ է համարում¹⁵³: **Սպարապետ** բառը մասամբ գործածական դարձավ առաջին արցախյան պատերազմից հետո. այն սկսեց կիրառվել ոչ միայն պատմական շրջանի որևէ նշանավոր, ռազմական գործչին հիշատակելիս, այլև արցախյան ազատամարտի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի

¹⁵⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ., էջ 86:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 644:

¹⁵² Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 1076:

¹⁵³ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 268:

կայացման գործում մեծ վաստակ ունեցած անձերի՝ հատկապես Վազգեն Սարգսյանի անվան հիշատակության ժամանակ՝ որպես պատվանուն:

Իբրև հոմանշային գույգ կարող ենք դիտարկել *Մատեան գունդ* և *էրամակս փղաց* կազմությունները: Բերենք հատվածներ բնագրից. «... մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն» (էջ 236). «... և բազում էրամակս փղաց յղէր ընդ նմա» (էջ 176): *Մատեան գունդը* պարսկական բանակի ընտիր հեծելազորն էր: Սրանք պատմությունից փոխանցված բառեր են, որոնք այսօր պատմաբառեր են:

«*Ռազմ և զենք*» նշանակող իմաստային դաշտում Եղիշեի պատմությունից մեր քաղած բառերը լեզվի զարգացման արդյունքում ենթարկվել են հնչյունական համակարգի փոփոխությունների:

Պատմական հնչյունափոխության հետևանքով արդի լեզվում բառավերջի *ն, յ* հնչյունները ընկել են՝ *աղեղն- աղեղ, արքայ-արքա*:

Պետք է նշել, որ գրաբարի երկբարբառները կայուն օրինաչափությամբ արդի հայերենում վերածվել են երկհնչյունների՝ *եա>յա՝ ատեան-ատյան, մատեան-մատյան*: *Իւ>յու՝ զօրութիւն-զորություն, զերութիւն-զերություն*:

Պատմական հնչյունափոխության արդյունք է նաև *ան* սոսկաձանցի անկումը՝ *սպանանել-սպանել*: Պատմական հնչյունափոխության մյուս տարածված դեպքը՝ *օ>ո*-ն է. *զօր-զորք, զօրավար-զորավար, զօրութիւն-զորություն, զօրագլուխ- զորագլուխ*:

Հնչյունափոխական մյուս երևույթը *ան*-ի անկումն է՝ *սպանանել-սպանել*:

Ունենք վկայված նաև բաղաձայնների հնչյունափոխական դեպքեր. *դ>տ՝ բանդ- բանտ*: *Ռ>ր՝ գռոհ-գրոհ*: Մնացած բոլոր հնչյունափոխությունները վերաբերում են Մ. Աբեղյանի ուղղագրական փոփոխություններին, որոնք հետևանք են խորհրդային գաղափարաբանությանը, և, ըստ էության, դարձան արևելահայերենը արևմտահայերենից բաժանելու միջոց:

Ուսումնասիրելով *ռազմական գործ և զենք* նշանակող բառերի հոմա-նշային շարքերը և հնչյունափոխական առանձնահատկությունները՝ կարող ենք արձանագրել.


1. *ռազմական գործ և զենք* նշանակող բառերով կազմվել են 16 հոմանշային շարքեր,

2. ունենք բառավերջի հինյունների անկման դեպքեր՝ *աղեղն, արքայ,*

3. գրաբարի երկբարբառները վերածվել են երկհինյունների՝ *ատեան, մատեան, զորութիւն* են,

4. դասական ուղղագրությունից՝ աբեղյանական ուղղագրության անցման ընթացքում կատարվել են մեծ փոփոխություններ՝ *ւ* տառը դուրս է մղվել՝ վերածվելով *վ*-ի, ունենք *աւ>օ>ո, է>ե, յ>հ, եա>յա, իւ>յու*: Այդ միավորներն են՝ **կոիւ, գահաւորակ, վահանաւոր, աւար, քէն, զէն, սպառազէն, վրէժ, Աստուածամարտ, զինուոր, պատուէր, ատեան, մատեան, նահատակութիւն, գերութիւն, զօր, զօրավար, զօրութիւն, զօրագլուխ** են:

Ամփոփում. Եղիշեի այս երկում *ռազմ և զենք* նշանակող իմաստային դաշտի բառերի ամենամեծ քանակը կազմում են իրանյան փոխառությունները՝ **57 բառ**, երկրորդ տեղում հնդեվրոպական մայր լեզվից առկա է **17 բառ**, ապա՝ հունական՝ **3 բառ**, ասորական՝ **2 բառ**, արաբական՝ **1 բառ**, իսթական՝ **1 բառ**: Խառնանդամ միավորները քիչ են՝ **8 բառ**, անհայտ ծագման՝ **6 բառ**:



Տրամագիր 1

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾ ԵՎ ԶԵՆՔ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Բառակազմություն» եզրույթը երկու իմաստ ունի: Առաջին իմաստով նշանակում է լեզվաբանության այն բաժինը, որը զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների ու կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի ձևավորման գործընթացն է՝ կադապարների առանձնացմամբ¹: Բառակազմական կադապարներ ասելով հասկանում ենք բառակազմական տարրերի զուգորդման եղանակները, որոնց օգնությամբ կազմվում են բաղադրյալ (բարդ և ածանցավոր) բառերը: Գրաբարի բառակազմական տարրերի զուգորդումների ամբողջ բազմազանությունը հանգեցվում է երկու գլխավոր հիմնակադապարի՝ 1) *հիմք+հիմք* և 2) *հիմք+ածանց*: Հիմքերի զուգորդությունները միմյանց հետ ընդունված է կոչել *բարդություններ կամ բարդ բառեր*, հիմքի և ածանցի զուգորդությունները՝ *ածանցավոր բառեր*: Այն կազմությունները, որոնք պարունակում են մեկից ավելի *հիմքեր+ածանց(ներ)* կոչվում են բարդածանցավոր բառեր:² Բառակազմությունն ուսումնասիրվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա մոտեցումներով: Համաժամանակյա բառակազմությունն ուսումնասիրում է լեզվի արդի փուլում գոյակցող միավորները, որոնք կարող են բացատրվել լեզվի միայն այդ շրջանում գործող օրինաչափություններով: Տարաժամանակյա բառակազմության նպատակն է բացատրել և մեկնաբանել բառակազմական օրինաչափությունների պատմական կապերը: Այդ նշանակում է՝ բառակազմական իրողությունները պետք է ուսումնասիրել իրենց պատմական զարգացման մեջ³:

¹ Տե՛ս **Ա. Մ. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն Բառագիտություն, Բառակազմություն, Երևան, 2004, էջ 219:

² Տե՛ս **Լ. Ա. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 56:

³ Տե՛ս **Ա. Մ. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Բառագիտություն, Բառակազմություն, էջ 219:

Մեր հետազոտության այս գլխում կանդրադառնանք Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում մեր քննած իմաստային դաշտի բառերի բառակազմությանը: Մեր աշխատանքը կառուցված է և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա մոտեցումների հիման վրա:

2.1 Պարզ բառեր

Պարզ են այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ հիմնական ձևությից: Դրանք կոչվում են արմատական բառեր: Գ. Ջահուկյանը առանձնացնում է կովի և պատերազմի հետ կապված և հնից եկող արմատական գոյականները, նշենք դրանք՝ *ամբարակ, աղեղ, աշտարակ, աշտե, ասպատակ, ասպար, ավար, ատրճանակ, արկ, բաբան, բանակ, բերդ, գաղութ, գեղարդ, գերի, գումակ, գումարտակ, գունդ, դաշն, դաշույն, դատաստան, դռոշ, զեն(-ք), զոր-ք, զրահ, թիրախ, թուր, եղեռն, կապարճ, կապուտ, համհարզ, հրամանատար, հրոսակ, ճոշան, մահակ, մարտ, նետ, նիզակ, պահակ, պատերազմ, պատնեշ, պատվար, ջոկ, ռազմ, ռումբ, սակր, սաղավարտ, սպա, սպասալար, սվին, սուսեր, սուր, վահան, վաշտ, տապար, տեգ, փաղանգ⁴:*

Ինչպես տեսնում ենք, այս բառերը ցույց են տալիս պատերազմողների կարգավորված հավաքական խմբեր ու քանակական ամբողջություններ, հարձակվելու ու պաշտպանվելու միջոցներ:

Ժամանակակից հայերենի՝ քննվող իմաստային խմբին պատկանող՝ հնից ժառանգած ու հաճախ պատմական բնույթի արմատական գոյականներից հիշենք *ասպետ, արքա, բամբիշ, գզիր, դահիճ, դեսպան, կայսր, կոմս, հյուպատոս, հպատակ, ճորտ, մատույակ, մարզպան* բառերը:

Վերևում նշված բառերի մեծ մասը առկա է մեր ուսումնասիրած երկում: Այժմ առանձնացնենք բնիկ, փոխառյալ, անհայտ ծագ-

⁴ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989թ., էջ 149:

ման պարզ ռազմաբառերը, որոնց հանդիպել ենք Եղիշեի աշխատության մեջ:

Դրանք հետևյալն են՝ *սուր, ամուր, նետ, աղեղն, մարտ, կռիւ, քէն, գերի, ատեան, ռազմ, պատերազմ, ապստամբ, ասպար, զօր, գունդ, մատեան, հրովարտակ, զէն, բանակ, կարաւան, գահ, նախճիր, հրաման, պատուէր, քաջ, ախոյեան, ուխտ, համհարզ, նախարար, իշխան, սուսեր, բերդ, արքայ, կայսր, դահիճ, վահան, նիզակ, զրահ, վրէժ, աւար, սաղաւարտ, բանդ, գռոհ, ստամբակ, վզուրկ, ճակատ:*

Ըստ վիճակագրության՝ ունենք **46** պարզ արմատական բառ:

2.2 Ածանցավոր բառեր՝ նախածանցավոր կառույցներ

Բոլոր լեզուներում նոր բառերի ստեղծման եղանակներից կամ միջոցներից մեկը ածանցումն է: Ածանցումը բառարմատին կամ հիմքին ածանցի կամ ածանցների կցումով նոր բառերի կերտումն է: Ածանց է համարվում բառակազմական այն ձևույթը, որը կցվելով բառարմատին կամ հիմքին, փոխում է նրա իմաստը, կազմում է նոր բառ, նոր իմաստով: Այն անկախ գործածություն չունեցող, բառային իմաստ արտահայտող բառակազմական մասնիկ է⁵:

Նախածանցները բառակազմական այն ձևույթներն են, որոնք կցվում են հիմքի կամ բառարմատի սկզբից: Հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից 5-7-րդ դարերում հունարենի նմանողությամբ կազմվել են հայերենի՝ **ապ, առ, արտ, բաղ, բաց, ենթ, հակ, համ, հար, մակ, նախ, ներ, շաղ, շար, պար, ստոր, վեր, տար, տրամ, փաղ, փար** նախածանցները: Նախածանցները կազմվել են գրաբարի լեզվական նյութի հիման վրա, օգտագործվել են գրաբարի նախդիրները, մակբայները (*նախ, յար, ստոր*), մակբայական հիմքերը (*արտ, բաց, ներ, վեր*), գրաբարյան մյուս խոսքի մասերին պատկանող արմատներ (*բաղ, հակ*)⁶:

⁵ Տե՛ս **Ա. Մ. Մուքիայան**, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Բառագիտություն, Բառակազմություն, էջ 253:

⁶ Նույն տեղում, էջ 264:

Այս հունաբան նախաձեռնանքներից մեր քննած երկուսն Վկայված են երկուսը՝ **հակ-** նախաձեռնանքը՝ **հակառակորդ** բառում և **համ-** նախաձեռնանքը՝ **համագունդ** բառում: Քանզի Եդիշեն 5-րդ դարի՝ հայոց ոսկեդարի պատմիչներից է, նրա լեզվում հունաբանություններ չկան, նշյալ նախաձեռնանքներից՝ *համ-*ի ու *հակ-*ի առկայությունը վկայում է, որ դրանք ոչ թե հունաբան, այլ *հակ-*ը՝ հայկաբան, իսկ *համ-*ը իրանյան կառույցներ են: Ըստ Ջահուկյանի՝ *համ-*ը իրանյան ծագման է՝ «hama-նույն, նման, ամբողջ, համայն»⁷. ունենք *աժանց+հողակապ+արմատ* բառակազմական կաղապարը՝ *համ+ա+գունդ*: *Հակառակորդ* բառում *հակ-*ը բնիկ հնդեվրոպական է: Անդրադառնանք նախդիրներին ևս. նախդիրները հին հայերենում նախաձեռնացային կիրառություն ունեն, դրանք կցվելով բառին նոր կառույց են ստեղծում. նշենք գրաբարի նախդիրները՝ *ի, առ, գ, ընդ, ըստ, ց*: Ռազմական եզրույթների պարագայում նախդիրներով կազմություններ գրեթե չունենք. ունենք *առաջնորդ* միավորը, որը նաև կրկնաձանցավոր է՝ *առ+ աջ+ ին+ որդ*:

2.3 Վերջաձանցավոր կառույցներ

Վերջաձանց է կոչվում բառակազմական այն երկրորդական ձևույթը, որը կցվելով բառի վերջից և նրան նոր իմաստ կամ իմաստային նրբերանգ տալով՝ կազմում է նոր բառ: Լ. Հովսեփյանը նշում է, որ բառակազմական համակարգում վերջաձանցներն ինքնին ավելի մեծ թիվ են կազմում, քան նախաձանցները, վերջաձանցավոր կազմությունների քանակի ավելացման մեջ դեր է խաղում նաև վերջաձանցների զուգորդելիությունը՝ մեկ բառը կարող է ստանալ մինչև չորս վերջաձանց, իսկ երկու վերջաձանցի զուգորդությունը բավական հաճախադեպ է, ինչը չէր կարելի ասել նախաձանցների մասին⁸: Ժամանակակից հայերենի վերջաձանցների հիմնական մասը գրաբարյան ժառանգություն է, որոշ աձանցներ բարբառային

⁷ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 18:

⁸ Տե՛ս **Լ. Ա. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, էջ 187:

ծագում ունեն և գրական լեզվին են անցել բարբառներից կամ ժողովրդախոսակցական լեզվից⁹:

Մեր ուսումնասիրած իմաստային դաշտի բառերի թվում քիչ չեն վերջածանցավոր բառերը: *Բերենք բնութագրական կաղապարները.*

1. հետևակ- ի+ետեւ+ակ (*ետ*-ը ծագում է հնդեվրոպական *pedo`* *նոք* բառից, *ետ* նշանակել է *նոք*, սակայն արդեն 5-րդ դարում *ի*-ն ձուլվել է *ետ* արմատին. երկուսն միավորը վկայված է *հետևակ* ձևով:)

2. գերութիւն-գերի+ութիւն

3. պատկանդարան-պատկանդ+արան

4. գորութիւն-գոր+ութիւն

5. նահատակութիւն-նահատակ+ութիւն

6. վահանաւոր-վահան+աւոր

7. աղեղնաւոր-աղեղն+աւոր

8. հաւալոց-հաւալ+ոց

Կան բառեր, որոնք ունեն մեկից ավել ածանցներ և այդ բառերը *կրկնածանցավոր* են.

1. առաջնորդ-առ+աջ+ին+որդ

2. զինուոր-զին(զէն)+ու+որ

3. գահաւորակ-գահ+աւոր+ակ

4. հակառակորդ-հակ+առ+ակ+որդ

Անորոշ դերբայի վերջավորությունը *Լ*. Հովսեփյանը դիտարկում է որպես ածանց¹⁰: Մենք նույնպես դրանք կդասենք ածանցավորների շարքին: Ստորև քննենք **բայերը**. քննությունը սկսենք *պարզ բայահիմք+անորոշ դերբայի ածանց* կաղապարով կազմվածներից: Այսպես՝

ջարդել՝ ջարդ+ել, պատուիրել՝ պատուեր+ել, ստամբակել՝ ստամբակ+ել, վառել՝ վառ+ել, հրամայել՝ հրաման+ել:

⁹ Տե՛ս **Ա. Մ. Մուքիայան**, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Բառագիտություն, Բառակազմություն, էջ 273:

¹⁰ Տե՛ս **Լ. Ա. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, էջ 299:

Ունենք նաև բայական ածանց ունեցող բայեր, դրանք են՝ *սպանանել, մարտնչել*: Մրանք սոսկածանցավոր բայեր են, *մարտնչել*-ը արդի հայերենում արդեն պարզ բայ է. նշ սոսկածանցը ձուլվել է բայարմատին, իսկ *սպանանել*-ը ենթարկվել է պատմական հնչյունափոխության. *ան* սոսկածանցը ընկել է:

Այսպիսով՝ ածանցավոր բառերի շարքում միավորների գերակշիռ մասը վերջածանցավորներ են:

2.4 Բարդ և բարդածանցավոր բառեր

Մեր ուսումնասիրած երկուսն առկա են նաև բարդ կազմություններ: Բարդ բառերի սահմանումը հետևյալն է. «Երկու կամ ավելի հիմնական ձևայինների կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բարդությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր»¹¹: Մ. Աբեղյանը իսկական բարդությունների հիմնական հատկանիշներ է համարում. ա) հոդակապի առկայությունը, բ) առաջին բաղադրիչի ուղղական հոլովաձևը, գ) առաջին բաղադրիչի շեշտափոխական հնչյունափոխությունը¹²:

Մեր ուսումնասիրած երկուսն ռազմի և պատերազմի հասկացույթի բառերը, ինչպես նշել էինք նախորդ ենթաբաժնում, հիմնականում պարզ են, սակայն հոդակապավոր բարդություններ ևս կան: Հայտնի է, որ հոդակապը սկզբնապես եղել է հիմնային ձայնավոր: Հոդակապը տրոհելի բառակազմական, գործառական մասնիկ է դարձել միայն հին հայերենին նախորդող հնագույն շրջանում և որպես այդպիսին սկսել է գիտակցվել հիմնային վերջաձայնավորների թուլացումից ու անկումից հետո: Գրաբարում որպես հոդակապ բացարձակ տարածում ունի ա ձայնավորը¹³: Մ. Աբեղյանը նշում է՝ թե՛ հին և թե՛ նոր լեզվի մեջ կան բառեր, որոնք կազմված են բաղա-

¹¹ Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Բառագիտություն, Բառակազմություն, էջ 232:

¹² Տե՛ս Լ. Ա. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, էջ 22:

¹³ Նույն տեղում, էջ 55:

ձայնից առաջ առանց *ա* հոդակապի¹⁴: Դրանք կոչվում են *անհոդակապ բարդություններ*:

Մեր երկում ուսումնասիրած բարդությունները հիմնականում կազմվում են գոյական խոսքի մասով: Ստորև կներկայացնենք Եղիշեի պատմության՝ հոդակապավոր և անհոդակապ բարդ ռազմաբառերը, և կտանք դրանց բառակազմական կադապարները:

1. **Այրուձի-այրուձի**՝ գոյական+շաղկապ+գոյական, բաղիյուսական կադապար է

2. **Գործակալ-գործ+ա+կալ**՝ գոյական+հոդակապ+բայսահիմք

3. **Մարտակից-մարտ+ա+կից**՝ գոյական+հոդակապ+բայսահիմք

4. **Աստուածամարտ-Աստուած+ա+մարտ**՝ գոյական+հոդակապ+գոյական

5. **Կամակար-կամ+ա+կար**՝ գոյական+հոդակապ+բայսահիմք

6. **Զորավար-զոր+ա+վար**՝ գոյական+ա+բայսահիմք

7. **Սպառազեն-սպառ+ա+զեն**՝ բայսահիմք+ա+գոյական

8. **Հազարապետ-հազար+ա+պետ**՝ գոյական+հոդակապ+գոյական

9. **Մարզպան- մարզ+պան**՝ գոյական+գոյական

10. **Սպարապետ-սպար+ա+պետ**՝ գոյական+հոդակապ+գոյական

11. **Պահապան- պահ+ա+պան**՝ բայսահիմք+հոդակապ+գոյական

12. **Անդերձապետ-անդերձ+ա+պետ**՝ գոյական+հոդակապ+գոյական

13. **Դահճապետ- դահ(ի)ճ+ա+պետ**՝ գոյական+հոդակապ+գոյական

14. **Զորագլուխ-զոր+ա+գլուխ**՝ գոյական+հոդակապ+գոյական

15. **Կողմնապահ-կողմն+ա+պահ**՝ գոյական+հոդակապ+բայսահիմք

16. **Նիզակակից-նիզակ+ա+կից**՝ գոյական+ա+բայսահիմք

17. **Քաղաքապետ-քաղաք+ա+պետ**՝ գոյական+հոդակապ+գոյական

¹⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Հատոր Զ, Երևան, 1974թ., էջ 157:

18. Դիակապուտ-դի+ա+կապուտ՝ գոյական+հոդակապ+գոյական

19. Բանակակից-բանակ+ա+կից՝ գոյական+ա+բայահիմք

20. Նախարարագն-նախարար+ազն՝ գոյական+գոյական

21. Գունդագունդ- գունդ+ա+գունդ՝ գոյական+հոդակապ+գոյական:

Արձանագրենք, որ բարդ հոդակապավոր բարդությունները մեծամասնություն են կազմում՝ *գոյական+հոդակապ+գոյական* կաղապարով:


Այժմ անդրադառնանք **բարդածանցավոր** բառերի քննությանը: Բարդածանցավոր բառերի կաղապարի առանձնահատկությունն այն է, որ նրանք կազմված են երկու կամ ավելի հիմնական և առնվազն մեկ ու ավելի բառակազմական ձևույթներից: Եղիշեի այս պատմական երկում սակավաթիվ են բարդածանցավոր կառույցները: Բերենք այդ բառերը և վերլուծենք ըստ բառակազմական կաղապարների:

Առաջապահ-[առ+աջ+ին]+ա+պահ՝ [նախածանց+գոյական+ ածանց]+հոդակապ+բայահիմք:

Վերջնապահ-[վերջ+ին]+ա+պահ՝ [գոյական+ածանց]+հոդակապ+բայահիմք:

Համբարակապետ-(հ)ամբար+ակ+ա+պետ՝ գոյական+ածանց+հոդակապ+գոյական:

Ամփոփելով նշենք՝ բարդ բառերը 21-ն են, որոնցից միայն երկուսն են անհոդակապ, իսկ բարդածանցավոր բառերը 3-ն են:



Տրամագիր 2

2.5 Կրկնավոր բարդություններ

Հարադրության մի առանձին տեսակ է նույն բառերի կրկնությունը, որով կազմվում են կրկնավոր բառեր: Կրկնվում են սովորաբար կարճ՝ միավանկ, երբեմն երկվանկ բառերը, որոնք գրվում են անջատ, երբեմն միանում են «և» (ու) շաղկապով կամ գծիկով: Մեր առանձնացրած կրկնավոր բարդությունները գոյական խոսքի մասին են պատկանում: Գոյականների կրկնություններով կազմվում են որակական ածականներ, որոնք կարող են և իբրև մակբայ գործածվել, ինչպես՝ *խումբ-խումբ, գունդ-գունդ*: Այս կրկնությունները ստանում են զանազանության, բազմակիության նշանակություն. *գունդ-գունդ զորքեր- զանազան կամ շատ գներով զորքեր*¹⁵: Երկում նույնպես վկայված է **գունդ-գունդ** կրկնավոր բարդությունը: Բերենք բնագրային օրինակ. «Եւ գունդս գունդս արձակէր յաշխարհն Սիւնեաց» (Էջ 162): 5-րդ դարի այս երկում նշյալ բարդությունը վկայված է առանց գծիկի, այժմ ունենք գրության ձևի ուղղագրական փոփոխություն՝ գրվում է գծիկով:

Կցական բարդություն կրկնավորներից: Բառերի կրկնությունները հաճախ միացվում են գծիկով, բայց հայերենում ունենք բավական թվով կրկնավոր բառեր, որոնք գրվում են միացյալ՝ իբրև մի

¹⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 146:

բառ¹⁶: Մեր ուսումնասիրած երկում ունենք **գունդագունդ** ձևը, բերենք բնագրային օրինակ. «Շարժեա՛ն դողացո՛ւ գգունդագունդ՝ բազմութիւն անօրինաց»¹⁷: Մ.Աբեղ-յանը նշում է, որ այն գրաբարից եկած կրկնավոր է, որը իսկական բարդության ձևով է հանդես գալիս (ուստի այն վերլուծել ենք նաև նախորդ բաժնում)¹⁸:

Գ. Զահուկյանը նշում է, որ կրկնությունը, ըստ իր բաղադրիչների հետ ունեցած գործառական հարաբերության, կարող է լինել *համագործառական* և *փոխգործառական*: Առաջին դեպքում կրկնությունն ունի խոսքիմասային այն արժեքը, ինչ նրա բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ *կրկնյալը*: Երկրորդ դեպքում առկա է խոսքիմասային փոխանցում՝ տեղաշարժ մի խոսքի մասից մյուսը: Լեզվաբանը նշում է, որ կրկնությունը կարող է *համագործառական* լինել բոլոր խոսքի մասերի դեպքում. մենք մեր երկում ունենք *գունդ-գունդ*-ը, որը ասվածի օրինակն է: *Փոխգործառական* կրկնության օրինակ է գոյական→ մակբայ՝ *գունդագունդ* ձևը, որը նույնպես ունենք երկում¹⁹:

Երկում ունենք նաև կրկնավոր բայ՝ **խողխողել**-ը: Կրկնավոր կամ կրկնական բայերը ցույց են տալիս գործողության կրկնություն կամ բազմապատկություն. կազմվում են արմատի կրկնությամբ, իսկ հարադրական բայերի դեպքում հարադիրն է կրկնվում²⁰: Մեր երկում ունենք արմատի կրկնությամբ կազմված բայ: Բերենք բնագրային մեջբերում *խողխողել* բառով. «...որք խողխողեցան յօտաբութեանս» (Էջ 380): Արդի արևելահայերենում այն պատմաբառ է, կիրառական է *սրախողխող* տարբերակը, որը բառապաշարի գործուն շերտին չի պատկանում:

Արձանագրենք՝ Եղիշեի այս պատմական երկում կրկնավոր բարդությունները սակավաթիվ են, ինչպես նաև ողջ դասական

¹⁶ Նույն տեղում, էջ 148:

¹⁷ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ., էջ 76:

¹⁸ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 148:

¹⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 216:

²⁰ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 148:

գրաբարով ավանդված մատենագրության մեջ: Կրկնավորության սկզբունքով բառա-ստեղծումն առավել բնորոշ է ժողովրդական լեզվին:

Ամփոփելով Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի *ռազմական գործ և զենք* նշանակող բառերի ծագումնաբանական, իմաստաբանական, բառակազմական, հնչյունափոխական մեր քննությունը՝ արձանագրում ենք՝

1) Բնիկ բառերը երկուս մեծաթիվ չեն, բայց իմաստային դաշտի միջուկային միավորներն են: Ըստ մեր վիճակագրության՝ բնիկ են **17** բառ, որից **9-ը** պարզ արմատական են, **4-ը**՝ բարդ, **4-ը**՝ ածանցավոր:

2) Փոփոխությունների դաշտը մեծ է հնչյունափոխական դաշտում. ունենք պատմական հնչյունափոխությունների և ուղղագրական տեղաշարժերի զգալի թիվ. նշենք այդ փոփոխությունները՝ 1.բառավերջում հնչյունի անկման դեպքեր, 2.գրաբարի երկբարբառների վերածվելը երկհնչյունների, 3.դասական ուղղագրությունից՝ արեղյանական ուղղագրության անցման դեպքեր արդի արևելահայերենում՝ *ւ > վ, աւ > օ > ո, է > ե, յ > հ, եա > յա, իւ > յու*:

3) Լեզվի պատմական զարգացման ընթացքում սակավաթիվ են իմաստափոխության ենթարկված բառերը:

4) Իրանյան փոխառությունները երկուս մեծաթիվ են: Ըստ մեր վիճակագրության՝ իրանյան միավորները **57**-ն են, որոնցից **34**-ը պարզ արմատական են, **12**-ը՝ բարդ, **11**-ը՝ ածանցավոր:

5) *Ռազմական գործի* առաջընթացի և ժամանակի ընթացքի հետ հին զինատեսակներին փոխարինելու եկան նորերը, այդ իսկ պատճառով շատ զինատեսակների անվանումներ դուրս եկան հիմնական գործածությունից՝ դառնալով պատմաբառեր:

6) Լեզվի բառապաշարից դուրս են մղվել այնպիսի անվանումներ, որոնց մուտքը հայերեն պայմանավորված էր հայ-պարսկական երկարատև շփումներով, ռազմական աստիճանակարգության և զինվորական ուժերի համահունչ կառուցվածքով:

7) Երկուսն ունենք հունական, ասորական, խեթական, արաբական փոխառություններ, ինչպես նաև՝ խառնակազմ և անհայտ ծագման միավորներ. հունական են **3** բառ, ասորական՝ **2** բառ, արաբական՝ **1**, խեթական՝ **1**, խառնակազմ՝ **8**, անհայտ ծագման՝ **6** բառ:

8) «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում *ռազմ և զենք* նշանակող իմաստային դաշտի բառերով վկայված են յուրօրինակ դարձվածքային միավորներ: Դրանց մի մասը արդի լեզվում շարունակում է կիրառվել, իսկ մյուս մասը դարձել է ոչ կիրառական:

9) Ածանցավոր կազմություններից մեծամասնություն կազմում են վերջածանցավորները, ունենք հունաբան սակավաթիվ նախածանցներ՝ *համ-*, *հակ-*:

10) Բառակազմական տեսանկյունից հաճախադեպը պարզ կազմություններն են, այնուհետև՝ բարդ և ածանցավոր բառերը, փոքրաթիվ են բարդածանցավորները:

11) Ողջ դասական գրաբարով ավանդված մատենագրության մեջ կրկնավոր բարդությունները սակավաթիվ են. մեր քննած պատմական երկում կրկնավոր բարդությունները **3**-ն են:

12) Ընդհանուր առմամբ՝ մեր ուսումնասիրած երկում *ռազմ և զենք* նշանակող իմաստային դաշտի բառերը **95**-ն են, ինչից կարելի է հավաստի ենթադրել, որ հայկական զինված ուժերը 5-րդ դարում արդեն մարտունակ են եղել՝ սպառազինված իր ժամանակի արդիական զինատեսակներով, պատերազմական գործը հնդեվրոպացի հայերին ծանոթ է եղել ի սկզբանե, հնդեվրոպական նախալեզվից մենք ժառանգել ենք բոլոր հիմնական զինատեսակների և պատերազմական արվեստի միավորները, հայ ազնվականների և՛ ավագ, և՛ կրտսեր դասը, անգամ շինականները հմուտ և քաջարի ռազմիկներ են եղել:

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐՈՎ
(ԸՍՏ Ղ. ՓԱՐՊԵՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ)**

Գրաբարի ռազմական տերմինների ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա քննության համար հարուստ նյութ է ընձեռում Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկը¹: Երկի բառապաշարում առանձնակի տեղ են զբաղեցնում այն բառերն ու տերմինները, որոնք ներկայացնում են՝ ա) *երկրի ռազմական-քաղաքական, հոգևոր և մշակութային կյանքը*, բ) *թագավորների, պալատական տարբեր պաշտոնյաների, երկրի ղեկավարների արտաքին և ներքին քաղաքականությունը, վարքուբարքը*, գ) *զինվորական կյանքը, նախարարների և գորավարների՝ միմյանց և երկրի ղեկավարների հետ ունեցած հարաբերությունները, զենքուզրահը* և այլն: Քննության ենթակա երկում տեղ գտած ռազմական բառերի և տերմինների համաժամանակյա քննությունը թույլ է տալիս արժեվորել ընդհանրապես գրաբարի տերմինների հարուստ նյութը՝ միաժամանակ հիմք տալով այդ տերմինների գնահատմանը տարժամանակյա հայեցակետում:

Ինչպես հայտնի է, առանձին անջրպետ չկա տերմինի և բառի միջև, քանի որ սովորական բազմաթիվ բառեր գիտության այս կամ այն բնագավառում դառնում են տերմիններ, ինչպես օրինակ՝ *ազատություն, ամուր, ազատել* բառերը լեզվի գործուն բառապաշարի ամենասովորական գործածության բառեր են, բայց նաև ռազմաքաղաքական բնագավառի համար տերմիններ են և գիտական անվանումներ:

«**Գունդ**» բառը ռազմական տերմին է, որ փոխառվել է պահլավերենից և նշանակում է ընդհանուր զորքի մի խոշոր հատված, մաս, բայց այն բազմիմաստ բառ է, որի համար գրաբարի բառարաններն առանձնացնում են հետևյալ իմաստները՝ 1) Կլոր ձև ունեցող իր,

¹ Տե՛ս Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց: Թուրք առ Վահան Մամիկոնեան, Եր., 1982:

2) Ծովի խորությունը չափելու գործիք, 3) Որևէ երկնային մարմին, 4) Բազմություն, խումբ, 5) Ընդհանուր գորքի մի խոշոր հատված և այլն: Այս բոլոր իմաստների մեջ իբրև ռազմական տերմին արդի արևելահայերենում բառը պահել է իր գործառույթը՝ *կազմակերպված զորք, զորաբանակ, զորքի մաս*:

Իբրև ռազմական բովանդակության տերմիններ՝ մեր կողմից առանձնացվել են այն բառերը, որոնք կամ միայն տերմին են, կամ ունենալով նաև այլ իմաստներ՝ աչքի են ընկնում ռազմական իմաստի գերակայությամբ:

Թեև գրաբարյան շրջանից մեզ հասած ռազմական փոքրաթիվ տերմինները ամբողջական գաղափար չեն տալիս ժամանակի ռազմարվեստի բոլոր կողմերի մասին, այնուամենայնիվ դրանք իրենց ձևով և բովանդակությամբ որոշակի հետաքրքրություն ներկայացնում են, և դրանց որոշ մասը մուտք է գործել արդի հայերենի ռազմական տերմինաբանության մեջ:

Մեր ընտրանքից դուրս ենք թողել այնպիսի բառեր, որոնք, այլ իմաստների հետ մեկտեղ ունենալով նաև ռազմական բովանդակություն, Ղ. Փարպեցու երկում չեն գործածվել իբրև այդպիսիք, օրինակ՝ *մատենան* բառը, որը փոխառություն է պահլավերենից և ի թիվս այլ իմաստների՝ նշանակում է նաև Սասանյան Պարսկաստանում *ընտիր հեծելազորի գունդ, իբր՝ անմահների գունդ*, Ղ. Փարպեցու երկում գործածվել է *պատմական բովանդակությամբ գիրք, պատմագիրք* իմաստով. «Ընդ բազում ճառս *մատենից* առաջնոցն պատմագրացն Հայոց անցի» (էջ 2):

Է. Աղայանը լեզվի ամբողջ բառապաշարը տերմինաբանական տեսակետից բաժանում է երեք կարգի. ա) *տերմինային նշանակությունից ու գործածությունից զուրկ բառեր*, բ) *տերմինաբանորեն մասնավորված գործածությամբ ու նշանակությամբ սովորական բառեր*, գ) *միայն տերմինաբանական նշանակություն ունեցող բառեր*²: Հենց այս մոտեցումն ենք մենք որդեգրել Ղ. Փարպեցու երկից

² Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 320-321:

քաղված ռազմական իմաստ ունեցող բառերի քննության և արժևորման ընթացքում:

Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» երկու հատորներում³ հայերենի բառարմատներն ըստ ծագման բաժանում է բնիկ հայերեն և փոխառյալ տեսակների, քանի որ հայերենի բառապաշարի հարստացման ուղիներից մեկն էլ արտաքին փոխառություններն են այլ լեզուներից:

Ըստ Հ. Աճառյանի՝ ռազմական կյանքին այս կամ այն չափով առնչվող հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն արմատները յոթն են՝ *մարտ, աղմուկ (կռիւ), թուր, նետ, գերի, կումբ, սլաք*: Ժամանակակից հայերենում ռազմական տերմինի իրենց իմաստը կորցրել են և իմաստափոխվել *աղմուկ* և *սլաք* բառերը, իսկ *կումբ*-ը գործածությունից դուրս է եկել: Առաջին չորս արմատներից *նետ*-ը ունի պատմական արժեք, իսկ *մարտ, թուր, գերի* արմատներից հետագայում կազմվել են ռազմական կյանքին վերաբերող բազմաթիվ բարդ և ածանցավոր բառեր: Ավելի մեծ թիվ են կազմում պարսկական փոխառությունները: Պարսկերենից փոխառյալ ռազմական բովանդակության բառերը Հ. Աճառյանը բերում է «Երկիր և պետություն» խմբավորման մեջ⁴: Նա նշում է. «...պարսկերենից փոխառությունները 166 հատ են: Այս բառերի մի մասը իրոք որ պատկանում է զուտ պարսից պետական կյանքին, ամենամեծ մասը այնպիսի բառեր են մեր լեզվի համար, որ այսօր էլ շարունակում են իրենց գոյությունը և առանց նրանց մենք չգիտենք, թե ինչպես պիտի բացատրվենք (օրինակ՝ *գրահ, դրոշակ, հրովարտակ, պահակ*): Այս բոլորը ցույց է տալիս, որ հին հայոց վարչական ձևեր, դիվանական գործողությունները, հարկային սիստեմը, ռազմագիտությունը, զենքերը, մի խոսքով ամբողջ պետական կազմը պարսկական ձևով էր»⁵:

Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում գործածված են ռազմական բովանդակության հետևյալ պարզ բառերը՝ *ազատ,*

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Եր., 1940, Բ մաս, 1951:

⁴ Տե՛ս նշվ. աշխ., Ա մաս, էջ 296:

⁵ Նույն տեղում, էջ 305:

ամուր, ապստամբ, ասպարապետ//ասպահապետ, ասպետ, արշաւ, աւար, բանակ, բղեշխ, բերդ, գումարտակ, գունդ, դրօշ, զէն, թիրախ//թիրախ, թշնամի, իշխան, հազարապետ, հպատակ, հրահանգ, հրաման, հրեշտակ, ճակատ, մարգպան, մարտ, նախարար, նետ, պահակ, պայիկ, պատերազմ, ռազմ, սաղար, սեպուհ, սուներ, սպայ, սպարապետ, փաղանգ, փուշտիպան:

Գործածության տեսակետից բոլոր այս փոխառությունները բաժանվում են երեք խմբի՝ ա) բառեր, որոնց մի մասն արդեն հնացած է և անցել է պատմաբանների շարքին, ինչպես՝ *բղեշխ, հազարապետ, սեպուհ, սպարապետ* և այլն: Բ) Բառեր, որոնք գործածությունից ընդհանրապես դուրս են եկել, ինչպես՝ *պայիկ, սաղար, փուշտիպան* և այլն: Գ) բառեր, որոնք բառակազմական տարբեր միջոցներով նորանալով կամ տերմինացվելով՝ արդի հայերենում դարձել են ռազմական տերմիններ՝ հարստացնելով հայերենի բառապաշարը, ինչպես՝ *ավար, բանակ, գումարտակ, հրամանատար, զորք, ճամբար, սպա* և այլն: Օրինակ՝ պահլավերենից փոխառյալ «*համհարգ*» բառը գրաբարյան բառարաններում արձանագրված է *թիկնապահ, նիզակակից* իմաստներով: Արդի հայերենում այն պատկանում է պատմաբանների թվին և հնացած է: «**Սլաք**» բառը գրաբարի բառարաններում արձանագրված է *նետ, նիզակ, տեգ* իմաստներով, իսկ արդի հայերենում իմաստափոխվել է և նշանակում է. 1. Սուր ծայրակալով բարակ ձողիկ, որ չափիչ սարքերի թվատախտակին վրա իր առանցքի շուրջը պտտվելով՝ ծառայում է որպես զանազան կարգի միավորների ցուցիչ: 2. Ժամացույցի, կողմնացույցի սլաք: Նետի՝ նիզակի սրածայր մասը: 3. Ուղղություն ցույց տալու նշան են:

Այսպիսով, Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում մեր կողմից առանձնացված ռազմական բովանդակություն ունեցող հասկացություններն ու տերմինները հետևյալն են.

Ազատ՝ գոյ., պահլ.՝ *azat*՝ ազնվական, իշխան. «Ժողովէր առ ինքն գնախարարս եւ *զազատս* եւ զամենայն այրեւծիոյ» (160): Ած.՝ ինքնիշխան, անկախ. «...ոմանք *յազատ* աւագանւոյն Հայոց համարձակեալ մտանէին ի ներքս» (20): Իրանական ծագման այս բառը հետագայում տարածվել է նաև այլ լեզուների մեջ:

Ամուր՝ իբրև գոյ.՝ ամուր տեղ, բերդ, ամրոց. «Հրամայեաց պահել *զամուրսն* զգուշութեամբ» (67): Իբրև ած.՝ *ուժով, զորեղ*. փոխառյալ է ասոր.՝ *amuir, xelana*՝ անառիկ, անմատչելի. «Իսկ Շապիոյ տարեալ զկանայս Կամսարականացն *յամուր* բերդն Բասենոյ...» (146): Արդի հայերենում այս բառը ածական է և տեղմինային արժեք չունի:

Ապստամբ՝ գոյ., պահլ.՝ *apastamb* ձևից՝ կազմված *apa* մասնիկով *stamb* արմատից՝ հպարտություն, ամբարտավանություն՝ «...հրաման տայր թագաւորն *զապստամբսն* Հայոց կապանօք ածել առաջեալ» (163): Ած.՝ խոռվարար, ըմբոստ. «Աշխարհ մի *ապստամբ* առ իս զի՞նչ պատգամ յղէն» (123):

Ասպարապետ// ասպահապետ՝ գոյ., պահլ.՝ *spahpat*՝ զորագլուխ, սպարապետ. «... ի տոհմէն Մամիկոնեից Վարդան, Հայոց *ասպարապետ*» (47):

Ասպետ՝ գոյ., իրան. փոխառություն՝ *aspapati*, որ համառոտվել է *aspa*՝ *ձի և pati*՝ *պետ* արմատներից՝ ձիատեր, ձիավոր ազնվական, իշխանավոր հեծյալ. «...վասն *ասպետի* մի՛ աշխատիք» (143):

Արշաւ՝ պահլ.՝ *arsami*՝ շարժում, հարձակում, ասպատակություն: Գործածված է որպես բայ.⁷ «...փութանակի ի տեղին *արշաւեր*» (152):

Աւար՝ գոյ., պահլ.՝ *avar*՝ կողոպուտ, պատերազմի ժամանակ թշնամուց գրաված զենք, մթերք, գույք և այլն. «...հողն Պարսից չբաւիցէ նոցա *յաւարի*» (83):

Բանակ՝ գոյ., պահլավական փոխառություն՝ մարդկանց բազմություն, զորագունդ⁸: Գրաբարում այս բառն ունի նաև *զորքի կա-*

⁶ Կազմված է *spah*՝ *բանակ* և *pat*՝ *պետ* բառերից: Արշակունյաց շրջանում բառը եղել է *սպարապետ*, իսկ ավելի ուշ՝ սասանյան շրջանում, երկրորդ անգամ փոխառվելով ստացել է *ասպահապետ* ձևը (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 4, էջ 263):

⁷ Հ. Աճառյանը նշում է, որ հենքը բառն առանձին չէին գործածում, այլ միայն որպես բայ: Այն պիտի կազմված լինի *ati*՝ *մոտ, դեպի* նախդրով և *siyav*՝ *շարժվել* բայով (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 331):

⁸ Հ. Աճառյանը բառը համեմատում է վրացերեն *բանակի* (բանակ), *բանակերա, դաբանակերա* (բանակել) բառերի հետ, սակայն ավելացնում է, որ սա կարող է ծագած լինել պահլավերենից, ինչպես ցույց է տալիս բառի՝ *-ակ* վերջավորությունը (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 405):

յան, ճամբար իմաստը. վերջին իմաստով էլ գործածվել է Փարպեցու երկում. «...լինէր ձայն լալոյ...**հ քանակէ** անօրինացն» (150):

Բդեշխ՝ գոյ., իրանական փոխառություն՝ *pataxa*՝ մեծ իշխան, կուսակալ. «...**բդեշխն** Վրաց Աշուշայ խնդրեաց պարգեւս» (110):

Բերդ՝ գոյ., ասորական փոխառություն՝ *biirtu*՝ ամրոց⁹: «...դիմեալ ամրանայր **հ բերդն**» (121):

Գումարտակ՝ գոյ., իրանական փոխառ.՝ *gumartak*՝ խումբ.¹⁰ «...զցայգ եւ զցերեկ յոլովէին **հ գումարտակի** որպէս ի տան» (109): Գրաբարում բազմիմաստ բառ է, գոյ.՝ 1. Խումբ, 2. Բանակ, 3. Վզի մանյակ: Ած.՝ բազմախումբ, հավաքված:

Գունդ՝ գոյ., պահլ.՝ *gund*՝ բանակ, գունդ. «Որք էին այսոքիկ եւ այլ **գունդք** ի զօրացն մարդպետական այրուձիոյ» (64):

Դրօշ՝ գոյ., պահլ.՝ *drafš*՝ դրոշ: «...երեւեր դակիշ գնդին Սիւնի զօրուն եւ այլ զօրաւոր արանց նշանք **դրօշիցն**» (72):

Զէն՝ գոյ., պահլ.՝ *zen*՝ զենք, զրահ. «...պատրաստքն **զինուք** անկանէ-ին ի վերայ այնց նորին ընկերաց...» (74):

Թիրախ/թիրախ՝ գոյ., պահլ.՝ *tir*՝ կրակային հարվածի նշանակետ¹¹. «...որ որ յորս կամ ի **թիրախ** նետ չգիտեր ձգել» (117):

Թշնամի՝ գոյ. և ած.՝ պահլ.՝ *dusman, dusmani*՝ ռոսխ, հակառակորդ, չարական. «...գերեալ ի խաբէութենէ **թշնամոյն**...անկաւ ընդ ախտիւ» (90):

Իշխան՝ գոյ., իրանյան *xsana*՝ թագավոր: Գրաբարում ունի մի քանի իմաստ՝ 1. Տիրոջ, իշխող, 2. Պետ, կառավարիչ, 3. Զորապետ, գլխավոր հրամանատար. «...եւ **յիշխանացն** Հայոց ոմանք ոչ յաջող համարէին զէջս գնդին Հայոց ի Վիրս» (133):

⁹ Գ. Ջահուկյանը գրում է, որ այս բառը ծագում է սեմական աղբյուրից, ակկադերեն՝ *birtu/ml*, արամ. *berta*՝ ամրոց, բերդ (Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 126):

¹⁰ Իրանյան ձևով *գումարեկ* բայի անցյալ դերբայն է, որ պատրաստի փոխառվել է պահլավերենից և նշանակում է *հավաքված*: Հետագայում կորցրել է այս առաջին իմաստը և պահել է միայն *լիազոր, հանձնակատար* իմաստները (տե՛ս Զ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 592):

¹¹ Զ. Աճառյանը նշում է, որ այս բառը ծագել է պահլավերեն մի բարդ բառից, որի առաջին մասն է *tir*՝ նետ, երկրորդ մասը՝ *-ախ*, անձանոթ է (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 186):

Հագարապետ՝ գոյ., պահլ.՝ *hazarapat*՝ հագար զինվորի պետ: «...էր ի ժամանակին յայնմիկ **հագարապետ** դրանն արքունի» (23): Գրաբարի բառարաններում արձանագրված են հետևյալ իմաստները՝ 1. Հագար զինվորի պետ, 2. Քաղաքացիական բարձր պաշտոն զբաղեցնող մեկը, մեծ վեզիր, 3. Իշխանական տան վերակացու, տնտես:

Հպատակ՝ ած., պահլ.՝ *hupatak* (**hu**՝ լավ, **pa**՝ պաշտպանյալ)՝ 1. Իշխանության ենթակա, հնազանդ, 2. Փութաջան. «Մեք ծառայութիւն առնեմք եւ **հպատակ** լինիմք» (138):

Հրահանգ՝ գոյ., պահլ.՝ *frahang* նշանակում է 1. Վարժություն, վարժանք, 2. Փորձառություն 3. Կրթություն, ուսում, 4. Չափավորություն, կարգուկանոն. «...ըստ ազատութեան արուեստի առաւելեալ էք ամենայն **հրահանգի**»(51): Արդի հայերենում նաև ռազմական տերմին է՝ *շարային վարժությունների ժամանակ տրվող հրաման*:

Հրաման՝ գոյ., պահլ.՝ *framan*՝ հրաման: Ունի հետևյալ իմաստները. 1. Կարգադրություն, պատուէր, պատգամ 2. Վճիռ, որոշում հրովարտակ, 3. Թույլտվություն. «..**հրաման** Պարսից թագաւորին ի գլուխ ելանէր»(25):

Հրեշտակ՝ գոյ., պահլ.՝ *frestak*՝ պատգամավոր¹². «Գայր հասաւ նէր **հրեշտակ** աւետաւոր ի տոհմէն Գնունեաց» (125): Բազմիմաստ բառ է. ունի նաև հետևյալ իմաստները՝ *մարգարէ, գերբնական էակ, հեթանոսական աստված*:

Ճակատ՝ գոյ., պահլ.՝ *catat*՝ բանակի առաջամասը, բանակ: «Եւ այսպէս յօրինեալ **զճակատն**...յարձակեցան ի վերայ թշնամեացն» (65): Հայտնի է, որ բազմիմաստ բառ է. 1. Աչքերի վերնի մասը, 2. Գրքի առաջին էջը, 3. Ռազմադաշտ, 4. Մարտ, պատերազմ:

Մարգպան՝ գոյ., պահլավական փոխառություն է՝ կազմված *marz*՝ գավառ բառից՝ *-pan* մասնիկով. նշանակում է կուսակալ, սահմանակալ: «...գայ յերկիրս Հայոց **մարգպան**»(177):

¹² Այս բառի բուն նշանակությունն է՝ *ուղարկված, առաքված*, ծագում է *fra* մասնիկով *aes*՝ *շարժման մեջ դնել, ուղարկել* բայից (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 3, էջ 135):

Մարտ՝ գոյ., բնիկ հայերեն բառ՝ նախալեզվյան *mrd*՝ *ռազմ*, *պատերազմ* ձևից¹³: «Եւ հասեալք ի ժամ *մարտին*...տեսանէին զգունդն Պարսից» (65):

Նախարար՝ գոյ., իրանական փոխառություն՝ նահապետ, իշխան, նահանգապետ. «Այժմ աստ են առաջի ձեր *նախարարք* եւ ազատք» (170):

Նետ՝ գոյ.՝ փայտի կամ եղեգի բարակ ձող՝ ծայրին մետաղյա սլաքով: Բնիկ հայերեն այս բառը ծագում է նախալեզվյան *nedo*՝ *եղեգ* բառից¹⁴ «...եւ որ յորս կամ ի թիւրախ *նետ* չգիտէր ձգել՝ զնա պարտաւորէր» (117):

Նիզակ՝ գոյ.՝ *նեզ*, *զեղարդ*, ծագել է պահլ. *nezak*՝ *եղեգնիկ* բառից: «...քաջին Մամիկոնենի Վասակայ ելեալ ի խնդիր այլում *նիզակի*» (134):

Պահակ՝ գոյ., պահլ.՝ *pahrak*՝ *պահպանություն*¹⁵: Ունի բազմաթիվ իմաստներ՝ 1. Պահապան, 2. Պաշտպան, հովանավոր, 3. Խնամակալ, 4. Նեղ կիրճերի մեջ պաշտպանական ամրոց: Ղ. Փարպեցին գործածել է վերջին իմաստով. «...գտեալ անդ զպահապանս *պահակին*» (66):

Պայիկ՝ գոյ., պահլ.՝ *paik*՝ սուրհանդակ, թագավորի սպասավոր, զինվորական: «...ձադկեալ զնա *պայկացն* մերկացուցին զնա» (85):

Պատերազմ՝ գոյ.՝ պահլ. փոխառություն, որ կազմված է *razm* > *razman* բառից: ...Գունդն Պարսից ճակատել ի *պատերազմն* պատրաստէին (71):

Ռազմ՝ գոյ., պահլ. փոխառություն՝ *razm*՝ պատերազմ բառից. «...կարգեալ *զռազմն* ի միջոցէ մայրւոյն ...անցուցանէր ի վերին դաստակերտին» (144):

Սաղար՝ գոյ., պահլ.՝ *salar*՝ զորավար, սպարապետ¹⁶: «...այլ հրամանատու եւ աւագ՝ զօրուն փուշտիպնան *սաղար* էր» (128):

¹³ Կազմված է բնիկ հայերեն *mrd* ձևից, որ կազմված է նախալեզվյան *mera* արմատից՝ *d* աճականով. ունի *ջարդել*, *փշրել* իմաստները: (տե՛ս Ն. Աճառյան, հ.3, էջ 289):

¹⁴ Տե՛ս Ն. Աճառյան, ՀԱԲ, հ.3, էջ 442:

¹⁵ Ն. Աճառյանը նշում է, որ բառի հնագույն ձևն է *պարհ*, որ կա ոսկեդարի գրականության մեջ (տե՛ս ՀԱԲ, հ.4, էջ 10):

¹⁶ Այս բառի ավելի հին ձևն է արշակունյան պահլավերեն *sardar*՝ *սարդար* (տե՛ս Ն. Աճառյան, ՀԱԲ, հ.4, էջ 164):

Մեպուհ՝ գոյ., իրանական փոխառություն է՝ իշխան, ասպետ, պայազատ: «Եւ **սեպուհ** մի ուրծացի...երթեալ աւերէր զշահաստան Բոնավիթի» (121):

Սուսեր՝ գոյ.՝ ասոր. փոխառություն՝ *safsera*: «...հարկանէր **սուսերաւ** զուս արքոյ եպիսկոպոսին Սահակայ» (100):

Սուր՝ գոյ.՝ բնիկ հայերեն բառ *sura՝* թուր: Բազմիմաստ բառ է, որ ունի *ժանտախտ* իմաստը: «Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին **սրով**» (73):

Սպայ՝ գոյ., պահլ.՝ *spah*. գրաբարում ունեցել է տարբեր իմաստներ՝ 1. Ձորք, բանակ, 2. Այրուծի, հեծելազոր, 3. Ձորական: «Ճանաչիք երեւելի ի մէջ **սպայիս** եւ ի մէջ ամենայն ազգաց» (51):

Սպարապետ՝ գոյ., պահլ.՝ *spahpat՝* *սպարապետ*: «Վահան **սպարապետ** Հայոց, զո՞հ ես զմէնջ» (175):

Փաղանգ՝ գոյ., հուն.՝ 1. Հետևակ զորքի զունդ, 2. Դաս, խումբ, շարք¹⁷: «Ժառանգեցին փաղանգ ուրացողացն» (126):

Փուշտիպան՝ գոյ., պահլ.՝ *pustipan՝* պաշտպանություն¹⁸: Գրաբարում այս բառն ունի *անձնապահ, զինվորական* իմաստը: «Եւ տէր Սահակ ասպետ յարձակեալ նիզակաւ ի վերայ **փուշտիպանաց** սահարի» (129):

Ընդհանրացնելով ամրագրենք, որ Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում ռազմական կյանքին, զենքերին վերաբերող արմատական բառերի ու տերմինների մէջ հաճախադեպ են իրանական փոխառությունները, առավել հազվադեպ են բնիկ հայերեն բառերը և ասորական փոխառությունները: Մեր կողմից առանձնացված են ռազմական բովանդակություն ունեցող 40 պարզ տերմիններ, որոնցից երեսուներեքը պահլավական փոխառություններ են, երեքը՝ բնիկ հայերեն բառեր, երեքը փոխառյալ են ասորերենից, մեկը՝ հունարենից:

¹⁷ Ըստ Ն. Աճառյանի՝ այս բառից ծագել է լատիներեն *palanx՝* զորաբանակ բառը: Հիմնական նշանակությունն է «*փայտի կոճղ, զավազան*», ապա «*կշեռքի ուղիղ զավազանք*» և փոխաբերաբար՝ «*բանակի ուղիղ շարված ճակատը*» (տե՛ս ՀԱԲ, հ.4, էջ 473):

¹⁸ Այս բառը կազմված է պահլ. *pust՝* թիկունք + *pan՝* պահապան բառերից:

ՌԱԶՄԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹ-ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՂԱԶԱՐ ՓԱՐԱԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Գրաբարի ռազմական եզրույթների համաժամանակյա և տար-
ժամանակյա քննության համար հարուստ նյութ է տալիս Ղազար
Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկը¹, որում արտացոլված են ժա-
մանակաշրջանի պատմական կարևոր իրադարձությունները: [Յա-
ռաջաբանից] եւ «դրուագ» անվանյալ երեք գլուխներից բաղկացած
արժեքավոր այս աշխատությունն ունեցել է բազում տպագրու-
թյուններ²:

Առանձնացրել ենք Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»
երկում գործածված ռազմական բովանդակության բաղադրյալ
բառերը, ներկայացրել դրանց կաղապարները, ըստ անհրաժեշ-
տության՝ երբեմն անդրադարձել որոշ բառարմատների ծագումնա-
բանությանը և արտահայտած իմաստներին, բերել բնագրային
օրինակներ:

Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում ռազմական
բաղադրյալ եզրույթների կաղապարները նկարագրելով՝ նպատակ
ունենք ցույց տալու գրաբարի կարևորագույն դերն արդի
արևելահայերենի բառապաշարի հարստացման և եզրույթների
համակարգի ձևավորման գործում: Այս մոտեցումը հիմք է տալիս
երբեմնի վանահոր երկում գործածվող ռազմական եզրերի
առանձնացման և տարժամանակյա դիտակետում դրանց արժևոր-
ման, քանի որ վերջիններիս մի մասը որպես այդպիսին մնացել է
գրաբարի բառապաշարում և արդի հայերենի բառարաններում
արձանագրված է իբրև պատմական բառ-եզր, իսկ մյուս մասը,
կրելով իմաստային որոշակի փոփոխություններ, անցել է հայերենի
զարգացման հաջորդ փուլերին:

¹ Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյանի եւ Ստեփանոս Մալխասյանցի կազմած գիտա-
քննական բնագիրը՝ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց: Թուրք առ Վահան
Մամիկոնեան, Տփղիս, 1904: Օրինակները քաղում ենք այս հրատարակությունից՝
փակագծում նշելով էջը:

² Տե՛ս *օրինակ*՝ Վենետիկ, 1793, 1891 Ալեքսանդրապոլ, 1895, Մոսկվա, 1883 և այլն:

Ռազմական եզրույթները հիմնականում գոյականներ և ածականներ են, որոնք նաև լեզվի գործուն քառապաշարի սովորական բառամիավորներ են, ուստի խոսել գիտական անվանումների կամ տերմինների, նրանց կերտման ու օգտագործման մասին, մեկուսացնելով այդ ամենը տվյալ լեզվի քառապաշարից և բառօգտագործման հարցերից՝ ուղղակի անհնար է: Անշուշտ, լեզվում սովորական բառերի և տերմինների տարբերակում կա, և սխալ է սովորական բառերի և բառակապակցությունների և տերմին-բառերի ու բառակապակցությունների նույնացումը, որ երբեմն արվում է, սակայն էլ ավելի սխալ է դրանք անջրպետելը և եզրույթ-բառ կամ բառակապակցություն չհամարելը: Այսպիսով, եզրույթաշինությունը տվյալ լեզվի քառաշինության մի հատվածն է և ենթակա է նրա բառակազմական, բառօգտագործման, քերականական և մյուս բոլոր օրենքներին: Դա առաջին հերթին նշանակում է հայերենի գիտական անվանումների հարստացում հայերենի բառաստեղծական ճկունության շնորհիվ, այսինքն՝ լեզվում եղած բառերի հատուկ իմաստավորմամբ, եղած իմաստների եզրավորմամբ, նոր բառերի և բառակապակցությունների ստեղծմամբ, ինչպես նաև օտար, փոխառյալ բառերը հայերենի բառակազմական կանոններին հարմարեցման միջոցով³: Իբրև ռազմական բովանդակության եզրույթներ՝ առանձնացրել ենք Ղազար Փարպեցու բնագրում գործածած այն բառերը, որոնք կա՛մ անմիջականորեն օժտված են ռազմական իմաստով, կա՛մ ունենալով նաև այլ իմաստներ՝ աչքի են ընկնում ռազմական իմաստի գերակայությամբ:

Ռազմի բնագավառին աղերսվող արմատների քննությունը ցույց է տալիս, որ ռազմական եզրաբանությունը հայերենում հարուստ չի եղել: Հայերենը ռազմարվեստին, պատերազմին ու զենքերին վերաբերող հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն սակավաթիվ բառեր ունի, որոնցից:

Հ. Աճառյանը նշում է, որ պարսկերենից փոխառությունները 166-ն են, որոնց մեծ մասը պատկանում է պարսից պետական կյան-

³ Տե՛ս Ռ. Իշխանյան, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Եր., 1981, էջ 130:

քին, և ամենամեծ մասն այնպիսի բառեր են մեր լեզվի համար, որ այսօր էլ շարունակում են իրենց գոյությունը և առանց նրանց մենք չգիտենք, թե ինչպես պիտի բացատրվենք (օրինակ՝ *գրահ, դրօշակ, հրովարտակ, պահակ*): Այս ամենը ցույց է տալիս, որ հին հայոց վարչական ձևը, դիվանական գործողությունները, հարկային համակարգը, ռազմագիտությունը, զենքերը, մի խոսքով ամբողջ պետական կազմը պարսկական ձևով էր⁴: Նա առանձնացնում է հետևյալ բառացանկերը.

ա) պետական ռազմական պաշտոններ՝ *ասպետ, բղեշխ, իշխան, հազարապետ, համհարզ, հրամանատար, մարզպան, մարզպետ, սեպուհ, սպասալար, սպարապետ, ասպահապետ*,

Բ) պատերազմին վերաբերող բառեր՝ *սպշոպ, սպրուռ, սպստամբ, ասպատակ, արշաւ, աւար, գումարտակ, գունդ, դարան, դժպարտ, դրօշ, զինուոր, զօրք, թիրախ, թշնամի, լաշկար, հաշտութիւն, հէն, ճամբար, մարզել, մարզիկ, նախճիր, նահանջ, պայքար, պատերազմ, պարաւանդ, պարկէն, պէշոպայ, ռազմ, սպայ, վաշտ, վկանդել*,

Գ) զենքի տեսակներ՝ *աշտեայ, ասպար, քահլիկ, դաշնակ, դաստապան, զէնք, զրահ, լախտ, խիշտ, նիզակ, պատկան, պատկանդարան, պարս, սաղաւարտ, վահան, վարապան, վարզ, վիրզ, տապար, տէգ*:

Այսպիսով, պարսկերենից փոխառյալ բուն ռազմական եզրույթները և ռազմական բովանդակություն ունեցող ու ռազմական կյանքին վերաբերող արմատական բառերի ընդհանուր թիվը հասցնում է վաթսուներսի, որոնք մոտավորապես տասն անգամ գերազանցում են հնդեվրոպական ծագման արմատներին: Այս բառերն իրենց գործածությամբ արդի հայերենի բառապաշարում նույնպես միատարր չեն. դրանց մի մասն արդեն հնացած է և ունի սոսկ պատմական արժեք, ինչպես՝ *ասպետ, բղեշխ, ասպար, մարզպան, սեպուհ* և այլն, իսկ մի մասը, որոնք Հ. Աճառյանը բերում է իբրև պատերազ-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 305:

մին և զենքի տեսակներին վերաբերող բառեր, ընդհանրապես դուրս է եկել գործածությունից, ինչպես՝ *սպշուպ, բահլիկ, լաշկար, խիշտ, պատկան, պատկանդարան, վկանդեյ, վիրգ* և այլն⁵: Հին շրջանում պարսկերենից փոխառյալ որոշ բառարմատներ նույն իմաստով կամ որոշ իմաստափոխությամբ արդի հայերենում ունեն լայն գործածություն, բառակազմական տարածում և եզրույթի վերածվելով հարստացրել են հայերենի ռազմական եզրաբանության համակարգը՝ *արշավ, գունդ, գումարտակ, հրամանատար, պատերազմ, սպա, վաշտ* և այլն:

Աճառյանն անդրադառնում է նաև հունարենից փոխառյալ 17 և լատիներենից փոխառյալ 14 ռազմական եզրույթներին, որոնցից ոչ մեկը ժամանակակից հայերենի ռազմական եզրաբանության մեջ չի գործածվում⁶: Նա բերում է նաև ռազմական կյանքին վերաբերող արաբական 29 և թուրքական 4 բառ⁷: Առաջիններից որևէ մեկը չի գործածվում արդի հայերենում, իսկ թուրքերեն բառերից գործածական են միայն *բաբան* և *բարութ* (վառող) բառերը⁸, այն էլ ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում: Ասորերենից փոխառյալ ռազմական եզրույթներ են համարվում ռազմական բնույթի *տաքսատ(վաշտ), խարբ, մանգանայ, շեղբ, սակուր, սուին, սուսեր*⁹ բառերը, որոնցից արդի հայերենում ինքնուրույն գործածություն և բառակազմական ակտիվություն ունեն միայն վերջին չորսը, ինչպես նաև ռազմարվեստին վերաբերող *բերդ, մաքառել, գազաթն* (ամրության վայր) բառերը¹⁰:

Ռազմական բնագավառում այսօր դեռևս շատ են գործածվում օտար բառերն ու անվանումները, հատկապես՝ ռուսերենից փոխա-

⁵ Տե՛ս Ս. Այաևյան, նշվ. աշխ., էջ 242:

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., II մաս, Եր., 1951, էջ 46:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 212, 281;

⁸ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973:

⁹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., I մաս, էջ 344:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 200:

ոյալ ռազմական եզրույթները: Թեև ներկայիս բանակը հայկական է, որը ծառայում է հայ ժողովրդին, իսկ զինծառայողները գերազանցապես հայեր են, խոսում են հայերեն, հրամանները արձակվում են հայերեն, հրահանգները գրված են հայերեն, սակայն ինքնաբերաբար գործածական են մնում օտարահունչ ռազմագիտական շատ հասկացություններ ու բառեր, երբեմն գերիշխում են ռուսերեն հասկացությունները՝ իբրև հետխորհրդային իրողություն: Միաժամանակ հայերենում դեռևս չեն ձևավորվել ռազմագիտական շատ եզրույթներ, բանակում տեղ գտած հայերեն տերմինները դեռևս միասնական չեն, ավիացիայում, հակաօդային պաշտպանությունում, հրետանու գործերում հայերենը տակավին իշխող չէ: Այնինչ փոխըմբռնման և համընդհանուր գործածության ապահովման կարևոր գործիքներից մեկը գիտականորեն իմաստավորված ռազմական տերմինաբանական միօրինակ համակարգի ստեղծումն է, դրա համակարգումը, հետագա զարգացումն ու կատարելագործումը: Այս առումով կարևորը լեզվաշինության, բառօգտագործման ճիշտ ուղղություն վերցնելն է, քանի որ, ինչպես բազմաթիվ փաստերով փորձը ցույց է տալիս, հաճախ այն, ինչ հնարավոր չի լինում թարգմանել այսօր, թարգմանվում է վաղը¹¹:

Բառաբարդմամբ, բառածանցմամբ կազմված կառույցների կերտման համար հիմք են ծառայում գրաբարի բառապաշարից եկող բազմաթիվ բառեր: Ռազմական բարդ եզրույթներն արտահայտվում են վերլուծական և համադրական բարդությունների ձևով, որոնք հիմնականում երկբադադրիչ կազմություններ են:

Ռազմական եզրույթները և ռազմական բովանդակության բառերը նպատակահարմար ենք գտել բաժանել հոդակապով և անհոդակապ տեսակների, որոնցից քանակապես ակնհայտորեն գերակշռում է առաջինը:

Հոդակապով բարդություններ են՝ *ազատագրւնդ (20)*, *աղեղնաձայն (10)*, *առաջապահ¹² (122)*, *ասպարափակ (131)*, *բանակատեղ*

¹¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 90:

¹² Արդի ռազմական տերմինահամակարգում գործածվում է հետևյալ իմաստով. «*համագորային զորամասի՝ գլխավոր ուժերից որոշակի հեռավորությամբ դեպի*

(60), բերդակալ (146), գործակալ (83), զորագլուխ (65), զորապետ (65), զորավար (25), հրամանատու (128), նետաձիգ (155), նիզակակից (65), նիզակատեղ (152), վերջապահ (69)¹³:

Անհողակապ բարդություն է *այրընտիր* (73) բառը: Առանձնանում են նաև *այրեւծի* (160), *այրուծի* (123) կցական բարդությունները:

Ըստ բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բառաբարդմամբ կազմված հայերեն եզրույթները ներկայացնում են խոսքիմասային զանազան հարաբերությամբ կազմված հետևյալ կաղապարները.

գոյական+գոյական՝ *աղեղնաձայն* (10), *բանակատեղ* (*բանակատեղ*) (60), *զորագլուխ* (65), *զորապետ* (65), *թշնամանակերպ* (85), *նիզակատեղ* (152):

Գոյական + ածական՝ *այրընտիր* (73), *ասպարափակ* (131), *թելակից*¹⁴ (159), *նիզակակից* (65):

Գոյական+բայարմատ՝ *առաջապահ* (122), *բերդակալ* (146), *գործակալ* (83), *զորավար* (25), *կողմնակալ* (63), *հրամանատու* (128), *նետաձիգ* (150), *նիզակափակ* (72), *վերջապահ* (69):

Ածական + գոյական՝ *ազատագունդ* (20):

Բարդ եզրույթների եզրաբանական կաղապարները մեր ընտրանքում ունեն հետևյալ տիպերը.

ա) **եզրույթ + եզրույթ՝** *ազատագունդ* (3), *զորապետ* (536), *նիզակատեղ* (44):

բ) **եզրույթ + ոչ եզրույթ՝** *աղեղնաձայն* (10), *ասպարափակ* (131), *բանակատեղ* (60), *բերդակալ* (146), *զորագլուխ* (65), *զորավար* (25), *նիզակակից* (65), *հրամանատու* (128), *նետաձիգ* (150):

առաջ ուղարկած մոտոհրաձգային (տանկային) ստորաբաժանում, ռազմերթի ժամանակ որպես երթային պահպանության մարմին» (տե՛ս Լ. Քոթանջյան, Ս. Ներսիսյան, Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան, Եր., 2006, էջ 5):

¹³ Արդի ռազմական տերմինահամակարգում գործածվում է հետևյալ իմաստով. «*մոտո-տո-հրաձգային (տանկային) զորամասի հիմնական ուժերի նահանջն ապահովելու համար»* (տե՛ս Դ. Զիլինգարյան, Ե. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն-անգլերեն մեծ բառարան, Եր., 2015, էջ 559):

¹⁴ **Թելակից** բանակի թև կազմող, գործին կցված՝ իբրև նրա թևը:

Գոչ եզրույթ + եզրույթ՝ առաջապահ (122), գործակալ (83), վերջապահ (69), այրենտիր (73), այրեւծի (160), այրուծի (123):

Փոխառյալ բաղադրիչներով կաղապարների մեջ ավելի շատ են այն բարդությունները, որտեղ օտար բառը որպես առաջին բաղադրիչ է կիրառվում, ինչպես՝ ազատագունդ¹⁵, ասպարափակ¹⁶, բանակատեղ¹⁷, բերդակալ¹⁸, հրամանատու¹⁹, նիզակակից²⁰:

Ածանցման միջոցով կազմված ռազմական բովանդակության բառերում մեծ է վերջածանցների կիրառությունը, որը նույնպես հայերենի կարևոր առանձնահատկություններից է: Նախածանցավոր ընդամենը մի քանի կաղապար ունենք -ան ժխտական նախածանցով կազմված՝ **ան-**՝ անազատ (61), անհրահանգ(4), անպարտ (93): Վերջածանցավոր կազմություններն են՝ -ած՝ կազմած²¹ (131), -ակ՝ պահակ²²(66), -ական՝ ամրական (118), զորական (66), պատերազմական (164), սեպհական (11), -անի՝ ազատանի (49), -անք՝ թշնամանք (98), -աւոր՝ զորաւոր(72), -եալ՝ բանակեալ(132), զինեալ (129), զինուորեալ (13), զորացեալ (130), զորացուցեալ (70), թշնամա-

¹⁵ Ազատ՝ պահլ.՝ *azat*՝ ազնվական, իշխան. տարածված է նաև բազմաթիվ այլ լեզուներում (տե՛ս Ն. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 83):

¹⁶ Ասպար՝ պահլ.՝ *aspar* ձևից՝ *վահան*. մյուս իրանյան լեզուներն ունեն *spar, ispar* ձևերը (տե՛ս ՀԱԲ, հ.1, էջ 273):

¹⁷ Բանակ՝ Ն. Աճառյանը բառը համեմատում է վրացերեն *բանակի* (բանակ), *բանակերա*, *դաբանակերա* (բանակել) բառերի հետ, սակայն ավելացնում է, որ սա կարող է ծագած լինել պահլավերենից, ինչպես ցույց է տալիս բառի -ակ վերջավորությունը (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 405):

¹⁸ Բերդ՝ Ն. Աճառյանը համարում է ասորական փոխառություն՝ *bi-ir-ti* կամ *bi-ir-tu*՝ բերդ, ամրոց: Գ. Զահուկյանը գրում է, որ այս բառը ծագում է սեմական աղբյուրից, ակկադերեն *birtu/ml*, արամ. *berta*՝ ամրոց, բերդ (տե՛ս ՀԱԲ, հ., 1, էջ 442: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 126):

¹⁹ Հրաման՝ պահլ.՝ *framan*, պարսկ.՝ *farman*՝ հրաման (տե՛ս ՀԱԲ, հ.3, էջ 130):

²⁰ Նիզակ՝ պահլ.՝ *nezak, nizag*՝ աշտեայ բառից. նշանակում է նաև *եղեգնիկ* (տե՛ս ՀԱԲ, հ.3, էջ 451):

²¹ Գազմած բառը բազմաթիվ այլ իմաստների հետ ունի նաև *պատերազմական զենքեր* իմաստը՝ «...իսկ զայն Մամիկոնեան զՎարդ դրամբ եւ կազմածով ածեալ հասուցանէր ի յերկիրս Հայոց» (էջ 131):

²² Այս բառն ունի բազմաթիվ իմաստներ՝ 1. Պահապան, 2. Պաշտպան, հովանավոր, 3. Խընամակալ, 4. Նեղ կիրճերի մեջ պաշտպանական ամրոց: Դ. Փարպեցին գործածել է վերջին իմաստով . «...գտեալ անդ զպահապանս *պահակին*» (66): Ծագել է պահլ. *pahr* ձևից՝ *պահպանութիւն* (Տե՛ս Ն. Աճառյան, ՀԱԲ, հ.4, էջ 9):

նեալ (98), իշխանացեալ (180), իշխեցեալ (159), կազմեալ (64), հեծեալ (123), ճակատեալ (124), **-եան**՝ բերդեան (67), **-եղ**՝ զօրեղ (131), **-իկ**՝ մարտիկ (125), **-իչ**՝ թշնամանիչ(80), **-ող**՝ նետող (9), պատերազմող (165), **-որդ**՝ հակառակորդ (142), **-որեաք**²³՝ աւագորեաք (158), ազատորեաք (126), **-ոց**՝ ամրոց(72), **-ութիւն**՝ ազատութիւն(179), անազատութիւն (179), ամրութիւն (123), ապստամբութիւն(160), զօրութիւն (17), թշնամութիւն (77), իշխանութիւն(8), հաշտութիւն (166), հպատակութիւն (95), մարգպանութիւն (178), սպարապետութիւն(175), **-ումն**՝ յարձակումն (65), նուաճումն (169), պաշարումն(155), **-ուոր**՝ զինուոր (82): Երբեմն վերջածանցը հանդես է գալիս նախորդող մեկ այլ վերջածանցից հետո, ինչպէս՝ զինուորեալ (13), մարգպանութիւն (178): Միաժամանակ նախածանցով և վերջածանցով կազմված է անազատութիւն (179) բառը: Ըստ բաղադրիչների՝ տերմինների և ոչ տերմինների պատկանելության՝ ածանցավոր ռազմական տերմինները կազմվում են ռազմական տերմիններից և ընդհանուր գործածական բառերից:

Բայական բառույթներ են ստեղծվում **-ել**, **-ալ**, (**ան**) **ալ**, (**են**)**ալ**, (**ցն**) **ել** քերականական և բառաստեղծական մասնիկների միջոցով. հաճախ այս կամ այն հասկացությունը բայական նշանակությամբ արտահայտելու անհրաժեշտությունից ելնելով և լեզվի մեջ այլևս նոր արմատներ չառաջանալու պատճառով լեզուն դիմում է իր ներքին հնարավորություններին՝ բայեր կազմելով բայակերտ մասնիկների միջոցով²⁴: Բայական անվանումները ստեղծվում են բնիկ և փոխառյալ բառերի բայացման միջոցով՝ **-ել**՝ ազատել²⁵ (61), ապստամբել (67), արշաւել (10), բանակել (118), զօրել (54), թշնամանել (80), իշխել (117), լրտեսել (139), կազմել²⁶ (121), կռուել (144-), հեծանել (66), հրահանգել (112), հրամայել (165), հպատակել (54), ճակատել (124), իշխանացել (180), իշխեցել (159), կազմել (64), հեծել (123), ճակատել (124), **-եան**՝ բերդեան (67), **-եղ**՝ զօրեղ (131), **-իկ**՝ մարտիկ (125), **-իչ**՝ թշնամանիչ(80), **-ող**՝ նետող (9), պատերազմող (165), **-որդ**՝ հակառակորդ (142), **-որեաք**²³՝ աւագորեաք (158), ազատորեաք (126), **-ոց**՝ ամրոց(72), **-ութիւն**՝ ազատութիւն(179), անազատութիւն (179), ամրութիւն (123), ապստամբութիւն(160), զօրութիւն (17), թշնամութիւն (77), իշխանութիւն(8), հաշտութիւն (166), հպատակութիւն (95), մարգպանութիւն (178), սպարապետութիւն(175), **-ումն**՝ յարձակումն (65), նուաճումն (169), պաշարումն(155), **-ուոր**՝ զինուոր (82): Երբեմն վերջածանցը հանդես է գալիս նախորդող մեկ այլ վերջածանցից հետո, ինչպէս՝ զինուորեալ (13), մարգպանութիւն (178): Միաժամանակ նախածանցով և վերջածանցով կազմված է անազատութիւն (179) բառը: Ըստ բաղադրիչների՝ տերմինների և ոչ տերմինների պատկանելության՝ ածանցավոր ռազմական տերմինները կազմվում են ռազմական տերմիններից և ընդհանուր գործածական բառերից:

²³ **-որեաք**՝ կազմված է հավաքական **-եաք** մասնիկով՝ **որ**՝ մարդ բառից (տե՛ս **Հ. Ա. Ճառյան**, ՀԱԲ, հ. 3, էջ 577-578):

²⁴ Տե՛ս **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 114:

²⁵ Նկատելի է, որ **-ել**-ով բայեր են կազմվում հատկապես փոխառյալ արմատներից:

²⁶ **Կազմել** բազմիմաստ բառ է. ունի նաև *զինել*, *սպառազինել* իմաստը. «...ևն Վահան Մամիկոնեան ...կազմեալս առաքել ընդ նմա» (էջ 64):

տել (71), յարձակել (69), մրցել²⁷ (135), նուաճել (138), պաշարել (121), պատերազմել (130), վառել²⁸ (71): - **Մնայ՝** ամրանալ (121), գորանալ (130):

Բարդ և ածանցավոր եզրույթներին սերտորեն առնչվում են նաև բարդածանցավոր բառերը՝ ազատաբերություն (179), գործակալություն (121), հրամանատուություն (91), հրամանատրություն (55), նետաձգություն (111):

Հայերենի բառակազմության մեջ առանձնակի դեր ունեն նաև հարադրությունները՝ իրենց զանազան դրսևորումներով: Ռազմական բովանդակության կազմություններ են ստեղծվել բայական հարադրությունների միջոցով, որոնց բաղադրիչները, բարդության մեջ կորցնելով իրենց իմաստները, բարդությանը տալիս են նոր իմաստ: Մեր առանձնացրած հարադրություններն են՝ *գրոհ տալ* (127), *գործողով առնել* (155), *հրաման առնուլ* (115), *հրաման տալ* (24), *հպատակ լինել* (138), *նետաձիգ լինել* (66), *սպարափակ առնել* (150), *սուր ի վերայ դնել* (155), *վառել զինու* (109):

Այսպիսով՝ հայերեն ռազմական եզրաբանությունը որոշակիորեն տարբերվում է եզրաբանության մյուս բնագավառներից: Հայերենի եզրաշինությունն ավելի գործունե և արդյունավետ է դառնում լեզվի ներքին հնարավորությունների գործածությամբ, որոնցից մեկը բառակազմական միջոցներով նոր եզրույթների ու բառերի կերտումն է: Բառային նոր միավորների ստեղծումով արտահայտվում են բառիմաստային նոր նրբերանգներ, ընդլայնվում լեզվում առկա բառապաշարային ատաղձից նոր բառեր կազմելու հնարավորությունները:

²⁷ Գրաբարի բառարաններում բառն ունի նաև *կռվել*, *պատերազմել* իմաստը. Ղ. Փարպեցին գործածել է այս իմաստով. «...գորավարն Հայոց Մամիկոնեանն Վահանն այսպես *մրցէր* հանդերձ երանելի եղբարբն Վասակաւ...» (էջ 135):

²⁸ **Վառ՝** առանձին անգործածական արմատ է՝ *զինուել*, *սպառազինուել* իմաստով (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 4, էջ 308):

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ**

Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման ուղիներից են ներքին փոխառությունները: Այս առումով գրաբարը հսկայական դեր է խաղում ժամանակակից հայերենի եզրույթաբանության ձևավորման մեջ: Արդի հայերենին անցած մի շարք բառեր գրաբարում հաճախ եզրույթային արժեք չեն ունեցել, մինչդեռ այժմ դրանք արդեն ի հայտ են գալիս կամ որպես եզրույթ, կամ ն՝ որպես եզրույթ, և՝ որպես բառ՝ ներառելով նաև այլ իմաստներ: Սրանք կարող են լինել մասնագիտական եզրույթներ՝ լրագրողական, իրավական, արվեստի, արհեստագործական, տեխնիկական, ֆինանսական, լեզվաբանական, բժշկական, բուսաբանական, կենդանաբանական և այլ ոլորտներից:

Հայերեն եզրույթաբանության կարևոր ճյուղերից է իրավականը, որի ուսումնասիրությունը սկզբունքային է թե՛ գործնական, թե՛ գիտական տեսանկյուններից: Մեր ընտրանքում մենք օգտվել ենք ոչ միայն Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի համաբարբառից, այլև Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Մալխասյանի կազմած բնօրինակից: Այս աշխատանքի թարգմանությունը կատարել է Բագրատ Ուլուբաբյանը¹: Նշենք, որ գրաբարով այն տպագրվել է Թիֆլիսում 1904 թ.²: Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկը հայ գրականության ոսկեդարի գլուխգործոցներից է, որը գրվել է 5-րդ դարի վերջին կամ 6-րդ դարի սկզբին³: Վ. Մամիկոնյանը, որ հայ նշանավոր ռազմական-քաղաքական գործիչ էր, հանձնարարեց աշխատանքը՝ առաջարկելով շարունակել Փավստոս Բուզանդին և շարադրել IV դարի սկզբից մինչև V դարի վերջերն ընկած ժամանակահատված

¹ Փարպեցի Ղ., Հայոց պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1982:

² https://archive.org/stream/GhazarParbetsisHistoryOfTheArmenians/Ghazar_djvu.txt

³ Sophenebooks-<https://sophenebooks.com/products/ghazar-parpaci-history-of-the-armenians-volume-1> -Sophene Books

ծում եղած պատմական իրողությունները: Փարպեցին այս աշխատության մեջ հիշատակում է Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի անունները, համառոտ ակնարկում նրանց ստեղծագործությունները և գնահատում դրանք ոչ առանց որոշ քննադատության: Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի գրքերը համարելով պատմության առաջին և երկրորդ հիմնարար ու ազդեցիկ աշխատություններ՝ նա երրորդում է իր սեփական աշխատությունը և նշում, որ կշարունակի դրանք: Գիրքը բաղկացած է երեք մասերից՝ դրվագներից, և նախաբանից: Այն սկսվում է այնտեղից, որտեղ դադարեց Փավստոս Բուզանդը, այսինքն՝ 387 թվականից, երբ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:

Ցանկացած լեզվի բառապաշարի քննության հետ կապված հետազոտությունները միշտ գտնվում են լեզվաբանների ուշադրության կենտրոնում, և դրա կատարելագործմանը նվիրված ուսումնասիրություններն առանձնահատուկ նշանակություն ունեն հայագիտության մեջ: Մեր ընտրանքի բառերն առանձնացրել ենք ըստ գրաբարի և ժամանակակից հայերենի ամենահայտնի բառարանների:

Մի շարք գրաբարյան բառեր ի սկզբանե չեն ունեցել եզրույթային իմաստ՝ դրանք ձեռք բերելով միայն ավելի ուշ՝ ժամանակակից հայերենում: Այս փոփոխությունները տեղի են ունենում, քանի որ լեզվի զարգացման ընթացքում բազմաթիվ բառեր աստիճանաբար ընդգրկում են նոր խոսքիմասային իմաստ՝ կա՛մ հին ու նոր խոսքիմասային իմաստները համադրելով, կա՛մ նախկին իմաստից զրկվելով և նոր ձեռք բերվածն ամրապնդելով: Լեզվական միավորների բառապաշարային իմաստի տեղաշարժերն առաջացնում են ձևաբանական և շարահյուսական կարգերի փոփոխություններ, որոնք առաջ են բերում ձևաբանական նոր արժեք և գործառույթ: Կան մի շարք բառեր, որոնք, ժամանակի ընթացքում պահպանելով իրենց կառուցվածքային ամբողջականությունը, անցնելով գրաբարից ժամանակակից հայերեն, ունեն մեկից ավելի խոսքիմասային իմաստ և գործառույթ: Այսպիսով, որոշ բառեր, պայմանավորված իրենց իմաստային կառուցվածքով, կարող են ունենալ մեկից ավելի

ձևաբանական նշանակություն և բնութագրվում են խոսքիմասային բազմիմաստության հատկանիշով:

Արդարադատություն. գրաբարում՝ *արդարութեամբ դատել, արդար լինել*. «...բնաւ իսկ չէ արժան արդարադատութեանդ ցասնուլ մեզ» (Էջ 78): (... քո արդարադատությանը բնավ արժանի չէ զայրանալու մեզ վրա):

Այս իմաստով սա *արդարությամբ դատելու* գործողություն է, մինչդեռ հետագայում բառը նոր իմաստներ է ձեռք բերել, ինչպես նաև պահպանել է իր սկզբնական իմաստը: Դրանցից առաջինը *իրավական* է. 1. *պետության դատական, դատաիրավական գործունեությունը*, 2. *դատական, դատաիրավական մարմինների ամբողջությունը*: Ժամանակակից հայերենում այն նաև նշանակում է. 1. *արդարադատ լինելը* 2. *արդար, իրավացի դատավճիռ, որոշում*: Սրանից հետևում է, որ այստեղ կա իմաստի ընդլայնում, որի դեպքում բառիմաստի կառուցվածքը ժամանակի ընթացքում ընդարձակվում է՝ ներառելով այլ իմաստներ:

Դատել բայը սկզբնապես նշանակել է ինչ-որ մեկին *հանցանք վերա-գրել, մեղադրել, դատապարտել*: «Պատմութիւն Հայոց»-ում այն կիրառվել է հետևյալ կերպ. «դատել առաջին անօրինաց» (Էջ 22) (*դատել նախկին անօրեններին*), «*արժան է ի ձէնջ դատելոյ և անարգանաց*» (Էջ 22) (...*ձեռ կողմից արժանի է դատվելու և անարգանքի*), մինչդեռ ժամանակակից հայերենում այն նաև իրավական իմաստ է ստացել՝ *դատաբանում մեկին հանցագործության մեջ մեղադրել, ցուցմունք տալ, դատաքննել, դատական կարգով քննել մեկի գործը և վճիռ կայացնել*: Այնուամենայնիվ, բառը նաև պահպանել է իր սկզբնական իմաստը՝ *արդար դատել, ինչ-որ մեկին ինչ-որ բան անելու մեջ մեղադրել, դատապարտել, մեղադրել, պարսավել*: Լեզվի զարգացման ընթացքում այն ձեռք է բերել նաև մի շարք այլ իմաստներ, ինչպես՝ 1. *դատապարտել, պատժի ենթարկել*, 2. *դատը վարել, դատավարություն գլխավորել*, 3. (սպորտ.) *մարզական խաղը կամ մրցումը վարել, խաղի կանոնների պահպանումը հսկել*, 4. *փխբ*՝ *գնահատել, որակել, որոշել*, 5. *դատողություն անել, կշռա-*

դատել, 6. կարծիք կազմել, եզրակացության գալ 7. աշխատել, գործ անել, վաստակել, ձեռք բերել:

Այստեղ ակնհայտ է, որ կա իմաստի ընդլայնում. բառն այնպես է ընդլայնել իր իմաստային նշանակությունը, որ ներառում է մի շարք իմաստներ:

Ամբաստանել. գրաբարում այս բառը երկու իմաստ ունի.

1. *մեկին հանցանք վերագրել, մեղավոր համարել, դատապարտել*
2. *գրպարտել, չարախօսել.* «Պատմութիւն Հայոց»-ում հեղինակը գրում է. «... յաղագս որոյ ամբաստանեն զբէն նախարարքդ Հայոց...» (...որի համար քեզ ամբաստանում են հայոց այդ նախարարները (էջ 23...):

Խնամակալություն. գրաբարում՝ 1. *խնամակալ լինելը, խնամք տանելը, հոգատարություն* 2. *ձեռնտվություն, օգնականություն* 3. *կրոն.*՝ *նախախնամություն.* «Ձոր ոչ ի տուչութենէ մարդոյ վստահեալ ունէին յանձինս, այլ օգնութեամբ վերին խնամակալութեան» (էջ 111) (Որոնք ոչ թե մարդու կողմից էին վստահված, այլ վերին խնամակալության): Ինչպես նշվեց, այս բառը նախկինում ունեցել է նաև կրոնական նշանակություն՝ *նախախնամություն:* Ժամանակակից հայերենում իր սկզբնական նշանակությունը պահպանելուց զատ՝ այն պահպանվել է նաև *հոգատար* նշանակությամբ, ինչպես նաև իրավաբանական եզրույթ է՝ հետևյալ նշանակությամբ՝ *տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ սահմանված հսկողությունը:*

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (ԺՀԼԲԲ) բառի բացատրությունն է՝ *օրենքով որևէ անձի տրված իրավունք, որով նա կառավարում է ունևոր անչափահասների՝ որբերի և ինքնուրույն ապրել չկարողացող այլ անձանց գույքն ու հարստությունը և խնամակալում նրանց⁴:*

⁴ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%AD%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D

Ըստ Է. Աղայանի (ԱՀԲԲ)՝ այս բառի կրոնական նշանակությունը՝ *ճակատագիր*, հնացած է: Այսպիսով, այստեղ մի կողմից ունենք իմաստի ընդլայնում՝ իրավական իմաստի ավելացմամբ, մյուս կողմից՝ կրոնական նշանակության կորուստ:

Կասկածեալ. դատաբժիշկների կողմից հանցագործության մեջ կասկածվողը: *Կասկածեալ* բառը *կասկածել* բայի անցյալ դերբայն է. «...*հայելով ի յառաջիկայ իրացն անյայտութիւն՝ կասկածեալ զգուշացաւ...*» (էջ 55) (Նայելով առաջիկա անհայտ իրադարձություններին՝ կասկածելով զգուշացավ): Ժամանակակից հայերենում այն դարձել է ածական՝ խոսքիմասային փոխանցմամբ, և գրանցված է բառարաններում՝ որպես իրավական եզրույթ՝ *դատաքննչական մարմինների կողմից հանցանքի մեջ կասկածվող քաղաքացի* իմաստով:

Կողմն. գրաբարում՝ 1. որևէ բանի կողքային տարածությունը կամ ուղղությունը, 2. ինչ-որ բանի աջ կամ ձախ կողմը, 3. որոշ ուղղությամբ ընկած երկիր, գավառ. «Ի խոնարի կողմն երկրի ձգտելին» (էջ 86) (Երկրի ստորին կողմն էին ձգտում):

Ժամանակակից հայերենի բառարաններում այս բառը բացատրվում է. 1. մեկի վրա դատարանում որևէ հանցանք բարդել, մեկին մեղադրել, 2. ցուցմունք տալ դատարանում դատի չենթարկված անձանց մասին՝ իբրև իր հանցակիցների, հանցակցության մեջ մեկին մեղադրել: Բացի իրավաբանական եզրույթ լինելուց՝ բառը պահպանել է նաև իր սկզբնական նշանակությունը, այն է՝ *մեկին հրապարակալ հանցանք վերագրել*: Փարպեցին նաև գործածել է «ամբաստանութիւն» գոյականը՝ «հասուցին զբանս ամբաստանութեանն առ Վռամ արքայն Պարսից (էջ 23) ... (...մեղադրանքի խոսքը հասցրին պարսից Վռամ արքային):

Դատախազ. գրաբարում՝ *ոսոխ, հակառակորդ, ամբաստանող, մեղադրող*. «...*հրաման տայր.... պատասխանի առնել բանից դատախազին*» (էջ 113) (...*հրաման տվեց պատասխանել մեղադրողի/ամբաստանողի խոսքերին*): *Լուաւ թագաւորն Արեւաց.... ի դատախազն Արտաշեսի* (էջ 24) (*Պարսից թագավորը լսեց Արտաշեսին*

մեղադրողին): Ժամանակակից հայերենում այն կորցրել է «թշնամի» իմաստը և ստացել նորը՝ դառնալով իրավաբանական եզրույթ հետևյալ իմաստներով. 1. *պետական, պաշտոնական անձը, որ հսկում է օրենքների ճշտորեն կիրառմանը*, 2. *պետական մեղադրող դատաբանում:*

Դատախազութիւն. գրաբարում նշանակել է *ամրաստանություն, բողոք, հակառակություն*՝ «... առաւել եւս ի դատախազութիւն եղեալ վնասէին նմա» (էջ 50) (առավել ևս ամրաստանության մեջ լինելով՝ վնասում էին նրան): Ժամանակակից հայերենում այն դարձել է իրավաբանական եզրույթ, ինչպես նաև իրավական իմաստ ունեցող բառ. 1. *օրինականության պահպանման հսկողությունն իրականացնող պետական մարմին* 2. *դատախազ լինելը*, 3. *դատախազների կազմը* 4. *դատախազության շենքը*: Այս դեպքում նույնպես առկա է իմաստի ընդլայնում:

Դատապարտել. գրաբարում նշանակել է. 1. *պատժի վճիռ կայացնել՝ հանցավոր ճանաչելով՝ պատժել*, 2. *դատապարտելի համարել*, *պախարակել*, *մեղադրել*, 3. *փխր.*՝ *ստիպել*, *հարկադրել*, *փխր.*՝ *պարտադրել*: Ժամանակակից հայերենում այն գործածվում է որպես եզրույթ իրավագիտության մեջ՝ *հանցագործին դատապարտել և մեղադրական դատավճիռ կայացնել՝ հաստատելով պատիժը*:

Դատապարտեալ. գրաբարում *դատապարտել* բառի անցյալ դերբայն է. «Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ» (էջ 85) (...ի դատաստանից ազատվում է դատապարտվածը): Ժամանակակից հայերենում այն և՛ իրավական եզրույթ է, և՛ պահպանել է իր սկզբնական նշանակությունը և գործածվում է որպես գոյական՝ 1. *ցանկացած հանցագործության համար դատապարտված և ինչոր պատժի դատապարտված անձ*, 2. *հնց.*՝ *հանցագործ*: Ինչպես ավելի վաղ նշեցինք, այն նաև պահպանել է իր սկզբնական իմաստը ածական խոսքի մասի նշանակությամբ՝ *դատապարտված*:

Երաշխատք. գրաբարում՝ *որևէ մեկին երաշխավորող՝ մեկի համար պատասխանատու անձ*: Ժամանակակից հայերենում այն իրավաբանական եզրույթ է՝ *ուրիշի համար երաշխավորություն*

ստանձնող անձ իմաստով «...*ոչ որ կարէ լինել երաշխավոր անձին հիրում...*» (էջ 57) ...*ոչ որ չի կարող ինքն իրեն երաշխավոր լինել:*

Երաշխավորութիւն. գրաբարում նշանակել է. 1. *երաշխավոր լինել, երաշխավորելը, երաշխիք.... «Բսկ երանելի երէցն Աբրահամ, երաշխավորութեամբ հաւատացելոց աշխարհին...էկն ի Հայս»* (էջ 106) *(Բսկ երանելի երէց Աբրահամը երկրի հաւատացյալների երաշխավորությամբ եկավ Հայաստան)...* Ժամանակակից հայերէնում բառն ունի հետևյալ իմաստները. 1. *երաշխավորելը*, 2. *նույնն է՝ երաշխիք* 3. *երաշխավորագիր* 4. *իրավ.՝ ա) խափանման միջոցներից մեկը, որի համար երաշխավորը պատասխանատու է անձնապէս կամ նյութապէս, բ) պայմանագիր, որով երաշխավորողը պարտավորվում է լրիվ կամ մասնակի չափով պատասխանատվություն կրել երաշխավորյալի ճշտակատարության խախտման դեպքում:*

Երդումն. գրաբարում նշանակել է 1. երդում, երդվելը, երդում տալը, 2. նզովք, որ մարդ իր վրա դնում է, եթե ստի. «*Եւ որ որ հեռացեալ յուխտէ երդմանցս այսոցիկ ցուցցի ուխտագանց* (էջ 60)....» (Եվ ով որ հեռանում է այս երդումի ուխտից, մատնացույց է արվում որպէս ուխտագանց): Ժամանակակից հայերէնում այն ունի հետևյալ իմաստները. 1. *Սովորական կամ հանդիսավոր խոստում՝ որնէ՝ նվիրական բան վկայակոչելով*, 2. *հավաստում, հայտարարություն, պնդում, որ արվում է դատարանում:* Այսպիսով, այստեղ կրկին իմաստի ընդլայնում է նկատվում, որի արդյունքում, բացի «ուխտի» նախնական ընդհանուր իմաստից, տեղի է ունեցել նաև իրավական իմաստի ավելացում:

Երդուեալ....այս բառը *երդնուլ* բայի անցյալ դերբայն է՝ «երդվելով, երդվող, երդված»: «*Երդուեալ ամենայն բազմութիւն զօրացն ազատաց... հաստատէին զերդումն*» (էջ 61) *(Ազնվականների զորքի/զորքերի ամբողջ բազմությունը երդվելով հաստատեց)* «*Եւ այսպէս երդուեալք... յիրաքանչիւր վանս գնացին հանգչել*» (էջ 100) *(Եվ այսպէս երդվալները... յուրաքանչյուրը գնաց իր վանքը հանգստանալու...):* Ժամանակակից հայերէնում այն դարձել է ածական, որը հստակ ցույց է տալիս, որ այստեղ առկա է կոնվերսիա՝ խոսքիմասային փոխանցում:

Ժառանգ. գրաբարում՝ 1. *Ժառանգություն ստացած կամ ստանալու իրավունք ունեցող անձ*, 2. *լայնաբար՝ ժառանգորդ, ժառանգող, ստացող* 3. *Ժառանգություն*: Ժամանակակից հայերենում բառի սկզբնական նշանակությունը չի փոխվել, այն պահպանվել է «Ժառանգ» բառային իմաստով. 1. *Ժառանգություն ստացած կամ դրա իրավունքն ունեցող անձ* 2. *ծնողների հաջորդող սերունդ, հաջորդներ*, 3. *զավակ, որդին իր ծնողների համար* 4. *թագավորի, իշխանի օրինական հաջորդը* 5. *փխր.՝ հետագա սերունդ, հետնորդներ*, 6. *նախորդների գործը շարունակող սերունդ և դրա ներկայացուցիչներից յուրաքանչյուրը*, 7. *նա կամ այն, որ որևէ բանի տեր է դառնում, յուրացնում, ստանում է իբրև ավանդ* 8. *ծնողներից որևէ մեկին առավելագույն չափով նման*:

Ժառանգորդ. գրաբարում՝ *ժառանգ, ժառանգող, տեր*, ժամանակակից հայերենում՝ *անձ, ով ստացել է ժառանգություն կամ ունի դրա իրավունքը, օրինական կամ որդեգրված զավակ, որ ստացել է ծնողների ժառանգությունը*⁵:

Ժառանգակից. գրաբարում՝ *ժառանգության մասնակից, միևնույն ժառանգությունը ստացողներից յուրաքանչյուրը...* Ժառանգակից լինել Քրիստոսի... (Էջ 28): Ժամանակակից հայերենում այն ունի նույն նշանակությունը. ինչպես նաև ամրագրվել է որպես իրավական եզրույթ՝ *համաժառանգ* իմաստով:

Ցանցանք. գրաբարում՝ *օրենքի խախտում, օրինազանցություն, պատվիրազանցություն, անիրավություն*: Ժամանակակից հայերենում այն ոչ միայն սովորական բառ է, այլև իրավական եզրույթ. 1. *անթույլատրելի՝ դատապարտելի արարք, ոճիր, չարագործություն*, 2. *մեղք*. «Եւ ի վերայ այդչափ ձերոյ անցանաց եւ մահապարտութեան՝ արքայից արքայ առ ձեզ կարի բարերարութիւն արար» (Էջ 97) (Եվ ձեր այդքան հանցանքների ու մահապարտության դիմաց արքայից արքան ձեր նկատմամբ շատ բարերարություն արեց):

⁵ Տե՛ս **Ա. Կոբեկյան**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Վանաձոր, Արմինֆո, 2005:

Յանցաւոր. գրաբարում՝ 1. հանցանք գործած կամ գործող, մեղապարտ, մեղավոր, օրինազանց, 2. ուրացող, ուխտադրուժ. «...*ի փրկութիւն յանցաւորաց՝ պարգեւա՝ եւ մեզ հեղուլ զարիւնս մեր ի վերայ խոստովանութեանն այսորիկ...*» (Էջ 62): Որպէս փրկություն հանցավորների՝ թու յլ տուր մեզ մեր արյունը հեղել այս խոստովանության համար: Ժամանակակից հայերենում այն բազմիմաստ է. 1. *հանցանք գործող՝ գործած, հանցագործ*, 2. *հանցանք պարունակող, իբրև հանցանք որակվող*, 3. *անթույլատրելի, դատապարտելի, վատ*, 4. *հանցագործ* 5. *զանցառու, պարտազանց մարդ*: Արդի հայերենում այն կարելի է համարել իրավաբանական նշանակություն ունեցող բառ, որը թերևս եզրույթ դառնալու ճանապարհին է:

Ժամանակակից հայերում «կողմ» բառը, մի շարք իմաստներ ունենալուց բացի, նաև իրավական եզրույթ է՝ *դատական որոշ հարաբերությունների մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը* իմաստով: Այն ունի հետևյալ նշանակությունները. 1. *որևէ բանի կողքային տարածությունը* 2. *ուղղություն*, 3. *որևէ բանի բաղկացուցիչ մաս, տարր*, 4. *հատկություն, առանձնահատկություն*, 5. *կողմնակից, թեր, համախոհ*, 6. *որոշ ուղղությամբ ընկած բնակավայր, երկիր, գավառ*, 7. *երկրչ.՝ երկրաչափական մակերևույթի (մարմնի) տարածությունը սահմանափակող ուղիղ գծի հատված*, 8. *իրավ.՝ դատական որոշ հարաբերությունների մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը*, 9. *մարդ կամ մարդկանց խումբ, որ որևէ հանգամանքով պայմանավորված՝ հակադրության մեջ է գտնվում այլ մարդու կամ մարդկանց խմբի հետ*, 10. *միմյանց ազգակցական կապերով կապված մարդկանց խումբ*, 11. *մոտ, մոտերքը, դեմ...*

Ակնհայտ է, թե ինչպէս է բառիմաստն ընդարձակվել և ներառել մի շարք այլ նշանակություններ: Բառը դարձել է բազմիմաստ, այսինքն՝ նաև իրավական նշանակություն է ստացել, ինչպէս նշվեց վերևում:

Հպատակութիւն. 1. հպատակ լինելը, հնազանդություն, հլություն, 2. սրտանց ծառայելը. «...*ի հպատակութեան կացուցանեն*»... (Էջ 28): (... հպատակված են...): Ժամանակակից հայերենում

այն նշանակում է 1. *հպատակ լինելը, հպատակի դրությունը* 2. *հնազանդություն, 3. որևէ պետության հպատակ լինելը (տիրված երկրի մասին)* 4. *Քաղաքացիություն*: Բառն ունի նաև իրավական իմաստ՝ *քաղաքացու պատկանելությունը որևէ ֆեոդալական կամ բուրժուական տերության մշտական բնակչության*:

Մեղադրեալ. «մեղադրել» բայի անցյալ դերբայն է, նշանակում է՝ *մեղադրելով, մեղադրած, մեղադրող*: «Նա մեղադրեալ լիցի...» (Էջ 50) (*Նա կմեղադրվի...*): Ժամանակակից հայերենի բառարաններում արձանագրված է հետևյալ իմաստով՝ *այն անձը, որի մասին իբրև մեղավորի՝ դատի տալու որոշում է կայացվել*:

Ինչպես տեսնում ենք, հայերենի բառապաշարի իրավական ճյուղը մեծ նշանակություն ունի ոչ միայն իրավական համակարգի, այլև ընդհանրապես հայերենի համար: Ակնհայտ է գրաբարի ազդեցությունը ժամանակակից հայերենի իրավական եզրույթաբանության վրա:

Իրավաբանական բառապաշարի ուսումնասիրությունը էական նշանակություն ունի հայ իրավական եզրույթաբանության պատմական զարգացման և գրաբարի՝ ժամանակակից հայերենի վրա թողած ազդեցության առումով: Բացի այդ՝ նրա համաժամանակյա և տարժամանակյա վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հայերենի իրավական բառաշերտի զարգացման մասին: Հայերենի բառապաշարի իրավական ճյուղը էական նշանակություն ունի նաև իրավաբան մասնագետների և գիտնականների համար, ովքեր կարիք ունեն կողմնորոշվելու Հայաստանի իրավական համակարգում: Այս բառապաշարի իմացությունը անհրաժեշտ է իրավական փաստաթղթերը, դատական գործընթացները և այլ իրավական նյութեր ընկալելու համար:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրաբարի բառապաշարի կարևոր բաղադրիչ կազմող եզրույթային համակարգում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տարածական բաժանումներ արտահայտող եզրույթները, որոնց իմաստաստուգաբանական և գործառական նկարագիրը պատմագրության մեջ կարևոր է և արդիական ինչպես տարժամանակյա, այնպես էլ համաժամանակյա դիտակետից:

V դարի պատմիչների գլխավոր նպատակը եղել է ըստ ամենայնի նկարագրել թագավորների վարած ներքին և արտաքին քաղաքականությունը: Հայ ժողովրդի կյանքում անխուսափելի տեղ զբաղեցնող պատերազմները արտաքին թշնամիների դեմ նկարագրվում են գեղարվեստական պատկերման հրաշալի դրվագներով, որոնցում անթաքույց արտահայտվում է հեղինակի գնահատականը ևս: Նրանք խիստ կարևորում են նաև հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի խորաքնին նկարագրությունը, մանավանդ եթե պատմիչը նպատակ է հետապնդում ներկայացնելու նոր կրոնի՝ քրիստոնեության ուժը, հոգևոր գործիչների պայքարը քրիստոնեական գաղափարախոսության ամրապնդման և տարածման համար, այդ ճանապարհին շատ հերոսների նահատակությունը:

Գրաբարի եզրույթային համակարգի յուրաքանչյուր շերտ իր ենթաշերտերի հարուստ և հետաքրքիր դրսևորումներն ունի V դարի գրաբարով մատենագրության մեջ: Դրանց քննությունը կարևորվում է հետևյալ հիմնավորումներով.

1) արդի արևելահայերենի եզրույթների գերակշռող մեծամասնությունն իր արմատներն ունի գրաբարում. մասնավորապես՝ հետաքրքրություն ներկայացնող տարածքային բաժանումներ արտահայտող եզրույթների համաժամանակյա քննությունը փաստական կարևոր նյութ է տալիս արդի արևելահայերենում նրանց գործառական և իմաստաստուգաբանական վերլուծության համար,

2) այն կամբողջացնի գրաբարի եզրությային համակարգի նկարագիրը: Երկի բովանդակությամբ պայմանավորված՝ V դարի պատմագրության մեջ գրաբարի եզրությունների գործառական հաճախականությունը նույնը չէ. այսպես՝ հաճախադեպ են ռազմաքաղաքական և կրոնական բովանդակության եզրությունները՝ ի հակադրություն իրավաքաղաքական, իրավավարչական հարաբերություններ, տարածքային տարբեր բաժանումներ արտահայտող եզրությունների¹:

Տարածական, հասարակական, քաղաքական բաժանումներ արտահայտող եզրությունների քննության համար փաստական նյութ են դարձել Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» և Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկերում գործածված եզրությունները²:

Քաղաքական նշանակության տարածական հարաբերություններ արտահայտող եզրություններն արտահայտում են քաղաքական բաժանումներ, ինչպես՝ *Հայոց երկիր, Յունաց աշխարհ, սահմանք երկրի Հայոց*, իսկ հասարակական նշանակության են տարածական ընդհանրական բովանդակության բառ-եզրությունները³, օրինակ՝ *զետ, աղբյուր, բացատ* և այլն: Կատարելով իմաստաստության և պատմության վերլուծություն՝ անհրաժեշտության դեպքում անդրադարձել ենք նաև դրանց գործառական նկարագրին:

¹ Տե՛ս **Ա. Աբաջյան, Ա. Յուզբաշյան**, Կրոնական բովանդակություն ունեցող բառերը Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկում, «Էջմիածին» հանդես, Է, 2022, էջ 50-65: Հասարակական-քաղաքական հարաբերություններ արտահայտող եզրությունները Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկում, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2023, 1 (40), էջ 88-100: Ռազմաքաղաքական և իրավական հարաբերություններ արտահայտող եզրությունները գրաբարում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Եր., 2023, 1 (29), էջ 259-271:

² **Եղիշե**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989; **Փ. Բուզանդ**, Բուզանդարան պատմութիւնք, Եր., 1987: Բնագրային օրինակների էջերը կտրվեն շարադրանքում:

³ Է. Աղայանը բառապաշարը բաժանում է 3 շերտի. ընդհանուր բառեր, որոնք չունեն եզրությային նշանակություն և գործառույթ, բառեր, որոնք կարող են ունենալ նաև եզրությային արժեք /սրանք բառ-եզրություններ են/ և եզրություններ, որոնք ունեն լոկ եզրությային իմաստ: Տե՛ս **Է. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 320:

Ներկայացնենք խնդրո առարկա միավորների քննությունը:

* **Աշխարհ** – ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) ամբողջ աշխարհը, երկինքն ու երկիրը՝ իրենց մեջ գոյություն ունեցող բոլոր բաներով, 2) առանձին երկիր, տերություն, թագավորություն, 3) գավառ, նահանգ, 4) հավաքական մարդիկ, բազմություն, 5) (կրոն) երկրային կյանք, 6) ապրելու, գոյության ձևը՝ եղանակը, կենցաղավարություն, ապրելակերպ, կյանք, 7) (հունաբանությամբ) իրերի շատություն, կուտակություն⁴:

Բնագրային օրինակներ՝ «Ապա կարգեցան կազմեցան, յօրինեցան խաղաղացան **աշխարհին Հայոց**՝ի մեջ երկուց թագաւորացն...» (Բուզ., 204), «Այլ գրով և պատգամաւ հանդիմանէր զնոսա վասն զուր ւաւերածի **աշխարհին Հայոց**» (Եղ., 398), «Զի թեպէտ եւ **Արեաց աշխարհին** առնէր մեծապէս խաղաղութիւն...» (Եղ., 298):

Աշխարհ բառը գործածվում է իբրև առանձին տերության անվանում, ինչպես՝ **Արեաց աշխարհ, Հայոց աշխարհ, Աղուանից աշխարհ** և այլն, որոնք քաղաքական տարածքային բաժանումներ բովանդակող եզրույթներ են: Կան նաև **աշխարհ** բառի չտեղայնացված իմաստով գործառույթներ, որոնք արտահայտում են ԳԲԱ-ում վկայված առաջին իմաստը: Այս կիրառություններում հանդիպում են նաև հոդերի հետաքրքիր գործառույթներ: Բերենք բնագրային օրինակներ՝

«Աստուած, որ արար **գաշխարհս** նոյն եկն ու ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ... Որպէս յոչնչէ արար **գայս** մեծ մարմին **աշխարհս**, սոյնպէս...» (Եղ., 78); «... խոստացաւ երկրորդ անգամ գալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել **զբոլոր աշխարհս**...» (Եղ., 80):

Աշխարհ բառի հետ գործածված **ս** ցուցական հոդը, որ արտահայտում է նաև որոշյալության իմաստ, ուղեկցվում է համապա-

⁴ Բացատրությունները տրված են ըստ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի» (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000): Այսուհետև ԳԲԱ, ԳԲԲ: Տարաթեքության քննության համար հիմք է հանդիսացել Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանը» (Եր., 2003). այսուհետև ԼԽԳԲ:

տասխան *այս* ցուցական դերանվան հետ, որը կարող է նաև բացակայել: «**Աշխարհս** նիւթեղէն է և նիւթքս ուրիշ են և ընդ միմեանս հակառակ» (Եղ., 60): «Իսկ եթէ առ անբան **աշխարհս** այսպէս հոգ տանի Աստուած, ո՞ր չափ եւս առաւել առ բանաւոր **աշխարհս**՝ մարդս» (Եղ., 70):

Գործածված է նաև **դ** հոդը. այս դեպքում կարող է զուգահեռաբար կիրառվել *այդ* ցուցական դերանունը, ինչպես՝ «Ի բազում տեղիս *այդ* **աշխարհիդ** ձերոյ գտանին գիրք նորա, ընթերցի՛ր, անտի տեղեկանաս» (Եղ., 58):

Ինչպէս վկայում են բնագրային օրինակները, **աշխարհ** եզրույթը քաղաքական բաժանման իմաստ է ստանում որևէ տերության բաղադրյալ անվան կառույցում: Առանց իմաստային առկայացման՝ այն ունի բազմաթիվ իմաստներ. **աշխարհ**, որ ընդգրկում է Աստծուց արարված ամեն ինչ, մարդկանց **աշխարհ**, հոգևոր **աշխարհ**, հրեշտակների **աշխարհ** և այլն:

Աշխարհ եզրույթը տարարժեքություն չի դրսևորում, սակայն նրանից կազմված բառերի համար տարարժեքության հետաքրքիր դրսևորումներ առանձնացնում է Լ. Խաչատրյանը: Այսպէս՝ **աշխարհօրէն** բառը դրսևորում է մակբայ – ածական տարարժեքություն: Լ. Խաչատրյանը օրինակներ է բերում Բուզանդից (ԼԽԳԲ, էջ 51). մակբայական իմաստով նշանակում է *աշխարհիկ կյանքի համեմատ*. «Յաղագս թէ զհարդ միաբան աշխարհօրէն ժողովէին առ հայրապետն Ներսէս (Բուզ., 54), ածականի իմաստով՝ *համընդհանուր, տիեզերական* նշանակությամբ. «Միաբան խորհեցան **աշխարհօրէն** խորհուրդ» (Բուզ., 39):

Կամ **աշխարհակալ**-ը՝ իբրև բաղադրյալ անվան բաղադրիչ, ունի ածականական գործառույթ, իսկ եթե առկայացված չէ, նշանակում է *թագաւոր* (ԼԽԳԲ, էջ 60): «Մարգպան եւ **աշխարհակալ** (գոյական) աշխարհին Հայոց զառաջինն ի թագաւորէն պարսից զՍուրէն (Բուզ., 154)⁵:

⁵ Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» վկայված բնագրային օրինակների էջերը ներկայացրել ենք բառարանին համարժեք հեղինակը փաստագրումը կատարել է ըստ «Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց» (Թիֆլիս, 1913) բնագրային երկի:

* **Երկիր** – իբրև գոյական՝ ԳԲԱ-ն նշում է 8 իմաստ՝ 1) աշխարհ, երկրագնդի ցամաք, հողագունդ, 2) ցամաք, երկրագնդի ցամաք մակերևույթ, 3) որևէ ժողովրդի բնակության վայրը, տարածությունը, 4) հայրենիք, 5) գետին, հող, իբրև փոխանուն՝ գործառվում է երկու իմաստով՝ ա) մարդկություն, երկրագնդի բնակչություն և բ) որևէ երկրի բնակչություն, մարդիկ: Իբրև փոխաբերական իմաստ՝ ԳԲԱ-ն նշում է աշխարհական վիճակը՝ հակադրությամբ հոգևորական վիճակի: Այս եզրույթով են կազմված **յերկրեք** և **յերկրիք** դարձվածային միավորները, որ ունեն *երկրից եղածները* նշանակությունը՝ երկրավորներ, հողեղեններ: Իբրև թվական՝ ունի երկրորդ իմաստը (ԳԲԱ, 415):

Բնագրային օրինակներ՝ «Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց Մեծաց, թագաւորեաց **յերկրին** ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով եւ ամենայն ընտանեօքն իւրովք» (Բուգ., 104): «... եկն եհաս **յերկիրն** Հայոց եւ ժողովեաց զցրուեալս **երկրին** եւ թագաւորեաց ի վերայ նոցա» (Բուգ., 104):

* **Երկինք** – ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) երկիրը շրջապատող տիեզերական տարածություն, 2) երկնքի երևացող կամարածն տարածությունը՝ երկնականարը:

Բնագրային օրինակ՝ «Թերեւս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ **զերկին** եւ **զերկիր...**» (Եդ., 48):

* **Քաղաք** – իրանական փոխառություն է: ԳԲԲ-ն առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) խոշոր բնակավայր՝ շինություններով, փողոցներով, հրապարակներով և այլն, 2) քաղաքի բնակչությունը:

Բնագրային օրինակ՝ «Եւ ժողովեաց ամենայն իւրոյ իշխանութեան **քաղաքաց**» (Բուգ., 144):

Բուզանդը **քաղաք** եզրույթը գործածել է նաև **որսաստեղի** իմաստով: Բառի մեկնությունը տալիս է Մտ. Մալխասյանցը 59-րդ ծանոթագրությամբ. «*Քաղաք* բառը նշանակում է նաև պարսպապատ տեղ...» (Բուգ., 427), ինչպես՝ «Այլ յերկրին Ապահունեաց **յոտինս** մեծի լերինն Մասեաց տեղին զայն որսացուք տեղուջ որում անուն կոչի **քաղաք** Աղիորօք» (Բուգ., 21):

Ոսն բառի համար ԳԲԲ-ն նշում է 7 իմաստ, որոնցից 6-րդը *ստորոտ* իմաստն է (տե՛ս վերևի վերջին օրինակը):

* **Քաղաքորմն** – նշանակում է՝ 1) քաղաքը շրջափակող պատ, պարիսպ, պատնեշ, 2) պարսպած, ցանկապատած տեղ:

Բնագրային օրինակ՝ «... հասեալ պատէին զմեծ **քաղաքորմն** եկեղեցւոյ Աշտիշատու» (Բուզ., 16):

* **Քաղաքիկ** – նշանակում է *փոքր քաղաք*: Բնագրային օրինակ՝ «... լի եւ լի ծաւալեցան մինչն ՚ի փոքր **քաղաքիկն** Սատաղու...» (Բուզ., 16):

* **Նահանգ** – փոխառություն է պահլավերենից: ԳԲԱ-ն վկայում է հե-տևյալ իմաստը. «Երկրի տերիտորիայի խոշոր բաժանումներից յուրաքանչյուրը, որ ստորաբաժանվում է գավառների» (ԳԲԱ, 269): Բնագրային օրինակ՝ «Յետս կացեալ յուխտէն քրիստոնեութեան եւ աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի եկայանք զօրացն էին... **աւան** եւ **զբերդն** Արմաւրի, ԳՌ-ւաշն աւան... եւ զամենայն **ոտն** Արագածու եւ **զնահանգն** Արտաշատու եւ զԱրտաշատն ինքնին գլխովին եւ զամենայն **գեղոս** եւ **զաւանս**, որ շուրջ նովաւ էին...» (Եղ., 158):

* **Աւան** – փոխառություն է պահլավերենից և նշանակում է *մեծ գյուղ, փոքր կամ չպարսպատված քաղաք, գյուղաքաղաք*: Բնագրային օրինակ՝ «...տարան ՚ի Թիլն յաւանն...» (Բուզ., 34):

Ավան-ը արդի արևելահայերենում⁶ նշանակում է *ավանագյուղ, ոչ մեծ բնակավայր*: Այսօր այն նաև վարչական տարածքի անվանում է Երևանում:

* **Գաւառ** – ԳԲԱ-ն տալիս է հետևյալ մեկնությունը՝ 1) խոշոր վարչատերիտորիալ միավոր որևէ երկրի կամ պետության կազմում, երկրամաս, նահանգ, հայրենի երկիր, 2) եպիսկոպոսական թեմ

⁶ Արդի արևելահայերենի եզրույթների իմաստային մեկնությունների համար հիմք ենք ընդունել Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի» (Եր., 2003) վկայումները: Բառարանը արժևորվում է ոչ միայն վկայված բառերի իմաստային խորաքննի վերլուծությամբ, որի հենքի վրա էլ ներկայացված են բառային հոմանիշները, այլև պարտադիր պատմական իմաստաբանական քննությունը:

(ԳԲԱ, 310): Բնագրային օրինակ՝ «...զի հնգետասան **գաւառ** զայն ձեռական իշխանութեան ունէին իբրեւ սեպհական ի բնէ» (Բուգ., 178):

* **Գավառ**-ը արդի արևելահայերենում ունի հետևյալ իմաստները՝ 1) վարչատերիտորիալ միավոր նահանգի և շրջանի միջև մինչև 1929թ., 2) ծայրամաս, երկրի կենտրոնից հեռու գտնվող շրջան, 3) փխբ. հետամնաց՝ քաղաքային մշակույթից ու քաղաքակրթությունից կտրված վայր, 4) մի քանի շրջաններ ընդգրկող երկրամաս և այլն⁷: Այժմ նույն անվամբ է կոչվում Գեղարքունիքի մարզկենտրոնը:

* **Գիւղ** – նշանակում է *ցյուղ, շեն, ավան*: Նրանից է բաղադրված **գեղաքաղաք** եզրույթը, որ նշանակում է «քաղաքատիպ մեծ ցյուղ, քաղաքացյուղ ավան (ԳԲԱ, 313): Բնագրային օրինակ՝ «...մատենաց տէր զգեղաքաղաքն զԱրշակաւանն ՚ի ձեռն հարուածոցն...» (Բուգ., 176):

Գյուղ բառ-եզրույթի համար արևելահայերենում վկայված են *ռչ քաղաքատիպ բնակավայր, որտեղ զբաղվում են գլխավորապէս ցյուղատնտեսությամբ, ցյուղաշխարհի* իմաստները⁸:

* **Կալուած** – ունի հետևյալ նշանակությունները՝ 1) ժառանգած կամ ձեռք գցած **բնակության տեղ**՝ ստացվածք, ունեցվածք, 2) մեկի իշխանության տակ գտնվող երկիր՝ **երկրամաս**, տիրույթ, 3) որևէ մեկին սեփականության իրավունքով պատկանող **հողային** անշարժ ունեցվածք: Ինչպես տեսնում ենք, այն բազմիմաստ բառ է և եզրույթ է դառնում, եթե ունի հողատարածք, երկիր, երկրամաս իմաստները, որոնք պատկանում են մեկին՝ իբրև սեփականություն:

* **Ագարակ** – ունի հետևյալ նշանակությունները՝ 1) մշակված կամ մշակելի հող՝ հանդ, 2) հողային կավածք, 3) ցյուղ, ավան, 4) ագարակային, ցյուղական: Բնագրային օրինակ. «Պատրէր զոմանս ՚ի նոցանէ առատ պարգեւօք, իսկ զոմանս **ագարակօք** եւ մեծամեծ գեղօք» (Եղ., 34): Հիշյալ օրինակում ունի գոյականական գործառույթ, սակայն այն կիրառվում է նաև իբրև ածական՝ դրսևորելով

⁷ Տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 222:

⁸ Ն.տ., էջ 248:

գոյական-ածական տարարժեքություն. «Գրեաց յամենայն **ազարակ տեղիս**» (ԼԽԳԲ, 16):

* **Անապատ** – փոխառություն է պահլավերենից, նշանակում է՝ 1) անշեն, անբնակ, 2) ամայի, վայրի, ավերակ, 3) ջրից զուրկ և աննշան բուսականությամբ ընդարձակ ավազուտ տարածություն, 4) փխբ.՝ զուրկ, թափուր, դատարկ, անմասն: Բնագրային օրինակ՝ «... եւ գունդ-դունդ դար-ձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս **անապատին** ի մարտ պատերազմի թշնամեացն...» (Եղ., 42):

Անապատ բառը դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև ածական՝ Լ. Խաչատրյանը նշում է *անշեն, անբնակ, վայրի* իմաստներով գործառույթները, իբրև գոյական՝ 1) *ավազադաշտ, անբնակ տեղ, 2) վանք, մենաստան* իմաստներով գործառույթները (ԼԽԳԲ, 30): Մեր քարտագրած օրինակում այն ունի *անբնակ տեղ* իմաստը:

Պատմական երկերում հանդիպում են հատվածներ՝ հարուստ տարածական բովանդակությամբ եզրույթներով: Ներկայացնենք նրանցից մեկը.

«...կապեցին, կախեցին, զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն, եւ արձակեցին ընդ **ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն** մեծի, արտաքոյ իւրեանց բանակին **ի դաշտին** Վատենայ... Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին **ի գաւառէն** Հարանդայ եւ բերին **ի գաւառն** իւրեանց **ի կողմանս** Աղուանից **ի սահմանս** Հայոց ՚ի Հարանդ, ի գեղօղն որ անուանեալ կոչի Ամարազ...» (Բուզ., 26):

* **Դաշտ** – փոխառություն է պահլավերենից, նշանակում է՝ 1) ցածրադիր և հարթ տարածություն, 2) արոտավայր, արոտատեղ, 3) մշակովի տարածություն, հանդ, 4) փխբ. որևէ բանի ասպարեզ կամ ընդարձակ տարածություն:

* **Ծով, ծովեզր** – ունի հետևյալ իմաստները՝ 1) ցամաքով շրջապատված դառնադի ջրով ջրային ընդարձակ տարածություն, 2) ընդարձակ ծավալված ջուր կամ այլ հեղուկ՝ նյութ, 3) (Հին Կտակարանում) արևմուտք՝ արևմտյան կողմը (Միջերկրական ծովի պատճառով, որ գտնվում է Պաղեստինից դեպի արևմուտք),

4) պղնձե մեծ ավազան, 5) փխր. ալեկոծություն, հուզմունք, ծփանք, 6) ած. ծովի նման մեծություն ունեցող:

Ծովեզր նշանակում է ծովափ:

* **Կղզի** – աքքաղական փոխառություն է: Նշանակում է *ջրով շրջապատված ցամաք*: Բնագրային օրինակ՝ «Յայնմ **կղզուց** զայս օրինակ կերակրեալ լինին ի ծովէ անտի...» (Բուզ., 148):

* **Աղբիւր** – նշանակում է՝ 1) ջրի աղբյուր, 2) ակ, ակունք, 3) փխր. անձ՝ առարկա, երևույթ, որից բխում են բարիքներ, օգուտներ և այլն: Բնագրային օրինակում ունենք 1-ին իմաստով գործառույթ. «...՛ի տեղուջն ուր եղեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց **աղբիւր** եւ արբին նաեւ որ ընդ նման էին, որ մինչև ցայսօր ասէն այնմիկ **աղբիւր** Յակոբայ» (Բուզ., 38): Առաջին իմաստով էլ այն արժևորվում է իբրև տարածական բառ-եզրույթ:

* **Գետ** – նշանակում է՝ 1) ջրի մեծաքանակ հոսանք, որ ընթանում է իր բնական հունով, 2) հեղուկի մեծ քանակություն: Բնագրային օրինակ՝ «... որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս **գետոյն** Եփրատայ» (Բուզ., 18):

* **Պողոտայ** – փոխառություն է ասորերենից: Նշանակում է՝ 1) լայն և ուղիղ փողոց քաղաքում, 2) քաղաքի հրապարակ, քաղաքամեջ, 3) լայն ճանապարհ: Բնագրային օրինակ՝ «... և ոչ կցեցին ՛ի միմեանս վասն **պողոտայի** ճանապարհին...» (Բուզ., 32):

* **Աշխարհապողոտայ** եզրույթը նշանակում է *լայն, ընդարձակ ճանապարհ* (ԳԲԱ, 158): Բնագրում ունենք **պողոտայ** եզրույթի գործառույթը:

* **Ճանապարհ** – նշանակում է՝ 1) գետնի վրա անցուդարձի համար բացված ուղի, արահետ, 2) անցման տեղ, անցում, 3) անցած կամ անցնելիք տարածությունը, 4) ընթացքի ուղղությունը, 5) փխր. կյանքի ապրելակերպ, կենցաղավարություն, 6) փխր. մի բանի հասնելու միջոց, եղանակ: Բնագրային օրինակ՝ «... եւ պատուով առաջնորդէր նոցա զերկայնութիւն **ճանապարհին** անդրէն յերկիրն Հայոց» (Եղ., 102):

* **Հրապարակ** – փոխառություն է պահլավերենից: Նշանակում է՝ 1) **քաղաքի մեջ ընդարձակ** տեղ՝ շինություններով շրջապատված, 2) վաճառանոց, շուկա, առևտրի վայր, 3) արքունի դահլիճ՝ ատյան,

որտեղ դատական քննություններ են կատարվում, 4) հրապարակում հավաքված բազմություն, ամբոյս: Իբրև **տարածական եզրույթ**, գործածված է առաջին իմաստով: Բնագրային օրինակներ՝ «... եւ իւրով լնուլ, եւ **ի հրապարակի** իւրում ի տեսիլ վանականաց կանգնել հրամայէր» (Բուգ., 90):

«Եւ օր ըստ օրէ բերէին իբրեւ զգէշ ընկենուին ի մեծ **հրապարակին...**» (Եղ., 280):

* **Կողմն** – նշանակում է՝ 1) որևէ բանի կողքային տարածությունը կամ ուղղությունը, 2) մի բանի աջ կամ ձախ մասը, կողք, 3) ուղղություն, 4) մաս, բաժին, 5) որոշ ուղղությամբ ընկած երկիր, գավառ /մնացյալ իմաստները տարածական իմաստին չեն առնչվում. 6) (կզմխս.) կող, կողոսկր, 7) հակառակ կողմը, մի կողմը, 8) նման մարդ կամ մարդկանց խումբ՝ հակադրված մի ուրիշ մարդու կամ մարդկանց խմբի հետ/:

Բնագրային օրինակ՝ «Եւ իբրեւ այսպէս գամենայն **կողմանց** հարեալ վատթարացաւ, անկաւ...» (Եղ., 280):

* **Կոյս** – ունի երկու իմաստ, որոնցից մեկը տարածական է՝ *կողմ, դէպի*: **Կոյս կոյս** բարդությունն ունի **այս կողմը** իմաստը (ԳԲԱ, 668): Բնագրային օրինակ՝ «... այլ խրամատեաց զպահակն Ճորայ եւ անցոյց **յայս կոյս** զգօրսն Մասքթայ...» (Եղ., 398):

* **Ծագ** – նշանակում է ծայր, մանավանդ որևէ առարկայի տարածության վերջնային մաս: Նրանից է բաղադրված **ծագէ ի ծագ**՝ ծայրից ծայր իմաստով բարդությունը: Բնագրային օրինակ՝ «...որում տեղեացն Ոսկիք կոչեն. ՚ի նոյն **ծագս** էր բնակեալ մեծն անապատաւորաց զինդ» (Բուգ., 414):

Ծագ եզրույթը տարարժեքություն չի դրսևորում:

* **Օակ** բառ-եզրույթը բազմիմաստ է և դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև գոյական՝ նշանակում է 1) *ծերաց, ճեղքվածք, անցք, խորշ*, 2) *անձամի, բույն*, իբրև ածական՝ *ծակված, ծակ ունեցող* (ԼԽԳԲ, 166):

* **Բացատ** եզրույթը դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև գոյական՝ նշանակում է 1) *ազատ տեղ, տարածություն, հեռավորություն*, 2) *սահման, անջրպետ*, 3) *քաղաքամերձ*

վայր. իբրև ածական նշանակում է *հեռավոր, ընդարձակ, բացօթյա*: Լ. Խաչատրյանը օրինակը բերել է Բուզանդից. «Նոքա **ի բացատ** յանյարկ տեղիս ասէին կալ աղօթս» (Բուզ., 79):

***Սահման** – փոխառություն է պահլավերենից: Ունի հետևյալ նշանակությունները՝ 1) եզր՝ ծայր, որտեղ մի բան վերջանում է, 2) վայրերը՝ գավառները ևն միմյանցից բաժանող գիծ, սահմանագիծ, 3) որևէ սահմանագծից ներս գտնվող վայր՝ տարածություն, 4) մի բանի՝ երևույթի որոշված սահմանված թույլատրելի չափը: Մնացած իմաստները տարածական բովանդակություն չունեն (ԳԲԲ, 440):

Մեր դուրս գրած բնագրային օրինակում գործածված է 2-րդ իմաստով. «... ՚ի կողմանս Աղուանից, **ի սահմանս** Հայոց...» (Բուզ., 26):

*** Տեղ** – ԳԲԲ-ն առանձնացնում է 3 իմաստ, որոնցից 3-րդ իմաստով է այն տարածական բովանդակության՝ **վայր** (ԳԲԲ, 552): Բառը փոխառություն է ասորերենից: Բնագրային օրինակ՝ «...ձերբակալ արարեալ գորդի թագաւորին անդէն **ի տեղւոջն** հրամայէր սպանանել» (Եղ., 398):

*** Բերդ** – կրկին փոխառություն է ասորերենից: Նշանակում է *պաշտպանության համար կառուցված պարսպապատ ամրություն, ամրոց*: Բնագրային օրինակ՝ «Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց եւ թագաւորեաց ՚ի վերայ նորա եւ թափեաց յինքն յամուր ամուր **բերդիցն**, գոր կալեալ էր պարսկացն և **բերդն** Դարօնից, որ է յերկրին Կոգայ...» (Բուզ., 288):

*** Լեառն** – նշանակում է *լեռ, սար*: Բերենք բնագրային մի օրինակ՝ «... զի բանակեալ էին նոքա ՚ի **լերինն**, որ կոչի Յլու գլուխ...» (Բուզ., 30):

Գրաբարի բառ-եզրույթները տարարժեքության դիտակետում քննելով՝ ակնհայտ է դառնում բառիմաստի, եզրույթային իմաստի և նրանց խոսքիմասային իմաստների փոխկապակցվածությունը և դրանով էլ պայմանավորված՝ նրանց գործառույթը շարահյուսական մակարդակում: «Այդ կարգի բառերը, որպէս բառույթային միավոր-

ներ, բնագրից դուրս ընդհանուր ձևով համատեղում են տարբեր խոսքիմասային իմաստներ ու արժեքներ, սակայն դրանց երկատված բառիմաստներն ու խոսքիմասային արժեքները հստակ տարբերակվում են առանձին կիրառությամբ. ձևաբանական արժեքի բաշխումը կատարվում է շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստազատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են»⁹:

Վերը նշել ենք, որ տարածական՝ հասարակական և քաղաքական բաժանումներ արտահայտող բառ-եզրույթներից և եզրույթներից քչերն են դրսևորում տարարժեքություն: Նկատելի է մի հանգամանք. տվյալ միավորը կարող է ձևաբանորեն տարիմաստ չլինել, բայց նրանով բաղադրված ածանցավոր կամ բարդ կառույցները դրսևորեն ձևաբանական տարբեր իմաստներ: Ասվածը հիմնավորելու համար դիտարկենք **գաւառ** և **գաւառական** բառ-եզրույթները: **Գաւառական**-ը դրսևորում է ածական-գոյական տարարժեքություն: Իբրև ածական՝ այն նշանակում է *գաւառային*, իբրև գոյական՝ *գաւառի բնակիչ* (ԼԽԳԲ, 99): **Գաւառացի** բառը դրսևորում է ածական և գոյական տարարժեքություն՝ իբրև ածական նշանակելով *նույն գաւառից*, իբրև գոյական՝ *նույն գաւառի բնակիչ* (ԼԽԳԲ, 99)¹⁰:

* **Լեռն** եզրույթից ունենք **լեռնական**, **լեռնական** բառերը, որոնք դրսևորում են ածական-գոյական տարարժեքություն: Որպես ածական՝ ունի *լեռան հատուկ*, *լեռնային* իմաստը, որպես գոյական՝ *լեռան բնակիչ* (ԼԽԳԲ, 148): Լ. Խաչատրյանի բերած բնագրային օրինակը Բուզանդից է. «Էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, **լեռնական** սքանչելի» (Բուզ., 224): Նշանակում է *լեռնաբնակ*, *մենակյաց*, *անապատական*, *ճգնավոր* (ԼԽԳԲ, 149):

* **Ցամաք** նշանակում է՝ 1) ցամաքային ընդարձակ տարածություն, երկիր, 2) չոր, ոչ ջրապատ տարածություն, 3) ջրով շրջապատված տարածություն, կղզի, թերակղզի (ԼԽԳԲ, 352): Այն ունի նաև ածականի իմաստ՝ *անջրդի*, *չոր*, *բուսականությունից զուրկ*: Այ-

⁹ Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 6:

¹⁰ Բնագրային օրինակները տե՛ս Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանի» նշված էջերում:

սինքն՝ ասորերենից¹¹ փոխառված **ցամաք** եզրույթը դրսևորում է ածական-գոյական տարարժեքություն (ԼԽԳԲ, 352):

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ տարածական բաժանումներ արտահայտող եզրույթները հաճախադեպ չեն: Դրանց շարքում ընդգրկել ենք քաղաքական բաժանում արտահայտող եզրույթները և ընդհանրական տարածական նշանակության բառ-եզրույթները: Ներկայացված 30 եզրույթներից և բառ-եզրույթներից 6-ը փոխառություն են պահլավերենից, 4-ը՝ ասորերենից, 1-ը՝ արքադերենից, իսկ մնացյալը բնիկ բառեր են: Տարարժեքություն դրսևորում են որոշ բառ-եզրույթներ. ըստ որում՝ տվյալ եզրույթից ձևավորված այլ բառեր ևս կարող են լինել տարարժեք, ինչպես՝ **գաւառ-գաւառական, աշխարհ-աշխարհօրէն** և այլն: Տարածական բաժանումներ արտահայտող եզրույթների և բառ-եզրույթների սույն ուսումնասիրությամբ փորձել ենք ամբողջացնել գրաբարի եզրույթային համակարգի քննությունը:

¹¹ Ասորերենից փոխառությունների մեկնությանը անդրադարձել է Հ. Հյուբշմանը «Հայերենի քերականություն» (Եր., 2003) աշխատության մեջ: Ի թիվս ասորերենից փոխառյալ բառերի՝ հեղինակը մեկնաբանում է նաև տարածական բաժանումներ արտահայտող եզրույթները (էջք 308, 313, 316, 318):

**ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ»
ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԻՄԱՍՏԱՐԺԵՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Ղ. Փարպեցու ստեղծագործության մեջ իր յուրահատուկ տեղն ունի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է Մ. Էմինի կողմից¹: Ղ. Փարպեցու «Թուղթը» պատմամշակութային հուշարձան է, որ նամակից բացի՝ ներառում է նաև քարոզի, ճառի և ներբողի հատկանիշներ: Այն կցվել է նրա «Պատմութիւն Հայոց» երկի վերջում և հրապարակվել: Ղ. Փարպեցի պատմիչը քաջածանոթ է եղել 5-րդ դարի հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրությանը և հայտնի է եղել որպես ճարտասան: Նա նաև շփվել է ժամանակի հայ մտավորականության հետ²:

Մենք քննել ենք Փարպեցու «Թղթի» բառական միավորների այնպիսի փոփոխությունները, որոնք ենթադրում են խոսքիմասային կամ ձևաբանական տարաբեկություն: Վերջինս սերտորեն կապված է բառիմաստի և շարահյուսական մակարդակների գործոնների հետ: Մենք կիրառել ենք համեմատական-գուգադրական մեթոդը՝ գրաբարի և ժամանակակից հայերենի բառային միավորների և դրանց կրած իմաստային փոփոխությունների համեմատության հիման վրա:

Հայտնի է, որ «լեզվի բառերն ունեն բառական իմաստ և քերականական արժեք: Բառիմաստը բառային նշանի բովանդակային կողմն է՝ նշանակելին, իսկ քերականական արժեքը՝ նշանակությունը, որ ներառում է բառի ձևաբանաշարահյուսական այլևայլ հատկանիշներ»³: Որևէ բառույթ աստիճանաբար ներառում է խոսքիմա-

¹ Տե՛ս Մ. Էմին, Ղազարայ Փարպեցույ Թուղթ առ Վահան տերն Մամիկոնեից, Մոսկվա, 1853:

² Տե՛ս Ա. Ալեքսանյան, Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 9, Եր., 1987, էջ 65:

³ Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարաբեկությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, էջ 5:

սային նոր արժեք կամ արժեքներ՝ լեզվի զարգացման ընթացքում կամ համատեղելով հին և նորամուտ խոսքիմասային արժեքները, կամ զրկվելով նախորդից՝ կայունացնում է նոր ձեռք բերած արժեքը⁴:

Լեզվական միավորների բառիմաստի տեղաշարժերն առաջացնում են ձևաբանական և շարահյուսական կարգերի փոփոխություններ, որոնք առաջ են բերում նոր միավորներ՝ ձևաբանական նոր արժեքով ու գործառնությով: Ուսումնասիրությունում հատուկ քննության ենք առել նաև բառի բառային իմաստի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները, որոնցից են *բառիմաստի ընդլայնումը, նեղացումը և մասնավորումը, իմաստների փոխհաջորդումը, իմաստի անցումը, շրջումը* և այլն⁵: Բանն այն է, որ ժամանակի ընթացքում «...բառերը կրում են իմաստային բազմատեսակ փոփոխություններ, որոնք լեզվի զարգացման տարբեր փուլերում, ընդհանուր գծեր ունենալով հանդերձ, զգալիորեն տարբերվում են միմյանցից»⁶:

Բառիմաստի ընդլայնումը, ինչպես գիտենք, այն երևույթն է, երբ ժամանակի ընթացքում բառի իմաստային կառուցվածքն ընդարձակվում է՝ ներառելով այլ իմաստ կամ իմաստներ. այդ շարքում որոշ մենիմաստ բառեր դառնում են բազմիմաստ, իսկ բազմիմաստ բառերը կարող են նաև ընդարձակել իրենց իմաստները: Օրինակ՝ *բյուրո* նախապես նշանակել է «ուղտի կաշի», այնուհետև՝ այն սեղանը, որի վրա գցել են այդ կաշին», հետո «այն մարդկանց խումբը, որ նստում էր այդ սեղանի շուրջը ժողովի», հետո՝ «ժողով, խորհրդակցություն»⁷:

Բառիմաստի նեղացումը կամ մասնավորումը ենթադրում է՝ «...իմաստի այնպիսի զարգացում, որի հետևանքով աստիճանա-

⁴ Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 3:

⁵ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 101-107:

⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 81:

⁷ Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն. ուսումնական ձեռնարկ, Եր., 2008, էջ 146:

բար սահմանափակվում է դասի կամ սեռի անվանումը՝ վերածվելով տեսակի կամ անհատի անվանման, ինչպես՝ *քաջ* գրաբարում նշանակել է «լավ»՝ բառիս ընդարձակ իմաստով (առհասարակ դրական հատկանիշով բնութագրվող՝ կտրիճ, անվեհեր, գեղեցիկ, ընտիր, ճարտասան, ճարտար և այլն), ժամանակակից հայերենում այդ բառն ստացել է նեղ իմաստ և նշանակում է *կտրիճ, անվեհեր...*⁸:

Բառիմաստի շրջումը կամ անցումը լեզվական այն երևույթն է, երբ բառի սկզբնական իմաստին հակադիր իմաստ է առաջանում և որպես արդյունք՝ ստացվում է այնպես, որ հակադրվում են բառի նախնական և նոր իմաստները⁹: Սա հաճախ նաև անվանում են իմաստի բեռնացում: Այսպես՝ *դեղ* բառը նշանակել է *խոտ*, ապա բուժական խոտ, վերջապես՝ բուժական նյութ (թե՛ բուսական և թե՛ քիմիական), սակայն այդ բառը բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում ստացել է նաև *թույն* նշանակությունը, որից և՛ *դեղել*՝ «թունավորել»։ *բուժիչ նյութ* իմաստից զարգացել է հակառակ իմաստը՝ *սպանող՝ մահացնող նյութ...*¹⁰:

Իմաստների փոխհաջորդումը բառի հին իմաստի կորուստն է և նորի ձեռքբերումը, երբ բառի նախկին իմաստը փոխարինվում է նոր, ուղղակի իմաստով: Օրինակ, *սեղան* բառն ունեցել է «գոհարան, բազին» իմաստները, իսկ այժմ չունի նախնական այդ իմաստը, նշանակում է «կահույքի մի տեսակ»¹¹: Մենք խոսքիմասային փոխանցման երևույթը քննության ենք առել Ղ. Փարպեցու «Թղթի» հիման վրա: Այս մոտեցմամբ քննել ենք մեր ընտրած բառերի ուղիղ կամ փոխաբերական իմաստները և նրանց շարահյուսական գործառույթը: Քննությունը կատարելիս նկատել ենք, որ կան մի շարք բառեր, որոնք, գրաբարից աշխարհաբար ժամանակահատվածում պահպանելով իրենց կառուցվածքային ամբողջությունը, հանդես են

⁸ Տե՛ս **Է. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 378:

⁹ Տե՛ս **Լ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 148:

¹⁰ Տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 464:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 148:

գալիս մեկից ավելի խոսքիմասային իմաստներով և գործառույթով: Որոշ բառեր, իրենց իմաստային կառուցվածքով պայմանավորված, կարող են հանդես բերել մեկից ավելի ձևաբանական նշանակություններ և բնութագրվել խոսքիմասային տարարժեքության հատկանիշով: Մեր քննության մեջ որդեգրել ենք հետևյալ մոտեցումները.

1. Բնութագրել խոսքիմասային փոխանցումները Ղ. Փարպեցու «Թղթի» բառային կազմի հիման վրա ըստ ժամանակային գործոնի՝ գրաբար-աշխարհաբար կտրվածքով:

2. Ցույց տալ ձևաբանորեն տարարժեք բառերի իմաստային իրացումները բնագրային օրինակներով:

3. Բացատրել բառիմաստները գրաբարում և հնարավորության դեպքում ներկայացնել իմաստափոխությունները պայմանավորող գործոնները:

4. Բացատրել ձևաբանական փոփոխության դրսևորումները՝ ա) հատկանիշ ցույց տվող խոսքի մասերում, բ) գործողություն ցույց տվող խոսքի մասի՝ բայի ներսում, գ) գոյականների, դերանունների մեջ:

Ինչպես նշեցինք, խոսքիմասային տեղաշարժերի և տարարժեքության երևույթը դիտարկել ենք տարժամանակյա կտրվածքով՝ որպես երկարաժամկետ գործընթացի արդյունք:

Այսպիսով, լեզվի տարժամանակյա կտրվածքում բառիմաստը կարող է կրել ամենատարբեր փոփոխություններ՝ *լայնանալ, նեղանալ, շրջվել*, կարող է լինել *բառիմաստի կորուստ* և այլն: Բառիմաստի այսօրինակ փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում նաև բառի ձևաբանական արժեքի վրա՝ դուրս բերելով բառը տվյալ խոսքիմասային կարգի շրջանակներից: Խոսելով բառերի՝ իմաստաարժեքային դաշտում կատարվող տեղաշարժերի մասին՝ որպես քանակական ու որակական փոփոխությունների տարաստիճան գործընթաց՝ Լ. Խաչատրյանը նշում է, որ դրանք, ըստ անցման բնույթի, լինում են երկու տեսակի.

1. Մասնակի կամ շարահյուսական, որի ընթացքում փոխվում է սերիչ կադապարների շարահյուսական գործառույթը՝ բուն

խոսքիմասային արժեքի գերակայությամբ: Այս դեպքում բառերը, համատեղելով հին և ձեռքբերված նոր խոսքի մասի հատկանիշները, իրենց իմաստային կառուցվածքով ցուցաբերում են խոսքիմասային տարարժեքություն ու շարահյուսական տարբեր գործառնություններ:

2. Լիակատար կամ ձևաբանական, որի ընթացքում բառերը գրկվում են նախկին իմաստից ու արժեքից և ձեռք են բերում նոր խոսքիմասային արժեք՝ բնութագրվելով բառաքերականական նոր հատկանիշներով¹²:

Քննենք Ղ. Փարպեցու «Թղթում» հանդիպող թվով տասնութ բառեր, որոնք աչքի են ընկնում իրենց իմաստային կառուցվածքում մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումով: Զանազան իմաստափոխությունների ենթարկված բառերի բացատրությունների և դրանց համեմատությունների ներկայացման, բերված օրինակների համար հիմնականում հիմք են ծառայել մի քանի հայտնի բառարաններ¹³ և արևելահայերենի ազգային կորպուսը՝ ԱՐԵՎԱԿԸ:

Այլադանդ-ՆՀԲ-ում բառը գրանցված է որպես **գոյական**: Ղ. Փարպեցու «Թղթում» կա հետևյալ օրինակը՝ «...ո՞ր անմիտ, ո՞ր տգէտ, ո՞ր Հրեայ, ո՞ր **այլադանդ**» (190): Արդի հայերենում այս բառը **գոյական** է և **ածական**՝ *ուրիշ ադանդի հետևող*: Այսինքն՝ նոր խոսքիմասային իմաստի առաջացմամբ առաջացել է նոր բառ՝ արդեն *ածականական, հատկանշի* իմաստով: «... **այլադանդ** բողոքական հովիվները եկեղեցիների բեմերից մարդասիրական պարտավորություններին հետևելու կոչ էին անում...» (մամուլ, «Հայագիտական Հայաստան»):

¹² Տե՛ս Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 5-6:

¹³ Գ. Անեղիբեան, Հ. Մխիթրեան, Մ. Ազեղեան, Նոր հայկազեան բառարան(ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Եր., 2003: Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: Մ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969:

Անհրահանգ - ՆՀԲ-ն համարում է ածական՝ հետևյալ իմաստով՝ *անկիրթ, անվարժ*: Թղթում նույպես այս իմաստով է գործածված՝ «...որ **անհրահանգն** է յուսմունս» (190): Սո. Մալխասյանցի բառարանում արձանագրված է երկրորդ իմաստը՝ *առանց հրահանգի*: Ուստի տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ Եվ չնայած պետական-պաշտոնական հրահանգավոր եւ **անհրահանգ** արգելքներին, այնուամենայնիվ, 50-ական թվականներին հայ գրականության եւ արվեստի եւ մասնավորապես գեղանկարչության մեջ կային արվեստագետներ... (Մամուլ, «Ազգ» »):

Ասացող- գրաբարում **ասել** բայի ենթակայականն է: Փարպեցին գործածում է հենց այս իմաստով: «Զայնպիսի բանից **զասացողաց** զգործս ես ահա լռեմ» (195): Արդի հայերենի բառարաններում բառն արձանագրված է որպես գոյական՝ «*ժողովրդական բանավոր ստեղծագործության պատմող*» իմաստով, քանի որ **ասել** բայի ենթակայականն ունի միայն **ասող** ձևը՝ որպես **է** լծորդության պարզ բայ: Կատարվել է խոսքիմասային փոխանցում. ենթակայական դերբայից դարձել է գոյական՝ «Տիրապետելով հայ ժողովրդական վիպերգի գաղտնիքներին, Դաշտենցը հանդես է եկել իբրև **ասացող, ժողովրդական ասմունքող...**» (Ս. Աղաբաբյան):

Արդարեւ- Այս բառը և՛ գրաբարում, և՛ աշխարհաբարում երկարժեք է, սակայն գրաբարի բառարաններում գործածվում է և՛ որպես մակբայ՝ *հիրավի, ճշմարտապես*՝ «Մի՛ **արդարեւ** պատմեսցի այս ի Գէթ» (193), և՛ որպես ածական՝ *իրական, ստույգ*: «Այդպիսի իսկ **արդարեւ** աղանդոց վայել էր բուսանել» (193): Իսկ արդի հայերենում *մակբայ* է և *եղանակավորող բառ*, որից հետևում է, որ խոսքիմասային փոխանցմամբ կրկին նոր բառ է ստեղծվել: Օրինակ՝ «Նա, **արդարեւ**, չէր կարող մինչև այդ կետն ստորանալ» (Մուրացյան):

Բարի- ՆՀԲ-ում բառը երկարժեք է. այն գործածվում է որպես գոյական և որպես ածական: Որպես գոյական գործածվում է մի քանի իմաստով՝ *1.բարություն, բարեգործություն, 2.ինչք, գույք, ունեցվածք, 3. հաջողություն, ողջություն*: Որպես ածական նշանակում է *լավ, գովելի, ընտիր*: Փարպեցին բառը գործածել է որպես գոյական.

«...չհատուցանեին **գրարի** ...փոխանակ քո տեառն բարոյն» (204): Արդի հայերենում այս բառը գործածվում է թե՛ որպես ածական և թե՛ որպես մակբայ: «Եթե մարդիկ չեն կարող **բարի** հիշել իրար, գոնե թող բաժանվեն՝ ինչպես գնացքում, երբ գալիս է կայարանը, որ ինչ-որ մեկի համար վերջինն է» (Վ. Պետրոսյան):

Արդեօք- Բառը ՆՀԲ-ում եռարժեք է. գործածվում է որպես մակբայ՝ *հիբրավի, ստուգապես, իսկապես, այժմ, հիմա, արդ, որպես թարմատար՝ մի՞թե*, որպես շաղկապ՝ *ուրեմն, ապա*: «Թղթում» գործածված է որպես հարցական բառ, հավելադիր. «Չիցե՞ն **արդեօք** աբեղեանս Հայոց արժանի ողբոց » (190): «**Արդեօք** տարա՞ւ զիս ի սենեակ» (199): Փարպեցին այն գործածել է նաև *իրոք* իմաստով *թեքես* բառի հետ, այսինքն՝ որպես մակբայ, ինչպես նշվում է ՆՀԲ-ում՝ *տարակոյսը ստուգութեան վերածելով*: «Յաղագս ասելոյ զիս, *թեքես արդեօք* եւ ըստ անարժանութեան, քորեպիսկոպոս ոք չարար» (193): Արդի հայերենում այս բառը միարժեք է և հանդես է գալիս որպես եղանակավորող բառ, որով ևս խոսքիմասային փոխանցմամբ առաջացել է նոր բառ՝ «**Արդյոք** գալո՞ւ է մի օր, ժամանակ, տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ» (Բաֆֆի):

Խնդրել՝ գրաբարում կա նաև *որոնել, փնտրել* իմաստը, որն էլ գործածել է հեղինակը՝ «Եւ դու յայց ելեալ **խնդրել** զիս եւ գտեալ յաշխարհին յայնմ» (188): Արդի հայերենում ունի հետևյալ իմաստները՝ 1. Խնդրանքով որևէ մեկին դիմել՝ մի բան անելու ստանալու և այլն: 2. Հրավիրել: 3. Պահանջել: Արդի հայերենում առաջացել է նաև «*առաջարկել*» իմաստը: Նշանակում է՝ տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ «**Խնդրեմ**, ասացեք, այստեղ ոմն Դրուե ասյո՞ւմ է (թրգմ.):

Նախանձ- ՆՀԲ-ում նշված է միայն որպես **գոյական** հետևյալ իմաստներով՝ 1. *Մախանք, չարակնություն, 2. Նախանձավորություն, վրեժխնդրություն, 3. Եռանդ, փոյթ*: «**Նախանձու** բանսարկուն եմուտ մահ յաշխարհ» (186): Արդի հայերենում և՛ **գոյական** է՝ 1. Ուրիշի հաջողություններից՝ բարեկեցությունից՝ առավելություններից և այլն մարդու մեջ ծագող չարության զգացում: 2. (Ժողովրդ.)

խանդ, և՛ **ածական**՝ նախանձոտ, ուրիշներին նախանձող: Խոսք-
իմասային փոխանցմամբ տեղի է ունեցել ձևաբանական իմաստի
ընդլայնում՝ «Տիկին Էլոիզը **նախանձով** նայեց այդ պարզ երիտա-
սարդ գեղեցկությանը» (Ա. Բակունց):

Ծախել-ՆՀԲ-ում արձանագրված են հետևյալ իմաստները.
1. Ծախսել, վճարել, 2. Ոչնչացնել, վերացնել. «Ի պէտս տեղույդ **ծա-
խէի**» (197): **Ծախսել** իմաստը արդի հայերենում չկա: Տեղի է ունեցել
իմաստի կորուստ: Արդի հայերենում բառն ունի հետևյալ իմաստ-
ները՝ 1. Վաճառել, 2. (փոխաբ.) դավաճանել, խարդավանել, դավել:
3. (փոխաբ., խոսակց.) խաբել, խոստումը չկատարել: 4. (հնացած)
մաշել, փչացնել, սպառել, ոչնչացնել: 5. (փոխաբ.) մեկի վզին փա-
թաթել: «Գիտեր, որ նա հարազատ որդուն անգամ կարող է **ծախել**,
միայն թե հասնի իր կամեցածին» (Ս. Խանգադյան): «Մեծ տղայիդ
կարծիքներն ես ինձ վրա **ծախում**» (Վ. Դաքեայան): «-Ա՛յ տղա, ի՞նչ
ես ծախում, կանչում է մի ծանոթ ձայն» (Ա. Բակունց):

Կազմած-ՆՀԲ-ում՝ 1. կազմություն, 2. մարմնի կազմվածք,
3. նաև սարք, 4. կահկարասի, 5. տուն ու տեղ, ունեցվածք, 6. զար-
դարանք, պատերազմական զենքեր: Այս իմաստն է Թղթում, և գոր-
ծածված է որպես՝ 1. **գոյական**՝ «...ոչ իբրեւ զաղքատ զոք ի *կազմա-
ծէն...*» (188): «...ոչ իբրև ունեցվածքից գուրկ աղքատի»: Արդի հայե-
րենում՝ *կազմած* 1. հարակատար դերբայ *կազմել* -ի: 2. **ածական**՝
կազմով, կազմ ունեցող, կազմած գիրք: 3. **Գոյական**՝ կազմվածք:
Օրինակ՝ *Հմայակը բերեց իր կազմած պլանը ձեր ամուսնուն ցույց
տալու, ես էլ կամեցա ձեզ հետ մի քիչ գրույց անել* (Ալ. Շիրվանզադե):

Փոխանակ-Գրաբարում **գոյական** է՝ 1. փոխանորդ, տեղակալ:
2. Փոխհատուցում, փրկանք: 3. **Նախադրություն**՝ դիմաց, տեղը:
Թղթում գործածված է որպես գոյական՝ «Բազում նկրտէին լինել իմ
փոխանակ» (186): Նաև գործածված է որպես նախադրություն՝
«Չհատուցանէին զբարի փոխարէնս **փոխանակ** քո տեսնող
բարւոյն» (204): Արդի հայերենում բառն արձանագրված է որպես՝
1. **կապ** (մեծ մասամբ՝ նախադասության սեռական խնդրով)՝ «**Փո-
խանակ** ազգի, հայրենիքի, մարդկության լավ անդամ լինելու՝ մենք

դարձել էին նրանց ուտիչ, ապականիչ ցեցը» (Բաֆֆի): 2. **ածական** (հնացած)՝ *փոխարինող*՝ մեկին՝ մի բանի փոխարինելու հարաբերություն: Տեղի է ունեցել խոսքիմասային փոխանցում՝ խոսքիմասային նոր իմաստի առաջացում: «Նա ամեն կերպ փորձում էր խլել թագին *փոխարինող* գլխարկը, որը կախված էր Պոլոնիուսի բռնած երկար ձողից» (Մամուլ, «Առավոտ»):

Կարգել-ՆՀԲ-ն նշում է բազմաթիվ իմաստներ՝ 1. կարգի բերել, 2. նշանակել պաշտոնի, 3. շարադրել: Փարպեցին գործածել է *շարադրել* իմաստով՝ «...եւ զգգունս մեծամեծ պարծանօք գրեալ մի ըստ միոջէ կարգեաց» (196): Արդի հայերենում երրորդ իմաստը բացակայում է: Արձանագրված են հետևյալ իմաստները՝ 1. Որևէ պաշտոնի՝ աշխատանքի նշանակել, որևէ գործի դնել՝ «Կարգի՛ր մի բանի, //Գնա իր համար աշխատանք անի» (Հ. Թումանյան): 2. Որոշել, սահմանել՝ «Բոլոր գավառներում աղքատանոցներ հիմնեց և նրանց համար ապրուստ *կարգեց*» (Բաֆֆի):

3.(եկեղ.) ձեռնադրել, եկեղեցական աստիճան շնորհել՝ «Նրան այդ տարի երեց *կարգեց*» (թքրգմ.): 4. (արևմտահայերեն) ամուսնացնել, պսակել՝ «Տան բժիշկը իրենց երթալեն հետո ըսած էր, թե որչափ կարելի է շուտ *կարգե* աղջիկը» (Ա. Արփիարյան): Տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**:

Աշխատասիրել- Այս բառը Փարպեցին գործածել է *շրջել, ման գալ* իմաստով: Հետաքրքիր է, որ բառը այսպիսի բացատրություն չունի գրաբարի և աշխարհաբարի բառարաններում: «Սոքա զօրէն վաճառականաց ընդ ծով եւ ընդ ցամաք *աշխատասիրեալք...*» (185): ՆՀԲ-ում բառը բացատրվում է՝ *սիրով աշխատել, նեղություն կրել, ձգնել հոժարությամբ*: Արդի հայերենում նշվում է նաև *գիրք գրել, հեղինակել* իմաստը, այսինքն՝ տեղի է ունեցել *խմաստի նեղացում*: Օրինակ՝ «Հ. Վահրամյանը *աշխատասիրել է* «Պատմական ժամանակագրությունը» և «Մատենագրությունը» (Մամուլ, «Հայրենիքի ձայն»):

Լուր՝ գործածված է *լսված խոսք* իմաստով՝ «Ընդ *լրոյ* դատել զոք ոչ կամէի»(190): «Քաղցր ախորժելով *զլուր* այդպիսի բանից»

(190)»: Արդի հայերենում նշանակում է միայն **տեղեկություն**, որն ակնհայտորեն **բառիմաստի նեղացում** է: Օրինակ՝ «Մի անգամ, հիշեց պրոֆեսորը, **լուր** տարածվեց Երևանում, որ գիշերը կոմունիստական մի ջոկատ գերի էր վերցրել կաթողիկոսին և մի քանի եպիսկոպոսներին... » (Վ. Թորթվենց):

Կարդալ-ՆՀԲ-ում՝ 1. ձայնել, գոչել, 2. ընթերցել, 3. կոչել, անվանել: Այս վերջին իմաստով ևս գործածել է Փարպեցին՝ «... Եթե զիս Բեդգեբուղ **կարդացին**՝ ո՞րչափ եւս առաւել զձեզ» (189): Այս իմաստը կորել է: Արդի հայերենում բառը բացատրված է՝ 1. գրերով կամ գրային այլ նշաններով գրվածը կամ տպագրվածը ընկալել, գրած կամ տպագրած որևէ բան վերարտադրել բարձրաձայն կամ լուռ, ընթերցել: 2. Արտասանել, անգիր ասել: 3. Վերծանել: 4. Դասախոսել, զեկուցել: 5. (ժողովրդ.) Սովորել, ուսանել: 6. (փոխաբ.) արտաքին զանազան նշաններից իմանալ, գուշակել ներքին բովանդակության իմաստը՝ հուզմունքը՝ եղելությունը, կոահել, հասկանալ, թափանցել: 7. (փոխաբերական) երգել, կանչել, ճովողել (թոշունի): Օրինակ՝ «Թիֆլիս է **կարդում**...երկու տարի հետո կվերջացնի զիմնազը» (Ա. Բակունց): Թագավորը, որը խանդակաթ էր դեպի թագուհին, **կարդաց** նրա աչքերի մեջ հայտնի վշտից առաջացած տխրությունը (Մուրացան):

Ինչպես տեսնում ենք, ժամանակի ընթացքում առաջացել են մի շարք այլ իմաստներ, այսինքին՝ տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**:

Մնուցանել-ՆՀԲ-ում՝ 1. Մնունդ տալ, 2. Խնամել, դաստիարակել: Նույն բացատրություններն առկա են Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում: «Թղթում» գործածված է երկրորդ իմաստով: «...**սնուցանել** մայրն ձեր օրհնեալ» (180): Ժամանակակից հայերենում **սնուցանել** (նույնը՝ **սնուցել**) բայն ունի նաև հետևյալ իմաստը՝ 1. սնել, 2. տածել, իր մեջ որևէ զգացմունք՝ գաղափար և այլն ունենալ՝ պահել՝ պահպանել: Տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ Մի՛ **սնուցանիր** սրտումդ կասկած (Հ. Թումանյան):

Ցանկ՝ մակբայ՝ 1. մինչև վերջ: ՆՀԲ-ում արձանագրված են հետևյալ իմաստները՝ 1. Մինչև վերջ, իսպառ: 2. Մշտապես, անդադար: 2. միշտ: Դ. Փարպեցին գործածում է վերջին իմաստով՝ «...Որ բողոքե *ցանկ*, թե մի՛ բազում վարդապետս լինիք» (193): Փարպեցին ունի նաև *ցանգ՝* «Զոր յաւետարանչացն կարդան *ցանգ*» (191): Ստ. Մալխասյանցն ավելացնում է նաև հետևյալ իմաստը՝ «նորածին երեխայի շապիկը, ընկերք»: Արդի հայերենի բառարաններում, սակայն *ցանկ* բառը չկա *ցանկություն, իդձ* իմաստով, այլ վերջինիս արտահայտման համար գործածվում է *ցանկություն* բառը: Հնացած է նաև Փարպեցու գործածած *միշտ* իմաստով մակբայը: Գրանցված են հետևյալ իմաստները՝ 1. Գրքի գլուխների ցուցակ: 2. Ցանկություն, իդձ: 3. Պատնեշ, անջրպետ, ցանկապատ: Տեղի է ունեցել *բառիմաստի նեղացում*: Օրինակ՝ «Հայերենի եղանակավորող բառերի բավականին լայն *ցանկ* ներկայացնող Ս. Աբրահամյանը նույնպես այս կարգի բառերը չի մտցնում եղանակավորող բառերի իր նկարագրած իմաստային որևէ տեսակի մեջ» (Հ. Բարսեղյան):

Քաղաքավարություն-ՆՀԲ-ում՝ գոյական՝ 1. Քաղաքի կառավարում, 2. Կենցաղավարություն, ապրելակերպ, գործունեություն: «Թղթում» գործածված է *ապրելակերպ* իմաստով՝ «...որ ի մարմնի զանմարմնոցն բերելով *զքաղաքավարություն*՝ հրեղեն կառօք ի հոգեղենս վերացալի կեանս» (191):

Արդի հայերենում՝ 1. Վարմունքի՝ վարվելակերպի հարգալից ու բարեկիրթ բնույթ: 2. Հարգալից վերաբերմունքի՝ վարվեցողության կանոնների ամբողջությունը: 3. Քաղաքավարի լինելը: Օրինակ՝ *Եվ դա ոչ թե քաղաքավարություն էր կամ տուրիստի հետաքրքրություն, որ միայն նայում է և շատ բան չի տեսնում, նայում է ու անցնում*: (Ստ. Զորյան): Այստեղ տեղի է ունեցել *իմաստի անցում կամ փոխհաջորդում*:

Այսպիսով, Փարպեցու «Թղթի» բառային կազմի տարժամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալը.

➤ մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում շատ բառերի իմաստային կառուցվածքում տեղի են ունեցել տարաբնույթ փոփոխություններ,

➤ նշված փոփոխությունները հանգեցրել են ձևաբանական իմաստի և արժեքի տեղաշարժերի, տեղեշարժերն ընթացել են բառիմաստի զուգորդման, բառի կամ բառաձևի բառաքերականական իմաստի մթագնման, բառիմաստի փոխանվանաբար գործածվելու հիման վրա:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Յուրաքանչյուր լեզվի բառապաշարի կարևորագույն բաղադրիչ է տվյալ լեզվի եզրույթային (տերմինային)¹ համակարգը: Չնայած այն հանգամանքին, որ գրաբարի բառապաշարը իմաստակառուցվածքային և ստուգաբանական մանրակրկիտ քննության ենթարկված է², այնուամենայնիվ գրաբարի եզրույթների մասին գրաբարագիտության մեջ միայն առանձին դիտարկումներ կան: Մինչդեռ գրաբարով ավանդված ինքնուրույն և թարգմանական մատենագրությունն ամփոփում է եզրույթների հարուստ համակարգ, որը կարիք ունի ոչ միայն իմաստաստուգաբանական, կառուցվածքային, այլև ոճական քննության: Գրաբարի եզրույթների համաժամանակյա յուրաքանչյուր ուսումնասիրություն, ինչին ուղղված է նաև սույն աշխատանքը, կարևոր է գրաբարագիտության համար՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով. 1) գրաբարի եզրույթային համակարգի համաժամանակյա քննությունը արժևորվում է գրաբարով մատենագրության բառապաշարի համաժամանակյա գնահատման դիտակետում, 2) այն տալիս է փաստական հարուստ նյութ գրաբարի եզրույթների տարժամանակյա ուսումնասիրության համար, ինչը հիմք է հանդիսանում պատմական եզրույթաբանության համար, 3) գրաբարի եզրույթների համակարգային քննության արդյունքները համաժամանակյա ուսումնասիրության շրջանակում հնարավորություն են տալիս գնահատելու արդի գրական հայերենի բառապաշարը և նրա բաղադրիչը կազմող եզրույթները,

¹ *Տերմին* բառը ծագում է լատիներենից, ունի եզր, սահման նշանակությունը: Գիտական գրականության մեջ շրջանառվում են **եզր**, **եզրույթ** տերմինները: Մանրամասն տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 34-38; **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 578-581 նն:

² Մանրամասն տե՛ս **Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 120-226; **Ն. Դիլբարյան, Ա. Խաչատրյան**, Հայերենի փոխառյալ և բնիկ բառերը, Եր., 2018:

քանի որ արդի գրական արևելահայերենի եզրույթների, ինչպես նաև ողջ բառապաշարի հիմնաքարը պիտի որոնել գրաբարի բառապաշարում և եզրույթային համակարգում: Գործառական տարբեր ոճերում եզրույթների գործառույթն ունի տարբեր նկարագիր, ինչը պայմանավորված է տվյալ ոճի երկի բովանդակությամբ և նպատակաուղղվածությամբ, որոնք ձևավորում են նրա բառապաշարը: Օրինակ՝ «գիտական ոճի բառապաշարի հիմնական շերտը, որը միաժամանակ կարող է ոճակագմիչ նշանակություն ունենալ, կազմում են տերմինները՝ «գբադմունքային կամ մասնագիտական բառերը»³: Մինչդեռ գեղարվեստական ոճում ոչ միայն եզրույթային համակարգը, այլև ողջ բառապաշարը բազմաշերտ է և իր մեջ կարող է ներառել նաև գործառական մյուս ոճերին բնորոշ լեզվական տարբեր իրողություններ⁴, ի թիվս նրանց՝ նաև բառեր, եզրույթներ և բառ-եզրույթներ: Լեզվաբանական գրականության մեջ տերմինագիտական (եզրույթաբանական) շրջանակում բառապաշարը բաժանվում է 3 շերտի⁵. ա) ընդհանրական նշանակության բառեր, բ) եզրույթներ, որ ունեն տերմինային նշանակություն (բուն եզրույթներ), գ) բառեր, որոնք, ըստ գործառական տիրույթի, և՛ ընդհանրական նշանակության բառեր են, և՛ եզրույթներ: Եզրույթների և բառերի հարաբերակցության այս գիտական մոտեցումը համարելով ճշգրիտ և հիմնավորված՝ գրաբարի եզրույթների համաժամանակյա ուսումնասիրությունը կատարում ենք՝ ներառելով այն բառերը, որոնք միայն **եզրույթներ** են, և **բառ-եզրույթները**. նրանք ունեն և՛ բառային ընդհանրական նշանակություն, և՛ միաժամանակ որևէ բնագավառ ընդգրկող եզրույթներ են:

Գրաբարով մատենագրության մեջ իր հարուստ բառապաշարով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Փ. Բուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկը: Երկի բառապաշարի ա-

³ Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 34:

⁴ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 83-95:

⁵ Մանրամասն տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 320:

կնհայտ հատկանիշը իմաստային բազմաշերտությունն է, որը պայմանավորված է աշխատության **բովանդակությամբ և նպատակատուղիվածությամբ**: Փ. Բուզանդը ոչ միայն պատմական իրողությունների գուտ նկարագրություն է տալիս, այլև դրանք դարձնում ներագույն և տպավորիչ յուրաքանչյուր ընթերցողի համար, քանի որ հասարակական-քաղաքական, ռազմական, հոգևոր-մշակութային կյանքի յուրաքանչյուր դրվագ առանձնանում է իր ոճական դրսևորումներով, ինչը առաջին հերթին վերաբերում է երկի բառապաշարին: Երկի բովանդակության և նպատակատուղիվածության մասին հեղինակը գրում է, որ երկում մանրամասն անդրադարձել է հայոց թագավորներին, նկարագրել նրանց ներքին և արտաքին քաղաքական գործունեությունը: Երկում առանձնակի խնամքով են ներկայացվում մշակութային և հոգևոր կյանքը, ռազմական վիճակը՝ պատերազմների, հաղթանակների և պարտությունների տպավորիչ դրվագներով «վարք թագավորաց, նախարարաց, զորավարաց» (Էջ 6)⁶: Ուստի իմաստային բազմաշերտությունը բնորոշ է ոչ միայն երկի ողջ բառապաշարին, այլև եզրույթային համակարգին: Հաճախադեպ են կրոնական բովանդակության բառերն ու եզրույթները⁷, ռազմական, իրավաօրենսդրական, կենցաղային, տարածական և այլ հարաբերություններում գերակշռող եզրույթները: Երկում գերակշռող տեղ են զբաղեցնում **հասարակական-վարչաքաղաքական** հարաբերությունները՝ 1) երկրի պետական-վարչական կառուցվածքը, 2) պետական և զինվորական պաշտոնները. այս հենքով պաշտոնակարգությունը, 3) թագավորների ներքին և արտաքին քաղաքականությունը, 4) իրավաօրենսդրական համակարգը, տարածական հարաբերությունները են: Իմաստային շերտերից յուրաքան-

⁶ Քննությունը կատարված է ըստ «Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց /- Բուզանդարան պատմութիւնք» (Եր., 1987) բնագրի: Բնագրային հղումների և օրինակների էջերը տրվում են շարադրանքում:

⁷ Մանրամասն տե՛ս **Ա. Աբաջյան, Ա. Յուզբաշյան**, «Կրոնական բովանդակություն ունեցող բառերը Փ. Բյուզանդի «Բուզանդարան պատմութիւնք» երկում, Էջմիածին, Է, 2022, էջ 50-65:

յուրն ունի իր ենթաշերտերը, ուստի դրանց ամբողջական ուսումնասիրությունը ընդգրկում է բազմաձև վիստակապական նյութ:

Սույն ուսումնասիրությունը ընդգրկում է հասարակական-վարչաքաղաքական հարաբերություններ արտահայտող այն եզրույթները, որոնք ներկայացնում են՝ 1) պաշտոնակարգությունը արքունիքում. այն է՝ արքունի պաշտոնները և դրանք իրականացնող պաշտոնյաների գործառույթը ներկայացնող եզրույթներ, 2) երկրի **վարչաքաղաքական կառուցվածքը իր ենթակառույցներով** ներկայացնող եզրույթներ⁸: Եզրույթներից յուրաքանչյուրը արժևորվում է իմաստաստության և առանձին վերլուծության շրջանակում⁹: Ըստ անհրաժեշտության՝ անդրադարձել ենք արդի արևելահայերենում ունեցած իմաստային վերլուծություններին՝ հիմք ընդունելով Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» տեղ գտած մեկնությունները¹⁰:

Արքա, թագաւոր եզրույթները հոմանիշներ են: ԳԲԱ-ն նշում է հե-տևյալ իմաստները. 1) բացարձակ իշխանության տեր, միահեծան, տիրակալ, միապետ: **Թագաւոր** եզրույթի համար՝ նաև նորափեսա: Բնագրում դրանք հաճախադեպ են. «Մեծ **թագաւորն** Յունաց **թագաւորեցոյց** գՂապ գորդին Արշակայ» (էջ 284): «... եւ յառաքելապան Սանատրկոյ **արքային...**» (էջ 12): «...**արքային** Տրդատայ...» (էջ 12): **Թագաւոր** բաղադրիչով են կազմված **թագաւորութիւն** (էջ 308), **թագաւորեցոյցանէլ** (էջ 284) բառ-եզրույթները: *Միապետ* նշանակությամբ բնագրում գործածված է **կայսր** եզրույթը: Այն փոխառու-

⁸ Երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը, ռազմական գործը, իրավասորենադրական, տարածական հարաբերությունները ներկայացնող եզրույթները կներկայացնենք այս աշխատանքին հաջորդող առանձին քննությամբ:

⁹ Աշխատանքում օգտվել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանից», հ. Ա և Բ, Եր., 2000, այսուհետև՝ ԳԲԱ, ԳԲԲ: Բառերի մեկնաբանումների հիմքում ընկած են «Նոր Հայկազեան բառարանի» վկայումները, որոնց մասին նշում է հեղինակը բառարանի կառուցվածքը և կազմության սկզբունքները ներկայացնելիս. տե՛ս ԳԲԱ, էջ 5: Շարադրանքում իմաստային վկայումները ներկայացնում ենք ոչ դասական ուղղագրությամբ:

¹⁰ **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2003: Այսուհետև՝ ՀԲԲ:

թյուն է հունարենից. նշանակում է *ինքնակալ, միահեծան թագավոր*: Բնագրային օրինակ. «... վասն գերեդարձ առնել ի **կայսերէն** միւս անգամ...» (էջ 90)¹¹: **Արքայ** բաղադրիչով են կազմված **արքայորդի** և **արքայազն** եզրույթները, որոնցից բնագրում գործածված է **արքայորդի**-ն՝ «Իսկ զՅուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խոսրովու եւ ետ **արքայորդին** Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Վրթանիսի» (էջ 201): «...ռազմիկասպաս զօրքն, եւ տիկնաւն հանդերձ եւ **արքայորդին** մանուկն Արշակ...» (էջ 82): Ըստ որում հեղինակը *արքայորդին* իմաստով գործածում է նաև երկբաղադրիչ **արքայի որդի** բառակապակցությունը. «...ս սնուցանէին նոքին **զորդին զարքային** զԱրշակ» (էջ 74): **Արքայորդի** եզրույթը ունի երկու նշանակություն. 1) արքայի որդի, 2) (կրոն.) Աստծու որդին, Քրիստոս: Նրան հոմանիշ է **արքայազն** բառ-եզրույթը. այն ունի հետևյալ իմաստները. 1) արքայի տոհմից՝ ցեղից սերված, թագավորի որդի, ազգական: Ըստ էության՝ **արքայազն** եզրույթն ունի իմաստային ավելի լայն ընդգրկում: ԳԲԱ-ն վկայում է նաև **թագաւորազն** եզրույթը՝ թագավորական տոհմից՝ ցեղից սերված իմաստով: Իմաստային նրբերանգների դրսևորումներում էական դեր է կատարել երկրորդ բաղադրիչը՝ **որդի** և **ազն**: Արքան (թագավորը) արքունիքի՝ թագավորության պետական կառույցի առաջին դեմքն է: **Արքունի, արքունիք** եզրույթների համար ԳԲԱ-ն առանձնացնում է հետևյալ իմաստները՝ **արքունիք** - 1) արքայի պալատը, 2) թագավորական գանձ, գանձարան, 3) թագավորի ընտանիքը, 4) պալատականներ, **արքունի** նշանակում է արքունական, արքայական, թագավորական (ԳԲԱ, էջ 228): Բնագրային օրինակներ՝ «**արքունի** զօրք» (էջ 82), «Բանակն **արքունի**» (էջ 284), «**արքունական** կառօք» (էջ 48) ևն: Արքայական ապարանք, արքունիք իմաստով բնագրում գործածված է **պա-**

¹¹ Հ. Հյուբշմանը **կայսր** բառը մեկնաբանելիս գրում է. «... թվում է կայսր-ը հնագույն հունարեն փոխառյալ բառն է հայերենում, ինչպես Kaiser-ի հնագույն լատ. փոխառյալը հին գերմաներենում (տե՛ս **Քյոլե**, Գերմ. լեզվի ստուգաբանական բառարան, Kaiser-ի էջը). մանրամասն տե՛ս Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 322, 329:

լատ (կամ **պաղատն**) **եզրույթը**, այն փոխառություն է լատ., հունարենից (ԳԲԲ, էջ 378): Բնագրային օրինակ՝ «Ապա չոգան գնացին հասին 'ի կայսերական **պաղատն** թագաւորացն Յունաց (էջ 126):

Պետական կառույցի ենթակառույցները նախարարական տներն էին՝ նախարարների գլխավորությամբ: **Նախարար** եզրույթի համար ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) ծայրագավառների կառավարիչ, կուսակալ, որ օժտված էր անսահմանափակ իրավունքներով. **սատրապ**, 2) իշխան, ավագ անձ, 3) հին Հայաստանի տերը հանդիսացող **իշխան**, **նահապետ**, **տանուտեր**: Ըստ կառավարման իրավունքների՝ **նախարար** եզրույթը հոմանիշ է՝ ա) **սատրապ**, բ) **նահապետ**, գ) **տանուտեր** եզրույթներին: Բնագրում **նախարար** եզրույթը հաճախադեպ է. «Մա կոտորեաց զամենայն ազգս **նախարարացն**՝ ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի...» (էջ 178): Գրական արևելահայերենում **նախարար** եզրույթը վերամաստավորվել է որևէ գերատեսչության և ոլորտի ղեկավար նշանակությամբ: **Նահապետ** բառի համար ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) մի տոհմի, ցեղի նախահայր, տոհմապետ, ցեղապետ, 2) տոհմի, ցեղի պետ, գլխավոր առաջնորդ, իշխան, 3) նախարարական տան գլխավոր **նախարար**, **տանուտեր**, 4) հայրերի նախնիների պետ՝ առաջինը, հայրապետ: Արդի հայերենում պահպանել է նախահայր, որևէ գերդաստանի երեց՝ ավագ, ցեղապետ նշանակությունները: Բնագրային օրինակ՝ «...եւ ընդ Զարեհ իշխանն, **նահապետն** մեծի Ծովաց» (էջ 44): **Սատրապ** – փոխառություն է հունարենից, նշանակում է ավագ նախարար, բղէշխ: ՀԲԲ-ում նշվում են կուսակալ, նահանգապետ իմաստները: Այն ունի նաև բռնապետ նշանակությունը: Այն **պատմական** եզրույթ է և հոմանիշ է **բղէշխ**, **բղէշխ** եզրույթին: Բնագրային օրինակ՝ «...ամենայն **սատրապք**, **նախարարք** և ազատք, պետ և իշխանք, զօրավարք և սահմանապահք ... զի եկեսցեն» (էջ 108): **Պետ** – փոխառություն է պահլավերենից, ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) գլխավոր, մեծավոր, առաջնորդ, իշխան, 2) սկիզբ: Բնագրում գործածված է 1-ին իմաստով: Արդի հայերենում ունի՝ 1) տնօրեն, 2) գլխավոր, ղեկավար, 3) ավագ,

4) հրամանատար իմաստները (ՀԲԲ, էջ 934): Այն բաղադրիչ է նաև բարդ բառ-եզրույթների՝ վարչապետ, գյուղապետ են, **բղեշխ, բղե-աշխ** – փոխ. է պահլավերենից: ԳԲԱ-ն նշում է. 1) մեծ իշխան, կուսակալ, կողմնապետ, կողմնակալ, 2) հյուպատոս իմաստները: Բնագրում գործածված է 1-ին իմաստով. «Ձերբակալ արաբեալ **զրդեաշխն** Աղձնեաց...» (էջ 324) են: Այն **պատմական եզրույթ** է: **Տա-նուտեր** բառի համար ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) տան, ընտանիքի, գերդաստանի գլխավոր, տանտեր, 2) տան՝ ցեղի, տոհմի գլխավորը, նահապետ, ցեղապետ, ազգապետ, 3) **նախարարական տան իշխան, նախարար**, 4) այն աստղատունը, որի մեջ գտնվում է արեգակը տվյալ ամսին (ըստ հին պատկերացումների), ՀԲԲ-ն պատմական իմաստով նշանակությունների համար հղում է կատարում **իշխան, սեպուհ** եզրույթները. արդի իմաստներն են գյուղապետ, գյուղերեց, գեղջավոր, ավանապետ, բարբառային տարբերակը՝ քյոխվա՝ համայնքի կողմից ընտրված գյուղի պետ (ՀԲԲ, էջ 1082): **Իշխան, սեպուհ, նախարար** իմաստների շրջանակում այն արժևորվում է իբրև **պատմաբառ**: Բնագրային օրինակ՝ «... թո՛ղ զնահապետս մեծամեծս եւ **զտանուտեարս**՝ որք գործակալք միայն էին» (էջ 106): **Գործակալ** եզրույթի համար ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) իշխանությունը, երկիրը կամ նրա առանձին նահանգը գլխավորող՝ կառավարող, ղեկավարող պաշտոնյա, կուսակալ, 2) (եկեղ.) հոգևոր գործերի վերակացու կառավարիչ թեմի որևէ մասում: Բնագրային օրինակներում գործածված է 1-ին իմաստով՝ ԲԲ-ն արդի արևելահայերենի համար վկայում է **գործակալ** եզրույթի հետևյալ իմաստները. 1) հանձնակատար, որևէ հիմնարկի կամ կազմակերպության ներկայացուցիչ, որ կատարում է պաշտոնական հանձնարարություններ, 2) լրտես, հետախույզ, 3) իրազեկիչ: Բնագրային օրինակ՝ «Ապա ստիպել սկսան եւ **գործակալք** թագաւորին ժողովել արծաթ եւ ոսկի» (էջ 158):

Իշխան – ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) ընդհանրապես՝ իշխող, տիրող, տիրապետող, ազդեցություն ունեցող մարդ, 2) **մի երկրի՝ երկրամասի պետ՝ կառավարիչ, իշխանավոր, մեծա-**

վոր, տեր, 3) իշխանուհի, տիրուհի, իշխանավորուհի, 4) առաջնորդ, պարագլուխ, գորապետ, 5) գլխավոր հրամանատար, 5) մեկի կամ մի բանի վրա անսահմանափակ իշխանություն ունեցող մարդ, տիրակալ: Երկրորդ իմաստը՝ իշխանաձուկ, բախտակ: Բնագրում գործածված է **մի երկրի՝ երկրամասի կառավարիչ** իմաստով. « ... եւ գՎարագ Շահունի **իշխանն** Ծովաց աշխարհին» (էջ 48): Այն հաճախդեպ է, օրինակ՝ երրորդ դպրության ԺԲ գլխի առաջին պարբերությունում հեղինակը թվարկում է տարբեր գավառների իշխանների անունները՝ ըստ գավառների: **Իշխան** բաղադրիչով բնագրում գործածված են **իշխանություն**, նաև երկբաղադրիչ **ձեռական իշխանություն** եզրույթները: Ս. Մալխասյանցը ծանոթագրությամբ մեկնաբանում է **ձեռական իշխանություն** եզրույթը. «Ձեռական իշխանություն կամ ձեռին իշխանություն նշանակում է այն կալվածքը, որ սեփական է այսինչ անձին, գտնվում է նրա անմիջական կառավարության տակ» (էջ 432, ծան. 104-րդ): Բնագրային օրինակներ՝ «Եկն էջ եւ Հայրն Մարդպետ զհրով **իշխանութեամբն** շրջել» (էջ 180): «Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր **ձեռական իշխանությունսն**, զի հնգետասան գաւառ գայն **ձեռական իշխանութեան** ունէին իբրեւ սեպհական 'ի բնմէ» (էջ 178): **Մարդպետ, մարդպետություն** – ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. **մարդպետ**՝ արքունի պալատի ներքինապետ հայ Արշակունիների ժամանակ, որ կոչվում էր Հայր Մարդպետ: **Մարդպետություն**՝ 1) մարդպետ լինելը, մարդպետի պաշտոնը, ներքինապետություն, 2) մարդպետի տոհմական կալվածքը, մարդպետական երկիրը: Բնագրային օրինակներ՝ «Եւ էր **մարդպետն Հայր** այր չար եւ ժանտաբարոյիւք անօրէն եւ անիրաւ, քան գառաջին **Հայր** անուն **մարդպետսն**» (էջ 178): «Արդ ելանէր սա շրջէր ընդ **մարդպետությունն** իւր...» (էջ 178): **Սենեկապետ** – ԳԲԲ-ն նշում է **սենեկապահ, սենեկապետ** բառերի հետևյալ իմաստները. 1) պաշտոնյա, որ հսկում էր թագավորական կամ իշխանական պալատի ներքին գործերին, 2) տիրոջ պաշտպանությունն ապահովող սպասավոր, թիկնապահ: Բնագրային օրինակ՝ «...որոյ անուն Փիսակ կոչիւր, որ **սենեկապետն** էր արքային Տիրանայ» (էջ 78):

Դայեակ – փոխառություն է **պահլավերենից**: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) ստնտու, ծծմայր, 2) ընդհանրապես՝ սնուցիչ, 3) դաստիարակ, խնամակալ (արական սեռի): Բնագրում գործածված է 2-րդ իմաստով. «Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնեից, մանաւանդ զի իւր **դայեակս** եւ սնուցիչք էին» (էջ 106):

Ոստիկան – փոխառություն է պահլավերենից: ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) վերատեսուչ, վերակացու, պահապան, 2) դիտապետ, հրամանատար, 3) կայսերական կալվածքների կառավարիչ (հռոմեական պետության մեջ), 4) հրամանատար, գլխավոր իշխան, 5) կուսակալ, մարզպան (արաբական տիրապետության շրջանում) (էջ 342): Բնագրում գործածված է վերակացու, պաշտոնյա իմաստով. «... եւ անդ **ոստիկանս** վերակացուս թողոյր» (էջ 322): Արդի իմաստով՝ հասարակության անվտանգությունը, ներքին կարգ ու կանոնը ապահովող պետական մարմնի՝ ոստիկանության աշխատակից (ՀԲԲ, էջ 482): Բնագրային օրինակ՝ «Եւ էր **ներքինի** մի Հայոց թագաւորին Արշակայ, **ոստիկան** հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, անուն Դրաստամատն» (էջ 314):

Խորհրդական – ԳԲԱ-ն նշում է 6 իմաստ, որոնցից 1-ը **խորհրդակից**, խորհրդատու նշանակությունն է: Այն պահպանել է այդ իմաստը և արդի արևելահայերենում: ՀԲԲ-ն վկայում է. «պաշտոնական անձ, որն իրենց վերապահված հարցերի մասին խորհուրդներ է տալիս վերադասին» նշանակությունը (էջ 440): Բնագրային օրինակ՝ «...ապա մատուցեալք առ թագաւորն աւագք իւրոյ դրանն եւ **խորհրդականք** եւ ասեն...» (էջ 138):

Մագիստրիանոս – փոխառություն է հունարենից: ԳԲԲ-ն նշում է. 1) Բյուզանդիայում՝ կայսերական պալատի ավագ աստիճանավոր, 2) պետ, զորապետ իմաստները: Բնագրում գործածված է 1-ին իմաստով. «Ապա առաքեաց կայսրն առ նա **մագիստրիանոսս...**» (էջ 158): Ի թիվս մագիստրատ պետական եզրույթի (ՀԲԲ, էջ 716)՝ մագիստրոս, մագիստրատուրա եզրույթները արդի արևելահայերեն-

նում բուհական ուսումնառության եզրույթներ են: **Թելակալ** – ունի գործակալ, հոգաբարձու իմաստները. «Եւ առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս... էր ի տան նորին **թելակալ**» (էջ 402): **Տեսուչ, տեսչութիւն** – ԳԲԲ-ն նշում է 6 իմաստ, բնագրում գործածված է վերահսկող, վերահսկողություն իմաստներով. «Եւ էին սոքա ի **տեսչութիւն** աղքատանոցացն հաւատացեալք...» (էջ 404): Արդի հայերենում պահպանել է վերահսկիչ, վերահսկողություն իրականացնող հաստատություն, օր.՝ լեզվի տեսչություն: **Աշխարհակալ** – բազմիմաստ բառ է: ԳԲԱ-ն նշում է 4 իմաստ, որոնցից 2-րդ՝ **կուսակալ, իշխան** իմաստով է գործածված բնագրում. «... մեծամեծ **աշխարհակալք** գաւառատեարք նահապետք...» (էջ 166):

Պաշտոնների և պաշտոնյաների որոշ եզրույթներում դրսևորվում է տարաբժեքության լեզվական իրողությունը: Քննարկենք նրանցից մի քանիսը տարաբժեքության դիտակետում: Տարաբժեքությունը գրաբարի բառապաշարում դրսևորվող կարևորագույն լեզվական իրողությունն է, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա ուսումնասիրության դիտակետերում: Տարաբժեքությունը ընդգրկում է լեզվի՝ 1) բառային, 2) ձևաբանական, 3) շարահյուսական մակարդակները: Բառի բազմիմաստությունը հիմք է դառնում ձևավորելու ոչ միայն տարբեր խոսքիմաստային արժեքներ, այլև շարահյուսական տարբեր գործառույթներով հանդես եկող միավորներ: Լեզվական այս կարևորագույն իրողությանն անդրադարձել է Լ. Խաչատրյանը: Տեսական նյութի գիտականորեն հիմնավորված իրողությունների վերլուծության արդյունքում հեղինակը ներկայացրել է իր տեսակի մեջ եզակի մի բառարան, որտեղ տեղ են գտել V-XI դարերի գրաբարով մատենագրության մեջ գործածված տարաբժեք բառերը՝ մեկնություններով և բնագրային հետաքրքիր նմուշներով¹²: Սույն բառարանը կարևորվում է գիտականորեն հիմնավորված գլխատառերի առանձնացմամբ, որոնք բնորոշվում են իբրև բառային, ձևաբանական, շարահյուսական տարբեր արժեքներ: Բառա-

¹² Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003: Այսուհետև՝ ԼԽԳԲԲ:

րանն ունի ընդարձակ տեսական վերլուծություն՝ գրաբարի տարարժեք բառերի մեկնաբանումների ամբողջական ընդգրկմամբ¹³:

Հասարակական-քաղաքական եզրույթների շրջանակում բնագրում տեղ գտած տարարժեք եզրույթներն են՝ **ազատ** – այն փոխառություն է պահլավերենից: ԳԲԱ-ն վկայում է հետևյալ իմաստները. 1) ազնվական իշխան, 2) ուրիշի կամքից կախում չունեցող, ինքնիշխան, անկախ, 3) որևէ բանով չկաշկանդված, անկաշկանդ, 4) զերծ, անմասն, 5) մի բանից հեռու, 6) արձակ, ընդարձակ, լայնարձակ, 7) բարձր, 8) ազատորեն, առանց արգելքի: Այն երկարժեք միավոր է՝ գոյական-ածական (ԼԽԳԲԲ, էջ 16): Բնագրային օրինակ՝ «...ընդդեմաց իւր արս ընտիրս, միամիտս **ազատս**, ազգայինս...» (էջ 290): Երկում գործածված է նաև **ազատ(անի)** հավաքական գոյականը՝ ազատներ, ազնվականներ, իշխաններ իմաստով. «...և այլ մեծամեծք նախարարացն և աւագ տանուտերք, **ազատանին**...» (էջ 34,) **ազատ** բաղադրիչով ձևավորված **ազատագունդ** եզրույթի համար ԼԽԳԲԲ-ը նշում է հետևյալ իմաստները. 1) ազատներից՝ ազնվականներից բաղկացած խումբ՝ զինվորական գունդ, 2) ազնվական ծագում ունեցող զորական, 3) ազնվականներից կազմված, բաղկացած: 1-ին և 2-րդ իմաստներով այն գոյական է, իսկ 3-րդ իմաստով՝ ածական: Հեղինակը 2-րդ և 3-րդ իմաստների համար բերում է օրինակներ Բուզանդից. «Մուշեղ որդի Վասակայ ժողովեալ զամենայն **ազատագունդ** մարդկանն մնացելոցն» եւ «Տայր հրաման թագաւորն Արշակ **ազատագունդ** բանակին» (ԼԽԳԲԲ, էջ 16): Եզրույթը դրսևորել է գոյական-ածական տարարժեքությունը: **Աւագ** բառ-եզրույթի համար ԳԲԱ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) առաջինը, գլխավոր, ամենամեծը կոչումով, պատվով, դիրքով են, 2) տարիքով ավելի մեծ, երեց, 3) մեծ, կարևոր նշանակալից, 4) ազնվականության բարձր խավին պատկանող անձ, իշխանավոր, իշխան, պետ: ԼԽԳԲԲ-ում այն արժևորվում է իբրև ածական-գոյական երկարժեք միավոր: Բնագրում ունենք **աւագ(անի)**, **աւագա(խումբ)** եզրույթներ-

¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 5-10:

րի հետևյալ գործառույթները. «... գայր հասանէր ընդառաջ նոցա ամենայն **աւագախումբ** մեծամեծ նախարարօք իւրովք» (էջ 34), «...զի մեծամեծ **աւագանին**, նախարարքն աշխարհակալքն, աշխարհատեսքն, որ էին բիրաւորքն» (էջ 34): «Գումարէր զօրսն ամենայն տանցն **աւագանոյն** ընդ զօրսն արքունի» (էջ 34): **Ներքինի** – ԳԲԲ-ն **ներքինի** բառի համար նշում է հետևյալ իմաստները. 1) ամորձատված մարդ, 2) արքունի պալատի ներքին պաշտոնյա՝ սովորաբար ամորձատված, որ առավելապէս ծառայում էր կանանոցում: ԼԽԳԲԲ-ն այն ներկայացնում է իբրև ածական-գոյական տարարժեքության միավոր: Լ. Խաչատրյանը բնագրային օրինակը բերում է Բուզանդից. «Եւ Շապուհ թագաւորն **զներքինին** անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին (Բուզ., էջ 173): Բնագրային մեր օրինակում այն ածական է. «...այսինքն ունէր զպատինն մեծի մարդպետութեան, այր **ներքինի** չարասիրտ...» (էջ 74):

Պատիւ փոխառություն է պահլավերենից: ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները. 1) շուք, փառք, 2) հարգանք, մեծարանք, 3) արժանիք, արժանապատվություն, 4) բարձր դիրք, պատվավոր աստիճան, 5) պարգև, ընծա, նվեր, 6) պատվանշան: Բնագրում գործածված է 4-րդ և 6-րդ իմաստով. «Ապա հրաման ետ հանել **զպատինն** ի բաց (այստեղ ունի պատ-վանշան իմաստը) ի մերկանալ ի նմանէ **զպատուական** (պատիւ+ական) պատմուճանն...» (էջ 90):

Սեպուհ – իրանական փոխառություն է: Ըստ ԼԽԳԲԲ-ի՝ դրսևորում է երկարժեք՝ գոյական-ածական տարարժեքությունը: Ունի հետևյալ իմաստները. 1) նախարարական տոհմից սերած իշխան, նախարարական տան ժառանգորդ (Հին Հայաստանում): Լ. Խաչատրյանը բնագրային օրինակը բերում է Բուզանդից. «Ամենայն մարդիկն երթիցեն և լացցեն զԳնել մեծ **սեպուհն** Արշակունի զպանեալն» (ԼԽԳԲԲ, էջ 321): Իբրև ածական՝ ունի ազնվական ծագում ունեցող իշխանավոր, պայազատ իմաստ: **Գաւառակալ, գաւառատէր, գաւառապետ**: ԳԲԱ-ն նշում է գավառի տեր կամ կառավարիչ իմաստները: Բնագրային օրինակ. «... եւ ամենայն մարդիկ աշխար-

հին Հայոց մեծամեծ **գաւառակալք, գաւառատեարք...**» (էջ 284): Արդի հայերենում պահպանվել են գրաբարյան իմաստները: **Գաւառակալ** եզրույթը դրսևորում է ածական-գոյական երկարժեքություն: Իբրև ածական՝ գավառապետ, կուսակալ, կառավարիչ (անձ), իբրև գոյական՝ գաւառապետ, կուսակալ (ԼԽԳԲԲ, էջ 99):

Ի թիվս **արքունի** պաշտոնները և պաշտոնյաներին ներկայացնող եզրույթների՝ բնագիրը հարուստ է զինվորական տարբեր պաշտոնները և այդ պաշտոնները իրականացնող պաշտոնյաների գործառույթը արտացոլող եզրույթներով: Նրանք արժևորվում են նաև որպես ռազմական եզրույթներ: Նրանցից **հազարապետ** եզրույթը բազմիմաստություն է դրսևորում: Ստ. Մալխասյանցը նշում է, որ բացի զորագլուխ իմաստից՝ այն ունի ավելի լայն ընդգրկում (ծան. 40-րդ), քան զինվորական իմաստը: Բնագրային օրինակ՝ «Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին. զմեծ **հազարապետն** ի հազարապետութեան...» (էջ 286): Ռազմական գործ, զինվորական պաշտոնյա նշանակող եզրույթներին առանձին քննությամբ անդրադառնալու նպատակով այս ուսումնասիրությունում սահմանափակվենք զինվորական պաշտոնյաներին ներկայացնող եզրույթների մի քանի բնագրային օրինակների ներկայացմամբ՝ **զօրավար** - «հանդերձ **զօրավարան** Վաչէի» (էջ 34), **սպարապետ** - «Ձերբակալ արարեալ զԴատաբէնն Վաչէ **սպարապետն**...» (էջ 34), **բերդակալ** - «Քանզի դիպեցան մտերիմք **բերդակալք**...» (էջ 288): **Ստրատ** - փոխառություն է հունարենից. նշանակում է զորապետ: Բնագրային օրինակ՝ «...Ապա **ստրատն** Յունաց կազմեաց զօրս իւր» (էջ 306): **Ստրատելատ** - փոխառություն է հունարենից. նշանակում է զորավար, սպարապետ: Բնագրային օրինակ՝ «Տերէնտն **ստրատելատ** նոցա և գունդքն Հայոց և Մուշեղ սպարապետ նոցա...» (էջ 308): **Զօրագլուխ** - «...սպանանէր Մուշեղ **զզօրագլուխսն** Պարսից զԿարէնն եւ Զիկն» (էջ 286): **Փուշտիպան** - փոխառություն է պահլավերենից. նշանակում է թիկնապահ, անձնապահ (զինվոր, զինվորական): Բնա-

գրային օրինակ՝ «Եւ ետ նմա **փուշտիպան** մի հաւատարիմ եւ հրովարտակ արքունի մատանեան» (էջ 318):

Հեղինակը ներկայացնում է պատմական անձանց ծագումնաբանական արմատները, ուստի գործառական են **ազգ, տոհմ, ցեղ** եզրույթները: Բնագրային օրինակներ՝ «...ելանէր Արշակ **տոհմին** զօրավարաց **ազգին** քաջացն Մամիկոնենից...» (էջ 106): «...շինականաշէն **ազգն** Գնունեաց...» (էջ 106): **Ազգը** և **տոհմը** փոխառություն են պահլավերենից, իսկ **ցեղը**՝ հիմնական բառաշերտի բառեզրույթ է: **Պայեազատ** բառ – եզրույթն ունի **Ժառանգ** իմաստը: Այն փոխառություն է պահլավերենից: Բնագրային օրինակ՝ «... եւ արար զնա բղեաշիս եւ **պայեազատ** տան նորուն, **Ժառանգն** բազմիցս...բայց **յորդույն** Բակուր բղեշիսի...» (էջ 36):

Բնագրում անշուշտ գործածված են ընտանեկան հարաբերություններ արտահայտող եզրույթներ, քանի որ յուրաքանչյուր իշխանության հենքը ընտանիքն է: Բնագրային օրինակներ՝ «...զԱրշակորդի Տիրանայ եւ **հարք** նորին եւ հանդերձ **կանամբք** իւրեանց...» (էջ 104), «... զՎասակ զերեց **եղբայր**...» (էջ 106), «...Ապա եւ **կին** թագաւորին...» (էջ 200), «Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկոնեան տոհմէն, **քոյր** Վարդանայ Համազասպուհի եւ էր նա կին Գարեգինի տեառնն Ռշտունեաց գաւառին եւ փախեաւ **այր** իւր... իսկ **զտիկինն** Ռշտունեաց...» (էջ 274): Ընտանեկան հարաբերություններ արտահայտող **բառ-եզրույթները** հայերենի բնիկ բառապաշարի միավորներ են¹⁴:

Երկում հեղինակը մանրակրկիտ նկարագրում է պաշտոնյաների հանդերձանքը: Այս եզրույթները ևս առանձնանում են իբրև առանձին իմաստային շերտի միավորներ, ուստի սույն ուսումնասիրությունում բավարարվենք միայն մի քանի բնագրային օրինակների վկայակոչմամբ՝ «...**պատմուճան** ազնիւ...» (էջ 318). **պատմուճան**– փոխառություն է պահլավերենից, նշանակում է պարեգոտ (ԳԲԱ, էջ 396), **ազնիւ** – բազմիմաստ բառ է՝ ընտիր, **առաջնակարգ**,

¹⁴ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիրքարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 144:

սրբազան, նվիրական են (ԳԲԱ, էջ 16), բնագրային օրինակ՝ «... եւ ագոյց նմա պատմութեան **ագնիւ...**» (էջ 318): **Նշան** – փոխառություն է պահլավերենից, ունի 12 իմաստ: Բնագրում գործածված է զինվորական հատուկ նշան իմաստով (իհարկե, բնագրային բազմաթիվ օրինակներում այն կրոնական իմաստով է գործածված՝ աստվածային հրաշք իմաստով)՝ «... եւ **ի նշանացն**, իբրև ի հուրն հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղեգն» (էջ 310) են:

Ռ. Ղազարյանը գրաբարի դարձվածաբանության մասին կարևոր դիտարկում է արել. «Գրաբարի դարձուածաբանութիւնը թուով է, թէ անսպառ է...»¹⁵: Նույնը վերաբերում է նաև գրաբարի եզրույթային համակարգին, որի ամբողջական քննության համար անհրաժեշտ է «տեւական ժամանակ»: Այս նպատակին ուղղված ցանկացած ուսումնասիրություն հույժ կարևոր է և արդիական: Յուրաքանչյուր բնագավառ ներկայացնող եզրույթային համակարգ ունի իր իմաստային ենթաշերտերը: Հասարակական-վարչաքաղաքական հարաբերություններ արտահայտող եզրույթները ևս բազմաշերտ են:

Առաջին անգամ ներկայացվում են եզրույթներ, որոնք արտացոլում են՝ ա) երկրի **պաշտոնակարգությունը**՝ արքունի և ռազմական պաշտոնները և պաշտոնյաների գործառույթները, բ) **երկրի պետական կառուցվածքը**՝ իր ենթակառուցվածքներով: Առանձին քննության են ենթարկված տարարժեքություն դրսևորող եզրույթները: Ներկայացված 50 եզրույթներից 13-ը փոխառություն են պահլավերենից, 6-ը՝ հունարենից, 31-ը հայերենի հիմնաշերտի բառեր են: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր եզրույթ արժևորված է նաև տարժամանակյա դիտակետում: Աշխատանքը կարևորվում է ոչ միայն համաժամանակյա քննության շրջանակում, այլև փաստական հարուստ նյութ է տալիս պատմական եզրույթաբանության համար, քանի որ արդի արևելահայերենի եզրույթների մեծ մասը ունի գրաբարյան հենք:

¹⁵ Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012, էջ 10:

**ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ**

Գրաբարով ինքնություն և թարգմանական գրականության բառապաշարը ենթարկվել է իմաստաստուգաբանական և ռճական խորաքննի ուսումնասիրության, սակայն բառապաշարի կարևորագույն բաղադրիչը՝ եզրույթային համակարգը, դեռևս ուսումնասիրման կարիք ունի: Գրաբարի եզրույթների իմաստաստուգաբանական և կառուցվածքային հատկանիշների՝ մեր կողմից կատարված քննությունը ցույց է տալիս, որ նրանց ուսումնասիրությունը անհրաժեշտ է կատարել համակարգի ամբողջական ընդգրկմամբ: Գրաբարի եզրույթային համակարգի ամենաակնառու հատկանիշը բազմաշերտությունն է. յուրաքանչյուր ենթաշերտ ունի իր առանձնահատկությունները իմաստառճային և գործառական դիտակետերում, երբ կարևորվում են նաև տվյալ երկի բովանդակությունը և հեղինակի արվեստը գրաբարի բառապաշարի իմաստային ներբերանգների ընդգրկման և դրանց միջոցով որոշակի ռճական արժեքների ստեղծման գործառությամբ: Ի վկայումն վերոհիշյալի՝ սույն ուսումնասիրությունը ներկայացնում է գրաբարի եզրույթների իմաստառճային հատկանիշները Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում: Հեղինակը կիրառել է իմաստային տարբեր շերտեր և ենթաշերտեր ներկայացնող եզրույթներ, ինչպես՝ կենդանիների անուններ, կենցաղային իրերի, մետաղների անվանումներ, մարմնի՝ հոգևոր և ֆիզիկական կառույցի իմաստով եզրույթներ՝ գործառված ուղիղ և փոխաբերական իմաստներով /վերջիններս նաև դառնում են դարձվածային արտահայտությունների և դարձվածքների հիմնաբառեր/, կրոնական, իրավական, ռազմական բովանդակության եզրույթներ: Պետք է ընդգծել, որ տիրապետող են Աստծուն մեծարող եզրույթները, որոնք հիմնականում դիպվածային են՝ առկայացված տվյալ խոսքային տիրույթում:

Նարեկացիագիտությունը բազմակողմանի և խորաքննի ուսումնասիրության է ենթարկել մեծն Գրիգոր Նարեկացու «Մատեան ող-

բերգութեան» երկը¹ տալով նրա գրականագիտական և լեզվաոճական առանձնահատկությունների բարձրագույն գնահատականը: Մասնավորապես բազմակողմանիորեն քննվել է երկի բառապաշարը, սակայն գրաբարի եզրույթների արժևորումը ինչպես գրաբարով մատենագրության մյուս երկերում, այնպես էլ «Մատեան»-ում առայսօր չի տրվել: Երկում գրաբարի եզրույթների դրսևորումների վերլուծությունը առանձին հետաքրքրություն է ներկայացնում՝ պայմանավորված երկի բովանդակությամբ: Գրաբարի եզրույթները բազմաբովանդակ են յուրաքանչյուր գլխում: Դրանք հետազոտելիս կարևորվում են հետևյալ հանգամանքները.

1) Տվյալ գլխի և ենթագլուխների բովանդակությունը: Հեղինակը ասելիքը տպավորիչ և ներագոյու է դարձնում տարբեր բովանդակության եզրույթների գործառույթով:

2) Յուրաքանչյուր եզրույթի գործառույթը կարևոր ոճական արժեք է ստանում երկի ցանկացած հատվածում, այսինքն՝ արժևորման համար կարևորվում է այն խոսքային տիրույթը, որտեղ դրանք գործածվում են:

Դիտարկենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Լ գլխի **Գ** ենթագլուխը մարդկային էության բնորոշումն է՝ կառուցված հակադրությունների հենքով: Հիմնաբառերը որոշակի եզրույթներ են.

«Ընպանակք երկու յերկոսին ձեռին,

Մինն՝ արեամբ, եւ միւսն՝ կաթամբ...

Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,

Մինն՝ արտաւսր, եւ միւսն՝ ծծումբ» (էջ 365)²:

Ընպանակ և **բաժակ** եզրույթները կենցաղային իրերի անվանումներ են: **Բաժակ** եզրույթը Նարեկացին գործածում է տարբեր խոսքային տիրույթներում: Օրինակ՝ **«Բաժակդ** երկնաւոր արեան կենարարիդ Զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ» (էջ 640): «Զարտաք-

¹ Տե՛ս **Ա. Ղազինյան**, Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995: **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Պէրյուք, 1955: **Մ. Մկրչյան**, Հայ հին գրականության պատմություն, Եր., 1976 ևն:

² Բնագրային օրինակները՝ ըստ Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» ակադեմիական հրատարակության, Եր., 1985:

նայարդար **բաժակն** անմաքուր» (էջ 350): Դիմելով Աստծուն՝ Նարեկացին խնդրում է գթասրտություն, լույս, քաղցրություն, խորամտություն:

Առ նախդրով է կառուցված **Ե** ենթագլուխը: Այն նույնպես կազմված է հակադրությունների սկզբունքով. «Առ վշտագնելոյս մխիթարութիւն՝ **բաժակ** քո, Առ նեղելոյս ընդարձակութիւն՝ կամք քո» (էջ 367):

Բաժակ եզրույթը փոխառություն է պահլավերենից³: Ունի ուղիղ և փոխաբերական իմաստներ: «Մատենանում» այն գործածված է **ըմպանակ**, **գավաթ** իմաստով: Գրաբարում այն կազմում է նաև դարձվածքներ, օրինակ՝ «Զուղին պարտութիւն յանվթարելեացն **բաժակ բարկութեան** ի ձեռն առի» (էջ 346): «Թափեա՛ զմուրս անաւրէնութեան թմբրութեան **մահու բաժակիս...**» (էջ 346):

Բաժակ եզրույթը դարձվածքներ է ձևավորել նաև արդի արևելահայերենում, ինչպես՝ համբերության բաժակ, բարկության բաժակ, մահվան բաժակ և այլն: Նույն խոսքային տիրույթում հեղինակը հակադրությունները կառուցում է՝ **ըմպանակ**, **բաժակ** եզրույթներին հոմանիշ **տաշտ**, **սկաւառակ** եզրույթները իբրև հիմնաբառեր գործածելով: ***Տաշտ**-ը փոխառություն է պահլավերենից: ԳԲԲ-ն նշում է հինգ իմաստ. Նարեկացին գործածում է **բաժակ**, **թաս**, **գավաթ** իմաստով. «**Տաշտ** կրեցեալք ի ծայրս մատանց, Մինն՝ զինի, ես միւսն՝ լեղի» (էջ 365):

***Սկաւառակ** – փոխառություն է պահլավերենից: ԳԲԲ-ն նշում է՝ 1) կերակրի աման, ափսե, պնակ, 2) ըմպելիքի գավաթ, թաս, 3) սկուտեղ, մատուցարան (էջ 459) իմաստները: «**Սկաւառակք** կրկին կրաւորականք համոց, Մինն քաղցու և միւսն՝ դառնութեամբ» (էջ 365): Ինչպես տեսնում ենք, հեղինակը հակադրությունները կառուցել է կենցաղային իրերի անվանումներ արտահայտող հոմանիշ եզրույթների գործառույթով:

Նարեկացին գործածել է նաև *տարարժեք մետաղների անվանումներ արտահայտող եզրույթներ*: Օրինակ՝ «Մատուցանելոյս մա-

³ Բառերի մեկնությունները՝ ըստ Ռ. Ղազարեանի «Գրաբարի բառարանի» (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000), այսուհետև ԳԲԱ, ԳԲԲ:

հու արժանոյս Ընդ **պղնձոյս** գոյի անարգս ձայնի ինձ **ոսկի** շնորհի: Ընդ անգարութեան **երկաթոյս** սեւութեան գունոյս **պղինձ** պճնելի՝ ցոյցի առաքինութեան հրաշեկ Լիբանանու» (էջ 251): Կամ՝ «Զերծ շղթայի փրկեա՛ ի խեղդմանէս Ագատեա՛ ի տագնապէս, քակտեա՛ ի **յերկաթիցս**» (էջ 583): Կամ՝ «Եւ կամ քարինս անարգս ընդ պայծառութեան **արծաթոյ** Կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակդութեան զանգուածոյ հացի» (էջ 518): «Թարախ մթերից պատեալ **զերկաթով** գաղտնեացս ծածուկի Արդեն ինձ տագնապս՝ վերս պահեալս անխնամարկելիս» (էջ 374): Հեղինակը **արծաթ**, **երկաթ**, **ոսկի**, **պղինձ** տարարժեք մետաղներ անվանող եզրույթների գործածությամբ խոսքը դարձնում է տպավորիչ, ասելիքը՝ հասու և ներագրու ընթերցողին:

Նարեկացին գործածում է նաև *կենդանիներ անվանող եզրույթներ*: Ակնկալելով Աստծուց ներում և խնդրելով այն՝ ներկայացնում է մարդկային էության չարամիտ կրողին՝ իրեն, որի մեղքերը աննկարագրելիորեն բազում են թվով և սարսափելի՝ բովանդակությամբ: Պատկերը հասանելի է դառնում ընթերցողին կենդանիներ անվանող եզրույթների կիրառմամբ. «Աղու **աղաւնիս** միշտ հիմարութեամբ, այլ ոչ հանդարտութեամբ» (էջ 250): «Ի **կորեանց առիծուց** անձնական անձս եղեռնային... Կերպս **ձուռց քարբից**՝ լցեալ ծանրութեամբ» (էջ 250): Ներումն խնդրելով ամենագորից՝ գրում է. «Քաւ լիցի քեզ բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի», «Եթէ ախտացեալս քո **ոչխարի** գազան դժնդակ տացես ուղեկից» (էջ 253): «Եւ արդ, դու միայն սկիզբն բարեաց, հովիւ՝ մոլորեալ **ոչխարիս**...» (էջ 359):

Աստվածաբանական գրականության մեջ **ոչխար** եզրույթը խորհրդանշում է հավատացյալին, մեր օրինակում՝ մեղքերով լի մարդուն: Կամ՝ «Մտեմ ի բոյնն **աղաւնի** և անդուստ **ագռու** ելանեմ» (էջ 529): Նշենք, որ հեղինակը կենդանիներ անվանող եզրույթների կիրառմամբ ստեղծել է դարձվածային արտահայտությունների հրաշալի օրինակներ⁴, որոնք դիպվածային կարող են լինել՝ առկա-

⁴ Մանրամասն տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ք. Հարությունյան, Գրաբարի դարձվածաբանություն, Եր., 2020, էջ 275-293:

յացված տվյալ խոսքային տիրույթում: Դրանք ոճաստեղծ որոշակի միջոց են, որ Նարեկացու գրչի շնորհիվ դառնում են բովանդակությամբ տարողունակ պատկերներ: Ակնառու է լեզվաոճական մի հատկանիշ, որը Գ. Նարեկացու «Մատենանում» դիտարկելի է ցանկացած խոսքային տիրույթում: Դարձվածային արտահայտությունների ստեղծման հիմքում ընկած է որոշակի բառերի փոխաբերական իմաստով գործառույթը: Իբրև լեզվաոճական կարևորագույն հատկանիշ՝ ակնհայտ է այն հանգամանքը, որ դիավածային դարձվածային արտահայտությունը կառուցելիս հեղինակը հաճախ գործածում է որոշակի բնագավառ ներկայացնող եզրույթներ, որոնք խոսքային տիրույթի բովանդակությանը համարժեք են, որի վառ ապացույցն են մեր իսկ շարադրանքում ներառված այնպիսի եզրույթները, ինչպիսիք են՝ 1) մետաղների անվանումներ, 2) կենցաղային իրերի անուններ, 3) կենդանիների անուններ անվանող եզրույթները: Եզրույթների փոխաբերական իմաստով գործառույթն էլ տվյալ միավորը դարձնում է դարձվածք:

Նարեկացին գործածում է նաև *մարմնի մասեր անվանող* եզրույթներ: Նա Աստծուն խնդրում է, որ իբրև օգնություն և ապավինություն՝ Աստված պարզի իր ձեռքը, ոտքը, իբրև հոգևոր ամրապնդում՝ իր ոգին. «Առ սրացելոյս պատսպարութիւն՝ **բագուկ** քո, Առ փախուցելոյս ապաւինութիւն՝ **ոտք** քո» (էջ 367): Կամ այլ օրինակներում՝ «Դու ինձէն իսկ զիս՝ ոսկեղէն տախտակս խաւսուն, նուիրեալ քումդ պատգամի. գրեալս **մատամբդ** Աստուծոյ» (էջ 389): «Առ բժշկութիւն անողջանալի՝ խոցուածոյս՝ **մատն** քո...» (էջ 367): «...Ոչ սասանմունք **մատանց**, ոչ համբարձմունք **ձեռաց**, Ոչ աղաչանք **լեզուաց**» (էջ 409): «Եւ **ի ձեռիւն** է շունչ կենդանական բոլորեցուն» (էջ 581):

Հեղինակը, ինչպես սպասելի էր, գործածել է *աստվածամեծար* բազմաթիվ եզրույթներ, որոնցից յուրաքանչյուրը առկայացված է խոսքային որոշակի տիրույթում՝ համարժեք նրա բովանդակությանը: Նրանցով ակադձուն է յուրաքանչյուր գլուխ: Օրինակ՝ «**Մանդողք երանութեանն**՝ եղկելոյս, **Ճանապարհի շաղաց**՝ մոլորելոյս, **Թագաւոր ներող**՝ պարտելոյս, **Քաղցր լուսաւորութիւն**՝ լքելոյս,

Ձեռնկալ կենաց՝ հերքելոյս» (էջ 361): Սրանք պետք է գնահատել իբրև դիպվածային միավորներ տվյալ խոսքային տիրույթի շրջանակում:

Մեկ այլ օրինակում ունենք. «Ձա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից՝ աղաղակի Քեզ վերընծայեմ, **տեսողդ գաղտնեաց**» (էջ 246):

Մարդ արարածը նույնպես բնորոշվում է խորհրդանշական եզրություններով, ինչպես՝ «Դու ստեղծիչ ես, եւ ես **կաւ**» (էջ 251):

Հանճարեղ բանաստեղծը գործածել է **կրոնական** բովանդակության բազմաթիվ եզրություններ, այսպես՝ **Ա** գլխի **Ա** և **Բ** ենթագլուխներում՝ «**պատարագն** բոլորապտուղ...», «Ձոր **առակ** երթանասներորդի երկրորդի **սաղմոսին** ազդէ, Այլ իբր գբուրեալ **խունկն** հաճոյական՝ **ի խորանին** Մելովայ» (էջ 246): «Ձոր շնորհեալն **առաքելականացն դասուց** Պաւղոս (էջ 247), «Վասն զի թէ Մերձ է աւր **տեառն**, որպէս **Գիր** ասէ...» (էջ 247), «**Արքայութիւնն Աստուծոյ**» (էջ 257), «Ըստ **մարգարէին** եւ **առակողին**» (էջ 257):

Ի շարս տարբեր բնագավառների ենթաշերտեր ներկայացնող եզրությունների՝ հեղինակը գործածել է նաև *իրավական* և *ռազմական* եզրություններ: Օրինակներ՝ «Բայց քանզի ձայնդ ահաւորի **դատաստանիդ** հատուցման» (էջ 247): «Եւ ի դնելս իմ ընդ քեզ **դատ** խառնեալ աղերսիւ հզաւր» (էջ 246): «Պատժակիցս կործանեցելոյն Սողոմայ, Ըմբերանեալ **դատախազս** Նինուէի» (էջ 249): «Ընդ պատիժ **աւրինին** զշնորհն» (էջ 455) (ընդգծվածներն իրավական եզրություններ են):

«Կրկինս ինձ երկնէ **մարտից** յատուցմունս (էջ 247): «Հարեալք ընդ միմեանս **զէն** առ **սուսեր**» (էջ 247) (ռազմական):

Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի լեզվաոճական ցանկացած բաղադրիչի մասին խոսելիս պետք է կարևորել երկու հանգամանք. Առաջին՝ Գ. Նարեկացին մեծագույն մարդագետ է և միաժամանակ խորաքնին աստվածաբան: Մա նշանակում է, որ կրելով իր մեջ քրիստոնեական վարդապետությունը՝ նա մարդուն տանում է մաքրման՝ ցույց տալով դրա ուղիղ ճանապարհն առ

Աստված, որ է «լոյս յաւիտենական»: Հեղինակը մանրագնին, ոսկերչական նրբանկատությամբ է գծում մեղքերի գիտակցման և ապաշխարելու միջոցով դրանցից ազատվելու հնարավոր ուղին: Բնականաբար զգացմունքներն ու հույզերը, հավատն ու մտավախությունը՝ ոչ թե կասկածը, այլ մտավախությունը հանկարծ չներվելու, յուրաքանչյուր գլխում, ենթագլխում, գեղարվեստական ցանկացած պատկերում հեղինակը ներկայացրել է խոր գրաբարագետի, լեզվաբանի և տաղանդավոր մտածողի գրչով:

Երկրորդ հանգամանքը այդ դժվարին ուղին ճիշտ գծելու նպատակաուղղվածությունն է: Հետևաբար ոճաստեղծիչ ցանկացած միավորի քննություն պիտի կատարել խոսքային որոշակի, տիրույթում: Այս դիտակետում արժևորելով գրաբարի եզրույթների գործառույթը «Մատենանում»՝ տեսնում ենք նրանց կարևորությունը ցանկացած խոսքային կառույցում, խոսքը ընթերցողին հասանելի և ներազդու դարձնելը: Ավելին՝ նրանց փոխաբերական իմաստով գործառույթով ձևավորվել են բազմաթիվ դարձվածային արտահայտություններ և դարձվածքներ, որոնց գերակշռող մեծամասնությունը դիպվածային է: Տիրապետող են աստվածամեծար եզրույթները, մարդկային էությունը բացահայտող, ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված եզրույթները, քրիստոնեական վարդապետության խորախորհուրդ փիլիսոփայությունը և այն մարդկանց հասանելի դարձնելու նպատակին ծառայող, տարբեր իմաստային ենթաշերտեր ընդգրկող եզրույթները: Նրանց համակողմանի քննությանը ուղղված ցանկացած ուսումնասիրություն շարունակելի է դառնում՝ պայմանավորված երկի բովանդակության ներքին խորհրդով, ասելիքի նկատմամբ հեղինակի պատասխանատվության կարևորմամբ, նարեկյան գրչի տաղանդով: Ի մասնավորի՝ այն վերաբերում է նաև «Մատենանում» գործածված եզրույթների քննությանը. դրանք ոճական կարևոր միավորներ են՝ իմաստային ամենատարբեր շերտերով և ենթաշերտերով:

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ «ՄԱՐԴ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մարդու և հասարակության հետ կապված բառերի քննությունը Ծննդոց գրքում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբն ունի հիմնական հասկացությունների համար բազմաթիվ բառային նշանակումներ՝ թե՛ պարզ արմատական, թե՛ ածանցավոր կամ բաղադրյալ կազմություններ, որոնք միավորված են իրար լրացնող ենթախմբերում: Այս իմաստային դաշտի ենթախմբերում ընդգրկված բառերը հոմանշային անդամների թվի տեսանկյունից հարուստ շարքեր ունեն: Բառերի հիմնական մասը ծագումով բնիկ հնդեվրոպական է՝ **մարդ, այր, ծնունդ, մանուկ, հայր, մայր, եղբայր, քույր, ուսուր, դուստր, անդրանիկ, ծնունդ, ընտանիք, տուն**, սակավաթիվ փոխառություններ կան՝ իրանյան (**ազգ, տոհմ, գաւակ**) և ասորական (**տղայ**), փոխառյալ կազմությունները գալիս են լրացնելու նշված բազմանդամ հոմանշային շարքերը: Քննված բառերը համագործածական են հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում՝ հին, միջին և նոր գրական հայերեններում, ինչպես նաև բարբառներում: Դրանց իմաստային բովանդակությունը դարերով գրեթե փոփոխությունների չի ենթարկվել, պարզապես որոշ բառեր հիմնական բառաֆոնդից տեղափոխվել են հնաբանությունների, բանաստեղծական բառերի շերտեր: Հունարեն և ասորերեն բնագրից Աստվածաշունչ մատյանը գրաբար դարձրած մեր թարգմանիչները մեծ տաղանդով ի ցույց են դրել ոսկե դարի դասական լեզվի բառապաշարի, բառակազմության և իմաստաբանության ներուժը՝ նույն հասկացությունը տարբեր բառերով, ոճական, իմաստային նուրբ և նրբագույն երանգներով վերարտադրելու ունակությունը՝ Սուրբ գրքի բնագրին համարժեք:

Աստվածաշունչ մատյանը հին հայերեն՝ գրաբար է թարգմանվել Մեսրոպ Մաշտոցի, կաթողիկոս Սահակ Պարթևի և նրանց ավագ ու կրտսեր աշակերտների կողմից հայոց գրի ստեղծումից անմիջապես հետո՝ աջակցությամբ Հայոց արքա Վռամշապուհի:

Համաձայն հայոց գրերի ստեղծման հայր Մաշտոցի վարքագրության հեղինակ Կորյունի՝ հայերենի այբուբենը ձևավորելուց հետո, Կոմագենեի Սանոսատ քաղաքում, Մաշտոցն իր սաների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի երկար սպասված գրաբար թարգմանությանը՝ իբրև սկիզբ ընտրելով Սողոմոնի առակները. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»¹: Պետք է նշել, որ մինչ այդ արդեն տարբեր աղբյուրների վկայությամբ, Գրիգոր Լուսավորչի ջանքերով Մեծ Հայքում ստեղծվել էր բանավոր թարգմանիչների մի ողջ դպրոց: Տրդատ թագավորի հրամանով հիմնված հելլենական և ասորական դպրոցներում պատրաստում էին նաև թարգմանիչներ, որոնք մասնագիտանում էին Աստվածաշնչի և հոգևոր գրականության թարգմանության գործում՝ կարդում էին ասորերեն և հունարեն բնագրերը և դրանք վերաբաժանում հայերեն: Ինչպես վկայում է Հ. Մանանդյանը, IV դարի ընթացքում Հայաստանում արդեն կային Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ բանավոր հաղորդմամբ, որի շնորհիվ էլ հայագետի համոզմամբ, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ճշտորեն և լիովին վերաբաժանվում է ասորական և հունական բնագրերի բոլոր նրբերանգներն ու առանձնահատկությունները²:

Մաշտոցի թարգմանական աշխատանքներին միանում է Մահակ Պարթևը և, ինչպես վկայում են V դարի հայ մատենագիրները, մասնավորապես հավաստի սկզբնաղբյուր համարվող Ղազար Փարպեցին, կաթողիկոսի մասնակցությամբ ավարտին է հասնում Աստվածաշունչ մատյանի հայերենացման սրբազան գործը: Մաղաքիա Օրմանյանը գրում է. «Առաջ բերւած կտորներուն բաղդատու-

¹ digilib.aua.am/book/252/257/3748/%D5%8E%D5%A1%D6%80%D6%84%20%D5%84%D5%A1%D5%B7%D5

² Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, Բ, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնությունության համար, էջ 456:

թենէն յայտնի կտեսնուի, որ երկու թարգմանութիւններ եղած են ժամանակին, մին Մեսրոսպէ, իբր սկզբնական փորձ, եւ միւսը՝ ՍաՀակէ իբր վերջնական գործ»։ Թարգմանության լեզուն ընդունված է համարել դասական գրաբարը, ավելի ստույգ՝ V դարի առաջին տասնամյակների լեզուն³։

Ընդհանրացնելով թարգմանության ժամանակի և սկզբնաղբյուրի վերաբերյալ կարծիքները Լ. Տեր-Պետրոսյանը ամփոփում է. «Բոլոր հետազոտողները համամիտ են այն հարցում, որ Աստվածաշունչը հայերեն է թարգմանվել Ե գարի սկզբին և որոշ ժամանակ անց խմբագրվել ըստ ձեռք բերված ստույգ հունարեն օրինակների»⁴։ Ասորերենից կատարված առաջին թարգմանությունը կոչվում էր «փութանակի», իսկ խմբագրված, լրացված, հունարեն բնագրի միջոցով ճշտված տարբերակը՝ «ընկալեալ»։ Հետազոտողները ընդգծում են, որ երկրորդ անդրադարձը Աստվածաշնչի թարգմանությանը պայմանավորված էր ոչ այնքան կատարված թարգմանության անհամարժեք որակով, որքան բնագրի ոչ ամբողջական, թերի ընդգրկման հանգամանքով։ Ահա թե ինչու Աստվածաշնչի թարգմանության սկզբնական շրջանի արդյունքը V դարի պատմիչները բնորոշում էին իբրև «զփութանակի զթարգմանութիւնս» կամ «թարգմանեալն փութանակի»։ Ֆրանսիացի արևելագետ Մաթյուրեն Վեյսիեր Լա Կրոզը (1661-1739, Mathurin Veyssière de La Croze) Աստվածաշնչի առաջին գրավոր հայերեն տարբերակը՝ Սահակ-Մեսրոպյան թարգմանությունը, անվանել է «թագուհի թարգմանութեանց»⁵։

Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան բնագրի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V դարասկզբին գրաբարյան բառապաշարն ուներ հարուստ իմաստաբանական և բառակազմական համակարգեր, որոնց միջոցով հնարավոր էր արտահայտել նյութա-

³ Տե՛ս Գիրք Ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Եր., 1985, էջ 34-35։

⁴ Լ. Տեր-Պետրոսյան, Մաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը, «Էջմիածին», Ա, 1975, էջ 44։

⁵ Առավել մանրամասն տե՛ս Լորայր Դանիելյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության փուլերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, 2001թ., էջ 3-15։

կան և վերացական ամենաբազմազան հասկացություններն ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական միջոցներով, հոմանշային շարքերով: Համընդհանուր լեզվական կադապարի (ՀԼԿ) կադապարի և եզրերի հիման վրա հայերենի արմատական գոյականների բնութագրումն առաջին անգամ իրականացրած լեզվաբան Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» իր հիմնարար աշխատության մեջ առանձին վերլուծում և դասակարգում է հասարակության հետ կապված անվանումները՝ որպես կառուցվածքային ամբողջություն՝ իրենց ենթահամակարգերով՝ *ընտանիք, ազգ, տոհմ, ցեղ, պետություն*⁶: Այս իմաստային դաշտի հիմնային բառերն ունեն վաղնջական ծագում, համագործածական են և բոլոր լեզուների հիմնական բառաֆոնդի կարևորագույն մասն են կազմում:

Աստվածաշնչի Ծննդոց գիրքը աշխարհի արարչության գործընթացի հանգամանալի նկարագրությունն է, հետևապես այստեղ մարդու, ինչպես նաև նրա հարաբերությունների և կենսագործունեության վերաբերյալ բոլոր միջուկային հասկացություններն իրենց բառային տարբեր նշանակումներով վկայված են: Հենց այս նկատառումով էլ այն ընտրել ենք իբրև սկզբնաղբյուր մեր հետազոտության համար: Բառային նյութը քաղել ենք Գարեգին Ա կաթողիկոսի առաջնորդությամբ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից լույս ընծայված «Աստուածաշունչ մատենան» հրատարակությունից՝ որպես առավել ամբողջական և ճշգրիտ⁷:

Հին հայերենի բառապաշարում մարդու՝ իբրև բանական էակի՝ homo sapiens-ի լեզվական նշանակումները բազմանդամ հոմանշային շարք են կազմում: Ընդհանրապես բոլոր լեզուներում հնա-

⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 141-153:

⁷ Աստուծաշունչ մատենան հին եւ նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց համեմատութեամբ եբրայական եւ յոունական բնագրաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997:

գույն ժամանակներից սկսյալ մարդը շրջակա աշխարհում կենտրոնական դիրք է գրավել՝ որպես աստվածային արարչության պսակ, ուստի ունեցել է տարատեսակ անվանումներ, որոնց զգալի մասը պայմանավորված է կրոնական գործոններով: Այս տեսանկյունից Աստվածաշնչի Ծննդոց գիրքը մարդու լեզվական նշանակումների կարևոր սկզբնաղբյուր է, քանի որ այստեղ է նկարագրված մեզ շրջապատող աշխարհի արարումը՝ երկնքի ու երկրի, բուսական և կենդանական աշխարհների: Ծննդոց գրքում մարդը կենդանական աշխարհի հետ ուղղակի կապ չունի, նա եզրափակվում է Աստուծո ստեղծարարության՝ արու և էգ է, Աստուծո պատկերի կրողը, թեև Աստուծո սեռի մասին, որպես կանոն, հիշատակում չկա, իսկ պատկերաբանության մեջ նա այրակերպ է՝ ի տարբերություն հեթանոսական շրջանի դիցաբանական ընկալման, որտեղ աստվածները երկսեռ էին: Միաստվածության շրջանում հայրիշխանությունը կայացած իրողություն էր, ուստի, օրինակ, քրիստոնեության մեջ հայր և որդի աստվածների հետ անսեռ Սուրբ հոգին էր երրորդություն կազմում, մայր աստված չկար, Աստվածամոր ընկալումը, անկախ Հիսուս որդու միաբնակ կամ երկբնակ էության սահմանումներից, զուտ մարդկային էր, Աստվածամայր Մարիամը ընտրյալ կին էր, բայց մարդ:

Ծննդոց գրքում ի սկզբանե շեշտվում է, որ մարդը օրինյալ իշխանն ու թագավորը, տերն է ծովի ձկների, երկնքի թռչունների, երկրի վրա բնակվող բոլոր կենդանիների ու սողունների: Միևնույն ժամանակ՝ իբրև կենտրոնական գաղափար, Սուրբ գրքում բազմաթիվ կրկնություններով ընդգծված է մարդու անքակտելի կապը Աստուծո հետ. «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու և էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցէ՛ք գերկիր, եւ տիրեցէ՛ք դմա, եւ իշխեցէ՛ք ձկանց ծովու եւ թռչնոց երկնից եւ ամենայն անասնոց եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի» Ա, 27-28: Այսինքն՝ ականերն է մարդու գերակայությունը և նմանությունը Աստծուն, նույն կերպար ունենալը: Ծննդոց

գրքում մարդու՝ աստվածաստեղծ եւ աստվածակերպ լինելու հատկանիշը բազմիցս ընդգծվում է, հենց այդ պատճառով էլ մարդու կողմից այլ մարդու արյուն թափելը համարվում է մահացու մեղք, որը պատժվելու է սպանող սպանությամբ՝ ոչ միայն «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման», այլև «արիւն ընդ արեան», այսպես՝ Նոյի և նրա որդիների վերաբերյալ Թ գլխում իբրև նախազգուշացում-պատվիրան Աստուծո անունից գրված է. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա, զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն» Թ, 6-7:

Այժմ անդրադառնանք մեր ուսումնասիրելիք իմաստային դաշտում կենտրոնական դիրք զբաղեցնող **մարդ** բառին, որը վաղնջական ծագում ունի, միջուկային միավոր է: Ծագումով այն բնիկ հայկական բառ է, հ.-ե.^{*} mer «մեռնել» արմատի^{*} mr-to ենթակայական դերբայի ձևն է, և նրա բուն իմաստը (էտիմոնը) մեռնողն է⁸: Ըստ այսմ՝ **մարդ** ուղղակի նշանակում է «մահկանացու»: Ինչպես նշում է հայերենի արմատների ստուգաբանական բառարանի հեղինակ Ջր. Աճառյանը, հնդեվրոպական լեզվամտածողությամբ մարդը երկու ընկալում ունի. 1. Մահկանացու՝ անմահ աստվածներից տարբերվող, 2. Երկրածին, երկրային, որ ծագում է հ.-ե.^{*} g'hmon- սկզբնաձևից, հիշենք լատիներեն Homo «մարդ» և humus «հող» բառերը, նաև գոթերենում guma «մարդ», այս պարագայում մարդը երկնայիններից տարբերվող հատկանիշով է բնորոշվում: Հայերենում երկրորդ ընկալման նախաձևը չի պահպանվել: Այս բառի քննության ընթացքում Լ. Հովհաննիսյանը ցույց է տալիս հայերի նախնական մտածողության կապը հնդիրանական ժողովուրդների հետ, որոնց ընկալմամբ ևս մարդու առաջնային հատկանիշը հենց մահկանացու լինելն է, գործինակ՝ հին հնդկերենում marta «մարդ», martya «մահկանացու», պարսկերենում mard «մարդ», morden «մեռնել»⁹: Հավե-

⁸ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Եր., 2008, էջ 7, նաև **Հրաչեայ Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր, 1926, էջ 278-280:

⁹ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 7-8:

լենք, որ **մահկանացու** բառը, որը սկզբնապես որակ, հատկանիշ ցույց տվող ածական է, հայերենում ձեռք է բերել հստակ գոյականական իմաստ՝ մարդ: Նույնը կարող ենք ասել՝ **հողածին կամ հողեղեն** բառերի վերաբերմամբ, որոնք ևս ածական են, սակայն գոյականական ընկալմամբ նշանակում են *մարդ*, «հողեղեն/հողածին էակ» ասելով՝ հասկանում ենք առաջին հերթին մարդուն: Գրաբարի բառարաններում «հողածին», «հողեղեն» բառերը բացատրությունները հաստատում են այս հնագույն հնդեվրոպական աշխարհընկալումը: Այսպես ՆՃԲ-ում «հողածին» բառուսումնասիրությունում նշված է. «Ի հողոյ ծնեալ, ծնունդ երկրի, երկրածին, մարդ, աղամ»¹⁰, որից հետո միայն բերվում են մնացյալ իմաստները՝ «ամենայն կենդանի, մանաւանդ ցամաքային»: Իսկ «հողեղեն» անվան բացատրության մեջ նշված է . «...առաջին մարդն յերկրէ հողեղեն, որպէս հողեղենն, նոյնպէս եւ հողեղենքս»¹¹: Այս իմաստային անցումների հետ կապված կարևոր է նշել, որ **Աղամ** եբրայական անձնանունը վերածվել է հասարակ անվան՝ *մարդ* իմաստով, ահա, թե ինչու ՆՃԲ-ում այն գրվում է նաև փոքրատառ՝ իբրև մարդու հոմանիշ: Նույն երևույթը փաստացի առկա է **Եվա** հատկանվան պարագայում, եթե Աղամը *այր, տղամարդ* բառի հոմանիշն է դարձել, ապա Եվան՝ *կին* բառինը: Թեև պետք է արձանագրել, որ ՆՃԲ-ում առանձին բառուսումնասիրություն կա միայն Աղամի վերաբերյալ, *Եվա*-ն դիտարկված է որպես հատուկ անուն և տրված չէ առանձին բառուսումնասիրությունով, *Եվա* ձևից ունենք *եւայական* ածականը, որի համար տրված է հետևյալ բացատրությունը. «սեպհական եվայի նախամօր»¹²: Ինչ վերաբերում է Աղամ անվան իմաստային բովանդակությանը, ապա գրաբարյան տարբեր բնագրերում այն փոքրատառով՝ իբրև հասարակ գոյական, «մարդ, այր» իմաստով հաճախ է գործածվում:

¹⁰ **Հայր Գաբրիել Աւետիքեան**, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 3:

¹¹ Նշվ. աշխ., հ. 2, էջ 117:

¹² Նշվ. աշխ., հ. 1, էջ 705:

Քննելով տղամարդու և կնոջ՝ Ադամի և Եվայի ստեղծման աստվածաշնչյան պատումը՝ Ծննդոց գրքում տեսնում ենք հակասություն-խմբագրում նրանց ընդհանրական բնույթի և արարման վերաբերյալ, որն ակնհայտ պայմանավորված է աշխարհի այրակենտրոն ըմբռնմամբ. կնոջ և տղամարդու նախնական հավասարությունը խախտվում է, և կինը դառնում է առաջնաստեղծ տղամարդու ածանցյալը, նրանից՝ նրան օգնելու համար ստեղծված արարած: Այսպես՝ Ծննդոց գրքի Ա գլխում նշվում է, որ արաչության վեցերորդ օրը Աստված ստեղծում է մարդուն՝ «արու և էգ արար գնոսա» Ա, 27, Ե, 2: Բ գլխի շարադրանքում Ադամը միայնակ է, ուստի Աստված որոշում է նրան օգնականներ ստեղծել ի դեմս կենդանիների, որոնց Ադամը անուններ է տալիս, բայց չի գտնում նրանց մեջ իրեն նմանին, և նինջ ու թմբիր է բերում Աստված Ադամի մարմնին, հանում նրա կողը, լցնում մարմնով, բերում Ադամի մոտ, որն էլ անմիջապես ճանաչում է իր ոսկրն ու մարմինը և ասում. «Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի **կին**, զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ **այր զհայր** իւր եւ **գմայր** իւր, եւ երթիցէ զհետ **կնոջ** իւրոյ եւ եղիցին երկուքն ի մարմին մի» Բ, 23-25: Այս պարբերության մեջ գործածված են մարդուն վերաբերող իմաստային դաշտի կարևոր հիմնաբառերը՝ **կին**, **այր**, **հայր**, **մայր**, որոնց քննության էլ անդրադառնանք:

Կին բառը ՆՀԲ-ում համարվում է **այր** բառի առնչակիցը, մարդկանց մեջ *էգը*, մանավանդ *չափահասը՝ ամուսնացյալը*, իբրև աստվածաշնչյան բացատրություն նշվում է, որ Ադամը նրան անվանել է *կյանք*¹³: **Կին** դարձյալ բնիկ հայկական ծագում ունի իր երկու հիմքերով էլ՝ **կին-կան**, երկրորդ ձևից ունենք հոգնակի թվի կազմությունները՝ *կանայք*, *կանանց* և այլն: Նախաձևն է *h.-ե* g^w en* կամ **g^wen-ը*՝ հենց *կին* իմաստով, Հր. Աճառյանը իբրև առնչակից ձև հիշատակում է նաև սանսկրիտի *gna* արմատը՝ *աստվածուհի* իմաստով գործածվող¹⁴:

¹³ Նշվ. աշխ., հ. 1, էջ 1096:

¹⁴ **Հ. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, հ. 2, Եր, 1926, էջ 588-590:

Գ. Զահուկյանը իբրև հնդեվրոպական նախաձև վերականգնում է *gʷenā-ն՝ նույն իմաստով ¹⁵: **Կին** բառի հոմանիշներն են *մայր-ը, դուստր-ը* (վերջինս նաև բառակապակցությամբ՝ *դուստր մարդկան*), *եկա-ն*: Ծննդոց գրքում կնոջ առաջնային հատկանիշ համարվում է գեղեցկությունը. «Եւ եղեւ իբրեւ սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի եւ դստերք ծնան նոցա, տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան, զի գեղեցիկ էին» Զ, 2: **Կին** արմատի կիրառությամբ միջին դարերում ստեղծվում են **կնիկարմատ** կամ **կինարմատ** նույնաբովանդակ բառերը, որոնց հանդիպում ենք «Միջին հայերենի բառարանում»¹⁶: Մտ. Մալխասյանցը հայերենի գրեթե բոլոր պատմական շերտերն ընդգրկող իր «Հայերեն բացատրական բառարանում» առանձին բառուսումնասիրությունով տալիս է **կինարմատ** բարդությունը՝ դիմացը թեական նշելով «գուցե *կնամարդից* *ը-ի* տեղափոխությամբ, ինչպես՝ *կամուրջ կարմունջ*»¹⁷: Կարծում ենք, որ իրականում այս կազմությունը **կին** և հենց **արմատ** բառերից է ստեղծվել՝ *կանացի, իգական արմատից սերող* նշանակությամբ: Սպասելի համաբանությամբ *այրարմատ* կամ *տղայարմատ* կազմություններ չեն ստեղծվել, թերևս այս պատճառով էլ Ս. Մալխասյանցը փորձում է ենթադրել դրափոխություն: Իրականում համաբանությամբ բառակազմական ձևեր ստեղծելու սկզբունքը ոչ միշտ է գործում: Այս պարագայում կարևոր հանգամանք է նաև այրակենտրոն լեզվամտածողությունը, որ գալիս է Ծննդոց գրքի երկրորդ շերտից, Ադամը՝ տղամարդը, հենց ինքն է արմատը, որից ճյուղավորվում է կինը: Ընդհանրապես Ծննդոց գրքում կարևոր իմաստային փոխհարաբերություններ են ընդգծված *Աստուած*→*մարդ*→*այր*→*կին* հասկացությունների և նրանց հոմանշային նշանակումների միջև՝ *Աստուած*→*Ադամ*→*Եկա* աստիճանակարգությամբ:

Մարդու և Աստուծո նմանություն-հավասարության գաղափարը յուրօրինակ զարգացում է ստանում Ծննդոց գրքի Գ գլխում, ուր

¹⁵ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 405:

¹⁶ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 378:

¹⁷ Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 435:

ի հեճուկս Աստուծո զգուշացման՝ օձը համոզում է կնոջն ուտել բարու և չարի գիտության ծառի պտուղը, որպեսզի բացվեն նրանց աչքերը, և ինչպես օձն է արձանագրում. «...եւ լինիցիք իբրեւ զաստուածս՝ ճանաչել զբարի և զչար» Գ,5: Մակայն բարու և չարի գիտության պտուղը ճաշակելուց հետո այր և կին արտաքսվում են դրախտից՝ չարաչար անհիծվելով, քանզի Աստծո աչքերում մարդու հավասարվելը իրեն, «մի ի մենջ դառնալ»-ն արդեն գնահատվում է իբրև աններելի մեղք, և որպեսզի կենաց ծառից էլ հանկարծ Ադամն ու Եվան չճաշակեն՝ անմահ դառնալով, նրանք վտարվում են և պարտադրված բնակություն հաստատում դրախտից դուրս: Այդ օրվանից սահմանվում է կնոջ ենթակայությունն ամուսնուն, անհավասարությունը, որդեծնության ցավերը, բազմապատկվող տրտմությունն ու հեծությունը, իսկ տղամարդուն վիճակվում է փուշ և տատասկ երկրային կյանքում, դառը քրտինքով տրվող հանապազօրյա հաց և հողից հող դառնալ. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր և ի հող դարձցիս» Գ, 19:

Ինչ վերաբերում է մեր քննած իմաստային դաշտի հաջորդ միջուկային բառին՝ **այր**, ապա այն հայերենի բոլոր բառարաններում տրված է իր երկու հիմնային իմաստներով՝ 1. Արու մարդ, չափահաս, արբունքի հասած, մահկանացու և 2. ամուսին, բնիկ հնդեվրոպական բառ է, բայց ինչպես Հր. Աճառյանը և Գ. Ջահուկյանն են նշում, նախաձևը դժվար վերականգնելի է: Գ. Ջահուկյանն իր «Մտուգաբանական բառարանում» նշում է, որ այն տարահիմք, անգամ տարարմատ կազմություն է, ենթադրաբար այր > *anrio- *ario – «տեր» իմաստով հիմքի ազդեցությանը ենթարկված¹⁸: **Այր** բառը հոմանշային յուրօրինակ շարք է կազմում *մարդ, մահկանացու, հայր, որդի* (բառակապակցությամբ՝ *որդի Աստուծոյ*, այստեղ կարևոր նրբերանգ կա՝ եթե *կին* բառը համագործ է *դուստր մարդկան* արտահայտությանը, ապա *այր* բառը՝ *որդի Աստուծոյ*), *ուստր* և *հսկա*

¹⁸ Նույն տեղում, էջ 49:

բառեր հետ՝ փաստացի արտահայտելով արական սեռի բոլոր բնորոշ հատկանիշներն ու գործառնությունները: Ծննդոց գրքում ուրույն շեշտադրում ունի հենց «հսկա» իմաստը, Ջ գլխում կարդում ենք. «Եւ սկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ, եւ յետ այնորիկ իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերսն մարդկան, եւ ծնան իւրեանց որդիս, նոքա էին սկայքն, որ յաւիտենից արք անուանիք» Զ, 4-5: Նշենք նաև, որ ի տարբերություն հայ պատմագրության՝ Ծննդոց գրքում **այր** բառը ավելի սակավադեպ է գործածվում, քան նրա հիմնական հոմանիշ **մարդ**-ը: Նույնիմաստ **տղամարդ** կազմությունը շատ ավելի նոր է, այն ՆՀԲ-ում կամ «Գրաբարի առձեռն բառարանում» տրված չէ, վաղաշխարհաբարյան կազմություն է, որն առկա է Մ. Մալխասյանցի բառարանում՝ «ընդհանրապես արական սեռի մարդ՝ առանց հասակի խտրության» առաջնային նշանակությամբ, զուգահեռաբար բերված է նրա հականիշը՝ *կնիկմարդ* կազմությունը, որը ևս վաղաշխարհաբարյան ձև է՝ այսօր միայն արևմտյան որոշ բարբառներում կիրառելի¹⁹: Միջին հայերենի բառարանում ունենք **երիկմարդ** բառը²⁰, որը գրաբարյան **այր** սկզբնաձևի հնչյունափոխական տարբերակից է կազմվել՝ *այ>է+իկ→այրիկ>էրիկ*, նույն համաբանությամբ կազմվել է *կնիկմարդ*-ը՝ *կին+իկ>կնիկ*: Հետագա շրջանում Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում տեղ է գտել նաև սպասելի՝ **այրամարդ** բարդությունը՝ բանաստեղծական նշումով²¹:

Հայր հնագույն բառի քննությունը ցույց է տալիս, որ այն դարձյալ բնիկ հնդեվրոպական ծագում ունի՝ հ.-է**pəte* r, **pətro* s ձևից²², Գ. Ջահուկյանը համակարծիք է Հր. Աճառյանի այս վերականգնմանը²³: **Հայր** բառի իմաստային բեռնվածությունը բավական մեծ է, և այստեղ էական է սուրբգրային ընկալումը: ՆՀԲ-ում բառը բա-

¹⁹ Տե՛ս Մ. **ալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, էջ 420:

²⁰ Ռ. **Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 216:

²¹ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., հ.1. էջ 43:

²² Տե՛ս **Հ. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 31:

²³ Գ. **Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 444:

ցատրվում է որպես «այր կամ արու ծնող զաւակի, իրական կամ նմանական, առնչակից որդւոյ»²⁴, ապա անմիջապէս նշվում է, որ **հայրը** նախ՝ *աստվածն* է իբրև ծնող, սուրբ երրորդության մեջ առաջին անձը: **Հայր** բառը, ինչպես և ընտանիքի մյուս հիմնական անդամների անվանումները՝ *մայր, եղբայր, քոյր*, ունեն և՛ նեղ, և՛ լայն իմաստներ: Ըստ այդմ՝ **հայր**-ը լայն իմաստով՝ *նախահայրն* է, աշխարհի նախաստեղծ հայրը, դրանից բխող առաջնորդի բոլոր գործառույթների կրողը, ՆԶԲ-ի սահմանմամբ՝ *տնօրէն, գլուխ, տէր*: Զուգահեռ ընկալմամբ **հայր**-ը նաև հոգևոր ծառայություն իրականացնող մարդն է՝ «վարդապետ եկեղեցւոյ կամ հայրապետ»: Ծննդոց գրքում հոր հեղինակությունն անբեկանելի է, ցանկացած մեղանշում նրա նկատմամբ՝ դատապարտելի, որովհետև հին սեմական, հնդեվրոպական և շատ այլ ժողովուրդների կառավարման համակարգի հիմքում հայրիշխանությունն էր: Այս տեսանկյունից ամենաբնութագրական հատվածը Նոյի և իր որդիների հետ տեղի ունեցած հայտնի միջադէպն է: Հողագործ, այգեգործ այր Նոյն արբում է իր պատրաստած գինով, մերկանում իր տանը: Քամը, տեսնելով մերկ հորը, անմիջապէս դուրս է գալիս և պատմում եղբայրներին հոր մերկության մասին, Սեմն ու Հաբեթն այլալված վերցնում են հանդերձը և հետ-հետ գնալով, ծածկում հոր մարմինը, այնպես, որ իրենց աչքերը չտեսնեն իրենց հորը մերկ, այսինքն՝ անպատիվ վիճակում: Գինովությունից սթափված Նոյը, իմանալով կատարվածը, անիծում է թեթևամիտ Քամին և օրհնում հայրապաշտ Սեմին ու Հաբեթին, Քամը հավերժ դատապարտվում է լինելու իր եղբայրների ծառան: Այս անեծքի և օրհնանքի հիմքում աստվածային կամքն է. «Եւ սթափեցաւ Նոյ ի գինւոյ անտի իւրմէ, եւ գիտաց զինչ արար ընդ նա **որդին** իւր կրտսեր եւ ասէ. Անիծեալ Քանան, մանուկ, եւ եղիցի ծառայ **եղբարց** իւրոց» Թ, 24-26:

Հայր բառի նշված բոլոր իմաստային ճյուղավորումները պահպանվել են ինչպես միջին, այնպես էլ արդի արևելահայերենում և

²⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 32:

արևմտահայերենում, բարբառներում: Նշենք նաև, որ այս բառը եղել է և այժմ էլ կիրառվում է որպես հարգական դիմելաձև, ներկայումս ավելի շատ *-իկ* ածանցով՝ *հայրիկ*, այսպես դիմում են տարիքով ավագ, անգամ անծանոթ տղամարդկանց: Առանց *-իկ* ածանցի **հայր** բառը կուսակրոն հոգևորականներին ուղղված դիմելաձևն է:

Մայր-ը բնիկ հնդեվրոպական բառ է, հ.-ե* *māte'r* նախաձևից նույն նշանակությամբ: Հնդեվրոպական տարբեր լեզուներում այն ուներ նաև *կին* և *քույր* իմաստները: Հր. Աճառյանը բերում է ալբաներենի օրինակը, որտեղ *motre* արմատը նշանակում էր նաև «երեց քույր», որն իր կրտսեր հարազատների համար մոր դերն էր կատարում²⁵: **Հայր** բառի օրինակով **մայր** արմատը *-իկ* փաղաքշական ածանցի հետ կազմում է հարգական դիմելաձև՝ *մայրիկ*, որը հասցեագրվում է թե՛ անծանոթ, թե՛ ծանոթ հարգարժան տարիքի կանանց: **Մայր** արմատը ևս ունի կրոնական բովանդակություն, այս պատվանմանը արժանանում են միանձնուհի կույսերի առաջնորդները: Վերջին շրջանում արևելահայերենում այն *մայրապետ* բարդության ձևով մուտք է գործել բժշկական բառապաշար, դարձել եզր՝ կրտսեր բժշկական անձնակազմի ներկայացուցիչների անվանում՝ *սանիտար* փոխառությանը համարժեք: Նույն կերպ իմաստային զարգացմամբ բժշկական բառապաշարում ամրակայվել է **քույր** բառը, որը ևս բնիկ արմատ է, հ.-ե* *sue'sōr* նախաձևից, որը կազմված է* *sue* «իւր» դերանունից, այսինքն՝ նշանակում է *յուրային, սեփական կանացի ճյուղավորմամբ*²⁶:

Դուստր-ը հնդեվրոպական այն արմատների շարքն է համարում, որոնք նշանակում էին արյունակից մոտ ազգականներ *-ter* ածանցով, հ.-ե* *dhukte'r* նախաձևից²⁷: Գ. Զահուկյանն ընդգծում է ավելի նախնական* *dhughbte'r* արմատը²⁸: Նշենք, որ հոմանիշ **աղիջ** արմատը, որից *-իկ* փաղաքշական-նվագական ածանցով ունենք

²⁵ Տե՛ս **Հ. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 246:

²⁶ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ. 4, էջ 586:

²⁷ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.1, էջ 686:

²⁸ Հմմտ. **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 204:

աղջիկ բառը, Ծննդոց գրքում, ինչպես նաև հայ դասական մատենագրության մեջ սակավ կիրառություն ունի, ընդ որում ոչ այնքան *դուստր*, որքան *երիտասարդ կին*, ինչպես նաև *ծառա* իմաստով: **Աղջիկ** բառը **աղախին** բառի զուգակցմամբ, որպես նույնանշանակ, հանդիպում է Ծննդոցի ԺԶ գլխում, որտեղ պատմվում է Աբրահամի կին Սառայի մասին, որը չէր կարողանում որդի ունենալ, ուստի իր եգիպտացի աղախին աղջկան՝ Ագարին, տալիս է իր ամուսնուն որդեծնության համար, բայց հետո խանդում, չարչարում հղիացած Ագարին, որը փախչում է, սակայն Տիրոջ հրեշտակի հորդորով վերադառնում է տիկնոջ մոտ՝ լույս աշխարհ բերելով Իսմայելին: **Աղջիկ** բառի սկզբնաձևն է **աղիջ**-ը, այն, ինչպես նշում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում», մեկ անգամ վկայված է Տիմոթեոս Կուզի թարգմանության մեջ Սուրբ կույս Մարիամի բնորոշման համար: **Աղիջ** արմատի բովանդակությունը ընդգրկում է՝ *կույս, օրհորդ, մանկամարդ կին, նաժիշտ*, նաև *դիցուհի*, ստուգաբանությունը հնդեվրոպական է, բայց զուգադրվում է տարբեր արմատների հետ, Հր. Աճառյանը ենթադրաբար այն կապում է *parq^whe նախաձևի հետ, իմաստային բացատրությունները ևս տարբեր են՝ հիմնականում «կույս», «պաշտպանել», «սնուցել» նշանակություններով: Գ. Զահուկյանը սկզբնաձև համարում է *pəliā կամ *pōu «փոքր» ձևերը՝ «մտրուկ, քուռակ, աղջիկ» իմաստային անցումներով: ՆՀԲ-ում վկայված է միայն Ժ-ով տարբերակը՝ **աղիճ**, որպես հին բառ: Այն ունի միայն նեղ բացասական իմաստ՝ կույսին հականիշ՝ *պոռնիկ կին* նշանակությամբ: Նշենք, որ այս բառուսումնասիրությունում բերվում է նաև *աղջկորդի* կազմություն, որից պարզ է դառնում **որդի** բառի նախնական լայն իմաստը՝ ընդհանրապես *երեխա, զավակ*՝ անկախ սեռից²⁹: Միջին հայերենից սկսյալ՝ **աղջիկ** կազմությունը դառնում է համագործածական՝ սահմանափակելով **դուստր** բառի կիրառության ոլորտները: Այժմ այն բանաստեղծական, բարձր ոճի բառ է, իսկ զուգահեռ **ուստր** (արու զավակ, տղա, որդի) հնագույն

²⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 40:

կազմությունը գրեթե դուրս է մղվել գործածությունից. արդի բառա-
րաններում տրված է *հին, քանաստեղծական* նշումով:

Ուստր բառը ծագում է հ.-ե* *sukte´r* նախաձևից՝ «որդի» իմաս-
տով³⁰, Հր. Աճառյանը հնդեվրոպական այս արմատի ծագումը բխե-
ցում է կամ* *seug-* / **suq-* «կաթ ծծել» իմաստով բառից, կամ առավել
բարձր հավանականությամբ՝ **seu-* / **su-* «ծնվել» նշանակող ձևից:
Գ. Ջահուկյանը միանշանակ կապում է հ.-ե* *suk-te´r* «ծնել» արմատի
հետ³¹: Ծննդոց գրքում համագործածական են և՛ **ուստր**, և՛ **որդի** ար-
մատները. «Եւ եկեաց Սէմ յետ ծանանելոյ նորա զԱրփուքսադ՝ ամս
հինգ հարեր եւ ծնաւ **ուստերս** եւ **դստերս** եւ մեռաւ» ԺԱ, 11-12, «Եւ
առ Թարա զԱբրամ **գորդի** իւր եւ զՆաքովր **գորդի** իւր եւ զՂովտ՝
գորդի Առանայ **որդոյ** իւրոյ եւ զՍարա զնու իւր...եւ եհան զնոսս
յաշխարհէն Քաղդեացոց» ԺԱ, 31-32, «Եւ ժողովեցան ամենայն **ուս-
տերք** նորա եւ ամենայն **դստերք** նորա, եւ եկին մխիթարել զնա, եւ
ոչ կամէր մխիթարել, ասէ՝ Զի իջից ես սովին սգով առ **որդի** իմ ի
դժոխս» ԼԷ, 35:

Որդի բնիկ հնդեվրոպական բառի ծագումը Հր. Աճառյանը
բխեցնում է հ.-ե* *portiyo* նախաձևից, որի հիմքում* *per*/* *por* արմատն է
«ձագ ծնել կամ բերել, երկնել» իմաստով³²: Գ. Ջահուկյանը իր ստու-
գաբանական բառարանում առանձնացնում է* *portuo*-* *per-* հնդեվրո-
պական վերականգնված արմատները նույն իմաստային զարգաց-
մամբ³³:

Որդի, ուստր, դուստր բառերի ընդհանրական հասկացությունն
իբրև երեխայի, ժառանգորդի, արտահայտվում է նաև **զաւակ** բառի
միջոցով, որը ևս բազմաթիվ կիրառություններ ունի Ծննդոց
գրքում. «Բազմացուցանելով բազմացուցից **զզաւակ** քո եւ անթիւ լի-
ցի ի բազմութենէ» ԺԶ, 10-11: Այս արմատն արդեն փոխառյալ է, ինչ-
պէս նշում է Գ. Ջահուկյանը, ծագում է թերևս իրանական աղբյու-

³⁰ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.3, էջ 611-612:

³¹ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 606:

³² Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.3, էջ 576:

³³ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 752:

րից, այն համեմատում է սողդերեն «zwon» ձևի հետ՝ *կենդանի արա-
րած, երեխա* իմաստով³⁴: Հր. Աճառյանը **գաւակ** բառի իմաստի մեջ
ներառում է «որդի, ծնունդ, ցեղ, սերունդ» հասկացությունները, նա-
խաձև չի նշում, բայց բերում է հնդիրանական լեզուներից մի շարք
գուգաբանություններ, որոնք բոլորն ունեն «որդի, ձագ, կյանք»
իմաստները³⁵: **Ջաւակ** արմատն այսպիսով արտահայտում է որդե-
ծնության շղթայի ամբողջ իմաստը՝ նոր կյանքի ստեղծումը: Ունենք
նաև հոմանիշ **տղայ** բառը, որը ևս փոխառյալ է, այն ասորական ար-
մատ է՝ *talyā*՝ «երեխա, տղա, արու գավակ» իմաստային նեղացման
շղթայով³⁶:

Ծննդոց գրքում նոր կյանքի խորհրդանիշ **գաւակ, որդի** բառերի
հոմանիշն է նաև **ծնունդ**-ը. «Եւ այս են ծնունդք որդուցն Նոյի. Սէմ,
Քամ, Յաբեթ, եւ ծնան նոցա որդիք յետ ջրհեղեղին» Թ, 28-29:
Ծնունդ-ը ածանցավոր կազմություն է՝ արմատը **ծին**+ունդ, **ծին**
հ.-է՝ *g'en* արմատից՝ «ծնունդք, ծագում, սերունդ, յաջորդք, որդիք»
նշանակություններով³⁷: Գ. Ջահուկյանը **-ունդ** ածանցը կապում է
հ.-է՝ *-ti-* ածականի հետ, որը ենթադրաբար ունեցել է «ելնող» նշա-
նակությունը³⁸: Այս հոմանշային շարքում է նաև **մանուկ** բառը. «Եւ
հայեցեալ ի վեր ետես զկանայսն եւ **զմանկունս**, եւ ասէ՝ դոքա զինչ
են քո, եւ նա ասէ. **Մանկունք** իմ են, որովք ողորմեցաւ աստուած
ծառայի քում» ԼԳ, 5-6: **Ման/ուկ**-ը ևս համարվում է հնդեվրոպական
կազմություն, Գ. Ջահուկյանն այն կապում է հ.-է՝ *mṛkio*՝ **men* «փոքր,
փոքրացնել» արմատի հետ, որի մեջ վերականգնվում են նաև «թույլ,
սուղ» իմաստները: Գ. Ջահուկյանը վիճարկում է Հր. Աճառյանի
վարկածը, որով **ման** արմատը կապվում է լատիներենում առկա
mās «տղամարդ, տղա» բառի հետ, որովհետև նման այլ հնդեվրոպա-
կան գուգահեռներ չկան³⁹: Իսկ նվագական-փաղաքշական **-ուկ**

³⁴ Նույն տեղում, էջ 235:

³⁵ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.2, էջ 85:

³⁶ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 731:

³⁷ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.2, էջ 457:

³⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 812:

³⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 509:

ածանցը, ինչպես նաև *-իկ-*ը ծագում են *h.-է**-kon բաղադրյալ ածանցից՝ նախորդող՝ *-ü-* հիմքակազմ տարրով⁴⁰:

Մեր ուսումնասիրած գրքում յուրահատուկ տեղ ունի առաջին գավակը՝ որդին, **անդրանիկը**, անդրանկության իրավունքը աստվածաշնչյան վկայություն ունի, ընդ որում այն ոչ միայն գույքային, կարգավիճակային առավելություն էր վերապահում տան ավագին, այլև բարոյական մեծ պատասխանատվություն: Ահա թե ինչու **անդրանիկ** «առաջնեկ, ավագ» նշանակությամբ ածականն ունի նաև գոյականական տարածված կիրառություն, երկարժեք է, հետագայում դարձել է արական հատուկ անուն: Մեջբերեմ Ծունդք գիրքը եզրափակող գլխից Հակոբի խոսքն իր որդիներին. «Ռուբեն, անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ եւ սկիզբն որդւոց իմոց, խստութեամբ գնացեր եւ խստութեամբ, յանդգնութեամբ թշնամանեցեր» ԽԹ, 3: **Անդրանիկ**-ը բնիկ բառ է. *h.- է* ant(i)ro, *ant(i)* նախաձևից՝ «առջև, դիմաց» իմաստով, որին ավելացել է դարձյալ բնիկ *-անիկ* վերջածանցը⁴¹:

Աստվածաշնչի անդրանիկ գիրքը խորհրդանշական խորագիր ունի՝ *Ծնունդք*, և այստեղ ամփոփված են աստվածային արարչության ծնունդները՝ երկինքն ու երկիրը և նրանց միջև ձևավորված բուսական, կենդանական և առաջնահերթ՝ մարդկային աշխարհները՝ իրենց հիմնական անվանումներով: Մարդը աշխարհում գործունեության և իշխանության առաջնային իրավունք ունեցող արարածն է, որը ստեղծում է իր գոյության, վերարտադրության և ինքնապահպանման համար անհրաժեշտ համակարգերը՝ **ընտանիք, ազգ, տոհմ**:

Իբրև եզրափակիչ միավորներ անդրադառնանք հենց այս ընդհանրական հասկացությունների անվանումներին: *Ընտանիք* բառը եռաբաղադրիչ է՝ **ընդ+տուն/տան+ի+ք**, բոլորն էլ բնիկ ծագման են, *ընդ* նախորդի սկզբնաձևն է *h.- է* anti* «փոխարեն, միասին» արմատը, որին Գ. Ջահուկյանը ենթադրաբար հավելում է՝ *ndhos* նախդիրը՝

⁴⁰ Նույն տեղում, էջ 811:

⁴¹ Նույն տեղում, էջ 55:

«տակ» իմաստով⁴²: *Ի*-ն բնիկ ածանց է, *ք*-ն հոգնակերտ, ընդհանուր նշանակությունը թափանցիկ է՝ *ընդհանուր տանը* կամ *տանիքի տակ ապրողներ*՝ *ազգականներ*, այս բառը Ծննդոց գրքում սակավ է գործածվում, նշյալ իմաստով հիմնականում կիրառվում է արմատական բառը՝ **տուն**, որը հ.-է* dem* dem(o) նախաձևից է՝ «կառուցել, իրար հարմարեցնել» նշանակությամբ⁴³: Բերենք բնորոշ օրինակ. «Եւ եղիցին արդիւնք դորա, եւ տաջիք զհինգերորդ մասն Փարաւոնի, եւ չորք մասունքն ձեր եղիցին ի սերմն երկրիդ եւ ի կերակուր ձեզ եւ ամենայն ընտանեաց ձերոց, եւ ի կերակուր **տղայոց** ձերոց» ԽԷ, 24:

Ազգ տարածված գոյականը մեր ուսումնասիրած գրքում *տոհմ*, *գերդաստան* *գարմ* բառերի հոմանիշն է, իմաստային դաշտն ավելի լայն է, գրաբարում այն նշանակում էր ընդհանրապես *սեռ*, *տեսակ*, *կարգ*, *դաս*, ապա նաև՝ *տուն*, *ժողովուրդ*, *ամբոխ*, *ազգատոհմ*⁴⁴: Արմատը ենթադրաբար իրանյան ծագում ունի, կապվում է միջին պարսկերեն *azg* «ճյուղ» բառի հետ⁴⁵: Բաբելոնյան աշտարակաշինության հատվածում Աստված հասկանում է, որ երբ մարդկանց որդիները բոլորը մի ազգ են և մի լեզու ունեն, ապա նրանք կատարյալ են, ունակ իրագործելու այն ամենն ինչ կցանկանան, այսինքն՝ հավասար են աստվածներին, ուստի որոշում է կայացնում խառնակելու նրանց լեզուները, որպեսզի ընկերն ընկերոջ լեզուն այլևս չհասկանա. «Ահա **ազգ** մի եւ լեզու ամենեցուն, եւ զայդ սկսան գործել եւ արդ ոչ ինչ պակաս է ի նոցանէ, զամենայն գոր ինչ յօժարեացին գործել. Եկայք իջցուք եւ խառնակեցուք անդ զլեզուս նոցա, զի մի լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ» ԺԱ, 6-8:

Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, **ազգ**, **տոհմ** գոյականները ցույց են տալիս իրենց անդամների լեզվական և ծագման ընդհանրությունները. **ազգ**-ը կարող է համընկնել պետության՝ որպես հասա-

⁴² Նույն տեղում, էջ 248:

⁴³ Նույն տեղում, էջ 735:

⁴⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 6:

⁴⁵ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 23:

րակական միավորի հետ, կամ չհամընկնել, իսկ **տոհմ**-ը արդեն պատմական հասկացություն է, որը միավորում է սերնդապահպանության և գոյապահպանության գործառույթները⁴⁶:

Տոհմ բառը ՆՀԲ-ում *ազգի* մի փոքր նեղ հոմանիշն է՝ «ցեղ, ազգատոհմ, տուն, ժողովուրդ, ազգի ճյուղ» բացատրությամբ⁴⁷, ծագումով պահլավական արմատ է՝ նույն բովանդակությամբ՝ «սերմ, ցեղ, ծագում, ծնունդ»⁴⁸: Բերենք ջրհեղեղից հետո Նոյի ծնունդների մասին պատմող ավարտական հատվածը, որտեղ վկայված են մեզ հետաքրքրող իմաստային դաշտի այս ընդհանրական միավորները. «Մոքա են որդիք Սեմայ **յազգս** իւրեանց, յաշխարհս իւրեանց եւ **ի տոհմս** իւրեանց: Այս են **ազգք** որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց. եւ **ի սոցանէ սփռեցան կղզիք ազգաց՝ ի վերայ երկիր յետ ջրհեղեղի»** Ժ, 31-32:

Մարդու և հասարակության հետ կապված բառերի քննությունը Ծննդոց գրքում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբն ունի միջուկային հասկացությունների համար բազմաթիվ բառային նշանակումներ՝ թե՛ պարզ արմատական, թե՛ ածանցավոր կամ բաղադրյալ կազմություններ, որոնք միավորված են իրար լրացնող ենթախմբերում: Այս իմաստային դաշտի ենթախմբերում ընդգրկված բառերը հոմանշային անդամների թվի տեսանկյունից բազմանդամ շարքեր ունեն: Բառերի հիմնական մասը բնիկ ծագում ունի, սակավաթիվ փոխառություններ կան՝ իրանյան (*ազգ, տոհմ, գաւակ*) և ասորական (*տղայ*), փոխառյալ կազմությունները գալիս են լրացնելու նշված կարևոր հոմանշային շարքերը: Քննված բառերը համագործածական են հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում՝ հին, միջին և նոր գրական հայերեններում, ինչպես նաև բարբառներում: Դրանց իմաստային բովանդակությունը գրեթե փոփոխությունների չի ենթարկվել, պարզապես որոշ բառեր հիմնական բառաֆոնդից

⁴⁶ Հմմտ. **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 141-142:

⁴⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 886

⁴⁸ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ.4, էջ 417:

տեղափոխվել են հնաբանությունների, բանաստեղծական բառերի շերտեր:

Հունարեն և ասորերեն բնագրից Աստվածաշունչ մատյանը գրաբար դարձրած մեր թարգմանիչները մեծ տաղանդով ի ցույց են դրել ոսկե դարի դասական լեզվի բառապաշարի, բառակազմության և իմաստաբանության ներուժը՝ նույն հասկացությունը տարբեր բառերով, ոճական, իմաստային նուրբ և նրբագույն երանգներով վերարտադրելու ունակությունը՝ Սուրբ գրքի բնագրին համարժեք:

**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՑԻ» ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐԻ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բարսեղ Կեսարացու, որն աշխարհում հայտնի է նաև Սուրբ Բարսեղ Մեծ անվամբ, «Գիրք պահոց» մեկնողական ճառերի ժողովածուի գրաբար բնագիրը հայ միջնադարյան փիլիսոփայական-դավանաբանական մտքի հանրահայտ երկերից է, որի ազդեցությունը նկատելի է դեռևս Եզնիկ Կողբացու և Մովսես Խորենացու գործերում: Հետագա դարերի հայ հոգևորական մտածողները վերապատմել, զարգացրել ու նաև բանավեճեր են ծավալել Կեսարացու հաստատած գաղափարների ու սկզբունքների վերաբերյալ: «Գիրք պահոցի» քննական բնագրի կազմող և հետազոտող Կ. Մուրադյանը մանրակրկիտ աղբյուրագիտական-համեմատական վերլուծություններից հետո եզրակացնում է, որ «Գիրք պահոցի» հայերեն թարգմանության հետքերը կան V-XIII դարերի հայոց ինքնուրույն գրականության մի շարք երկերի բնագրերում¹:

Կապաղովկյան սուրբ հայրերի հռչակավոր եռյակի այս գաղափարախոսն անդրադարձել է քրիստոնեական վարդապետության անկյունաքարային խնդիրներին՝ Աստուծո որդու՝ Փրկչի ծննդյանը, Սուրբ երրորդությանը, Մկրտությանը, Հին և Նոր կտակարանների մեկնությանը, սաղմոսներին, մարդկային մեղքերին ու առաքինություններին, պահեցողության և ինքնախորասուզումի անհրաժեշտությանը: Կեսարացու ճառերի վերնագրերն իսկ խորհրդանշական են՝ «Քակեցից զիմ շտեմարանս», «Հայեաց ի քեզ», «Ի սկզբանէ եր Բանն», «Թէ չէ պատճառ չարեաց Աստուած», «Տեսութիւն Բարսղի եւ Գրիգորի զհաւատոյ», «Յաղագս գոհութեան», «Յաղագս ողորմածութեան եւ աղաւթից» և այլք: Այս երևույթներին նվիրված 33 ճառերն էլ ամփոփվել են պայմանականորեն «Գիրք պահոց» կոչվող ճառերի ժողովածուում (խորագիրը ծագել է ըստ ընդունված ավանդույթի՝

¹ Հմմտ. Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, Ս. Էջմիածին, 2017 թ., էջ 12:

առաջին ճառի անվանումից՝ «Յադագս պահոց»)²: «Գիրք պահոցի» հայերեն թարգմանությունն ըստ ամենայնի կատարվել է մաս առ մաս, որոշ ճառեր թարգմանվել են գրերի գյուտից և Աստվածաշնչի թարգմանությունից քիչ ժամանակ անց, ժողովածուն ամբողջացել է VI-VII դարերում: Մեր այս ուսումնասիրությունում քննության ենք առել «Գիրք պահոցի» գրաբար թարգմանության նորակազմ կամ նորաբան բառերը՝ բացահայտելով այդ միավորների հետագա կիրառությունները արդի հայերենում: Հայոց թարգմանական գրականության բառապաշարը էապես հարստացրեց ոչ միայն դասական գրաբարը, այլև հզոր ժառանգություն դարձավ արդի հայերենի բառապաշարի ոճական, գործառական տարբեր շերտերի համար՝ գրական-բանաստեղծական, գիտական, բանավիճային, հրապարակախոսական:

Նորակազմություն կամ նոր բառ, նորաբանություն բառագիտության մեջ համարում են բառապաշարի այն միավորները, որոնք ստեղծվում են որևէ հեղինակի կամ նրա թարգմանչի կողմից՝ արտահայտելու համար նոր առարկաներ, երևույթներ և հասկացություններ, կամ հին, արդեն ծանոթ իրակությունները նորովի բնութագրելու համար: Նոր բառերը ստեղծվում են լեզվում արդեն գործող արմատների, ածանցների տարբեր զուգակցումներով կամ դրանց վերախմաստավորմամբ: Այսպիսի բառերը ժամանակի ընթացքում կա՛մ համընդհանուր գործածություն են ձեռք բերում՝ ամրակայվելով գրական լեզվի բառարաններում, կա՛մ էլ մնում են իբրև նորագյուտ դիպվածային միավորներ՝ վկայված միայն առանձին հեղինակի կամ ստեղծագործության լեզվում³:

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» ժողովածուի գրաբար բնագիրը, շնորհիվ հեղինակի և թարգմանիչների տաղանդի ու վարպետության, հարուստ է բազմաթիվ նորաբանություններով: Ճառերի բովանդակությունը պատճառ է դարձել տարբեր բառակերտում-

² Ավելի մանրամասն տե՛ս **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, էջ 7-10:

³ Հմտ. **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, բառագիտություն, Եր., 1993, էջ 209-213:

ների, քանի որ «Գիրք պահոց»-ի ճառերը, բացի մեկնողականից, ունեցել են նաև քարոզչական, բարոյախրատական, ինչպես նաև զուտ ուսուցողական նպատակներ (այսպես՝ XIX ճառը կոչվում է «Հարցմունք եւ պատասխանիք», որտեղ քրիստոնեական տարբեր ուղղությունների ըմբռնումներն են պարզաբանվում և բացատրվում): Նպատակների այս բազմազանությունը թարգմանիչների մղել է նորակազմություններ ստեղծելուն և՛ հունարենից ուղղակի բառապատճենումների միջոցով, և՛ հայկական արմատների ու ածանցների նոր համադրումներով ու իմաստափոխությամբ:

Քննելով Կեսարացու երկի նորակազմությունները՝ դրանք խմբավորել ենք ավանդական սկզբունքով. ա) ՆՀԲ-ում և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառեր»⁴ աշխատանքում չվկայված նոր բառեր, բ) վերոհիշյալ բառարաններում վկայված նոր բառեր, որոնց համար որպես աղբյուր նշված է Կեսարացու «Գիրք պահոցը»: Մեր քննության ընթացքում գտել ենք բառարաններում չվկայված 82 նորագյուտ բառ, իսկ 152 բառ էլ ՆՀԲ-ում բերված են միայն «Գիրք պահոցի» հղմամբ, այսինքն՝ դրանց հեղինակները Բարսեղ Կեսարացու այս ճառընտիրի թարգմանիչներն են:

Նորահայտ բառերի շարքում առանձնացրել ենք նաև այնպիսի միավորներ, որոնք թեև կան ՆՀԲ-ում կամ Լ. Հովհաննիսյանի բառարանում, սակայն «Գիրք պահոց» երկի թարգմանության մեջ կիրառվել են նոր նշանակություններով: Սրանք այն բառերն են, որոնք հայերենում իրենց ունեցած հանրահայտ իմաստից բացի՝ նոր բովանդակությամբ են կիրառվել, թարգմանիչները դրանց հաղորդել են այլ նշանակություն՝ հիմնականում հունական բնագրի ազդեցությամբ: «Գիրք պահոցի» տարբեր ճառերից առանձնացնենք վերաիմաստավորում ստացած մի քանի հետաքրքիր օրինակ ՆՀԲ-ի և արդի հայերենի բացատրական բառարանների զուգադրահամեմատությամբ՝ *այլազգաբար* (էջ 289), *արարչակից* (էջ 447), *դժուարահաճոյ լինել* (էջ 446), *ծաղկաներկ* (էջ 155), *նախախնամական*

⁴ <http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=67> :

(էջ 316): Քննենք այս բառերը՝ նշելով դրանց նոր իմաստները և պատմական զարգացումը ժամանակակից արևելահայերենում:

Այլազգաբար (էջ 289) բառը ՆՀԲ-ում վկայված է «Ըստ յն. ոճոյ, իբր այլուստ. ապա թէ ոչ. Αλλος»⁵ իմաստով: Կեսարացու գրքում այս բառի կիրառությանն ենք հանդիպել հետևյալ պարբերության մեջ. «Ոչ հրով, այլ ջրով գոհսն ողջակիզեաց: Զի *այլազգաբար* հրոյ բնութիւն ընդ ջրոյ կռուի»: Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում այս բառը կա, ընդ որում առաջին իմաստը բացատրվում է նույն կերպ՝ «տարբեր կերպով, այլազգ», իսկ երկրորդ իմաստն արդեն ցույց է տալիս «ազգ» բառի իմաստափոխությունը, այն արդեն կորցնում էր գրաբարյան «տեսակ» իմաստը՝ դառնալով «ժողովուրդ» բառի հոմանիշը, ուստի «այլազգաբար» բառի համար տրվում է 2-րդ իմաստը՝ «իբրև այլազգի»⁶: Էդ Աղայանի բառարանում բառի նշված ձևն այլևս չկա, ունենք միայն՝ *այլազգ* կամ *այլազհ*⁷ իբրև 1. «ուրիշ տեսակ, ուրիշ կերպ» և 2. «օտարազգի», 3. «այլադավան, հատկապես՝ մահմեդական»⁸:

Արարչակից (էջ 447) բառը Կեսարացու երկում արտահայտում է «ի միասին ստեղծեալ, հաստեալ» նոր նշանակությունը, այն կիրառվել է հետևյալ նախադասության մեջ. «Մարմնականքն ոչ ունէին իւրեանց չար գոք *արարչակից*»: Արդի հայերենում բառն այս իմաստով պահպանվել է. Ստ. Մալխասյանցի բառարանում, ունի «կրօնական» նշումը՝ «միասին ստեղծող, արարչութեան մասնակից» բացատրությամբ⁸: Էդ Աղայանի «Արդի հայերենի բառարանում» այն վկայված չէ, թեև իմաստն ու կազմությունը ըմբռնելի են նաև արդի արևելահայերենի օրինաչափություններով:

Դժուարահաճոյ լինել (էջ 446) հարադիր կառույցը «Գիրք պահոց»-ում վերաիմաստավորվել է՝ կիրառվելով «դժկամիլ» իմաստով.

⁵ http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt=HY_HY&pageNumber=107:

⁶ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., հ. 1, 1944, էջ 99:

⁷ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., հ. 1, 1976, էջ 56:

⁸ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., հ. 1, 1944, էջ 277:

«Դադարեա՛յ այսուհետեւ *դժուարահաճոյ լինել* ընդ աստուածային տնաւրենութիւնն»: Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» *դժվարահաճոյ լինել* հարադրության այս իմաստը պահպանվել է՝ «դժկամ, անբավական լինել» նշումով⁹: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» *դժվարահաճո* բառը բերվում է երկու նշումով՝ Կեսարացու թարգմանչի կիրառած իմաստը համարվում է գործուն՝ «դժվարությամբ համաձայնող, դժկամ», իսկ գրաբարյան առաջին իմաստը տրվում է հնացած նշումով՝ «անհաճո, տհաճ»¹⁰:

Ծաղկաներկ (էջ 155) բառի դեպքում ունենք խոսքիմասային փոխանցում՝ գրաբարում այն ածական էր «ծաղկօք ներկեալ» նշանակությամբ, իսկ մեր բնագրում այն գոյական է՝ «ներկարար կամ ներկիչ ի պէսպէս գոյնս ծաղկանց» իմաստով: Այսպէս՝ «Ժողովել *զծաղկաներկ* սեւ զոսկեգործս»: Ստ. Մալխասյանցի բառարանում *ծաղկաներկ* բառի գրաբարյան այս երկու նշանակություններն էլ բերված են¹¹:

Նախախնամական (էջ 316) բառն ունի «նախախնամողն» բայանվանական իմաստը. «Տեսի ի նմա միանգամայն յաղագս եկեղեցւոյ *նախախնամականս* զքո մտացոյ»: Ածականակերտ-*ական* ածանցը ենթակայական դերբայի իմաստով է կիրառվել: Ստ. Մալխասյանցի բարառանում վկայված է բառի ածականական իմաստը, կից բերվում է *նախախնամային* ձևը՝ «նախախնամողին և նախախնամութեան յատուկ» նշանակությամբ¹²: Էդ. Աղայանի բառարանում ևս արտացոլված է ածականական իմաստը՝ «նախախնամության հատուկ, նախախնամության սահմանած, տված, պարգևած»¹³:

Այսպիսով՝ «Գիրք պահոց» երկի թարգմանիչները ոչ միայն կազմել են նոր բառեր, այլև եղած, ինչպես նաև բառարանագիրներ

⁹ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, էջ 514:

¹⁰ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, էջ 294:

¹¹ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 322:

¹² Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Եր., 1944, էջ 428:

¹³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Եր., 1976, էջ 1046:

կողմից ամրագրված բառերը կիրառել են նոր նշանակություններով, իմաստափոխել են դրանք՝ ստեղծելով բառերի բովանդակային նոր կիրառությունների օրինակներ, որոնք աշխարհաբարում գործածական էին, բայց արդի արևելահայերենում արդեն մասամբ դուրս են մղվում՝ դառնալով հնաբանություն:

«Գիրք պահոցի» գլխավոր բառային հարստությունը ՆՀԲ-ում և Լ. Հովհաննիսյանի բառարանում չվկայված նորակազմություններն են, մեր հաշվարկով դրանք 81-ն են: Կեսարացու երկի թարգմանիչները ստեղծել են բազմաթիվ նոր բառեր՝ երբեմն ելնելով հունարենի բառակազմական օրինաչափություններից, սակայն հիմնականում առաջնորդվել են գրաբարի բառակազմական ընդունված կաղապարներով: Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ տեղ գտած նորագյուտ բառերը բնութագրենք՝ ըստ բառակազմական առանձնահատկությունների.

ա) **դիր** արմատով կազմված նոր հոդակապավոր բարդություններ՝ *դիրագիտ* (էջ 336), *դիրահանգ* (էջ 83), *դիրահար* (էջ 100), *դիրաձեռնարկելի* (էջ 427), *դիրապատեղի* (էջ 122),

բ) **-եալ**-ով անցյալ դերբայի նորակազմ ձևեր՝ *անամաթացեալ* (էջ 154), *անծանաթացեալ* (էջ 148), *անձնացեալ* (էջ 298), *բարեկրեալ* (էջ 221), *դժոխընկեալ* (էջ 376), *գուգաբանեալ* (էջ 207), *թերատեսեալ* (էջ 335), *լծակոռեալ* (էջ 245), *կաճառեալ* (էջ 272), *ճարտարամտեալ* (էջ 284), *մարդացեալ* (էջ 288), *չարամերձեալ* (էջ 282), *ստաբանեալ* (էջ 247), *վայրաձգեալ* (էջ 215)...

գ) **-ութիւն** վերջածանցով կազմված վերացական, հաճախ եզրույթի արժեք ունեցող վերացական գոյականներ՝ *առնախաւսութիւն* (էջ 272), *բաղակցութիւն* (էջ 257), *բացածանալթութիւն* (էջ 119), *դիմակացութիւն* (էջ 187), *ընդդիմախոսութիւն* (էջ 122), *հինեկիզութիւն* (էջ 86), *մեծատեսութիւն* (էջ 223), *նախակազմութիւն* (էջ 362), *նախապահպանութիւն* (էջ 97), *նախհաստութիւն* (էջ 255), *վերախնամութիւն* (էջ 204), *փոփոխատրութիւն* (էջ 68),

դ) **-բար, -պէս** ածանցներով ձևի մակբայներ՝ *անկատարաբար* (էջ 217), *անհաւանապէս* (էջ 148), *հարցաքննաբար* (էջ 302), *տարակուսաբար* (էջ 226),

ե) **-գոյն** մասնիկով կազմված գերադրական աստիճանի ածականներ՝ *անաշխատասիրագոյն* (էջ 81), *գեղիագոյն* (էջ 90), *յոլովագոյն* (էջ 128),

զ) նորակազմ բայեր՝ *բռնագրաւսել* (էջ 226), *կոճոտանալ* (էջ 455), *հոգազատել* (էջ 171), *հրապարակայայտել* (էջ 199), *յարահոսել* (էջ 143),

է) **-ելի/-ալի** մասնիկներով կազմված նոր բայածականներ՝ *անըստշարելի* (էջ 325), *անյաւժարելի* (էջ 236), *նահատակելի* (էջ 416),

ը) տարբեր արմատների և ածանցների զուգակցմամբ ստեղծված ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր բառեր՝ *անխառնափնդոր* (էջ 439), *անձնամիխթարական* (էջ 434), *ակնճփող* (էջ 105), *առստացուած* (էջ 256), *առուած* (էջ 270), *աւետարանաբեր* (էջ 85), *բաղատեսիլ* (էջ 82), *եաթնաւուր* (էջ 318), *ընդդիմարտ* (էջ 352), *ժանդացուցիչ* (էջ 197), *ծառայարան* (էջ 62), *հազարակառք* (էջ 220), *յառաջելափարթամ* (էջ 232), *յարմարալեզու* (էջ 253), *սառնամանուտ* (էջ 396), *վարածումն* (էջ 122), *քաջընտիր* (էջ 244) և այլն: Ինչպես նկատելի է, այս բառերից շատերը դարձել են համագործածական ընդհանուր հայկական բառեր, որոնք իրենց կայուն տեղն ունեն արդի հայերենի բացատրական բառարաններում, գործօրինակ՝ *անկատարաբար*, *ավետաբեր*, *դիմակացություն*, *դյուրաձեռնարկելի*, *դյուրահանգ*, *ընդդիմարտ*, *հարմարալեզու*, *նախատեսություն*, *քաջընտիր*, *նախապահականություն*, *վերախնամություն* և այլն:

Այս նորագյուտ բառերի որոշ մասը կազմվել են հունարեն բնագրի համապատասխան միավորների պարզ պատճենմամբ, բայց թարգմանիչների համար վճռորոշ է եղել բառի ընդհանուր իմաստը հայ ընթերցողի համար հնարավորինս ամբողջական և պատկերավոր արտահայտելը: Ինչպես օրինակ՝ *ակնճափող* (էջ 105) նորաբանությունն անձանթ է Նոր հայկազյան բառարանագիրներին, բայց *ակնճափող* կազմախոսական եզրույթը վկայված է Ստ. Մալխասյանցի, ինչպես նաև Էդ. Աղայանի բացատրական բառարաններում: Էդ. Աղայանը բառը նշում է «տե՛ս՝ ակնճացնցուղ»

հղումով, բառիմաստի բացատրությունը նույնն է, ինչ Մալխասյան-ցի մոտ՝ «ականջի՝ լսողության խողովակ, որն արտաքին ականջից գնում է դեպի ականջի միջին մասը»¹⁴։ Կ. Մուրադյանն այս բառի հետ կապված ընդարձակ ծանոթագրության մեջ նշում է, որ այն առաջացել է հունարեն σκολωνσοληγων արտահայտության թարգմանության հիմքի վրա, համատեքստում ըմպանակի նկարագրությանն է վերաբերում, նշանակում է ոլորապտույտ անցք¹⁵։ Կամ ունենք *հրապարակայայտել* (էջ 199) բառը, որը վկայված չէ գրաբարի բառարաններում, բայց ՆՀԲ-ում ունենք այս նորակազմ բայի արմատը՝ *հրապարակայայտ*, որից էլ ծագել է նոր բայը՝ հունարեն δηροσισеοσι բառի համաբանությամբ։ Ինչպես ընդգծում է Կ. Մուրադյանը՝ ՆՀԲ-ում *հրապարակայայտ* բառի համար բերված են չորս օրինակներ, որոնցից երկուսը «Գիրք պահոց»-ից են¹⁶։

Ավանդաբար նորակազմությունները հեղինակի կամ նրա թարգմանչի կողմից ածանցման և բառաբարդման շնորհիվ ստեղծված բաղադրություններ են։ Եթե բառահարաբերական ձևայինների գործունակության աստիճանը որոշենք Կեսարացու թարգմանության մեջ վկայված նորակազմ բառերում, ապա կարձանագրենք, որ Կեսարացու գրքի հայերեն թարգմանության նորազյուտ բառերի մեջ առավել հաճախադեպ են *-ութիւն* ածանցով գոյականները, *-եալ* մասնիկով կազմված անցյալ դերբայի ձևերը։ Դրանց հետևում են *-գոյն*, *-ելի/-ալի*, *-բար*, *-պէս* մասնիկներով կազմված նոր բառերը։ Ի տարբերություն շատ այլ գործերի, որտեղ նորակազմությունների առյուծի բաժինը գոյական և ածական անուններն են՝ «Գիրք պահոցում» կան նաև զգալի թվով նորաստեղծ բայեր։ Բառաբարդման դեպքում մեծ կիրառություն ունի *ղիւր* արմատը, որի օգնությամբ կազմվել են գրաբարի բառարաններում չվկայված բառեր։

«Գիրք պահոց» երկում առավել մեծ թիվ են կազմում այն նոր բառերը, որոնք թեև ամրագրվել են ՆՀԲ-ի բառարանագիրների կող-

¹⁴ Հմմտ. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 27 և Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, էջ 16։

¹⁵ Կ. Մուրադյան // Բարսեղ Կեսարացի, նշվ. աշխ., էջ 470։

¹⁶ Կ. Մուրադյան // Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, էջ 476։

մից, սակայն դրանց համար որպես միակ աղբյուր նշվում է Կեսարացու այս երկը: Մենք առանձնացրել ենք այդպիսի 150 նորակագմություն: Ներկայացնենք կենսունակ հետաքրքիր կադապարները՝ դասակարգելով ըստ խոսքիմասային պատկանելության:

Գոյական – անախտակցություն (էջ 355), անպնդակազմություն (էջ 332), ատենակից (էջ 425), արտասրակից (էջ 375), արտասուակից (էջ 193), բազմունակություն (էջ 136), բարեժամանություն (էջ 68), բարիորդություն (էջ 330), բռնակռի (էջ 139), գեղեցկաձեւություն (էջ 179), գինաման (էջ 106), գլխածանրություն (էջ 74), ընթերակից (էջ 197), ընչաժողով (էջ 149), թերապետություն (էջ 338), ինքնաբաւություն (էջ 77), լաւաբարոյություն (էջ 332), խուղակ (էջ 105), կարճառատություն (էջ 109), նշանաւորություն (էջ 222 շրջաբնակիչ (էջ 397), չարամանկություն (էջ 131), սեղանակազմ (էջ 68), սգասիրություն (էջ 356), ստեղծագրություն (էջ 161), վահանակցություն (էջ 402), վատխաւություն (էջ 200)....:

Ածական – ազահաձեռն (էջ 136), աղաւտաձայն (էջ 253), անաւթաբեր (էջ 152), անդադարագոյն (էջ 320), անթշնամանելի (էջ 182), անկատարելակից (էջ 282), անհնազանդելի (էջ 417), առասպելաբեր (էջ 260), արծաթասանձ (էջ 119), բազմահամբաւ (էջ 316), բազմանման (էջ 172), բազմատենչալի (էջ 84), բարենշանագոյն (էջ 54), գինեկէզ (էջ 378), դժոխաբուժելի (էջ 215), դժոխազգի (էջ 119), դժոխաձեռնարկելի (էջ 195), դժոխայոյս (էջ 98), դժոխապահ (էջ 145), դժոխատեսակ (էջ 119), դժուարաթուելի (էջ 257), դժուարախրատելի (էջ 336), դժուարատոփական (էջ 328), 351), դիրազայրացող (էջ 99), դիրակոչելի (էջ 187), դիրասարսելի (էջ 98), երանողական (էջ 329), երկակճողակ (էջ 251), գուարճագոյն (էջ 69), ժանտարկու (էջ 329), ծանրապատիւ (էջ 155), հանապազագնաց (էջ 397), հաւասարական (էջ 407-408), հիւանդագործ (էջ 230), մաղձական (էջ 174), յովակագուր (էջ 375), նախասպնջական (էջ 62), ներանուագ (էջ 204), ներչարչարելի (էջ 283), ողբասէր (էջ 355), ոսկեբեւեռ (էջ 152), ոսկետախտակ (էջ 120), չարասկիզբն (էջ 194), սովահեղձոյց (էջ 93), տրտմասէր (էջ 355), քաջապատրաստ (էջ 362):

Մակբայ– անզգամաբար (էջ 427), անտխրաբար (էջ 207), արագիշեր (էջ 333), իւրովաբար (էջ 269), միջագիշեր (էջ 334), նախակզբնաբար (էջ 121), սովածաբար (էջ 333), ցուցականապէս (էջ 331), փոխարկաբար (էջ 270):

Բայ՝ ա *անորոշ կամ աներևոյթ* - արտակերտել (էջ 380), բազմահոգանալ (էջ 117), բացատնաւրիներ (էջ 113), թերագրել (էջ 163), նախադիպիլ (էջ 142), նահատակադրել (էջ 104), նգոտիլ (էջ 144), վերածեռնել (էջ 213), վերաշնչել (էջ 83), փոքրամտել (էջ 119), քաջաբերիլ (էջ 135), քաջալաւանալ (էջ 349),

բ *անցյալ դերբայ* - դեռածեալ (էջ 210), վերջածնիցեալ (էջ 278),

գ *ենթակայական դերբայ* - անարարող (էջ 101), վայրընկղմիչ (էջ 88),

Կա նաև երկու նորակազմ բայական հարադրություն՝ *դժուարահաճոյ լինել* (էջ 446) և *երասանակազանց լինել* (էջ 283), որոնք իրենց յուրահատուկ կառուցվածքով և դարձվածային բովանդակությամբ մեծ պատկերավորություն են հաղորդում Կեսարացու երկի հայերեն թարգմանությանը:

Առանձնացրել ենք 7 նորակազմություն, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում, սակայն հիշատակված են Լ. Հովհաննիսյանի բառարանում՝ *ազահաճեռն* (էջ 136), *բազմանման* (էջ 172), *գեղեցկաձեռութիւն* (էջ 179), *ժանտարկու* (էջ 329), *լաւաբարոյութիւն* (էջ 332), *ձեռնարուեստակ* (էջ 219), *վայրընկղմիչ* (էջ 88): Այս բառերի համար Լ. Հովհաննիսյանը որպէս միակ աղբյուր հիշատակում է Կեսարացու «Գիրք պահոց»-ը: Անդրադառնանք նորահայտ *ձեռնարուեստակ* (էջ 219) բառին, որի *ձեռնարուեստ* տարբերակն առկա է ՆՀԲ-ում: Այն ստեղծվել է հունարեն *χειροτεχνος*՝ «արհեստավոր, վարպետ» բառի թարգմանության շնորհիվ, այս ձևով էլ գործածական է գրական հայերենի հետագա փուլերում, ամրագրված է Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի բառարաններում: Մալխասյանցը որպէս առավել գործածական բերում է «ձեռարուեստ» հնչյունափոխված տարբերակը, իսկ Աղայանի բառարանում *ձեռնարվեստ*-ը բերված է «տե՛ս ձեռնարհեստ» նշումով, այն միայն գոյական է՝ *ձեռքի արհեստ*

իմաստով: Մալխասյանցը իբրև առաջնային նշանակություն բերում է ածականի ձևը՝ ձեռքի *արհեստաւոր, ձեռագէտ*¹⁷, ՆՀԲ-ում ևս առաջնայինը ածականական իմաստն է, որին հաջորդում է գոյականականը: Բառի պատմական զարգացման ընթացքում առաջնային իմաստը ջնջվել է, արդի գրական հայերենի երկու ճյուղերում էլ այն գոյական է:

Կեսարացու երկիգրաբար բնագրում առկա նորակազմությունների մի մասը, ինչպես տեսնում ենք, ստեղծված են հունարենի հետևողությամբ, նման բաղադրությունների զգալի մասը կենսունակ եղավ՝ ամրակայվելով հայերենի բառապաշարում, սակայն ունենք նաև դիպվածային, երկարաշունչ, արհեստական կազմություններ՝ *անարտաճանապարհ (էջ 136), արտերեւութանալ (էջ 271), անաւելաստացութիւն (էջ 335), երկրավաստակութիւն (էջ 320), ընդունայնակոխել (էջ 269)...* Վ. Առաքելյանի գնահատմամբ. «Որքան էլ մեր թարգմանիչները հմուտ լինեին հունարենի մարզում, այնուամենայնիվ կային այնպիսի հունարեն բառեր, որոնք դժվարիմաց էին և անթարգմանելի: Կային և այնպիսի բառեր, որոնց հասկացությունները դժվար էր հայերեն արտահայտել»¹⁸:

Գրաբարյան բառային հունաբանություններին մանրակրկիտ անդրադարձել է Գ. Մուրադյանն իր «Հունաբանությունները դասական հայերենում» աշխատության մեջ, որտեղ արձանագրում է Բարսեղ Կեսարացու գործերի՝ «նախահունաբան» շրջանի թարգմանություններ լինելու հանգամանքը, որի շնորհիվ էլ, մեր համոզմամբ, դրանք հիմնականում զերծ են խրթին և օտարաբան կազմություններից, մոտ են ոսկե դարի գրաբարին: Վիեննայի Մխիթարյան հայրերը, կատարելով V դարի գրական լեզվի առաջին շրջանաբաժանումը 18 լեզվական առանձնահատկությունների հիման վրա՝ առանձնացրին «ոսկեդարյան» և «հետոսկեդարյան» գրաբարը, հետա-

¹⁷ Հմմտ. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 164 և էդ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, էջ 936:

¹⁸ Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984, էջ 213:

գայում էլ հետոսկեդարյան լեզվից տարբերակեցին հունաբան թարգմանությունների ենթաշրջանը: Ն. Ակիմյանի պատկերավոր բնորոշմամբ, դասական հայերենն ունեցավ երեք փուլ՝ «ոսկեդար», «արծաթի դար», «պղնձի դար». Բարսեղ Կեսարացու երկերի գրաբար նախահունաբան թարգմանությունները պատկանում են «*արծաթի դար*»-ին, իսկ «պղնձի դարը» բուն հունաբան դպրոցի ժամանակաշրջանն էր¹⁹:

Հին հունարենի և գրաբարի քաջագիտակ ուսումնասիրող Գ. Մուրադյանը գրում է. «Բառերի անսովոր կառուցվածքի շնորհիվ է, որ նորաձև, նույնիսկ տարօրինակ կազմության տպավորություն են ստեղծում գրեթե բոլոր նախածանցավոր հունաբանությունները և վերջածանցավորների մի մասը: Բարդ բառերի և վերջածանցավորների մեծ մասի դեպքում առավել մեծ է նոր իմաստի գործոնը, իսկ իմաստային պատճենումներում այն վճռորոշ է»²⁰:

Կեսարացու «Գիրք պահոցի» հայերեն բնագրից մեր առանձնացրած մի շարք նորակազմություններ Գ. Մուրադյանը համարում է հունաբան կառույցներ՝ բերելով դրանց հունական սկզբնաձևերը: Այդպիսիք են՝ *բաղակցութիւն* (էջ 257) – հուն. *συστημα, դիրակոչելի* (էջ 187) – հուն. *εὐανάκλητος*: Առաջին բառը նա համարում է նախածանցավոր բառի պատճենման օրինակ, իսկ երկրորդը՝ բարդ բառի: Բացի այս երկու բառերից, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում, Գ. Մուրադյանը վերլուծության է ենթարկում նաև հունաբան այնպիսի կառույցներ, որոնք ընդգրկված են ՆՀԲ-ում, դրանք վկայված են թե՛ Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց»-ում, թե՛ թարգմանական այլ գործերում, այսինքն՝ դրանք արդեն ընդհանուր կիրառություն ստացած հունաբան կազմություններ են: Բերենք նման բաղադրությունների հետաքրքիր օրինակներ՝ *ամենաբազում*, *անճառելի*, *անմերձենալի*, *առդնել*, *բաղդատումն*, *բազմապատիւն*, *բացակատարել*, *դիրադարձ*, *ընդդիմակայ*, *կռուակից*, *համապա-*

¹⁹ Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Եր., 2010, էջ 22:

²⁰ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 33:

տիւ, յաղթասիրել, յարրնդունելութիւն, նախայայտ, ստեղծագրութիւն: Այս բառերը ստեղծվել են VI-VII դարերում և հասել XXI դար՝ գործուն կիրառություն գտնելով արդի հայերենի տարբեր ոճերում՝ *ամենաբազում, անճառելի, անմերձենալի, ընդդիմակա, նախահայտ:* Նշյալ շարքից առանձնացնեք, մեր գնահատմամբ, բովանդակալից և դիպուկ *ստեղծագրութիւն* բառը, որն այժմ կիրառվում է գրողական վարպետության դասընթացների համար, այսպես՝ «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների» հանրահայտ կենտրոնում ժամանակակից գրողներն ու բանաստեղծները պատանիների համար «Ստեղծագրություն» անվամբ դասընթացներ են վարում՝ ձևավորելով տարբեր ժանրերի գրական աշխատանքներ ստեղծելու հիմունքները և հմտությունները:

Գ. Մուրադյանը հունաբանություն է համարում նաև ածականներից կերտված մակբայները՝ *-բար* և *-պէս* վերջածանցներով, որոնք համարժեք են հունարեն *ως*-ին: Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ այս կառույցով բառերն այդքան էլ շատ չեն: Բառարաններում չվկայված նորակազմություններից են՝ *անկատարաբար* (էջ 217), *անհաւանապէս* (էջ 148), *հարցաքննաբար* (էջ 302), *տարակուսաբար* (էջ 226), բառարաններում վկայվածներից՝ *անզգամաբար* (էջ 427), *անտխրաբար* (էջ 207), *հլրովաբար* (էջ 269), *նախասկզբնաբար* (էջ 121), *սովածաբար* (էջ 333), *ցուցականապէս* (էջ 331), *փոխարկաբար* (էջ 270): Կարծում ենք, որ այս կազմությունները ոչ այնքան հունարենի ազդեցությամբ, որքան ընդհանուր հնդեվրոպական բառակազմական օրինաչափությունների դրսևորում են, որի շնորհիվ նման միավորների մի մասը շարունակել են կիրառվել հետագա դարերում: Այսօր՝ արդի գրական արևելահայերենի և արևմտահայերենի գրավոր և բանավոր տարբերակներում ածականներից կամ որոշչային կիրառություն ունեցող այլ խոսքի մասերից *-բար* և *-պէս* ածանցներով բազմաթիվ բառեր են ստեղծվում:

«Գիրք պահոցի» գրաբար թարգմանության լեզվում գերակշռում են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապա-

տասխանող նորաբանությունները, որոնք թարգմանիչները ստեղծվել են բառակերտման մեծ ներուժ ունեցող *-ութիւն* և *-ական* վերջածանցներով, այսինքն՝ գոյականներ և ածականներ են, զգալի արտադրողականություն ունեն նաև *-աւոր* *-ումն*, *-ացու* և *-ած* բառակազմական ձևությամբով միավորները, որոնք եզրույթի արժեք են ձեռք բերել՝ հարստացնելով հայերենի գիտաբաների համակարգը: Թեև պետք է նշել, որ հունարենից իմաստային-բառակազմական պատճենումներ կատարվել են հատկապես եզրույթների կազմության ժամանակ²¹, քանզի հին հունարենը գիտության մայր լեզուն էր, ակունքը՝ նոր հասկացությունների և գիտաբաների: Մեր քննած շուրջ 234 նորաբանությունների 40 տոկոսից ավելին այսօր այս կամ այն աստիճանի գործածական է արդի գրական հայերենում՝ ամրակայված բառարաններում և գրագրության մեջ:

Բարսեղ Կեսարացու ճառերի հայ թարգմանիչների գործը վառ վկայությունն է հայոց լեզվի բառակերտման և բառընկալման ճկունության, որի շնորհիվ անգամ բառապատճենումները դառնում են հաջողված, համագործածական միավորներ՝ հարստացնելով տարբեր ժամանակների և ոճերի բառապաշարը: Կեսարացու երկի գրաբար թարգմանությունն անվարան կարող ենք համարել լեզվական բարձր որակի և, ամենակարևորը, հայկաբան ստեղծագրություն:

²¹ Տե՛ս Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 69:

**ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՄԱՅՈՒ «ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի
ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԶ**

Հայ և ընդհանրական քրիստոնեական եկեղեցու նշանավոր սուրբ, կաթոլիկ եկեղեցու կողմից տիեզերական վարդապետ՝ doctor ecclesiae, հռչակված Գրիգոր Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ)» երկը գրվել է 379 թ. հին հունարեն, հայերեն թարգմանվել մոտավորապես 717 թ. Կոստանդնուպոլսում Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Հյուպատոսի կողմից: Այս աշխատությունը հայ հին թարգմանական գրականության երկրորդ շրջանի գլուխգործոցներից է համարվում: Հայոց գրերի գյուտից հետո անմիջապես ծնունդ առած «թարգմանչաց շարժումը» երկու հզորագույն փուլեր է ունեցել. Ա շրջանն ընդգրկում է 5-րդ դարի կեսը, Բ շրջանն ուղղակի առնչվում է հունաբան դպրոցի գործունեության հետ՝ 5-րդ դարի վերջից մինչև 8-րդ դար ներառյալ:

Թարգմանիչ բնորոշումը միջնադարյան հայ իրականության մեջ տիտղոս է եղել, պատվանուն, որին արժանացել են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի 100-ից ավելի աշակերտները և ապա՝ աշակերտաց աշակերտները կամ «կրտսեր թարգմանիչները»: Այս շարքին հավաստյալ կարող ենք դասել նաև քերականագետ, բանաստեղծ, երաժիշտ, հայ եկեղեցու մեծահամբավ գործիչ Ստեփանոս Սյունեցուն և Դավիթ Հյուպատոսին, վերջինս բյուզանդական արքունիքում բարձր պաշտոն կրող (կայսերական սեղանապետ) իշխաններից էր՝ հայտնի իր գիտական գործունեությամբ:

Ընդգծենք նաև, որ «թարգմանիչ» բառը հին շրջանում նշանակում էր ոչ միայն մի լեզվից մյուսին փոխադրող, այլև Սուրբ գրքի դավանաբան մեկնիչ և իմաստասեր, թարգմանիչներն իրենց ժամանակի ամենակրթված և լուսավորյալ անձինք էին, ուստի թարգմանչաց այս շարժման ներկայացուցիչների գործերը հարուստ էին նորակազմ բառերով, դարձվածքներով, գիտաբառերով ու ոճերով, որոնք գրաբարը դարձրին վերժամանակյա գիտական, մշակութային հզոր լեզու, հավասարագոր հունարենին և ասորերենին:

Հայ թարգմանական գրականության հատկապես Բ շրջանի լեզուն բազմաթիվ նորահայտ բառիմաստային, բառակազմական և ոճական իրողություններ է պարունակում, գանձեր, որոնց ուսումնասիրությունը հույժ արդիական է և կարևոր հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության և եզրաբանության հետազազարգացման համար: Ինչպես վկայում է հունաբան հայերենի հմուտ ուսումնասիրող Գ. Մուրադյանը. «Բացի մասնագիտական տերմիններից՝ հունաբան դպրոցը ստեղծել է առհասարակ վերացական բառապաշար, և դրա շնորհիվ է, որ հայերենն այսօր ունակ է արտահայտելու ցանկացած ժամանակակից հասկացություն»¹:

Մեր այս ուսումնասիրության ընթացքում 2008 թ. Մայր աթոռ սուրբ Էջմիածնի կողմից լույս ընծայած Ս. Գրիգոր Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ)» հայերեն թարգմանության քննական բնագրից (աշխատասիրությամբ Ստեյլա Վարդանյանի) դուրս ենք գրել 29 բառային միավոր, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում՝ ՆՀԲ, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան» և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր», ինչպես նաև առանձնացրել ենք 83 բառ, որոնք ՆՀԲ-ում տրված են միայն Գր. Նյուսացի նշումով:

Հունաբան դպրոցի մայրամուտին կատարված հիշյալ թարգմանության բառապաշարը պատկերավոր է, հումանիշներով և բազմիմաստ դարձվածային միավորներով հարուստ, այստեղ արդեն չկան հայերենի համար խիստ անսովոր, արհեստական բառեր, նորակազմ կամ նորահայտ բառերն ավելի շուտ հայկաբան են, քան հունաբան:

Նորահայտ բառերի իմաստային բովանդակության բացահայտմանը զուգահեռ՝ այդ նորաբանությունները վերլուծել ենք ըստ խոսքիմասային պատկանելության և բառակազմության: Ակներև է, որ հետդասական գրաբարի բառաստեղծման ներուժը հատկապես

¹ Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010, էջ 15:

գիտության ոլորտում թե՛ ածանցման, թե՛ բառաբարդման միջոցներով իսկապես հզոր էր՝ անկախ ժողովրդախոսակցական գրաբարի անկման իրողությունից:

Քննենք այս աշխատության մեջ տեղ գտած նորակազմությունները՝ բաժանելով դրանք երկու խմբի. ա) նորահայտ բառեր, որոնք վկայված չեն ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառեր»² բառարանում, և բ) նորակազմ բառեր, որոնք վկայված են վերոնշյալ բառարաններում, բայց դրանց համար որպես աղբյուր է ծառայել միայն Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկը:

Ուշադրության են արժանի նաև այն բառերը, որոնք թեև նոր չեն, սակայն մեր ուսումնասիրության առարկա աշխատության մեջ կիրառված են նոր իմաստներով, այսինքն՝ Նյուսացու այս երկի թարգմանիչները գրաբարյան բառերի իմաստային դաշտը հարստացրել են նոր նշանակություններով՝ հիմնականում տերմինային: Այս տիպի բառերից առանձնացնենք *ախտաժեւոր* (էջ 74), որը ՆՀԲ-ում բացատրվում է որպես «ախտացեալ, ցաւագար, հիւանդ»³: Ապա նշվում է նրա երկրորդ իմաստը՝ «վարակեալ ի կիրս ախտաւորս», իբրև իմաստային այս կիրառության օրինակ բերվում է Գ. Նյուսացու երկի թարգմանության հետևյալ հատվածը. «Զախտաժէտ ցանկուիւն նախատելով. Նիւս. կազմ»⁴:

Բառակազմական տեսանկյունից Նյուսացու երկի թարգմանության մեջ կիրառված նոր բառերի զգալի մասը –ութիւն ածանցով կազմված վերացական գոյականներ են՝ *առաջախնամութիւն* (էջ 48), *հակառակափակութիւն* (էջ 148), *յաւելագործութիւն* (էջ 135), *պատճառագիտութիւն* (էջ 99), *վայրահայեցութիւն* (էջ 202), *տնկաւորութիւն* (էջ 194), *քաջահաւասարութիւն* (էջ 135) և այլք: Հաճախադեպ են նաև –գոյն մասնիկով կազմված գերադրականների բավական յուրօրինակ կիրառությունները, որոնց հիմքում և՛ որակական, և՛

² Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, ՆՀԲ-ում չվկայված բառեր, Ե., 2010:

³ Տե՛ս <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26>

⁴ Անդ:

հարաբերական ածականներ են՝ *ականյատնագոյն* (էջ 172), *անբանաւորագոյն* (էջ 104), *բժշկականագոյն* (էջ 197), *դալնկագոյն* (էջ 90), *չափատրագոյն* (էջ 208): Անցյալ դերբայի *-եալ* ածանցով բազմաթիվ նորահայտ կազմութիւններ կան ածականի արժեքով՝ *աւրինադրեալ* (էջ 114), *երկոսեալ* (էջ 47), *կարաւտացեալ* (էջ 66), *նախավաստակեալ* (էջ 98), նաև նորակազմ բայեր՝ *անխաղաղանալ* (էջ 99), *անապարագրել* (էջ 194): Վկայված են նաև *-ելի/ալի* ածանցներով նորագոյն ածականներ, ինչպես՝ *ախտանալի* (էջ 118), *ականունելի* (էջ 125), *տրտմեցուցանելի* (էջ 108) և այլք: Նորաբանութիւնների մեջ զգալի թիվ են կազմում նաև ինքնատիպ բարդութիւնները և բարդաձանցավոր բառերը՝ *առ+աջ*-ով բաղադրված ձևեր՝ *առաջակարկառ* (էջ 76), *առաջակամ* (էջ 202), *առաջախնամութիւն* (էջ 48), ինչպես նաև՝ *յաւէտաշարժ* (էջ 47), *յոքնատեսակ* (էջ 107), *փողոշաձևաբար* (էջ 209), *վայրահայեցութիւն* (էջ 202):

Նորահայտ բառերը խոսքիմասային լայն ընդգրկում ունեն՝ գոյական, ածական, բայ և մակբայ: Ստեղծվել են հետաքրքիր կազմութիւններ նախդիրների, նախաձանցների, վերջաձանցների և արմատների համադրմամբ:

Մեր քննած բառացանկում առավել մեծաթիվ են այն նորակազմութիւնները, որոնք գրաբարի բառարաններում առկա են, բայց տրված են միայն Գր. Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն» երկի հղումով, այսինքն՝ տվյալ երկի թարգմանիչների բառաստեղծական շնորհի արգասիքն են: Հետագոտենք այդ բառերը՝ դասակարգելով ըստ խոսքիմասային պատկանելության.

Գոյական - աղաւաղութիւն (էջ 66), ամենախահութիւն (էջ 52), անդրաբերութիւն (էջ 89), արմանագործութիւն (էջ 168), արիւնագործութիւն (էջ 209), արտաքսաձայնութիւն (էջ 70), զատութիւն (էջ 164), ընդդիմաբախութիւն (էջ 200), խաղճախուղճ (էջ 78), կողկողիթ (էջ 102), ճանապարհերթութիւն (էջ 169), մանկակերութիւն (էջ 166), նախաճառութիւն (էջ 174), նաւակայք (էջ 49), սկզբնատպաւորութիւն (էջ 58), ստուարամասնութիւն (էջ 105), վերագնացութիւն (էջ 101), փոթութիւն (էջ 205), քարադրաւշ (էջ 215):

Ածական – ախտաժեռ (էջ 74), ախտաւորագոյն (էջ 186), աղանդական (էջ 119), անխառնակ (էջ 178), անկամաւոր (էջ 206), աննիւթաւոր (էջ 160), անսխալագոյն (էջ 211), աստուածագոյն (էջ 107), արագամաշ (էջ 68), արիննուտային (էջ 209), բազմախաղալի (էջ 202), բազմաձեւ (էջ 100), բազմամաղձ (էջ 109), բազմացիր (էջ 210), գնդատեսիլ (էջ 148), գոչաւորագոյն (էջ 78), գործաւորագոյն (էջ 192), դիւրադաւ (էջ 66), երեւութուտ (էջ 102), ընդդիմաբախ (էջ 200), թանձրամասնագոյն (էջ 72), խաղճնելի (էջ 102), խորխաւոր (էջ 181), խռուական (էջ 195), հրաւորագոյն (էջ 88), հեշտատեսիլ (էջ 141), հրուտ (էջ 203), մաղձատար (էջ 90), մեկնակատեսիլ (էջ 145), մերժական (էջ 206), մշտնջենաւորագոյն (էջ 145), մտաբախ (էջ 89), յարգագոյն (էջ 114), յաւետակից (էջ 163), նեղափողոց (էջ 82), շատամարմին (էջ 66), ջերմաւոր (էջ 192), սկզբնականագոյն (էջ 210), տղայագոյն (էջ 217), ուղղագնաց (էջ 130), փողաձեւ (էջ 78), փոքրավայելուշ (էջ 175):

Մակբայ – ամուսնաբար (էջ 127), անբաւապատիկ (էջ 148), անպնդաբար (էջ 105), բազմամասնապէս (էջ 83), դիպաւորապէս (էջ 46), ծարաւաբար (էջ 108), կարգապէս (էջ 148), կոնաձեւապէս (էջ 148), համապատուապէս (էջ 91), հովտաբար (էջ 78), միջակաբար (էջ 72), չափաբար (էջ 100):

Բայ. դերբայ – բազմաշարադրեալ (էջ 85), բաղանուանել (իմ) (էջ 124), երաժշտագործել (էջ 81), խառնամառնեալ (էջ 105), մակաւասարել (իմ) (էջ 163):

Վերոնշյալ բառացանկից ակնհայտ է, որ նորաստեղծ բառերի ճնշող մեծամասնությունը ածականներն են, այնուհետև՝ գոյականներ, բայեր, դերբայներ: Գոյականները հիմնականում ստեղծվել են – ուրիշին ածանցի միջոցով: Ածականները կազմվել են –ական, –ային, –գոյն վերջածանցներով, ան– նախածանցով, հաճախադեպ են նաև կազմութեամբ բարդ ածականները: Ածականի արժեք ունեն –եալ վերջավորութեամբ դերբայական կազմությունները: Մակբայները ստեղծվել են –պէս, –բար, –պատիկ ածանցներով միջոցով: Այս և վե-

րոհիշյալ բառերի զգալի մասը կիրառական է ցայսօր գիտական, գեղարվեստական լեզվում:

Այս բառերի մեջ կան նաև հունաբան կազմություններ՝ հունարենի նմանողությամբ կազմված բառեր: Այդպիսիք են՝ *հակառակափակություն* (էջ 148), *պատճառագիտություն* (էջ 99), *նախաձառություն* (էջ 174), *ընդդիմաբախություն* (էջ 200), *բաղանուանիմ* (էջ 124), *արտաբասաձայնություն* (էջ 70) և այլք:

Լ. Հովհաննիսյանը այս տիպի կազմությունների վերաբերյալ հետաքրքիր դիտարկում է կատարում՝ նշելով, որ հայ թարգմանիչը երբեմն հունարեն պարզ բառի կամ բառակապակցության փոխարեն բարդ կամ բարդաձանցավոր բառ է կազմում. «Թարգմանչի որդեգրած բառաստեղծման այս միջոցը նույնպես պետք է համարել յունաբանության դրսևորումներից մեկը. աւելի ճիշտ՝ դարի երկրորդ կեսի թարգմանչական մի խմբի որդեգրած սկզբունք, որը բնաւ լեզուն խաթարելու, արհեստականութեամբ հեղեղելու միտում չունէր, այլ պարզապէս լեզուամշակութային մի ուղղութիւն էր՝ հայերէնին աւելի գրական երանգ տալու, գրաւոր եւ բանաւոր խօսքի միջեւ ոճական, բառօգտագործման եւ այլ բնոյթի տարբերակումների միտումով»⁵:

Հունաբանություն համարվող այս կառույցները Լ. Հովհաննիսյանը բաժանում է երկու խմբի՝ կազմություններ, որոնք դուրս են մղվել լեզվից և լայն կիրառություն չեն ստացել, և նորակազմություններ, որոնք ազատորեն գործածվում են հայերենում և նույնիսկ չի զգացվում դրանց՝ հունական կազմություններից պատճենված լինելը: Նյութացու մեր ուսումնասիրած երկի թարգմանիչները բազմափուլ տեղի են, նրանք միայն խիստ անհրաժեշտության դեպքում էին հունական կազմությունները ուղղակի պատճենում, ընդ որում բառի կազմի մեջ մտնող բաղադրիչներից դուրսին հասկացվում է նրանք նշանակությունը:

⁵ Լ. **Յովհաննիսեան**, Հայ թարգմանական գրականության բառապաշարը (Ե դար), Վիեննա-Երեւան, 2009, էջ 223-224:

Նյուսացու երկի նոր բառերի և իմաստային կիրառությունների վերաբերյալ վկայություններ կան Գ. Մուրադյանի «Հունաբանությունները դասական հայերենում»⁶ արժեքավոր աշխատության մեջ: Հետևելով տեսական գրականության մեջ ընդունված սկզբունքներին՝ նա առանձնացնում է հունարենից պատճենված բարդությունների երկու հիմնական տիպ. ա) «բառակազմական պատճենումներ» (словообразовательные кальки) և բ) «իմաստային-բառակազմական պատճենումներ» (семантические-словообразовательные кальки): Իմաստային թափանցիկության կամ թարգմանող լեզվում յուրացվելու տեսանկյունից բարդություններ պարունակում են հատկապես երկրորդ խմբի պատճենումները. «Կան բառեր, որոնք արտաքուստ թվում են բառակազմական պատճենումներ, բայց դրանց իմաստն առանց հունարեն սկզբնագրին դիմելու անհասկանալի է մնում, քանի որ նոր բառի բաղադրիչներից մեկը հունարեն բառի ազդեցությամբ օժտվում է նոր իմաստային երանգով»⁷:

Այսպիսի իմաստային-բառակազմական պատճենումները Գ. Մուրադյանը համարում է բարդ նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը կամ ամբողջ բառը հունարեն սկզբնօրինակի նմանողությամբ, նոր իմաստով է օժտվում: Նյուսացու երկում հանդիպող այսպիսի մի քանի բառ է առանձնացնում, ինչպես օրինակ՝ *ամբոխաբեր* (էջ 217.6) - «մայրուղի, բառացի՝ ժողովուրդ տեղափոխող», *մարմնավաճառ* (էջ 216.8) - «մսավաճառ», *քաջահանդէպ* (էջ 213)- «դիպուկ» և այլք:

Գ. Մուրադյանն առանձնացնում է հայ հին թարգմանական գրականության բառապաշարը հարստացնող նորաբանությունների ևս մի կարևոր խումբ, որտեղ ընդգրկված բառերը հայերենի բառակազմական կաղապարների տեսանկյունից նորարարական են, այսինքն՝ հայերեն են մուտք գործել զուտ հունարենից կատարվող թարգմանությունների միջոցով: Այդպիսիք են հատկապես հայերենում խոսքիմասային տարարժեքություն ունեցող ածականներից

⁶ Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010:

⁷ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 61:

կազմված մակբայները՝ մակբայակերտ բարպետ, ավելի հազվադեպ՝ -արէն,-ակի վերջածանցներով՝ *անարժանապէս (էջ 231), անսրբապէս (էջ 234), բազմամասնաբար (էջ 196.9), յոգնաւրիճակապէս (էջ 196.9), գեղեցկապէս (էջ 192)* և այլն: Պետք է նշել, որ հայերենում այս բառերի ուղիղ ձևերը հանգիստ կարող են կիրառվել և՛ իբրև ածական, և՛ իբրև մակբայ՝ առանց հավելյալ ածանցների, սակայն թարգմանիչները մակբայակերտ ածանցների շնորհիվ ոչ միայն նոր կազմություններ են ստեղծել, այլև խոսքի մեջ առավել հստակ են դարձրել դրանց պարագայական կիրառությունները: Հայերենին ոչ հատուկ հունարան նոր կառույցներ են նաև ժխտական մասնկիով և -ի վերջածանցով բայածականները, ինչպես՝ *աներևելի (էջ 216), անգարհուրելի (էջ 213), անփոխադրելի (էջ 189)*:

Հավարտ անվարան արձանագրենք, որ հունարան համարվող այս նորակազմություններն ակնհայտ փոքր թիվ են կազմում Նյուսացու երկի գրաբար թարգմանության բառապաշարում, ակներև է, որ Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ)» երկի բազմաշնորհ թարգմանիչները նախապատվություն են տվել հայերենի բառակազմական օրինաչափությունների համաձայն կազմվող բառերին, հունարեն հասկացությունները և եզրույթները թարգմանել են հայերեն նորաստեղծ համարժեքներով և ոչ թե տարատեսակ բարդընկալելի պատճենումներով, մի հանգամանք որը վկայում է «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի որակյալ հայկաբան բնույթի մասին:

Աշխատանքի վերջում համախումբ ներկայացնենք «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» թարգմանական երկում կիրառված նորահայտ կազմություններն ըստ այբբենական կարգի՝ իրենց բառային նշանակություններով՝ ակնկալելով, որ այս բառերը նոր կիրառություններ ձեռք կբերեն 21-րդ դարում:

Նորագյուտ բառեր

Ախտանալի (էջ 118) - հիվանդաբեր

Ակնյայտնագոյն (էջ 172) – հույժ ակնհայտ

Ակնունելի (էջ 125) – սպասելի, ակնկալելի

Անբանաւորագոյն (էջ 104) – անմտագոյն, խոսելու շնորհից իսպառ գուրկ

Անխաղաղանալ (էջ 99) – տագնապել, խաղաղութիւնը կորցնել

Անպարագրել (էջ 194) – անսահմանութիւնը սահմանափակել, ընդգրկել

Առաջախնամութիւն (էջ 48) – նախախնամութիւն

Առաջակամ (էջ 202) – առաջին, անդրանիկ

Առաջակարկառ (էջ 76) – դեպի առաջ պարգած, մեկնած

Աւրինադրեալ (էջ 114) – սահմանված

Բժշկականագոյն (էջ 197) – բժշկական, բուժիչ

Դալնկագոյն (էջ 90) – դալուկ, սփրթնած

Երկոսեալ (էջ 47) – երկուսն էլ միասին վերցված

Ընդմտեալ (էջ 175) – միջամուխ, խորամուխ եղած

(Ի) բաց ընկենլի (էջ 175) – դէն նետելի, անպիտան

Կարաւտացեալ (էջ 66) – կարիքավոր, ինչ-որ բանի կարոտ

Հակառակափակութիւն (էջ 148) – դիմադրութիւն, ընդդիմութիւն

Յաւելագործութիւն (էջ 135) – լրացուցիչ աշխատանք, հավելյալ ջանք

Յաւելաշարժ (էջ 47) – մշտաշարժ

Յոքնատեսակ (էջ 107) – բազմատեսակ

Նախավաստակեալ (էջ 98) – սկզբնապէս, ի վերուստ տրված,

Չափատրագոյն (էջ 208) – չափասահմանված, նախատեսված չափով

Պատճառագիտութիւն (էջ 99) – պատճառների իմացություն, խորագիտություն

Վայրահայեցութիւն (էջ 202) – ներքն նայելը, ստորանկում

Տնկաւորութիւն (էջ 194) – սերմանում

Տրտմեցուցանելի (էջ 108) – տրտմություն, տխրություն պատճառող

Ուժգնական (էջ 207) – ուժգին, հուժկու

Փողողոշաձեւաբար (էջ 209) – հյուսքերի ձևով, միահյուսված

Քաջահաւասար (էջ 135) – լիովին հաւասար, նույնարժէք

**«ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՈՒՅԹԻ ԲՆԻԿ ԲԱՌԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՄԿՈՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ» ԳՐՔՈՒՄ**

Ուխտանեսն Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» գրքում վկայված են *մարդկություն* հասկացության հին հայերենի գրերէ բոլոր հիմնաբառերը, որոնց ստուգաբանական և իմաստաբանական հետազոտությունն ապացուցում է, որ *մարդկություն* հասկացությոնշանակող բոլոր առաջնային միավորները հայերենում գերազանցապէս բնիկ են եղել: Դրանց տարածամանակյա քննությունն ապացուցում է, որ դրանք համագործածական են գրական հայերենի բոլոր փուլերում, բարբառներում և խոսվածքներում, գալիս են նախալեզվից և ունեն հազարամյակների պատմություն: Հին հայերը, առանձնանալով հնդեվրոպական միասնությունից, արդեն ունեցել են բարձր զարգացած հասարակական կյանք՝ իր հստակ աստիճանակարգությամբ, խորքային հարաբերություններով, ազգակցական, բարեկամական և մասնագիտական բազմազան ենթահամակարգերով, որոնց անվանումները հնդեվրոպական են, փոխառություններն այստեղ սակավաթիվ են, հիմնականում դիպվածաբար:

Մարդկություն/մարդ հասկացության բառերը հայերենի պատմության ընթացքում սակավ փոփոխություններ են կրել, դրանք կայուն միավորներ են. վկայված փոփոխությունները վերաբերում են որոշ բառերի հիմնական բառաֆոնդից դուրս մղվելուն, այսինքն՝ հնաբանություններ դառնալուն: Միաժամանակ ունենք նաև իմաստի ընդլայնման դեպքեր, երբ *մարդ* հասկացության շատ բառեր, իրենց հիմնական նշանակությամբ զուգահեռ, ձեռք են բերել հարգական կամ մտերմական դիմելաձևերի կիրառություն: Որոշ միավորներ ձեռք են բերել ակնհայտ եզրությային իմաստ՝ հարստացնելով արդի հայերենի բառապաշարը:

Եկեղեցական հայր, մատենագիր Ուխտանեսն Եպիսկոպոս Սեբաստացու «Պատմութիւն Հայոց» երկը Ժ դարի մատենագրության յուրահատուկ գործերից է, որն առանձնանում է, ինչպես յուրօրի-

նակ լեզվական որակով, այնպես էլ բովանդակային հարստությամբ, այստեղ պատմական դեպքերը միահյուսվում են դավանաբանական խնդիրներին, ազգագրությանը, բանահյուսությանը: Ուխտանեւը հոգևոր կրթություն ստացել է Նարեկավանքում՝ Անանիա Նարեկացու վարդապետությամբ, որին համարում էր «տէր և հոգևոր հայր», իսկ իրեն՝ «որդի», «յետին և տրուպ աշակերտս»¹: Ուխտանեւը հոգևոր դավանաբանական գործունեություն ծավալել է Մեքաստիայում 970-985 թթ., որտեղ եղել է թեմի առաջնորդ, ապա գլխավորել է Եդեսիայի թեմը: Հակաքաղկեդոնական պայքարում հայտնի է դարձել իր վճռական դիրքորոշմամբ՝ իբրև հայոց եկեղեցու ինքնիշխանության ջերմեռանդ պաշտպան՝ ի հակադրություն Բյուզանդիայի եկեղեցու ճնշումների:

«Պատմութիւն Հայոց»-ը գրել է 980 թվականին պաշտելի ուսուցչի՝ Անանիա Նարեկացու պատվերով և օրհնությամբ Գեղեցիկ մի ավանդության համաձայն՝ հոգևոր հայրն ու իր սանը 980 թ. հուլիսի 4-ին «յեզր գետոյն որ կոչի Ախուրեան» հանդիպել և գրուցել են «բերան ի բերան... յաղագս պատմութեան»՝ այսինքն՝ քննարկել են ապագա մատյանի և՛ կառուցվածքը, և՛ բովանդակությունը: Ուխտանեսի պատմության տարբեր դրվագներ հիշատակվում են ԺԳ դարի չորս նշանավոր մատենագիրների՝ Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու և Ստեփանոս Օրբելյանի երկերում: Մատյանի բնագիրը մեզ հասել է 1663 թ. ընդօրինակությամբ (ՄԱՄ, ձեռ. N 1774), մնացյալ չորս ձեռագրերը գրչագրված են այս մատյանից և պահվում են Երևանի, Վենետիկի, Փարիզի ու Ս. Պետերբուրգի ձեռագրատներում²:

Մեր հետազոտած երկասիրության ճշգրիտ և ամբողջական վերնագիրը չի պահպանվել. «Պատմութիւն Հայոց» անվանումը պայմանական է. հրատարակության համար հիմք դարձած ձեռագիրը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 1774) ունի հե-

¹ Մատենագիրք Հայոց, ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ., էջ 441-445:

² Տե՛ս նույն տեղը:

տևյալ ծավալուն նախաբան-խորագիրը. «Զպատմութիւն յերիս Հատուածս, զոր ասացեալ է տեառն Ուխտանիսի Մե[բաստիոյ] եպիսկոպոսի, ի խնդրոյ հաւրն Անանիայի՝ Նարեկականաց առաջնորդի եւ նախաշար վարդապետի. Հատուածն առաջին. Յաղագս թագաւորաց եւ հայրապետաց մերոց, եւ երկրորդն. Վասն բաժանման Վրաց, եւ երրորդն. Յաղագս մկրտութեան ազգին այնմիկ Ծաղն կոչեցեալ»: Այսինքն՝ երկն ունի նախերգանք եւ բաժանված է երեք մասերի, որոնք հեղինակն անվանում է հատվածներ՝

ա. Պատմութիւն հայրապետաց եւ թագավորաց Հայոց,

բ. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց,

գ. Յաղագս մկրտութեանն ազգին այնմիկ Ծաղն կոչեցեալ:

Նախերգանքը Վաղարշապատի հրատարակիչները անվանել ենք Գլուխ Ա եւ չեն գրել իսկական վերնագիրը: Նախերգանքը պատմական բովանդակությամբ սուղ է, սակայն ունի բարոյաքարոզչական հստակ ուղղվածություն: Երկասիրության առաջին եւ երկրորդ հատվածները մեզ հասել են թերի, 3-րդ հատվածը կորուսյալ է:

Առաջին հատվածը Հայոց ամփոփ պատմությունն է՝ Աղամից մինչև Տրդատ Գ Մեծ: Բաղկացած է 76 գլուխներից, որոնցից առաջինը ընծայական է Անանիա Նարեկացուն: Այս հատվածի պատմական արժեքը մեծ չէ, քանի որ Ուխտանեսը գրեթե կրկնել է Ագաթանգեղոսի, Զենոբ Գլակի, Եվսեբիոս Կեսարացու եւ հատկապես Մովսես Խորենացու արդեն հայտնի տեղեկությունները: Որպես սկզբնաղբյուր օգտագործել է նաև Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրութիւնը», եկեղեցական հայրերի ճառերը, վկայաբանությունները: Բայց նշենք, որ Ուխտանեսն ինքնուրույն կազմել է Հայոց թագավորների եւ կաթողիկոսների, հռոմեական կայսրերի ու քահանայապետերի ցանկեր, շարադրել I–IV դդ. Հայաստանի քաղաքական, կրոնական պատմությունը:

Պատմության երկրորդ հատվածում, որը բաղկացած 70 գլխից, Ուխտանեսը մանրամասն անդրադառնում է VI դ. վերջին եւ VII դ. սկզբին Հայ, Վրաց եւ Աղվանից եկեղեցիների փոխհարաբերություններին ու հատկապես Հայ եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման

պատմությանը: Վեր է հանել երկու եկեղեցիների միջև նախապես եղած կատարյալ միությունն ու համաձայնությունը: Ուխտանեսի համոզմամբ, Հայ եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշումը հայ և վրաց ժողովուրդներին զերծ է պահել օտար ազդեցություններից ու ենթակայության վտանգից՝ ունենալով կրոնաքաղաքական մեծ նշանակություն: Մակայն Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք սկսվել են եկեղեցական բաժանման խմորումներ, և Վրաց եկեղեցին VII դ. սկզբին վերջնականապես անջատվել է Հայ եկեղեցուց: Դատապարտելով Վրաց կաթողիկոս Կյուրիոնի անջատողականությունը՝ Ուխտանեսը հանգել է այն եզրակացության, որ պառակտումն իրականացվել է բյուզանդական եկեղեցու ու կայսրության դրդմամբ, և եկեղեցու անջատումը թուլացրել է մեր դիմադրողականությունը: Այս հատվածի շարադրման համար Ուխտանեսը օգտագործել է «Գիրք թղթոցը», VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, թուղթ-շրջաբերականներ, դիվանական վավերագրեր, վրացական փաստաթղթերի թարգմանություններ ևն:

Պատմության երրորդ հատվածն ունեցել է ընդգծված դավանաբանական, ազգագրական բնույթ: Այն բացահայտել է քաղկեդոնիկ հայերի (ծաթերի) կրկնամկրտության երևույթը, հայ եկեղեցու հետ հարաբերությունները: Պատմական և ազգագրական մեծ արժեք ունեցող հետազոտություն է եղել ծաթերի, նրանց բնակության տարածքի պատմաաշխարհագրական նկարագրի մասին: Երրորդ հատվածի բովանդակության մասին հակիրճ ակնարկ կա երկի նախերգանքում: Ցավոք, այս հատվածը կորուսյալ է, բայց նրա մասին տարբեր վկայակոչումներ կան հատկապես XIII դ. պատմիչ Մխիթար Այրիվանեցու աշխատանքում:

«Մարդկություն» հասկացությին վերաբերող բառերի քննությունը Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» երկում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբը գրաբարում հարուստ էր տարբեր միավորներով, որոնք հոմանշային հարուստ շարքեր էին կազմում: Բառերը գերազանցապես բնիկ հնդեվրոպական են և հա-

մագործածական հայերենի զարգացման բոլոր փուլերում, ինչպես նաև բարբառներում՝ հնչյունական որոշակի փոփոխություններով: Մեր լեզվի զարգացման ողջ ընթացքում այս բառերի մեծամասնությունը գրեթե ամբողջությամբ պահպանել է իր առաջնային իմաստները:

Ուխտանեսի երկում հանդիպած հնդեվրոպական ծագման *մարդ* նշանակող բառերն են՝ *ազգ, ազգական, ազգակից, ազգատոհմ, ականատես, ամուսին, այլազգ, անձն, անձնասեր, առաջնորդ, արարիչ, արբենակից, գող, գործակից, դիակ, եղբայրասեր, երգիչ, երկրաւոր, զարմ, ընկեր, թելադիր, թոռն, լիրբ, լծակից, ծանալթ, ծառայ, ծնող, հակառակորդ, հայալեզու, հիւանդ, հովիւ, հաւրաքոյր, մարդ, մեծամեծք, մեռեալ, միջնորդ, որբ, որսորդ, ուսումնասեր, ուսուցիչ, չարչարակից, սուրբ, սպասաւոր, վերակացու, տէր, տէրուրաց, տիկին, քեռորդի, օգնական, օրինադիր*: Ընդհանուր ունենք 50 միավոր:

Մեռ նշանակող բառերն են՝ *աղջիկ, այր, դուստր, եղբայր, կին, հայր, մայր, որդի, որձ, ուստր, տիկին, քույր, օրիորդ*՝ 13 միավոր:

Մարդ բառն այս հասկացության կենտրոնական բառերից է: Այն վաղնջական ծագում ունի: Բնիկ հնդեվրոպական է, հ. -ե * *mer* «մեռնել» առմատի * *mr-to* ենթակայական դերբայի ձևից, որը նշանակում է մեռնող³: Այսինքն՝ *մարդ* նախնական մտածողությամբ նշանակում է *մահկանացու*: Առաջնային է նաև մարդու հողածին լինելու գաղափարը, որն ամրագրված է Սուրբ Գրքում: Տարբեր լեզուների ընձեռնած փաստերը վկայում են, որ բանական էակի անվանադրման համար առանձնացվել են բազմաբնույթ հատկանիշներ: Հնդեվրոպական լեզվամտածողությամբ, ըստ Հ. Աճառյանի, մարդը երկու հիմնական սահմանում ունի. 1. Մահկանացու՝ անմահ աստվածներից տարբերվող, 2. Երկրածին, երկրային, որ ծագում է հ. -ե * *g'hmon-* սկզբնաձևից, հիշենք լատիներեն *homo* «մարդ» և

³ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Եր., 2008, էջ 7:

humus «հող» բառերը, նաև գոթերենում guma «մարդ», այս պարագայում մարդը երկնային արարածներին հակոտնյան է: ՆՀԲ-ում «հողածին» բառուսումնասիրությունում նշված է. «Ի հողոյ ծնեալ, ծնունդ երկրի, երկրածին, մարդ, աղամ»⁴, որից հետո միայն բերվում են մնացյալ իմաստները՝ «ամենայն կենդանի, մանաւանդ ցամաքային»: Իսկ «հողեղէն» անվան բացատրության մեջ նշված է. «...առաջին մարդն յերկրէ հողեղէն, որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնքս»⁵: Հայերենում երկրորդ ընկալման նախաձևը չի պահպանվել: Այս բառի քննությանն անդրադառնալով՝ Լ. Հովհաննիսյանը բացահայտում է հայերի նախնական մտածողության կապը հնդիրանական ժողովուրդների հետ, որոնց ընկալմամբ ևս մարդու առաջնային հատկանիշը հենց մահկանացու լինելն է, օրինակ՝ հին հնդկերենում marta «մարդ», martya «մահկանացու», պարսկերենում mard «մարդ», morden «մեռնել»⁶: **Մարդ** արմատը հանդես է գալիս նաև մի շարք բաղադրություններում, որից երկուսը՝ *նախամարդ* և *մարդասպան*, վկայված է Ուխտանեսի պատմության մեջ:

Տէր հնագույն բառի քննությունը ցույց է տալիս, որ ծագում է *տի-այր ձևից, սկզբնաձևն է տէայր-ը (հմմտ. միայն>մէն), որ կազմուած է տէ- և այր՝ «մարդ» բառերից. առաջինը, որ նշանակում է «մեծ», գտնում ենք նաև տիկին (*<տէ-կին «մեծ կին») և տիեզերք (*<տէ-եզերք «մեծ եզերք») բառերի մեջ. ծագումը՝ անձանթ⁷: **Տէր** բառը իմաստային մեծ բեռնվածություն ունի: ՆՀԲ-ում բառը բացատրվում է որպէս «իշխան՝ ի վերայ ծառայից և հպատակաց, և սեպհական ընչից, պէտ և գլուխ ազգի և երկրի՝ մարմնաւոր կամ հոգևոր»⁸: Ըստ այդմ՝ **տէրը** լայն իմաստով՝ ամեն ինչի գլխավորն է: Այս բառը հանդես է գալիս նաև որպէս հարգական մակդիր: Հաճախ նաև օգտագործվում է *Քրիստոս* և *Հայր Աստված* բառերի փոխարեն: Այս

⁴ **Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միքումէան, Հայր Մկրտիչ Ազեբեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 3:

⁵ Նոյն տեղում, հ. 2, էջ 117:

⁶ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 7-8:

⁷ **Հ. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, հ.4, էջ 402:

⁸ ՆՀԲ, հ.2, էջ 1437:

բառը արդի արևելահայերենի բացատրական բառարանում միայն մարդկություն, սեռ, տարիք ֆիզիկական դաշտին պատկանող 30 իմաստ ունի⁹: Զուգահեռ ընկալմամբ՝ *տէր*-ը նաև սեփականություն ունեցող անձն է: Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց» գրքում առավել հաճախ բառը հանդիպում է հատուկ անվան հետ զուգադրված՝ «Տէր Մովսէս», նման կապակցություններում այն հոգևոր դասի ցուցիչ է: Վկայված են **տէր** արմատով կազմված երկու բառ՝ **տիրասպան** և **տէրուրաց**:

Տիրասպան բառի երկրորդ՝ **սպան** արմատի ծագումն անհայտ է, իսկ **տէրուրաց** բառի **ուրաց** բայահիմքը ծագել է բնիկ հնդեվրոպական *or- «խոսել, կանչել» արմատից (ծիսական բառ է). հմմտ. հուն. "ρά «աղոթք, նզովք», լատ. orō «աղոթել», ռուս. ора́ть «գոչել»: Ենթադրաբար առնչվում է հ.-ե. *ar- «հրաժարվել, ժխտել» արմատի հետ¹⁰: Գ. Զահուկյանը հաստատում է Աճառյանի այս ստուգաբանությունը:

Տէր բառի բոլոր իմաստները պահպանվել և ընդլայնվել են հայոց լեզվի բոլոր փուլերում:

Հայր-ը բնիկ հնդեվրոպական բառ է, որը ծագել է հ.-ե. *pater, *pateros ձևից¹¹, Գ. Զահուկյանը համաձայն է Հր. Աճառյանի կատարած վերականգնմանը: ՆՀԲ-ում **հայր**-ը նշանակում է «այր կամ արու ծնող զաւակի, իրական կամ նմանական, առնչակից որդւոյ»¹², լայն իմաստով՝ «*նախահայր*»: **Հայրը** նաև հոգևոր ծառայություններ իրականացնող մարդն է՝ կուսակրոն հոգևորականը: Զուգահեռաբար բառն ունի հարգական կիրառություն: Հաճախ *Աստված* բառի փոխարեն է գործածվում՝ Սուրբ երրորդության գլխավոր դեմքը՝ Հայր աստված: Ուխտանեսի գրքում վկայված են բառի նշված բոլոր իմաստները:

Հայր բառը պահպանել է իր իմաստները լեզվի զարգացման բոլոր փուլերում և բարբառներում: Գործածվում է նաև *-իկ* մասնիկով, որը հիմնականում տարիքով մարդկանց դիմելաձև է:

⁹ **Էդ. Աղայան**, Արդի արևելահայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1437:

¹⁰ Տե՛ս Հ. Աճառեան, նշվ. աշխ., հ. 3, էջ 614:

¹¹ Նույն տեղում, էջ 31:

¹² ՆՀԲ, հ.2, էջ 32:

Ընկեր միավորը կազմված է **ընդ** նախդիր-նախածանցից և **կեր** արմատից՝ «*միասին ուտող*» իմաստով: **Ընդ**-ը ծագումով բնիկ հնդեվրոպական է *anti- («փոխարեն», «միասին» իմաստներով), զուգադրվում է նաև *ndhos նախաձևի հետ (տակ իմաստով): **Կեր** արմատը ծագում է բնիկ հնդեվրոպական *guer – «կլանել, ուտել» արմատից: ՆՀԲ-ում բառն ունի հետևյալ իմաստները՝ «ընգեր, զուգական, հաւասարակից, գործակից, մերձավոր, սրտակից, բարեկամ, կցորդ, բաժանորդ, համախոհ»¹³: Ի տարբերություն ՆՀԲ-ի՝ Ս. Մալխասյանցի բառարանում բառն առաջին իմաստով նշանակում է *սեղանակից, հացակից*¹⁴: Տարածված է նաև *այր, ամուսին* նշանակությունը:

Անձն բառը «Պատմութիւն Հայոց» գրքում լայն կիրառություն ունի: **Անձն** արմատը Հր. Աճառյանը, ինչպես նաև Գ. Զահուկյանը բխեցնում են հ.-ե *ang'hen ձևից «փչել, շնչել» իմաստից. «Հների մեջ հոգին, ըմբռնվելով իբրև շունչ կամ քամի, ծագում է նույն արմատից»¹⁵: ՆՀԲ-ում **անձ**-ը հետևյալ նշանակությունն ունի՝ «ինքնութիւն իմացական և բանաւոր էակի՝ դիմաւ որոշելոյ, անհատն բնութնակից դիմաւորաց, որ և ասի Դէմ կամ Անձնաւորութիւն, ևս և Հոգի»¹⁶: **Անձը** նախ և առաջ բացատրվում է որպես մարդ՝ իբրև անհատ: Մեր քննած բնագրում վկայված է *անձնասէր* կազմությունը, որը երկբադադրիչ է *անձն+ա+սէր*, երկրորդ արմատը նույնպես բնիկ հնդեվրոպական է՝ *k'er- «աճել, աճեցնել, սնել» արմատից¹⁷:

Մայր-ը բնիկ հնդեվրոպական է, հ.-ե *māte'r նախաձևից նույն նշանակությամբ: Հր. Աճառյանը բերում է ալբաներենի օրինակը, որտեղ *motre* արմատը նշանակում էր նաև «երեց քույր», որն իր կրտսեր հարազատների համար մոր դերն էր կատարում¹⁸: **Մայր**

¹³ ՆՀԲ, հ.1, ցուցակ 1, էջ 779:

¹⁴ **Սո. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, հ. 2, ցուցակ 1, էջ 63:

¹⁵ **Հ. Աճառեան**, նշվ.աշխ., հ. 1, էջ 208:

¹⁶ Նույն տեղում, էջ 192:

¹⁷ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 676:

¹⁸ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ.աշխ., հ.3, էջ 246:

արմատը ևս ունի կրոնական բովանդակություն, այսպես են դիմում միանձնուհի կույսերի առաջնորդներին:

Կին դարձյալ բնիկ հայկական ծագում ունի իր երկու հիմքերով էլ՝ **կին-կան**, երկրորդ ձևից ունենք հոգնակի թվի կազմությունները՝ *կանայք*, *կանանց* և այլն: Նախաձևն է հ.-ե *g^w en կամ *g^wēn-ը՝ հենց *կին* իմաստով, Հր. Աճառյանը իբրև առնչակից ձև հիշատակում է *աստվածուհի* իմաստով գործածվող սանսկրիտի *gna* արմատը¹⁹:

Տիկին բառը կազմված է երկու արմատից՝ տի + կին: **Տի** արմատին արդեն անդրադարձել ենք **տէր** բառի ծագումնաբանական քննությանն անդրադառնալիս:

Հնդեվրոպական ծագման մյուս միավորը՝ **այր**-ը, ըստ Գ. Ջահուկյանի՝ տարահիմք, անգամ տարարմատ կազմություն է, ենթադրաբար այր >*anrio-՝ *ario «տեր» իմաստով հիմքի ազդեցությանը ենթարկված²⁰: Հայերենի բառարաններում տրված է իր երկու հիմնային իմաստներով՝ 1. *Արու մարդ, չափահաս, արբունքի հասած, մահկանացու* և 2. *ամուսին, բնիկ* հնդեվրոպական բառ է, բայց, ինչպես Հր. Աճառյանը և Գ. Ջահուկյանն են նշում, նախաձևը դժվար վերականգնելի է:

Ստ. Մալխասյանցի բառարանում ունենք **էրիկ** և **էրիկմարդ** բառերը²¹, որոնք գրաբարյան **այր** սկզբնաձևի հնչյունափոխական տարբերակից է կազմվել՝ *այ>է+իկ→այրիկ>էրիկ*:

Այս բառը սահմանափակ գործածություն ունի արդի հայերենում, նրան փոխարինում է հիմնականում «*տղամարդ*» բառը:

Որդի սեռ ցույց տվող բառի ծագումը Հր. Աճառյանը բխեցնում է հ.-ե ***portiyo** նախաձևից, որի հիմքում *per/*por արմատն է «ձագ ծնել կամ բերել, երկնել» իմաստով²²: Գ. Ջահուկյանը առանձնացնում է *portuo- *per- հնդեվրոպական վերականգնված արմատները նույն իմաստային զարգացմամբ²³: Ուխտանեսի գրքում հավասարապես գործածվում են և՛ **որդի**, և՛ **ուստր** բառերը:

¹⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ.2, էջ 588-590:

²⁰ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 49:

²¹ **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 216:

²² Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 3, էջ 576:

²³ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 752 :

Ուստր բառը ծագում է հ.-ե *sukte´r նախաձևից՝ «որդի» իմաստով²⁴: Աճառյանն այս արմատի ծագումը բխեցում է կամ *seug- / *suq- «կաթ ծծել» իմաստով բառից, կամ *seu- / *su- «ծնվել» նշանակող ձևից: Գ. Ջահուկյանը միանշանակ կապում է հ.-ե *suk-te´r «ծնել» արմատի հետ²⁵:

Ուստր հնագույն կազմությունը գրեթե դուրս է մղվել գործածությունից. արդի բառարաններում տրված է *հին, բանաստեղծական* նշումով:

Դուստր-ը հնդեվրոպական այն արմատների շարքն է համարում, որոնք նշանակում էին արյունակից մոտ ազգականներ *-ter* ածանցով, հ.-ե *dhukte´r նախաձևից²⁶: Գ. Ջահուկյանն ընդգծում է ավելի նախնական *dhughbte´r արմատը²⁷: ՆՀԲ-ում բառը բացատրված է որպես «էզ գալակ, աղջիկ գալակ»: Աճառյանը իր բառարանում բերում է նաև նախնական արմատի *աղիջ* ձևը և նշում է փաղաքշական ձևը՝ *աղջիկ*, որը հնում սակավ գործածություն է ունեցել: *Աղիջ* արմատի բովանդակությունը ընդգրկուն է՝ *կույս, օրհորդ, մանկամարդ կին, նաժիշտ*, նաև *ղիցուհի*, ստուգաբանությունը հնդեվրոպական է, բայց զուգադրվում է տարբեր արմատների հետ, Հր. Աճառյանը այն կապում է *parqʷhe նախաձևի հետ, իմաստային բացատրությունները ևս տարբեր են՝ «կույս», «պաշտպանել», «սնուցել» նշանակություններով: Գ. Ջահուկյանը սկզբնաձև համարում է *pəliiā կամ *pōu «փոքր» ձևերը՝ «մտրուկ, քուռակ, աղջիկ» իմաստներով: ՆՀԲ-ում վկայված է միայն ճ-ով տարբերակը՝ **աղիճ**, որպես հին բառ²⁸:

Միջին հայերենում **աղջիկ** կազմությունը դառնում է համագործածական՝ սահմանափակելով **դուստր** բառի կիրառությունը: Այժմ այն բանաստեղծական, բարձր ոճի բառ է և սակավ գործածական է:

Իգական սեռ բնութագրող մյուս բառը, որ հանդիպում է ուսումնասիրվող գրքում, **օրհորդն** է: Կրկին բնիկ հնդեվրոպական բառ է:

²⁴ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ. 3, էջ 611:

²⁵ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 606:

²⁶ Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 686:

²⁷ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 204:

²⁸ ՆՀԲ, հ.1, էջ 40:

Ըստ Հր. Աճառյանի արմատական բառարանի այս բառը ծագում է պահլավերեն **afrinam* «օրհնեմ, գովեմ» ձևից, որը կազմված է *a* նախամասնիկով *fri-* «սիրել, յարգել, գովաբանել» արմատից²⁹: Ջահուկյանը նշում է, որ բաղադրված է *աւր* հնդեվրոպական (**rou-* «փոքր գավակ, ձագ» արմատից) և *-որդ* (=որդի) բաղադրիչներով: Այս բառը գործածվում է հարգական իմաստ արտահայտելու համար: Ուխտանեսի գրքում բառի գործածության մի քանի դեպք է հանդիպում:

Այս կազմությունն իր հիմնական իմաստը պահպանել է հայերենի զարգացման ողջ ընթացքում, ավելին՝ իմաստն ընդլայնվել է, այժմ **օրիորդ**-ը նաև հարգական դիմելաձև է:

Եղբայր բառը նույնպես ծագումով բնիկ հնդեվրոպական է՝ **bhrater* «եղբայր» արմատից³⁰: ՆՀԲ-ում ունի «հարազատ արու, համահայր կամ համամայր զուակ» իմաստները³¹: Բառն ունի նաև կրոնական իմաստ՝ վանքի միաբանության անդամներից յուրաքանչյուրը մյուսների նկատմամբ: Երբեմն օգտագործվում է որպես հարգական դիմելաձև անձանոթ մարդկանց դիմելու համար: Ուխտանեսի պատմության մեջ հանդիպում ենք **եղբայրասեր** բնիկ հնդեվրոպական բաղադրությանը, երկրորդ արմատը նույնպես բնիկ հնդեվրոպական է՝ **k'er-* «աճել, աճեցնել, սնել» արմատից³²: Բառը համագործածական է հայերենի զարգացման բոլոր շրջաններում՝ թե՛ գրական, թե՛ խոսակցական, թե՛ բարբառային:

Եղբորը առնչակից մյուս համագործածական բառը **քույր**ն է, որը ծագել է բնիկ հնդեվրոպական՝ **suésör-* «քույր» արմատից. հմմտ. հ. հնդկ. *svásar-*, ավ. *xvanhar-*, լատ. *soror* «քույր» արմատներից³³: Բուն իմաստով՝ «ղուստր ծնողաց և քույր կոչեցեալ եղբարց»³⁴: Սակայն ունի նաև այլ նշանակություն՝ 1. Բժշկական անձնակազմին պատկանող կին (աղջիկ)՝ բժշկական հիմնարկներում: 2. Կուսանանց

²⁹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ.4, էջ 620:

³⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 213:

³¹ ՆՀԲ, հ. 1, էջ 652:

³² Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 676:

³³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 785:

³⁴ ՆՀԲ, հ. 1, էջ 1011:

վանքերում՝ ամեն մի կույս մյուս կույսերի վերաբերմամբ: Ուխտանեսի գրքում բառը հաճախադեպ է ընդհանուր՝ *կին* իմաստով: Մինչ այժմ բառը մնում է համագործածական:

Պատմության մեջ ունենք նաև **հաւրաքոյր** կազմությունը, և **քեռորդի բառը**, վերջինս կազմված է *քեռ* (քույր բառի սեռական)+*որդի* արմատներից՝ բնիկ հնդեվրոպական ծագման:

Ընտանեկան հարաբերություն ցույց տվող մյուս բառը **ծնող**-ն է, որը ծագում է հնդեվրոպական *gen- «ծնել» արմատից³⁵ և *ող* դերբայական ածանցից, որի -ադ տարբերակը ծագում է հ.-ե. -tel- ածանցի թեմատիկ -tlo- ձևից՝ նախորդող -a-ով կամ --ով. հմմտ. *-genatlo-> ծնադ -ող տարբերակը կամ -ադ-ի վաղ մենաբարբառացած ձևն է³⁶:

Ազգ տարածված գոյականը մեր ուսումնասիրած գրքում *տոհմ, գերդաստան զարմ* բառերի հոմանիշն է, իմաստային դաշտն ավելի լայն է, գրաբարում այն նշանակում էր ընդհանրապես *սեռ, տեսակ, կարգ, դաս*, ապա նաև՝ *տուն, ժողովուրդ, ամբոյս, ազգատոհմ*³⁷:

Ազգ բառից կազմված են հետևյալ բառերը՝ **ազգական, ազգակից, ազգատոհմ, այլազգ** բառերը: **Այլազգ** բառում *այլ*-ը բնիկ հնդեվրոպական է՝ *alio-՝ *al-«այլ, ուրիշ» արմատից³⁸: **Ազգակից** բառի *կից* արմատը ևս բնիկ է՝ geit-so- կամ geit-sk-³⁹:

Ազգակցական կապ ցույց տվող մյուս միավորը **թոռն** է: Այս բառը ծագումով բնիկ է *tor արմատից⁴⁰: Ջահուկյանը նույնպես նշում է, որ կազմված է *tor-no-՝ *ter- «թույլ, քնքուշ արմատից⁴¹: ՆՀԲ-ում «Ջաւակ զավակի, զարմ, սերունդ» իմաստային բացատրություններն ունի⁴²: Ուխտանեսի գրքում բառը գործածվել է մի քանի անգամ՝ արդեն նշված իմաստներով: Հայերենի զարգացման ընթացքում այս բառը իմաստային փոփոխություններ չի կրել:

³⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 785:

³⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 801:

³⁷ ՆՀԲ, հ. 1, էջ 6:

³⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 48:

³⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 407:

⁴⁰ **Հր. Աճառեան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 198:

⁴¹ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 272:

⁴² Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 819:

Առաջնորդ բառը կազմված է առ «մոտ, դեպի, կողքին, համար, փոխարեն, (հունարեն՝ $\pi\rho\acute{o}\sigma$)» բնիկ հնդեվրոպական նախդիրից, աջ՝ բնիկ հնդեվրոպական՝ *sadhio- *se(i)dhi- «ուղիղ դեպի նպատակը գնալ, նպատակաուղղվել, դիմել» արմատից և որդ՝ հավանաբար բնիկ հնդեվրոպական վերջածանցից: ՆՀԲ-ում առաջին իմաստով նշանակում է «Առաջին, առաջի, պիրինճի»⁴³: Բառը ՆՀԲ-ում և Մալխասյանցի բառարաններում նաև հանդիպում է «կնքահայր» իմաստով, որը այժմ կորուսյալ նշանակություն է: Առաջնորդը նաև հոգևոր ծառայություններ իրականացնող մարդն է: Այժմ նկատվում է բառիմաստի նեղացում: Առավել շատ գործածվում է *դեկավար, պարագլուխ* իմաստներով:

Գլխավոր բառը կազմված է բնիկ հնդեվրոպական *ghöls-kho- «գլուխ» արմատից. հմմտ. լիտվ. galvą, հ. u. glava «գլուխ»⁴⁴ և ավոր վերջածանցից, որը ծագում է հ.-ե. -bher- «կրել, բերել» ձայնդար-ձային -bhor- ձևից⁴⁵:

Արարիչ բառը կազմված է արար արմատից և -իչ ածանցից: Բնիկ հնդեվրոպական՝ *arətrom-՝ *arə-«վարել» արմատից՝ *-trom գործիքանիշ ածանցով⁴⁶: Շատ հաճախ այս բառով նկատի են ունենում Աստծուն՝ իբրև արարիչ ամեն ինչի:

Սուրբ բառը բնիկ հնդեվրոպական *kʷebro արմատից է ծագում: Սուրբ արմատի բովանդակությունն ընդգրկում է: ՆՀԲ-ում այս բառը նշանակում է «մաքուր, անարատ, յստակ և նուիրական, ածային, սրբազան, ածարեալ, վեհ, վսեմ, արգոյ, ընտրեալ, ողջախոհ, պարկեշտ, նազելի, արդար, անմեղ, երանեալ»⁴⁷: Ստ. Մալխասյանցի բառարանում նշվում է *անձ*, որ ճանաչված է եկեղեցու կողմից: Իսկ «Արդի հայերենի բացատրական բառարանում» առաջնային իմաստով նշանակում է «Աստվածային շնորհով՝ հատկությամբ օժտված,

⁴³ Տե՛ս նույն տեղը, հ.1, էջ 290:

⁴⁴ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 163:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 802:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, նշվ. աշխ., էջ 85:

⁴⁷ ՆՀԲ, հ.2, էջ 733:

աստվածային Ս. Հոգի»⁴⁸: Բառի իմաստային շարքում մեծ դեր ունի կրոնական իմաստը: Այն պահպանել է բոլոր իմաստները և արդի արևելահայերենում գործածվում է ընդլայնված նշանակությամբ: Գրքում հանդիպում ենք ինչպես գոյականական նշանակությամբ, այնպես էլ ածականական: Հաճախակի է գործածությունը հատուկ անունների՝ սրբացված անձանց հետ: «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է հենց այս իմաստը՝ «Իր գործունեությամբ՝ կրոնի համար նահատակվելով՝ հերոսական գործերով ևն սուրբ հայրերի շարքը դասված մարդ»⁴⁹:

Աղբատ բառը ծագում է բնիկ հնդեվրոպական *(o)lika- նախաձևից *leig/k- «պակասավոր, խեղճ» արմատից⁵⁰: Ջահուկյանի համոզմամբ՝ ավելի հավանական է *ln- «քաղցած, վատ արմատից, որտեղից՝ աղց «կարիք»», նախ՝ հնդեվրոպական *leig/k-ը, ամենայն հավանականությամբ կապված է *el-k-, *el-g- (>հայ. աղկաղկ) արմատի հետ⁵¹: Բառը գործածվում է ինչպես ածական, այնպես էլ գոյական: ՆՀԲ-ում ունի հետևյալ բացատրությունը՝ «Չքաւոր յաղիսից կամ յաղցից, անինչ, տնանկ, ցականեալ, կարօտեալ, տառապեալ, մուրող, ախտոտ, մուրացկան»⁵²: Համագործածական բառ է: Իմաստի փոփոխության գրեթե չի ենթարկվել:

Ջարմ տարածված գոյականը մեր ուսումնասիրած գրքում *տոհմ*, *ազգ* բառերի հոմանիշն է: Կազմված է գ մասնիկով **արմ** արմատից⁵³, որը ծագումով բնիկ հնդեվրոպական է: Գ. Ջահուկյանը նույնպես արմատ է համարում արմ-ը՝ *or-mo-, *ormen-, *ormenos՝ *er- «շարժել, հուզել, բարձրացնել» արմատից⁵⁴: ՆՀԲ-ում՝ «Ի միոյ արմատոյ սերունդ, շառաւիղ միոյ ազգատոհմի, առանձին ազգ տան միոյ, ցեղ. տոհմ, ծնունդք, յաջորդութիւն ազգի, զաւակ, մացորդ»⁵⁵:

⁴⁸ Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ.2, էջ 1348:

⁴⁹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ.2, էջ 1348:

⁵⁰ Հր. Աճառեան, նշվ. աշխ., հ.1, էջ 137:

⁵¹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 40:

⁵² ՆՀԲ, հ.1, էջ 45:

⁵³ Հր. Աճառեան, նշվ. աշխ., հ.4, էջ 620:

⁵⁴ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 93:

⁵⁵ ՆՀԲ, հ.1, էջ 720:

Միջին դարերում բառը մեծ գործածություն է ունեցել, իսկ այժմ գործածությունից դուրս է մղվել, հանդիպում ենք գրքային բառապաշարում:

Մարդ հասկացույթին են վերաբերում նաև հետևյալ միավորները՝ **արբենակից, բազկակից, գաւառակից, գործակից, լծակից, չարչարակից**, որոնք ունեն ընդհանուր **կից** արմատը՝ հ. է. geit-so-կամ geit-sk: Անդրադառնանք այս բառերի մյուս արմատների ստուգաբանությանը. **արբ**՝ *srbh-՝ srebh-, *srobh- «ծծել, կլանել»: Առավել հետաքրքիր և կարևոր են **չար** հիմնաբառի կառուցվածքը և բացատրությունը. **չար**-ը հնագույն կազմություն է. Հր. Աճառյանը բերում է մի շարք ստուգաբանական վարկածներ, որոնցից համոզիչ և փաստարկված է բառի նախածանցավոր տարբերակը. չ-ն ժխտական է, որն ավելացել է «ար» *բարի* նշանակության արմատին, վերջինս առկա է նաև հունարենում «լավագույն» իմաստով: Սա Կ. Պոկոնոու վերականգնումն է, ընդ որում **ար** արմատը համադրվում է հ.է. *ar jarp/jarնել, ար/առնել* արմատների հետ: Մենք լեզվաբանորեն և պատմականորեն առավել համոզիչ ենք համարում այս ստուգաբանությանը՝ ելնելով **ար** արմատի տարածված և ինչ-որ առումով սրբազան լինելու իմաստից. հայկական դիցարանը, և բանահյուսական աղբյուրները ապացուցում են **ար** արմատի տարածվածությունը՝ իբրև բարու և արարման հիմնական արտահայտիչ, որն արտացոլված է նաև մեր **արմեն** > **ար+** **մեն** ժողովրդանվան մեջ: **Չար**-ի հականիշ **բարի** արմատում **ար**-ը ևս վկայված է:

Հր. Աճառյանը բերում է *չար* բառի նաև պահլավական գուգաձևությունը, որտեղ **չ**-ն արդեն արմատական բաղադրիչ է čaryā «գեշ, վատ» իմաստով⁵⁶:

Լոյծ/լուծ արմատը նույնպես բնիկ է՝ *iugo *ieu- «կապել» արմատից է: **Գաւառ** բառը բնիկ ծագում ունի *ghāu «տարածք» արմատից⁵⁷, իսկ **գործ**-ը՝ *uorgo «գործել» արմատից⁵⁸:

⁵⁶ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 624:

⁵⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 153:

⁵⁸ Նույն տեղը, էջ 170:

Ուխտանեսի գրքում մարդու զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող բնիկ հնդեվրոպական բառերն են՝ **որսորդ**՝ բնիկ հնդեվրոպական՝ *porkʰos «ձկան որս» արմատից և **որդ**՝ ածանցից, **երգիչ**՝ բնիկ հնդեվրոպական՝ *erkusʰ՝ *erku- «ճառագայթել, շողալ, հնչել, երգել, գովերգել» արմատից և **իչ**՝ ածանցից:

Մեր բերած ստուգաբանական և իմաստաբանական հետազոտությունն ապացուցում է, որ *մարդկություն/մարդ* հասկացույթ նշանակող բոլոր հիմնային միավորները հայերենում գերազանցապես բնիկ են, համագործածական՝ գրական հայերենի բոլոր փուլերում, բարբառներում և խոսվածքներում, գալիս են նախալեզվից և ունեն հազարամյակների պատմություն: Հին հայերն ունեցել են բարձր զարգացած հասարակական կյանք՝ իր հստակ աստիճանակարգությամբ, բազմազան հարաբերություններով, ազգակցական, բարեկամական և մասնագիտական տարբեր ենթահամակարգերով, որոնց անվանումները հնդեվրոպական են: Փոխառություններն այստեղ սակավաթիվ են, դիպվածային:

Մարդկություն/մարդ հասկացույթի բառերը հայերենի պատմության ընթացքում գրեթե փոփոխություններ չեն կրել, դրանք կայուն միավորներ են. վկայված փոփոխությունները վերաբերում են որոշ բառերի հիմնական բառաֆոնդից դուրս մղվելուն, այսինքն՝ հնաբանություններ դառնալուն, այդպիսիք են՝ *զարմ*, *ուստր*, *դուստր*, *այր*: Միաժամանակ ունենք նաև իմաստի ընդլայնման դեպքեր, երբ *մարդ* հասկացույթի շատ բառեր, իրենց հիմնական նշանակությանը զուգահեռ, ձեռք են բերել հարգական կամ մտերմական դիմելաձևերի կիրառություն, ինչպես օրինակ՝ *ընկեր*, *հայրիկ*, *մայրիկ*, *քույր*, *եղբայր*, *որդի*, *աղջիկ*, *օրհորդ*, *տիկին*: Որոշ միավորներ ձեռք են բերել ակնհայտ եզրույթային իմաստ, ինչպես՝ *առաջնորդ*, *գործակից*, *լծակից*, *ազգատոհմ*՝ հարստացնելով արդի հայերենի բառապաշարը:

**«ՏՈՒՆ, ԲՆԱԿԱՎԱՅՐ» ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՌԵՐԸ ՄՈՎՍԵՍ
ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Քերթողահայր Մովսես Խորենացին թողել է հարուստ ժառանգություն՝ հեղինակելով ճառեր, ներբողյաններ, օրհներգեր, թղթեր՝ *«Ներբողեան Հռիփսիմեաց», «Ճառ Վարդավառի», «Թուղթ առ Մահակ Արծրունի»,* թարգմանություններ՝ *«Պատմութիւն վարուց Աղեքսանդրի», «Պիտոյից գիրք»* ևն: Մակայն Խորենացու լեզվաշինարարական գործունեության հիմնական սկզբնաղբյուրը 5-րդ դարի մատենագրության գագաթ համարվող *«Պատմութիւն Հայոց»* երկն է, որը գրվել է իշխան Սահակ Բագրատունու առաջարկով: *«Աշխատութիւնը յայտնի է Պատմութիւն Հայոց վերնագրով, հեղինակային նախնականը պիտի լինի՝ Պատմութիւն Հայոց Մեծաց»*¹: Երկը բաղկացած է երեք հատվածից, որոնք կոչվում են **գրքեր**:

Առաջին գիրքը վերնագրված է *«Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց»*, որը բաղկացած է 32 գլուխներից: Շարադրանքը սկսվում է Հայկ նահապետի առասպելից, որը շարադրելիս հայերի ծագումը կապում է Աստվածաշնչի հետ: Փառաբանվում են Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ նահապետները, Պարույր Սկայորդի, Երվանդ Սակավակյաց, Տիգրան Մեծ թագավորները:

Երկրորդ գիրքը կոչվում է *«Միջակ պատմութիւն մերոցն նախնեաց»*: Կազմված է 92 գլխից: Աշխատության այս հատվածում ներկայացվում է Հայաստանում Արշակունիների թագավորության շրջանը, քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն:

Երրորդ գիրքը՝ *«Աւարտաբանութիւն մերոց Հայրենեաց»*, կազմված է 68 գլխից: Պատմվում է Տրդատ Մեծի գահակալությունից հետո Հայաստանում տիրող քաղաքական իրադրության մասին, ներկայացվում է ազգային պետականության կորուստը, հայ կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից մեկը՝ գրերի

¹ Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1739:

գյուտը: Հեղինակը դառնագին ցավով անդրադառնում է նաև իր ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահվանը:

«Պատմութիւն Հայոցը» ավարտվում է հանրահայտ «Ողբ»-ով, որը ներկայացնում է պետականության կորստի ծնած չարիքները: Խորենացու երկը դարեր շարունակ ծառայել է իբրև ազգային պատմության ձեռնարկ, որի հետևանքով շատ անգամներ ընդօրինակվել է՝ կրելով բնագրային որոշ փոփոխություններ:²

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը հետազոտական լայն հնարավորություններ է ստեղծում ոչ միայն պատմագիտական, այլև լեզվաբանական առումներով: Լինելով 5-րդ դարի հայ պատմագրության ամենահիմնավոր սկզբնաղբյուրներից մեկը՝ «Պատմութիւն Հայոցը» հարուստ նյութ է հաղորդում հայ ժողովրդի ծննդաբանության, անցած ճանապարհի, վերելքների և անկումների մասին: Պատմագիտական ուսումնասիրությունների աղբյուր լինելուց բացի՝ այն նաև լեզվաբանական տարբեր հետազոտություններ թլօքելտ է:

5-րդ դարի գրական լեզուն հին հայերենն էր՝ գրաբարը, որը ժողովրդախոսակցական և գրական լեզու էր մինչև 12-րդ դարը: «Պատմութիւն Հայոց» երկի լեզվի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ավելի խոր պատկերացում կազմելու դասական հայերենի հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին:

Թեև ոսկեդարի հայ մատենագրության պատմիչները և նրանց երկերը տարբեր ժամանակներում բազմաթիվ հետազոտողների կողմից ուսումնասիրության են ենթարկվել, սակայն բառապաշարի առանձին իմաստային դաշտերը, հասկացությունները դեռևս հանգամանալի վերլուծության ենթարկված չեն: Մենք քննել ենք Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարը՝ ծագումնաբանական, իմաստաբանական և բառակազմական վերլուծության ենթարկելով զուտ *բնակավայր*, *տուն* իմաստային դաշտի միավոր-

² Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում:

ները: Զուգահեռաբար դասական հայերենի այդ բառերը համեմատության մեջ ենք դրել արդի արևելահայերենի նույնանուն միավորների հետ: Նման առանձին հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել հայոց լեզվի բառապաշարի առանին իմաստային դաշտերի և հասկացությունների միավորների ձևավորման տարժամանակյա ընթացքը, դրանց ազդեցությունը նոր գրական հայերենի բառապաշարի վրա: Այսինքն՝ լուծվում են հետևյալ խնդիրները.

ա) բնութագրվում և առանձնացվում են *բնակավայր, տուն* իմաստային դաշտի հիմնաբառերը, ըստ ծագման,

բ) քննվում են հիշյալ բառերի հոմանշային շարքերը, հնչյունափոխական տարբերակները, դրանցով կազմված դարձվածքային միավորները,

գ) վեր են հանվում 5-րդ դարի գրաբարի կենսունակ բառակազմական կաղապարները, ածանցումներն ու բառաբարդումները:

ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՏՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Լեզվի բառապաշարը մշտապես եղել է լեզվաբանների ուսումնասիրության կենտրոնում: Արդի լեզվաբանները գործուն զբաղվում են բառապաշարի համակողմանի քննությամբ՝ բացահայտելով բառերի նախնական, առաջնային իմաստները, տարանջատելով բնիկ և փոխառյալ բառաշերտերը, տվյալ լեզվին հատուկ կաղապարները, բառերի հնչյունական բնութագրերը, ինչպես նաև լեզվի պատմական զարգացման ընթացքում դրանց կրած իմաստային, հնչյունական փոփոխությունները:

Առանձնակի կարևորություն ունի բառապաշարի տարբեր իմաստային դաշտերի քննությունը: Հայերենի բառապաշարում, ընդունված դասակարգմամբ, տարբերակվում են բնիկ ծագման հետևյալ իմաստային դաշտերը. ա) ֆիզիկական աշխարհ, բ) մարդկություն, սեռ, տարիք, գ) մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ, դ) կենդանիներ, ե) ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն, զ) հագուստ, անձնական զարդարանք և խնամք, է) բնակարան, տուն, կահկարասի, ը) երկրագործություն և բուսականություն, թ) շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն ևն¹: Իմաստային դաշտերի այս շարքը չի սահմանափակվում միայն թվարկվածներով. դրանք բազմազան են, սակայն մեր այս հետազոտության հիմքում են *բնակավայր, տուն* նշանակող բառերը, դրանց ծագումնաբանական և բառակազմական բնութագրերը:

Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում կիրառական լայն հաճախականություն ունեն *բնակավայր, տուն* նշանակող բառերը, որոնց շարքում ճնշող մեծամասնություն են կազմում բնիկ կամ հնդեվրոպական ծագում ունեցողները: Ունենք նաև փոխառյալ, ինչպես նաև հիբրիդ՝ բնիկ և փոխառյալ արմատներով կաղապարներ.

¹ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 133:

վերջիններս բավական մեծ թիվ են կազմում, որոնց կանդիդատ-նանք համապատասխան ենթագլուխներում:

Հետազոտության սույն հատվածում կքննենք *բնակավայր, տուն* նշանակող բառերի ծագումնաբանական և ստուգաբանական խնդիրները, կիրառական առանձնահատկությունները, պատմա-կան զարգացման ընթացքում կրած իմաստային և հնչյունական փո-փոխությունները:

1.1 Բնիկ բառեր

Հնդեվրոպական նախալեզուն պարունակում է 2223 արմատ, որից, ըստ Հր.Աճառյանի, 713-ն է ժառանգել հայերենը: Ընդհանուր հաշվարկներով այսօր բնիկ արմատների թիվն արդեն անցնում է 1000-ից, հետևաբար կարող ենք ասել, որ հայերենը պահպանել է հնդեվրոպական նախալեզվի արմատների կեսը:

Այս ենթագլխում դասակարգել ենք Խորենացու երկում *բնակա-վայր, տուն* իմաստային դաշտի բնիկ բառերը՝ ըստ իրենց ստուգա-բանական վարկածների: Իբրև հիմք ընդունել ենք Հր.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (1926թ.) և Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանը» (2010թ.): Վիճելի խնդիր-ների և տարակարծությունների պարագայում նախապատվությու-նը տվել ենք Գ. Ջահուկյանի ստուգաբանություններին, քանզի դրանք առավել նոր շրջանի հետազոտությունների արդյունք են:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերի հիմնաշերտը բաղկացած է բնիկ կամ հնդեվրոպական ծագման բառերից: Դուրս բերված բառերից շուրջ 55-ը բնիկ են՝ **երկիր, տեղի, տուն, տանիք, հայրենիք, ձմերոց, դա-դարք, դուռն, կողմն, կողմնակալութիւն, աջակողմն, ձախակողմն, ամուրն, ամրոց, վերնատուն, առագաստ, հովանոց, այր (քարայր), օթանոց, աղքատանոց, եղբայրանոց, ամբութիւն, կալուածք, ընտա-նիք, եգր, գետեգր, արեւելք, արեւմուտք, ծով, ծովեզերայք, լեռոն, լեռնակողմն, միջոց, բլուր, ձոր, անձաւ, քարանձաւ, երկին/երկինք, մաւր/մօր, հարաւ, հարաւակողմն, հիւսիսի, նաւ, նաւահանգիստ,**

նաւակառոյց, գաւառ, գիւղ/գետ, կղզի, ցամաք, սենեակ, տէրութիւն, տիեզերք, տանուտէրութիւն, գաւտի/գօտի, ածու ևն:

Հիշյալ շարքում կենտրոնական է **տուն** բառը, որը առաջ է եկել ***dem-, *dem(o)-** «կառուցել, իրար հարմարեցնել» արմատից²: Այս ձևը հայերենում չի պահպանվել, սա-կայն Աճառյանը բերում է հունարենի **δέμω**, գոթերենի **timrjan**, գերմաներենի **zimmern** ձևերը, որոնք նրա ժառանգներն են, իսկ «այս *հնիս*. **dem-, demā-** «շինել, կառուցել» արմատն էլ համարում է աճած՝ պարզական **dē-** «կապել» արմատից, որի ժառանգն է *հյ*. **տի** «կապ»³: Ջուզահեռ նշում է, որ հայերեն **տուն** բառն առաջացել է *հնիս*. **dōm** ձևից, իսկ **domu-** ձևը պահպանվել է *տանուտէր* բառի մեջ:

Երկում առկա են նաև *տուն* բառով բաղադրյալ կառույցներ՝ **տուն Թորգոմայ**, **տուն Տեան**: **Թորգոմ** անձնանվան ծագումը կապվում է եբրայական **Thogarmā** անվան հետ (այս անունն էր կրում Նոյի որդի Հաբեթի որդի Գամերի երրորդ որդին), որն ունի նաև **Thorgamā** տարբերակը: Վերջինից էլ հունարեն տառադարձված է **Θοργαμά, Θεργαμά, Θοργομά**, որտեղից էլ առաջ է եկել հայերեն *Թորգոմա* ձևը⁴: Ս.Գրքի մեկնիչները, «տուն Թորգոմայ» ասելով, հասկացել են Հայքը՝ Հայաստանը: «Տուն Տեան» (Տիրոջ՝ Աստծո տուն, եկեղեցի) կապակցության երկրորդ բաղադրիչը՝ *Տեան, տէր* բառի սեռական հոլովաձևն է. վերջինս կազմված է **տի** «մեծ» և **այր** «տղամարդ, այր, մարդ» բաղադրիչներից: *Տի* և *այր* բառերի ծագումը բնիկ հնդեվրոպական է, առաջինը՝ ***dī-to-**՝ ***dā(i)-** «բաժանել» արմատից⁵, երկրորդի բուն նախաձևը, Ջահուկյանի նշմամբ, դժվար վերականգնելի է⁶: Ենթադրվում է, որ հնդեվրոպական ***anrio-** ձևից է ծագել, որը ենթարկված է ***ario-** «տեր» հիմքի ազդեցությանը, սեռ. **անն** < ***anros**, տր. **անն** ***anrai-**: Երկում գտնում ենք նաև **տուն** և **տէր** արմատներով **տանուտէրութիւն** բառը:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 735:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1926, էջ 428:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942, էջ 343:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 728:

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 49:

Էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **վերնատուն** բառի իմաստը տրվում է. *1. տան վերնի հարկը, վերնահարկ: 2. (եկեղ.): Եկեղեցիներում՝ դռան վերևը շինված հարկը՝ կանանց համար: 3. (պատմ.): Կուռքերի բարձրադիր մեհյան⁷*: Նշյալ բոլոր իմաստները ժառանգել ենք գրաբարից: **Վեր** արմատը ծագել է ***uper** «վեր, վրա» արմատից, իսկ **-ին** վերջածանցը ծագում է հնդեվրոպական ***-no-**, ***-eno-** ածանցներից, մասամբ նաև ***-ino-** տարբերակից:

Բնակավայր, տուն իմաստային դաշտի **տանիք** բառը «Նոր բառգիրք հայկա-գեան լեզուի» գրքում (այսուհետ՝ ՆՀԲ) հետաքրքիր կերպ է բացատրված. «*Տեղի տափարակ կամ ճեմելիք ի վերայ տան⁸*»: Ստ.Մալխասյանցի և Էդ.Աղայանի բացատրական բառարաններում տրվում է *շինության վրայի ծածկը, վերին տափակ երեսը* բացատրությունը: Բառի հիմքում ընկած է *տուն* արմատը, որը սեռական հոլովաձևով է հանդես գալիս՝ **տան**, իսկ **-իք** վերջավորությունը **-ի** ածանցի և **-ք** հոգնակերտի միությունն է. դարձյալ բնիկ է: *Տանիք* հիմքով առկա է նաև **ընտանիք** բառը՝ *տուն* նշանակությամբ:

Մեզ հետաքրքրող իմաստային դաշտի կենտրոնական բառերից է նաև **երկիրը**: Ծագումը կապվում է հնդեվրոպական ***erdu-**, ***er-** (***er-t-**, ***er-u-**) «երկիր» արմատի հետ: Հր.Աճառյանը բերում է նաև Հովհ.Երզնկացու մեկնությունը, ըստ որի բառը ստուգաբանվում է **երկու իր** կամ **երկու կրող⁹**: Խորենացու երկում վկայված են նաև *երկիր* բառով կազմված բաղադրյալ կարևոր կառույցներ, որոնց թվում են՝ **երկիր Արարադայ, երկիր Աւետեաց, երկիր Խաղտեաց, երկիր Խուժաստանի, երկիր Հայոց, երկիր Յունաց, երկիր Պարսից, երկիր Քուշանաց** ևն: Սրանք հատուկ անուններ են՝ տեղանուններ:

Երկիր Արարադայ և *երկիր Հայոց* կապակցություններով նկատի է առնվում Հայոց աշխարհը, հայերի բնակության վայրը, երկի-

⁷ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1384:

⁸ Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միսմելեան, Հայր Մկրտիչ Աւգերեան // Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979, էջ 843:

⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 63:

րը: **Արաքաղ** հայոց միջնաշխարհի անվանումն է՝ ենթադրաբար խաղդիական **Urartu** ձևից ծագող¹⁰: Այսօր այն դարձել է նաև արական անձնանուն: **Հայ** ժողովրդանվան ծագման վերաբերյալ կան բազմաթիվ՝ միմյանցից բավական տարբեր վարկածներ, սակայն մենք հիմք ենք ընդունում ամենալայն տարածում ունեցող մեկնությունը, ըստ որի, *հայ* արմատից են ծագում **Հայք** և **Հայկ** հատուկ անունները: *Հայք* ձևը «Բառգիրք Հայոց»-ում նշանակում է «հսկայք», իսկ *Հայկ*-ը՝ «փոքր»¹¹, թերևս ելնելով *Հայ+իկ>Հայկ* բառակազմական կաղապարից, որտեղ *-իկ*-ը դիտարկվել է որպես նվազական-փաղաքական ածանց:

Երկիր Աւետեաց. Պաղեստինն է՝ այն երկիրը, որն Աստված խոստացել էր ժառանգություն տալ հրեաներին: Նշանակում է նաև «դրախտային, իդեալական երկիր»: Հիմքում **Աւետիք** կամ **Աւետիս** «բարի լուր» բառն է, որը վերածվել է արական անձնանվան: Ծագում է հնդեվրոպական ***aued-**՝ ***aueid-** «խոսել» արմատից¹²:

Խաղտիք երկրանվան ծագումը, ըստ Հր.Աճառյանի, **խաղտ** «կոշտ, կոպիտ» նշանակող բառի հետ է կապված, որտեղից էլ *երկիր Խաղտեաց*, այսինքն՝ Խաղտիք երկիրը, խաղտիք ցեղի բնակավայրը¹³: Ջահուկյանի մեկնաբանությամբ՝ **խաղճ** բառի հետ միասին այն ծագում է հնդեվրոպական ***kal-** «կարծր, կոշտ» արմատից՝ **k/kh** անցմամբ՝ ***khal-d>** խաղտ. հմմտ. *խաղճախուղճ* և *խաղտախուղտ* կրկնավորները¹⁴:

Երկիր Խուժաստանի. Պարսկաստանի գավառներից մեկի անվանումն է՝ **Խուժաստան**, որի հիմքում **խուժ** բառն է «վայրենի, բարբարոս, խուժան»: Իրանական ծագման բառ է՝ **xuz**, որից էլ՝ **Xuzistan**, այս ժողովուրդը վայրենու համբավ ուներ: Երկում հանդիպել ենք նաև *երկիր* բառով կազմված դարձվածքների, որոնց կանդրադառնանք համապատասխան ենթազվիում:

¹⁰ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, էջ 269:

¹¹ Տե՛ս Բառգիրք Հայոց, Եր., 1975, էջ 179:

¹² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 101:

¹³ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 323:

¹⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 313:

Իբրև բնական ամուր տեղ, պնդոց՝ *բնակավայր, տուն* նշանակող բառերի շարքում ընդգրկել ենք նաև **ամուրն**, **ամրոց** և **ամրութիւն** բառերը, որոնք հոմանշային շարք են կազմում (հոմանշային շարքերին ևս մանրամասն կանդրադառնանք համապատասխան ենթագլխում):

Բառարաններում **ամուրն** բառի երկու իմաստ է տրվում՝ մի դեպքում իբրև ածական, մյուս դեպքում՝ գոյական: Մեզ հետաքրքրում է գոյականական իմաստը՝ չնայած ածականական իմաստը՝ *պինդ, ուժեղ, զորեղ, հաստատուն*, անմիջապես կապվում է գոյականականին՝ *ամրոց, բերդ*, այսինքն՝ *ամուր տեղ, ամրություն*: Ծագում է հնդեվրոպական ***moi-ro-** «փայտի կառույց» նախածինից, ***mei** «ամրացնել» արմատից ձայնավորի անբացատրելի փոփոխությամբ և ա-ի հավելմամբ¹⁵: **-ng** և **-ութիւն** վերջածանցները ևս հնդեվրոպական ծագում ունեն: **-ng** մասնիկը ծագել է ***-sko-**

- **ā-** ածանցից՝ նախորդող հիմքային ***-ū-** ձայնավորով¹⁶: Տեղացույց իմաստը, ըստ Ջահուկյանի, զարգացել է հայերենում: **-ութիւն** վերջածանցի ծագման վերաբերյալ երկու վարկած կա: Այն մի կողմից կապվում է հնդեվրոպական ***-tion** ածանցի հետ, մյուս կողմից՝ **-ոյթ** և **-իւն** ածանցների: «Առաջին դեպքում պետք է ենթադրել ***-tion-ից առաջ սկզբնական *eu/ou** երկբարբառ, որից հետո ***t-**ն յ-ի չի փոխվում (**-ոյթ < *eu-ti-/-ou-ti-**), կամ կարծել, որ ***ter > յթ** փոփոխության կողքին եղել է ***ti->թ** փոփոխություն»¹⁷: Ջահուկյանն ավելի հավանական է համարում վերջին վարկածը:

Տերութիւն. թագավորի իշխանությանը ենթակա թագավորություն է, երկիր: Հիմքում **տէր** արմատն է՝ **-ութիւն** վերջածանցի միացմամբ:

Էդ.Աղայանի բացատրական բառարանում **կողմն** բառի համար շուրջ 17 իմաստ է բերվում: Մեզ հետաքրքրում է մասնավորապես նրա 11-րդ՝ *որոշ ուղղությամբ ընկած բնակավայր, երկիր, գավառ*

¹⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 46:

¹⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 810:

¹⁷ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 811:

իմաստը: Բերենք բնագրից մի օրինակ. «որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան **ի կողմանս** Տարօնոյ և Հաշտենից»¹⁸: Ծագում է **կող** արմատից՝ **-մն** վերջածանցով: *Կող* բառի ծագումը կապվում է հնդեվրոպական ***gol-** «ձյուղ» արմատի հետ, որից նաև առաջ է եկել հայերենի *կողր* «ձյուղ» բառը: Աճառյանը ցեղակիցներից բերում է թոխարական **kalymi** ձևը: **-մն** վերջածանցը ծագում է հնդեվրոպական ***-men-/-mn-** ածանցից:

Կողմն բառը վերոհիշյալ բառերի շարքում ամենահաճախ կիրառություն ունեցողն է: Երկում գտել ենք նաև **կողմն հիւսիսոյ, կողմն հարաւոյ, կողմն արեւմտեայ, կողմն արեւելեայ** կապակցությունները: **Հիւսիս, հարաւ, արեւմուտք, արեւելք** բառերը ևս ընդգրկել ենք *բնակավայր, տուն* իմաստային դաշտում: Աշխարհի չորս ծագերն են, որտեղ տեղակայված են հազարավոր մարդկանց բնակության վայրերը: Բերենք բնագրային մի քանի օրինակներ. «չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է **ի կողմանս հիւսիսոյ**» (Էջ 45), «զամենայն **արեւելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս** քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիք ծառոց վարսաւորաց» (Էջ 66), «եկեալ զազգն Ամատունեաց **ի կողմանցն արեւելից Ատրեաց աշխարհին**» (Էջ 224):

Խորենացու երկում հանդիպում ենք **հիւսիսի** ձևը, որի երկրորդական իմաստը Աղայանի բառարանում նշվում է *այն երկրները, որոնք ընկնում են հյուսիսի կողմերը*: Ծագում է հնդեվրոպական ***seuke, *kiio-** «հակառակ կողմում ընկած» կապակցությունից, այսինքն՝ ի հակադրություն հարաւի¹⁹:

Հարաւ բառը ծագում է բնիկ հնդեվրոպական ***perə-uo-**՝ ***per-** «առաջ» արմատից,

իմտ. ավ. **paurna** «առաջին, հարավային» (հայ իրանական գուգաբանությամբ)²⁰: Երկում գտել ենք նաև *հարաւ և կողմն* արմատներով կազմված **հարաւակողմն** բառը:

¹⁸ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ուսանողի գրադարան, Եր., 1981, էջ 356: Այսուհետ այս բնագրի էջերը կնշենք մեջբերման կողքին:

¹⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 462:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 450:

Արեւելք և **արեւմուտք** բառերը՝ որպէս *բնակավայր*, տուն իմաստի կրողներ, ցույց են տալիս բնակության վայր, տեղ, կողմ. «*Ինքն խաղայ այլով աղիսին ընդ արեւմուտս հիւսիսոյ*» (էջ 40), «*ապրեցուցանել զայլ մանկունս, և յարեւմուտս կոյս յուղարկել ի լեւառնն*» (էջ 28), «*շինէ...երկուս տունս, զմին յարեւելս կոյս, իսկ զմյոսն յարեւմուտս կոյս նորին տանն*» (էջ 48): Հիմքում ընկած **արև** բառի դիմաց բառարաններում բերում է *տե՛ս արեգ*, որը ծագում է հնդեվրոպական ***reu** «կարմիր>արև» արմատից²¹: Ել արմատը ծագում է ***el-** արմատից՝ ***ele-/lāmod-**, ***el-ei-**, ***el-eu-** հիմքային ձևերով: **Մուտ** արմատը ծագում է ***mōd-** «հանդիպել, մոտենալ» արմատից: Ջահուկյանը հնարավոր է համարում նաև ***meug-** ***mug-** (>մոյծ, մուծ-) արմատի հետ բաղարկում²²:

Հիշյալ բառերից կազմված բաղադրայլ կառույցներն են՝ **արեւմտից հարաւոյ, արեւմտից հիւսիսոյ, արեւելեան հիւսիսի, արեւմուտք հարաւոյ, արեւմուտք հիւսիսոյ, հարաւ-արեւելք**:

Աջ, ձախ և **կողմն** արմատներով երկուս առկա են **աջակողմն** և **ձախակողմն** բառերը: *Աջ* բառը ծագում է հնիւ. **sədhyo-** կամ **sādhyo** «ուղիղ» ձևից²³: *Ձախ* բառի ծագումը Աճառյանին անծանոթ է, իսկ Ջահուկյանի բացատրությամբ՝ եթե ***l>ղ>խ** անցման դեպքեր եղել են նաև 9-րդ դարից առաջ, ապա այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ ***gʰhuel-** «ծովել, գլխավոր ուղղությունից շեղվել» արմատից²⁴:

Լայն կիրառություն ունեցող *բնակավայր* հասկացության միավորների շարքում առանձնացրել ենք **տեղի** բառը, որի հնագույն ձևն է **ետդ**. պատմական զարգացման ընթացքում դրափոխության հետևանքով դարձել է *տեղ*: Ծագում է հնդեվրոպական ***sed-lo-** ձևից, որ ***sed-** «նստել» արմատի ***-lo-** վերջածանցով կազմությունն է²⁵:

Մեր իմաստային դաշտի թերևս ամենից կարևոր բառը **հայրենիքն** է, այն տարածքը, որը տվյալ ժողովրդի ծննդավայրն է, կյանքի

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 89:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 210 և 540:

²³ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 246:

²⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 473:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 726:

և կեցության արմատը: Բառահիմքում **հայր** հնդեվրոպական ***pater-**՝ ***pətros-** «հայր» արմատից ծագած միավորն է՝ - (հավանաբար **-եան** և **-ի** ածանցների միացմամբ) և **-ք** մասնիկի միասնությամբ²⁶:

Երկինք(ք) բառը, ընկալելով որպես Աստծո և հրեշտակների բնակության վայր, ևս ընդգրկել ենք *բնակավայր, տուն* իմաստային դաշտի մեջ: Վերջինիս ծագման վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Հայտնի է, որ Հ. Հյուբշմանի և Հր.Աճառյանի կողմից մերժված են այս բառի բոլոր հին ու նոր ստուգաբանությունները: Ջահուկյանը նշում է, որ այն ծագում է հնդեվրոպական ***d(i)ui-n-**՝ ***dei-** «փայլել, շողալ» արմատից՝ ***-u** աճականով՝ «շողացող երկինք»²⁷: Մյուս մոտեցման համաձայն՝ այն ընկալվում է իբրև ածանցավոր բառ՝ **երկ-** արմատով և **-ին** ածանցով: Արմատի նախնական իմաստն է «փայլել, լուսավորել»: «*Հայտնի է, որ հնիս. *dw հայերենում տալիս է **րկ**, ապա՝ **ե** հավելվածով՝ **երկ***»: Աղայանը մանրամասնորեն ներկայացնում է, թե ինչով է բացատրվում այդ փոփոխությունը: ***dw<րկ** փոփոխությունը բացատրվում է նրանով, որ նախ **w-**ն դարձել է **q (dw>dg)**: ***dw>tg** կապակցության մեջ նախորդ խուլի առ-նմանման արդյունքում **g-**ն դարձել է **k**, իսկ երկու պայթականներից առաջինը վերածվել է շփականի²⁸:

Դուռն բառը փոխաբերական իմաստով նշանակում է *տուն, շենք*: Դասական շրջանում արտահայտում էր նաև *արքունիք, թագավորական նստավայր, նախարարություն* իմաստները: Ծագում է հնդեվրոպական ***dhur-**՝ ***dhuer-** «դուռ» հիմքից²⁹: Խորենացու երկում ունենք **դուռն արքունի, արքունական դուռն, դուռն Երուանդայ, դուռն քաղաքին, դուռն ամրոցին, դուռն տաճարին, դրունք արքունի** կապակցությունները: Բերվածներից անդրադառնանք **դուռն Երուանդայ** կառույցին: *Դուռն Երուանդայ* ասելով՝ հեղինակը նկա-

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 805:

²⁷ Նույն տեղում, էջ 227:

²⁸ Տե՛ս **Էդ. Աղայան**, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 65-66:

²⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 204:

տի ունի *Երվանդի տունը, բնակության վայրը*: **Երուանդ** արական անձնանունը ծագում է պարսկական **arvand, aurva-, aurvant** «արագ, քաջ» բառից³⁰: Տարածված անուն է եղել պարսիկների շրջանում:

Որպես բնակավայր է ընկալվում նաև **կալուածք** բառը, որի հիմքում **կալ** «բռնել» արմատն է: Ծագել է ***guol-**՝ ***geu-** «ծռել, թեքել, կորանալ, կամար կազմել» արմատից, հմմտ. հուն. **έγγυαλιζω** «հանձնել, ընձեռել», լատ. **vola** «ձեռքի ափ»³¹: **-ուած** վերջածանցը կազմված է **ու** հիմքակազմ տարրից և **-ած** վերջածանցից, որն էլ ծագում է **ած**-ել բայի արմատից: **Կողմն** և **կալ** արմատների միությամբ երկում գտնում ենք նաև **կողմնակալութիւն** բառը:

«Հաճեալ ընդ **բլուրն** շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ» (էջ 210): Բերված օրինակը փաստում է, որ **բլուր** տեղանիշ բառը ևս կիրառվել է որպես բնակության վայր: Ծագում է հնդեվրոպական ***bhlō-ro-** ***bhel-** «փչել, ուռցնել, բխել» արմատից, հմմտ. կիմր. **bāl** «բարձունք, գագաթ»: Երկում առկա է նաև **Բլուր** բառի տեղանվանական կիրառության դեպքը. «...առեալ զնա աշակերտացն՝ տարան ի գիւղն որ կոչի **Բլուր**» (էջ 442):

Լեառն. ծագում է հնդեվրոպական ***kleitr-no**՝ ***klei** «հենել, հակել, թեքել» արմատից³²: Երկում հանդիպել ենք նաև **լեառն** և **կողմն** արմատների միությամբ **լեռնակողմն**, **լեռնակողմանք** ձևերը. նշանակում է լեռնային կողմերը: **Լեռնադաշտ** բառի ծագումնաբանությանը ևս կանդրադառնանք համապատասխան տեղում:

Լեառն բառով առկա են նաև **լեառն Միմ**, **լերինն Նպատայ**, **լերինն Մասեաց**, **լեառն հարաւոյ**, **լերինս Կորդուաց**, **լեառն Սթին**, **լեառն Տաուրոս** ևն կապակցությունները:

Հնդեվրոպական ***antrio-antrom-** «այր, քարայր» արմատից է ծագում հայերենի **այր** (քարայր) բառը: Քարայրները՝ իբրև բնակության տեղի, ծառայել են հատկապես նախնադարյան մարդկանց համար:

³² Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942, էջ 145:

³¹ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 373:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 293:

Իբրև ջրային կենդանիների բնակավայր՝ **ծով** բառը ևս ընդգրկված է մեր իմաստային դաշտում: Հետաքրքիր է վերջինիս աստվածաշնչյան ընկալումը՝ արևմուտք: Ծագում է ***gob-** «ծով» արմատից³³: Առանձնահատուկ ուշադրության է արժանի **ծովն ծիրանի** կապակցությունը: Հայկական դիցաբանության մեջ ամպրոպի, ռազմի, քաջության և հաղթանակի աստված Վահագնի ծննդի ժամանակ երկինքը նմանեցվում է *ծիրանագույն ծովի*, որի մեջ կարմիր եղեգ է վառվում: Եղեգնյա փողի բոցերից և ծխից ծնվում է խարսոյաշ, բոցամորուս պատանին:

Գաւառ բառի ծագման վերաբերյալ երկու տարբեր մոտեցումներ կան: Հր. Աճառյանը այն համարում է փոխառյալ բառ կովկասյան կամ խաղյան ընտանիքից՝ բերելով վրացական **գվարի** «տեսակ, ցեղ, սեռ, ընտանիք», **գվարիանի** «ազնիւ ընտանիքից, ընտիր, ցեղընտիր» ձևերը³⁴: Մինչդեռ Զահուկյանը անհավանական է համարում *գաւառ* բառի բխեցումը վրացական **gawari** ձևից³⁵: Առավել ընդունելի է համարում բնիկ հնդեվրոպական ***ghau-** «տարածք» արմատից ծագումը, որը միացվում է ***gheu-** «հորանջել, լայն բանալ, լայն բացվել» արմատի հետ: Զուգահեռ առանձնացնում է հայ-գերմանական զուգաբանությունը (հմմտ. հ. վ. գ. **gawi** «երկիր, երկրամաս»):

Երկում *գաւառ* բառով առկա են **գաւառն Աղիովտի, գաւառն Աշոցաց, գաւառն Բասենոյ, գաւառն Բուզնան, գաւառն Գողթան, գաւառն Դարանաղեաց, գաւառն Եկեղեաց, գաւառն Օռփաց, գաւառն Կարնոյ, գաւառն Համշենից, գաւառն Մանանաղոյ, գաւառն Շաւարշան, գաւառն Շիրակայ, գաւառն Վանանդայ, գաւառն Սիւնեաց, գաւառն Տաշրաց** ևն կապակցությունները:

«Սահման, ափ, վերջ, ավարտ» իմաստով համեմատաբար հաճախադեպ է **եզր** բառը. «*առ եզերք սահմանացն Բակտրիացոց ասէին բնակեալ սակաւ աւուրս*» (էջ 30), «*Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն*» (էջ 48): Ծագում

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 366:

³⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 527:

³⁵ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 153:

է հնդեվրոպական **eg'her(o)-`*eg'h-* «եզր, սահման» արմատից, հմմտ. լատվ. *ezer*, հ.սլ. *ezero*^{36,37}

Եզր արմատով կապակցություններից առանձնացրել ենք **եզր գետոյն, եզր ծովուն, եզր հայկական, եզր երկրի, եզր ծովակի, եզր փոսոյն, եզր դաշտին**: Առկա է նաև **գետ** և **եզր** արմատներով **գետեզր** բառը, որի *գետ* բաղադրիչը ևս բնիկ է՝ **uedo-`*au(e)-, -ed-*,

-er- «խոնավացնել, հոսել» արմատից³⁹: **Ծով** և **եզր** արմատներով առկա են նաև **ծովեզր** և **ծովեզերայք** բառերը: Երկուսն առնուհետև ենք նաև **տի** և **եզեր** արմատներով **տիեզերք** բառը: *Եզր հայկական* կապակցության երկրորդ՝ **հայկական** բաղադրիչի կազմում ունենք **հայկ** բառը, որը ծագում է **Հայկ** ժողովրդանունից³⁸, և **-ական** մասնիկը, որը իրանական ծագման է՝ **-(a)kan** ածանցից: Նույն կերպ և *եզր ծովակ* կապակցության մեջ **ծովակ** բառը կազմված է *ծով* բնիկ ծագման (ստուգաբանությունը վերը տրված է) և **-ակ** իրանական **-ak** (փոքրացուցիչ արժեք) ածանցից: **Փոս** և **դաշտ** բառերը ոչ բնիկ ծագման են, որոնց կանոնադաշտնանք հաջորդիվ:

Սակավ կիրառություն ունեցող բառերի շարքում կարող ենք ընդգրկել **դադարք, անձաւ, քարանձաւ, աղբատանոց, եղբայրանոց, օթանոց, հովանոց, ձմերոց, առագաստ, մօր, այգի, նաւ, նաւահանգիստ, նաւակառոյց, միջոց, հարկ, ընտանիք** միավորները:

Անդրադառնանք **դադարք** միավորին. ՆՀԲ-ում տրվում են հետևյալ իմաստները՝ *տեղի դադարելոյ յայպահովի, բնակարան, յարկ, տուն, տաղաւար, որջ, բոյն, գոմք, փարախ* ևն³⁹: Հիմքում **դադար** «հանգիստ, կանգառ, դադարի տեղ, կացարան» բառն է, որը ծագում է **dher-* «պահել» արմատից, որտեղից էլ *դարել* ձևը⁴⁰: Կրկնավոր բառ է:

Անձաւ, քարանձաւ. ՆՀԲ-ում նշվում է՝ *անձաւ, որ և քարանձաւ*, այսինքն՝ հոմանիշ բառեր են «այր, քարայր» իմաստով՝ *«Բսկ*

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 210:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 156:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 794:

³⁹ Տե՛ս ՆՀԲ, էջ 590:

⁴⁰ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 179:

զընդդէմ արեգական կողմն **անձաւին...**պէս պէս տաճարս և սենեակս *օթից* և տունս *գանձուց* և վիհս *երկարս*, ոչ *գիտէ* ոք, թե որպիսեաց իրաց պատրաստութիւն *հրաշակերտեաց*» (էջ 66): Անձաւ արմատը ծագել է հնդեվրոպական ***ang’hewa-** «նեղ տարածություն», ***ang’h** «նեղ, նեղացնել» ձևերից⁴¹: Քար արմատը ևս բնիկ ծագման բառ է՝ հնդեվրոպական ***kar** «կարծր» արմատից:

Եղբայրանոց, օթանոց, հովանոց, աղքատանոց բառերի համար ընդհանուր է

–**անոց** վեջածանցը, որը բնիկ է՝ կազմված **-ան** և **-ոց** մասնիկներից⁴²:

Ստ.Մալխասյանցի բացատրական բառարանում **եղբայրանոց** բառի դիմաց գտնում ենք՝ *կրօնաւորների վանք*⁴³, այսինքն՝ հոգևոր եղբայրների բնակավայր: **Եղբայր** բառը ծագում է հնիւ. ***brāter-** «եղբայր» արմատից⁴⁴:

Օթանոց նշանակում է *օթարան, օթեան, բնակարան*, որի **օթ** արմատը ծագել է հնիւ. ***evō, *ovō** «հագնիմ» բառից **-ti** ածականով: Աճառյանը մանրամասնում է. «*այս երկուսը իրար հետ ճիշտ այն յարաբերութիւնն ունին, ինչ որ օթ «օթեան» և ագանիլ «իջեանիլ, գիշերել»*»⁴⁵: Նշենք, որ Էդ.Աղայանի բացատրական բառարանում *օթանոց* բառի փոխարեն գտնում ենք նույնիմաստ *օթարան* ձևը, որը Խորենացու պատմության մեջ վկայված չէ:

Հովանոց. ծագում է հնդեվրոպական ***pou-, *p(h)u-** «փչել, ուռչել» արմատից⁴⁶: Էդ.Աղայանի բառարանում մեզ հետաքրքրող իմաստը չենք գտնում: Ստ. Մալխասյանցի բառարանում երկրորդ իմաստով նշվում է *հով տեղ*, իսկ երրորդ իմաստով՝ *ամարանոց*⁴⁷: ՆՀԲ-ում բառն առանձին տրված է՝ *տեղի հովոց կամ գովանալոյ* բա-

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

⁴² Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 798:

⁴³ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 557:

⁴⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 15:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 609:

⁴⁶ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 466:

⁴⁷ Տե՛ս **Ստ. Մալխասյանց**, նշվ. աշխ., էջ 132:

ցատրությամբ: Բերենք նաև բնագրային օրինակ. «*Տրդատ զշինուած ամրոցին Գառնույ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց*» (Էջ 294): Ինչպէս տեսնում ենք Խորենացին բառը կիրառում է հենց *ամարանոց* իմաստով:

Գոյություն ունեն հատուկ աղքատների խնամքի համար նախատեսված հիմնարկություններ, որոնք կոչվում են աղքատանոցներ: **Աղքատանոց** բառի հիմքում **աղքատ** բառն է, որը Ջահուկյանը բխեցնում է ***(o)lika** նախաձևից՝ ***leig/k-** «պակասավոր, խեղճ» արմատից⁴⁸:

Իբրև ձմռանը ապրելու, մնալու տեղ՝ **ձմերոց** բառը ևս ներառված է մեր իմաստային դաշտում: Հիմքում **ձմեռն** բառն է, որը ծագում է հնդեվրոպական ***g^hheimerinos-** «ձմեռ» արմատից⁴⁹:

ՆՀԲ-ում **առագաստ** բառի դիմաց գտնում ենք՝ *ներքին սենեակ հարսին և փեսայի, և Հարսնարանն զլիտվին*: Հիմքում **ազ** արմատն է, որը ծագում է բնիկ ***ow-** նախաձևից, (***ew** «հագնել»)՝⁵⁰: **առ-** և **-աստ** ածանցները ևս բնիկ հնդեվրոպական են:

Երկում հանդիպել ենք նաև **մաւր/մօր** «ճահիճ, տիղմ, ճահճուտ» նշանակող բառին, որից ձևավորված ունենք *Մեծամօր* «ճահճոտ տեղ» հատուկ անունը: Ծագում է հնիւ.***meu-ru-**՝ ***meu-** «խոնավ, կեղտոտ» արմատից:

Նաւ. ծագում է հնդեվրոպական ***nāu-** արմատից: Այս արմատով հանդիպում ենք նաև **նաւակառոյց** և **նաւահանգիստ** ձևերը: **Կառ** բառը կապվում է *կալ, կանգ* արմատների հետ, ուստի ծագում է հնդեվրոպական ***g^ha gua** «գալ, գնալ ծնվել, երևան գալ» արմատից⁵¹:

Հանգ արմատը ծագում է **հան-** նախաձանցով՝ ***kuei** «հանգստանալ, հանգիստ վայելել» արմատից: **-իստ** ածանցը բնիկ

⁴⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 40:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 476:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 72:

⁵¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 372:

հնդեվրոպական է ***-sti-** ածանցից՝ նախորդող ***-i-**ով: Ջահուկյանի նշմամբ՝ *հանգիստ* բառում **h-**ն արմատական է⁵²:

Գիւղ. *բնակավայր, տուն* իմաստային դաշտի կարևոր բառերից մեկն է: Հանդիպում է նաև *գելղ* ձևով, որն ավելի հին շրջանում էր գործածական: Ծագում է հնդեվրոպական ***ueik'-li**՝ ***ueik'-** «տուն, բնակատեղ, ավան» արմատից⁵³: Գոյություն ունի նաև մեկ այլ վարկած, որի համաձայն վերջինս ունի կովկասյան՝ նախյան-դաղստանյան ծագում, սակայն մենք առավելապես հակված ենք Ջահուկյանի դիտարկմանը: Երկում առկա են նաև **գիւղն Աշտիշատ, գիւղն Օշական, գիւղն Թորդան** բաղադրյալ կառույցները:

Կղզի. բոլոր կողմերից ջրով շրջապատված, մեկուսացած ցամաք է: Ծագման վերաբերյալ կա երկու վարկած: Ջահուկյանի դիտարկմամբ՝ այն բնիկ հնդեվրոպական բառ է ***gēlg'hiio**՝ ***gel-** «գնդ(վ)ել» արմատից՝ ***g'-** աճականով⁵⁴: Աճառյանի դիտարկմամբ՝ ասորական հին փոխառությունն է: Վերջինս հանգում է այդ կարծիքին՝ հիմնվելով արաբական **jazira** և ասորական **gazartā** «կղզի» ձևերի վրա⁵⁵: Մենք դարձյալ նախապատվությունը տալիս ենք Ջահուկյանի դիտարկմանը:

Ցամաք. ծագման վերաբերյալ ևս տարակարծություններ կան: Ըստ Ջահուկյանի՝ բնիկ հնդեվրոպական է ***ksāma-** ***ksā** «այրել» արմատից, հմմտ. հ. հնդկ. ***ksamā** - «չոր, ցամաք»⁵⁶: Աճառյանը կապում է եբրայական **smq** «չորացնել» արմատի հետ:

Ձոր. ծագում է հնդեվրոպական ***g'houero-** (***g'houoro->**ձոր)՝ ***g'heu** «լցնել, թափել» արմատից⁵⁷: Երկում գտնում ենք նաև **Հայոց ձոր, Վայոց ձոր, Գարդմանայ ձոր** կապակցությունները:

Միջոց. «*հաճի ի գաւառին Կարնոյ շինել զքաղաքն արգաւան-դահող, շատաջուր և բերի, իբր միջոց վարկուցեալ զվայրսն, ոչ կա-*

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 807:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 163:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 410:

⁵⁵ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 603:

⁵⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 741:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 477:

րի բացեայ ի տեղեացն» (էջ 420): ՆՀԲ-ում միջոց բառի համար գտնում ենք *մէջն տեղեաց և իրաց, միջավայր, միջին տեղին կամ դիրքն, բացատ, բացօթեայ վայր, միջնաշխարհ, ի միջոցի երկրի* իմաստները⁵⁸: Բնիկ հայ բառ է հնիս. **mēdyos** հիմքից⁵⁹:

Մենեակ. ծագման վերաբերյալ կան տարակարծություններ: Ջահուկյանի ստուգաբանությամբ՝ այն կապ ունի հնդեվրոպական ***sk'i-** արմատի հետ, որը նշանակում է «թույլ փայլել, ստվեր»⁶⁰: Համեմատում է հունարեն **σκιος** «վրան, բեմ, սրահ», ռուսերեն **сень** «հովանի», **сени** «սրահ, նախասենյակ» բառերի հետ: Աճառյանը չի հստակեցնում, պարզապես համեմատում է վրացերեն **սենակի** «փոքրիկ խուց, սենյակ», **մեսենակե** «ձգնավոր» բառերի հետ⁶¹:

Գաւտի/ գօտի. Աղայանի բառարանում գտնում ենք նշված բառի 17 իմաստ, որոնցից մեզ հատկապես հետաքրքրում են հինգերորդ և վեցերորդ իմաստները՝ 5.(աշխգր.): *Երկրագնդի մակերևույթի՝ երկու միջօրեականների միջև պարփակված տարածությունը*, 6.(աշխգր.): *Որոշ տարածություն, շրջան, վայր, որ բնորոշվում է որևէ ընդհանուր կլիմայական հատկանիշով*⁶²: Ծագում է հնդեվրոպական ***uābh-dē՝ *uebh** «հյուսել, գործել» (>հայ. տի) արմատներից⁶²:

Ածու. նշանակում է բանջարանոցի կամ պարտեզի մի հատված, որտեղ աճեցնում են սերմերը, սակայն խորենացու երկում կիրառվում է փոխաբերական իմաստով՝ փոքր երկիր՝ ժողովուրդ: Ծագում է հնդեվրոպական ***ag՝** - «քշել, տանել, շարժել» արմատից՝ **-ու** հ.-ե. դերբայական ***-wes** ածանցի իգ. ***-usya** ձևից ծագող վերջածանցի միությամբ⁶³:

Բնիկ ծագման վերոհիշյալ բառերից արդի արևելահայերենին ն-ի անկմամբ փոխանցվել են **դուռն, կողմն, աջակողմն, ձախա-**

⁵⁸ Տե՛ս ՆՀԲ, էջ 280-281:

⁵⁹ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 313:

⁶⁰ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 676:

⁶¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 201

⁶² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 153:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 26 և 810:

կողմն, հարաւակողմն, լեառն, լեռնակողմն, բառերը, ի-ի անկմամբ՝ **հիւսիսի** և **տեղի** բառը: *Լեառն* և *սենեակ* բառերի դեպքում առկա է նաև հնչյունափոխություն, որին կանդրադառնանք համապատասխան ենթագլխում: **Ամուրն** ձևը լեզվի արդի փուլում չի ընկալվում իբրև գոյական, այն էլ *ամրոց* իմաստով. ածական է՝ *պինդ, ամուր, կարծր, ուժեղ* իմաստով: **Միջոց** բառը ևս իմաստային փոփոխության է ենթարկվել՝ արդի արևելահայերենում կորցնելով *տեղ, վայր* նշանակությունը: **Զմերոց** բառի փոխարեն արդի փուլում կիրառվում է **ձմեռանոց** ձևը, **օթանոցի** փոխարեն՝ **օթարան** կամ **օթան**, իսկ **հովանոց** գոյականը կորցրել է *հով տեղ* իմաստը: Միակ բառը, որը կիրառությունից դուրս է մղվել **դադարքն** է: Մյուս բառերի դեպքում իմաստային լայն փոփոխություն-տեղաշարժեր չեն կատարվել:

Քննելով՝ Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի բնիկ ծագում ունեցող *բնակավայր, տուն* նշանակող բառերը ծագումնաբանական և իմաստաբանական մակարդակներում՝ արձանագրում ենք.

ա) *բնակավայր* հասկացության բառերի մեծամասնությունը բնիկ է և բնորոշ գրական հայոց լեզվի զարգացման բոլոր շրջափուլերին,

բ) առանձնացված միավորների կազմում ունենք և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ կամ բարդ ածանցավոր բառեր՝ 24 պարզ, 16 ածանցավոր, 7 բարդ և 8 բարդածանցավոր բառ,

գ) *բնակավայր* հասկացության կազմում վկայված են բազմաթիվ հարադիր կազմություններ, որոնք ունեն ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անունների գործառնություն՝ նշանակում են հիմնականում երկրանուններ,

դ) բառերի զգալի մասը պատմական զարգացման ընթացքում իմաստային փոփոխություններ գրեթե չի կրել, սակայն ունենք միավորներ, որ արդի փուլում վերածվել են պատմաբառերի, հնաբանությունների, ավելի պարզ՝ գրաբարաբանությունների՝ *ձմերոց, դադարք, օթանոց, ծովեզերայք, լեառն*: Ունենք նաև իմաստի նեղացման օրինակներ, կամ լիակատար իմաստափոխություններ՝ *հովանոց, միջոց*:

ե) եղած փոփոխությունները հիմնականում վերաբերում են բառերի ձևային՝ հնչյունաբանական կողմին:

1.2 Իրանական փոխառություններ

Աշխարհում չկա այնպիսի լեզու, որ մեկ այլ լեզվից կամ լեզուներից չունենա բառային փոխառություններ: Փոխառությունները առաջանում են այլ ժողովուրդների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային կապերի արդյունքում: Հայ ժողովուրդը մշտապես հարևան երկրների հետ շփման մեջ է եղել, որի հետևանքով էլ առաջ են եկել լեզվական փոխազդեցություններ: Հայերենը փոխառություններ է կատարել պարսկերենից, հունարենից, ասորերենից, արաբերենից, եբրայերենից և այլ լեզուներից: Մենք անդրադառնալու ենք մասնավորապես իրանյան, հունական և ասորական փոխառություններին:

Հայերենն ամենաշատ փոխառությունները կատարել է պարսկերենից. ըստ Աճառյանի՝ 1411 բառ (966 պահլ. և 445 պրսկ.): *«Հայերենի և պարսկերենի նմանությունը այնքան մեծ է, վոր լեզվաբանները մի ժամանակ կարծում էին, թե հայերենն էլ իրանական լեզույէ, այսինքն զավակն է իրանական մայր լեզվի»*,⁶⁴ գրում է Աճառյանը⁶⁴: Իհարկե, հետագայում գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը ապացուցեց, որ հայերենը պարսկերենից միանգամայն անկախ լեզու է:

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում առկա են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բառեր, որոնց թվում մեծամասնություն են կազմում իրանական փոխառությունները: Դրանք են՝ **շէն, դաստակերտ, ապարանք, տաճար, աւան, աշխարհ, վանք/վանորայք, սահման, ոստան, խորան, մեհեան, դիւան, կոյս** (կողմ), **աշտարակ, դրախտ, դժոխք, դաշտ, գերեզման, վկայարան, վիհ, բուրաստան, դղեակ, նահանգ, ապաստան, ճակատ** ևն:

⁶⁴ Տե՛ս Նր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1940, էջ 224:

Վերլուծությունը սկսենք բերված բառերի շարքում առավելագույն կիրառությունն ունեցող **աշխարհ** բառից: Իրանական ծագման բառ է, ըստ Աճառյանի՝ *xšāy* «իշխել» արմատից⁶⁵: Ջահուկյանը տալիս է միայն ծագումը, սակայն չի մանրամասնում: Երկում հանդիպում ենք նաև *աշխարհ* բառով մեծաթիվ կապակցությունների՝ **աշխարհԱլանաց, աշխարհ Ասորւոց, աշխարհ Օոփաց, աշխարհ Հայկազանց, աշխարհ Հայոց, աշխարհ Հոնաց, աշխարհ Հունաց, աշխարհ Զենաց, աշխարհ Միջագետաց, աշխարհ**

Պաղեստինացւոց, աշխարհ Պարսից, աշխարհ Վրաց, աշխարհ Քուշանաց, Արեաց

աշխարհ, աշխարհ Բուղարաց, աշխարհ Հնդկաց ևն:

Լայն կիրառություն ունեցող բառերի շարքում է նաև **սահմանը**: «Աստ բնակեալ Միսակ չնու շինութեամբ *quashmānu* բնակութեան իւրոյ» (Էջ 50): Էդ.Աղայանի բացատրական բառարանում մեզ հետաքրքրող իմաստը հինգերորդն է՝ *որևէ սահմանագծից ներս գտնվող տարածություն՝ վայր*⁶⁶: Ծագում է իրանական **sāhmān* արմատից⁶⁷: «Պատմութիւն Հայոց»-ում առկա են նաև **սահմանք քաջաց, սահման Բակտրիացւոց, սահմանք Հայոց, սահման Ասորեստանի, սահման Ասորպատականի, սահմանք հայրենեաց, սահմանք Աղուանից, սահմանք Ասորւոց, սահման Գողթան, սահման Կեսարու, սահմանք Մասքթաց, սահմանք Խաղտեաց, սահման Մանանաղոյ** կապակցությունները:

Շէն. ՆՀԲ-ում գտնում ենք *աւան, գիւղ, հաւաքումն հիւղից, և տաղաւարաց, բնակարան գեղջկաց* իմաստները⁶⁸: Աղայանի բառարանում միայն վեցերորդ իմաստով է տրվում իբրև գոյական՝ *գյուղ, գյուղակ* նշանակությամբ: Առաջնային իմաստով ածական է՝ *մարդարնակ, բնակչություն ունեցող (բնակելի տեղերի մասին)* բացատրությամբ⁶⁹: Ծագում է իրանական **šen* «հանգստավայր, բնակատե-

⁶⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 216:

⁶⁶ Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 1271:

⁶⁷ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 664:

⁶⁸ Տե՛ս ՆՀԲ, էջ 476:

⁶⁹ Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 1105:

ղի» արմատից: Դուրս ենք գրել նաև *շէն* բառով երկու կապակցություններ՝ *շէնն Նախաճաւան, շէնն Սմբատաւան*:

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում է նաև **դաստակերտը**: Նշանակում է *շէն, ագարակ, ավան, նոր քաղաք, գյուղ, անդաստան, կալվածք*: Բերենք նաև բնագրային օրինակ. «*գտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք*» (Էջ 44): Ծագում է հին պարսկերենի ***dastakrta** «ձեռակերտ» բառից, հմմտ. պիլ. **dastk(e)rt** «աւան, գիւղ»⁷⁰:

Արքաների և իշխանների բնակության վայրը **ապարանքն** է, որը բառարաններում բացատրվում է *պալատ, փառահեղ տուն, բնակարան*: Ծագում է հին պարսկերենի **apadāna** «որեակ, պալատ, ապարանք» բառից, որը կազմված է **apa** մասնիկով՝ **adā** «կառուցանել, շինել» արմատից⁷¹:

Նույն՝ *պալատ, շքեղ բնակարան, ապարանք* նշանակությամբ է հանդես գալիս նաև փոխառյալ բառերի շարքից մեկ այլ բառ՝ **տաճար**: «Արդի հայերենի բացատրական բառարանում» գտնում ենք. 1. (կրոն.): *Կրոնական ծեսերի և արարողությունների տուն՝ շինություն*: 2. *Հեթանոսական աստվածների տուն, կոստուն*: 3. (հին.): *Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը Էջմիածնում*⁷²: Բնագրում գտնում ենք. «*եբաց տաճարս կոռցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն*» (Էջ 184): Ծագում է հին պարսկերենի **tačar** «ապարանք, պալատ» բառից⁷³:

Հարկ է նշել, որ փոխառյալ բառերի ստուգաբանությունն առավել մանրամասն է ներկայացնում Հր. Աճառյանը:

Աւան. ոչ մեծ բնակավայր, գյուղ, գյուղաքաղաք, չպարսպապատված բնակավայր, շէն: Ծագում է պահլավերենի **āva-hana-** «գիւղ, աւան» բառից⁷⁴: Երկում առկա են նաև *աւան* բառով կապակ-

⁷⁰ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 627:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 230:

⁷² Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 1408:

⁷³ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 365:

⁷⁴ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 99:

ցություններ՝ **Թիլ աւան, Բագնաց աւան, Բակուրակերտ աւան, աւան Թորդան, աւան Կուաշ, աւան Չըրմէս, աւան Տատեօնք** ևն:

Իբրև վանականների և վանականուհիների բնակության վայր՝ մեր իմաստային դաշտում ընդգրկել ենք նաև **վանք** բառը: ՆՀԲ-ում *վանք* բառի դիմաց գտնում ենք հետևյալ իմաստները՝ *օթելւան, իջաւան, բնակարան, կայան, դադարք, վրան, հիւրանոց, տաղաւար, մենաստան, բնակարան միաբանակեցաց*⁷⁵: Այսինքն՝ *վանք*-ը ի սկզբանե պարզ բնակարան, կայան էր, հետո միայն կրոնական բնակատեղի: Ծագում է իրանական ***wahana** «բնակութիւն» ձևից⁷⁶: Առանձնացրել ենք նաև **վանորայք** հնագույն ձևը, որը *վանք* բառի հոգնակին է՝ *վանքեր*:

Ոստան. այն քաղաքն է, որտեղ նստում էին թագավորները կամ իշխանները: Մալխասյանցի բառարանում նշվում է, որ *ոստանը* Արշակունիների թագավորության ժամանակ արքունիքին պատկանող գավառ է, կալվածք⁷⁷: Ծագումը կապվում է պահլավերենի ***ōstān** «գաւառ» բառի հետ, որից ունենք **ōstāndār** «գաւառապետ» ձևը:

«Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն ...էջ, եւ ի խորանի նորա բնակեցաւ» (էջ 204): Բերված նախադասությունից *խորան* բառը ևս պատկանում է մեր իմաստային դաշտին: Ծագում է իրանական **xvaran** ձևից: Արտահայտում է տարբեր իմաստներ, որոնցից մեզ հետաքրքրում են մասնավորապես *տաճար, եկեղեցի, յարկ, տուն, սենեակ* իմաստները:

Մեհեան. հեթանոսական տաճար է, կոտտուն. *«մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ»* (էջ 132): Հոմանշային շարք է կազմում *տաճար* բառի հետ, որին կանդրադառնանք իր տեղում: Մալխասյանցի բառարանում նշվում է, որ *մեհեանը* սկզբնապես Միհրի պաշտամունքին նվիրված տաճար էր, ատրուշան, կրակատուն⁷⁸:

⁷⁵ Տե՛ս ՆՀԲ, էջ 783:

⁷⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 703:

⁷⁷ Տե՛ս Սո. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, էջ 572:

⁷⁸ Տե՛ս Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 298:

Այստեղից էլ ստուգաբանությունը՝ ***mehyān, *meh**, «որ է Միհր աստուած»⁷⁹:

Ըստ կրոնական պատկերացումների՝ անդրշիրիմյան աշխարհում կա երանելի մի վայր, որտեղ մշտնջենապես ապրում են «արդարների» հոգիները: Դա **դրախտն** է, որն իբրև արդար ու բարի հոգիների հավիտենական կացարան՝ ընդգրկել ենք *բնակավայր, տուն* իմաստային դաշտում: Ծագում է իրանական **draxt, diraxt** «ծառ» բառից: Մալխապանցի բացատրական բառարանում տրվում են հետևյալ նշանակությունները. 1. *Ծառ*, 2. *Ծառաստան*, *ծառատունկ*, *պարտեզ պտղատու կամ անպտուղ ծառերի*: (*Սոսեաց դրախտ*): 3 (*կրօն.*) *Ըստ Աստուածաշնչի աւանդութեան՝ պտղալից պարտեզ երկրի երեսին, որտեղ աստուած բնակեցրեց Ադամին ու Եւային, որոնք կերակրվում էին դրախտի ծառերի պտուղներով. կոչվում է նաև դրախտ փրկութեան*⁸⁰:

Դրախտին հակադրվում է **դժոխքը**՝ անդրշիրիմյան աշխարհում այն վայրը, որտեղ ապրում են մեղավորների հոգիները և ենթարկվում տանջանքների: Իրանյան փոխառություն է, հմմտ. ավ. **dazoahva**, պրթ. **dozax**⁸¹:

Դիւան. արքունի ատյանն է, պետական գորությունները վարելու տեղը, դիվանատունը: ՆՀԲ-ում բերվում են նաև հետևյալ իմաստները՝ *սրահ մեծ յարքունիս, սենեակ կամ հրապարակ*, անգամ՝ *տուն, բնակարան*⁸²: Ծագում է պահլավերենի **dēvān** «արխիվ» բառից:

Կոյս (կողմ). *կողմն* բառի հոմանիշն է, միայն թե իրանական ծագման, հմմտ. պրթ. **kōs (ksw)**⁸³: «*Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց դաստակերտ*» (Էջ 348):

Վիհ. «*սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ինք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց*» (Էջ 66):

⁷⁹ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 296:

⁸⁰ Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 542:

⁸¹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 200:

⁸² Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 1114:

⁸³ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 418:

Վիհ նշանակում է *խոր փոս, գուբ, անդունդ*, ՆՀԲ-ում՝ *երկիր բերանաբացեալ շարժմամբ, գերեզման, դժոխք*⁸⁴:

Ծագման վերաբերյալ Ջահուկյանը նշում է միայն, որ իրանական ծագման բառ է, սակայն բուն աղբյուրը հաստատված չէ⁸⁵:

Գերեզման. մարդու հավիտենական հանգրվանն է: Ծագում է իրանյան **garizmān, garazmān** «երկինք» բառից⁸⁶:

Դաշտ. որևէ նպատակի համար նախատեսված ասպարեզ է, հրապարակ: «*գալ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում*» (Էջ 40): Ծագում է պիլվ. **dašt** «անապատ, հարթավայր» բառից⁸⁷: Քիչ չեն նաև դաշտ բառով բաղադրյալ կառույցները՝ **դաշտն Աղիովտի, դաշտն Աղուանից, դաշտն Ասորեստանի, դաշտն Արայի, դաշտն Արտագու, դաշտն Գարգարացուց** ևն:

Տուն, բնակավայր իմաստային դաշտում ենք ընդգրկել նաև **աշտարակ** բառը, որի ծագման վերաբերյալ Աճառյանը ոչինչ չի նշում: Ջահուկյանի բացահայտմամբ՝ իրանական ծագման բառ է, թեև բուն աղբյուրը հաստատված չէ: Վերջինս բարձր ու նեղ կառուցվածք ունեցող շինություն է, որը կառուցում էին ամրոցի պարիսպների անկյուններում՝ թշնամուն հետևելու ու նրանից պաշտպանվելու համար. «*և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց*» (Էջ 420):

Վկայարան. վկաների՝ հանուն հավատքի նահատակվող անձանց նահատակության վայրում կառուցված տաճար է: Հիմքում **վկայ** բառն է, որը ծագում է իրանական **vīkay** բառից⁸⁸: **-արան** վերջածանցը ևս իրանական ծագման է՝ **-a-δαν(a)-** ածանցակերպից (**-a-** հիմքակազմ տարր+ **dana** «տեղ»)⁸⁹: Իշխանների և թագավորների բնակատեղի է նաև **դդեակը**: *Ապարանք, բերդ և ամրոց* բառերի հետ

⁸⁴ Տե՛ս ՆՀԲ, էջ 821:

⁸⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 711:

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 157:

⁸⁷ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 623:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 344:

⁸⁹ Տե՛ս ՆՀԲ, էջ 514:

կազմում է հոմանշային շարք: Իրանական փոխառություն է, որի բուն աղբյուրը դարձյալ պարզված չէ:

Կան վայրեր, որտեղ տարածվում է ծաղիկների և մրգերի անուշ բույրը: Այդպիսի վայրերը կոչվում են **բուրաստան**: Շատ հաճախ բուրաստանն ընկալվում է նաև որպես դրախտ: ՆՀԲ-ում բերվում է նաև *արուարձան քաղաքի* իմաստը⁹⁰: Ծագում է պիլ. **bwδ-** «բոյր, անուշ հոտ» բառից⁹¹, **-ստան** ածանցով, որը ևս իրանական է ***stān(a)-** ածանցակերտից⁹²:

Նահանգը երկրի վարչաքաղաքական խոշոր ստորաբաժանումներից է, որն ընկած է գավառի և երկրամասի միջև: Ծագման վերաբերյալ կան տարակարծություններ: Աճառյանի ստուգաբանությամբ՝ այն ասորական ծագման բառ է **na-an-ga** ձևից⁹³, իսկ Ջահուկյանի դիտարկմամբ՝ իրանական ծագման է՝ մ.պ **nsng** արմատից⁹⁴:

Գոյություն ունեն այնպիսի վայրեր, որոնք նախատեսված են զանազան վտանգներից պաշտպանվելու և պատսպարվելու համար: Այդպիսի վայրերն **ապաստաններն** են: Բառն ընդգրկել ենք մեր իմաստային դաշտում՝ ընկալելով այն որպես վայր, որտեղ մարդը կարող է ապրել ապահով՝ զերծ հետապնդումներից և հալածանքներից: Աղայանի բառարանում տրվում են նաև *օթևան* և *թաքստոց* իմաստները⁹⁵: Ծագում է իրանական **apastān** «ապաւեն, ապաստան» բառից⁹⁶:

Ճակատ. ծագում է իրանյան ***cakāt** «ճակատ», մ. պ. ***cakāt** «գազաթ» բառից: ՆՀԲ-ում գտնում ենք. *«ճակատ շինուածոյ կամ գրուածոյ, բարձր դիրք»*⁹⁷:

⁹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

⁹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 799:

⁹² Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 422:

⁹³ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 422:

⁹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 560:

⁹⁵ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 97:

⁹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 67:

⁹⁷ ՆՀԲ, էջ 166:

Ամփոփելով Մ.Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ իրանական ծագում ունեցող *քնակավայր*, *տուն* նշանակող բառերի ստուգաբանական և իմաստաբանական քննությունը՝ արձանագրում ենք.

ա) բերված բառերի մեծամասնությունը լեզվի պատմական զարգացման ընթացքում իմաստային փոփոխություններ չի կրել, բացառությամբ մի քան բառերի, որոնք լեզվի արդի փուլում վերածվել են հնաբանությունների՝ *կոյս* (կողմ), որը դուրս է մղվել գործածությունից՝ պահպանվելով միայն բաղադրությունների կազմում՝ *կուսակցություն*, *կուսակալություն* ևն: Այնուհետև՝ *խորան*, որի դեպքում տեղի է ունեցել իմաստային կտրուկ փոփոխություն՝ կորցրել է *եկեղեցի*, *տաճար* իմաստները՝ դառնալով եկեղեցու բեմի նշանակիչ (իմաստի նեղացում), *դիւան*, որը ևս կորցրել է հիմնական *դիւանատուն* իմաստը՝ ձեռք բերելով *գրասենյակ* նշանակությունը,

բ) առանձնացված միավորների շարքում գերակշռում են պարզ և ածանցավոր բառերը՝ *շեն*, *տաճար*, *աւան*, *դիւան*, *դրախտ*, *ապարանք*, *վանք*, *բուրաստան*, *վկայարան*, *դժոխք*,

գ) ինչպես բնիկ, այնպես էլ իրանական ծագման բառերի դեպքում, ունենք հարադրավոր կազմություններ՝ մեծ մասամբ երկրանունների նշանակությամբ՝ *աշխարհ Ալանաց*, *սահմանք Ասորւոց*, *շէնն Սմբատաւան*, *դաշտն Արտագու* ևն,

դ) բառերի մի ստվար զանգված պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է հնչյունական փոփոխությունների, որոնց կանոնադառնանք համապատասխան ենթազլխում,

ե) ըստ վիճակագրության՝ իրանյան ծագման է 25 բառ:

դ) բառերի մի ստվար զանգված պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է հնչյունական փոփոխությունների, որոնց կանոնադառնանք համապատասխան ենթազլխում,

ե) ըստ վիճակագրության՝ իրանյան ծագման է 25 բառ:

1.3 Հունական փոխառություններ

Հայերենի վրա մեծ է եղել նաև հունարենի ազդեցությունը: Մեր թվարկության 3-4-րդ դարերից սկսած՝ գրաբարը փոխառություններ է կատարել հունարենից մինչև 10-11-րդ դարերը: Ըստ Աճառյանի՝ հունարենից փոխառված բառերի թիվը 918 է, իսկ Ջահուկյանը նվազեցնում է քանակը՝ հասցնելով ...-ի: *Բնակավայր, տուն* նշանակող բառերի շարքում առանձնացրել ենք նաև հունական փոխառություններ, որոնք փոքրաթիվ են՝ **պալատն, եկեղեցի, ովկիանոս, փոս:**

Պալատն. *թագավորի բնակության շքեղ շենք, ապարանք, դղյակ*, փոխաբերական իմաստով՝ *շքեղ պալատանման տուն՝ շենք, բնակարան*: Ծագում է յն. **παλάτιον, παλάτιν** բառերից, որոնք փոխառյալ են լատիներենի **palatium** բառից⁹⁸:

Քրիստոնյաների կրոնական-պաշտամունքային արարողությունների շենքը, տաճարը **եկեղեցին** է: Ջահուկյանի նշմամբ՝ հին փոխառություն է հունարենի **εκκλησια՝ դոսի**-եցի անցումով, որը ժողովրդական ստուգաբանության արդյունք է⁹⁹:

Ջրային ընդարձակ տարածություն է **ովկիանոսը**, որը ինչպես *ծով* բառի դեպքում ընկալել ենք իբրև ջրային կենդանիների բնակության վայր՝ ընդգրկելով *բնակավայր, տուն* իմաստային դաշտում: Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում *ովկիանոսի* առաջնային իմաստը տրվում է՝ *Յունաց դիցաբանության մեջ՝ ծովերի ծովերի աստուածը, Տիտաններից աւագը, որը մարմնացնում է ծովի գաղափարը*¹⁰⁰: Ծագում է **Ὠκεανός** «մեծ ծով, յատկապես Ատլանտեան ովկիանոսը» բառից¹⁰¹: **Փոս.** *ներս ընկած տեղ է հարթ մակերևույթի վրա, գետնի մեջ փորած կամ որևէ պատճառով խոր ընկած տեղ է, զանազան նպատակներով գետնի վրա փորած երկար խրամ է, խրամաձև փորվածք*¹⁰²: Ծագում է յն. **φόσσα** «փոս» բառից,

⁹⁸ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 4:

⁹⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 211:

¹⁰⁰ **Ստ. Մալխասյանց**, նշվ. աշխ., հ. 3, էջ 574:

¹⁰¹ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 605:

¹⁰² Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1533:

որը փոխառյալ է լատիներենի **fossa** (> իտալ. **fossa**, ֆրանս. **fosse**) «փոս» բառից¹⁰³:

Բնակավայր, տուն նշանակող հունական ծագման բառերի քննության արդյունքում արձանագրում ենք.

ա) *բնակավայր, տուն* իմաստային դաշտում հունական ծագման փոխառությունները փոքրամասնություն են կազմում, ըստ վիճակագրության՝ 4 բառ,

բ) բերված բոլոր բառերը կազմությամբ պարզ են,

գ) լեզվի պատմական զարգացման ընթացքում հիշյալ բառերից և ոչ մեկը իմաստային փոփոխությունների չի ենթարկվել, դրանք համագործածական են հայոց լեզվի զարգացման բոլոր գրական փուլերում,

դ) միայն երկու բառի դեպքում՝ *պալատն* և *ովկիանոս*, առկա են հընչյունական փոփոխություններ, որոնց մասին ավելի մանրամասն դեռ կնշենք:

1.4 Աստրական փոխառություններ

Հայերենը փոխառություններ է կատարել նաև ասորերենից, որոնց թիվը հասնում է 211-ի: Ասորերենի ազդեցությունը հայերենի վրա սկսվում է դեռ վաղ ժամանակներից՝ մ.թ.ա 2-րդ դարից և շարունակվում մինչև մ.թ. 5-6-րդ դարերը:

Բնակավայր, տուն իմաստային դաշտում ընդգրկել ենք ասորական ծագման լոկ երկու, բայց չափազանց կարևոր բառ՝ **քաղաք** և **բերդ**:

Կարևոր իմաստային միավոր է **քաղաքը**, որը խոշոր բնակավայր է, արդյունաբերական, առևտրական և մշակութային կենտրոն: Ծագումը կապվում է Ասորեստանի նշանավոր մայրաքաղաք **Kalak** բառի հետ, որը *«շինուած էր Նինուէից դէպի հարաւ՝ Տիգրիսի վրայ և խալդեաց ժամանակ շատ նշանաւոր էր: Անշուշտ նախապէս հասարակ անուն էր «քաղաք» նշանակութեամբ և յետոյ մասնաւորուե-*

¹⁰³ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 517:

լով՝ յատուկ անուն դարձաւ»¹⁰⁴։ Նշենք նաև, որ *քաղաք* բառը մեր իմաստային դաշտի մեծաթիվ կիրառությունն ունեցող միավորներից է։

Երկում վկայված են նաև *քաղաք* բառով բաղադրյալ կապակցություններ՝ **քաղաքն Բեթքուրին, քաղաքն Բիւզանդիոն, քաղաքն Եդեսիայ, քաղաքն Երուսաղայ, քաղաքն Մելիտինէ, քաղաքն Նիկիայցոց, քաղաքն Շամիրամայ, քաղաքն Փայտակարան** են։

Բերդ. ամուր պարիսպներով շրջապատված ամրոց է, որտեղ կարող են ապաստանել մարդիկ և պաշտպանվել թշնամու հարձակումներից։ Ծագում է **birtu(m)** արմատից¹⁰⁵։

Ամփոփելով ասորական ծագման բառերի ստուգաբանական քննությունը՝ արձանագրում ենք.

ա) բերված բառերը կազմությամբ պարզ են,

բ) լեզվի պատմական զարգացման ընթացքում հիշյալ բառերը իմաստային փոփոխություններ չեն կրել, միայն *բերդ* բառը արդի մտածողությամբ առաջին հերթին ընկալվում է *բանտ* իմաստով կամ *անառիկ բերդ* փոխաբերական իմաստով, այլ բովանդակությամբ՝ պատմաբար է,

գ) պատմական զարգացման ընթացքում նշյալ բառերը չեն կրել հնչյունական փոփոխություններ։

1.5 Անհայտ ծագման բառեր

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում վկայված են նաև բառեր, որոնց ծագումն անհայտ է։ Դրանց թվում են **խրճիթ, ագարակ, տապան, հովիտ, գաւիթ, առապար, վայր** միավորները։

Խրճիթ-ը գյուղական, հասարակ փոքրիկ տուն է, *«շինէ եւ յանապատ եւ յանմարդ տեղիս եղբայրանոցս եւ մենաստանս եւ յատկանձնակաց խրճիթս»* (Էջ 336)։ Ծագումն անհայտ է։ Զահուկյանի դիտարկմամբ՝ այն կարող է կապվել հնդեվրոպական ***kred-** «գե-

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 542։

¹⁰⁵ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ.աշխ., էջ 126։

րաններ» արմատի հետ, որից գոթ. **hrōt** «տանիք», հ.իսլ. **hrōt** «տանիք, ձեղնահարկ»¹⁰⁶:

Ագարակ. մշակված կամ մշակելի հող է, հանդ, հողային կավածք: Ծագման վերաբերյալ նշվում է միայն, որ փոխառություն է սակայն բուն աղբյուրը ճշգրտված չէ: Բերվում են շումերական **agar** «դաշտ, արտ» հնդեվր. ***agro** ձևերը, իսկ **-ակ**-ը մնում է դժվար բացատրելի¹⁰⁷, որը մեր կարծիքով իրանյան ծագման նվազական ցուցիչ է:

Տապան. Մալխասյանցի բառարանում գտնում ենք հետաքրքիր մեկնություններ՝ *արկղաձև կառուցուածք, սենեակի հողէ յատակ, որի վրա գորգ կամ փսիաթ են փռոււմ, գյուղական տան յետևի մասը*¹⁰⁸: Առաջին իմաստը Աղայանի բառարանում տրվում է իբրև հնաբանություն: Ունի նաև այլ իմաստներ՝ *գերեզման, շիրիմ, տապանաքար, շիրմաքար*: Վերջին՝ հինգերորդ իմաստով տրվում է. «Այն նավը, որով ըստ Աստվածաշնչի, Նոյը իր ընտանիքով և բոլոր տեսակի կենդանիներով փրկվեց աշխարհակործան ջրհեղեղից»¹⁰⁹:

Հովիտ. «բազմամարդացոյց գաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի **հովիտս** եւ ի դաշտս» (Էջ 224): Հովիտը երկու լեռների միջև ընկած դաշտավայր է: Ծագումն անհայտ է, Ջահուկյանի նշմամբ՝ թերևս ենթաշերտային բառ¹¹⁰:

Գաիւթ. 1. *Յանկապատած կամ պարսպապատած տեղ (տան, տաճարի նն) շենքի առջև, բակ:* 2. *Տան բնակելի մասի սենյակների և դռան միջև եղած տարածությունը, ծածկած նախասրահ*¹¹¹: Մտ. Մալխասյանցի բառարանում առաջնային իմաստով նշանակում է *ոչխարների փարախ, որտեղ գիշերները պատսպարվում են*¹¹²: Ինչ-

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 355:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

¹⁰⁸ Տե՛ս Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, էջ 375:

¹⁰⁹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 1412:

¹¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 466:

¹¹¹ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 222:

¹¹² Տե՛ս Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 417:

պէս տեսնում ենք, լեզվի պատմական զարգացման ընթացքում այն կորցրել է նախնական իմաստը՝ ենթարկվելով իմաստի նեղացման:

Առապար. նշանակում է քարքարոտ, խորդուբորդ, անհարթ տեղ, տարածություն: Հիմքում **ապար** արմատն է, որն անձանոթ է: Ըստ Ջահուկյանի՝ այն դժվար թե որևէ կապ ունենա *ապարած* բառի հետ¹¹³, որը իրանյան ծագում ունի: Կարող ենք ենթադրել, որ ածանցավոր կազմություն է **առ-** հայկական ծագման նախդրով, որը նշանակում է մոտ, հարակից:

Վայր. որևէ բանի գտնվելու տեղն է, որոշակի տարածություն: ՆՀԲ-ում նշված է՝ *տեղի արտաքոյ բնակութեան*¹¹⁴, իսկ Աղայանի բառարանում չորրորդ իմաստով նշված է *բնակելի տեղ, բնակավայր*¹¹⁵: Ծագումը ևս անհայտ է, սակայն Ջահուկյանը կասկածանքով նշում է իրանական:

Բնակավայր, տուն իմաստային դաշտի անհայտ ծագման բառերի ստուգաբանական վերլուծությունն ամփոփելով՝ արձանագրում ենք.

ա) հիշյալ բառերի մեծ մասը կազմությամբ պարզ է, վկայված է միայն մեկ ածանցավոր բառ՝ *առապար*,

բ) շարքում առկա են լեզվի պատմական զարգացման ընթացքում իմաստային փոփոխություններ կրած միավորներ՝ *գաւիթ*, որի դեպքում տեղի է ունեցել իմաստի նեղացում, և *ագարակ, տապան*, որոնց բերված իմաստները վերածվել են հնաբանությունների: *Տապան*-ը պահպանվել է կապակցության մեջ՝ *Նոյյան տապան*, ինչպէս նաև «պառկած գերեզմանաքար» իմաստով՝ տապանաքար բարդության մեջ:

¹¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 72:

¹¹⁴ Տե՛ս ՆՀԲ, էջ 778:

¹¹⁵ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 1355:

1.6 Բնիկ և փոխառյալ արմատներով կաղապարներ

Բնակավայր, տուն իմաստային դաշտում բնիկ բառերից հետո մեծամասնություն են կազմում հիբրիդ՝ խառնանդամ բառերը: Առանձնացրել ենք բնիկ և փոխառյալ արմատներով կազմված շուրջ 39 բառ՝ **զարանիստ/զորանիստ, թագաւորանիստ, արքայանիստ, մայրաքաղաք, քաղաքագիւղ, հանգստարան, միայնարան, մենաստան, ամարաստան, բնակութիւն, պետութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, նախարարութիւն, աշխարհակալութիւն, արքայութիւն, կուսակալութիւն, հրաշակերտութիւն, շինութիւն, ձեռակերտ, միջնաբերդ, իջական/իջեւան, արքունիք, շինուածք, հովուականք, դիւանատուն, պահեստ, լեռնադաշտ, դաշտաբերան, դաշտավայր, բարձրաւանդակ, արգաւանդահող, դարաւանդ, դիտանոց, օտարանոց, ծովակ, ձորակ, տափարակ, արտասահման** են:

Զօրանիստ, թագաւորանիստ, արքայանիստ բառերը ցույց են տալիս զորքի, արքայի նստավայրը, բնակավայրը: Վերջին երկուսն անգամ հոմանշային շարք են կազմում: Կազմում ունեն մեկ ընդհանուր հիմք՝ **նիստ**, որը ծագմամբ բնիկ է՝ հնդեվրոպական ***niz-do** (***ni** «ցած» ***sed-*zd** «նստել») արմատից¹¹⁶: **Զօր** և **թագ** արմատները իրանական ծագման են՝ առաջինը **zāvar** ձևից, երկրորդը՝ թերևս արամեական միջնորդությամբ **tāg** արմատից¹¹⁷: **Թագաւորանիստ** բառում առկա է նաև **-աւոր** ածանցը, որը ծագում է հնդեվրոպական ***-bher-** «կրել, բերել» արմատի ձայնադարձային ***-bhor-** ձևից՝ նախորդող ***-ā>ə-** հիմքային տարրով¹¹⁸: **Արքայանիստ** բառի առաջին բաղադրիչը՝ **արքայ**, հունական ծագման է **ἀρχων, ἀρχιος** ձևերից¹¹⁹:

Մայրաքաղաք և **քաղաքագիւղ** բառերի կազմում դարձյալ ունենք մեկ ընդհանուր արմատ՝ **քաղաք**, որը ասորական ծագման է: **Մայր** (***māter** «մայր») և **գիւղ** միավորները բնիկ հնդեվրոպական են:

Հանգստարան, միայնարան. Բառարանում *հանգստավայր* բառի համար տրվում են հետևյալ իմաստները. 1. *Հանգստանալու՝*

¹¹⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 568:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 235 և 253:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 802:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 97:

հանգչելու տեղ, հանգստավայր (բնակարան, անկողին, աթոռ են):

2. *Բջևան, հանգրվան: 3. Գերեզման: 4. Գերեզմանատուն*¹²⁰. Իսկ *միայնարանը* միայնակ ապրելու վայր է՝ սենյակ, առանձնարան: Երկուսի դեպքում էլ ընդհանուր է **-արան** իրանական ծագման վերջածանցը: **Հանգ** արմատը և **-իստ** վերջածանցը ծագմամբ բնիկ են (ստուգաբանությանն անդրադարձել ենք համապատասխան ենթագլխում): *Միայնարան* բառի առաջին՝ **մի** բաղադրիչը ծագում է հնդեվրոպական ***smio-** ***sem** «մի, միասին» արմատից, իսկ **-այն** ածանցը՝ հավա-նաբար ***ā>ə**-ով վերջացող բառերի վրա ***-ino** ածանցի հավելմամբ (***ā>ə**-ից ծագող ա-ն հետագայում գիտակցվել է որպես ածանցի տարր, իսկ i-ն ձայնավորից հետո վերածվել է *յ*-ի)¹²¹:

Միայնակյացների բնակության վայրը **մենաստանն** է, որը մարդկանց բնակությունից առանձնացած վանք է, որտեղ ապրում են կրոնավորները: Հիմքում **մի** բաղադրիչն է՝ բնիկ ծագման, և **-(ա)ստան** տեղացույց ածանցը՝ իրանյան ծագման:

Էդ. Աղայանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում **ամարաստան** բառի դիմաց նշվում է *տե՛ս ամառանոց*: Նով տեղ է, որտեղ հանսգտանում են ամառվա շոգ եղանակին: Հիմքում **ամառն** արմատն է՝ բնիկ հնդեվրոպական ***sem̥rom-** ***sem** «ամառ» արմատից¹²²:

Հիբրիդ բառերի շարքում մեծամասնությունն են կազմում **-ութին** բնիկ ծագման ածանցով կազմված բառերը՝ **բնակութին, պետութին, թագաւորութին, իշխանութին, նախարարութին, աշխարհակալութին, արքայութին, կուսակալութին, շինութին**:

Բնակութին, պետութին, իշխանութին, նախարարութին, շինութին բառերի հիմքում ընկած **բնակ, պետ, իշխան, նախարար, շէն** արմատները իրանյան ծագում ունեն: *Բնակութին* բառի մեզ հետաքրքրող իմաստները Աղայանի բառարանում երրորդն ու չորրորդն են՝ 3. (*հնգ.*) *բնակավայր*, 4. (*հզվդ.*) *բնակարան*¹²³: «Արամայիս

¹²⁰ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 816:

¹²¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 526 և 795:

¹²² Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 42:

¹²³ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 196:

շինէ իւր տուն **բնակութեան** ի վերայ ոստոյ միոյ» (Էջ 48): **Բնակ** բաղադրիչը ծագում է իրանյան **bunak** ձևից: **Պետ** արմատը ծագում է իրանյան ***pet** ձևից, հմմտ. ավ. **paiti**¹²⁴:

Բշխանություն բառում **իշխան** բաղադրիչը իրանյան **xšān(a)** «իշխան» արմատից է¹²⁵: **Նախարարություն** բառի առաջնային իմաստը տրվում է՝ (պատմ.) **Նախարարի նահանգը՝ երկրամասը**¹²⁶: «որ է այժմ մեծ **նախարարություն** ի մեջ աշխարհիս» (Էջ 116): Հիմքում **նախարար** արմատն է՝ իրանական **nāfardāra** «նախարար» ձևից¹²⁷: Երկում վկայված են նաև **նախարարություն** բառով հարադրավոր կապակցություններ՝ **նախարարությունն Պարսից, նախարարությունն Ամատունեաց, նախարարությունն Աբեղեան, նախարարությունն Գաբեղեան, նախարարությունն Ապահունեաց, նախարարությունն Մանավազեան, նախարարությունն Բզնունական** ևն:

Աշխարհակալություն և **կուսակալություն** բառերի կազմում ընդհանուր բաղադրիչ է **կալ** արմատը, որը ծագմամբ բնիկ է: **Աշխարհ** և **կոյս** միավորները իրանյան ծագման են: **Աշխարհակալությունը** երկրորդ իմաստով բացատրվում է **պետություն, որի մեջ մտնում են շատ երկրներ, իսկ կուսակալությունը** երրորդ իմաստով՝ **կուսակալի տիրապետությունը՝ նահանգը**¹²⁸:

Թագաւորութիւն բառի կազմում ունենք միայն մեկ փոխառյալ բաղադրիչ՝ **թագ**, իսկ **-աւոր** և **-ութիւն** ածանցները բնիկ են: Աղայանի բառարանում առաջին և հինգերորդ իմաստներով տրվում է՝
1. Միապետական պետություն, որ կառավարում է թագավորը,
5. Թագավորի իշխանության տակ գտնվող երկիրը¹²⁹:

Արքայութիւն. հոմանշային շարք է կազմում նախորդ՝ **թագաւորութիւն** բառի հետ: Հիմքում **արքայ**՝ հունական ծագման արմատն է **-ութիւն** ածանցի միացմամբ: Նույն հիմքից ունենք նաև **արքունիք**,

¹²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 635:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 286:

¹²⁶ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 1051:

¹²⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 560:

¹²⁸ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 90 և 784:

¹²⁹ Նույն տեղում, էջ 411:

դարձյալ խառնանդամ միավորը՝ **-ունի** և **-ք** բնիկ ածանցների միությանը: **-ունի** ածանցի ստուգաբանության մասով նշենք հետևյալը. կազմված է *-ուն*՝ հնդեվրոպական ***ono-** և *-ի*՝ ***iyo/ -ā-** ածանցներից¹³⁰:

Շինություն. շենք, կառույց է՝ նախատեսված տարբեր նպատակների համար: Կազմված է իրանյան ծագման **շէն** արմատից և բնիկ ծագման **-ություն** վերջածանցից: Նույնարմատ է նաև **շինուածք** բառը **-ուած** և **-ք** բնիկ ածանցների միությանը:

Լեռնադաշտ, դաշտաբերան և դաշտավայր բառերի հիմքում ունենք ընդհանուր արմատ՝ **դաշտ**, որը իրանական ծագման է, իսկ **լեռան** և **բերան** (***bhereno-****bher* «սուր գործիքով գործել՝ ծակել, կտրել, ճեղքել») բաղադրիչները բնիկ հնդեվրոպական են: Վայր բառի ծագումն անհայտ է, սակայն Ջահուկյանը կասկածաբով նշում է նաև իրանական¹³¹:

Դիտանոց, օտարանոց. առաջինը նշանակում է բարձր տեղ՝ աշտարակ, որտեղից կարելի է դիտել շրջակայքը, իսկ երկրորդը՝ իջևանատուն, հյուրանոց օտարների ընդունելության համար: Երկուսի կազմում էլ առկա է **-անոց** բնիկ ծագման վերջածանցը, իսկ **դէտ** և **օտար** արմատները իրանական ծագման են՝ ***dēt** և ***awtar** ձևերից:

Բարձրաւանդակ և դարաւանդ բառերը նույնիմաստ են՝ բարձր տեղ, բարձունք: **Բարձր** արմատը բնիկ հնդեվրոպական է ***bhrǵʰu-r-**՝ ***bherǵʰ-** «բարձր, վեր» արմատից, իսկ **վանդակ** բաղադրիչը, որը առկա է նաև *դարաւանդ* բառի կազմում առանց *ակ*-ի իրանյան ***vandak** ձևից փոխառություն է¹³²: «*գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում*» (Էջ 40): **Դար** արմատը ծագում է բնիկ հնդեվրոպական ***dher-** «ցատկել, ոստնել» բառից, մինչդեռ Ջահուկյանը գրում է. «*Թէն կա դարաւանդ, որ խոսում է ամբողջ կազմության հնարավոր*

¹³⁰ Տե՛ս Գ. Ջահուկայն, նշվ. աշխ., էջ 806 և 812:

¹³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 703:

¹³² Տե՛ս նույն տեղում, էջ 704:

իրանական ծագման մասին (*հմմտ. band*), բայց սա կարող է լինել բարձրաւանդակ տիպի կազմություն»¹³³:

Դիւանատուն. Աղայանի բառարանում տրվում է. (*հնգ.*): *Գրասենյակ, դիվան*¹³⁴: Կազմում իրանյան և բնիկ ծագման բառեր են՝ **դիւան** և **տուն**:

Հովուականք. հովիվների բնակության վայրն է՝ վանքը: Հիմքում **հովիվ** և **վան** արմատներն են՝ բնիկ և իրանյան ծագման: **Հովիվ** բառը ծագում է հնդեվրոպական ***owi-pā** (***owi-** «ոչխար» և ***pā-** «կերակրել, արածեցնել») արմատից¹³⁵:

Քաղաքի կամ ամրոցի մեջ ամրացված ինքնուրույն պաշտպանության հարմարեցված կառույց է **միջնաբերդը**: Հիմքում **մեջ** և **բերդ** արմատներն են, առաջինը բնիկ ծագման, երկրորդը՝ ասորական:

Արգաւանդահող. «*հաճի ի գաւառին Կարնոյ շինել զքաղաքն արգաւանդահող, շատաջուր և բերրի*» (էջ 420): Առավելապես ածական է՝ *հող, որը բերրի է, պտղաբեր* իմաստով: **Արգաւանդը** իրանական փոխառություն է ***arg-āvand**, որի բուն աղբյուրը հավաստված չէ, իսկ **հողը** անստույգ բառ է, ծագումը՝ անհայտ՝ Ջահուկյանի դիտարկմամբ¹³⁶: Մինչդեռ Աճառյանը այն համարում է բնիկ հայկական բառ՝ հնիւ. **pol-** ձևից¹³⁷:

Տափարակ. Էդ.Աղայանի և Ստ.Մալխասյանցի բացատրական բառարաններում առաջնային իմաստով տրվում է իբրև ածական՝ *տափակ, հարթ* իմաստով: Իբրև գոյական հանդես է գալիս երկրորդ իմաստով՝ *տափակ, հարթ տարածություն, հարթություն*: Հիմքում **տափ** արմատն է՝ բնիկ հնդեվրոպական ***doph-**՝ ***deph-** «ծեծել, տրորել» արմատից, որտեղից էլ նաև *տոփել*, սակայն Ջահուկյանը նաև հնարավոր է համարում իրանական ծագումը¹³⁸: **-աբ** մասնիկը ևս

¹³³ Նույն տեղում, էջ 187:

¹³⁴ **Էդ. Աղայան**, նշվ. աշխ, էջ 301:

¹³⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 466:

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

¹³⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, էջ 111:

¹³⁸ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 726:

հնդեվրոպական է՝ ***(e)ro-** ածանցից, իսկ **-ակ**-ը ծագում է իրանական **-ak** ձևից:

Իջավան/իջեւան. երկում հանդիպում ենք երկու ձևերին էլ. «յա-դագս **իջավանին** եղև խոտվութիւն» (էջ 374), «հրաման տայ Արտաշէս՝ զոր յարուցանել յարևելից և ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչև ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և **իիջեւանս** քար ըստ մարդաթուի կարկատ՝ նշան բազմութեանն թողուլ» (էջ 138): Իջևանելու, գիշերելու տեղ է, որտեղ ճանապարհորդներն իջնում են հանգստանալու համար: Հիմքում էջ բառն է, որը ծագում է բնիկ հնդեվրոպական ***el** «զնալ» արմատից՝ ***-gh-** կամ ***-dh** ածականով¹³⁹: **Վանք**, ինչպես նշել ենք, իրանական ծագման է:

Ձեռակերտ. շենք, աւան, դաստակերտ, գիւղ, քաղաք. սրանք գոյականական իմաստներն են, որոնք երկրորդականն են բոլոր բառարաններում: Առաջնային իմաստով ածական է՝ ձեռքով կառուցված: Կազմված է **ձեռն** (բնիկ հնդեվրոպական ***g'h(es)o**r «ձեռք» արմատից) և **կերտ** (հմմտ. իրանյան **karta** ձևից) արմատներից¹⁴⁰:

Հրաշակերտություն. նշանակում է հրաշալի, հոյակապ կերտվածք, ստեղծագործություն: Կազմված է իրանյան ծագման **հրաշ** (***fraša-** «հրաշալի, հիանալի») և **կերտ** արմատներից՝ բնիկ հնդեվրոպական **-ութիւն** ածանցի միությամբ: «Բսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա **հրաշակերտութիւնք**՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ...» (էջ 66):

Պահեստ. շենք է, սենյակ կամ շենքի բաժանմունք, որտեղ պահում են զանազան իրեր: Հիմքում իրանյան ***pah**r «պահպանություն» (***<pavra-pavra**) հիմքից ծագող **պահ** արմատն է՝ **-եստ** հնդեվրոպական ծագման վերջածանցով¹⁴¹:

Ձորակ և **ծովակ** բառերում ընդհանուր է **-ակ** փոքրացուցիչ արժեք ունեցող ածանցը, որը իրանյան ծագման է, իսկ **ձոր** և **ծով** բաղադրիչները ծագմամբ բնիկ են:

¹³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 245:

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 402 և 475:

¹⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 617 և 805:

Արտասահման. որևէ երկիր, որը գտնվում է տվյալ պետության սահմաններից դուրս, օտար երկիր: «*Յաղագս արտասահման լինելոյ մեծին Ներսիսի*» (էջ 356): Հետաքրքիր է, որ ՆՀԲ-ում և Ստ.Մալ-խասյանցի բառարաններում առաջնային իմաստով տրվում է որպես ածական՝ *սահմանից, չափից դուրս, անչափ* իմաստներով: Կազմում **արտ** և **սահման** բաղադրիչներն են, որոնցից առաջինը բնիկ հնդեվրոպական ***agro** ձևից է՝ «արտա-, դուրս» նշանակությամբ¹⁴²: Հարկ է նշել նաև, որ հունարենի **έξ, έξ** նախամասնիկների նմանությունամբ հունաբանները ստեղծեցին **արտ-** հայերեն նախածանցը¹⁴³: Երկրորդ բաղադրիչը ծագմամբ իրանյան է:

Ամփոփելով *բնակավայր, տուն* իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ արմատներով կազմված կաղապարները՝ արձանագրում ենք.

ա) *բնակավայր* հասկացության բնիկ և փոխառյալ արմատներով կազմված կաղապարները մեծամասնությունն են կազմում բնիկ բառերից հետո,

բ) շարքում առկա են միայն բարդ, ածանցավոր և բարդաձանցավոր բառեր, ընդ որում գերակշռում են ածանցավոր բառերը, որոնք թվով 19-ն են: Բարդ են 13, բարդաձանցավոր՝ 6 բառ,

գ) շարքում կան նաև այնպիսի կաղապարներ, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում վերածվել են հնաբառերի կամ պատմաբառերի՝ *բնակություն, արքունիք, դիւանատուն, օտարանոց*,

դ) նշյալ բառերի թվում առկա են նաև բառեր, որոնք գործածությունից դուրս են մղվել՝ ձեռք բերելով նոր ձևեր, օրինակ՝ *ամառաստան* բառի փոխարեն առաջ է եկել *ամառանոց* տարբերակը, նույն կերպ նաև *իջավանի* փոխարեն՝ *իջևան, հովուականք՝ հովվանոց* են:

¹⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 95:

¹⁴³ Հմմտ. **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 143:

1.7 Բնակավայր, տուն նշանակող բառերի հոմանշային շարքերը և հնչունափոխական տարբերակները

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում առանձնացրել ենք այնպիսի միավորներ, որոնք կազմում են հոմանշային շարքեր: Դրանց ուսումնասիրման համար հիմք ենք ընդունել Ռ.Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանը» (2006 թ.) և Ա.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (1967թ.):

Բնակավայր, տուն իմաստային դաշտում ընդգրկված բառերի և կապակցությունների շարքում արձանագրել ենք հետևյալ հոմանշային շարքերը. **տուն**- ապարանք-պալատն-տաճար-դղեակ-սենեակ-օթանոց-դաստակերտ-խրճիթ-տանիք-ընտանիք-երկիր-աշխարհ, **տեղի**-վայր-միջոց, **երկիր**-հայրենիք-պետություն-ցամաք-աշխարհ-գաւառ, **կողմն**-կոյս-եզր-(պատմ.) երկիր-գաւառ, **այր**-անձաւ-քարանձաւ, **ամուրն**-ամրոց-ամրութիւն-բերդ-միջնաբերդ, **հովանոց**-ամարաստան, **դրախտ**-երկինք-բուրաս-տան-արքայութիւն, **դժոխք**-վիհ-փոս-գերեզման, **եզր**-սահ-ման, **ովկիանոս**-ծով-ծովակ, **լեռն**-բլուր, **ձոր**-ձորակ, **կողմնակալութիւն**-կուսակալութիւն, **տապան**-գերեզման, **շէն**-աւան-գիւղ-շինուածք-շինութիւն, **դաստակերտ**-ձեռակերտ,**տաճար**-եկեղեցի-վանք-մեհեան-տուն Տեառն-ապարանք-պալատն, **աւան**-գիւղաքաղաք, **վանք**-վանորայք-մենաստան-միայնարան-եղբայրանոց, **ոստան**-մայրաքաղաք, **խորան**-եկեղեցի-դիւան-սենեակ-տուն-դուռ, **դիւան**-դիւանատուն, **նահանգ**-գաւառ-(հնգ.) կուսակալութիւն, **քաղաք**-ոստան-մայրաքաղաք, **թագաւորանիստ**-արքայանիստ-արքունիք-արքայութիւն-թագաւորութիւն-պետութիւն-տերութիւն-իշխանութիւն, **հանգստարան**-գերեզման, **բարձրաւանդակ**-դարաւանդ-լեռնա-դաշտ, **սենեակ**-առագաստ, **ազարակ**-դաշտ-կալուածք, **հովիտ**-դաշտավայր-ձոր-ձորակ, **հարաւ**-հարաւակողմն, **հայրենիք**-երկիր Աւետեաց, **աշխարհ**-տիեզերք- (հնգ.) գաւառ-նահանգ, **դաշտ**-դաշտավայր-լեռնադաշտ-տափարակ, **օթանոց**-իջւական-իջեւան-ապաստան ևն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Քննությունը սկսենք մեր իմաստային դաշտի գլխավոր՝ **տուն** բառից: Հոմանշային շարք է կազմում **ապարանք, պալատն, տաճար, սենեակ, օթանոց** բառերի հետ¹⁴⁴: Ա. Սուքիասյանի բառարանում իբրև հոմանիշներ են տրվում նաև **դղեակ, դաստակերտ, խրճիթ, ընտանիք, երկիր, աշխարհ** բառերը¹⁴⁵: Ըստ էության՝ *բնակավայր, տուն* իմաստային դաշտում ընդգրկված գրեթե բոլոր միավորները կարող են հոմանշային շարք կազմել *տուն* բառի հետ, սակայն առաջնահերթությունը տալիս ենք բառարաններում հաստատված տվյալներին:

Հոմանշային շարք են կազմում նաև **ապարանք, պալատն, արքունիք, դղեակ** միավորները: **Արքունիքը** իմաստային ընդհանրություններ ունի նաև **արքայություն, թագաւորութիւն, պետութիւն, տէրութիւն, իշխանութիւն** բառերի հետ. նույնիմաստ է նաև **դուռն արքունի** կապակցությունը: Շարքին կարող ենք ավելացնել նաև **թագաւորանիստ** և **արքայանիստ** միավորները: **Դղեակ** բառի դիմաց գտնում ենք **բերդ, ամրոց, ամուրն** հոմանիշները: Հոմանիշներ են նաև **ամուրն, ամրոց, ամրութիւն, բերդ, միջնաբերդ** բառերը:

Տաճար բառի դիմաց գտնում ենք **եկեղեցի, վանք, մեհեան** հոմանիշները, ինչպես նաև **տուն Տեառն** կապակցությունը: Ռ.Ղազարյանն ավելացնում է նաև *ապարանք* և *պալատն* բառերը¹⁴⁶: Իբրև հոմանիշներ են հանդես գալիս նաև **եկեղեցի, խորան** և **տաճար** միավորները: *Խորանը*, բացի *եկեղեցի* և *տաճար* բառերից, հոմանշային շարք է կազմում **դիւան, սենեակ**, Սուքիասյանի նշմամբ՝ անգամ **դուռն** միավորների հետ¹⁴⁷: *Դիւանը* հոմանշային շարք է կազմում **դիւանատուն** բառի հետ, *սենեակը՝ առագաստի*, իսկ *դուռն* բառը՝ *արքունիք, պալատն* միավորների:

Վանք. հոմանշային շարք է կազմում **մենաստան, միայնաբան, վանորայք, եղբայրանոց, օթանոց, իջավան/ իջեւան** բառերի հետ:

¹⁴⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 662:

¹⁴⁵ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 663:

¹⁴⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 342:

¹⁴⁷ Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 272:

Օթանոցը, բացի *իջավան/իջեւան* բառերից, իմաստով մոտ է նաև **ապաստան** միավորի հետ:

Մեր իմաստային դաշտի կարևոր բառերից են նաև **երկիրը, հայրենիքը, աշխարհը**, որոնք ևս հոմանշային շարք են կազմում: Նշյալ շարքին են ավելանում նաև **պետություն, տերություն, թագաւորություն, ցամաք, գաւառ** միավորները: **Հայրենիք** բառի դիմաց իբրև հոմանիշ տրվում է նաև **Աւետեաց երկիր** կապակցությունը¹⁴⁸, իսկ *աշխարհը* նաև **տիեզերքն** է, (*հնգ.*) *գաւառ, նահանգ*¹⁴⁹:

Նույն՝ *ամռանը շոգ եղանակին հանգստանալու վայր, հով տեղ* իմաստով են միավորված **հովանոց** և **ամառաստան** բառերը:

Դրախտը հոմանշային շարք է կազմում *բնակավայր, տուն* իմաստային դաշտի **բուրաստան, երկինք**, նաև **արքայություն** բառերի հետ, իսկ **դժոխքը՝ գերեզման, վիհ, փոս** միավորների հետ: Հոմանիշներ են նաև **հանգստարան** և **գերեզման** բառերը:

Բարձունք, բարձր տեղ իմաստով ընդհանրանում, ուստի և հոմանշային շարք են կազմում **բարձրաւանդակ** և **դարաւանդ** բառերը: Սուքիապանը իբրև հոմանիշ բերում է նաև **լեռնադաշտը**¹⁵⁰:

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում առանձնացրել ենք նաև այնպիսի միավորներ, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են հնչյունական փոփոխությունների: Դրանց թվում են **դուռն, կողմն, ամուրն, աջակողմն, ձախակողմն, պալատն, լեառն, սենեակ, դղեակ, մեհեան, տեղի, հիւսիսի, գիւղ/-գեւղ, քաղաքագիւղ, ամրություն, բնակություն, տերություն, պետություն, իշխանություն, նախարարություն, աշխարհակալություն, կողմնակալություն, հրաշակերտություն, արքայություն, կուսակալություն, շինություն, տանուտերություն, թագաւորություն, թագաւորանիստ, անձաւ, քարանձաւ, հարաւ, հարաւակողմն, նաւ, նաւահանգիստ, դիւան, դիւանատուն, աւան, բարձրաւանդակ, արգաւանդահող, դարաւանդ, գաւառ, գաւիթ, կոյս, նաւակառոյց, շէն, ուկիհանոս, մաւր/մօր, գաւտի/գօտի, գաւրանիստ/ գօրանիստ, կալուածք, շինուածք, հովուականք** բառերը:

¹⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 363:

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 72:

¹⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 119:

Բառավերջի **ն** և **ի** հնչյունների պատմական անկմամբ արևելահայերենին են փոխանցվել *դուռն, կողմն, աջակողմն, ձախակողմն, պալատն, ամուրն, լեռն, հարաւակողմն, տեղի, հիւսիսի* բառերը:

Լեռան. լեզվի արդի փուլում ունենք **լեռ** տարբերակը: Տեղի է ունեցել **եա>ե** հնչյունափոխություն, այսինքն՝ **եա** երկբարբառի պարզեցում, ինչպես նաև *ն-ի* անկում:

Մենեակ, դդեակ, մեհեան բառերի դեպքում տեղի է ունեցել **եա>յա** հնչյունափոխություն՝ **եա** երկբարբառը վերածվել է **յա** երկհնչյունի՝ *սենյակ, դդյակ, մեհյան*:

Արձանագրել ենք նաև այնպիսի միավորներ, որոնցում առկա է **եւ>ն** հնչյունափոխություն՝ **արեւելք/ արևելք, արեւմուտք/ արևմուտք** և **իջեւան/ իջևան**:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի է ունեցել նաև **իւ>յու** հնչյունափոխություն, այսինքն՝ **իւ** երկբարբառը վերածվել է **յու** երկհնչյունի **գիւղ, քաղաքագիւղ, հիւսիսի, ամրութիւն, բնակութիւն, տէրութիւն, պետութիւն, իշխանութիւն, նախարարութիւն, աշխարհակալութիւն, կողմնակալութիւն, հրաշակերտութիւն, արքայութիւն, կուսակալութիւն, շինութիւն, տանուտէրութիւն, թագաւորութիւն** բառերում: Մեր քննած բնագրում վկայված է նաև **գիւղ** բառի հնագույն ձևը՝ **գեւղ**: Երկում գտնում ենք նաև **գեօղ** տարբերակը. «**գեօղն որ կոչի Խախ**» (Էջ 374): Արդի արևելահայերենում նշյալ ձևերի փոխարեն գործածվում են *գյուղ, քաղաքագյուղ, ամրություն, բնակություն, պետություն, իշխանություն* ևն տարբերակները:

Տէրութիւն, տանուտէրութիւն բառերում, բացի **իւ>յու** հնչյունափոխությունից, առկա է նաև **է>ե** անցումը՝ *տերություն, տանուտէրություն*: Նույն փոփոխությունն է վկայված նաև **շէն** բառում՝ *շեն*:

Մ.Աբեղյանի ուղղագրական ռեֆորմի հետևանքով վերացավ Ի/ւ տառը, որի պատճառով արդի արևելահայերենում տեղի ունեցավ **ւ>վ** անցումը՝ **թագաւորութիւն/թագավորություն, թագաւորանիստ/թագավորանիստ, անձաւ/անձավ, քարանձաւ/քարանձավ, հարաւ/հարավ, հարաւակողմն/ հարավակողմ, նաւ/ նավ, նաւահանգիստ/նավահանգիստ, դիւան/դիվան, դիւանատուն/դիվանատուն, աւան/ավան, բարձրաւանդակ/բարձրավանդակ, արգաւան-**

դահող/արգավանդահող, դարաւանդ/դարավանդ, գաւառ/գավառ, գաւիթ/գավիթ:

Երկու բառի դեպքում՝ **կոյս** և **նաւակառոյց**, առկա է **ոյ>ույ** հնչյունափոխություն՝ *կույս, նաւակառույց*:

Ովկիանոս բառում հնչյունափոխվել է բառասկզբի **ո**-ն՝ վերածվելով **օ** հնչյունի՝ *օվկիանոս*, իսկ **մաւր/մօր, գաւտի/գօտի** և **գաւրանիստ/գօրանիստ** բառերում նկատվում է **աւ>օ** պատմական անցումը: Աւ երկբարբառը պարզեցվել է, որը Աբեղյանի ուղղագրական կանոնով վերածվել է **ո**-ի՝ *մոր, գոտի, գորանիստ*:

Արդի արևելահայերենում, այսպիսով, բոլոր գրաբարյան երկբարբառները վերածվել են երկհնչյունների կամ պարզ ձայնավորների:

Երկում վկայված են նաև **իջւական** և **իջեւան** հնչյունափոխական տարբերակների կիրառություններ, որոնցից արդի արևելահայերենին է փոխանցվել երկրորդը՝ **իջեւան՝ իջւան**:

Ու>վ ուղղագրական փոփոխություն է առկա **կալուածք, շինուածք, հովուավանք** բառերում՝ *կալվածք, շինվածք, հովվավանք*:

Ամփոփելով *բնակավայր, տուն* նշանակող բառերի հոմանշային շարքերն ու հնչյունափոխական տարբերակները՝ արձանագրում ենք.

ա) *բնակավայր* հասկացության բառերով կազմվել է շուրջ 36 հոմանշային շարք,

բ) դուրս բերված շուրջ 131 բառերից 53-ը լեզվի պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է հնչյունական փոփոխությունների,

գ) հիմնական փոփոխությունները վերաբերում են գրաբարյան երկբարբառների երկհնչյունների կամ պարզ ձայնավորների վերածվելուն՝ *եա>յա, իւ>յու, ոյ>ույ, աւ>օ>ո, եա>ե, եւ>և*,

դ) վկայված են նաև բառավերջի **ն** և **ի** հնչյունների անկման դեպքեր՝ *կողմն, դուռն, տեղի, հիւսիսի* ևն,

ե) պատմական զարգացման ընթացքում հնչյունափոխվել են նաև բառամիջի **է, ու** հնչյունները՝ *շէն>շեն, շինուածք>շինվածք*, բառասկզբի **ո**-ն՝ *ովկիանոս>օվկիանոս*, ինչպես նաև **ւ** հնչյուն-տառա-

նշանը, որը դուրս է մղվել արդի արևելահայերենից՝ *նաւ>նավ, ան-
ձաւ>անձավ*:

1.8 Բնակավայր և տուն նշանակող բառերից կազմված ԴՄ-ները

Մ.Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված են *բնա-
կավայր, տուն* նշանակող բառերից կազմված փոքրաթիվ դարձված-
քային միավորներ (ԴՄ): Դարձվածքը երկու և ավելի բառերից
կազմված կայուն կապակցություն է, որը արտահայտում է փոխա-
բերական իմաստ: Գրաբարի դարձվածքները, սակայն, աչքի չեն
ընկնում իրենց կայունությամբ: Պատճառներից մեկն այն է, որ
դարձվածքը, լինելով կայուն կապակցություն, չի կարող ենթարկվել
փոփոխությունների, մինչդեռ գրաբարյան դարձվածքներում հաճա-
խադեպ են թե՛ միջարկումները, թե՛ ազատ շարադասությունը, այ-
սինքն՝ բաղադրիչների ազատ տեղաշարժը¹⁵¹:

«Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր* հասկացույթի բառե-
րից կազմված և հաճախական կիրառություն ունեցող դարձվածքնե-
րից առանձնացրել ենք **աշխարհամուտ դուռն, սահմանք քաջաց
զենն իւրեանց, սահման հաստատել, տեղի տալ, երկիր պագանել,
յերկիր հարստի, յերկիր կործանել, յերկիր ընկենուլ, յերկիր զարկա-
նել, երկիր Աւետեաց, ելք յաշխարհէ, վիհ ծծմբոյ, ապաստան առնել,
ճակատ յօրինել, ճակատ առ ճակատ, ճակատ տալ, ածու փոքր** ևն:

Դարձվածքների քննության համար հիմք ենք ընդունել Ռ.Ղա-
զարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանը» (2012թ.),
Ա.Սուքիասյանի և Ս.Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանա-
կան բառարանը» (1975թ.):

Աշխարհամուտ դուռն. նշանակում է արքունիք, արքունի
դուռ¹⁵²: «*Վարդապետ մեր Աստիկոս եպիսկոպոս աշխարհամուտ
ղրանդ օրհնութեամբ ողջոյն*» (էջ 414):

Տեղի տալ. Գրաբարի դարձվածաբանական բառարանում
գտնում ենք երկու իմաստ. 1. *առիթ տալ, թող տալ, զիջել, անսալ,
հպատակուել, ենթարկուել*, 2. *խոյս տալ, խուսափել, յետ քաշուել*,

¹⁵¹ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Զ. Հարությունյան, Գրաբարի
դարձվածաբանություն, Եր., 2020, էջ 21-22:

¹⁵² Տե՛ս Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012, էջ 35:

ընկրկել, նահանջել¹⁵³: Խորենացու երկում գործածված է «խուսափել, խոյս տալ, նահանջել» իմաստով. «Մակաւ ինչ տեղի տայ ազգն Աշանաց» (էջ 210):

Երկիր պագանել. նշանակում է երկրպագել, պաշտել: «հրամայեաց...թողուլ ի սպառ զօրէնս հրէութեան, և **երկիր պագանել արեգական**» (էջ 162): Արդի արևելահայերենում այն դարձվածք չէ, քանի որ վերածվել է բարդ բայի՝ *երկրպագել*:

Ապաստան առնել. նշանակում է վստահելով հանձնել մեկին, թողնել մեկի կամքին: «և ոչ առ թագաւորն Արշակ անցին. այլ զաւագակս ոմանս, որ ի կողմանս Չորրորդ Հայոց էին...դիմեցին **ապաստան առնել**» (էջ 384):

Ճակատ յօրինել. նշանակում է ճակատ կազմել, կռվի՝ պատերազմելու պատրաստվել: «*խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ **ճակատ յօրինեսցէ***» (էջ 44):

Ճակատ առ ճակատ. արտահայտում է *դեմ հանդիման, դեմ դիմաց, դեմ առ դեմ* իմաստները: Երկում գտնում ենք. «Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին, որ կոչի Չիրաւ, և մատեան **ճակատ առ ճակատ**» (էջ 368):

«Գրաբարի դարձուածաբանական բառարանում» վկայված չեն սահմանք քաջաց զէնն իւրեանց, սահման հաստատել, յերկիր հարստի, յերկիր կործանել, յերկիր զարկանել, յերկիր ընկենուլ, երկիր Աւետեաց, ելք յաշխարհէ, վիհ ծծմբոյ, ճակատ տալ և ածու փոքր դարձվածքները:

Քերթողահայր Խորենացու պատմության մեջ գրեթե բոլոր գլուխներում վկայված են թևավոր խոսքեր, որոնց թվում է **սահմանք քաջաց զէնն իւրեանց** կապակցությունը: «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» բացատրվում է հետևյալ կերպ.

«*ուժով է որոշվում սահմանը, որոշողը զենքն է, ուժն է*»¹⁵⁴. Մեկ այլ բառարանում գտնում ենք. «*քաջերի համար սահման չկայ, որքան նրանց ոյժը պատում է՝ զէնքով գրաւում են*»¹⁵⁵:

¹⁵³ Նշվ. աշխ, էջ 265:

Սահման հաստատել. «Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ... նորոգեաց, և ...Արտաշիրական անուանեաց» (էջ 262): Նշանակում է իշխանություն հաստատել:

Յերկիր հարստի. «Չեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ *յերկիր հարստի սլաքն*» (էջ 44): Նշանակում է նետահար անել, նետով սպանել, խոցել, ճեղքել:

Յերկիր կործանել, յերկիր ընկենուլ, յերկիր զարկանել. «արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ *յերկիր կործանէին*» (էջ 44), «*զարկուցեալ յերկիր ընկենոյր զարքայն*» (էջ 272): Առաջին երկու ԴՄ-ները կարելի է ասել՝ հոմանշային շարք են կազմում՝ արտահայտելով տապալվել, ջախջախվել իմաստները, իսկ *յերկիր զարկանել* նշանակում է ջարդել, ավերել, տապալել:

Երկիր Աւետեաց. «1.Ըստ հրեական ավանդության՝ Պաղեստինը, որ աստված խոստացել էր տալ ժառանգություն հրեաներին, 2.(փխբ.) Հայրենիք, Արևմտյան Հայաստան, 3. Բաղձալի, ցանկալի երկիր, երջանկություն, երանության, առատության վայր՝ տեղ»¹⁵⁶: Խորենացու երկում այն կիրառված է հենց առաջին իմաստով՝ Պաղեստին, «Մովսէս բարձեալ լինի և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել *յերկիրն Աւետեաց*» (էջ 448):

Ելք յաշխարհէ. «յետ ելից Յակովբայ *յաշխարհէս*՝ ... գտեալ բժշկութիւն գաւառին» (էջ 316): Կիրառված է փրկության ճանապարհ իմաստով:

Վիհ ծծմբոյ. նշանակում է դժոխք: «սպանանեն զնա ...և ընկենուն ի վիհ մեծ *ծծմբոյ*» (էջ 110):

Ճակատ տալ. «Իսկ քաջին Տրդատայ երագապէս և բազում *ճակատս տուեալ*, նախ ի Հայս և ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն» (էջ 272): Նշանակում է մարտնչել, կռվել, պայքարել:

Ածու փոքր. «Զի թէպէտ և եմք *ածու փոքր*, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...» (էջ 12): Արտահայտում է փոքր երկիր, ազգ, ժողովուրդ իմաստները:

¹⁵⁴ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, էջ 512:

¹⁵⁵ Ս. Մալխասեանց, Ասացուածքներ հայերէն գրաբար լեզուով, Եր., 1945, էջ 638:

¹⁵⁶ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 79:

Ամփոփելով *բնակավայր* և *տուն* նշանակող բառերից կազմված ԴՄ-ների քննությունը՝ արձանագրում ենք.


ա) *բնակավայր* հասկացության միավորներից միակ բառը *երկիրն* է, որով կազմված դարձվածքները համեմատաբար ավելի շատ են, քան մյուս բառերով ձևավորվածները,

բ) բերված դարձվածքների մեծ մասը չի կիրառվում արդի արևելահայերենում, ինչպես՝ *աշխարհամուտ դուռն, յերկիր հարստի, յերկիր կործանել, վիհ ծծմբոյ, ելք յաշխարհէ, ապաստան տունել* ևն,

գ) արդի արևելահայերենում պահպանվել են *տեղի տալ, ճակատ առ ճակատ և ճակատ տալ* դարձվածքները, իսկ *երկիր պագանել*-ի դեպքում տեղի է ունեցել բաղադրիչների միավորում՝ *երկրպագել*,

դ) մեր հասկացությանց դուրս ենք գրել ընդհանուր 17 դարձվածք:

Այսպիսով՝ Մ.Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերի ճնշող մեծամասնությունը ժառանգված է հնդեվրոպական մայր լեզվից: Դուրս գրված շուրջ 132 բառերից 55-ը բնիկ են: Երկրորդ տեղում խառնանդամ՝ բնիկ և փոխառյալ արմատներով կազմված միավորներն են՝ 39, երրորդ տեղում իրանյան ծագման բառերն են՝ 25, ապա անհայտ ծագման՝ 7, հունական՝ 4: Ամենաքիչ թվով փոխառություններն ասորերենից են՝ 2 բառ:



ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՏՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բառակազմությունը լեզվաբանության այն բաժինն է, որը զբաղվում է լեզվի բառակազմական համակարգի ուսումնասիրությամբ: Լ.Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ նշվում է. *«Բառակազմության ուսումնասիրության առարկան բաղադրյալ բառերի կազմության եղանակներն ու միջոցներն են. ըստ այդմ բառակազմական հիմնական միավորը բաղադրյալ բառն է, որն իր հերթին կազմված է բառակազմական նվազագույն միավորներից կամ տարրերից»*¹: Գրաբարի բառակազմության հիմնական եղանակները բառաբարդումն ու ածանցումն են, որոնք հատուկ են եղել հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերին: Ջահուկյանի մեկնությամբ՝ միջուկ է ծառայում որպես բառակազմական հիմք ձևավորված որևէ արմատ, իսկ որպես ամփոփողային բաղադրիչ հանդես է գալիս մի հատուկ տիպի բաղադրիչ, որը նախատեսված է հենց այդ գործառնության համար և չունի անկախ կիրառություն²: Այդ երկրորդ տիպի բաղադրիչը նա կոչում է *ածանց*, ածանցավոր բառերի սերումը՝ *ածանցում*, իսկ համատիպ բաղադրիչներով բաղադրությունը՝ *բարդություն* կամ *բարդ բառ*, սրա սերումը՝ *բարդում*:

Ըստ կազմության՝ բառերը լինում են պարզ և բաղադրյալ: Բաղադրյալ բառերն իրենց հերթին լինում են բարդ, ածանցավոր և բարդածանցավոր: Հետազոտության սույն հատվածում դասակարգել ենք Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերը՝ ըստ իրենց բառակազմական բնութագրի:

¹ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 51:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 158:

2.1 Պարզ արմատական բառեր

Պարզ են կոչվում այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ հիմնական ձևությից³: Դրանք կոչվում են նաև արմատական բառեր: Խորենացու երկում *քնակալայր* հասկացության բառերի մեծամասնությունը կազմությամբ պարզ է՝ ծագմամբ բնիկ և փոխառյալ: Հետաքրքիր է, որ այս շարքում բնիկ և փոխառյալ պարզ արմատական բառերը թվով հավասար են, այսինքն՝ ունենք 24 բնիկ և 24 փոխառյալ պարզ արմատներ: Դրանց թվում են **երկիր, տեղի, տուն, դուռն, կողմն, ամուրն, այր, եզր, ծով, լեռոն, բլուր, ձոր, անձաւ, երկին, մօր, հարաւ, հիւսիսի, նաւ, գաւառ, գիւղ, կղզի, ցամաք, սենեակ, գօտի, շէն, տաճար, աւան, աշխարհ, սահման, ուստան, խորան, դիւան, կոյս, աշտարակ, դրախտ, դաշտ, գերեզման, վիհ, դղեակ, նահանգ, ապաստան, ճակատ, պալատն, եկեղեցի, ովկիանոս, փոս, քաղաք, բերդ** միավորները: Թվով 6 արմատական բառ անհայտ ծագման են՝ **խրճիթ, տապան, ագարակ, հովիտ, գաւիթ, վայր**: Հարկ է նշել, որ *ագարակ* բառը, որի *-ակ* բաղադրիչը համարել ենք իրանյան ծագման նվազական ածանց, ներառել ենք պարզ բառերի շարքում, հիմք ընդունելով այն դրույթը, որ *«պարզ համարվող բառերը ստուգաբանորեն փոխառու և նույնիսկ մայրենի լեզվում կարող են բաղադրյալ լինել, սակայն համաժամանակյա մոտեցմամբ դա նշանակություն չունի. այդ բառերը ժամանակակից հայերենում պարզ են»*⁴:

Արդի արևելահայերենում առանձին գործածական չէ միայն **երկին** արմատը: Վերջինս կենսունակ է բառային զուգորդելիությունների ժամանակ՝ **երկինք՝ երկինք, երկնային՝ երկին+ային, երկնակամար՝ երկին+ա+կամար, երկնագույն՝ երկին+ա+գույն** և այլն:

Դուռն, կողմն, լեռոն արմատների բառավերջի **ն** հնչյունը, թեև լեզվի պատմական զարգացման ընթացքում անկում է ապրել, արդի արևելահայերենում բառակազմության ժամանակ վերա-

³ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 287:

⁴ Նշվ. աշխ., էջ 288:

կանգնվում է, ինչպես՝ *դռնապահ*՝ *դռն(ն)+ա+պահ*, *կողմնակալ*՝ *կողմ(ն)+ա+կալ*, *լեռնաշղթա*՝ *լեռ(ն)+ա+շղթա* ևն:

Ի մի բերելով ասվածը՝ արձանագրում ենք.

ա) *բնակավայր*, *տուն* նշանակող բառերի մեծամասնությունը պարզ արմատական բառեր են՝ ծագմամբ և՛ բնիկ, և՛ փոխառյալ, որոնց գրեթե մեծամասնությունը արդյունավետ է բառային զուգորդելիություններ կազմելիս,

բ) բնիկ և փոխառյալ պարզ բառերը հավասար թիվ են կազմում՝ 24,

գ) շարքում 6 արմատական բառ անհայտ ծագման է,

դ) *բնակավայր* հասկացության բառերի շարքում վկայված է ընդհանուր 54 արմատական բառ:

2.2 Նախաձանցավոր կառույցներ

Նոր բառերի ստեղծման եղանակներից մեկը հայերենում ածանցումն է՝ բառահիմքին ածանցի կցումով նոր բառերի ստեղծումը: Ըստ դասի կարգի՝ ածանցները արմատահիմքի հարաբերությամբ լինում են *նախադաս* և *հետադաս*. նախադաս ածանցները կոչվում են *նախաձանցներ*, հետադասները՝ *վերջաձանցներ*⁵: Ըստ այդմ էլ տարբերակվում են նախաձանցավոր և վերջաձանցավոր բառեր: Սույն ենթադիվում անդրադառնալու ենք *բնակավայր*, *տուն* նշանակող նախաձանցավոր բառերին: Վերջիններս փոքրաթիվ են, լոկ չորսը՝ **արտասահման, առապար, առագաստ և ընտանիք**:

Լ.Հովսեփյանը գրաբարի նախաձանցները բաժանում է երեք հիմնական խմբի՝ 1) Ժխտական՝ *ան-*, *ապ(ա)-*, *դժ-(տժ)-*, *չ-*, *տ-*, 2) նախդիրներից առաջացած՝ *առ-*, *ընդ-*, *ըստ-*, *ի(j)-*, *զ-*, *ց-*, 3) հունարենի հետևողությամբ անկախ բառերից կամ բառահատվածներից արհեստական կերպով ստեղծված՝ *ապ-*, *արտ-*, *բաղ-*, *բար-*, *բաց*, *գեր-*, *դեր-*, *ենթ-*, *թեր-*, *հակ-*, *համ-*, *հոմ-*, *մակ-*, *յար-*, *նախ-*,

⁵ Տե՛ս Գ. Զառուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 159:

*ներ-, շաղ-, շար-, պար, ստոր*⁶։ Մեզ հետաքրքրում են երկրորդ՝ նախդիրներից առաջացած և երրորդ՝ հունաբան նախամասնիկներից առաջ եկած նախածանցների խմբերը, քանի որ, ինչպես տեսնում ենք, մեր իմաստային դաշտում վկայված են երկրորդ և երրորդ խմբերին պատկանող *առ-*, *ընդ-* նախդիրներից և *արտ-* հունաբան նախամասնիկից առաջ եկած նախածանցներով կառույցներ։ Նախածանցների դերում, հեղինակի նշմամբ, ամենամեծ գործածությունն ունեն *առ-* և *ընդ-* նախդիրները, որոնցով կան և՛ ավանդաբար ժառանգված, և՛ նոր կազմություններ⁷։

Վերոհիշյալ միավորների բառակազմական վերլուծության արդյունքում ստանում ենք հետևյալ պատկերը.

արտասահման=արտ+ա+սահման, *արտ-*՝ նախածանց, *ա՝*՝ հոդակապ, *սահման՝*՝ արմատ,

առապար=առ+ապար, *առ-*՝ նախածանց, *ապար՝*՝ արմատ,

առագաստ=առ+ագ+աստ, *առ-*՝ նախածանց, *ագ՝*՝ արմատ, *-աստ՝*՝ վերջածանց,

ընտանիք=ըն(դ)+տան+իք, *ըն(դ)-՝*՝ հնչյունափոխված նախդիր, *տան՝*՝ արմատ, *-իք՝*՝ վերջածանց։

Ինչպես տեսնում ենք, վերջին երկուսը կազմված են մեկից ավելի ածանցներից։ Այդպիսի բառերը կոչվում են կրկնածանցավոր բառեր։

Այսպիսով՝ *բնակավայր* հասկացության բառերի շարքում նախածանցավորները փոքրամասնություն են կազմում, վկայված է հոդակապավոր մեկ բառ՝ *արտասահման*։

2.3 Վերջածանցավոր կառույցներ

Պարզ արմատական բառերից հետո *բնակավայր*, *տուն* իմաստային դաշտում մեծամասնություն են կազմում վերջածանցավոր բառերը՝ **տանիք**, **ընտանիք**, **առագաստ**, **ամրոց**, **ձմերոց**, **միջոց**, **հո-**

⁶ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, էջ 160-162։

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 161։

վանոց, օթանոց, աղքատանոց, եղբայրանոց, դիտանոց, օտարանոց, ապարանք, վանք, դժոխք, երկինք, դադարք, հայրենիք, արքունիք, վանորայք, տերութիւն, բնակութիւն, պետութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, նախարարութիւն, արքայութիւն, շինութիւն, ամրութիւն, շինուածք, կալուածք, ածու, վկայարան, հանգստարան, միայնարան, բուրաստան, մենաստան, ամարաստան, պահեստ, ծովակ, ձորակ, տափարակ: Շարքում գտնում ենք -իք,

-աստ, -ոց, - (ան)+ոց, -ք, - (ու)ած(ք), -ենի(ք), -ունի(ք), -որայք, -ութիւն, -ու,

-արան, -(ա)ստան, -եստ, -ակ, -արակ ընդհանուր առմամբ գոյականակերտ վերջածանցներով կազմված բառեր: Գրաբարի բառակազմական համակարգում վերջածանցման կաղապարներն ավելի բազմազան են և իրացման ավելի լայն հնարավորություն ունեն, քան նախածանցման կաղապարները⁸:

Գոյականներից և ածականներից **-իք** ածանցով կազմվում են գոյականներ զանազան նշանակություններով⁹: Մեր իմաստային դաշտում *տուն* գոյականից *-իք* ածանցով ունենք **տանիք** բառը՝ *տան+իք*, որը իբրև հիմք հանդես է գալիս **ընտանիք** բառում:

Աբեղյանը բերում է **-անոց, -ոց** ածանցները՝ նշելով, որ գոյականներից կազմում են գոյականներ, որոնք ցույց են տալիս առարկայի տեղը¹⁰: Մեր իմաստային դաշտում այդպիսիք են **ամրոց=ամուր+ոց, ձմերոց=** *ձմեր+ոց, միջոց=մեջ+ոց, հովանոց=հով+անոց, օթանոց=օթ+անոց, աղքատանոց=աղքատ+անոց, եղբայրանոց=եղբայր+անոց, դիտանոց=դէտ+անոց, օտարանոց=օտար+անոց բառերը:*

Գրաբարյան **-ք** հոգնակերտով, որը արդի արևելահայերնում չի գիտակցվում իբրև այդպիսին, ունենք **ապարանք՝ ապարան+ք, վանք՝ վան+ք, դժոխք՝ դժոխ+ք, երկինք՝ երկին+ք, դադարք՝ դա-**

⁸ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 187:

⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. Զ, Եր., 1974, էջ 208:

¹⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 214:

դար+ք բառերը: Պետք է նշել, որ -ք բառահարաբերական ձևային անցումը բառակազմականի արդեն սկսվել էր հին հայերենում:

-որայք վերջածանցը հավաքական հոգնակի նշանակությամբ հանդես է գալիս մեր իմաստային դաշտից վանորայք բառի կազմում:

-ութին վերջածանցով վկայված են հետևյալ միավորները.

տերութին= տեր+ութին

բնակութին= բնակ+ութին

պետութին= պետ+ութին

իշխանութին= իշխան+ութին

նախարարութին= նախարար+ութին

արքայութին= արքայ+ութին

շինութին= շէն>շին+ութին

ամրութին= ամուր+ութին

-ու ածանցով շարքում ունենք *ածու*՝ *ած+ու* բառը: Նշենք նաև, որ -ու բայածականակերտը դարձել է գոյականակերտ ածանց:

Երկիր, մի բանի տեղ ցույց տվող -(ա)ստան ածանցով ունենք բուրաստան, մենաստան, ամարաստան բառերը, որոնք կարելի է նաև համարել հոդակապավոր կառույցներ:

-եստ ածանցով, որը գործուն չէ, բնակավայր, տուն իմաստային դաշտում առկա է միայն մեկ բառ՝ *պահեստ*՝ *պահ+եստ*:

Գոյական անվանը նվազական իմաստ հաղորդող -ակ ածանցով ունենք *ձորակ*՝ *ձոր+ ակ*, *ծովակ*՝ *ծով+ակ* բառերը, իսկ -արակ ածանցով՝ *տափարակ*՝ *տափ+արակ*: Հավելենք, որ -ակ-ը ոչ միայն նվազական, այլև ընդհանրական տարբերակիչ գործուն ածանց է՝ արդի արևելահայերենում հույժ կենսունակ:

-արան ածանցով ունենք *վկայարան*՝ *վկայ+արան*, *հանգստարան*՝ *հանգ+իստ+արան*, *միայնարան*՝ *մի+այն+արան* բառերը: Վերջին երկուսը կրկնաձևացավոր բառեր են:

Այս շարքում առկա են թվով 9 կրկնաձևացավոր բառեր՝ *առագաստ*՝ *առ+ագ+աստ*, *հայրենիք*՝ *հայր+ենի+ք*, *արքունիք*՝ *արք+ունի+ք*, *թագաւորութին*՝ *թագ+աւոր+ութին*, *շինուածք*՝ *շէն+ուած+ք*,

**կալուածք՝ կալ+ուած+ք, հանգստարան՝ հանգ+խտ+արան, միայնա-
րան՝ մի+այն+արան, ընտանիք՝ ըն+տան+իք:**

Ամփոփելով Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնա-
կավայր, տուն* նշանակող վերջածանցավոր բառերի բառակազմա-
կան քննությունը՝ արձանագրում ենք.

ա) *բնակավայր* հասկացության վերջածանցավոր բառերը մեծա-
մասնություն են կազմում պարզ արմատականներից հետո, թվով՝ 42,
որոնցից 9-ը կրկնածանցավոր են, 3-ը՝ հոդակապավոր,

բ) վերջածանցավոր բառերի մեծամասնությունը բնիկ և փոխա-
ռյալ արմատներով կազմված կաղապարներ են,

գ) երկում վկայված են բնիկ ծագման 17, փոխառյալ՝ 6, բնիկ և
փոխառյալ արմատներով 19 վերջածանցավոր բառեր,

դ) արդի արևելահայերենում առավել կենսունակ են *-ոց, -անոց,
-ութիւն, -արան* ածանցները:

2.4 Բարդություններ՝ հոդակապավոր և անհոդակապ կառույցներ

Բարդություններ կամ բարդ բառեր են կոչվում այն միավորնե-
րը, որոնք կազմված են երկու կամ ավելի հիմքերից և ունեն մեկ ը-
նդհանուր շեշտ: Մ.Աբեղյանը սահմանում է. «*Իսկական բարդ բառե-
րը կազմվում են այս ընդհանուր կանոնով. 1) Բարդության երկու
մասերի մեջ մտնում է Ա ձայնավորը, որ կոչվում է հոդակապ, 2)
Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական
հոլովը, 3) Բարդության առաջին անդամի վերջի փակ վանկի ձայ-
նավորները մնալով անշեշտ՝ կրում են ձայնափոխություն»¹¹: Իսկա-
կան բարդություններ կազմվում են նաև առանց հոդակապի:*

Բարդ բառերի կազմում տարբերակվում են առաջնային և երկ-
րորդային հիմքեր, որոնք կարող են լինել մաքուր և ձևավոր: Հոլովե-
փյանի նշամար՝ մաքուր են կոչվում այն առաջնային հիմքերը, որոնք
բառակազմական գործընթացում որևէ փոփոխություն չեն կրում,
բացի շեշտի կորստից, իսկ մաքուր են այն երկրորդային հիմքերը,

¹¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 154:

որոնք բառակազմական նոր ձևային կցման դեպքում չեն ենթարկվում փոփոխությունների¹²: Ձևավոր հիմքերը բաժանում է երկու խմբի՝ զուտ հնչյունական փոփոխությունների ենթարկված և հիմքակազմ տարրերով կամ հերթագայություններով օժտված:

Գ.Ջահուկյանի նշմամբ՝ հայերենի բարդության բնական տիպը երկբաղադրիչությունն է. եթե բարդ բառն իր կազմում ունենում է երկուսից ավելի արմատական բաղադրիչ, ապա դրանք բաղադրվում են ոչ թե միաժամանակ, այլ երկանդամորեն¹³: Ստորև կտեսնենք, որ մեր իմաստային դաշտի բարդությունները առանց բացառություն երկբաղադրիչ են:

Խորենացու երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերի շարքում արձանագրել ենք և՛ հոդակապավոր, և՛ անհոդակապ բարդություններ: Առաջինը անդրադառնանք հոդակապավոր բարդություններին՝ տալով դրանց բառակազմական կաղապարները.

Աջակողմն - աջ+ա+կողմն, գոյական+հոդակապ+գոյական

Ձախակողմն - ձախ+ա+կողմն, գոյական+հոդակապ+գոյական

Լեռնակողմն - լեռն> լեռն+ա+կողմն, գոյական+հոդակապ+գոյական

Հարաւակողմն - հարաւ+ա+կողմն, գոյական+հոդակապ+գոյական

Դաստակերտ - դաստ+ա+կերտ, գոյական+հոդակապ+գոյական

Զօրանիստ - զօր+ա+նիստ, գոյական+հոդակապ+գոյական

Արքայանիստ - արքայ+ա+նիստ, գոյական+հոդակապ+գոյական

Մայրաքաղաք - մայր+ա+քաղաք, գոյական+հոդակապ+գոյական

Քաղաքագիւղ - քաղաք+ա+գիւղ, գոյական+հոդակապ+գոյական

Ձեռակերտ - ձեռն+ա+կերտ, գոյական+հոդակապ+գոյական

Իջավան - իջ>իջ+ա+վան, բայահիմք+հոդակապ+գոյական

¹² Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 62:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 214:

Իջեւան- Էջ>իջ+ի+ա+վան, Բայափիմք+ի Բայական ձևույթ+հողակապ+գոյական

Դիւանատուն - դիւան+ա+տուն, գոյական+հողակապ+գոյական

Լեռնադաշտ – լեռն> լեռն+ա+դաշտ, գոյական+հողակապ+գոյական

Դաշտաբերան – դաշտ+ա+բերան, գոյական+հողակապ+գոյական

Դաշտավայր - դաշտ+ա+վայր, գոյական+հողակապ+գոյական

Դարաւանդ - դար+ա+ւանդ, գոյական+հողակապ+գոյական

Արգաւանդահող - արգաւանդ+ա+հող, ածական/ գոյական+հողակապ+գոյական

Ինչպէս տեսնում ենք, նշյալ բառերի մեծամասնության առաջնային հիմքերը մաքուր են՝ բացառությամբ *լեռնակողմն*, *լեռնադաշտ*, *իջական* և *իջեւան* միավորների, որոնց առաջնային հիմքերը հնչյունափոխված են, ընդ որում վերջին միավորում առկա է նաև *ի* Բայական ձևույթի *ա* հողակապի հետ միացման արդյունքում *իա>ե* հնչյունափոխությունը:

Լ. Հովսեփյանի նշմամբ՝ գրաբարում բառակազմության ժամանակ **ա** հողակապը լայն տարածում ունէր¹⁴: «*Հայտնի է, որ սկզբնապէս այն եղել է հիմնային ձայնավոր և արտացոլում է հ-ե. բառակազմության այն հնագույն վիճակը, երբ բարդություններն առաջացել են հիմքերի պարզ կցումով: Հողակապը տրոհելի բառակազմական գործառական մասնիկ է դարձել միայն հին հայերենին նախորդող հնագույն շրջանում*

և որպէս այդպիսին սկսել է գիտակցվել հիմնային վերջածայնավորների թուլացումից ու անկումից հետո»¹⁵:

Ինչպէս կարելի է նկատել, շարքում մեծամասնություն են կազմում *գոյական+ հողակապ+գոյական* կաղապարով ստեղծված բարդությունները՝ բացառությամբ երկուսի: *Բայափիմք+հողակապ+գո-*

¹⁴ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 63:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

յակն կադապարով է կազմված *իջավան* բառը՝ իջանելու վան, վայր, իսկ *բայսահիմք+ի բայական ձևույթ+հոդակապ+գոյական* կադապարով՝ *իջեւան* բառը: *Ածական/ գոյական+հոդակապ+գոյական* կադապարով

ունենք *արգաւանդահող* բառը:

Հոդակապավոր միավորների շարքում կարող ենք ներառել նաև **կողմնակալութիւն, նաւահանգիստ, նաւակառոյց, տանուտէրութիւն, թագաւորանիստ, աշխարհակալութիւն, կուսակալութիւն, հրաշակերտութիւն, միջնաբերդ, հովուականք, բարձրաւանդակ, վերնատուն** բարդածանցավոր բառերը, որոնց առավել մանրամասն դեռ կանոնադրւած են:

Բարդությունների կազմում բաղադրիչները կարող են հանդես գալ ինչպէս հնչյունափոխված, այնպէս էլ անհնչյունափոխ ձևերով: Մեր իմաստային դաշտի հոդակապավոր բարդությունների շարքում բառերի մեծամասնությունը հանդես է գալիս անհնչյունափոխ հիմքերով: Հնչյունափոխված հիմքով արձանագրել ենք 7 բառ՝ *լեռնակողմն, լեռնադաշտ, ձեռակերտ, կուսակալութիւն, միջնաբերդ, հովուականք, վերնատուն*:

Անհոդակապ բարդությունները մեր իմաստային դաշտում սակավաթիվ են՝ **գետեզր, քարանձաւ**: Երկուսն էլ կազմված են *գոյական+գոյական* կադապարով՝ *գետ+եզր, քար+անձաւ*:

Անհոդակապ կառույցների շարքում են նաև **արեւելք, արեւմուտք, տիեզերք, ծովեզերայք** բառերը, որոնց մասին ևս առավել մանրամասն կխոսենք հաջորդիվ:

Ամփոփելով *բնակավայր, տուն* իմաստային դաշտի հոդակապավոր և անհոդակապ բարդությունների քննությունը՝ արձանագրում ենք.

ա) մեր իմաստային դաշտում հոդակապավոր կառույցները առավել մեծ թիվ են կազմում, քան անհոդակապ բառերը, ընդհանուր՝ 30 բառ, որոնցից 12-ը բարդածանցավոր են,

բ) հողակապավոր կառույցների շարքում վկայված է 10 բնիկ, 1 իրանյան ծագման, 19 բնիկ և փոխառյալ արմատներով կազմված բառ,

գ) *բնակավայր* հասկացության հողակապավոր կառույցների մեծ մասը կազմված է *գոյական+հողակապ+գոյական* կաղապարով, վկայված են նաև *ածական/գոյական+հողակապ+գոյական*, *բայա-հիմք+հողակապ+գոյական*, *բայահիմք+ի բայական ձևույթ+հողակապ+գոյական* կաղապարներով կառույցներ,

դ) մեր իմաստային դաշտի անհողակապ բարդությունները թվով 6-ն են, որոնցից 4-ը բարդածանցավոր են,

ե) անհողակապ կառույցները *գոյական+գոյական* կաղապարով կազմված բարդություններ են,

զ) առանց որևէ բացառության՝ անհողակապ բարդությունները բնիկ ծագման բառեր են,

է) հողակապավոր և անհողակապ բարդությունների շարքում մեծաթիվ են անհնչյունափոխ հիմքերով կառույցները: Արձանագրել ենք հնչյունափոխված բաղադրիչներով միայն 8 բառ:

2.5 Բարդածանցավոր կառույցներ

Այն կազմությունները, որոնք պարունակում են մեկից ավելի հիմքեր+ածանց(ներ) կոչվում են բարդածանցավոր բառեր¹⁶: Մ. Խոբենացու երկում *բնակավայր*, *տուն* նշանակող բառերի շարքում արձանագրել ենք 16 բարդածանցավոր բառ՝ *կողմնակալություն*, *վերնատուն*, *արեւելք*, *արեւմուտք*, *ծովեզերայք*, *նաւահանգիստ*, *նաւակառոյց*, *տիեզերք*, *տանուտերություն*, *թագաւորանիստ*, *աշխարհակալություն*, *կուսակալություն*, *հրաշակերտություն*, *միջնաբերդ*, *հովուականք*, *բարձրաւանդակ*:

Գոյական+հողակապ+գոյական+ածանց կաղապարով են կազմված *կողմնակալություն*, *նաւահանգիստ*, *նաւակառոյց*, *տանուտերություն*, *աշխարհակալություն*, *կուսակալություն*, *հրաշակերտու-*

¹⁶ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 56:

թին, հովուականք, բարձրաւանդակ բառերը: Ինչպես տեսնում ենք, հիշյալ բոլոր բառերը պատկանում են *գոյական* խոսքի մասին: Հնչյունափոխված հիմքերով են հանդես գալիս **կուսակալութին՝ կոյս>կուս, հովուականք՝ հովիւ>հովու** բառերը, իսկ **տանտուտերութին** բառում առաջին բաղադրիչը արտահայտված է սեռական հոլովաձևով՝ *ուղղ. տուն, սեռ. տան*:

Ստորև ներկայացնենք վերոհիշյալ միավորների բառակազմական վերլուծությունը.

կողմնակալութին - կողմն+ա+կալ+ութին

նաւահանգիստ - նաւ+ա+հանգ+իստ

նաւակառոյց - նաւ+ա+կառ+ոյց

տանտուտերութին - տան+ու+տէր+ութին

աշխարհակալութին - աշխարհ+ա+կալ+ութին

կուսակալութին - կոյս> կուս+ա+կալ+ութին

հրաշակերտութին - հրաշ+ա+կերտ+ութին

հովուականք - հովիւ>հովու+ա+վան+ք

բարձրաւանդակ - բարձր+ա+ւանդ+ակ

Գոյական+ածանց+հոդակապ+գոյական կաղապարով են կազմված երեք բառ՝ **վերնատուն - վեր+ին+ա+տուն, թագաւորանիստ - թագ+աւոր+ա+նիստ, միջնաբերդ- մէջ+ին+ա+բերդ**: Բերված բառերից երկուսում առկա է բաղադրիչների հնչյունափոխություն: *Վերնատուն* և *միջնաբերդ* բառերում հնչյունափոխված է *-ին* ածանցը, իսկ երկրորդի դեպքում առկա է նաև արմատի հնչյունափոխություն՝ *մէջ>միջ*: Կախված կիրառությունից՝ *թագաւորանիստ* բառը կարող է դիտարկվել և՛ իբրև գոյական՝ *թագավորի նստելու վայրը* իմաստով, և՛ որպես ածական՝ *թագավորանիստ քաղաք* իմաստով:

Գոյական+բայսահիւք+ածանց կաղապարով վկայված են **արեւելք** և **արեւմուտք** միավորները՝ **արեւ+ել+ք, արեւ+մուտ+ք**:

Գոյական+գոյական+ածանց կաղապարով ունենք **ծովեզերայք՝ ծով+եզեր+այք**, իսկ *ածական+գոյական+ածանց* կաղապարով՝ **տիեզերք՝ տի+եզեր+ք** բառերը: Երկրորդ բաղադրիչներում առկա է *եզր* գոյականի սեռական հոլովաձևով արտահայտված հիմք՝ *եզեր*:

Բնակավայր, տուն նշանակող բարդաձանցավոր բառերի բառակազմական քննությունն ավարտելով՝ արձանագրում ենք.

ա) մեր իմաստային դաշտի բարդաձանցավոր բառերի մեծամասնությունը կազմված է *գոյական+հոդակապ+գոյական+ածանց* կաղապարով,

բ) *բնակավայր* հասկացության բարդաձանցավոր բառերի մեծամասնությունը ծագմամբ բնիկ է՝ շուրջ 9 բառ, իսկ մնացյալքը խառնանդամ են՝ 7 բառ,

գ) գրեթե առանց բացառությունների՝ բոլոր բարդաձանցավոր բառերը պատկանում են *գոյական* խոսքի մասին:

2.6 Կցական և կրկնավոր կառույցներ

Այն բարդությունները, որոնց կազմում առկա բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար՝ կցումով, կոչվում են կցական բարդություններ¹⁷:

Գոյություն ունեն շարահյուսական տարբեր կապակցություններով, գրաբարյան նախդիրներով, հարադրավոր բայերով, բաղհյուսական հարադրություններով, արմատի կրկնությամբ կազմված կցական բարդություններ: Դրանք համադասական բարդություններ են, որոնք, ըստ արտաքին ձևավորման, լինում են հավելատարրային՝ **ու, և** շաղկապներով, և անհավելատարրային՝ անմիջական միացմամբ¹⁸:

Գրաբարի բառակազմական կաղապարների ներկայացման համար կիրառվում են հետևյալ պայմանական նշանները. **S**-սկզբնահիմք, **a**-ածանց, **f**-քերականական մասնիկ, **j**- հոդակապ, **c**- շաղկապ, **p**- նախդիր, **S'** - քերականական ձևավորում ունեցող հիմք¹⁹:

¹⁷ Տե՛ս **Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան**, Ժամանակակից հայոց լեզու, էջ 300:

¹⁸ Տե՛ս **Գ. Զառուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն, էջ 218:

¹⁹ **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 56:

Մեր իմաստային դաշտում վկայված են երկու կցական բարդություններ՝ **տանտուտերություն** և **տիեզերք**: Առաջին բառի դեպքում գործ ունենք բաղիյուսական հարադրությունից կազմված կցական բարդության հետ: Բաղիյուսական հարադրության բաղադրիչները միմյանց նկատմամբ համագոր են, հաճախ՝ համադաս, կապվում են կա՛մ հնչերանգով, կա՛մ *ու* շաղկապով: Ինչպես տեսնում ենք, *տանտուտերություն* բառում *տան* և *տեր* բաղադրիչները կապվել են *ու* շաղկապով: Եթե փորձենք վերոհիշյալ պայմանական նշաններով ներկայացնել *տանտուտերություն* բարդության բառակազմական կադապարը, կստանանք հետևյալ պատկերը՝ **S^f jSa` S<sup>f</sup>** - տան, j-ու, **S**-տեր, **a**- ութին: Առաջին բաղադրիչը նշանակել ենք **S<sup>f</sup>**, քանի որ բարդության մեջ հանդես է գալիս թեքված ձևով՝ *տան` տուն* գոյականի սեռական հոլոված:

Վերը նշեցինք, որ կցական բարդությունները կարող են կազմված լինել շարահյուսական տարբեր հարաբերություններ ցույց տվող կապակցություններից, ինչպես՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ ևն: **Տիեզերք** բառում առկա բաղադրիչներն արտահայտում են *որոշիչ-որոշյալ* հարաբերություն՝ **տի եզերք**, այսինքն՝ *մեծ եզերք*: Կցված են առանց որևէ մասնիկի, այսինքն՝ անհավելատարրային են: Բառակազմական կադապարը հետևյալն է՝ **SS^fa` S**-տի, **S^f**-եզեր, **a**-ք: Երկրորդ՝ եզեր բաղադրիչը նշանակված է **S^f**, քանի որ այն ևս արտահայտված է թեքված սեռական հոլովածով:

Բառերի կրկնությունը հարադրության մի տեսակ է: Կրկնավոր են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են նույն հիմքի կրկնությամբ²⁰: Կրկնվում են հիմնականում միավանկ բառերը, երբեմն նաև երկվանկ: Երբեմն կրկնավորների բաղադրիչների միջև լինում են շաղկապներ՝ *ու*, *և*, նաև գրաբարյան նախդիրներ:

Կրկնավոր բարդությունների վերաբերյալ Ջահուկյանը նշում է. «Ժամանակակից հայերենը հարուստ է կրկնություններով, որոնք

²⁰ Տե՛ս **Ա. Սուքիասյան, Բ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան**, Ժամանակակից հայոց լեզու, էջ 296:

բնութագրվում են ծագումնային և հնչակադասարային տարատեսակությամբ: Ծագումնային առումով ժամանակակից հայերենի կրկնությունները բազմաշերտ են՝ գալով ժամանակագրական տարբեր փուլերից»²¹:

Կրկնությունը կարող է համագործածական լինել հայերենի բոլոր խոսքի մասերի դեպքում՝ գոյական, ածական, մակբայ, բայ են: Մեր իմաստային դաշտում առկա են գերազանցապես *գոյական* խոսքի մասով կազմված կրկնություններ՝

բերդս բերդս. «Որոյ յանձն առեալ և եկեալ, և զբազումս ի նախարարաց կանացն կալեալ՝ ի **բերդս բերդս** տայր պահել» (Էջ 366),

գաւառաց գաւառաց. «նորա հրամայեալ՝ ըստ **գաւառաց գաւառաց** շինել աղքատանոցս ի խորշս ի և ի գերծ տեղիս» (Էջ 279),

տեղի ի տեղուջէ. «ես տեղի աղիսի նորա և ռոճիկ ի կերակուր, փոխելով,


տեղի ի տեղուջէ ցրվանդակ ամս» (Էջ 270),

տեղեաց տեղեաց. «հրամայէ զբազում մատենան և զգրոյցս առաջոցն, **տեղեաց տեղեաց** և ուրուք ուրուք գործոց քաջութեան, այրել» (Էջ 58):

Ինչպես տեսնում ենք, Խորենացու երկում *բնակավայր*, *տուն* նշանակող բառերով կազմված կցական և կրկնավոր բարդությունները սակավաթիվ են: Այսպիսով, Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր*, *տուն* նշանակող բառերի շարքում մեծամասնություն են կազմում բնիկ և փոխառյալ ծագման պարզ արմատական բառերը՝ թվով 54: Երկրորդ տեղում վերջածանցավոր բառերն են՝ 33, հիմնականում՝ հիբրիդ: Երրորդ տեղում են բարդ բառերը՝ 20, 18-ը՝ հոդակապավոր, 2-ը՝ անհոդակապ, ապա բարդածանցավոր բառերն են՝ 16: Հաջորդում են կրկնածանցավորները, թվով՝ 9, իսկ վերջում՝ նախածանցավոր 2 բառ:

²¹ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն, էջ 21:

Տրամագիր 2



Այսպիսով՝ ուսումնասիրելով Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերը ծագումնաբանական, բառակազմական և հնչյունական տեսանկյունից՝ արձանագրում ենք.

ա) *Բնակավայր, տուն* իմաստային դաշտի բառերի ճնշող մեծամասնությունը ժառանգված է հնդեվրոպական մայր լեզվից, բնորոշ է գրական հայոց լեզվի զարգացման բոլոր շրջափուլերին:

բ) Դուրս գրված շուրջ **132** բառերից **55**-ը ծագմամբ բնիկ են: Երկրորդ տեղում խառնանդամ՝ բնիկ և փոխառյալ արմատներով կազմված միավորներն են՝ **39**, երրորդ տեղում իրանյան ծագման բառերն են՝ **25**, ապա անհայտ ծագման՝ **7**, հունական՝ **4**: Ամենաքիչ թվով փոխառություններն ասորերենից են՝ **2** բառ:

գ) Լեզվի պատմական զարգացման ընթացքում *բնակավայր* հասկացության բառերի մեծամասնությունը չի ենթարկվել իմաստային փոփոխությունների: Եղած փոփոխությունները սակավաթիվ են և հիմնականում վերաբերում են որոշ բառերի հիմնական

գործածությունից դուրս մղվելուն, պատմաբանների կամ հնաբանությունների վերածվելուն, իմաստի նեղացմանը: Այդ փոփոխությունները հիմնականում կրել են բնիկ, իրանյան, անհայտ ծագման և խառնանդամ շարքերի միավորները: Հունական և ասորական փոխառությունները իմաստային փոփոխություններ չեն կրել:

դ) *Բնակավայր, տուն* իմաստային դաշտի շուրջ 53 բառ լեզվի պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է հնչյունական փոփոխությունների, որոնք վերաբերում են գրաբարյան երկբարբառների երկհնչյունների կամ պարզ ձայնավորների վերածվելուն, բառավերջի *ն* և *խ* հնչյունների անկմանը, բառասկզբի *ռ*, բառամիջի *է*, *ռւ* հնչյունների, և *ւ* հնչյուն-տառանշանի փոփոխություններին: Ասորական փոխառությունները հնչյունական փոփոխությունների չեն ենթարկվել:

ե) Արձանագրել ենք *բնակավայր, տուն* նշանակող բառերով կազմված շուրջ 36 հոմանշային շարք:

զ) *Բնակավայր* հասկացության կազմում վկայված են բազմաթիվ հարադիր կազմություններ, հիմնականում բնիկ և իրանյան ծագման բառերով կազմված, որոնք ունեն և՛ հասարակ, և՛ հատուկ անունների գործառույթ՝ հիմնականում երկրանունների նշանակությամբ:

է) Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված են *բնակավայր, տուն* նշանակող բառերով կազմված շուրջ 17 դարձվածքային միավորներ:

ը) *Բնակավայր, տուն* նշանակող բառերի մեծամասնությունը պարզ արմատական բառեր են, թվով՝ **54**, որոնցում բնիկ և փոխառյալ ծագման միավորները հավասար թիվ են կազմում՝ **24**, իսկ **6** արմատական բառ անհայտ ծագման է: Գրեթե մեծամասնությունը արդյունավետ է բառային զուգորդելիություններ կազմելիս, այսինքն՝ կենսունակ են: Երկրորդ տեղում վերջածանցավոր բառերն են՝ **33**, հիմնականում՝ հիբրիդ: Երրորդ տեղում են բարդ բառերը՝ **20**, **18**-ը՝ հոդակապավոր, **2**-ը՝ անհոդակապ, ապա բարդածանցավոր

բառերն են՝ **16**: Հաջորդում են կրկնաձանցավորները, թվով՝ **9**, իսկ վերջում՝ նախաձանցավոր **2** բառ:

թ) Բառակազմական տեսանկյունից ամենագործածականը վերջաձանցավոր բառերն են: Ամենակենսունակ վերջաձանցների թվում են *-ութիւն*, *-անոց*, *-ոց*, *-արան* և *-ք* ածանցները: Նախաձանցներից գրաբարում ամենամեծ գործածությունն են ունեցել *առ-* և *ընդ-* ածանցները: Մեր իմաստային դաշտում առաջինով վկայված է **2**, իսկ երկրորդով՝ **1** բառ: Նախաձանցավոր բառերի շարքում վկայված է միայն **1** հունաբան նախամասնիկով միավոր:

ժ) Բարդ բառերի շարքում գերակշռում են հոդակապավոր կառույցները, հիմնականում *հիմք+հոդակապ+հիմք* կաղապարով: Փոքրամասնություն են կազմում անհոդակապ բարդությունները՝ *հիմք+հիմք* կաղապարով: Առանց բացառությունների՝ բարդ բառերը երկբաղադրիչ են, որը գրաբարի բառակազմությանը բնորոշ երևույթ է:

Ժա) Մեր իմաստային դաշտի բարդաձանցավոր բառերի մեծ մասը կազմված է *հիմք+ հոդակապ+հիմք+ածանց* կաղապարով: Թվով **9** բարդաձանցավոր բառ ծագմամբ բնիկ է, **7**-ը՝ խառնանդամ:

Ժբ) Խորենացու երկում *բնակավայր* հասկացույթի կցական և կրկնավոր կառույցները սակավաթիվ են՝ **2** կցական, **4** կրկնավոր բարդություն:

ժգ) Վկայված են *որոշիչ-որոշյալ* շարահյուսական հարաբերություն արտահայտող կապակցությունից և բաղիյուսական հարաբերությունից կազմված կցական բարդություններ:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԻ ԳՐԱԲԱՐԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի գրական և մանկավարժական գործունեությունն անքակտելի կապված է նոր գրական հայերենի՝ արևելահայերենի ձևավորման և զարգացման պատմության հետ: «Մեծ Լուսավորիչ» տիտղոսին արժանացած Աբովյանը մեծ ջանքեր է ներդրել, որպեսզի կրթությունը հասանելի դառա բոլոր երեխաների, հասարակության տարբեր շերտերի համար: Այդ շրջանում հին գրական հայերենը՝ գրաբարը, արդեն կորցրել էր իր հաղորդակցական հնարավորությունները, բայց նոր գրական լեզուն դեռ ձևավորված չէր, հասարակության տարբեր շերտերը հաղորդակցվում էին հայերենի բազմազան բարբառներով: Մխիթար աբբահոր և Մխիթարյան միաբանության նվիրյալ գործունեությունը ոգևորել է երիտասարդ Աբովյանին՝ վերակենդանացնելու հին գրական հայերենը: Այս է պատճառը, որ մեծ գրողը ստեղծել է հին հայերենով գրված հարուստ գրական-գիտական ժառանգություն: Նա հին հայերենով գրել է հոգևոր բանաստեղծություններ, աղոթքներ երեխաների և մեծահասակների համար, ինչպես նաև Դորպատում իր ուսումնառության կարևորագույն շրջանի մասին պատմող օրագրերը: «Դորպատյան օրագրերի» լեզուն դյուրընկալ, պարզ, ժողովրդական գրաբարն է, որով, ըստ ամենայնի, հաղորդակցվում էին երիտասարդ էջմիածնական ուսանողները: Ուսումնասիրությունում բացահայտվում են աշխարհաբարի ձևավորման ընթացքին վերաբերող աբովյանական մոտեցումները և գաղափարաբանությունը՝ հին հայերեն (գրաբար) - բարբառներ - նոր գրական հայերեն (աշխարհաբար) միացյալ, ժառանգորդական ամուր հիմքի վրա:

Մեծ լուսավորիչ պատվանունը կրող Խաչատուր Աբովյանի գործունեությունն անբաժանելի է նոր գրական հայերենի՝ արևելահայերենի ձևավորման և զարգացման պատմությունից. նա ջատագովն էր կրթության և գրականության ոլորտում նոր գրական հայերենի առջև դարպասները բացելուն և բոլորին հասանելի լեզվով

հայոց դպրությունն առաջ մղելու համագգային առաքելության, որի առաջամարտիկն էլ եղավ: Եվ այս ամենի համապատկերում կարծես ստվերում է մնացել կամ անտեսվել է հին գրական հայերենի՝ գրաբարի հանդեպ նրա իրական վերաբերմունքը, նախնյաց ոսկեդենիկ գրական լեզվին տիրապետելու և այն վերակենդանացնելու՝ գրականության, անգամ հաղորդակցության լեզու դարձնելու եռանդուն փորձերը: Նոր և հին գրական հայերենների մրցապայքարի հանգուցալուծումը Աբովյանի համար ի սկզբանե միանշանակ չէր, նրա ստեղծագործությունների լեզվական վերլուծությունը բացահայտում է դիրքորոշումների փոփոխությունները, դրանց հիմնապատճառները: Մեր այս ուսումնասիրության միջոցով վեր ենք հանել Աբովյան լեզվաշինարարի և գրապայքարի գաղափարախոսի ելակետային մոտեցումները՝ հին հայերեն (գրաբար)→բարբառներ→նոր գրական հայերեն (աշխարհաբար) եռանկյունու տիրույթում:

Որպես կանխադրույթ ընդգծենք, որ Խաչատուր Աբովյանը թողել է գրաբարագիր նշանակալի ժառանգություն, ինչպես արձակ, այնպես էլ բանաստեղծական գործեր, կրոնական քարոզներ՝ տաղավար տոների առիթով, աղոթքներ: Ուշագրավ է, որ գրաբարագիր բանաստեղծական գործերը հիմնականում հոգևոր տաղեր են, Գրիգոր Նարեկացու հիմնադրած գանձերի ոգով գրված, այսինքն՝ պատմողական-նկարագրական բովանդակությամբ, ձևով կա՛մ հանգավոր, կա՛մ արձակ բանաստեղծություններ, երբեմն էլ առանց հանգի տաղաչափված գործեր, ինչպես էջմիածնին և սուրբ կույս Մարիամին ձոնված ներբողները, որոնց համար Աբովյանն օգտագործում է «դրուատ» անունը¹: Հոգևոր այս բանաստեղծությունների ընթերցումից պարզ է դառնում, որ հեղինակը դրանք ի սկզբանե գրել է որպես երգեր՝ հայկական կրոնական երաժշտարվեստի զարգացման համար: «Դորպատյան օրագրերի» բազմաթիվ էջերում

¹ Տե՛ս **Խաչատուր Աբովյան**, Բանաստեղծություններ. Մա կոչում եմ այժմ և այսուհետ, մինչև օրերը հավիտենական՝ Հայաստան, Եր., 2023:

երիտասարդ Աբովյանը պատմում է, թե ինչպես էր ինքը մտնում գերմանական եկեղեցիներ և ժամերով ականջալուր լինում նրանց հոգևոր երգերին՝ անընդհատ տանջվելով այն մտքից, որ մեր հոգևոր երգերը երիտասարդներին ծանոթ չէին, և, ամենակարևորը, մենք կորցրել էինք մեր երգերի նոտագրման բանալիները: Օրագրության մի կարևոր դրվագ հիշատակեմ. երաժշտության սեմինարին գերմանացի ուսուցիչն Աբովյանին խնդրում է երգել հայկական՝ իր ձևակերպամբ «կանոնաւորեալ երաժշտութիւն», բայց երիտասարդ հայ ուսանողը հրաժարվում է՝ բացատրելով, թե մենք չունենք նոտագրված երգեր, ու ստանում իրեն խորապես ցավ պատճառող, բայց արդարացի թվացող վիրավորական արձագանք: Մեջքերեմ այդ հատվածը. «...երաժշտութեան դաստիարակն պարոն Բեդերման խնդրեաց ընդ այլոց երգել, այլ ոչ կարելն իմ, ըստ կարգի հարցանէ, թէ մի թէ ոչ գոյ ի մեզ կանոնաւորեալ երաժշտութիւն: Ի պատասխանելն իմ այո՛, այլ առանց նշանակիտաց (նոտից). «Այդպէս երգեն, ասէ, հուտենտոտք և ամենայն վայրի ազգք»: Այս ցաւեցոյց զիս, այլ ասաց զճշմարիտն» (67)²: Մեծն Կոմիտասը դեռևս աշխարհ չէր եկել՝ իրականացնելու իր մեծ առաքելությունը՝ մաքրագործելու և գրառելու հայկական երաժշտարվեստի մոռացված գործերը: Իսկ Աբովյանը հեռավոր Դորպատում մի քանի տասնամյակ առաջ անընդմեջ տանջվում էր այդ մոռացման, մշակութային խզման ծանր հետևանքներից: Դորպատյան օրագրությունն ապացուցում է, որ ապագա ուսուցչին, մանկավարժին գրավում էին ոչ միայն զուտ հոգևոր երգերը, այլև կենցաղի ու աշխատանքի, սիրո երգերը, նա իր սիրելի ուսուցչից՝ պրոֆեսոր Ֆրիդլենդերից սովորում էր շոտլանդական, ապա՝ գերմանական ժողովրդական երգեր և ասում, թե ցանկանում է դրանք գրառել, որպեսզի հետագայում հայաստանցիներին ծանոթացնի նման մեղեդիների հետ: Ֆրիդլենդերը նրբա-

² Այսուհետ Խաչատուր Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի ութ հատորյակի 6-րդ հատորում առաջին անգամ տպագրված (Հայկական ՄՍՌ հրատարակչություն, Եր., 1955) «Դորպատյան օրագրերի»-ից հղումների էջերը կնշենք մեջքերումների կից:

նկատ էր, առավել քաջագիտակ հայոց մշակույթին, ուստի նրա պատասխանը Աբովյանին ոգևորող էր. «Դուք ինքնին ունիք զայնպիսի մաքուր զգայությունս, ջանացարուք, ասէ, ինքնաստեղծ բանիւք ներհեղուլ ի սիրտս ձերայնոց զայսպիսի ամուսնական և ընկերական կապակցութիւնս» (133): Աբովյանի հետագա բոլոր բանաստեղծական գործերն ուղղված էին նաև այս նպատակին՝ դառնալ երգեր, բայց ժամանակը բարդ էր ու խառնակ, և միայն հետագայի երգահանները սկսեցին Աբովյան բանաստեղծի տաղերով երգեր գրել: Իսկ գրաբարով գրված գործերը դեռևս սպասում են իրենց նոր երաժշտական բացահայտումներին:

Հայտնի են նաև մեծ լուսավորչի գրչին պատկանող չափածո բազմաբնույթ աղոթքները՝ ձոնված օրվա տարբեր պահերին, հոգեվիճակներին ու նախաձեռնումներին: Հատկապես ուզում եմ առանձնացնել աշակերտների համար գրված աղոթք-բանաստեղծությունները՝ «Աղօթք նախ քան զդասն» և «Զկնի դասին»³, որոնց միջոցով նվիրյալ ուսուցիչը և՛ գրաբար էր սովորեցնում մանուկներին, և՛ Արարչի, ծնողների ու հայրենիքի հանդեպ սեր ու հարգանք սերմանում:

Աբովյանի գրաբար ստեղծագործությունների մեջ իր ծավալով և բնույթով, անշուշտ, առանցքային նշանակություն ունի արձակը՝ «Դորպատյան օրագրերը», որը սկսվում է 1830 թվականի օգոստոսի 25-ին Պետերբուրգից «Իմ սիրելի Առաքելին» ուղղված նամակ-նախաբանով և ավարտվում 1835 թվականի մարտի 25-ին գրված հարուստ նոթերով: «Դորպատյան օրագրերը» կարող ենք համարել բանալի-ստեղծագործություն Խաչատուր Աբովյան անհատի և գրողի, մանկավարժի ու հանրային-քաղաքական գործչի կայացումը հնարավորինս ամբողջական հասկանալու և գնահատելու տեսանկյունից: Նշյալ օրագրությունը թերևս հենց լեզվի պատճառով բավական թերաբժնորված է: Օրագրերի առաջին տպագրությունը Խաչատուր Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի 6-րդ հատորում է, հան-

³ Տե՛ս **Խ. Աբովյան**, Աղոթարան, Եր., 2023:

գամանալի ծանոթագրություններով, բայց օրագրությանը կցված է կանխակալ նսեմացնող մի գրություն Հայկական ՄՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի անունից, որտեղ անվերապահ նշված է. «Օրագրերի գրական մշակումը հեռու է կատարելությունից: Նկատելիորեն թերի է շարադրանքը, կան նման դեպքերի և զանազան նկարագրությունների բազմաթիվ կրկնություններ: Անմշակ է հատկապես լեզուն, որը աղճատված գրաբար է՝ խառն աշխարհաբարի և բարբառի տարրերով: Անշուշտ այդ թերությունները հետևանք են այն բանի, որ օրագրերը չեն գրվել տպագրության համար, չեն ենթարկվել վերջնական մշակման և անմիջական տպավորությունների ու հույզերի սոսկ արձանագրություններ են»⁴:

Մեր այս ուսումնասիրության հիմնական նպատակներից մեկն էլ այն է, որ փաստացի հերքենք նման որակումները, քանզի դրանք հեռու են իրականության արտացոլումից: Նախ՝ լեզվի մասին. դրպատյան օրագրության լեզուն իրոք գրաբարն է, բայց բնավ ոչ աղճատված: Ողջ օրագրության ընթերցումից և երիտասարդ Աբովյանի բարձրաձայնած նպատակներից ակնհայտ է, որ նա արդեն 1830 թվականին մտահոգված էր կարևորագույն խնդրով՝ ինչպիսի՞ լեզվով հաղորդակցվել ժամանակակիցների հետ, կրթել նրանց, փոխանցել իր փորձը և արժեքները: Ասպարեզում դեռևս մենաշնորհային դիրք ուներ հին գրական հայերենը, բայց նրան կրնկակոխ հետապնդում և բազում ոլորտներում արդեն դուրս էին մղում ժամանակի խոսակցական հայերենը, ինչպես նաև բարբառները, հիմնականում արևելյան բարբառախմբի ամենամեծ ճյուղավորումը՝ Արարատյանը՝ իր բազմաթիվ խոսվածքներով: Այսինքն՝ 21-ամյա երիտասարդ մտավորականն ուներ երեք գումարելի՝ գրաբար, խոսակցական լեզու և բարբառներ, որոնցից պետք է ստանար նոր հանրագումար՝ 19-րդ դարի գրական հայերենը:

⁴ **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Եր., 1955, էջ 4:

Իբրև հոգևոր կրթություն ստացած էջմիածնական վանական՝ Աբովյանը նախապես կարծում էր, թե նորի հիմքը պետք է կառուցել հին գրականի հիմքի վրա՝ հաշվի առնելով հին գրականով ստեղծված գեղարվեստական, գիտակրթական հարուստ ժառանգությունը, մշակված քերականությունը, ոճական արտահայտչամիջոցներն ու բառակազմական կառույցները: Այսինքն՝ Աբովյանը ձգտում էր գրաբարի հաղորդակցական հնարավորությունների գործնական կենսունակացման, ոճական հղկման և բառակազմական ու քերականական կաղապարների բազմազանության ստեղծման:

Օրագրերի լեզվի խնդիրը քննելիս չպետք է մոռանալ հատկապես Մխիթար Սեբաստացու մեծ ազդեցությունն այն ժամանակ իր կրթագիտական առաջին քայլերը կատարող Աբովյանի վրա: Հիշենք, որ նրա երազանքը Վենետիկ մեկնելն էր և այնտեղ ուսանելը: Այդ մասին բազմաթիվ կարևոր վկայություններ կան հենց Դորպատի օրագրերում. «Գրական ժամանցի թերթեր, N 5, 6 հունվարի 1929 թ. Լեյպցիգ, Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Հայոց վանքը» գերմաներեն գրված հատվածում մենք կարդում ենք Մխիթար Սեբաստացու և իր միաբանների, նրանց աջակիցների նվիրյալ գործունեության մասին մի փաստառատ հիմնավոր ուսումնասիրությունը, որտեղից ակնհայտ է Աբովյանի անվերապահ հիացումը Մխիթարյանների վաստակով և գործունեությամբ: Այնուհետև 1832 հունվարի 13-ի երեկոյան նոթերում երիտասարդ ուսանող Աբովյանը նկարագրում է իր գրույցը ուսուցիչ-բարերար Պարրոտի հետ պաշտելի Մխիթար աբբահոր մասին, որին կոչում է «Մեծերախտն Մխիթար աբբա», Պարրոտն արձագանքում է իր աշակերտի ոգևորությանը գնահատանքով, բայց վերապահումով. «Ափսոս, ասէ, եթէ փոփոխ կրօնիք, ոչ օտարեալ ի մայրենի եկեղեցւոյն իւրոյ հայոց, տարածել, այո՛, նորա դասելի է ի թիւս մեծանց արանց աշխարհի» (128), իսկ երբ Աբովյանը սկսում է խոսել իր փափագի մասին՝ երբևէ հասնելու Վենետիկ և այնտեղ ուսանելու, Պարրոտը պատասխանում է հույժ կտրուկ. «Զանացարոյք առնել զայս, ասէ, այլ մի՛ լիցի փոփոխիլ զհաւատ ձեր եւ լինիլ կաթոլիկ: Եւ ես եթէ լուայց զայս ի ձէնջ, յայն-

Ժամ մի՛ այլ եւս յիշեսցի անուն ձեր ինձ» (128): Ազատական բողոքականությունը կաթոլիկներին վերաբերում էր իբրև կայսերապետական բռնաճնշիչ կրոնի կրողների, ուստի գերմանացի Պարրոտը սպառնալիքի ոգով զգուշացնում է իր սանին՝ չտրվել այդ հոսանքին: Ըստ ամենայնի՝ Խաչատուր Աբովյանի կյանքում այդպիսի հորդոր-սպառնալիքներ շատ են եղել, ուստի Վենետիկ մեկնելու նրա փափագը անկատար է մնում, ինչպես նաև գրաբարը արդի խոսակցական լեզու դարձնելու տեսլականը, հանուն որի միսիթարյան հայրերը վիթխարի գործ կատարեցին՝ գրաբարով ստեղծելով ժամանակակից դասագրքեր, պարբերականներ, ինքնուսույցներ: Այս բոլոր հանգամանքների ազդեցության ներքո Աբովյանը հակվում է ժողովրդական, բարբառային լեզուն գրականացնելու գաղափարին, որտեղ գրաբարը ոչ այնքան հենք էր, որքան՝ շտեմարան⁵:

Երբ գրաբարագետի անկիրք հայացքով քննում ես Դորպատյան օրագրության լեզուն, ակնհայտ է, որ քերականական համակարգային մեղանշումներ, սխալ շարահյուսական կառույցներ գրեթե չկան ո՛չ անվանական կամ դերանվանական հոլովումների, ո՛չ բայերի խոնարհման համակարգերում. ըստ ամենայնի՝ «աղճատված» մակդրի հիմքում 1830 թվականին կենդանացող գրաբարի բառապաշարում Աբովյանի հետևողական ամրագրած նորամուծություններն էին: Նախ՝ անդրադառնանք ուսանող Աբովյան կիրառած նորակազմություններին, այսինքն՝ այն գրաբարյան բառերին, որոնք Նոր հայկազյան բառարանում վկայված չեն, դրանք հիմնականում նոր հասկացությունների անվանումներ են, ինչպես նաև իին բառերի նոր հոմանիշները, որոնք կիրառության մեջ են դրվել բարբառների կամ ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ: Բերենք ձևի և բովանդակության տեսանկյունից ուշագրավ նորակազմությունների օրինակներ՝ **լալակրկնել** (195) - *լալով կրկնել*, **երեքնել** (199) -

⁵ Գրաբարը խոսակցական լեզու դարձնելու Միսիթարյանների և նրանց գաղափարակիցների տեսական ու գործնական ջանքերին հանգամանալից անդրադարձել է **Վ. Համբարձումյանն** իր «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.», Եր., 1990, աշխատության մեջ: Տե՛ս 98-127 էջերը:

երեք անգամ կատարել, նեղաքուչայ (199) - *նրբանցք, կիսակօշիկ* (199)- *կոշիկի վրայից հատուկ հագնվող կարճավիզ ոտնաման, ծոցագիր* (199) - *ծոցատետր, շրջակողմանք* (201) – *շրջակայք, մտատրիլ* (209) - *մտադրվել, ողջունատրություն* (201) – *ողջունում*: Այս բառերը, ինչպես նեցինք, գրաբարի բառարաններում վկայված չեն, բայց դրանք 18-19-րդ դարի ժողովրդական գրաբարի բառապաշարի միավորներ են, որոնք կազմվել են դասական գրաբարի բառակազմական կաղապարներով մեծամասամբ գրական հայերենի արմատներից, թեև ունենք բարբառային փոխառություններից կազմված հոդակապով բարդություններ ևս, ինչպես՝ **նեղաքուչայ**: Վկայված է նաև գրաբարյան բառերի իմաստափոխության միջոցով նոր բառերի առաջացման երևույթը, այսպես՝ ՆՀԲ-ում վկայված է **ձեռնակալել** բայը⁶, որի արմատից կազմված **ձեռնակալություն** գոյականը ՆՀԲ-ում բացակայում է, Աբովյանն այն հաճախակի է օգտագործում, բայց բնավ ոչ ՆՀԲ-ում նշված իմաստով՝ *ձեռքակալել, ձեռքերին շղթաներ հագցնել*, այլ՝ *ձեռքսեղմում կատարել* նոր նշանակությամբ, **ձեռնակալություն** - *ձեռքսեղմում*։ «Ա՛հ, բարեկամ այդպես շուտով վերադարձայք ի ճանապարհէ»։ համբոյր, *ձեռնակալություն*, համեստ ողջունատրություն նորա» (204)։

Հետևաբար Աբովյանի գրաբարը պետք է բնորոշել ոչ թե «աղճատված», այլ «արդիականացված» մակդիրով։ Նոր ժամանակներ՝ նոր հասկացություններ, որոնց համար պետք էին նոր անվանումներ, որոնք երիտասարդ ուսանողը քաղում է ռուսերենից և գերմաներենից, փոխառյալ օտար բառերն իրոք մեծ տեղ են գրավում օրագրության շարադրանքում։ Բերենք բնութագրական հաճախադեպ փոխառությունների օրինակները՝ *ալգեբրա, ալեա, աֆիցեր, բալկոն, բատյուշկա, բեդել* (կառավարիչ), *բիլեթ, բարսիլիացի, բուտիլկա, դամա/տամա, դոքտոր, էքզեմպլեար, էստ, զալ, կազեր* (թերթ), *կալոշ, կառեթ, կարավաթ* (մահճակալ), *կարտ, կլաիր, կի-*

⁶ Նոր բառգիրք հայկազեան յեգուի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միւրմէեան, Հայր Մկրտիչ Աւգերեան։ Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837, հ. 2, էջ 152։

թառ, կոմզոլ, կոնցերտ, կուխն (խորտիկ), *դայֆա, մադամ, մայեօր, մամզել, մինիստեր/մինիստր, մինիքալոզ* (հանքաբան), *մուզիկ, շտուտենտ/ստուտենտ, շլաֆրոկ* (տնային ազատ հագուստ), *շտուտենտ/ստուտենտ* (ուսանող), *շտոֆ* (չափման միավոր աման), *շտուտենտական, շչեօսկայ* (համրիչ), *պանտոֆիլ* (խալաթատիպ վերնազգեստ), *ստացիոն* (կայարան), *պաստոր, պիփօ, պոլեակ* (լեհ), *պրօֆեսոր, պրօֆեսորուհի, ռեկտոր, սոֆա* (փափուկ թախտ), *վերստ, ունիֆորմ, ցիգար* (սիգար), *փոշթ/փոստ, փրուսեա-ցի, ֆաբրիկ, ֆոնտան, ֆրանցերեն* և այլն:

Հիշյալ բառերի քննությունը պարզ է դարձնում, որ դրանք սակավ բացառություններով նորաբանություններ են, եվրոպական հասարակությանը բնորոշ հասկացությունների, դիմելաձևերի անվանումներ, որոնց հայերեն՝ գրաբարյան համարժեքները կամ դեռ չէին ստեղծվել կամ չէին էլ ստեղծվելու, որովհետև դրանք արտահայտում էին արդի արևմտյան մշակույթներին բնորոշ իրողությունները՝ սկսյալ երաժշտական գործիքներից մինչև հագուստի պարագաներ, կահույքի մասեր, տիտղոսներ, հոգևորականների անվանումներ: Ընդ որում հավաստենք, որ այսօր 21-րդ դարում դրանց զգալի մասը ոչ միայն հասկանալի է, այլև՝ կիրառական: Այսպես՝ **բատյուշկա**-ն ռուս հոգևորական հովվի անվանումն է, իսկ **պաստոր**-ը՝ բողոքական եկեղեցու, **պրոֆեսոր, դոկտոր, ռեկտոր** կոչումներն այժմ էլ մեր կրթագիտական համակարգում ընդունված են, երաժշտական գործիքների անվանումների էական մասը ևս հայերեն տարբերակներ չունեն՝ **կլավիր, կիթառ; մինիստեր** պաշտոնը միայն 20-րդ դարում գտավ իր հայեցի համարժեքը՝ *նախարար*, զինվորական կոչումները ընդհանրական են՝ **մայոր, գեներալ; ֆաբրիկ** բառը ներկայումս կիրառելի է լատինառուսական ավանդույթով՝ **ֆաբրիկա; ֆրանցերեն՝ ֆրանսերեն** տառադարձամբ և այդպես շարունակ: Ուստի համոզված կարող ենք արձանագրել, որ ուսանող Արմիյանը ոչ թե աղճատում էր գրաբարը, այլ արդիականացնում այն, ընդ որում շատ դեպքերում նա օտարաբան փոխառությունների քանակը հասցնում է նվազագույնի՝ փորձելով շատ բառերի հայերեն

տարբերակները ստեղծել: Զորօրինակ՝ հետգրաբարյան շրջանի մասնագիտությունների մասին խոսելով նա գրում է. «Պարոն Հագեն պատմել զՀումբոլդտե, մեծ *աստղաբաշխ, մինարալոգ, տնկաբան, բնագետ* եւ այլք քննեն զբնութիւն ի մասնաւորս, իսկ նա զբոլոր արաշութիւնն» (66): Այս նախադասության մեջ ճոխաբան գրաբարով՝ պատմական հոլովի կիրառությամբ Աբովյանը միայն հանքաբանի մասնագիտությունն է օտար փոխառությամբ նշում՝ **մինարոլոգ**. նշենք, որ ցայսօր անգամ շատ հանքաբան-հանքագետներ շարունակում են **միներալոգ/ միներալ** եզրույթները համառոտեն կիրառել: Իսկ **ազրոնոմ**-ի փոխարեն Աբովյանն առաջարկում է **տնկաբան** բառը, որը հետագայում միայն փոխարինվեց *ցուղաստնտես*-ով, **աստղաբաշխ**-ը եւս հնաբան դարձավ՝ փոխարինվելով **աստղագետ**-ով:

Բերենք ուսանող Աբովյանի օրագրությունից մի հատված՝ ցույց տալու նրա կիրառած գրաբարի պարզ և ժողովրդական ոճը: Հիմքեր ունենք ենթադրելու, որ նման ժողովրդական գրաբարով ըստ ամենայնի իրար հետ խոսում էին էջմիածնական երիտասարդ հոգևոր սաները, սա բավական մշակված և նոր հասկացություններով ու բարբառային տարրերով, ժամանակակից փոխառություններով հագեցած լեզու էր, որը փորձում էր ապահովել իր կենսունակությունը, հաղորդակցական հնարավորությունները. «Ի հինգերորդում ժամու հասանք ի փոստատուն Գոյգաց. դրութիւն տեղւոյս է ամենավայելուչ. հանդէպ մեծագոյն անտառի մի, առաջոյ փոքրիկ այգի, պրօֆեսօրն պատմել փոստի աստիճանաւորաց գլինէլն իմ յԱրարատայ, նոքա զարմացմամբ հային յիս: Պրօֆեսսօրն խնդրէ տալ ինձ դայֆայ, մանուկն, որ ընդ մեզ, առանց գիտութեան մեր հեծեալ ի ձի փոշին, հեռանայ ի մէնջ» (193):

Ակնհայտ են երիտասարդ ուսանողի ճիգն ու ջանքը հայերենի բառապաշարը հարստացնելու ոչ միայն պարզ փոխառություններով, այլև դրանց բնիկ համարժեքներով: Պարբերաբար երիտասարդ լեզվագյուտարար Աբովյանն իր շարադրանքում հետաքրքիր նորակազմություններ է գործածում, այսպես՝ **չմուշկ**-ի փոխարեն առա-

ջարկում է՝ **սահնակակոշիկ** (133) տարբերակը, երկար, բայց հասկանալի, կամ **ցյուղատնտես**-ի փոխարեն՝ **տնկաբան**, **ձիարշավաբան**-ի փոխարեն՝ **ձիակրթարան** (137), ձի վարժեցնողների համար գեղեցիկ բարդություն է ստեղծում՝ **ձիախաղաց** (138), **ներկա**-ի փոխարեն՝ **տեսանօղ** (181), իսկ դասարանները և լսարանները կոչում է **դասատուրեան սենեակ** (66), **ուսուցում**-ը՝ **դասատուութիւն** (65): Երբեմն Աբովյանը հայերեն իր համարժեքն է առաջարկում, բայց փակագծում նշում է փոխառյալ հիմնաբառը, այսպես **վալս** (գերմանական տարբերակով **վալց**) պարանվան համար օգտագործում է *պտտումն* տարբերակը. «Նոքա կամին նախ ցուցանել ինձ **պտտումն** (**վալց**), այլ իմ անսովոր ոտք ամենեւին ոչ կամին հետեւիլ ո՛չ ձայնի կլաւիրին, ո՛չ ցուցման նոցա, նոքա բազմիցս առնեն ինձ զայն առաջի, այլ իմ **պտտումն** ամենեւին ոչ համաձայնի ընթացից նոցա» (225), «դուստր **պաստորին** (**քահանային**)» (293): **Ռեյսֆեղեր** եզրույթի համար Աբովյանը կազմում է **գծագրիչ** գեղեցիկ բառը (81): Օտարաբանություններին զուգընթաց՝ հաճախ վկայված են նաև դրանց հին գրաբարյան ձևերը, Աբովյանը կարծես փորձում է հասկանալ, թե մրցակցությունից որ տարբերակը հաղթանակած դուրս կգա՝ **կատեր** ձևի հետ ունենք բազմակի օգտագործված **կառք**-ը, **ալզերբա** - **թուաբանութիւն**, **թեյ** – **չայ**, **կռֆէ** - **դայֆա** բառազույգերը:

Ընդգծենք այն հանգամանքը, որ հիշյալ և այլ եվրոպական փոխառությունները քերականորեն ենթարկվում են գրաբարի ձևաբանական թեքմանը՝ *դամայ-դամայք, դամայս, դամայից, դամայաւք, շտուտենտ-շտուտենտից, շտուտենտիւք, ֆանտան- ֆանտանիւ, կլաւիր-կլաւիրաւ, պաստոր-պաստորաց, ռեկտոր-ռեկտորաւ, պամտոֆիլ-պանտոֆիլիւ, մինիստր-ի մինիստրէն* և այլն: Այսինքն՝ նորաբանությունները Աբովյանը հղովում է գրաբարում տարածված *ի-ա* խառն կամ պարզ *ի* վերջադրական հղովումներով՝ հետևելով բառի հնչունական կառույցին:

Կասկածի ենթակա չէ, որ երիտասարդ Աբովյանը փորձում է արդիականացնել գրաբարը և, ըստ իս, բավականին հաջող ընդլայնելով գրաբարի հաղորդակցական հնարավորությունները: Բացի

այդ՝ նա փորձում էր ստեղծել ուսանողական գրաբար, որովհետև իր նպատակը հայ երիտասարդներին եվրոպական կրթօջախներին, կրթամշակութային, գիտական կյանքին, կենցաղին և ապրելակերպին ծանոթացնել էր, որպեսզի նրանք էլ խթան ունենան իրենց կրթությունը շարունակելու արևմտյան հայտնի համալսարաններում:

«Դորպատյան օրագրերի» յուրաքանչյուր հատվածից պարզ է դառնում, որ այն գրվել է տպագրության համար, գրեթե ամեն տող վկայում է, որ ուսանող դարձած Աբովյանը ցանկանում է իր փորձը և տպավորությունները անմիջաբար հաղորդել հայ սերնդակիցներին՝ ավագ և կրտսեր, որպեսզի նրանք ևս համակվեին եվրոպական կրթության, դաստիարակության, վարքականոնի բոլոր բարձր արժեքներով, ձգտեն առաջադիմությանը, ազատախոհությանը և հանդուրժողականությանը:

Դորպատյան օրագրության հանգամանալի ընթերցումը ակնհայտ է դարձնում նաև Աբովյանի ձգտումը բարբառային բառերը գրաբարին ներդաշնակեցնելու. բարձր գրաբարյան բառերի հետ նա օգտագործում է բարբառային եզրեր՝ դրանով իսկ ցույց տալով հայերենի տարբերակների միջև խիստ ջրբաժանի բացակայությունը, դա յուրօրինակ մարտահրավեր էր լեզվական մաքրամոլությանը, լեզվական տարբեր շերտերի միջև անջրպետների հեղափոխական վերացում էր: Աբովյանը արմատական լուծումներից չէր վախենում, ինչպես նաև չէր խորշում փորձաքարությունից: Հայերենի հարստությունը ոչ միայն գրաբարյան երակն էր, այլև այդ երակին միացող բարբառային վտակները, հատկապես որ Արևմտյան Հայաստանի սպառնալի հեռացումը Արևելյանից անխուսափելի էր դարձնում երկու գրական լեզուների տարանջատ զարգացումը, ուստի անհրաժեշտ էր գրաբարյան բառապաշարում ընդգրկել Արարատյան և Արցախյան երկու հզոր բարբառների բնիկ կամ փոխառյալ կառույցները: Ասվածն ավելի ընկալելի դարձնելու համար մեջբերում կատարենք. «Բրասիլիին հրացայտ լերինք արձակեն, երբեմն ծուխ, երբեմն **ջմջմայս**, անձրեւս, ի միջակիտի երկրի է յաւտե-

նական հուր ինչ»։ **Զմջմայ**-ն Արցախի և Արարատյան բարբառում նշանակում է *ճահճուտ, խոնավ վայր*⁷։ Բնաձայնական արմատ է, փոխառություն չէ, այս բառը հանգիստ հանգրվանել է բարձր գրական բառապաշարի միավորների կողքին։ Վկայված են նաև նմանատիպ ուրիշ բարբառային կազմություններ՝ պարսկական և թուրքական փոխառություններին զուգահեռ, այսպես՝ **թուշ, թոփ, պոպոք, ֆընդուդ, դաֆտար, արադ, անօթի, գիլաս, շախայ, եաղլուխ, գիւլպայ, սհաթ, օթախ, պուճախ, բալանիք, լական, մոհաջառ, քուչա, քոքոալ, շաքարլամայ, պոճոկել** և այլն։ Այս և նման բառերի առկայությունը բնավ չի ստվերում «Դորպատյան օրագրերի» լեզվական որակը, ընդհակառակը՝ երևան է բերում Աբովյան լեզվաշինարարի իրական նպատակը՝ գրաբարի հենքի վրա կազմավորել նոր գրական լեզուն, որը կմիավորեր և՛ գրաբարագիտականներին, և՛ բարբառախոսներին։ Նշենք նաև, որ «Դորպատյան օրագրերում» կան փայլուն գրաբարով գրված նամակներ առ հայոց կաթողիկոսներ։ Այսինքն՝ Աբովյանն առաջնորդվում էր ամեն լսարանին իրեն պատշաճող լեզվով գրելու հայտնի սկզբունքով։

Լեզվափորձարարության և նոր գրական լեզվի ստեղծման հարցում կանխակալ կաղապարներից գերծ լինելը, գրապայքարը Խաչատուր Աբովյանին մղում են Քանաքեռի բարբառով իր նշանավոր վեպը գրելուն։ Եվ ի վերջո, լեզվափորձարարությունն ավարտվում է նոր գրական հայերեն ձևավորմամբ գրաբարյան բառաշերտի, հնչյունական կազմի և Արարատյան բարբառի քերականական համակարգի հիման վրա։ Այս գործում Խաչատուր Աբովյանի ներդրումը սկսվել է դեռևս դորպատյան ուսանողական տարիներից։ Մխիթարյանների ազդեցությունը գրողի վրա թեև աստիճանաբար թուլանում է, նա հրաժարվում է գրաբարը վերակենդանացնելու ճիգերից, բայց նախնյաց գրական լեզվի հանդեպ հարգական վերաբերմունքը պահպանվում է մշտապես։

⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ։ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Եր., 2008, հ.5, էջ 187։

Լեզվական որակի և գրապայքարի տեսանկյունից խոստուն գործ է 1836 թվականի մարտի 29-ին Մոսկվայի հայոց եկեղեցում Աբովյանի կարդացած «Զատկական քարոզը»: Քարոզի ժանրի նպատակը հնարավորինս շատ մարդկանց հոգիների փակ դռների բացումն է, անհաղորդների անտարբերությունը կոտրելը, ուստի այս քարոզի լեզուն արդեն գերազանցապես աշխարհաբարն է ժողովրդական գրաբարի որոշ տարրերով:

Մեր ոսկեդենիկ նախնյաց լեզվի Աբովյանի իմացության չափորոշիչը նրա գրաբարագիր չափածո գործերն են, որտեղ իսպառ բացակայում են օտարաբանությունները կամ բարբառային փոխառություններն ու արմատները: Հոգևոր բովանդակության իր գանձերում լուսավորիչը խնդիր չէր դնում հին և նոր լեզուների մրցակցության, թերևս համոզված էր, որ աղոթքներն ու ներբողյանները պետք է դարերի սրբագործում անցած դասական լեզվով հնչեն: Խաչատուր Աբովյանը կատարելապես տիրապետում էր և՛ գրաբարին, և՛ բարբառներին, ուստի ամեն առանձին դեպքում ձգտում էր գտնել դրանց ճիշտ համաձուլվածքը: Նա համարձակ լուծումների ջատագովն էր՝ գրաբարյան բարձր ոճը ժողովրդախոսակցական, անգամ նեղ բարբառային բառուբանի հետ զուգադրելու առաջամարտիկն ու լեզվաշինարարը:

РЕЗЮМЕ

ГРАБАР КАК ИСТОЧНИК ОБОГАЩЕНИЯ ЛЕКСИКИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА И ТЕРМИНОСТРОЕНИЯ

А. АБАДЖЯН, Н. ДИЛБАРЯН, А. ЮЗБАШЯН, С. КАРАПЕТЯН

Монография включает исследование лексики 12 авторов и источников начиная с перевода Библии и до отца историографии Мовсеса Хоренаци, общехристианского вардапета Григора Нарекаци и просветителя Хачатура Абовяна. По сути, это самые известные, классические и образцовые источники грабара. В данных первоисточниках лексика древнеармянского языка исследуется многопланово: на семантическом, словообразовательном уровнях, с выявлением неологизмов, новообразованных терминов и т. д. В разных главах работы терминологические единицы лексики грабара представлены с указанием их словарного значения. Для понимания их функционирования в речи авторы представляют эти слова в оригинальных предложениях, а при необходимости ссылаются и на их многозначность.

Исследование может быть полезно филологам, историкам, богословам и вообще всем, кто интересуется развитием армянского языка и обогащением словарного запаса.

SUMMARY

GRABAR (OLD ARMENIAN) AS A SOURCE OF ENRICHMENT AND TERM-FORMATION OF CONTEMPORARY ARMENIAN VOCABULARY

A. ABAJYAN, N. DILBARYAN, A. YUZBASHYAN, S. KARAPETYAN

The monograph includes a study of the vocabulary of 12 authors and sources, starting with the translation of the Bible and ending with the father of historiography Movses Khorenatsi, the General Christian Vardapet (doctor-monk) Grigor Narekatsi and the enlightener Khachatur Abovyan. In fact, these are the most famous, classic and exemplary sources of Grabar (Old Armenian). In these original sources, the vocabulary of the ancient Armenian language has been researched in many ways: on semantic, word-formative levels, with the identification of neologisms, newly formed terms, etc. e. In different chapters of the work, the terminological units of the vocabulary of Grabar have been presented with the indication of their dictionary meaning. To understand their functioning in speech, the authors present these words in original sentences, and if necessary, they refer to their polysemy.

The research may be useful to philologists, historians, theologians, and in general to everyone who is interested in the development of the Armenian language and the enrichment of the vocabulary.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ,
ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ,
ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԳՐԱԲԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՏԱՑՄԱՆ
ԵՎ ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՑՈՒՐ**

**Համակարգչային ձևավորումը՝ Կ.Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի**

Ստորագրված է տպագրության՝ 25.07.2024:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 25:

Տպաքանակը՝ 100:

**ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am**